

Վեպ, Արձակ, Ամերիկյան գրականություն

13+

Թարգմանիչ՝ Հայկ Գասպարյան

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

ԾՈՎԱԳԱՅԼԸ

Գլուխ առաջին

Ճիշտն ասած, չգիտեմ որտեղից սկսեմ, թեև երբեմն կատակի համար դրա բուն սկզբնապատճառը համարում եմ Չարլի Ֆարասեթին: Նա մի ամառանոց ուներ Միլլ-Վելլիում՝ Թամալփետ լեռան ստորոտում, որտեղ իր ազատ ժամանակն էր անցկացնում ձմեռվա ամիսներին և ուղեղը հանգստացնելու համար կարդում էր Նիցշե ու Շոպենհաուեր: Իսկ ամռանը նախընտրում էր տաք ու փոշոտ քաղաքում ապրել և անվերջ աշխատել: Եթե ես ամեն շաբաթ օր նրան այցելելու և մինչև երկուշաբթի առավոտ նրա մոտ մնալու սովորություն չունենայի, ապա հունվար ամսի այդ հիշարժան երկուշաբթի օրը Սան-Ֆրանցիսկոյի ծովախորշում չէի լինի:

Կարող եմ ասել, որ ապահով նավի վրա էի, քանի որ «Մարտինեզը» նոր շոգենավ էր և իր չորրորդ կամ հինգերորդ ճանապարհորդությունն էր կատարում Սաուսալիտոյի և Սան-Ֆրանցիսկոյի միջև: Մեզ սպառնացող վտանգը ծովածոցը ծածկող մշուշն էր, իսկ ես, ծովային չլինելով, այդ բանը չէի հասկանում: Լավ հիշում եմ, որ հանգիստ ու զվարթ տրամադրությամբ տեղավորվեցի վերնի տախտակամածի առաջամասում՝ ղեկորդի խցիկի ճիշտ ներքև, և այնուհետև իմ երևակայությունն սկսեց զբաղվել մշուշի գաղտնիքով: Փշում էր թարմ զեփյուռը, և ես միառժամանակ մենակ էի մնացել այդ խոնավ մթության մեջ, թեև ոչ բոլորովին մենակ, քանի որ տարտամորեն զգում էի ղեկորդի ներկայությունը, ինչպես և մի ուրիշ անձնավորության ներկայությունը, ըստ երևույթին՝ նավապետի, որը գտնվում էր վերնի ապակեպատ խցիկում:

Հիշում եմ, մտածում էի, թե ինչքան լավ է, որ աշխարհում աշխատանքի բաժանում գոյություն ունի և, հետևապես, ծովածոցի մյուս կողմն ապրող բարեկամիս այցելելու համար ես պետք չունեի ուսումնասիրելու մշուշները, քամիները, մակընթացություններն ու նավագնացության կանոնները: Լավ է, որ յուրաքանչյուր բնագավառում մասնագետներ կան, խորհրդածում էի ես: Ղեկորդի և նավապետի մասնագիտական գիտելիքները ծառայում են հազարավոր մարդկանց, որոնք, ինձ նման, ոչինչ չգիտեն ծովի և նավագնացության մասին: Եվ այսպես, փոխանակ ուժս վատնելու բազմապիսի գիտելիքներ ձեռք բերելու համար, ես այն կենտրոնացնում եմ միայն մի քանի առանձին հարցերի վրա, ինչպիսին է, օրինակ, Էդգար Պոյի դերը ամերիկյան գրականության մեջ, մի թեմա, որին, ի միջի այլոց, նվիրված էր «Ատլանտիկի» վերջին համարում տպագրած հոդվածս: Երբ նոր էի շոգենավ բարձրացել, ընդհանուր նավասենյակից անցնելիս մեծ գոհունակությամբ նկատել էի, որ մի գիրուկ ջենթլմեն կարդում էր «Ատլանտիկում» տպագրած հոդվածս: Այդ հանգամանքն էլ է վկայում աշխատանքի բաժանման առավելությունների մասին: Ղեկորդի և նավապետի

մասնագիտական գիտելիքները գիրուկ ջենթլմենին հնարավորություն էին տալիս ոչ միայն ծանոթանալու Պոլի վերաբերյալ իմ մասնագիտական գիտելիքներին, այլև, միաժամանակ, նրան ապահով փոխադրում էին Սաուսալիտոյից Սան-Ֆրանցիսկո:

Մի կարմրադեմ մարդ նավասենյակից տախտակամած դուրս եկավ և դուռը շրխկացնելով խորհրդածություններս ընդհատեց հենց այն պահին, երբ մտքումս նշում էի իմ հաջորդ հոդվածի նյութը, որը որոշել էի վերնագրել «Ազատության անհրաժեշտությունը: Աղերս հոգուտ արվեստագետի»: Նորեկը մի հայացք նետեց դեպի դեկորդի խցիկը, գննեց շրջապատող մշուշը, տախտակամածի վրա մի քիչ ման եկավ կաղալով (նա, ակնհայտորեն, արհեստական ոտքեր ուներ) և ի վերջո կանգնեց կողքիս՝ ոտքերը լայն բացած: Նրա դեմքը խորին գոհունակություն էր արտահայտում: Ինձ թվաց, և ես չէի սխալվում, թե նա ամբողջ կյանքը ծովի վրա էր անցկացրել:

— Այ, այսպիսի գարշելի եղանակն է, որ ժամանակից առաջ սպիտակեցնում է մարդկանց մազերը,— ասաց նա, գլխի շարժումով ցույց տալով դեկորդի խցիկը:

— Չէի կարծում, որ եղանակը առանձնապես որևէ ճիգ է պահանջում,— պատասխանեցի:— Ինձ թվում է, թե գործը պարզ է այբուրենի պես: Ուղղությունն իմանում են կողմնացույցի միջոցով, գիտեն հեռավորությունն ու արագությունը: Միայն մնում է մաթեմատիկական ճշգրիտ հաշվումներ անել:

— Ճի՛գ պահանջել...— փնչաց նա,— պա՛րզ է այբուրենի պես... մաթեմատիկական հաշվումներ...

Նա մարմինը ետ թեքեց, կարծես հավասարակշռությունը պահելու համար, և հայացքը սևեռեց վրաս:

— Իսկ ի՞նչ կասեիք այս մակընթացության մասին, որը խուժում է Ոսկե Դարբասը,— հարցրեց, ավելի շուտ՝ գոռաց նա,— ինչպիսի՞ արագություն կամ ի՞նչ ուղղություն ունի նա... Լսո՞ւմ եք այդ ձայնը... Դա խարսխանի՜շի զանգակն է: Եվ մենք գնում ենք ուղիղ խարսխանի՜շի վրա... Ա՛յ, տեսե՛ք, արդեն փոխում ենք ուղղությունը...

Մշուշի միջից լսվում էր զանգակի ողբազին դողանջը, և ես տեսա, թե ինչպես դեկորդը արագ պտտեցնում է դեկանիվը: Զանգակը, որը առաջ ճիշտ մեր դիմացն էր, այժմ դողանջում էր կողքից: Մեր նավի շչակը խապոտ սուլում էր, իսկ մշուշի միջից մերթ ընդ մերթ լսվում էին ուրիշ սուլոցներ:

— Փոքր շոգենավերն են,— նկատեց ուղեկիցս, գլխով ցույց տալով աջ կողմը, որտեղից լսվում էին սուլոցները:— Իսկ սա, լսո՞ւմ եք, եղջերափողի ձայն է: Հավանորեն, ինչ-որ գետանավից է: Հե՛յ, գետանավի դեկո՛րդ, զգո՛ւյշ... Ա՛յ, այդպես էլ գիտեի: Հիմա մեկնումեկի գլխին փորձանք է պայթելու...

Անտեսանելի գետանավի շչակը շարունակ սուլոցներ էր արձակում, իսկ եղջերափողը՝ սարսափահար ճչում:

— Հիմա արդեն հարգանքներ են մատուցում միմյանց և շտապում են իրարից հեռանալ,— շարունակեց կարմրադեմ մարդը, երբ տազնապալի ձայները դադարեցին:

Նա ինձ բացատրեց, թե ինչ էին իրար հասկացնում շշակն ու փողը: Խոսելիս նրա դեմքը ճառագայթում ու աչքերը փայլատակում էին:

— Ա՛յ, այս շոգը ձախ կողմում գտնվող շոգենավից է, մյուս խոխոռոցը որ լսում եք, մեզ է հասնում, եթե չեմ սխալվում, շոգիով աշխատող մի երկկայմանավից, որը ծովածոցից գալով, գնում է մակընթացության դեմ:

Այդ պահին, շատ մոտից, ճիշտ մեր դիմացից, մի սուր, խելացնոր սուլոց լսվեց: «Մարտիները» դրան պատասխանեց գոնգի հարվածներով: Մեր շոգենավի անիվները կանգնեցին, նրանց զարկերը ջրում մի պահ դադարելուց հետո նորից սկսեցին գործել: Սուր սուլոցը, ինչպես ծղրիղի ճոճոռոց հսկա գազանների մոնչյունների մեջ, դարձյալ լսվեց մշուշում, այս անգամ կողքից, և աստիճանաբար մեղմացավ: Ես նայեցի իմ զրուցակցին՝ բացատրության համար:

— Ինչ-որ հանդուգն կատեր է,— ասաց նա:— Ես համարյա ուզում էի, որ ընկղմեինք այդ փոքրիկ ամբարտավանին: Այդպիսիները մեծ վնասներ են պատճառում և, վերջ ի վերջո, ինչի՞ են պետք: Մի որևէ ավանակ նստում է դրանցից մեկի մեջ, ըստ բախտի քշում և հիմարի պես սուլում, որպեսզի բոլորը մի կողմ քաշվեն, որովհետև այդ ի՛նքն է գալիս և իրեն պատիվ չի բերի հեռու քաշվելը... Այդ ի՛նքն է գալիս... Եվ դու պետք է ճանապարհ տաս, որովհետև ճանապարհի իրավունքը միայն նրանն է: Տարրական քաղաքավարությո՜ւն... Այսպիսիները նույնիսկ չգիտեն, թե ինչ է նշանակում այդ...

Զրուցակցիս անբացատրելի բարկությունը բավական զվարճացրեց ինձ, և մինչդեռ նա, վրդովված, կաղալով ճեմում էր, ես նորից սկսեցի մտածել մշուշի ռոմանտիկայի մասին: Եվ իսկապես ռոմանտիկա կար այդ մշուշի մեջ, որը խոր գաղտնիքի մոխրագույն ստվերի պես կախված էր տիեզերքում պտտվող երկրագնդի վրա, այնինչ մարդիկ՝ լույսի և կայծի այդ մասնիկները, տառապում են աշխատանքի անհագ ծարավից, և փայտե կամ պողպատե նժույգներ հեծած՝ ուղղվում են դեպի գաղտնիքի սիրտը, կուրորեն խարխափելով ճանապարհ են որոնում Անտեսանելիի միջով և ինքնավստահ աղմկում են ու աղաղակում, թեև իրականում համակված են կասկածով ու վախով:

Իմ զրուցակցի ձայնը հանկարծ ինձ սթափեցրեց և ես ծիծաղեցի: Չէ՞ որ ինքս էլ փաստորեն խարխափում էի ու դեգերում, երբ կարծում էի, թե բաց աչքերով արշավում եմ գաղտնիքի թագավորության մեջ:

— Էհե՛յ, ինչ-որ նավ մեր կողմն է գալիս,— ասում էր նա:— Լսո՞ւմ եք ձայնը. նա արագ է գալիս և ուղիղ դեպի մեզ: Ըստ երևույթին, նա դեռ մեզ չի լսում: Քամին փչում է հակառակ կողմից:

Զով զեփյուռը փչում էր մեր ուղղությամբ, և ես պարզ լսում էի սուլիչի ձայնը, որը գալիս էր կողքից:

— Գետանա՞վ է,— հարցրի ես:

Նա գլխով արեց և ավելացրեց.

— Թե չէ այսպես արագ մեր վրա չէր գա:— Նա մի կարճ քրքիչ արձակեց:— Մերոնք վերևում անհանգստանում են...

Նայեցի վերև: Նավապետը գլուխը և ուսերը դուրս էր հանել դեկորդի խցիկից և լարված դիտում էր մշուշը, կարծես ջանում էր կամքի ուժով նրա խորքը թափանցել: Նրա դեմքը անհանգստություն էր արտահայտում: Ուղեկիցս, որը նավաբազրիքին էր մոտեցել և նույն լարվածությամբ նայում էր անտեսանելի վտանգի կողմը, նույնպես հուզված էր:

Այնուհետև ամեն ինչ տեղի ունեցավ անըմբռնելի արագությամբ: Մշուշը հանկարծ երկուսի բաժանվեց, ասես դանակի հարվածով, և անձանոթ շոգենավի ցուկը ջրից բարձրացավ, իր հետ քաշելով մշուշի ծվեններ, որոնք կախված էին ինչպես ջրիմուռները բիրիակյան կետի երախից: Ես նկատեցի այդ նավի դեկորդի խցիկը, որտեղից դուրս էր ցցված սպիտակամորուս մի մարդ: Նրա հագին կար կա պույտ համազգեստ, և ես հիշում եմ, թե նա որքան կոկիկ տեսք և հանգիստ արտահայտություն ուներ: Նրա հանգստությունը, տվյալ հանգամանքներում, պարզապես սարսափելի էր: Նա կարծես սովոր էր հպատակվելու ճակատագրին, նրա հետ քայլելու ձեռք-ձեռքի, իսկ այժմ սառնարյունությամբ հաշվում էր հարվածի ուժգնությունը: Խցիկից դուրս ցցված՝ նա մտազբաղ հայացքով մեր կողմը նայեց, ասես որոշելու համար ընհարման ճիշտ կետը: Նա ոչ մի ուշադրություն չդարձրեց, երբ մեր դեկորդը կատաղությամբ գոչեց. «Ահա՛ թե ինչ արեցիք»:

Այժմ, անցածը վերհիշելիս նոր եմ ըմբռնում, որ այդ նկատողությունն այնքան բացորոշ էր, որ ավելորդ էր դարձնում ինքնապաշտպանության որևէ փորձ:

— Կառչեցեք որևէ տեղից ու պահեք ձեզ,— ասաց ինձ կարմրադեմ մարդը: Նրա գրգռվածությունը բոլորովին անցել էր, կարծես նա այժմ վարակվել էր գերբնական հանդարտությամբ:

— Հիմա դուք կլսեք կանանց ճղճղոցը,— ասաց նա մռայլ, համարյա դառն արտահայտությամբ, և ինձ թվաց, թե անցյալում էլ արդեն այդ փորձն ունեցել էր:

Նախքան նրա խորհրդին հետևելը նավերն իրար բախվեցին: Ըստ երևույթին, մյուս շոգենավը մեզ խփեց մեջտեղից, բայց ես չտեսա, թե ինչպես, որովհետև «Մարտինեզը» ուժգին թեքվեց, և նույն պահին լսվեց ջարդվող տախտակների ճարճատյունը: Ես ընկա թրջված տախտակամածի վրա և դեռ չէի հասցրել ոտքի կանգնել, երբ լսեցի կանանց ճչոցը: Ես համոզված եմ, որ այդ ճչոցն էր բոլոր լեղապատառ ձայների մեջ ամենաաննկարագրելին, որ ինձ խուճապի մատնեց: Իսկույն մտաբերեցի, որ փրկագոտիները պահված են նավասրահում, բայց սրահի դռան առաջ ընդհարվեցի մուլեգնորեն դուրս խուժող մարդկանց ու կանանց, որոնք ինձ ետ շարտեցին: Թե ինչ տեղի ունեցավ հաջորդ մի քանի վայրկյանների ընթանում, չգիտեմ, միայն հիշում եմ, որ նավաստիները գոռոտեկալներից փրկագոտիներ էին իջեցնում, իսկ կարմրադեմ մարդը դրանք հագնում էր հիստերիկայի մատնված մի խումբ կանանց: Այդ պատկերն իմ հիշողության մեջ այնքան հստակ և ուժեղ է դրոշմված, որ այժմ էլ աչքիս առջև տեսնում եմ իր բոլոր մանրամասներով. նավասրահի միջնորմին բացված ատամնաձև եզերքով անցքը, դրա միջով ելումուտ անող մոխրագույն մեզը, փափուկ բազմոցները, որոնց վրա խոնված են հանկարծական փախուստի ամեն տեսակ իրեղեն ապացույցներ՝ ծանրոցներ, ուղետուպրակներ, հովանոցներ, ճանապարհորդական վերմակներ. իմ հոդվածը կարդացող գիրուկ ջենթլմենը, որը խցանե փրկագոտի հագած, ամսագիրը դեռ ձեռքին, միօրինակ համառությամբ ինձ հարց է տալիս, թե, արդյո՞ք իմ կարծիքով որևէ լուրջ վտանգ

սպառնում է մեզ . կարմրադեմ մարդը, որն իր արհեստական ոտքերով խիզախորեն քայլելով, փրկագոտի է հագցնում բոլոր մոտեցողներին. և վերջապես՝ կանանց խելացնոր վայնասունը:

Կանանց այդ վայնասունը ամենից ավելի էր ազդում իմ ջղերի վրա: Ըստ երևույթին, այն ազդում էր նաև կարմրադեմ մարդու ջղերի վրա, որովհետև ես ականատես եղա նա մի տեսարանի, որը երբեք չի ջնջվելու իմ հիշողությունից. գիրուկ ջենթլմենը ամսագիրը վերարկուի գրպանն է խոթում և հետաքրքրությամբ նայում շուրջը. գունատ ու սարսափահար կանայք, իրար խառնված, լայնաբաց բերաններով ճղճղում են միաձայն, ինչպես կործանված հոգիների մի ամբողջ երգչախումբ, կարմրադեմ մարդը, զայրույթից շառագունած ու ձեռքերը շանթարձակ դիրքով բարձրացրած՝ գոռում է. «Լռեցե՛ք, օ՛, լռեցե՛ք»:

Հիշում եմ, թե ինչպես այդ տեսարանը հանկարծ իմ ծիծաղը բերեց, բայց հաջորդ վայրկյանին զգացի, որ ինքս էլ հիստերիկայի եմ մատնվում, որովհետև այդ կանայք, վերջ ի վերջո, ինձ համար հարազատ էին, ինչպես իմ մայրն ու քույրերը, և մահից ահաբեկված՝ չէին ուզում մեռնել: Նույնպես հիշում եմ, որ նրանց ձայներն ինձ հանկարծ հիշեցրին մսագործի դանակի տակ պառկած խոզերի ճղճղոցը և այդ կենդանի նմանությունն ինձ ցնցեց: Այդ կանայք, որոնք ընդունակ էին ամենավեհ զգացմունքների և ամենագողտրիկ մտեմությունների, այժմ լայնաբաց բերաններով ճղճղում էին: Նրանք ուզում էին ապրել, բայց անօգնական էին, ինչպես թակարդ ընկած առնետներ, և ճղավում էին:

Այդ տեսարանից սարսափահար՝ ուղղվեցի դեպի տախտակամածը և, ինձ վատ զգալով, նետվեցի մի նստարանի վրա: Ես աղոտ կերպով տեսնում էի վազվզող մարդկանց, լսում նրանց գոռոգոռոցը, երբ նրանք մակույկներ էին ծով իջեցնում: Այդ ամենը հար ու նման էր այն նկարագրություններին, որ ես կարդացել էի գրքերում: Ամբարձիչ թոկասարքերը խոնված էին: Ամեն ինչ անկանոն էր գործում: Մեկ էլ ծով իջեցրին կանանցով և երեխաներով լի մի մակույկ, որի խցանները չէին ագուցված: Նա իսկույն լցվեց ջրով և շրջվեց: Մի այլ մակույկ իջեցրին միայն մեկ ծայրից, իսկ մյուս ծայրը կախ մնաց ամբարձիչ թոկից, և հենց այդ դիրքում էլ թողեցին նրան: Աղետը պատճառող շոգենավը չէր երևում, թեև շուրջս խոնվածներից ոմանք ասում էին, թե այնտեղից անպայման նավակներ կուղարկվեն օգնության:

Իջա ներքևի տախտակամածը: «Մարտիները» արագորեն ընկղմվում էր և ջուրն արդեն հասել էր նավեզրին: Ճամփորդներից շատերը ծով էին նետվում: Ուրիշները, որոնք արդեն ծովում էին, գոռալով պաղատում էին, որ իրենց դարձյալ նավ բարձրացնեն, բայց նրանց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում: Հանկարծ միահամուռ աղաղակ բարձրացավ, թե ընկղմվում ենք: Ընդհանուր խուճապից վարակվելով, ես էլ ուրիշների հետ ծով նետվեցի: Թե ինչ ձևով նետվեցի, այդ չեմ հիշում, միայն հիշում եմ, որ դրանից հետո իսկույն հասկացա, թե ինչն^ո ջրում գտնվողները ուզում էին նորից նավ բարձրանալ: Ջուրը սառն էր, անտանելի սառը: Սուզվելիս ես զգացի կրակի այրոցի նման սուր ցավ, որը մինչև ողնածուծս թափանցեց: Թվաց, թե մահն ինձ սեղմում է իր ճիրանների մեջ: Վախից ու ցնցումից ականա շնչեցի և նախքան փրկագոտին ինձ մակերես կհաներ, թոքերս լցվեցին ջրով: Կոկորդիս ու թոքերիս մեջ լցված աղի ու դառնահամ ջուրը խեղդում էր ինձ:

Բայց ամենից տանջալին ցուրտն էր: Ինձ թվաց, թե հազիվ մի քանի րոպե կապրեմ: Շուրջս մարդիկ մաքառում ու թալրտում էին ջրի մեջ և իրար կանչում: Ես լսեցի նաև թիակների աղմուկ: Ակնհայտորեն, մյուս շոգենավը մակույկներ էր իջեցրել: Անցավ մի որոշ ժամանակ, և

ես զարմանքով անդրադարձա, որ տակավին կենդանի եմ: Բայց ոտքերս արդեն զգայագուրկ էին դարձել և սիրտս պատել էր սառեցնող մի թմրություն, որը գնալով ավելի էր սաստկանում: Փոքր ալիքների փրփրացող գագաթները փշրվում էին վրաս, լցվում բերանիս մեջ և ջրախեղդ անում ինձ:

Իմ շուրջը ձայներն սկսել էին անորոշ դառնալ, երբ մի վերջին, հուսահատական, միահամուռ աղաղակ լսվեց հեռվից և ես հասկացա, որ «Մարտինեզը» ընկղմվեց: Դրանից հետո, չգիտեմ որքան ժամանակ հետո, հանկարծ սարսափով անդրադարձա, որ բոլորովին մենակ եմ: Ոչ մի աղմուկ, ոչ մի կանչ. միայն ալիքների ձայնը, որը մշուշի պատճառով ինչ-որ մոգական հնչեղություն ու խորություն էր ստացել: Խուճապը, որը առաջանում է բազմության մեջ, մի տեսակ ընդհանուր շահագրգռվածություն է ստեղծում և այդ պատճառով էլ այնքան ահավոր չէ, որքան այն, որին մարդ մատնվում է, երբ մենակ է: Ահա այդպիսի խուճապի մատնվեցի: Ո՞ր էին ինձ տանում ալիքները: Կարմրադեմ մարդն ասել էր, որ մակընթացությունը Ոսկե Դարբասի միջով հեռանում է: Արդյո՞ք քշվում էի դեպի բաց ծովը: Փրկագոտին, որի շնորհիվ ծփում էի, կարող էր որևէ ժամանակ քայքայվել: Լսել էի, որ դրանք պատրաստվում են թղթից և եղեգնափայտից, որոնք թրջվելուց հետո շուտով կորցնում են լողալու հատկությունը: Ես բնավ չգիտեի լողալ: Եվ ահա մեն-մենակ ծփում էի գորշ անեզրության մեջ: Խոստովանում եմ, որ այդ պահին ինչ-որ խելագարություն եկավ վրաս և ես սկսեցի շոգենավի կանանց պես բարձրաձայն ճչալ և թմրած ձեռքերով ջուրը ծեծել:

Չեմ կարող ասել, թե որքան ժամանակ տևեց այդ դրությունը, որովհետև մտքիս մեջ տիրում էր մի տեսակ դատարկություն, որի ընթացքում պատահածները հիշում եմ միայն այն չափով, ինչ չափով մարդ կարող է հիշել խռովահույզ ու տաժանելի քնի ժամանակ պատահած բաները: Երբ ուշքի եկա, կարծես դարեր էին անցել: Հանկարծ իմ գլխավերևում տեսա մշուշից դուրս ցցված մի նավացուկ և օդով ուռած երեք եռանկյուն առագաստ, մեկը մյուսի վերևում: Ջուրը ճեղքելիս ցռուկը, փրփուր ու պղպջակ բարձրացնելով, առաջանում էր ուղիղ դեպի ինձ: Փորձեցի ձայն տալ, բայց այլևս վրաս ուժ չէր մնացել: Ցռուկը ալիքի մեջ խրվեց և քիչ էր մնում ինձ խփեր. նրա արձակած ջրի ցայտունքն անցավ գլխիս վրայով: Այնուհետև իմ կողքով սահեց նավի սև, երկար կողը, որն այնքան մոտիկ էր, որ նույնիսկ կարող էի ձեռքովս դիպչել: Ես խելագարի հաստատամտությամբ որոշեցի նրան հասնել և եղունգներով կառչել փայտից, սակայն, ձեռքերս թուլացել ու ընդարմացել էին: Նորից փորձեցի գոռալ, բայց կոկորդս ոչ մի ձայն չարտաբերեց: Նավի խելամասն արդեն անհետանում էր ալիքների խոր գոգավորության մեջ, երբ հանկարծ նշմարեցի երկու մարդկանց, որոնցից մեկը կանգնած էր դեկանիվի առաջ, իսկ մյուսը հանգիստ սիգար էր ծխում: Միգարի ծուխը դուրս փչելով, նա գլուխը դանդաղ շուռ տվեց դեպի ջուրը և նայեց իմ ուղղությամբ: Այդ հայացքը անտարբեր ու չնախամտածված այն շարժումներից էր, որը մարդ երբեմն կատարում է, երբ առանձնապես որևէ անելիք չունի և կատարում է սոսկ նրա համար, որ շարժվելու պահանջ է զգում:

Բայց այդ հայացքից կախված էր իմ կյանքը կամ մահը: Նավը արագորեն անհետանում էր մշուշի մեջ: Ես տեսա ղեկորդի թիկունքը և մյուս մարդու գլուխը, որը դանդաղ շրջվում էր: Նրա հայացքը սահեց ջրի երեսին և պատահաբար ուղղվեց իմ կողմը: Նրա դեմքը գուրկ էր որևէ արտահայտությունից, ինչպես այդ լինում է, երբ մարդ թաղված է խոր մտքերի մեջ: Ես վախենում էի, որ եթե նույնիսկ նրա հայացքը վրաս ընկնի, նա կարող է ինձ չտեսնել: Եվ ահա, նրա հայացքը վրաս ընկավ և նրա աչքերը շեշտակի իմ աչքերի մեջ նայեցին: Նա ինձ տեսավ, քանի որ խոյացավ դեպի դեկանիվը, ղեկորդին մեկ կողմ հրեց և սկսեց արագ-արագ

պատեցնել ղեկանիվը, միաժամանակ ինչ-որ հրամաններ արձակելով: Նավն իր ընթացքից շեղվեց և մշուշի մեջ սլանալով՝ շուտով անհետացավ:

Ես զգացի, որ ուշքս գնում է և կամքիս ամբողջ ուժով ջանացի մաքառել գիտակցությունս պաշարող հեղձուցիչ դատարկության ու խավարի դեմ: Մի քիչ անց լսեցի թիակների աղմուկ, որը հետզհետե մոտենում էր, և ապա՝ ինչ-որ մարդու ձայն: Երբ մակույկը բոլորովին մոտեցավ, մարդը բարկությամբ գոչեց.

— Գրո՛ղը տանի... Ինչո՞ւ ծպտուն չես հանում:

«Այդ ինձ է վերաբերում», մտածեցի և նույն պահին դատարկությունն ու խավարը պատեցին գիտակցությունս:

Գլուխ երկրորդ

Ինձ թվաց, թե լայնարձակ ճոճումներով օրորվում եմ տիեզերական տարածության մեջ: Առկայծող, լուսավոր կետեր էին անցնում իմ կողքով: Ես գիտակցում էի, որ դրանք աստղեր և շողշողուն գիսավորներ են, որ ուղեկցում են արևների շուրջը կատարած իմ թռիչքին: Երբ հասա ճոճման վերջին ծայրը, որտեղից պետք է դառնայի դեպի ետ, ինչ-որ հսկա մի գունդ սկսեց որոտաձայն զնգալ: Հանգիստ ծփալով դարերի գրկում, ես երկար ըմբռնեցի իմ տիտանական թռիչքը:

Բայց հետզհետե փոփոխվեց իմ երազը, որովհետև արդեն հասկանում էի, որ դա երազ էր: Տատանումների լայնությունը գնալով ավելի փոքրացավ: Այժմ զգում էի, որ ինձ մեկ կողմից մյուսն են նետում զայրացուցիչ արագությամբ: Երկնային տարածության մեջ իմ թռիչքներն այնքան արագ էին, որ հազիվ կարողանում էի շնչել: Գոնգը ավելի հաճախ և ավելի մոլեգին էր որոտում: Ես նրա յուրաքանչյուր հարվածին սպասում էի անասելի սարսափով: Այնուհետև թվաց, թե ինձ քարշ են տալիս կոշտ, արևից շիկացած ավազի վրա: Դրան հաջորդեց մի անտանելի տանջանքի զգացում: Մաշկս կարծես խանձվում էր կրակի վրա: Գոնգն այժմ հնչում էր մահազանգի նման: Առկայծող փայլուն կետերը անվերջանալի հոսանքով սլանում էին իմ մոտով, ասես աստղային ամբողջ համակարգությունը դատարկության մեջ էր թափվում: Ես, հեռապառ ու շնչակտուր, աչքերս բացեցի: Երկու մարդ, ծունկի եկած, ջանում էին ինձ ուշքի բերել: Լայն ճոճումները, ուրեմն, նավի տատանումներն էին ալիքների վրա, սարսափազդու գոնգը՝ պատից կախված թավան էր, որը գրնգում ու զնգզնգում էր նավի յուրաքանչյուր ցնցումից, իսկ այրող կոշտ ավազը՝ մերկ կուրծքս շփող մարդու կոշտ ձեռքերն էին: Ցավից տնքացի և կիսով չափ բարձրացրի գլուխս: Կուրծքս քերծվել ու կարմրել էր: Ես նկատեցի, որ բզկտված ու բորբոքված մաշկիս վրա արյան գնդիկներ են գոյացել:

— Հերի՛ք է, Յոնսոն,— ասաց մյուս մարդը,— չե՞ս տեսնում, որ ջենթլմենի ողջ մաշկը կլպեցիր:

Նա, որ կոչվում էր Յոնսոն, սկանդինավյան տիպի հուժկու մի մարդ, դադարեց շփելուց և ոտքի կանգնեց անձոռնի ձևով: Մյուսը, առողջանությունից դատելով, պետք է անկասկած կոկնի լիներ: Կանոնավոր գծերով, քաղցր-մեղք, համարյա կանացի դեմքը այն տպավորությունն էր թողնում, որ մոր կաթի հետ նա ներծծել է լոնդոնյան եկեղեցիների զանգակների դողանջները: Գլուխը ծածկող քաթանե կեղտոտ թասակը և բարակ ազդրերից

կախված կոպիտ գոգնոցը վկայում էին, որ նա խոհարար է չափազանց աղտոտ մի ցոկանավում, որտեղ գտնվում էի նաև ես:

— Իսկ հիմա ինչպե՞ս եք զգում ձեզ, սըր,— հարցրեց նա ստորաքարշ կեղծ ժպիտով, որն, ըստ երևույթին, ժառանգել էր դրամական նվեր ակնկալելու սովոր նախահայրերից:

Փոխանակ պատասխանելու, տնքալով մի կերպ բարձրացա տեղիցս և Յոնսոնի օգնությամբ ոտքի կանգնեցի: Թավայի զրնգոցը սարսափելի ազդում էր ջղերիս վրա: Ես դեռ չէի կարողանում մտքերս հավաքել: Հենվելով միջնորմին, որն այն աստիճան յուղոտ ու կեղտոտ էր, որ ատամներս ակամա սեղմեցի, ես հասա այդ անտանելի թավային, որը կախված էր օջախասալի վերևում, վերցրի և շարտեցի ածուխի արկղի մեջ:

Խոհարարը քմծիծաղով ժպտաց իմ ջղայնության այդօրինակ դրսևորման վրա և ձեռքիս մեջ խցկեց մի գավաթ, որից շոգի էր բարձրանում.

— Խմեցեք,— ասաց նա,— սա կօգնի:

Դա նավի սուրճն էր, նոդկալի մի հեղուկ, որի տաքությունը, այնուհանդերձ, կազդուրեց ինձ: Սուրճը խմելիս ես մի հայացք նետեցի իմ բորբոքված, արյունոտ կրծքին, ապա դիմեցի սկանդինավցուն.

— Շնորհակալ եմ, միստր Յոնսոն,— ասացի ես:— Բայց չե՞ք կարծում, որ մարմնիս վրա չափից ավելի հերոսական միջոցառումներ եք գործադրել:

Նա իմ կշտամբանքը կռահեց ոչ այնքան իմ խոսքերից, որքան կրծքիս ուղղած իմ հայացքից, և պատասխանի վախարեն ցույց տվեց իր ձեռքի ափը, որը լի էր կոշտուկներով: Ես շոշափեցի նրա ափի խարտոցանման կոշտուկները և այդ հպումից առաջացած սարսափելի զգացողությունից ատամներս մի անգամ ևս ակամա սեղմվեցին:

— Եմ անունը Ջոնսոն է, ոչ թե Յոնսոն,— ասաց նա դանդաղ, բայց շատ ճիշտ անգլերենով, ուր հազիվ նկատելի էր օտար առոգանության որևէ երանգ:

Նրա բաց-կապույտ աչքերում կար մեղմ բողոքի, բայց դրա հետ մեկտեղ ինչ-որ ամոթխած անկեղծության ու քաջության արտահայտություն, որն իմ մեջ խոր համակրանք առաջացրեց այդ մարդու նկատմամբ:

— Շնորհակալ եմ, միստր Ջոնսոն,— ասացի ես, ուղղելով իմ սխալը և ձեռքս մեկնեցի նրան:

Նա վարանեց, ամաչկոտ ու անշնորհք շարժումով նախ մեկ, հետո մյուս ոտքի վրա հենեց մարմինը և ապա շփոթված, ձեռքս բռնելով, սրտանց սեղմեց:

— Որևէ չոր զգեստ ունե՞ք, որ փոխվեմ,— հարցրի խոհարարին:

— Այո, սըր,— ասաց նա զվարթ փութկոտությամբ,— եթե դեմ չեք, սըր, որ իմ հագուստները հագնեք, ես հիմա կգնամ ներքև և իրեղենների տոպրակս աչքի կանցկացնեմ:

Նա դռնից դուրս խոյացավ, ավելի շուտ սահեց այնպիսի արագությամբ ու ճկունությամբ, որ հատուկ է ոչ այնքան կատվի, որքան սողունի: Սողալու այս հատկությունը, ինչպես հետո պիտի իմանայի, հավանաբար, նրա բնավորության ամենացայտուն արտահայտությունն էր:

— Իսկ որտե՞ղ եմ ես գտնվում,— հարցրի Ջոնսոնին, որը, ենթադրում էի (և չեմ սխալվել), թե նավաստիներից մեկն է։— Ի՞նչ նավ է սա և ո՞ր է գնում։

— Ֆարալոնյան կղզիների մոտերքն ենք և գնում ենք դեպի հարավ-արևմուտք,— ասաց նա դանդաղ ու կանոնավոր, կարծես ջանալով անսխալ խոսել անգլերեն և պատասխանել ըստ իմ հարցերի հաջորդականության։— Սա երկկայմանավ է, կոչվում է «Ուրվական» և գնում է դեպի Ճապոնիայի ափերը՝ ծովակատուներ որսալու։

— Իսկ ո՞վ է նավապետը։ Ես պետք է նրան տեսնեմ, հենց որ հագնվեմ։

Ջոնսոնի դեմքին գծագրվեց շփոթության արտահայտություն։ Նա մի պահ վարանեց, ապա իր բառապաշարից մի լրիվ նախադասություն կազմելով, ասաց.

— Նավապետը Գայլ Լարսենն է, այդպես են անվանում նրան բոլորը։ Ես բնավ չեմ լսել նրա իսկական անունը։ Բայց լավ կանեք, որ նրա հետ մեղմ խոսեք։ Նա այսօր կատաղած է։ Նրա օգնականը . . .

Նա չվերջացրեց. խոհարարը ներս էր սողոսկել։

— Դե, չքվի՛ր այստեղից, Յոնսոն,— ասաց նա։— Գուցե ծերուկը քո կարիքը զգա տախտակամածի վրա, այսօր նրան ջղայնացնելու օր չէ։

Ջոնսոնը, հնազանդվելով, ուղղվեց դեպի դուռը և միաժամանակ խոհարարի ուսի վրայից նշանակալից կերպով ու արտակարգ հանդիսավորությամբ ինձ աչքով արեց, կարծես ընդգծելու համար իր կիսատ մնացած դիտողության իմաստն ու նավապետի հետ մեղմ խոսելու անհրաժեշտությունը։

Խոհարարի թևից կախված էին ճմրթած, կեղտոտ, տգեղ հագուստներ, որոնցից թթու հոտ էր գալիս։

— Սրանք դեռ թաց էին, սըր, երբ հավաքեցի,— նա հարկ համարեց ինձ բացատրել,— այնպես որ պետք է յուրա գնաք, մինչև ձեր հագուստները կրակի մոտ չորացնեմ։

Միջնորմին կառչելով, նավի ցնցումներից տատանվելով, խոհարարի օգնությամբ վերջապես հագա բոլոյա կոպիտ ներքնաշապիկը, որի կոշտ շփումից մաշկս ականա փշաքաղվեց։ Նա նկատեց իմ դեմքի ծամաճռությունը և քմիծաղ տվեց։

— Ինձ թվում է, որ դուք սովոր չեք այսպիսի բաների, որովհետև ձեր մաշկը կնոջ մաշկի պես փափուկ է։ Ես առաջին հայացքից բոլորովին համոզվեցի, որ դուք ջենթլմեն եք։

Առաջին բույրից իսկ ես նրա հանդեպ հակակրություն էի զգացել, իսկ երբ նա ինձ օգնում էր հագնվել, այդ հակակրանքն ավելի սաստկացավ։ Նրա հայումի մեջ ինչ-որ վանող բան կար։ Ես խորշում էի նրա ձեռքից, և մարմինս կարծես ընդվզում էր, երբ նա դիպչում էր ինձ։ Այս տհաճ զգացումը և մյուս կողմից՝ սալօջախի վրա եռացող ու քլթքլթացող կաթսաներից բարձրացող հոտը ինձ մղում էին դուրս, դեպի մաքուր օդ։ Բացի դրանից, անհրաժեշտ էր նավապետին տեսնել ու խոսել հետը ինձ ցամաք հանելու մասին։

Խոհարարն ինձ հագցրեց բամբակե էծանագին մի շապիկ, որի օձիքը մաշված էր, իսկ կրծքի վրա կային նշաններ, որոնք, ըստ երևույթին, արյան բծեր էին։ Օգնելով հանդերձ, նա ինձ վրա

տեղում էր չքմեղանքների և բացատրությունների մի անվերջ տարափ: Ես հագա գործավորի մաշիկներ և կապույտ, գունաթափ մի տաբատ, որի ոտքերից մեկը առնվազն տասը մատնաչափ կարճ էր մյուսից: Գուցե հենց սատանան էր ճանկեղ տաբատի այդ ոտքը, որպեսզի դրա միջով խոհարարի հոգին դուրս քաշի, սակայն հոգի չգտնելով, պոկել էր պատյանը:

— Բայց ես դեռ չգիտեմ, ո՞ւմ պետք է շնորհակալություն հայտնել այս սիրալիրության համար,— հարցրեցի ես, երբ լրիվ զգեստավորվեցի: Մի փոքր գդակ զարդարում էր գլուխս, հագել էի կեղտոտ, գծավոր, բամբակե մի բաճկոն, որը մինչև գոտկատեղս էր հասնում և որի թևերը հազիվ էին իջնում արմունկից մի քիչ ներքև:

Խոհարարը, քծնող ժպիտը դեմքին, խոնարհաբար մեջքն ուղղեց: Ատլանտյան օվկիանոսի վրա կատարած իմ ճանապարհորդություններից կուտակել եմ բավական փորձ և լավ եմ ճանաչում դեմքի այն արտահայտությունը, որ ունենում են նավի սպասավորները ճանապարհորդության վերջում: Ուստի կարող էի երդվել, որ նա սպասում էր վարձատրության: Բայց հիմա, երբ նրան ավելի մոտիկից եմ ճանաչում, բոլորովին համոզված եմ, որ նա այդ դիրքը ընդունել էր անգիտակցաբար: Դա, անկասկած, ժառանգական ստրկամտության արդյունք էր:

— Մագրիջ, սը՛ր,— ասաց նա քծնող արտահայտությամբ, և նրա կանացի դեմքին գծագրվեց հեզահամբույր մի ժպիտ:— Թոմաս Մագրիջ, սըր, ձեզ ծառայելու միջոտ պատրաստ:

— Շատ բարի, Թոմաս,— ասացի ես,— երբ չորանա իմ հագուստը, ես քեզ չեմ մոռանա...

Նրա դեմքը պայծառացավ և աչքերը փայլեցին. ասես հոգու խորքում նախահայրերը խլրտացին հնօրյա վարձատրությունների աղոտ հիշատակներով:

— Շնորհակալ եմ, սը՛ր,— ասաց նա շատ խոնարհ ու հաճոյակատար արտահայտությամբ:

Ես ուղղվեցի դեպի դուռը: Խոհարարը մի կողմ քաշվեց ճանապարհ տալու համար, և ես դուրս եկա տախտակամած: Ջրի մեջ երկար մնալուց հետո ես ինձ դեռ թույլ էի զգում: Հենց այդ պահին փչեց քամու մի ուժեղ հոսանք և ես, տատանվող տախտակամածի վրա երերալով, ի վերջո, հասա նավասենյակի անկյունը, որին կոթնեցի ինձ պահելու համար: Երկկայմանավր խիստ թեքված՝ մեկ սուզվում էր օվկիանոսի լայն ալիքների խորքը, մեկ բարձրանում նրանց գագաթը: Եթե նավը գնում էր դեպի հարավ-արևմուտք, ինչպես ասել էր Ջոնսոնը, ապա, իմ հաշվով՝ քամին փչում էր մոտավորապես հարավից: Մշուշն արդեն անհետացել էր և նրա փոխարեն արևը փայլվում էր ջրի երեսին: Ես նայեցի արևելյան կողմը, որտեղ պետք է գտնվեր Կալիֆոռնիան, բայց ոչինչ չկարողացա տեսնել, բացի ցած փոված մշուշի շերտից, այն մշուշի, որն առաջացրեց «Մարտինեզի» աղետը և ինձ զցեց ներկա անբաղձալի դրության մեջ: Հյուսիսում, մեզանից ոչ շատ հեռու, ջրից դուրս էին ցցվել մերկ ժայռեր, որոնցից մեկի վրա մի փարոս տեսա: Հարավ-արևմտյան կողմում, գրեթե մեր ուղղության վրա, ես նշմարեցի ինչ-որ նավի բրգաձև առագաստների ուրվագծերը:

Հորիզոնի ուսումնասիրությունն ավարտելուց հետո ուշադրությունս դարձրի դեպի իմ անմիջական շրջապատը: Եվ առաջին մտածումս այն եղավ, որ մահից մազապուրծ փրկված որևէ նավաբեկյալ պետք է արժանանար ավելի ուշադրության, քան ես արժանացա: Բացի

դեկանիվի մոտ կանգնած նավաստուց, որը ձեղնախցիկի վրայով հետաքրքրությամբ նայում էր ինձ, ոչ ոք ուշադրություն չդարձրեց ինձ վրա:

Բոլորը, ըստ երևույթին, զբաղված էին տախտակամածի մեջտեղում տեղի ունեցող իրադարձությամբ: Այնտեղ, ամբարածածկի երկայնքին, մեջքի վրա պառկած էր մի հաղթանդամ մարդ: Նրա լայնաբաց շապկի տակից երևում էր խիտ, սև մազերով ծածկված կուրծքը, որը հիշեցնում էր այծի կամ շան բրդոտ մարմինը: Դեմքն ու վիզը ամբողջովին ծածկված էին սև մորուքով, որի մեջ կային հատուկենտ սպիտակ մազեր, և որը թավ ու ցցուն պետք է լիներ, եթե թաց չլիներ: Աչքերը փակ էին. ըստ երևույթին, նա ուշագնաց էր: Կիսաբաց բերանից լսվում էր աղմկալի շնչառություն, իսկ կուրծքը հևում էր, ասես շնչահեղձությունից: Նավաստիներից մեկը պարանով կապված անջրանցիկ կտորից դույլը մերթ ընդ մերթ գցում էր ծովը և, սովորական պարտականություն կատարելու տեսքով, վեր քաշում ու պարունակությունը թափում էր գիտակցությունը կորցրած մարդու վրա:

Ամբարածածկի մոտ, գայրույթից սիգարի ծայրը կատաղորեն խածոտելով, անցուդարձ էր անում այն մարդը, որի պատահական հայացքն ինձ փրկել էր մահից: Նրա հասակը հինգ ոտնաչափ և տասը կամ գուցե տասուկես մատնաչափ կլիներ, բայց ինձ վրա տպավորություն գործեց ոչ թե նրա հասակը, այլ, առաջին հերթին՝ նրա ուժը: Թեև նա հաղթանդամ էր, լայն կրծքով և ուսերով, այնուամենայնիվ, ես նրան ծանրամարմին չէի համարի: Նրա մեջ ինչ-որ ջղուտ, առաձգական ուժ կար, որը հատուկ է նիհար ու ջլապինդ մարդկանց, և որն այս ամրակազմ մարդուն տալիս էր հսկա գործիլայի նմանություն: Նա ոչ թե արտաքուստ նման էր գործիլայի. իմ խոսքը վերաբերում է նրա ուժին, անկախ նրա արտաքին տեսքից: Դա այնպիսի ուժ էր, որ մենք սովոր ենք վերագրել սկզբնական էակներին՝ վայրի անասուններին ու մեր նախահայրերին, որոնք, ըստ մեր երևակայության, ապրում էին ծառերի վրա: Այդ վայրի, կատաղի ու կենսունակ ուժը կյանքի բուն էությունն է հենց նրա համար, որ իր մեջ պարունակում է շարժման կարողությունը և այն սկզբնանյութը, որից կերտվել են բազմատեսակ կենդանի արարածները: Կարճ ասած, դա այն ուժն է, որը գալարում է գլխատված օձի մարմինը կամ այն կենդանությունը, որ դեռ շարունակվում է սպանված կրիայի մեջ և ցնցում ու դողացնում է նրա տձև մսագունդը:

Ահա այսպիսին էր այն տպավորությունը, որ ինձ վրա թողեց տախտակամածի վրա երթևեկող մարդը: Ամուր դնելով ոտքերը, նա քայլում էր հաստատ ու վստահ: Նրա մկանների յուրաքանչյուր շարժումը, ուսերի ցնցումից մինչև շրթների պրկումը սիգարի շուրջը, վճռական էր և կարծես բխում էր արտակարգ ու գերիշխող ուժից: Բայց այդ արտաքին ուժը, որն արտահայտվում էր ամեն մի շարժումի մեջ, կարծես արտացոլումն էր ինչ-որ ավելի մեծ ուժի, որը թաքնված էր ներսում, քնած վիճակի մեջ, բայց որը կարող էր որևէ ժամանակ զարթնել առյուծի կատաղության կամ մրրիկի պոռթկումի պես սարսափելի ու տիրական:

Խոհարարը գլուխը դուրս հանեց խոհանոցի դռնից և խրախուսական ձևով ժպտաց ինձ, միաժամանակ բթամատը շարժելով դեպի այն մարդը, որը քայլում էր ամբարածածկի շուրջը: Այսպիսով ես հասկացա, որ նա է նավապետը, կամ, խոհարարի արտահայտությամբ ասած, «ծերուկը», որի հետ պետք է խոսեի և խնդրեի, որ ինձ մի կերպ ցամաք հանի: Ես առաջ շարժվեցի, համոզված լինելով, որ բուռն վեճ պետք է ծագի իմ և նավապետի միջև: Բայց հենց նույն րոպեին մի ուժեղ նուպա ցնցեց դժբախտ մարդուն, որը պառկած էր հատակին: Նա սկսեց ջղաձգորեն գալարվել: Մեջքի մկանները ձգվեցին, թաց մորուքով կզակը ցցվեց ավելի վեր,

իսկ կուրծքը բնագդական ճիգով ուռեց ավելի օդ շնչելու համար: Ես թեև չէի տեսնում նրա մաշկը, բայց կռահում էի, որ այն սկսել էր ծիրանագույն դառնալ:

Նավապետը կամ Գայլ Լարսենը, ինչպես նրան կոչում էին նավաստիները, դադարեց քայլել և սկսեց դիտել մահամերձ մարդուն: Կենաց և մահու վերջին պայքարն այնքան կատաղի էր, որ ջուր բերող նավաստին կանգ առավ և աչքերը չռած հետաքրքրությամբ նայեց մահամերձին, իսկ ձեռքի դույլը թեքվեց և ջուրն սկսեց թափվել հատակին: Մահամերձը կրունկները թափահարեց, ոտքերը վերջին գերագույն ճիգով պրկեց և սկսեց գլուխը աջ ու ձախ օրորել: Ապա դեմքի մկանները թուլացան, գլուխն անշարժացավ և ասես խոր թեթևացման մի հառաչ դուրս թռավ շրթներից: Երբ կզակը կախվեց ու վերևի շուրթը բարձրացավ, երևաց ծխախոտից դեղնած ատամների երկու շարքը, և դիմագծերը քարացան դիվային ժպիտի մեջ: Այդ պահին ինձ թվաց, թե նա ծաղրում էր այն աշխարհը, որին խաբել ու հեռացել էր:

Հետո կատարվեց մի զարմանալի բան: Նավապետը հանկարծ ահեղ փոթորկի նման պոռթկաց մեռածի վրա: Հիշոցների ամբողջ մի հեղեղ թափվեց նրա բերանից: Դրանք միայն հասարակ հայհոյանքներ կամ անվայել արտահայտություններ չէին: Յուրաքանչյուր բառը մի սրբապղծություն էր, և այդ բառերը բազմատեսակ էին: Նրանք ճարճատում ու շառաչում էին էլեկտրական կայծերի պես: Ես երբեք կյանքումս այդպիսի խոսքեր չէի լսել, ոչ էլ կարող էի պատկերացնել այդպիսի բան: Բայց քանի որ առհասարակ հետաքրքրվում եմ արտահայտչական ինքնատիպ ձևերով և հյութալի դարձվածքներով, պետք է խոստովանեմ, որ բոլորից ավելի ես գնահատեցի գործածվող փոխաբերությունների արտակարգ պատկերավորությունն ու կենսունակությունը, նրանց բացարձակ սրբապղծությունը: Որքան որ հասկացա, այդ պոռթկումի պատճառը հետևյալն էր. հանգուցյալը, որը նավապետի օգնականն էր, Սան-Ֆրանցիսկոյից ճանապարհվելուց առաջ չափից ավելի էր կոնծել ու նավագնացության հենց սկզբին աննրբանկատություն էր ունեցել մեռնելու, այդպիսով, Գայլ Լարսենին թողնելով առանց օգնականի:

Ավելորդ է հիշեցնել, զոնե իմ բարեկամներին, որ ես ներքուստ խորապես վիրավորվեցի: Հիշոցներն ու լուտանքները ինձ միշտ նողկանք են պատճառել: Մարմինս մի տեսակ թուլացավ, սիրտս մղկտաց, գլուխս պտտվեց: Ինձ համար մահը միշտ ունեցել է վեհ հանդիսավորություն, որովհետև միշտ ժամանել է խաղաղ, մեծաշուք սրբությամբ: Մահվան այլանդակ և սոսկալի կողմը մինչև օրս ինձ դեռևս անհայտ էր: Գայլ Լարսենի բերանից ժայթքող սարսափելի արտահայտությունների պատկերավորությունը գնահատելով հանդերձ, ես ցնցվեցի անբացատրելի ուժով: Այդ խոսքերի այրող շունչը բավական էր թառամեցնելու մեռածի դեմքը, և ես պիտի չզարմանայի, եթե նրա թաց մորուքը հանկարծ գանգրանալով ու բոցավառվելով, ծուխ արձակեր: Սակայն մեռածը անվրդով էր: Նա շարունակում էր ժպտալ հեզնական արտահայտությամբ, որի մեջ կար անպատկառ ծաղրանք ու մարտահրավեր: Այդ պահին գերիշխողը նա էր:

Գլուխ երրորդ

Գայլ Լարսենը այնքան անակնկալ դադարեցրեց իր հիշոցները, որքան անակնկալ սկսել էր: Նա նորից վառեց սիգարը և շուրջը նայեց: Նրա հայացքն ընկավ խոհարարի վրա:

— Այդ դո՞ւ ես, խոհարար,— ասաց նա մի յուրօրինակ քաղցրությամբ, որի մեջ զգացվում էր պողպատի սառնությունն ու կարծրությունն:

— Այո, սը՛ր,— պատասխանեց խոհարարը հաճոյակատար ու աղերսական ստորաքարշությամբ:

— Ինձ թվում է, թե վիզդ չափից ավելի ես դուրս երկարել: Այդ վնասակար է, գիտե՞ս: Օգնականս մեռավ, և չեմ ուզում հիմա քեզ էլ կորցնել: Դու պետք է շա՛տ զգույշ լինես առողջությանդ նկատմամբ, խոհարա՛ր: Հասկանալի՞ է:

Վերջին խոսքը, ուժգնորեն հակադրվելով նախորդ խոսքերի քաղցրությանը, հնչեց ինչպես մտրակի շալյուն, որի ներքո սարսռաց խոհարարը:

— Այո, սը՛ր,— ասաց նա խղճուկ ձայնով և նրա դուրս երկարած գլուխն իսկույն անհետացավ խոհանոցում:

Այս շշպումից հետո, որը բաժին էր ընկել միայն խոհարարին, նավակազմի մնացյալ անդամները լծվեցին իրենց պարտականություններին: Սակայն մի քանի մարդ, որոնք, ըստ երևույթին, նավագներ չէին, ցածրաձայն զրուցելով շարունակեցին ման գալ նավասանդուղքի շուրջը, որը գտնվում էր ամբարածածկի և խոհանոցի միջև: Ես հետո իմացա, որ նրանք որսորդներ են, ծովակատվի որսորդներ, որոնք վայելում են շատ ավելի առանձնաշնորհյալ դիրք, քան հասարակ նավաստիները:

— Յոհանսե՛ն,— գոչեց Գայլ Լարսենը, և նավաստիներից մեկը հլու հնազանդությամբ նրան մոտեցավ:— Գնա՛, ասեղն ու հրիչը բեր և այս դատարկապորտին կարիք: Մի առագաստ էլ ճարիր մառանից: Դե, շարժվի՛ր:

— Իսկ ոտքերին ի՞նչ կապեմ, սըր,— հարցրեց նավաստին, սովորական «այո՛, սըր»-ից հետո:

— Մի բան կմտածենք,— պատասխանեց Գայլ Լարսենը և, ձայնը բարձրացնելով, կանչեց խոհարարին:

Թոմաս Մագրիջը խոհանոցից հանկարծ դուրս նետվեց, ինչպես խաղալիքե զսպանակավոր սատանան դուրս է ցցվում իր տուփից:

— Իջի՛ր ամբար և մի պարկ քարածուխ բեր:

— Ձեզանից որևէ մեկը աստվածաշունչ կամ աղոթագիրք ունի՞,— հարցրեց նավապետը, այս անգամ դիմելով որսորդներին, որոնք ման էին գալիս նավասանդուղքի շուրջը:

Նրանք գլուխները բացասաբար շարժեցին և նրանցից մեկը կատակով ասաց ինչ-որ բան, որը չլսեցի, բայց որն ընդհանուր ծիծաղ առաջացրեց:

Գայլ Լարսենը նույն հարցը նավաստիներին տվեց: Աստվածաշունչն ու աղոթագիրքը, ըստ երևույթին, հազվագյուտ առարկաներ էին այս նավի վրա: Նավաստիներից մեկը գնաց ներքև՝ պահնորդներին հարցնելու և մի քանի թոպեից վերադառնալով, հայտնեց, որ նրանք էլ չունեն:

Նավապետը ուները թոթվեց:

— Այդ դեպքում նրան ջուրը կգցենք առանց շաղակրատության: Բայց եկեղեցականի տեսքով մեր նավաբեկյալը գուցե անգիր իմանա ծովային թաղման աղոթքը:

Այս խոսքերն ասելիս Գայլ Լարսենը հանկարծ շրջվեց դեպի ինձ:

— Դուք քահանա եք, այո՞,— հարցրեց նա:

Որսորդները, նրանք թվով վեցն էին, միանգամից շուտ եկան և նայեցին ինձ: Ես, ցավոք, գիտակցում էի, որ ագռավի տեսք ունեի: Ի տես իմ կերպարանքին բարձրացավ մի այնպիսի հոռոտ, որ հատակին փռված ժպտացող դիակի ներկայությունն անգամ չօգնեց մեղմելու: Այդ հոռոտը փոթորկոտ ու անզուսպ էր, ինչպես ծովը, և բխում էր բիրտ զգացումներից ու բթացած զգայությունից, որ հատուկ են միայն անկիրթ ու անտաշ բնավորություններին:

Գայլ Լարսենը չծիծաղեց, թեև նրա մոխրագույն աչքերը գոհունակությամբ փայլեցին: Նա մոտեցավ ինձ, և միայն այդ ժամանակ ես առաջին անգամ նշմարեցի բուն մարդը՝ անկախ արտաքինից և հիշոցների հեղեղից: Շեշտված գծերով, լայն, քառակուսի և լեցուն դեմքը առաջին հայացքից խոշոր է թվում: Բայց ինչպես մարմնի, այնպես էլ դեմքի խոշորության տպավորությանը շուտով չքանում է և դրա վախարեն քո մեջ հաստատվում է այն համոզմունքը, որ այդ մարդու էության խորքում թաքնված է հոգևոր ու իմացական ահեղ ու վիթխարի մի ուժ: Ծնոտը, կզակը և աչքերի վերևում ցցված ճակատը արտակարգ ուժի տպավորություն էին թողնում և միաժամանակ վկայում անտեսանելի հոգու անհուն քաջության ու կորովի մասին: Ուղղակի անհնար է այդպիսի հոգու խորքը չափել, սահմանները որոշել և որևէ ճանաչված վերնագրի տակ բնութագրել:

Աչքերը, ինձ վիճակվեց դրանք լավ ճանաչել, խոշոր էին, գեղեցիկ, իրարից հեռու, արվեստագետի աչքերի պես: Նրանք ստվերապատված էին կամարած, թավ ու սև հոնքերի ու լայն ճակատի տակ: Այդ աչքերի գույնը այնքան փոփոխական էր, որ անընդհատ տարբեր երանգներ էր ընդունում, ինչպես փողփողուն մետաքսը՝ արևի տակ: Նրանք մերթ բաց մոխրագույն էին, մերթ մուգ, մերթ կանաչավուն, մերթ էլ խորունկ ծովի պես ջինջ կապուտակ: Այդ աչքերը հազար ու մի դիմակներով սքողում էին հոգին և միայն հազվադեպ առիթներով նրան թույլ էին տալիս իր ամբողջ մերկությանմբ դուրս խոյանալու դեպի հրաշալի մի արկածախնդրություն: Այդ աչքերը կարող էին կապարագույն երկնքի մռայլությունն ստանալ, կարող էին հրացայտ կայծեր արձակել, նման շաչող թրի փայլատակումներին, կարող էին բևեռային սառնությամբ նայել և կամ մեղմանալով ջերմանալ, բռնկվել սիրո բոցով, կարող էին հզոր, առնական, գրավիչ ու հրամայող դառնալ և հրապուրել ու իշխել կանանց, մինչև որ նրանք հանձնվեին հաճույքով, հրճվանքով, ինքնամոռաց հափշտակությամբ:

Բայց վերադառնանք մեր պատմությանը: Ես նավապետին պատասխանեցի, որ հոգևորական չեմ և, դժբախտաբար, չեմ կարող թաղման արարողություն կատարել: Նա կտրուկ հարցրեց.

— Իսկ ինչպե՞ս եք ձեր ապրուստը հայթայթում:

Պետք է խոստովանեմ, որ այդպիսի հարց դեռ ոչ ոք ինձ չէր տվել և ես ինքս էլ դրան երբեք չեմ անդրադարձել: Մի պահ շփոթվեցի և նախքան ուշքի գալս անմտորեն թոթովեցի .

— Ես . . . ես ջենթլմեն եմ:

Նրա շրթունքն ստացավ արհամարհական արտահայտություն:

— Ես աշխատել եմ և աշխատում եմ,— գոչեցի աշխույժով, կարծես նա իմ դատավորը լիներ կամ ես կարիք ունենայի ինքնապաշտպանության, և հենց նույն պահին գիտակցեցի, որ իմ կողմից կատարյալ տխմարություն էր այդ առթիվ անգամ բացատրություն տալը:

— Աշխատում եք ձեր ապրուստի՞ համար:

Նա այս հարցը տվեց այնպիսի հրամայական և տիրական ձևով, որ ես բոլորովին շվարեցի և, ինչպես պիտի ասեր Ֆարասեթը, «բթացա» այն աշակերտի նման, որը դողդողում է խստաբարո ուսուցչի առջև:

— Ո՞վ է ձեզ կերակրում,— եղավ նրա հաջորդ հարցումը:

— Ես եկամտատեր եմ,— պատասխանեցի արժանավորությամբ և հենց նույն վայրկյանին պատրաստ էի լեզուս կծել իմ պատասխանի համար:— Սակայն այս ամենը, թույլ տվեք ասելու, ոչ մի առնչություն չունի այն հարցի հետ, որի համար եկել եմ ձեզ տեսնելու:

Բայց նա անտեսեց իմ բողոքը:

— Ո՞վ է ապահովել այդ եկամուտը, հը՞... Այդպես էլ ենթադրում էի՝ ձեր հայրը: Դուք կանգնում եք նրա ոտքերի վրա: Դուք երբեք չեք ունեցել ձեր սեփական ոտքերը և չեք կարող նույնիսկ մեկ օր ինքնուրույն քայլելով ձեր փորը երեք անգամ կշտացնել: Յո՛ւյց տվեք ձեր ձեռքը:

Ամեհի ուժը, որ քնած էր նրա մեջ, կարծես սկսել էր արթնանալ: Նախքան որևէ բան հասկանալու, նա երկու քայլ առաջ եկավ և աջ ձեռքս ամուր բռնելով վեր բարձրացրեց ցուցադրելու համար: Ես փորձեցի ազատվել, բայց նրա մատները առանց ճիգի այնպես սեղմեցին ձեռքս, որ ինձ թվաց, թե այն ճմլվում է: Նման դրության մեջ դժվար է արժանավորությունը պահպանելը: Ես չէի կարող աշակերտի նման գալարվել ու քացի տալ, ոչ էլ հարձակվել այնպիսի մի գազանի վրա, որը կարող էր սոսկ մեկ շարժումով ձեռքս կտրել: Մնում էր միայն անշարժ կանգնել և կուլ տալ անարգանքը:

Ես ժամանակ ունեցա նկատելու, որ հանգուցյալի գրպանները դատարկվել էին ու նրանց պարունակությունը գետեղվել էր տախտակամածի վրա, իսկ դիակը, հեգնական ժպիտը դեմքին, փաթաթվել էր առագաստի մեջ, որի ծալքերը նավաստի Յոհանսենը իրար էր կարում հաստ, սպիտակ թելով. նա ասեղը մղում էր ավիի մեջ պահած ինչ-որ կաշվի կտորով:

Գայլ Լարսենը արհամարհական շարժումով բաց թողեց ձեռքս:

— Ձեռքեր, որոնք փափուկ են մնացել մեռած հոր աշխատանքի շնորհիվ: Նրանք ոչ մի բանի պետք չեն գա, բացի աման լվանալուց և ճաշ եփելուց:

— Ես ցանկանում եմ ցամաք դուրս գալ,— պատասխանեցի վճռական տոնով, որովհետև ինքնավստահությունս վերջապես վերականգնվել էր:— Ես ձեզ կվճարեմ, ինչքան որ հարկավոր է ձեր քաշելիք նեղության և ճանապարհորդության ուշացման համար:

Նա հետաքրքրությամբ նայեց ինձ, և աչքերը փայլեցին ծաղրանքով:

— Ես ունեմ ուրիշ առաջարկություն, որը ձեր օգտին է: Իմ օգնականը մեռել է և ես պաշտոնների փոփոխումներ պետք է անեմ նավի անձնակազմի մեջ: Նավաստիներից մեկը փոխարինելու է օգնականիս, սպասյակը նավաստու տեղն է գրավելու, դուք էլ կգրավեք սպասյակի տեղը: Պայմանագիր ստորագրեցեք այս նավագնացության համար: Ամիսը քսան դոլլար և ուտելիք: Հը՞, ի՞նչ կասեք: Եվ նկատի ունեցեք, որ դա ձեր հոգու փրկության համար է: Դուք որպես մարդ կվերածնվեք, ժամանակի ընթացքում կսովորեք ձեր սեփական ոտքերի վրա կանգնել, և նույնիսկ՝ մի քիչ էլ քայլել:

Ես ուշադրություն չդարձրի նրա խոսքերին: Հարավ-արևմտյան կողմում նկատածս նավի առագաստները ավելի մեծ ու որոշակի էին դարձել: Դա «Ուրվականի» տիպի մի երկկայմանավ էր, բայց համեմատաբար ավելի փոքր էր երևում: Նավը ոստոստելով ու թռչկոտելով՝ մի գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Նա գալիս էր դեպի մեզ և, ըստ երևույթին, մեր մոտով էր անցնելու: Քամին շուտով ուժեղացավ, իսկ արևը մի քանի աղոտ ճառագայթ արձակելուց հետո անհետացավ: Ծովը անփայլ կապարի գույն ստանալով, սկսեց ալեկոծվել և սպիտակ փրփուրներ ժայթքել դեպի երկինք: Մեր նավը թեքվեց կողքի վրա և ընթացքն արագացրեց: Քամու սաստկությունից նրա թեքված կողը պառկեց ջրի երեսին, այդ կողմի տախտակամածը մի պահ ծածկվեց ջրով, և ամբարածածկի վրա նստող որսորդները հարկադրվեցին ոտքներն շտապ վեր քաշել:

— Այդ նավը,— ասացի ես մի փոքր դադարից հետո,— շուտով անցնելու է մեր մոտով: Քանի որ նա գնում է հակառակ ուղղությամբ, ամենայն հավանականությամբ գնում է Սան-Ֆրանցիսկո:

— Շատ հավանական է,— պատասխանեց Գայլ Լարսենը և շուտ գալով դոչեց. — Խոհարար, հե՛յ, խոհարար:

Թոմաս Մագրիջը խոհանոցից դուրս սլացավ:

— Որտե՞ղ է այդ տղան: Ասա՛, որ իրեն կանչում եմ:

— Շատ լավ, սրբ:— Եվ Մագրիջը նետվեց դեպի նավախելը ու չքացավ դեկանիվի մոտ գտնվող սանդուղքի անցքից: Հազիվ մի վայրկյան անց, նա դուրս եկավ: Նրան կրնկակոխ հետևում էր ամրակազմ, մոայլ ու խոժոռաղեմ մի երիտասարդ, որը մոտ տասնութ-տասնինը տարեկան կլիներ:

— Ահա նա, սը՛ր,— ասաց խոհարարը:

Մակայն Գայլ Լարսենը, նրան անտեսելով, ուղղակի դիմեց սպասյակին:

— Ինչպե՞ս է անունդ:

— Զորջ Լիչ, սը՛ր,— եղավ նոթոտ պատասխանը: Տղայի վերաբերմունքից պարզ երևում էր, որ նա գուշակել էր, թե ինչու էր կանչվել:

— Դա իդանդական անուն չէ,— ասաց նավապետը խիստ և կտրուկ,— Օ՛թուլը կամ Մակ-Կարթին ավելի կսազեին մոռութիդ: Շատ հավանական է, որ քո մոր մառանում թաքնված է եղել ինչ-որ իդանդացի...

Ես նկատեցի, որ այս նախատինքի վրա պատանու բռնեցքը սեղմվեց, և արյունը խուժեց դեմքը:

— Բայց թողնենք այդ,— շարունակեց Գայլ Լարսենը:— Դու կարող ես հիմնավոր պատճառներ ունենալ ազգանունդ փոխելու: Ինձ համար միևնույն է, միայն թե գործը լավ կատարես: Դու, անկասկած, Թելեգրաֆ Հիլլի կողմերից ես: Այդ երևում է հենց քո մտութից: Այդ կողմերից եկողներդ կոպիտ եք և կրկնակի զարշելի: Ես ճանաչում եմ բոլորիդ: Բայց քեզ համար ավելի լավ կլինի, որ բնավորությունդ փոխես, քանի դեռ աշխատում ես այս նավի վրա: Պա՛րզ է: Ի միջի այլոց, ո՞վ է քեզ հանձնարարել:

— Մակ-Կրիկի և Սվենսոն գործակալությունը:

— Սը՛ր... — որոտաց Գայլ Լարսենը:

— Մակ-Կրիկի և Սվենսոն գործակալությունը, սը՛ր,— ուղղեց պատանին, որի աչքերը զայրույթից փայլատակում էին:

— Ո՞վ ստացավ կանխավճարը:

— Նրանք, սը՛ր:

— Այդպես էլ կարծում էի: Քեզ շատ ձեռնտու էր, որ նրանք ստանային: Երևի ժամանակին գլխի ընկար, որ ինչ-որ մարդիկ քեզ որոնում են...

Մեկ ակնթարթում տղան կերպարանափոխվեց ու վայրագ տեսք ստացավ: Նա կռանալով կծկվեց, կարծես նետվելու համար, և դեմքն ստացավ կատաղած գազանի արտահայտություն: Նա մոնչաց.

— Դա մի...

— Մի ի՞նչ... — հարցրեց Գայլ Լարսենը, որի ձայնի մեջ տարօրինակ մեղմություն կար, կարծես նրան չափազանց հետաքրքիր էր իմանալ չարտասանված բառը:

Պատանին մի պահ վարանեց և ապա իրեն զսպելով՝ ասաց.

— Ոչ մի բան, սը՛ր: Խոսքս ետ եմ վերցնում:

— Եվ դրանով ապացուցում ես, որ ես ճիշտ եմ ասել,— նկատեց նավապետը բավարարված ժպիտով:— Քանի՞ տարեկան ես:

— Նոր տասնվեցս մտա, սը՛ր:

— Սուտ ես ասում: Դու տասնութը անց կլինես, թեև այդ հասակի համար էլ խոշորակզմ ես և ձիու մկաններ ունես: Հավաքի՛ր իրերդ, գնա առաջամաս և տեղավորվիր նավաստիների խցում: Սրանից հետո կդառնաս թիավար: Քեզ առաջ եմ քաշում, տե՛ս:

Առանց սպասելու տղայի պատասխանին, նավապետը դարձավ այն նավաստուն, որը հենց նոր վերջացրել էր դիակը առագաստի մեջ կարելու տխուր պարտականությունը:

— Յոհանսեն՛ն, որևէ բան գիտե՞ս նավագնացության մասին:

— Ո՛հ, սըր:

— Դե լավ, միևնույն է, սրանից հետո կլինես օգնականս: Իրերդ փոխադրիր օգնականի խուցը:

— Ա՛յ, ա՛յ, սըր,— պատասխանեց Յոհանսենը ուրախությամբ և ուղղվեց դեպի նավի առաջամասը:

Մինչ այդ, նախկին սպասյակը դեռ տեղից չէր շարժվել:

— Ի՞նչ ես սպասում,— հարցրեց Գայլ Լարսենը:

— Իմ ստորագրած պայմանագիրը նավակ թիավարելու համար չէր, սը՛ր,— պատասխանեց տղան:— Ես ստորագրել եմ սպասյակի պաշտոնի համար: Եվ ես չեմ ուզում թիավարել:

— Հավաքի՛ր իրերդ և գնա՛ առաջամաս:

Այս անգամ Գայլ Լարսենի հրամանը հնչեց ահեղ ու տիրական: Տղան խոժոռությամբ նայեց նրան, բայց տեղից չշարժվեց:

Գայլ Լարսենը դարձյալ դրսևորեց իր ահավոր ուժը: Բանը տեղի ունեցավ բոլորովին անակնկալ կերպով և այնպիսի արագությամբ, որ սկսվելն ու վերջանալը մեկ եղավ: Մեկ ուստյունով նա կտրեց վեց ոտնաչափ հեռավորությունը և բռունցքի մի հարված հասցրեց երիտասարդի փորին: Այդ պահին ինձ թվաց, թե ես եմ հարվածն ստացողը, և մի սուր ցավ զգացի փորիս մեջ: Այս պարագան հիշատակում եմ, ցույց տալու համար, թե այդ շրջանում որքան զգայուն էին ջղերս, և ես որքան անսովոր էի վայրագ տեսարանների: Սպասյակը, որի քաշը կլիներ առնվազն հարյուր վաթսունհինգ ֆունտ, ինքն իր վրա ծալվեց: Նրա թուլացած մարմինը կախվեց Լարսենի բռունցքի շուրջը, ինչպես ձեռնափայտի գլխից կախված թաց լաթի կտոր: Այնուհետև ես տեսա, թե ինչպես նրա մարմինը բարձրացավ և օդում մի կամար գծելով, ընկավ տախտակամածի վրա, գլուխը և ուսերը խփելով հատակին: Դիակի կողքին փովելով, նա սկսեց գալարվել ցավից:

— Ապա՞,— հարցրեց ինձ Լարսենը,— որոշեցի՞ք, թե չէ:

Ես նայեցի մոտեցող երկկայմանավին, որն այժմ գրեթե հավասարվել էր մեզ և գտնվում էր մոտ երկու հարյուր յարդ հեռավորության վրա: Դա նուրբ ու վայելչագեղ մի նավ էր: Նրա առագաստներից մեկի վրա երևում էր մի խոշոր, սև թվանշան, և, որովհետև ես տեսել էի նավերի նկարներ, ի սկզբն գլխի ընկա, որ դա ղեկորդանավ է:

— Ի՞նչ նավ է դա,— հարցրի ես:

— «Լեյդի Մայն» ղեկորդանավն է,— պատասխանեց Լարսենը խոժոռ արտահայտությամբ:— Տարել էր ղեկորդներին և հիմա վերադառնում է Սան-Ֆրանցիսկո: Այս հողմով հինգ կամ վեց ժամից հետո տեղ կհասնի:

— Ուրեմն բարի եղեք նրանց ազդանշան տալ, որ ինձ տանեն ցամաք:

— Ցավոք՝ ազդանշանների գիրքը կորցրել եմ,— պատասխանեց նա, և որսորդները ժպտացին:

Շեշտակի նայելով նրա աչքերի մեջ, ես մի պահ մտածեցի: Հենց նոր տեսել էի նրա սարսափելի վարմունքը սպասյակի հետ և գիտեի, որ նա ինձ հետ էլ նույն ձևով կամ նույնիսկ ավելի վատ կարող է վարվել: Եվ ահա, մի պահ վարանելուց հետո ես կատարեցի մի բան, որը համարում եմ իմ կյանքի ամենախիզախ արարքը: Ես վազեցի դեպի նավեզր և ձեռքերս շարժելով, գոչեցի.

— Հէ՛յ, «Լեյդի Մա՛յն», ինձ տարեք ցամաք: Ձեզ հազար դոլլար, եթե ինձ ցամաք հանեք:

Ես սպասեցի, դիտելով այն երկու մարդկանց, որոնք կանգնած էին մյուս նավի ղեկանիվի մոտ: Նրանցից մեկը վարում էր ղեկանիվը, իսկ մյուսը ձայնափողը մոտեցնում էր շրթներին: Ես գլուխս ետ չդարձրի, չնայած որ ամեն վայրկյան կարող էի մի մահացու հարված ստանալ թիկունքումս կանգնած մարդ-գազանից: Վերջապես, մի ամբողջ դար թվացող ժամանակամիջոցից հետո, այլևս չդիմացա և շուտ գալով շուրջս նայեցի: Լարսենը տեղից չէր շարժվել: Նա կանգնած էր նույն դիրքում և նավի ցնցումներից թեթևակի տատանվելով, մի նոր սիգար էր վառում:

— Ի՞նչ կա, բա՞ն է պատահել,— հարցրին «Լեյդի Մայնից»:

— Այո՛, այո՛,— բղավեցի թոքերիս ամբողջ ուժով:— Կենաց և մահու հարց է: Հազար դոլլար, եթե ինձ ցամաք հանեք:

— Տղաները չափից ավելի են կոնձել Ֆրիսկոյում,— գոչեց Գայլ Լարսենը,— իսկ սա,— ավելացրեց նա, բթամատով ցույց տալով ինձ,— այս բուպեիս երևակայում է կապիկներ ու ծովի օձեր:

«Լեյդի Մայնից» խոսող մարդը ձայնափողի միջով ծիծաղեց և ղեկորդանավը անցավ մեր կողքով:

— Գրողի ծոցն ուղարկեցեք նրան,— լսվեց վերջին անգամ ձայնափողի միջով, և երկու մարդիկ ձեռքով հրաժեշտ տվին մեզ:

Ես հուսահատությամբ կռացա բազրիքի վրա և տեսա, թե ինչպիսի արագությամբ է լայնանում սառը ջրի շերտը, որը մեզ բաժանում է նրբագեղ, փոքր երկկայմանավից: Հինգ կամ վեց ժամից նա հասնելու է Ման-Ֆրանցիսկո . . . Ինձ թվաց, թե գլուխս պիտի տրաքվի: Միրտս ուժգին տրոփում էր և կոկորդս խեղդվում էր ինչ-որ բանից: Փրփրուն մի ալիք, նավի կողին զարնվելով, աղի ջրափռ ջրափռեց դեմքիս: Քամին սկսեց թափով փչել և «Ուրվականի» կողը քամու հակառակ ուղղությամբ թեքվելով, խորացավ ջրի մեջ: Ես լսում էի տախտակամածի վրա խուժող ալիքների աղմուկը:

Քիչ հետո, շուտ գալով, տեսա պատանի սպասյակին, որը դժվարությամբ ջանում էր ոտքի կանգնել: Նրա դեմքը մեռելի նման գունատ էր և ցավից այլանդակված: Նա հիվանդ էր երևում:

— Հետո՞, Լիչ, գնո՞ւմ ես առաջամաս,— հարցրեց Գայլ Լարսենը:

— Այո, սը՛ր,— պատասխանեց երկյուղից ընկճված պատանին:

— Իսկ դո՞ւ,— հարցրեց նա ինձ:

— Ես ձեզ կվճարեմ հազար...— սկսեցի ես, բայց նա ինձ ընդհատեց:

— Վերջ տուր . . . համաձայն ես սպասյակի պաշտոն կատարել, թե՞ ուզում ես, որ քեզ էլ մի լավ տրորեմ...

Ի՞նչ կարող էի անել: Անասունի նման ծեծ ուտելը կամ սպանվելը ոչնչով չէր կարող ինձ օգնել: Ես շեշտակի նայեցի նրա անողորմ, մոխրագույն աչքերին: Այդ գրանիտյա աչքերի մեջ բացակայում էին մարդկային հոգու լույսն ու ջերմությունը: Ուրիշների աչքերում կարելի է տեսնել հոգու շարժումները, բայց սրա աչքերը սառը և մոխրագույն էին, ինչպես ծովը:

— Համաձայն ես:

— Այո՛,— պատասխանեցի:

— Ասա՛ այո, սը՛ր:

— Այո, սը՛ր,— ուղղեցի ես:

— Ինչպե՞ս է ազգանունդ:

— Վան-Վեյդեն, սըր:

— Իսկ անո՞ւնդ:

— Հեմֆրի, սըր, Հեմֆրի Վան-Վեյդեն:

— Տարի՞քդ:

— Երեսունհինգ, սը՛ր:

— Բավական է: Հիմա գնա խոհարարի մոտ և սովորիր պարտականություններդ:

Եվ այսպիսով, հակառակ իմ կամքին, ես Գայլ Լարսենի ստրուկը դարձա լոկ այն պատճառով, որ նա ինձանից ուժեղ էր: Այն Ժամանակ այս ամենը ինձ թվում էր երազի նման: Այժմ, երբ վերհիշում եմ, դարձյալ երազի նման է թվում, և միշտ էլ ինձ պիտի թվա անհավատալի ու հրեշային, ինչպես ահավոր մի մոծավանջ:

— Սպասի՛ր, դեռ մի՛ գնա:

Ես, որ քայլում էի դեպի խոհանոց, հլու-հնազանդ կանգ առա:

— Յոհանսեն՛ն, բոլորին այստեղ կանչիր: Հիմա, երբ ամեն ինչ կարգին է, կարող ենք թաղումը կատարել ու տախտակամածն ազատել այդ ավելորդ բեռից:

Մինչ Յոհանսենը ներքնից կանչում էր հերթապահներին, երկու նավաստի նավապետի կարգադրությամբ առագաստի մեջ կարված դիակը զետեղեցին ամբարածածկի վրա: Նավի երկու եզրին ամրացված էին մակույկներ, հատակները դեպի վեր դարձած: Մի քանի նավաստի բարձրացրին ամբարածածկը ահագո՞ւր բեռան հետ, փոխադրեցին նավի թեքված կողմը և զետեղեցին մակույկների վրա՝ դիակի ոտքերը դեպի դուրս: Ոտքերին կապել էին քարածուխի տոպրակը, որը բերել էր խոհարարը:

Ես միշտ պատկերացրել էի, որ նավի վրա թաղման ծիսակատարությունը չափազանց հանդիսավոր ու երկյուղալի մի արարողություն է, սակայն այս հուղարկավորությունը ինձ

միանգամից հիասթափեցրեց: Որսորդներից մեկը՝ փոքրակազմ և սևաչյա մի մարդ, որին մյուսները Սմոք էին անվանում, պատմում էր անեկդոտներ, դրանք համեմելով հիշոցներով ու լկտի արտահայտություններով: Ունկնդրող որսորդները ամեն բույե բարձրաձայն հոհում էին, և այդ հնչում էր ինչպես գայլերի խմբական ոռնոց կամ ինչ-որ դժոխային շների հաչոց: Նավաստիները կոշիկները թխկթխկացնելով հավաքվում էին նավախելում, իսկ հերթապահներից մի քանիսը, քնատությունից աչքերը շփելով, ցածրաձայն խոսում էին իրար հետ: Նրանց դեմքերին անհանգիստ ու չարագույժ արտահայտություն կար: Ակնհայտ էր, որ նրանց դուր չէր գալիս այսպիսի նավապետի հրամանի տակ ծառայելու և այնքան ձախորդ սկսված ճանապարհորդություն կատարելու հեռանկարը: Նրանք մերթ ընդ մերթ գաղտնի նայում էին Գայլ Լարսենին, և ես նկատում էի, որ վախենում էին այդ մարդուց:

Նավապետը մոտեցավ դիակին, և բոլորը գդակները հանեցին: Ես աչքով հետևում էի բոլորին: Տախտակամածի վրա քսան մարդ կար, դեկորդին ու ինձ էլ հաշված՝ քսաներկու: Իմ հետաքրքրասիրությունը ներելի էր, քանի որ, ըստ երեվոյթին, ինձ վիճակված էր այդ մարդկանց հետ այս ծփացող փոքրիկ աշխարհում փակված մնալ շաբաթներ, գուցե և ամիսներ: Նավաստիները մեծ մասամբ անգլիացիներ ու սկանդինավցիներ էին և ունեին ծանր, բթամիտ դեմքեր: Իսկ որսորդների դեմքերը, որոնք ավելի կոռովի էին ու ավելի այլազան, ծածկված էին խոր ակոսներով և կրում էին սանձարձակ կրքերի դրոշմը: Ես զարմանքով նկատեցի, որ Գայլ Լարսենի դեմքը սրանց պես չար կամ նենգավոր չէր: Ճիշտ է, նրա դեմքի վրա էլ ակոսներ կային, բայց այդ ակոսներն արտահայտում էին վճռականություն և հաստատականություն: Լարսենի դեմքը թվում էր անկեղծ ու սրտաբաց, հատկապես նրա համար, որ սափրված էր ու ողորկ: Ես հազիվ կարող էի հավատալ (մինչև պատահեց հաջորդ միջադեպը), որ այդպիսի դեմք ունեցող մարդը ընդունակ է վարվելու այնպես, ինչպես նա վարվեց սպապակի հետ:

Հազիվ էր նա բերանը բացել, երբ քամին հանկարծ սաստկացավ, և նավը ուժեղ թեքվեց մի կողմի վրա: Քամին կարծես մի կատաղի երգ էր սուլում թոկասարքի միջով: Որսորդներից ոմանք, անհանգստացած, երկինք նայեցին: Նավի այն կողմը, ուր գտնվում էր դիակը, թաղված էր ջրի մեջ, և երբ նավը նորից շտկվեց, ջուրը ողողեց տախտակամածը և մինչև կոճերը թրջեց մեր ոտքերը: Շուտով սկսվեց մի տեղատարափ անձրև, որի կաթիլները կարկուտի պես ծանր էին: Երբ անձրևը դադարեց, Գայլ Լարսենը սկսեց խոսել: Գլխաբաց նավաստիները նավի շարժումներից խմբովին տատանվում էին իրենց ոտքերի վրա:

— Ես հիշում եմ ծիսակատարության միայն մի մասը,— ասաց նա,— որը հետևյալն է. «Եվ մարմինը պետք է գցել ծովը»: Ուստի գցեցե՛ք նրան ծովը:

Նա լռեց: Նավաստիները բռնեցին նավամբարի կափարիչը, որի վրա դրված էր դիակը: Նրանք շվարած տեսք ունեին. նրանց, անկասկած, շփոթեցրել էր արարողության կարճատևությունը: Լարսենը կատաղությամբ գոռաց.

— Գրողը տանի, այս ծայրից բարձրացրեք, ի՞նչ է պատահել ձեզ:

Նրանք խղճալի շտապողականությամբ բարձրացրին կափարիչի ծայրը, և դիակը, ասես մի շուն լինեք, ոտնիվայր ծովն ընկավ: Ոտքերին ամրացված քարածուխի տոպրակը նրան ցած քաշեց և իսկույն անհետացրեց ջրի մեջ:

— Յոհանսէ՛ն,— կտրուկ շեշտով կանչեց Գայլ Լարսենը իր նոր օգնականին,— նավաստիներին տախտակամածի վրա պահիր, քանի դեռ նրանք այստեղ են: Հավաքե՛լ առագաստները, դե՛հ, շո՛ւտ: Հարավ-արևելյան քամին ուր որ է կսկսի: Փաթաթեցեք նաև միջնակայմի առագաստը:

Եվ ահա, տախտակամածի վրա սկսվեց մի եռուգեռ: Յոհանսենը արձակում էր հրամաններ, և նավագները քաշում կամ թուլացնում էին ամեն տեսակ պարանները, իսկ այդ ամենը, բնականաբար, անհասկանալի էր ինձ նման ցամաքաբնակ մարդու համար: Բայց ամենից ավելի ինձ զարմացնում էր այդ մարդկանց անզգայությունը: Նրանց համար մեռել թաղելը մի հասարակ միջադեպ էր, որ վերջացավ ու մոռացվեց այն բոլորից, երբ առագաստի մեջ կարված և ոտքերին քարածուխի տոպրակ ամրացրած դիակը ծովը գցեցին: Այնուհետև նավը շարունակեց իր ճանապարհը, և ընդհատված աշխատանքը նորից աշխուժացավ: Ոչ ոք չէր ազդվել: Որսորդները, Սմոքի մի նոր անեկդոտն ունկնդրելով, քրքջում էին, նավաստիները քաշում ու ձգում էին պարանները, նրանցից երկուսը մազլցում էին կայմը, Գայլ Լարսենը զննում էր ամպամած երկինքը, մինչդեռ մեռելը, որն անշուք հեռացել էր կյանքից ու թաղվել այնքան զազրելի ձևով, դեռ շարունակում էր սուզվել, սուզվել...

Հենց այդ պահին հանկարծ միտքս հեղեղեցին ծովի տարերայնության ահավոր դաժանությունն ու անողորմությունը, և կյանքն ինձ թվաց կեղծ ու էժանագին, անասնական ու անձն մի բան, ինչ-որ անմիտ թպրտոց կեղտոտ տիղմի մեջ: Ես հենվեցի նավաբազրիքին և փրփրացող ալիքների վրայով հայացքս ուղղեցի դեպի հեռավոր մշուշը, որը ծածկում էր Սան-Ֆրանցիսկոն և Կալիֆորնիայի ծովափը: Հորդառատ անձրևի պատճառով հազիվ էի կարողանում տեսնել ծովափնյա մշուշը: Իսկ այս տարօրինակ նավը, իր սարսափելի անձնակազմով, քամուց և ալիքներից մղված՝ ուստոստելով հեռանում էր դեպի հարավ-արևմուտք, դեպի ամայի ու անծայրածիր Խաղաղ օվկիանոսը:

Գլուխ չորրորդ

Նոր շրջապատիս հարմարվելու համար թափած բոլոր ջանքերս միայն նվաստացում և վիշտ պատճառեցին ինձ «Ուրվականի» վրա: Մագրիջը, որին նավաստիները կոչում էին «Բժիշկ», որսորդները՝ «Թոմմի», իսկ Գայլ Լարսենը՝ «Խոհարար», իսկույն փոխվեց և բոլորովին ուրիշ մարդ դարձավ:

Իմ դրության փոփոխումը համապատասխան փոփոխություն առաջացրեց նրա վերաբերմունքի մեջ՝ դեպի ինձ: Նա, որ առաջ ստորաքարշ ու քծնող էր, հանկարծ դարձավ իշխող և կովարար: Նրա աչքում ես այլևս «լեյդի»-ի փափուկ ձեռքերով նրբագեղ ջենթլմենը չեի, այլ հասարակ ու անարժեք մի սպասյակ:

Նա սկսեց անհեթեթ համառությամբ պահանջել, որ ես իրեն կոչեմ «միստր Մագրիջ», իսկ իմ պարտականություններն ինձ բացատրելիս նրա վարվելակերպը ուղղակի անհանդուրժելի էր: Բացի ընդհանուր նավասենյակում և հարակից չորս խցերում սպասարկելուց, ես պարտավոր էի նաև նրան օգնել խոհանոցում: Կարտոֆիլ մաքրելու կամ ճարպոտ կաթսաներ լվալու գործում իմ անգիտությունը նրա համար դարձել էր անվերջ զարմանքի և քմիծաղի աղբյուր: Նա չէր ուզում նկատի ունենալ նախկին դիրքս կամ, ավելի շուտ՝ այն կյանքն ու զբաղմունքը,

որոնց ես սովոր էի: Մա սոսկ մի մասն էր այն վերաբերմունքի, որ նա որդեգրեց իմ նկատմամբ, և պետք է խոստովանեմ՝ առաջին օրը դեռ չվերջացած, ես նրան ատում էի ավելի սաստիկ, քան երբևէ ատել եմ որևէ մեկին իմ ողջ կյանքում:

Առաջին օրն ինձ համար ավելի ծանր եղավ հենց նրա համար, որ «Ուրվականը» նավարկում էր հավաքված առագաստներով (այսպիսի արտահայտությունները միայն հետագայում ես սովորեցի) և սլանում էր հարավ-արևելյան քամիների կամ, ինչպես միսոր Մագրիջը անվանում էր, «ռոնացողների» միջով: Ժամը հինգն անց կեսին նրա կարգադրությամբ փռեցի նավասենյակի սեղանը, որի վրա տեղավորեցի փոթորկոտ եղանակի հատուկ ափսեներ, ապա խոհանոցից բերի թեյը և ուտելիքը: Այս առթիվ պետք է պատմեմ ավելո՞ծ ծովի հետ իմ ունեցած առաջին ծանոթության մասին:

— Զգո՛ւյշ, թե չէ ջուրը կընկնես,— եղավ միսոր Մագրիջի պատվերը, երբ ես խոհանոցից դուրս եկա՝ մեկ ձեռքումս մի խոշոր թեյաման և մյուս թևիս տակ մի քանի բոքոն նոր թխած հաց: Որսորդներից մեկը՝ բարձրահասակ և անշնորհք տեսքով մի մարդ, որին Հենդերսոն էին կոչում, այդ բոպեին «երթորդ կարգից» (որսորդները կատակի համար այդպես էին անվանում իրենց ընդհանուր խուցը) գնում էր դեպի նավասենյակ: Գայլ Լարսենը նավախելի հարթակի վրա ծխում էր իր հավիտենական սիգարը:

— Ահա գալի՛ս է, ճանկդ գցիր որևէ բանի,— գոչեց խոհարարը:

Ես կանգ առա, որովհետև չէի իմանում, թե ինչն էր գալիս, և նկատեցի, որ խոհանոցի դուռը չխկոցով փակվեց իմ հետևից: Հենդերսոնը գծի նման նետվեց կայմապարանի վրա և արագ մագլցելով, իմ գլխից մի քանի ոտնաչափ վեր բարձրացավ: Նույն պահին տեսա փրփրացող վիթխարի մի ալիք, որը կանգնել էր նավեզրից շատ բարձր, ուղղակի իմ վերև: Ուղեղս արագ չէր աշխատում, որովհետև այստեղ ամեն ինչ ինձ համար նոր էր ու տարօրինակ: Ես զգացի, որ վտանգի մեջ եմ, բայց միայն այդքան: Սարսափից մնացել էի տեղումս գամված: Այդ բոպեին Գայլ Լարսենը հարթակի վրայից ինձ ձայն տվեց.

— Որևէ տեղից կառչի՛ր, հե՛յ, Հե՛մփ:

Բայց արդեն ուշ էր: Ես նետվեցի դեպի կայմապարանը՝ նրանից կառչելու համար, բայց նույն վայրկյանին վրաս փլվեց ջրեղեն պարիսպը: Այն, ինչ պատահեց դրանից հետո, միանգամայն խառնաշփոթ էր: Զրի տակ թաղված՝ շնչասպառ խեղդվում էի: Ես ընկել էի հատակին ու մարմինս անընդհատ թավալվում ու քշվում էր դետուդեն: Մի քանի անգամ ընդհարվեցի կարծր իրերի և աջ ծունկս սարսափելի մի հարված ստացավ: Ի վերջո ալիքը նահանջեց և ես սկսեցի նորից թարմ օդ շնչել: Հեղեղը ինձ խփել էր խոհանոցի միջնորմին, քշել էր միջնահարկի սանդուղքի մոտ և տարել տախտակամածի մեկ ծայրից մինչև մյուսը: Ծնկիս ցավը անտանելի էր. չէի կարող աջ ոտքի վրա կանգնել, գոնե ինձ այդպես էր թվում: Ես համոզված էի, որ ոտքս ջարդվել է: Նույն պահին խոհարարը սկսեց գոգոգոալ խոհանոցի դռնից.

— Հե՛յ, լսի՛ր, դու դեռ շա՞տ ես տնտնալու այդտեղ: Ո՞ր է թեյամանը: Ծովը գցեցիր, հա՞: Ա՛յ, դրա համար դու արժանի ես, որ դատարկ գլուխդ ջարդվեր:

Ես մի կերպ ոտքի կանգնեցի: Խոշոր թեյամանը դեռ ձեռքումս էր: Կաղալով հասա խոհանոց և թեյամանը երկարեցի նրան: Բայց նա զայրույթից հեռում էր կամ այդպես էր ձևացնում:

— Դու իսկապէս կախականջի մեկն ես: Վերջ ի վերջո դու ինչի՞ ես պետք, ասա՛, ուզում եմ իմանալ, ինչի՞ ես պետք: Նույնիսկ չես կարող մի թեյաման տանել առանց թափելու: Հիմա ստիպված եմ նորից ջուր եռացնել:

— Իսկ ինչո՞ւ ես նվնվում,— նա կրկին պոռթկաց նոր կատաղությամբ,— որովհետև քնքուշ տոտիկդ ցավեցրիր, հա՞: Մայրիկի պաշտելի մանկիկը իր փոքրիկ տոտիկը ցավեցրել է...

Ես չէի նվնվում, թեև դեմքս կարող էր ծամածոված լինել ցավից: Ամբողջ ուժս հավաքելով, ատամներս սեղմեցի և կաղալով գնացի խոհանոցից նավասենյակ ու նավասենյակից խոհանոց, առանց որևէ նոր պատահարի: Հիշյալ արկածն ինձ համար ունեցավ երկու հետևանք: Նախ՝ վիրավորվեց իմ ծնկոսկրը, որը մնաց առանց բուժման և ինձ տանջեց երկար ամիսներ: Բացի դրանից, ես ստացա «Հեմփ» հեգնանունը, որով ինձ կանչել էր Գայլ Լարսենը խելամասի հարթակից: Այնուհետև նավի վրա բոլորն ինձ այդ անունով էին կոչում, մինչև որ վերջ ի վերջո այնքան ընտելացա, որ ինձ այլևս թվում էր, թե անունս իրոք Հեմփ է և միշտ էլ Հեմփ է եղել:

Հեշտ պարտականություն չէր սպասարկել այն սեղանին, որի շուրջը նստում էին Գայլ Լարսենը, Յոհանսենը և վեց որսորդները: Նախ պիտի ասել, որ նավասենյակը փոքր էր և այնտեղ շարժվելը՝ ինձ համար չափազանց դժվար, մանավանդ նավի ուժեղ տատանումների ժամանակ: Բայց ամենից ավելի ինձ ցավ ու զարմանք պատճառեց բացարձակ անտարբերությունն այն մարդկանց, որոնց ծառայում էի: Ծունկս գնալով ավելի ու ավելի էր ուռչում, իսկ ցավի սաստկությունից ես ինձ զգում էի թույլ ու հիվանդ: Երբեմն նավասենյակի հայելու մեջ տեսնում էի դեմքս, որը գունատ, ձգված ու մեռելատիպ էր դարձել ցավից: Այդ մարդիկ, բնականաբար, տեսնում էին վիճակս, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, չէր խոսում այդ մասին, այնպես որ ես ինձ գրեթե երախտապարտ զգացի, երբ Գայլ Լարսենը մի անգամ (այդ պահին լվանում էի ամանները) ասաց.

— Մի՛ անհանգստացիր այդ չնչին բանի համար: Ժամանակի ընթացքում կամաց-կամաց կվարժվես այդ տեսակ բաների: Գուցե մի քիչ հաշմանդամ կդառնաս, բայց, այնուամենայնիվ, կսովորես քայլել. . .

— Դուք,— շարունակեց նա,— այս տեսակ արտահայտությունները պարադոքս եք անվանում, այո՞:

Նա, ըստ երևույթին, գոհ մնաց, երբ գլխով հաստատական նշան արեցի և պատասխանեցի ընդունված «այո, սը՛ր»-ով:

— Ենթադրում եմ, որ դուք մի քիչ հասկանում եք գրականությունից, այո՞: Շատ լավ: Ես ձեզ հետ պետք է երբեմն զրույցներ ունենամ:

Ապա, առանց սպասելու պատասխանին, նա մեջքը դարձրեց և դուրս եկավ տախտակամած:

Այդ գիշեր, երբ ավարտեցի իմ անհատնում պարտականությունները, ինձ ուղարկեցին քնելու որսորդների խցում, որտեղ մի ավելորդ մահճակալ կար: Ես ուրախ էի, որ վերջապես հեռացա խոհարարի զարշելի ներկայությունից և հնարավորություն ունեցա ոտքերիս հանգիստ տալու: Ինձ զարմանք պատճառեց այն, որ հագուստներս չորացել էին վրաս, բայց մրսածության նշաններ չէի զգում, չնայած «Մարտինեզն» ընկղմվելուց հետո երկար մնացել էի

ծովում, իսկ այսօր «Ուրվականի» վրա թրջվել էի ալիքից: Սովորական պայմաններում նման պատահարներից հետո ես պառկած կլինեի անկողնում՝ մի փորձառու բուժքրոջ խնամքի տակ:

Բայց ծունկս սարսափելի նեղում էր և այնքան էր ուռել, որ թվում էր, թե ծնկոսկրը խախտվել է տեղից: Մահճակալի վրա նստած՝ զննում էի ծունկս (բոլոր որսորդներն էլ ներկա էին և բարձրաձայն զրուցում ու ծխում էին), երբ Հենդերսոնը հարևանցի մի հայացք գցեց ծնկիս:

— Զգվելի տեսք ունի,— նկատեց նա,— շորով փաթաթիր և ամեն ինչ լավ կլինի:

Միայն այդքան: Մինչդեռ ցամաքում ինձ պառկեցրած կլինեին, և վիրաբույժը ինձ կխնամեր, խստորեն պատվիրելով, որ տեղիցս չշարժվեմ և միայն ու միայն հանգստանամ: Բայց պետք է արդարամիտ լինեմ այս մարդկանց նկատմամբ: Ճիշտ է, սրանք անտարբեր են դեպի իմ տանջանքը, բայց հավասարապես անտարբեր են նաև դեպի իրենցը՝ որևէ բան պատահելու դեպքում: Իմ կարծիքով, դրա առաջին պատճառը սովորությունն է, իսկ երկրորդը՝ զգայնության բթացած լինելը: Ես համոզված եմ, որ նուրբ և զգայուն կազմվածքով մարդը միևնույն վերքից կրկնապատիկ կամ եռապատիկ ավելի ցավ պետք է զգա, քան սրանք:

Չնայած շատ հոգնած և ուժասպառ էի, ծնկիս ցավը չթողեց, որ քնեմ: Հազիվ էի ինձ զսպում, որ բարձրաձայն չտնքամ: Իմ տանը, ինչ խոսք, ես ազատորեն կարձագանքեի իմ ցավերին, բայց այս անզգա շրջապատն ինձ դատապարտում էր դժնդակ զսպվածության: Որովհետև այս մարդիկ վայրենիների վարմունք ունեն. մեծ պատահարների դեպքում ստոիկ են, մինչդեռ մանրուքների կապակցությամբ նման են երեխաների: Հիշում եմ, թե ինչպես մեր ճանապարհորդության ընթացքում որսորդներից մեկի՝ Քերֆուտի մատը ջախջախվեց և նա ոչ մի ծպտուն չհանեց, նույնիսկ դեմքի արտահայտությունը չփոխեց: Այնինչ, ես մի քանի անգամ տեսել եմ, թե այդ նույն մարդը ինչպիսի կատաղությամբ լուտանքներ է տեղացել չնչին առիթներով:

Հենց այս բույերին էլ նա գոռում ու մոնչում է, ձեռքերը օդի մեջ շարժում ու ճիվաղի պես հայիոյում պարզապես նրա համար, որ որսորդներից մեկի հետ համաձայն չէ՝ փոկի ձագը ի ծնե լողալ իմանում է, թե ոչ: Նա պնդում է, թե իմանում է և հենց ծնված վայրկյանից էլ լողում է: Իսկ ընդդիմախոսը նեղ ու խորամանկ աչքերով նիհար մի յանկի, որը կոչվում է Լետիմեր, ընդհակառակը, պնդում է, թե փոկի ձագը ծնվում է ցամաքի վրա հենց այն պատճառով, որ լողալ չի իմանում, և որ մայրն է նրան լողալ սովորեցնում, ինչպես թռչուններն իրենց ձագերին սովորեցնում են թռչել:

Մյուս որսորդները, սեղանի վրա հակված կամ անկողնում պառկած, թույլ էին տալիս, որ հակառակորդները վիճեն, բայց նրանք մեծ հետաքրքրությամբ հետևում էին, երբեմն մեկի կամ մյուսի կողմն էին բռնում, երբեմն էլ բոլորը միաժամանակ խոսում այնպես, որ նրանց ձայնի ալիքները պատերին ընդհարվելով ու անդրադառնալով, նեղ խցի մեջ հնչում էին ինչպես արհեստական որոտումներ: Վիճաբանության նյութը դատարկ ու երեխայական էր, բայց վիճողների մտածելակերպը՝ առավել ևս մանկական: Նրանց ասածների մեջ տրամաբանություն գրեթե չկար: Այս մարդկանց մոտ կար մի բան ենթադրելու, հաստատելու կամ ժխտելու յուրահատուկ մեթոդ: Ապացուցելու համար, որ փոկի ձագը ի ծնե իմանում է կամ չի իմանում լողալ, նրանք պարզապես իրենց կարծիքն արձակում էին, ինչպես մարտահրավեր, և այնուհետև սկսում էին հարձակվել ընդդիմախոսի դատողության,

տրամաբանության, ազգության կամ անցյալի վրա: Հերքումը տեղի էր ունենում ճիշտ նույն ձևով: Ես այս պատմեցի միայն ցույց տալու համար մտավոր մակարդակն այն մարդկանց, որոնց հետ ինձ վիճակվել էր շփման մեջ լինել: Իմացականության տեսակետից նրանք պարզապես հասակավոր երեխաներ էին:

Նրանք ծխում, անվերջ ծխում էին, գործածելով էժանագին և գարշահոտ ծխախոտներ: Մենյակի օդը թանձրացել էր ծխով: Այդ ծուխը և փոթորկի միջով ընթացող նավի տատանումները ինձ անպայման ծովախոտով կվարակեին, եթե ես ենթակա լինեի այդ հիվանդության: Անկախ ամեն ինչից, սիրտս արդեն խառնում էր, թեև այդ կարող էր ցավի և ուժասպառության պատճառով լինել:

Մահճակալի վրա պառկած՝ սկսեցի խորհրդածել: Բնականաբար, ամենից առաջ կանգ առա իմ ներկա դրության վրա: Ուղղակի աներևակայելի և անհավատալի էր, որ ես՝ Հեմֆրի Վան-Վեյդենս, գրականությամբ ու արվեստով զբաղվող ուսումնականս, սպասյակ դառնայի ինչ-որ երկկայմանավի վրա, որը Բերինգյան ծով էր գնում ծովակատուներ որսալու: Իմ կյանքում ֆիզիկական ծանր աշխատանք կամ խոհանոցային պարտականություններ երբեք չէի կատարել: Ես միշտ խաղաղ, միօրինակ ու նստակյաց կյանք եմ վարել, բավականաչափ եկամուտով ապահովված ճգնավոր գիտնականի բարեկեցիկ կյանք: Փոթորկալի կյանքը և ծանր մարմնամարզությունը ոչ մի ժամանակ ինձ չեն հրապուրել: Ես միշտ եղել եմ գրքերի ցեց. այսպես էին կոչում ինձ հայրս և քույրերս իմ մանկության ժամանակ: Ամբողջ կյանքում միայն մեկ անգամ մասնակցել եմ տուրիստական արշավանքի, որից շուտով հրաժարվել ու վերադարձել եմ տան հանգստակեցությունն ու հարմարավետությունը վայելելու: Եվ ահա, այժմ առջևս բացվում էր սեղան փռելու, կարտոֆիլ մաքրելու և ամաններ լվալու անհատնում աշխատանքի տխուր հեռանկարը: Իսկ ես ֆիզիկապես ուժեղ չեմ, ճիշտ է, բժիշկները միշտ ասել են, որ հոյակապ կազմվածք ունեմ, բայց ես մարմինս երբեք չեմ մարզել վարժություններով: Իմ մկանները փոքր ու փափուկ են, ինչպես կանանցը: Գոնե այդպես էին ասում ինձ բժիշկները, որոնք հաճախ փորձում էին համոզել, որ մարմնամարզությամբ զբաղվեմ:

Այս մտքերը իմ խորհրդածության մի մասն էին միայն, ես դրանք պատմում եմ, որպեսզի նախօրոք ինձ արդարացնեմ այն նվաստ ու անօգնական դերի համար, որ ինձ վիճակվեց խաղալ:

Խորհրդածում էի նաև մորս ու քույրերիս մասին և պատկերացնում նրանց վիշտը: Նրանք հավանաբար ենթադրում են, որ ես «Մարտինեզի» աղետից գոհվածների թվումն եմ, չթաղված դիակների թվում: Իմ երևակայության մեջ կարդում էի թերթերի վերնագրերը և տեսնում համալսարանական ակումբի ընկերներին, որոնք գլուխներն օրորելով ասում են. «Խեղճ տղա»: Ես վերհիշում էի Տարլի Ֆարասեթին այնպես, ինչպես նրան տեսել էի մեր հրաժեշտի առավոտը, երբ խալաթը հագին նստել էր փափուկ բազմոցի վրա, պատուհանի մոտ, և պատգամախոսի նման արտասանում էր իր հոռետես էպիգրամները:

«Ուրվականը» օրորվելով մազլցում էր լեռնակուտակ ալիքների վրա, սահում ու սուզվում փրփրադեզ գոգավորությունների մեջ և իր ճամփան շարունակում դեպի Խաղաղ օվկիանոսի սիրտը, ինձ էլ տանելով իր հետ: Ես լսում էի ռոնացող քամու ձայնը, որն ականջիս հասնում էր ինչպես խուլ մոնչոց: Երբեմն վերևից ոտնաձայներ էին լսվում: Շուրջս ամեն ինչ

ճարճատուում էր. փայտյա ամրակապերը ճչում, հառաչում և հեծում էին հազար ու մի ձևերով: Որսորդները դեռ վիճում ու իրար վրա կռկռում էին մարդանման գորտերի պես: Օդը լցված էր հայիոյանքներով և անվայել արտահայտություններով: Ես տեսնում էի նրանց կարմրած և զայրալից դեմքերը, որոնց վայրագ արտահայտությունն ավելի այլանդակվում և ընդգծվում էր տատանվող ճրագի աղոտ դեղնագույն լույսի տակ: Ծխի ամպերի միջով մահճակալները թվում էին գազանանոցի որջեր: Պատից կախված էին մոմլաթե զգեստներ ու ծովային կոշիկներ, իսկ դարակների վրա դրված էին մանրագնդակի հրացաններ և ակոսավոր փողանցքով հրացաններ: Այս ամբողջ տեսարանը հիշեցնում էր հին օրերի ելուզակներին ու ծովահեններին: Գրգռված երևակայությունս ինձ չէր թողնում քնել: Դա երկար, շատ երկար մի գիշեր էր՝ տխուր, հոգնեցուցիչ և անվերջանալի մի գիշեր:

Գլուխ հինգերորդ

Այդ եղավ առաջին և վերջին գիշերը, որ ես քնեցի որսորդների խցում: Հաջորդ օրը Գայլ Լարսենը իր խցից վոնդեց նոր օգնականին՝ Յոհանսենին, և ուղարկեց որսորդների խուցը, որպեսզի այնուհետև այդտեղ քնի: Իսկ ես տեղափոխվեցի մի փոքրիկ խուց, որ ճանապարհորդության առաջին օրը զբաղեցրել էին երկու հոգի: Այս փոփոխության պատճառը շուտով պարզ դարձավ որսորդներին, որոնք չափազանց դժգոհեցին: Բանն այն է, որ Յոհանսենը ամեն գիշեր քնի մեջ վերապրում էր օրվա տպավորությունները: Քնած ժամանակ նրա բարձրաձայն խոսակցությունները, գոռում-գոչյուններն ու արձակած հրամանները անհանդուրժելի էին եղել Գայլ Լարսենի համար, որն այդ անախորժությունը փաթաթել էր որսորդների վզին:

Ամբողջ գիշեր անքուն անցկացնելուց հետո ես արթնացա թույլ ու տանջահար, որպեսզի «Ուրվականի» վրա կադալով կատարեմ երկրորդ օրվա պարտականություններս: Առավոտյան ժամը հինգն անց էր կես, երբ Թոմաս Մագրիջը ինձ հրմշտկելով, վեր կացրեց, ճիշտ այնպես, ինչպես Բիլ Մայքսը արթնացնում էր իր շանը: Բայց միստր Մագրիջը իր կոպտության փոխարեն ստացավ նույնպիսի վերաբերմունք, տոկոսով հանդերձ: Նրա հանած աղմուկը (որի կարիքը չկար, քանի որ ես ամբողջ գիշեր աչք չէի փակել) հավանորեն արթնացրել էր որսորդներից մեկնումեկին, որովհետև նույն բոլորին մի ծանր կոշիկ շվաց կիսախավարի միջով, և միստր Մագրիջը ցավից մի սուր ճիչ արձակելուց հետո, խոնարհաբար ներողություն խնդրեց բոլորից: Ավելի ուշ, խոհանոցում նկատեցի, որ նրա ականջը վիրավորվել և ուռել էր: Այդ ականջը երբեք չվերստացավ իր բնական ձևը և հետագայում նավաստիների կողմից կոչվեց «կադամբի տերև»:

Ինձ համար այդ օրը լցվեց բազմատեսակ անախորժություններով: Նախորդ գիշեր ես խոհանոցից վերցրել էի չորացած շորերս: Առավոտյան առաջին գործս եղավ խոհարարի զգեստները հանել և իմը հագնել: Հետո քսակս փնտրեցի: Բացի մանր փողից (իմ հիշողությունը շատ սուր է այսպիսի հարցերում), նրա մեջ կար հարյուր ութսունհինգ դոլլար՝ ոսկով և թղթադրամով: Քսակը գրպանումս էր, սակայն նրա պարունակությունը, բացի մանր արծաթից, անհետացել էր: Երբ տախտակամած բարձրացա խոհանոցում իմ պարտականություններն սկսելու համար, պակասած փողի մասին հարց տվի խոհարարին:

Թեև նրանից սպասում էի կոպիտ պատասխան, բայց երբեք չէի ակնկալում այն կատաղի ճառը, որով նա ինձ դիմավորեց:

— Լսի՛ր, Հե՛մփ,— սկսեց նա խոպոտ ձայնով, և նրա աչքերը փայլեցին չարությամբ,— դու, ինչ է, ուզում ես քիթ ու մոռթոջ ջարդե՞մ: Եթե կարծում ես, որ ես գող եմ, ապա կարծիքդ քեզ պահիր, թե չէ՝ շատ կզոջաս սխալիդ համար: Ուրեմն այս է քո երախտագիտությունը, հա՞: Դու այստեղ եկար թշվառ ու ողորմելի վիճակում, ես քեզ իմ խոհանոցը բերի, մարդավարի խնամեցի, և ահա թե՛ ինչ եմ ստանում դրա փոխարեն: Մյուս անգամ կարող ես գրողի ծոցը գնալ: Իսկ հիմա հարկավոր է քեզ լավ դաս տալ:

Այս ասելով, նա բռնեցքները բարձրացրած մոտեցավ ինձ: Պետք է ամոթով խոստովանեմ, որ հարվածից խուսափելով, խոհանոցից դուրս փախա: Ուրիշ ի՞նչ կարող էի անել: Ուժը, միմիայն բիրտ ուժն էր իշխում այս հրեշային նավի վրա: Խոսելը և համոզելը այստեղ ընդունված չեն: Երևակայեցեք միջակ կազմվածքով, նիհար, թույլ ու չգարգացած մկաններով մի մարդու, որը վարել է խաղաղ ու նստակյաց կյանք և սովոր չէ ոչ մի տեսակի կոպտության, այդպիսի մարդը ի՞նչ կարող է անել: Այս մարդ-զագաններին դիմագրավելը այնքան անմտություն կլիներ, որքան կատաղած ցլի դեմ մարտնչելը:

Այսպես էի մտածում ես այն ժամանակ և ջանում ինձ արդարացնել ու խիղճս հանգստացնել: Բայց նման ինքնարդարացումը չէր բավարարում: Նույնիսկ այսօր, երբ հիշում եմ այդ դեպքերը, դարձյալ չեմ կարող ինձ լրիվ արդարացնել: Սակայն ես այնպիսի դրության մեջ էի, որ հնարավոր չէր բանականության թելադրությամբ վարվել, հետևաբար, ստիպված էի գործել առանց կշռադատելու: Եթե իմ այդ դրությունը օրինավոր տրամաբանությամբ քննենք, ապա կարելի է ասել, որ իմ արարքի մեջ ամաչելու ոչինչ չկար: Բայց, այնուամենայնիվ, ամեն անգամ, երբ վերհիշում եմ այդ դեպքերը, հոգուս մեջ բարձրանում է ամոթի զգացմունք, որովհետև զգում եմ, որ տղամարդու ինքնասիրությունս հազար ու մի ձևերով ոտնահարվել ու վիրավորվել է:

Սակայն վերադառնանք մեր պատմությանը: Ես այնպիսի արագությամբ դուրս թռա խոհանոցից, որ ծունկս անտանելի ցավեց և ստիպված եղա նստել նավախելի հարթակի եզրին: Բայց խոհարարն ինձ չէր հետապնդում:

— Նայեցե՛ք այդ վախկոտին, տեսեք, թե ինչպե՞ս է փախչում,— գոչում էր նա,— այն էլ ցավող տոտիկով... Ետ վերադարձիր, մայրիկի խեղճ, փոքրի՛կ պաշտելի: Մի՛ վախեցիր, քեզ չեմ ծեծի:

Ես ետ եկա և սկսեցի իմ աշխատանքը: Այսպիսով, ժամանակավորապես վերջացավ այդ միջադեպը, որը, սակայն, հետագայում պիտի բարդանար: Ես նավասենյակում պատրաստեցի նախաճաշի սեղանը և ժամը յոթին սպասարկեցի որսորդներին ու նավապետին: Փոթորիկը գիշերվա ընթացքում մեղմացել էր, թեև ծովը դեռ ալեկոծ էր և քամին՝ ուժեղ: Վաղ առավոտյան հերթապահները պարզել էին բոլոր առագաստները, բացի առաջամասի երեք առագաստներից, որոնք, ինչպես իմացա խոսակցություններից, պետք է պարզվեին նախաճաշից անմիջապես հետո: Իմացա նույնպես, որ Գայլ Լարսենը ուզում է փոթորկից օգտվելով, նավարկել դեպի օվկիանոսի այն մասը, որտեղ կարող էինք հանդիպել հյուսիս-արևելյան պասսատներին: Նա հաշվում էր, որ այդ մշտական քամու շնորհիվ

կկարողանա կատարել դեպի Ճապոնիա ուղևորության մեծ մասը, ապա թեքվել հարավ՝ դեպի հասարակածը, իսկ Ասիայի եզերքներին մոտենալուց հետո՝ նորից ուղղվել դեպի հյուսիս:

Նախաճաշից հետո ինձ սպասում էր մի նոր ու անխուսափելի ձախորդություն: Ամանները լվանալուց հետո նավասենյակի վառարանը մաքրեցի և մոխիրը տախտակամած տարա, որպեսզի թափեմ ծովը: Գայլ Լարսենը և Հենդերսոնը ղեկանիվի մոտ կանգնած աշխուժորեն զրուցում էին: Նավաստի Ջոնսոնը վարում էր ղեկանիվը: Երբ ուղղվում էի դեպի նավի հողմընթաց եզրը, նա հանկարծ գլուխը ցնցեց, և ես կարծեցի, թե ինձ բարևում է: Իրականում, նա փորձում էր ինձ հասկացնել, որ մոխիրը թափեմ նավի հողմագերծ եզրից: Բայց ես գլխի չընկա, անցա Գայլ Լարսենի ու որսորդի կողքով և մոխիրը ծովը թափեցի: Քամին մոխիրը ետ քշեց ոչ միայն իմ, այլև Հենդերսոնի ու Լարսենի վրա: Հենց նույն վայրկյանին Լարսենը կատաղությամբ ինձ այնպիսի մի աքացի հասցրեց, ինչպիսին հասցնում են փողոցի շներին: Ես երբեք չէի պատկերացրել, որ աքացին կարող է այդքան ցավ պատճառել: Երերալով ու ետ-ետ ընկրկելով, հենվեցի ձեղնախցիկի միջնորմին դրեթե ուշագնաց վիճակում: Ամեն ինչ շարժվում էր աչքերիս առաջ և գլուխս պտտվում էր: Ցավն ինձ հաղթահարում էր, բայց, այնուամենայնիվ, կարողացա սողալով մոտենալ նավեզրին: Գայլ Լարսենը ինձ չհանդիպեց: Նա փոշին թափ տվեց հագուստից և վերսկսեց իր զրույցը Հենդերսոնի հետ: Յոհանսենը, որը նավախելի հարթակից ամեն ինչ տեսել էր, երկու նավաստի ուղարկեց, որպեսզի տախտակամածը մաքրեն:

Նույն առավոտ, ավելի ուշ, ես անակնկալի եկա, կանգնելով բոլորովին նորօրինակ մի փաստի առաջ: Խոհարարի կարգադրությամբ գնացել էի Գայլ Լարսենի խուցը կարգի գցելու և անկողինը շտկելու: Պատի վրա՝ անկողնի գլխավերևում, գրքերով լի մի դարակ կար: Դրանք աչքի անցկացնելիս, զարմանքով կարդացի Շեքսպիրի, Թեննիսոնի, Էդգար Պոյի և Դը-Քուինսիի անունները: Այնտեղ կային նաև գիտական գրքեր, որոնք պատկանում էին այնպիսի մարդկանց գրչին, ինչպիսիք են Տինդալը, Պրոկտորը և Դարվինը: Բացի աստղագիտության և ֆիզիկայի վերաբերյալ գրքերից, ես նկատեցի Բուլֆինչի «Դիցաբանության դարաշրջանը», Շոուի «Անգլիական և ամերիկյան գրականության պատմությունը», Ջոնսոնի «Բնագիտության պատմությունը» երկու մեծ հատորով, ինչպես և քերականության մի շարք գրքեր՝ Մետկալֆի, Ռիդի և Կելլոգի հեղինակություններից: Չկարողացա ժպիտս զսպել, երբ տեսա «Անգլերեն լեզու՝ քարոզիչների համար» գրքի մեկ օրինակը:

Ես չէի կարող որևէ առնչություն գտնել այս գրքերի ու նրանց տիրոջ միջև և տարակուսում էի, որ նա իրոք կարող է դրանք կարդալ: Բայց երբ սկսեցի անկողինը շտկել, վերմակների միջև գտա Բրաունինգի մի հատորը՝ Քեմբրիջյան հրատարակությամբ, որը Գայլ Լարսենը ակներևորեն կարդալիս էր եղել քնելուց առաջ: Գիրքը բացված էր «Պատշգամբում» բանաստեղծության վրա, և ես նկատեցի, որ այդ էջում որոշ պարբերություններ ընդգծված էին մատիտով: Նավի ցնցումից գիրքը ձեռքիցս վայր ընկավ և միջից դուրս սահեց թղթի մի թերթիկ, որի վրա կային մատիտով արված երկրաչափական գծագրություններ և հաշվումներ:

Նշանակում է, որ այդ սարսափելի մարդը, չնայած իր կոպտություններին, տգետ ու թանձրամիտ չէր: Մի ակնթարթում նա ինձ համար դարձավ մի առեղծված: Նրա բնավորության միայն այս կամ մյուս կողմը ինձ համար կատարելապես հասկանալի էր, բայց երկու կողմերի համատեղությունը՝ ուղղակի անըմբռնելի: Ես արդեն նկատել էի, որ Լարսենը խոսում էր հիանալի լեզվով և միայն երբեմն այն աղավաղում էր չնչին անճշտություններով:

Նավաստիների և որսորդների հետ խոսելիս նա թույլ էր տալիս այնպիսի սխալներ, որոնք հատուկ են ժարգոնի ոճական դարձվածքներին, բայց երբ հազվադեպ առիթներով ինձ էր դիմում, ապա խոսում էր ճիշտ և մաքուր լեզվով:

Նրա բնավորության այս նոր կողմի բացահայտումը ինչ-որ չափով ինձ քաջալերեց, և ես որոշեցի նրա հետ խոսել իմ կորած փողի մասին:

— Ինձ կողոպտել են,— ասացի նրան ավելի ուշ, երբ նա մենակ անցողաբար էր անում տախտակամածի վրա:

— Սը՛ր,— ուղղեց նա ինձ ոչ թե կոպիտ, այլ խիստ տոնով:

— Ինձ կողոպտել են, սը՛ր,— ուղղեցի ես:

— Այդ ինչպե՞ս է պատահել,— հարցրեց նա:

Ես պատմեցի, թե հագուստս թողել էի խոհանոցում, որ չորանա, իսկ հետո, երբ կորուստի մասին ակնարկել էի խոհարարին, նա փորձել էր ծեծել ինձ:

Իմ պատմությունը լսելով, Գայլ Լարսենը ժպտաց:

— Խոհարարն է թոցրել,— եզրակացրեց նա:— Բայց չե՞ք կարծում, որ ձեր ողորմելի կյանքն ինչ-որ զին պետք է ունենա: Բացի դրանից, թող սա դաս լինի ձեզ: Այսուհետև կսովորեք ինքներդ պահպանել ձեր փողը: Ենթադրում եմ, որ սրանից առաջ այդ հարցով զբաղվում էր ձեր հավատարմատարը կամ գործերի կառավարիչը:

Այս խոսքերի տակ ես զգում էի նրա հանդարտ հեգնանքը, բայց, այնուհանդերձ, հարցրի .

— Ինչպե՞ս անեմ, որ փողը ետ ստանամ:

— Դա ձեր գործն է: Դուք հիմա հավատարմատար կամ գործերի կառավարիչ չունեք, այնպես որ պետք է ինքներդ գործեք: Ձեր ստացած յուրաքանչյուր դոլլարին պետք է շատ ամուր կառչեք: Ով իր փողը ցրիվ է տալիս, ինչպես դուք եք արել, արժանի է կողոպտվելու: Դուք նույնիսկ մեղավոր եք: Իրավունք չունեք փորձության մատնելու ձեր մերձավորներին: Դուք գայթակեցրիք խոհարարին և նա փորձության մեջ ընկավ: Այդպիսով, վտանգի ենթարկեցիք նրա անմահ հոգին: Ի դեպ, հավատո՞ւմ եք հոգու անմահությանը:

Այս հարցը տալիս՝ նրա հոնքերը ծուլորեն վեր բարձրացան, և ինձ թվաց, թե նրա ներաշխարհը բացվում է իմ առաջ ու հայացքս սուզվում է նրա հոգու խորքը: Բայց դա պարզապես պատրանք էր: Ես վստահ եմ, որ ոչ ոք երբևէ չի կարողացել խորանալ Գայլ Լարսենի հոգու մեջ: Հետագայում միայն հասկացա, որ նրա մենավոր հոգին միշտ ծածկված է դիմակի տակ, թեև հազվադեպ առիթներով ձևացնում է, թե դուրս է գալիս դիմակի հետևից:

— Անմահությունը կարդում եմ ձեր աչքերի մեջ,— պաասախանեցի ես, փորձի համար զանց առնելով «սը՛ր»-ը, որովհետև կարծում էի, որ մեր զրույցի մտերմականությունը արդարացնում է այդ զանցառումը:

Նա ուշադրություն չդարձրեց դրան:

— Դուք, ըստ երևույթին, ուզում եք ասել, որ նրանց մեջ տեսնում եք ինչ-որ բան, որը կենդանի է, սակայն չի ապրելու առհավետ:

— Ես կարծում եմ դրանից ավելին,— շարունակեցի քաջաբար:

— Նշանակում է՝ կարողում եք գիտակցությունը: Դուք կարողում եք կենդանի կյանքի գիտակցությունը, ոչ թե կյանքի հավիտենականությունը:

Որքան հստակ էր նա մտածում և որքան լավ արտահայտում իր միտքը: Նա դադարեց ինձ հետաքրքրությամբ նայելուց և շուտ գալով, սկսեց դիտել կապարագույն ծովը: Նրա աչքերն ստացան սառն արտահայտություն և բերանի շուրջն ավելի ընդգծվեցին խորշոմները: Նա ակնհայտորեն մաղձոտ տրամադրության մեջ էր:

— Իսկ ինչի՞ համար,— հարցրեց նա հանկարծ, նորից, դառնալով դեպի ինձ:— Եթե ես անմահ լինեի, դա ի՞նչ նպատակի համար կլիներ:

Ես լուռ մնացի: Ինչպե՞ս կարող էի իմ իդեալիզմը բացատրել այս մարդուն: Ինչպե՞ս կարող էի բառերով բացատրել այն, որը միայն զգում եմ, որը հնչում է ինչպես քնի մեջ լսված երաժշտություն, որին հավատում եմ, բայց չեմ կարող խոսքերով բնութագրել:

— Ի՞նչ բանի եք հավատում, ուրեմն,— հարցրի իմ հերթին:

— Ես հավատում եմ, որ կյանքը մի անհեթեթ իրարանցում է,— պատասխանեց նա իսկույն:— Այն նման է փրփուրի, թթխմորի, մի բանի, որը շարժվում է և կարող է շարժվել մի բոպե, մի ժամ, մի տարի, հարյուր տարի, բայց դատապարտված է ի վերջո դադարելու: Խոշորները ուտում են փոքրերին, որպեսզի շարունակեն շարժվել, ուժեղները ուտում են տկարներին, որպեսզի պահպանեն իրենց ուժը: Ովքեր բախտավոր են, ուտում են ամենից շատ և շարժվում ամենից երկար, ահա և ամենը: Դուք ի՞նչ կարծիքի եք այդ արարածների մասին:

Ձեռքի անհամբեր շարժումով նա ցույց տվեց մի խումբ նավաստիների, որոնք տախտակամածի կենտրոնում ձգում էին պարանները:

— Սրանք շարժվում են, բայց շարժվում է և մեղուզան: Նրանք աշխատում են, որպեսզի ուտեն և դրա շնորհիվ կարողանան շարժվել: Աշխատում են իրենց փորի համար, իսկ փորը աշխատում է նրանց կյանքի պահպանման համար: Եվ դա մի շրջանակ է, որից չես կարող դուրս գալ և ոչ մի տեղ չես հասնի: Ոչ էլ նրանք կարող են դուրս գալ: Նրանք ի վերջո կանգ կառնեն և այլևս չեն շարժվի՝ կմեռնեն:

— Նրանք երազներ ունեն,— ընդհատեցի ես,— փայլուն, լուսավոր երազներ...

— Միայն ուտելիքի մասին,— վճռականորեն եզրակացրեց նա:

— Եվ դրանից ավելի...

— Միայն ուտելիքի: Ավելի մեծ ախորժակի և ավելի մեծ հաջողության, որպեսզի ախորժակը ավելի լավ հագեցնեն:— Նրա ձայնը խստորեն էր հնչում:— Որովհետև տեսնո՞ւմ եք, նրանք երազում են բարեհաջող ճանապարհորդություններ կատարելու, ավելի փող վաստակելու, նավապետի օգնական դառնալու, մի խոսքով, իրենց դիրքն ամրացնելու մասին, որպեսզի կողոպտեն իրենց նմաններին, ամբողջ գիշերն անցկացնեն իրենց տանը, լավ ուտեն և սև

աշխատանքը ուրիշներին կատարել տան: Դուք էլ, ես էլ նույնպիսին ենք: Տարբերությունը միայն նրանում է, որ մենք ավելի շատ և ավելի լավ ենք ուտում: Ներկայումս ես եմ նրանց ու ձեզ լափում: Բայց անցյալում դուք ավելի շատ էք լափել, քան ես: Դուք քնել էք փափուկ անկողինների մեջ, հագել էք տաք և լավ հագուստներ, կերել էք համեղ ճաշեր: Իսկ ո՞վ է ստեղծել այդ անկողինները, այդ հագուստները, այդ ճաշերը: Ոչ դուք: Դուք ոչինչ չեք վաստակել ձեր սեփական քրտինքով: Դուք ապրել էք եկամուտով, որը ձեր հայրն է վաստակել: Դուք նման էք ճայի, որը խոյանում է ջրագռավների վրա և հափշտակում նրանց բռնած ձկները: Դուք պատկանում էք այն մարդկանց խմբին, որոնք կազմել են, այսպես կոչված, կառավարություն, դարձել են մյուս բոլոր մարդկանց տերերը և լափում են ուրիշ մարդկանց ուտելիքը, որը վերջիններս կուզենային իրենք ուտել: Դուք հագնում էք տաք հագուստներ, իսկ նրանք, ովքեր շինում են այդ հագուստները, ոչ միայն մրսում են ցնցոտիների մեջ, այլև ձեզնից, ձեր հավատարմատարից կամ ձեր փողերը տնօրինող գործակալից աշխատանք են խնդրում:

— Բայց սա բոլորովին այլ հարց է,— գոչեցի ես:

— Բնավ երբեք:— Նա այժմ խոսում էր արագ և աչքերը բոցավառվել էին:— Այս տեսակ կյանքը խոգություն է: Ի՞նչ օգուտ կամ իմաստ ունի խոգության անմահությունը: Ի՞նչ նպատակի է ձգտում այս ամենը: Ինչի՞ մասին է այս բոլորը: Դուք երբևէ ուտելիք չեք ստեղծել: Եվ սակայն ձեր կերած կամ վատնած ուտելիքով կարելի էր փրկել տասնյակ թշվառների կյանքը, որոնք ստեղծել են ուտելիքը և զրկվել դրանից: Անմահության ո՞ր նպատակին էք ծառայում դուք: Եվ կամ՝ նրանք: Մի բռպե նկատի ունեցեք ձեզ ու ինձ: Ի՞նչ արժեք ունի ձեր այդ պանծալի անմահությունը, երբ ձեր կյանքը ընդհարվում է իմին: Դուք ցանկանում էք վերադառնալ ցամաք, որը նպաստավոր վայր է ձեր յուրահատուկ խոգության համար: Իսկ իմ քմահաճույքն ուզում է ձեզ պահել այս նավի վրա, որտեղ ծաղկում է ի՛մ խոգությունը: Եվ ես ձեզ կպահեմ: Ես կարող եմ ձեզ վերափոխել կամ ջախջախել: Դուք կարող եք մեռնել այսօր, այս շաբաթվա ընթացքում և կամ մի ամիս հետո: Ես կարող եմ ձեզ սպանել հենց հիմա, բռունցքի մեկ հարվածով, որովհետև թույլ ու ողորմելի արարած եք: Բայց եթե մենք անմահներ լինեինք, ապա ինչո՞ւ այս բաները պիտի անեինք: Խոզավայել արարքները, որ մենք արել ենք մեր ամբողջ կյանքում, անմահներին վայել արարքներ չեն: Հետևապես, ինչի՞ համար է այս ամենը: Ինչո՞ւ եմ ձեզ այստեղ պահել . . .

— Որովհետև դուք էք ավելի ուժեղը,— թոթովեցի ես:

— Իսկ ինչո՞ւ եմ ավելի ուժեղ,— շարունակեց նա, իր հարցերով տարված,— որովհետև իմ մեջ այդ թթխմորից ավելի շատ կա: Մի՞թե չեք տեսնում, մի՞թե չեք հասկանում:

— Բայց այդպիսի կյանքը բոլորովին անհույս կլինեք,— բողոքեցի ես:

— Համաձայն եմ ձեզ հետ,— պատասխանեց նա:— Ուրեմն ինչո՞ւ ենք շարժվում, չե՞ որ շարժվել նշանակում է ապրել: Իսկ եթե չշարժվեինք և կենսալի թթխմորի մասնիկները չլինեինք, ապա անհուսություն չէր լինի: Բայց, և հենց սրանում է ամբողջ հարցը. մենք ուզում ենք ապրել ու շարժվել, չնայած կյանքի անիմաստությանը: Ուզում ենք, որովհետև կյանքի բնությունն այնպիսին է, որ պետք է անպայման շարժվի: Եթե այդպես չլինեք, ապա կյանքը կդադարեր: Հենց կյանքի պատճառով, որ ձեր մեջ կա, դուք երագում էք անմահության մասին: Ձեր մեջ եղող կյանքը ձգտում է հավերժական դառնալ: Հավերժական խոգություն...

Նա հանկարծ կրունկների վրա շուռ եկավ և սկսեց հեռանալ: Բայց երբ խելամասի հարթակին հասավ, կանգ առնելով, կանչեց ինձ իր մոտ:

— Ի միջի այլոց, որքա՞ն էր խոհարարի թոցրած գումարը,— հարցրեց նա:

— Հարյուր ութսունհինգ դոլլար, սը՛ր,— պատասխանեցի ես:

Նա գլխով արեց: Մի բռպեց հետո, երբ սանդուղքով իջնում էի նավասենյակ, որպեսզի սեղանը սարքեմ, լսեցի, թե ինչպես նա բարձրաձայն հայհոյում է մի քանի նավաստիների:

Գլուխ վեցերորդ

Հաջորդ առավոտ փոթորիկն արդեն մեղմացել էր, և «Ուրվականը» թեթև օրորվում էր խաղաղած ծովի վրա: Քամին բոլորովին դադարել էր, բայց երբեմն փչում էին մեղմ զեփյուռներ: Գայլ Լարսենը նավախելի հարթակի վրա շարունակ անցուղարձ էր անում և զննում հյուսիս-արևելյան կողմը, որտեղից պետք է փչեին պասսատները:

Բոլոր նավաստիները տախտակամածի վրա էին և կարգի էին բերում մակույկները որսորդության առաջիկա շրջանի համար: Նավում յոթ մակույկ կար: Նրանցից մեկը նավապետինն էր, իսկ մյուս վեցը՝ որսորդներին: Յուրաքանչյուր մակույկի անձնակազմը բաղկացած էր մեկ որսորդից, մեկ թիավարից և մեկ նավուղիդից: Երկկայմանավի վրա թիավարներն ու նավուղիդները կազմում են նավագախումբը, իսկ որսորդները ղեկավարում են հերթապահ խմբերը և նույնպես ենթարկվում են նավապետին:

Ես հիմա արդեն գիտեի այս ամենը, ինչպես և այլ մանրամասներ: «Ուրվականը» համարվում էր Սան-Ֆրանցիսկոյի և Վիկտորիայի նավատորմերի ամենաարագընթաց երկկայմանավը: Մի ժամանակ այն եղել էր անձնական զբոսանավ և կառուցված էր հատկապես սրընթաց ճանապարհորդության համար: Նրա շրջագծերն ու սարքվածը, չնայած դրանց մասին ոչինչ չգիտեմ, ինքնըստինքյան այդ են վկայում: Երեկ, երկրորդ հերթապահության ժամանակ, Ջոնսոնի հետ կարճատև զրույց ունեցա, և նա ինձ պատմեց այս մանրամասները: Նա խոսում էր նավի սիրահար մարդկանց հատուկ խանդավառությամբ, այնպես, ինչպես ուրիշ մարդիկ խոսում են ձիերի մասին: Բայց մեր ճանապարհորդության հեռանկարի վերաբերյալ նա հոռետեսությամբ արտահայտվեց, և ես այնպես հասկացա, որ Գայլ Լարսենը շատ վատ համբավ է վայելում որսորդանավերի նավապետների շրջանում: «Ուրվականի» վրա ծառայելու ցանկությունն էր միայն Ջոնսոնին մղել, որ պայմանագիր ստորագրի այս ճանապարհորդության համար, բայց հիմա նա արդեն սկսել էր զոջալ:

Նա ինձ ասաց, որ «Ուրվականը» ութսուն տոննանոց երկկայմանավ է և ունի հիանալի կառուցվածք: Նավի լայնքը քսաներեք ոտնաչափ է, իսկ երկայնքը՝ ինսուն ոտնաչափից ավելի: Կապարապատ ողնափայտի անսովոր (և միաժամանակ անհայտ) ծանրությունը նրան օժտում է բացառիկ աներերությամբ և առազաստների համար ապահովում հսկայական տարածություն: Տախտակամածից մինչև գլխավոր միջնակայմի գագաթը հարյուր ոտնաչափ է, այնինչ առաջակայմի բարձրությունը՝ ութ կամ տասը ոտնաչափով պակաս: Ես այս մանրամասները հիշատակում եմ պարզապես գաղափար տալու համար քսաներկու մարդ պարունակող այդ ծփուն մանրաշխարհի ծավալի մասին: Դա մի իսկական մանրաշխարհ է,

մի հյուլէ, մի կէտ, և ես զարմանում եմ, թէ մարդիկ ինչպէս են համարձակվում այսպիսի փոքր և դյուրաբեկ կառուցվածքի վրա նավարկել բաց ծովում:

Գայլ Լարսենը մեծ համբավ է վայելում որպէս առագաստանավի խիզախ նավապետ: Ես այդ մասին իմացա Հենդերսոնի և կալիֆորնիացի մի այլ որսորդի՝ Ստենդիշի, գրույցից: Երկու տարի առաջ, Բերինգյան ծովում, փոթորկի ժամանակ «Ուրվականի» կայմերը կոտրվել էին: Դրանից հետո Գայլ Լարսենը կանգնեցրել էր այժմյան կայմերը, որոնք ավելի ամուր և ավելի ծանր են: Նոր կայմեր հաստատելու առթիվ Գայլ Լարսենն իբր ասել էր, թէ ինքն ավելի շուտ կնախընտրէր, որ նավը շրջվեր, քան դրանք նորից կոտրվեին:

Բացի Յոհանսենից, որը հափշտակված է իր նոր պաշտոնով, նավի վրա ծառայողներից յուրաքանչյուրը ինչ-որ առանձին բացատրություն ունի արդարացնելու իր ներկայությունը «Ուրվականի» վրա: Նավակազմի կեսը բաղկացած է հեռավոր ճանապարհորդություններ կատարող նավաստիներից, որոնք պատճառաբանում են, թէ նախօրոք ոչինչ չգիտեին ո՛չ նավի, ո՛չ էլ նավապետի մասին: Նրանք, որոնք տեղյակ են իրերի դրությանը, փսփսալով պատմում են, թէ որսորդները առաջնակարգ նշանառուներ լինելով հանդերձ, իրենց կովարարությամբ և անկարգությամբ այնքան հոչակ են հանել, որ մաքուր համբավ վայելող որսն է նավ նրանց հետ պայմանագիր չի ստորագրում:

Ես ծանոթություն հաստատեցի նաև մի այլ նավաստու հետ, որը կոչվում է Լուիս: Սա կլոր և գվարթ դեմքով մի իռլանդացի է Նոր-Շոթլանդիայից և միշտ պատրաստ է շաղակրատելու, հենց որ ունկնդիր գտնի: Ճաշից հետո, երբ խոհարարը ներքևում քնած էր և ես հավիտենական կարտոֆիլն էի մաքրում, Լուիսը խոհանոց մտավ մի քիչ «լեզուն քրքրելու» համար: Նա նավի վրա իր ներկայությունը բացատրեց նրանով, որ պայմանագիր ստորագրել էր հարբած վիճակում և նորից ու նորից հավաստիացրեց, թէ զգաստ վիճակում երբեք այդպիսի բան չէր անի: Ես իմացա, որ նա ավելի քան տասնյակ տարիներ կանոնավորապէս մասնակցել է ծովակատվի որսին, և համարվում է որսորդական նավատորմի երկու կամ երեք լավագույն նավուղիներից մեկը:

— Է՛հ, սիրելիս,— ասաց նա մռայլ արտահայտությամբ գլուխն օրորելով,— սա ամենավատ երկկայմանավն է, որ դու ընտրել ես, թէև ինձ պէս հարբած չէիր այդ լուրջին: Ծովակատվի որսը որևէ նավաստու համար դրախտային է ուրիշ նավի վրա: Նավապետի օգնականը եղավ առաջին մեռնողը, բայց հիշի՛ր իմ խոսքերը, մինչև ճանապարհորդության վերջը դեռ ուրիշ շատ մեռնողներ կլինեն այստեղ: Մեր մեջ ասած, այդ Գայլ Լարսենը մի իսկական հրեշ է, իսկ «Ուրվականը» իսկական դժոխք եղավ այն օրից, երբ Գայլ Լարսենը նշանակվեց նավապետ: Ես շատ բան գիտեմ նրա մասին: Օրինակ, ես չեմ մոռացել, որ երկու տարի առաջ Հակոդատեում վեճի բռնվելով, նա իր նավաստիներից չորսին սպանեց: Այն ժամանակ ես ծառայում էի «Էմմա Լ. -ի» վրա, որը խարիսխ էր նետել «Ուրվականից» երեք հարյուր ոտնաչափ հեռու: Այդ նույն տարին նա բռունցքի մեկ հարվածով սպանեց մի ուրիշ մարդու: Այո, նրան մյուս աշխարհ ուղարկեց: Նրա գլուխը ջախջախել էր, ինչպէս հավիկիթի կեղև: Ես նույնպէս գիտեմ, թէ նա ինչ խաղ խաղաց Քուրա կղզու կառավարչի ու ոստիկանապետի գլխին, երկուսն էլ ճապոնացի ջենթլմեններ, որոնք նավ էին եկել որպէս նրա հյուրերը, հետները բերելով իրենց կանանց. ա՛յ թէ սիրուն տիկնիկներ էին. հար ու նման այն նկարներին, որ տեսնում ես հովհարների վրա: Իսկ երբ հասավ խարիսխ վերցնելու ժամանակը, Լարսենը ամուսիններին իջեցրեց իրենց մակույկը, ապա նավը շարժվեց իբր

պատահաբար, և նա չհասցրեց իջեցնել կանանց... Դրանից մի շաբաթ հետո միայն նա խեղճ տիկիներին ցամաք հանեց կղզու մյուս կողմը և նրանք ստիպված եղան տուն վերադառնալ լեռնային ճանապարհներով, հագներին ունենալով իրենց ծղոտե փոքրիկ սանդալները, որոնք չէին կարող դիմանալ նույնիսկ մեկ մղոն քայլելուն: Այս ամենը ես գիտեմ: Այդ Գայլ Լարսենը մի իսկական գազան է, նա այն մեծ գազանն է, որի մասին հիշատակված է հայտնության գրքում: Եվ նրա վերջը լավ չի լինելու: Բայց միտդ լավ պահիր, ես քեզ ոչինչ չեմ ասել, նրա մասին ոչ մի բան չեմ փսփսացել... Որովհետև չաղ Լուիսը պետք է կենդանի վերադառնա այս ճանապարհորդությունից, անգամ, եթե մյուս բոլորը ձկներին կեր դառնան:

— Գայլ Լարսեն... — խոպոտ ձայնով վերսկսեց Լուիսը մի բուպե հետո:— Պարզ չէ՝ այդ անվան իմաստը: Գա՛յլ... Եվ իրոք գայլ է նա: Կան մարդիկ, որ քարսիրտ են, իսկ նա բոլորովին սիրտ չունի: Գայլ, հենց գայլ է նա: Զարմանո՞ւմ ես, որ նրան այդպես են կոչում:

— Բայց եթե նա ճանաչված է որպես այդպիսին, — առարկեցի ես, — ապա ինչպե՞ս է կարողանում մարդիկ ճարել, որ այս նավում ծառայեն իր ձեռքի տակ:

— Իսկ ինչպե՞ս է, որ մարդիկ ճարվում են որևէ աշխատանք անելու համար, լինի դա ծովի կամ ցամաքի վրա, — հարցրեց Լուիսը կելտական յուրահատուկ տաքարյունությամբ:— Մի՞թե ինձ կգտնեիր այս նավի վրա, եթե խոզի պես հարբած վիճակում չստորագրեի պայմանագիրը: Կան նաև մարդիկ, ինչպես այդ որսորդներն են, որոնք չեն կարող ավելի լավ նավի վրա աշխատանք գտնել, կան և ուրիշներ, ինչպես, օրինակ, առաջամասի այդ խեղճ նավաստիները, որոնք դեռ ոչնչից տեղյակ չեն: Բայց նրանք կիմանան, իհարկե, կիմանան, և կանիծեն այն օրը, որ աշխարհ են եկել: Ես ցավում եմ այդ թշվառների համար, բայց ամենից առաջ մտածում եմ խեղճ չաղ Լուիսի և նրան սպասող փորձանքների մասին: Նորից կրկնում եմ, ես ոչ մի բան չեմ շնջացել, լավ հիշիր այդ, ոչ մի բան:

— Այդ որսորդները անզգամներ են, — նորից սկսեց Լուիսը, որը, ըստ երևույթին, տառապում էր շատախոսության ախտով:— Սպասիր և կտեսնես, թե ինչպես նրանք շուտով կսկսեն կռվել և իրենց ցույց տալ: Բայց Գայլ Լարսենը նրանց հախից կգա և ահը կխոթի նրանց սև ու նեխած սրտերի մեջ: Վերցրու, օրինակ, իմ որսորդին՝ Հոռներին: Նա այնքան հանդարտ տեսք ունի, այնքան հեզահամբույր ու քաղցրախոս է, աղջկա նման, որ թվում է, թե նույնիսկ կարագը չի հալվի բերանում: Բայց, չնայած դրան, անցյալ տարի նա սպանեց իմ մակույկի նավուղիդին: Ասացին, թե դա մի տխուր, պատահական արկած է, բայց ես հետո Յոքոհամայում հանդիպեցի նույն մակույկի թիավարին, և նա ինձ ամեն ինչ պատմեց: Գալով Սմոքին, այդ փոքր սև դևին, ապա ռուսները նրան երեք տարի նստեցրին Միբիրի աղահանքերում որսագողության համար, որ նա արել էր Պոնձի կղզում, որը ռուսական մի արգելամաս է: Նրա ձեռքերն ու ոտքերը շղթայեցին իր մեղսակից ընկերոջ հետ: Այնտեղ նա ինչ-որ վեճ կամ կռիվ է ունեցել այդ ընկերոջ հետ և նրան ուղարկել է հանքի վերնամասը. . . ուղարկել է մաս-մաս, աղի դույլերի մեջ, մի օր մեկ ոտքը, հաջորդ օրը թևը, մյուս օրը գլուխը, և այսպես շարունակաբար:

— Բայց արդյոք ճի՞շտ եք ասում, — գոչեցի ես՝ սարսափից ընկճված:

— Ասո՞ւմ, — պատասխանեց նա փայլակի արագությամբ, — ես ոչինչ չեմ ասում: Ես համր ու խուլ եմ, ինչպիսին դու ինքդ էլ պետք է լինես, հենց քո մոր հոգու համար: Եթե ես իմ բերանը բացել եմ, ապա այդ արել եմ միայն գովելու համար նրանց ու նրան... Անիծվի նրա հոգին և

տա՛սասոված, որ նա տասը հազար տարի այրվի քավարանում ու հետո գնա դժոխքի ամենախոր հատակը . . .

Ջոնսոնը (այն նավաստին, որը մարմինս շփելիս մաշկս գրեթե պոկել էր, երբ առաջին անգամ ինձ բարձրացրին նավ) ամբողջ նավագախմբի մեջ ամենաուղղամիտ մարդն էր: Նա չափազանց պարզ էր: Նրա պարկեշտությունն ու արիությունը երևում էին հենց առաջին հայացքից, իսկ համեստությունը կարող էր նույնիսկ շփոթվել երկչոտության հետ: Սակայն նա երկչոտ չէր: Նա ուներ իր համոզմունքները պաշտպանելու քաջություն ու այդ քաջության վստահությունը: Այդ բանը դրսևորվեց մեր առաջին հանդիպման օրը, երբ նա թույլ չտվեց, որ իր անունը աղավաղելով, Յոնսոն կոչեն: Նրա բնավորության այդ գիծը նկատի ունենալով, Լուիսն արեց հետևյալ մարգարեական դատողությունը:

— Այդ համառ Ջոնսոնը պայծառ տղա է, առաջամասում աշխատող նավաստիներից ամենալավը: Նա մեր մակույկի թիավարն է: Բայց երևում է, որ նա Գայլ Լարսենի հետ մի օր անպայման կընդհարվի: Ես այդ լավ գիտեմ: Ես տեսնում եմ, որ այդ մոտենում է այնպես, ինչպես փոթորիկը երկնքից: Ես Ջոնսոնի հետ եղբոր պես զրույց ունեցա, բայց նա ոչ մի ցանկություն չունի բռնկվող կրակը մարելու: Եթե որևէ բան նրան դուր չի գալիս, նա սկսում է փնթփնթալ, իսկ նավի վրա միշտ էլ կգտնվի մի մատնիչ, որը կարող է այդ մասին Գայլին իմաց տալ: Գայլը ուժեղ է, իսկ գայլերը ասում են ուրիշ ուժեղներին: Նա տեսնում է, որ Ջոնսոնը ուժեղ է, ծնկի եկողը չի և ընդունակ չի քծնելու, երբ նրան հայիոյում են կամ մոռութին հարված հասցնում: Փոթորիկը մոտենում է, այո, մոտենում է... Իսկ այն ժամանակ աստված գիտի, թե որտեղից պիտի գտնեմ նրա պես ուրիշ թիավար: Դու գիտե՞ս, որ երբ նավապետը «Յոնսոն» կանչեց, այդ հիմարը նրան պատասխանեցի «Իմ անունը Ջոնսոն է, սըր» և սկսեց իր անվան տառերը մեկ-մեկ հեգել: Այդ վայրկյանին պետք է տեսնեիր Գայլի դեմքը: Ես կարծեցի, որ նույն րոպեին նա կհարձակվի Ջոնսոնի վրա: Նա այդ չարեց, բայց մի օր անպայման կանի ու կջարդի նրան, այլապես ես ոչինչ չգիտեմ ծովի վրա ապրող մարդկանց վարվելակերպի մասին:

Թոմաս Մագրիջը գնալով անտանելի է դառնում: Ես հարկադրված եմ նրան «միստր» կամ «սըր» կոչել յուրաքանչյուր նախադասության մեջ: Նրա լկտիության պատճառներից մեկն այն է, որ Գայլ Լարսենը, ըստ երևույթին, բարյացակամ է նրա նկատմամբ: Ընդհանրապես չլսված բան է, որ որևէ նավապետ մտերիմ լինի նավի խոհարարի հետ, բայց Գայլ Լարսենը փաստորեն այդպես է վարվում: Արդեն երկու կամ երեք առիթներով նա գլուխը մտցրել է խոհանոցի դռնից և բարեհոգությամբ ծաղրել Մագրիջին: Իսկ այսօր ճաշից հետո, նավախելում կանգնած, լրիվ տասնհինգ րոպե նա շաղակրատեց խոհարարի հետ: Երբ այդ զրույցից հետո Մագրիջը խոհանոց վերադարձավ, նրա յուզալի դեմքը ուրախությունից ճառագայթում էր: Աշխատելիս նա քթի տակ մրմնջում էր ինչոր փողոցային երգեր՝ ջղեր քայքայող աններդաշնակ ու ճաթած խզողներով:

— Ես միշտ էլ իմացել եմ պետերի հետ վարվելու ձևը,— ասաց նա մտերմական տոնով:— Ես գիտեմ, թե ինչպես պետք է գնահատել տամ իմ արժանիքները: Օրինակ, իմ նախկին նավապետի օրով ես ուզածս րոպեին ուղղակի մտնում էի նրա խուցը ընկերաբար զրուցելու և միասին մի բաժակ խմելու համար: «Մագրիջ,— ասում էր նա,— Մագրի՛ջ, դու պետք է այլ կոչում ունենայիր»: «Իսկ ի՞նչ կոչում», հարցնում էի ես: «Դու պետք է ջենթլմեն ծնված լինեիր և երբեք չաշխատեիր քո ապրուստի համար»: Թող աստված ինձ պատժի, Հենմի, եթե ճիշտ չեմ

ասում: Իսկ ես նստում էի նրա խցում, ոնց որ իմ տանը, ծխում էի նրա սիգարները և խմում նրա ռումը:

Այս շաղակրատությունն ինձ ուղղակի կատաղեցնում էր: Ես կյանքումս երբեք չէի լսել մարդկային մի ձայն, որը այսքան ատելի լիներ: Այս մարդու փաղաքշական ու շողոքորթ տոնը, նրա կեղծ ժպիտը և հրեշային պարծենկոտությունը այնպես ազդեցին ջղերիս վրա, որ ամբողջ մարմնով սկսեցի դողալ: Նա, անկասկած, ամենազզվելի և ամենագարշելի անձնավորությունն էր, որին երբևէ հանդիպել եմ: Դրա հետ մեկտեղ, նա ճաշերը աննկարագրելիորեն կեղտոտ էր եփում: Եվ քանի որ նավի բոլոր ուտելիքները անցնում էին նրա ձեռքով, ապա ստիպված էի լինում զգուշությամբ ընտրել իմ ուտելիքը, ջոկելով այն բաները, որոնք համեմատաբար նվազ կեղտոտ էին:

Կոշտ աշխատանքի անվարժ լինելով, ձեռքերս ինձ շատ էին նեղում: Եղունգներս իրենց փայլը կորցրին ու սևացան, իսկ ձեռքերիս մաշկը արդեն այնքան էր կեղտոտվել, որ նույնիսկ խոզանակով հնարավոր չէր մաքրել: Ափերիս մեջ սկսեցին կոշտուկներ գոյանալ, իսկ մի անգամ, երբ նավի ցնցումից հավասարակշռությունս կորցրի, արմունկս վառարանին քսվելով սաստիկ այրվեց: Ծունկս չէր լավանում, ուռուցքը չէր իջել, իսկ ծնկոսկը դեռ տեղը չէր ընկել: Առավոտից մինչև գիշեր կաղալով գնալ-գալը, իհարկե, չէր կարող նպաստել դրա բուժմանը: Իսկ բուժման համար ինձ հարկավոր էր հանգստանալ:

Հանգստանալ. . . Անցյալում երբեք չէի իմացել այս բառի իսկական նշանակությունը: Ես իմ ամբողջ կյանքում հանգստանում էի, առանց իմանալու, թե ինչ է նշանակում այդ: Իսկ այժմ, եթե ինձ վիճակվեր մի կես ժամ անշարժ նստել և ոչինչ չանել, նույնիսկ չմտածել, դա կլիներ աշխարհի ամենահաճելի բանը: Բայց մյուս կողմից, այս ամենը ինձ համար մի տեսակ հայտնություն եղավ: Հիմա արդեն հասկանում ու գնահատում եմ աշխատավոր մարդկանց կյանքը: Ես երբեք չէի պատկերացրել, որ աշխատանքը կարող է այսքան ծանր լինել: Առավոտյան ժամը հինգն անց կեսից մինչև գիշերվա ժամը տասը ես բոլորի ստորուկն եմ և ոչ մի բուպե չեմ կարող հանգստանալ, բացի այն կարճ վայրկյաններից, որ կարող եմ գողանալ երեկոյան հերթապահության վերջում: Բավական է մի բուպե կանգնեմ դիտելու արևի տակ կայծկլտացող ծովը կամ նայեմ, թե ինչպես մի որևէ նավաստի բարձրանում է խելամասի թեք կայմի վրա կամ մագլցում կայմապարանով, և ահա հետևիցս կլսեմ խոհարարի նողկալի ձայնը. «Հե՛յ, Հե՛մփ, աշխատանքից փախել ես, հա՛, ես քեզ հետևում եմ, լավ իմացիր»:

Որսորդների խցում նկատվում են աճող խռովության նշաններ և խոսք է պտտվում, թե Սմոքը և Հենդերսոնը կռվել են իրար հետ: Հենդերսոնը մնացած որսորդներից ամենալավն է, սառնարյուն մի մարդ, որին դժվար է գայրացնել: Բայց, ըստ երևույթին, նա ի վերջո գայրացել էր, քանի որ Սմոքի դեմքը չանգովել էր ու աչքի տակը կապտել: Վերջինս առանձնապես չարացած տեսք ուներ, երբ ընթրիքի ժամանակ եկավ նավասենյակ:

Ընթրիքից առաջ ականատես եղա մի դաժան դեպքի, որը ցույց տվեց, թե ինչքան բիրտ ու անզգամ են այդ մարդիկ: Նավագախմբում կա Հարրիսոն անունով մի նորընծա նավաստի, անշնորհք տեսքով մի գեղջուկ երիտասարդ, որը, հավանորեն, արկածախնդրության հեռանկարներով խանդավառված՝ կատարում էր իր առաջին ճանապարհորդությունը: Թեթև ու փոփոխական քամիների պատճառով նավը հաճախ շեղվում է ճանապարհից և առագաստները շրջվում են մեկ կողմից մյուսը: Այդպիսի դեպքերում մի որևէ նավաստի

ուղարկվում է վերև, որպեսզի ցոլակայմի առագաստը տեղափոխի: Հարրիսոնը վերևում էր, երբ պարանը պատահաբար խճճվեց այն ճախարակի մեջ, որի միջով անցնելով, երկարում էր մինչև ցոլակայմի գագաթը: Որքան էս հասկացա, պարանը ազատելու երկու միջոց կար. կա՛մ առագաստը ցածրացնել, մի բան, որ համեմատաբար ավելի հեշտ էր ու անվտանգ, և կամ պարանով մազլցել մինչև կայմի ծայրը. իսկ դա չափազանց արկածալի գործողություն էր:

Յոհանսենը Հարրիսոնին հրամայեց մազլցել պարանով: Բոլորի համար պարզ էր, որ տղան վախենում է: Եվ իրոք, բարակ ու ճոճվող պարաններով տախտակամածից ութսուն ոտնաչափ վեր մազլցելը վախենալու բան էր: Եթե քամին համաչափ փչեր, ապա վտանգն այդքան մեծ չէր լինի: Բայց «Ուրվականը» տատանվում էր լայն ալիքների վրա և յուրաքանչյուր տատանումից առագաստն աղմուկով թափոտում էր, իսկ պարանները մեկ թուլանում էին, մեկ էլ հանկարծ ցնցվելով պրկվում: Նրանք կարող էին մարդուն թափ տալ այնպես, ինչպես մտրակով թափ կտայիր դրա վրա նստած ճանճին:

Հարրիսոնը լսեց հրամանը և հասկացավ, թե իրենից ինչ է պահանջվում, բայց, այնուամենայնիվ, վարանեց: Ըստ երևույթին, նա իր կյանքում առաջին անգամ էր այսպիսի գործողություն կատարելու: Յոհանսենը, որը վարակվել էր Գայլ Լարսենի տիրական վարվելակերպից, սկսեց հայհոյանքների մի տարափ տեղալ:

— Բավական է, Յոհանսեն,— ասաց Լարսենը խստությամբ:— Դու պետք է իմանաս, որ այս նավի վրա միայն էս իրավունք ունեմ հայհոյելու: Եթե քո օգնության կարիքն ունենամ, կասեմ:

— Լռում եմ, սըր,— պատասխանեց օգնականը հեզությամբ:

Այդ պահին Հարրիսոնն արդեն սկսել էր մազլցել: Ես դիտում էի խոհանոցի դռնից ու տեսնում, որ նա ամբողջ մարմնով դողում է, ինչպես ջերմից: Նա բարձրանում էր մատնաչափ առ մատնաչափ, շատ դանդաղ և զգույշ: Ջինջ երկնքի դեմ ուրվագծված նրա մարմինը նման էր ոստայնի թելերի վրա սահող մի հսկա սարդի:

Հարրիսոնի վերելքը կատարվում էր թեթև թեթության վրա: Առագաստը շատ բարձր էր և կայմն ի վեր երկարող պարանը անցնում էր զանազան ճախարակների միջով, որոնք ծառայում էին որպես հենարան նրա ոտքերի և ձեռքերի համար: Բայց վատն այն էր, որ քամին բավականին ուժեղ ու համաչափ չէր, որպեսզի միշտ լցված պահեր առագաստը: Երբ Հարրիսոնը հասավ ճանապարհի կեսին, «Ուրվականը» հանկարծ թեքվեց քամու ուղղությամբ և սահեց երկու ալիքի արանքը: Հարրիսոնը դադարեց բարձրանալ և ամուր փաթաթվեց պարանին: Ութսուն ոտնաչափ ներքևից էս տեսնում էի, թե նրա մկաններն ինչպես էին պրկված կյանքի այդ օրհասական պայքարում: Նույն բույնն առագաստը դատարկվեց, և կայմը ճկվեց դեպի նավի կենտրոնը: Չնայած այդ ամենը շատ արագ կատարվեց, էս նկատեցի, որ պարանը նավաստու ծանրությունից թուլացավ, կայմը հանկարծակի ճոճվեց դեպի նախկին դիրքը, մեծ առագաստը թնդանոթի պես որոտալով ուռեց, և երեք շարք առագաստամերակներ մեծ առագաստին խփվեցին այնպիսի աղմուկով, որ կարծես հրացանի կրակոցներ լինեին: Հարրիսոնը, պարանին կառչած, գլխապտույտ պատճառող մի թռիչք կատարեց օդում: Բայց այդ թռիչքը իսկույն կանգ առավ: Պարանը հանկարծ ձգվեց և կատարեց ճանճը թափ տվող մտրակի դերը: Հարրիսոնը չկարողացավ իրեն պահել: Նրա մեկ ձեռքը անջատվեց պարանից, մյուսը հուսահատորեն շարունակեց կառչել, բայց միայն մի վայրկյան: Նա ցած կզուրվեր, եթե պատահականորեն ոտքերով չսեղմեր պարանը, որից

կախվեց գլխիվայր: Ապա, մի հանկարծակի ճիգով նա կարողացավ նորից ձեռքով բռնել պարանը, բայց երկար ժամանակ տևեց, մինչև որ վերականգնեց իր նախկին դիրքը: Դրանից հետո նա անշարժ սպասեց արգահատելի տեսքով:

— Գրագ կգամ, որ նա ախորժակ չունի ընթրելու,— լսեցի Գայլ Լարսենի ձայնը, որ գալիս էր խոհանոցի անկյունից:— Զգո՛ւյշ, Յոհանսեն, մի կողմ քաշվիր, վրադ է ընկնում...

Եվ իրոք, Հարրիսոնը շատ վատ վիճակի մեջ էր, ծովախտով բռնվածի նման: Նա երկար ժամանակ կառչած մնաց իր անկայուն կախարանից, չհամարձակվելով որևէ շարժում անել: Սակայն Յոհանսենը կատաղորեն ստիպում էր նրան գործն ավարտել:

— Ամո՛թ և նախատի՛նք,— քրթմնջաց Ջոնսոնը դանդաղ, բայց մաքուր անգլերենով: Նա կանգնած էր ինձանից մի քանի քայլ հեռու, գլխավոր թոկասարքի մոտ:— Տղան բավականին ջանասեր է: Եթե հնարավորություն տան, կսովորի: Բայց սա . . . — նա մի պահ լռեց, մինչև որ հիշեց «մարդասպանություն» բառը, որով ուզում էր իր վերջնական վճիռն արձակել:

— Սո՛ւս կաց,— շնչաց նրան Լուիսը,— մայրիկիդ սիրույն, լեզուդ քեզ պահիր:

Բայց Ջոնսոնը, առանց մեղմանալու, շարունակեց քրթմնջալ .

— Լսեք,— ասաց Գայլ Լարսենին որսորդներից մեկը՝ Ստենդիշը,— նա իմ մակույկի թիավարն է և ես չեմ ուզում նրան կորցնել:

— Գիտեմ, Ստենդիշ,— եղավ պատասխանը:— Բայց նա քո թիավարն է, երբ մակույկիդ մեջ է: Իսկ երբ նավի վրա է, ապա իմ նավաստին է, և ես նրա հետ կարող եմ վարվել այնպես, ինչպես կուզեմ:

— Բայց դա պատճառ չէ, որ...— վերսկսեց Ստենդիշը կրքոտությամբ:

— Բավական է, շատ մի հուզվիր,— խորհուրդ տվեց Գայլ Լարսենը:— Ես իմ խոսքն ասացի, և վե՛րջ: Այդ մարդն իմն է, և ես կարող եմ եփել և ուտել, եթե ցանկանամ:

Որսորդի աչքերը կատաղությամբ փայլեցին, բայց նա լռեց և շուտ գալով, ուղղվեց դեպի որսորդների խուցը: Սանդուղքի վրա նա կանգ առավ և սկսեց դիտել Հարրիսոնին: Այժմ բոլոր նավաստիները տախտակամածի վրա էին և բոլորի հայացքները բարձրացել էին վերև, ուր մարդկային մի կյանք գոտեմարտում էր մահվան հետ: Ինձ ուղղակի զարհուրանք էր պատճառում այն մարդկանց անգթությունը, որոնց արդյունաբերական վարչակարգը տվել էր իշխանություն ուրիշ մարդկանց կյանքի վրա: Ես, որ միշտ հեռու էի ապրել կյանքի հորձանուտից, երբեք չէի պատկերացրել, որ մարդու, աշխատանքը այս ձևով է կազմակերպված: Մարդկային կյանքն ինձ միշտ թվացել էր գերագույն սրբություն, իսկ այստեղ այն համարվում էր ոչնչություն, մի զրո՝ առևտրի թվաբանության մեջ: Պետք է ասեմ, սակայն, որ նավաստիները կարեկցում էին իրենց ընկերոջը, ինչպես, օրինակ, Ջոնսոնը: Բայց պետք էր նավապետն ու որսորդները, անգթորեն անտարբեր էին: Ինչ վերաբերում է Ստենդիշի բողոքին, ապա դա պարզապես բխում էր այն հանգամանքից, որ նա չէր ուզում կորցնել իր թիավարին: Եթե Հարրիսոնը մի այլ որսորդի թիավարը լիներ, Ստենդիշն էլ մյուսների նման պիտի զվարճանար:

Բայց վերադառնանք Հարրիսոնին: Յոհանսենը մի ամբողջ տասը ռոպե նրան նախատեց ու անարգեց, մինչև որ խեղճ տղան նորից սկսեց շարժվել: Ի վերջո նա հասավ ցոկաձողի գագաթը, և կայմաթևի վրա հեծնելով, հնարավորություն ունեցավ ավելի դյուրությամբ իրեն պահելու: Նա ազատեց խճճված թուրը: Այժմ նա կարող էր վերադառնալ, պարանով սահելով դեպի կայմը: Բայց նրա ջղերն արդեն պրկվել էին, և նա վախենում էր իր վտանգավոր դիրքը փոխարինել ավելի վտանգավոր վայրէջքի հետ:

Հարրիսոնը հայացքով չափեց իր կտրելիք օդային ճանապարհը և ապա նայեց ներքև՝ տախտակամածին: Նրա աչքերը սարսափից լայնացան և մարմինը սկսեց ուժգին դողդողալ: Ես չեի տեսել ոչ մի մարդկային դեմք, որի վրա վախը այդքան ուժեղ դրոշմված լիներ: Յոհանսենը իզուր էր նրան հրամայում իջնել: Ամեն վայրկյան նա կարող էր վայր ընկնել ցոկաձողից, բայց նա սարսափից անդամալուծվել էր: Գայլ Լարսենը, որ ճեմում էր Սմոքի հետ զրուցելով, այլևս ուշադրություն չէր դարձնում Հարրիսոնին: Նա միայն մի անգամ խիստ ձայնով գոռաց ղեկորդին.

— Ա՛յ մարդ, դու շեղվեցիր ճիշտ ուղղությունից: Ավելի ուշադիր եղիր, եթե չես ուզում, որ գլխիդ փորձանք բերեմ:

— Իսկույն, սը՛ր,— պատասխանեց ղեկորդը և անիվը մի քիչ ետ պտտեցրեց:

Ղեկորդի հանցանքն այն էր, որ նավի ուղղությունը դիտմամբ մի քիչ շեղել էր, որպեսզի թեթև քամին առաջակայմի առագաստը ուռեցնելով անշարժացներ: Նա ուզեցել էր այդ ձևով օգնել դժբախտ Հարրիսոնին, գիտենալով հանդերձ, որ նման թերացումը կարող է Գայլ Լարսենի զայրույթն իր վրա հրավիրել:

Ժամանակն անցնում էր, իսկ լարված դրությունը սոսկալի էր ինձ համար: Թոմաս Մագրիջը այդ դեպքը ծիծաղելի էր համարում և շարունակ գլուխը դուրս էր ցցում խոհանոցի դռնից, որպեսզի լկտի կատակներ բաց թողնի: Այդ ահագոցիկ ռոպեներին իմ աստելությունը նրա նկատմամբ հետզհետե ավելի ու ավելի սաստկանալով, կիկլոպյան չափերի հասավ: Եվ առաջին անգամ իմ կյանքում սպանելու ցանկություն ունեցա, «արյան ծարավ» զգացի, ինչպես սովոր են ասել պատկերավոր դարձվածքների սիրահար գրողները: Մարդկային կյանքը, ընդհանուր առմամբ, ինձ համար կարող էր դեռ սրբազան լինել, բայց Թոմաս Մագրիջի դեպքում այն դարձել էր չափազանց սրբապիղծ: Ես ուղղակի սարսափեցի, երբ գիտակցեցի, որ «արյան ծարավ» եմ զգում, և մտքումս իսկույն ծագեց մի հարց, արդյո՞ք ես էլ եմ վարակվում իմ շրջապատի վայրագությունից, ես, որ նույնիսկ ամենաբացահայտ ոճիրների առնչությամբ ժխտել եմ մահապատժի իրավունքն ու արդարացիությունը:

Կես ժամ անցավ այսպես, որից հետո հանկարծ նկատեցի, որ Ջոնսոնը ու Լուիսը վիճում են իրար հետ: Վեճը վերջացավ նրանով, որ Ջոնսոնը իր թևը քաշելով, ազատեց Լուիսի ձեռքից, որ ջանում էր իրեն պահել, և հեռացավ: Նա կտրեց անցավ տախտակամածը և, նետվելով դեպի կայմապարանը, սկսեց վեր մագլցել: Բայց Գայլ Լարսենի սուր աչքը իսկույն նկատեց նրան:

— Լսիր, է՛յ, այդ ի՞նչ գործի ես,— գոչեց նա:

Ջոնսոնի վերելքը մի պահ դադարեց: Նա նայեց ուղիղ նավապետի աչքերի մեջ և դանդաղ պատասխանեց.

— Ուզում եմ այդ տղային իջեցնել:

— Ցա՛ծ իջիր այդ պարանից, և իսկույն, լսո՛ւմ ես, ցա՛ծ իջիր:

Ջոնսոնը վարանեց. բայց նավապետներին հնազանդվելու երկարամյա սովորությունն ի վերջո հաղթեց: Նա դժողոպտամբ վար ցատկեց և հեռացավ:

Ժամը հինգն անց կեսին ես նավասենյակ գնացի սեղանը փռելու, բայց հազիվ էի գիտակցում, թե ինչ եմ անում, որովհետև իմ մտքից ու աչքերից չէր հեռանում այդ գունատ նավաստին, որը ճոճվող ցոկակայմից կառչած՝ դողդողում էր ինչպես ծիծաղելի մի բզեզ: Ժամը վեցին, ընթրիքի ժամանակ, երբ ճաշը բերելու համար խոհանոց էի գնում, տեսա Հարրիսոնին նույն դիրքում: Սեղանի վրա խոսակցությունը դառնում էր ուրիշ նյութերի շուրջ: Ըստ երևույթին, ոչ ոք չէր հետաքրքրվում այն մարդով, որի կյանքը մահվան սպառնալիքի տակ էր պահվում պարզապես զվարճության համար: Բայց մի անգամ ևս խոհանոց գնալիս ուրախությամբ նկատեցի, որ Հարրիսոնը երերալով կայմապարանից իջնում է նավամբարի անցքը ծածկող կափարիչի վրա: Վերջապես, քաջությունը հավաքելով, նա խիզախել էր իջնել:

Այս պատահարի պատմությունը վերջացնելուց առաջ ես կուզեի համառոտակի անդրադառնալ այն զրույցին, որ հետո Գալլ Լարսենի հետ ունեցա նավասենյակում, ամանները հավաքելու ժամանակ:

— Այսօր հիվանդի տեսք ունեք,— սկսեց նա:— Ի՞նչ է պատահել:

Երևում է նա գիտեր, թե ինչու վատ էի զգում Հարրիսոնի պես, և պարզապես ուզում էր ինձ խոսեցնել: Ես պատասխանեցի.

— Այդ տղայի նկատմամբ ցուցաբերված վայրագ վերաբերմունքի պատճառով ես վատ եմ զգում:

Նա մի կարճ քրքիջ արձակեց.

— Եվ դա նման է, ենթադրում եմ, ծովախտի սրտախառնության: Ոմանք ենթակա են դրան, ուրիշները՝ ոչ:

— Այդպես չէ,— առարկեցի ես:

— Ճիշտ այդպես է,— շարունակեց նա:— Ցամաքը նույնքան լի է վայրագությամբ, որքան ծովը՝ շարժումով: Ոմանք առաջինից են սրտախառնուք զգում, ոմանք երկրորդից: Դա է միակ պատճառը:

— Դուք, որ մարդկային կյանքը այդպես ծաղրում եք, մի թե նրան ոչ մի արժեք չեք տալիս:

— Արժե՞ք, ի՞նչ արժեք:— Նա նայեց ինձ և թեպետ աչքերն անշարժ էին, ինձ թվաց, թե նրանցում ինչ-որ լսվիրշ ժպիտ կա:— Ի՞նչ տեսակ արժեք: Ինչպե՞ս եք չափում կյանքը: Ո՞վ է այն գնահատում:

— Ես:

— Իսկ դա ի՞նչ արժեք ունի ձեզ համար, ուզում եմ ասել ուրիշի կյանքը: Ասացեք տեսնեմ, ի՞նչ արժե այն:

Կյանքի արժե՞քը: Ինչպե՞ս կարելի է կյանքի համար ինչ-որ շոշափելի արժեք որոշել: Ես, որ մտքերս միշտ արտահայտել եմ հեշտությամբ, Գայլ Լարսենի ներկայությամբ կորցնում եմ պերճախոսությունս: Այդ բանը մասամբ վերագրում եմ Գայլ Լարսենի ուժեղ անհատականության, մեծ մասամբ էլ նրա բոլորովին յուրօրինակ հայացքներին: Ուրիշ մատերիալիստների հետ վիճելիս, գոնե սկզբում, ընգհանուր տեսակետներ եմ ունեցել, մինչդեռ սրա հետ ոչ մի ընդհանուր բան չեմ ունենում: Գուցե սրա մտածելակերպի տարրական պարզությունն է ինձ շփոթեցնում: Նա այնքան ուղիղ է դիմում դեպի նյութի միջուկը, իսկույն հարցը մերկացնում բոլոր ավելորդ մանրամասներից և այն դնում այնքան անառարկելի ձևով, որ ես կորցնում եմ ոտքիս տակի հողը, կարծես ընկնում եմ խոր ջրի մեջ, որտեղից դժվար է դուրս գալ: Կյանքի արժեք. . . Ինչպե՞ս կարող էի այս հարցին շտապ պատասխանել: Մարդկային կյանքի սրբությունը ես ընդունել էի որպես աքսիոմա: Որ կյանքն, ըստ էության, սրբություն է, դա ակներև մի ճշմարտություն է, որին երբեք չէի տարակուսել: Այնպես որ, երբ Լարսենը կասկածի տակ դրեց այդ ճշմարտությունը, ես շփոթվեցի:

— Մենք ձեզ հետ այս մասին էինք խոսում երեկ,— ասաց նա:— Ես պնդում էի, որ կյանքը նման է փրփուրի, մի ինչ-որ թթվածնի, որը լափում է ամեն ինչ, որպեսզի ինքն ապրի, իսկ ապրելը՝ դա հաջողակ խոզություն է: Պահանջի և մատուցման տեսակետից կյանքը ամենաեթան բանն է աշխարհում: Աշխարհում հսկայական քանակությամբ ջուր, հող և օդ կա, բայց ծնվող կյանքերի թիվը ուղղակի անսահման է: Բնությունը շռայլ է: Վերցրեք, օրինակ, ձկներն ու նրանց միլիոնավոր ձկերը: Կամ վերցրեք ձեզ ու ինձ: Յուրաքանչյուրիս գոտկատեղում միլիոնավոր կյանքերի կարելիություն կա: Եթե ժամանակ և հնարավորություն ունենանք լույս աշխարհ բերելու մեր մեջ գտնվող յուրաքանչյուր չճնշված կյանքը, ապա մենք կդառնանք ժողովուրդների հայրեր և մայրցամաքներ կզբաղեցնենք: Կյանք: Է՛հ, նա ոչ մի արժեք չունի: Էժան բաների մեջ նա ամենաեթանն է: Նա ամեն դուռ ծեծում է մուրացկանի պես: Բնությունը շռայլորեն արտահեղում է կյանքը: Որտեղ միայն մեկ կյանքի համար տեղ կա, բնությունը ցանում է հազար կյանքեր, որոնք շարունակ ուտում են իրար, մինչև որ ի վերջո մնում է ամենաուժեղ և ամենախոզային կյանքը:

— Դուք կարդացել եք Դարվինը,— նկատեցի ես:— Բայց դուք նրան սխալ եք մեկնաբանում, երբ հանգում եք այն եզրակացության, թե գոյության պայքարը հաստատում է կյանքի սանձարձակ փչացման վերաբերյալ ձեր տեսակետը:

Նա ուսերը թոթվեց:

— Դուք նկատի ունեք միայն մարդկային կյանքը, քանի որ կենդանիներին, ձկներին ու թռչուններին փչացնում եք այնքան շատ, որքան և ես կամ ուրիշը: Այնինչ, մարդկային կյանքը ոչնչով չի տարբերվում այլ կյանքերից, թեև ձեզ թվում է, թե տարբերվում է, և կարծում եք, թե կարող եք պատճառը բացատրել: Ինչո՞ւ պետք է ժլատությամբ պահպանեմ այս կյանքը, որն այնքան էթանագին է և գրեթե անարժեք: Նավաստիները համեմատաբար շատ ավելի են, քան ծովերի վրա գտնվող նավերը, որ կարողանա քոլորին աշխատանք տալ: Նույնպես բանվորները շատ ավելի են, քան նրանց աշխատանքի մեջ ներգրավվելու համար պետք եղած

գործարաններն ու մեքենաները: Դուք, որ ապրում եք ցամաքի վրա, լավ գիտեք, որ աղքատ մարդկանց բնակեցնում են քաղաքների կեղտոտ ծայրամասերում և նրանց մատնում սովի ու համաճարակի: Բայց, այնուամենայնիվ, դեռ մնում են մի փշուր հացի և մսի (որը դարձյալ փչացրած կյանք է) պակասից մեռնող այնքան շատ աղքատներ, որ չգիտես՝ ի՞նչ անես նրանց հետ: Երբեք տեսնո՞ւ եք, թե ինչպես լոնդոնյան նավակայքերի բարձողները կռվում են վայրի գազանների նման պարզապես աշխատանք ստանալու հնարավորության համար:

Նա ուղղվեց դեպի սանդուղքը, բայց գլուխը շուտ տվեց՝ մի վերջին խոսք ավելացնելու համար.

— Կյանքի արժեքը այնքան է, որքան ինքը՝ կյանքը տալիս է իրեն: Իսկ նա, իհարկե, իրեն գերազնահատում է, քանի որ անխուսափելիորեն կանխատրամադրված է հոգուտ իրեն: Վերցրեք թեկուզ այն նավաստուն, որը կառչել էր կայմից: Նա այնպես էր կառչել, որ կարծես մի թանկագին էակ լիներ, ադամանդից կամ սուտակից ավելի բարձրարժեք մի գանձ: Իսկ ձեզ համար մի՞թե նա այդքան արժեք ունի: Ո՛չ: Ի՞նչ համար: Բոլորովին ոչ: Ի՞նչ համար: Այո՛: Բայց ես չեմ ընդունում նրա ինքնագնահատումը: Նա ողբալիորեն գերազնահատում է իրեն: Դեռ շատ կյանքեր կան, որ սպասում են ծնվելու: Եթե նա ընկներ և ուղեղը տախտակամածի վրա շաղ գար ինչպես մեղրով խորիսխը, աշխարհը դրանից չէր տուժի, որովհետև չափազանց շատ կյանքեր են արտադրվում: Նա միայն իր համար արժեք ունի, իսկ այդ արժեքն անիրական է, դրա ապացույցն այն է, որ մարդը մեռած վիճակում չի կարող գիտակցել, որ կորցրել է իր կյանքը: Այդ նավաստին իրեն գնահատել է սուտակներից ու ադամանդներից ավելի թանկ: Եթե նա ընկներ, ապա սուտակներն ու ադամանդները թափված կլինեին տախտակամածի վրա և մի դույլ ջրով կքշվեին ծով, իսկ ինքը նույնիսկ չէր գիտակցի նրանց կորուստը: Հասկանո՞ւմ եք: Ի՞նչ կարող եք պատասխանել սրան:

— Որ դուք գոնե հետևողական եք,— կարողացա միայն ասել և շարունակեցի հավաքել ամանները:

Գլուխ յոթերորդ

Երեք օրվա փոփոխական քամիներից հետո վերջապես հասանք պասսատներին: Հակառակ ծնկիս ցավին, գիշերը լավ հանգստանալուց հետո, առավոտյան տախտակամած բարձրացա և տեսա, որ «Ուրվականը» փրփրոտ ալիքների վրա սլանում է բոլոր առագաստները պարզած, բացի առաջամասի եռանկյուն առագաստից: Որքա՛ն հիանալի են հզոր պասսատները: Մենք նավարկեցինք ամբողջ օրը, գիշերը, հաջորդ օրը, օրեր շարունակ, իսկ ուժեղ ու համաչափ քամին միշտ փչում էր հետևից: Նավը գնում էր ինքն իրեն և կարիք չկար առագաստների թոկերը ձգելու, քաշելու կամ առագաստների դիրքը փոխելու: Նավաստիների համար ոչ մի աշխատանք չկար, բացի դեկանիվը վարելուց: Մայրամուտից հետո նրանք թոկերը թուլացնում էին, իսկ առավոտյան, երբ, ցողի խոնավությունն անցնելով, թոկերի ձգվածությունը մեղմանում էր, նորից էին ձգում: Ահա և բոլորը:

Մեր ընթացքի արագությունը տասը, տասնմեկ, տասներկու հանգույց է: Նպաստավոր հողմը հյուսիս-արևելյան կողմից միշտ փչում է համաչափ և մեզ առաջ մղում օրական երկու հարյուր հիսուն մղոն: Ինչ տխրեցնում և միաժամանակ ուրախացնում է այդ արագությունը, որով մենք հեռանում ենք Սան-Ֆրանցիսկոյից և մոտենում հասարակածին: Յուրաքանչյուր

օր եղանակը զգալիորեն ավելի է տաքանում: Երեկոյան հերթափոխի ժամանակ նավաստիները հանված գալիս են տախտակամած և դուլլերով իրար վրա ջուր լցնում: Թռչող ձկներն արդեն սկսում են հայտնվել, և գիշերվա հերթապահները տախտակամածի վրա հաճախ սողալով բռնում են նավի վրա ընկածներին: Առավոտյան նրանք Թոմաս Մագրիջին լիովին կաշառում են, և ահա խոհանոցը լցվում է տապակվող ձկան ախորժեղի հոտով: Երբեմն էլ Ջոնսոնը նավացուկի մոտ բռնում է դելֆիններ, և այդպիսի առիթներով բոլորին հյուրասիրում են այդ շողշողուն գեղեցկուհիների մսով:

Ջոնսոնը իր ամբողջ ազատ ժամանակն անց է կացնում նավացուկի մոտ կամ բարձրանալ կայմահարթակի վրա և դիտում, թե ինչպես «Ուրվականը» հողմից մղվելով ճեղքում է ալիքները: Նրա աչքերը լցվում են խանդավառությամբ ու հիացմունքով, երբ հուզմունքով ու հափշտակությամբ դիտում են ուռչող առագաստները, ջրի փրփալից հետքը և նավի ծփանքն ու սլացքը հեղուկ լեռների վրայով, որոնք վեհաշուք երթով ուղեկցում են մեզ:

Ցերեկներն ու գիշերները «հիանալի ու վայրի ցնծության տոն են», և թեպետ իմ տաղտկալի աշխատանքի պատճառով ես ազատ ժամանակ քիչ եմ ունենում, այնուամենայնիվ, երբեմն մի քանի վայրկյանով փախչում եմ խոհանոցից և դիտում փառավոր տեսարանի անվերջ գեղեցկությունը, որի գոյության մասին անցյալում նույնիսկ պատկերացում չունեի: Վերևում՝ երկնքի անբիծ կապույտը, նավացուկի մոտ՝ լաջվարթ սատինի նման փայլուն ծովը, իսկ հորիզոնի շուրջը՝ սպիտակ, բրդանման ամպեր, անշարժ ու անփոփոխ, ասես արծաթյա զարդեր երկնային անարատ փիրուզի վրա...

Ես չեմ կարող մոռանալ այն գիշերը, երբ, փոխանակ քնելու, նավի առաջամասում հարթակի վրա պառկած դիտում էի կլկլացող պսպղուն փրփուրները, որոնք ցայտում էին ցռուկի երկու կողմերում: Նրանց կլկլոցը հնչում էր, ինչպես խաղաղ ձորում մամռապատ քարերի վրայից թափվող առվակի կարկաչը: Փրփուրների այդ մրմունջը ինձ այնքան հմայեց, որ բոլորովին վերանալով, ես դադարեցի սպասավոր «Հեմփը» կամ Վան-Վեյդենը լինելուց, որն իր կյանքի երեսունհինգ, տարին վատնել է գրքերի վրա: Բայց իմ հետևից մի ձայն ինձ ուշքի բերեց: Դա Գայլ Լարսենի հզոր ու գերազանցորեն ինքնավստահ ձայնն էր, որ այդ պահին հնչում էր մեղմ, ներդաշնակվելով արտասանվող խոսքերի իմաստին.

Օ՛, որքա՛ն շքեղ է գիշերը արևադարձային գոտում,
Երբ նավի հետքը երկարում է ջրի վրա,
Ինչպես արծաթյա ժապավեն:
Տաք ու պայծառ է երկինքը,
Իսկ նավի հաստատուն ողնուցը աղմկելով սահում
Մոլորակներով զարդարված ծովի երեսին,
Ուր խրտնած կետի մեջքը հանկարծ բռնկվում է կայծերով.
Առավոտյան նավի մետաղյա տախտակները
Փայլվում են արևի տակ,
Եվ թռկերի վրա պսպղում են ցողի կաթիլներ,
Իսկ մենք, սիրելի աղջիկ, նավարկում ենք դեպի հարավ,
Նավարկում հին ճանապարհով, որը միշտ նոր է մեզ համար:

— Ինչպե՞ս է, հավանո՞ւմ եք, Հեմփ,— հարցրեց նա՝ բանաստեղծությանը և հանգամանքներին պատշաճող մի կարճ լռությունից հետո:

Ես նայեցի նրան: Նրա դեմքը շողում էր լույսով, ինչպես ինքը ծովը, և աչքերը ճառագայթում էին աստղերի պես:

— Ինձ առնվազն զարմացնում է այն, որ դուք ընդունակ եք խանդավառվելու,— պատասխանեցի ես սառնությամբ:

— Բայց չե՞ որ սա խոսում է ապրելու և կյանքի մասին,— գոչեց նա:

— Որը էժանագին է և անարժեք...— ասացի ես, վերադարձնելով նրան իր իսկ սեփական խոսքերը:

Նա խնդաց, և ես առաջին անգամ նրա ձայնի մեջ լսեցի անկեղծ զվարթության հնչյունը:

— Է՛հ, ես չեմ կարողանում ձեզ հասկացնել, ձեր գլխի մեջ մտցնել, թե ինչ բան է կյանքը: Նա անարժեք է, բայց արժեք ունի միայն իր համար: Ես ձեզ կարող եմ ասել, որ հենց այս վայրկյանիս կյանքն ինձ թվում է չափազանց թանկագին: Այն ուղղակի անգին է: Սա, անշուշտ, մի ահավոր գերագնահատություն է, որ անում եմ անկախ իմ կամքից: Փաստորեն իմ մեջ գտնվող կյանքն է, որ իրեն գնահատում է այդքան բարձր:

Նա կարծես բառեր էր փնտրում իր մտքերն արտահայտելու: Մի պահ լռելուց հետո, շարունակեց.

— Գիտե՞ք, այս բոլորիս ես համակված եմ զարմանալիորեն բարձր տրամադրությամբ: Ինձ թվում է, թե բոլոր ժամանակները արձագանքում են իմ միջով, և բոլոր ուժերը կուտակվել են իմ մեջ: Ինձ թվում է, թե ճանաչում եմ ճշմարտությունը և կարող եմ զանազանել բարին չարից, ճիշտը սխալից, թե հայացքս պայծառ է ու թափանցող: Ես այս բոլորին նույնիսկ կկարողանայի հավատալ աստծուն: Բայց...— այստեղ նրա ձայնը փոխվեց և դեմքի փայլն անհետացավ,— որտեղի՞ց է այս բարձր տրամադրությունը, ապրելու այս ուրախությունը, կյանքի այս հրճվանքը, այս, եթե կարելի է ասել, ներշնչումը: Այս ամենը առաջանում է այն ժամանակ, երբ մարդուս մարսողությունը լավ վիճակի մեջ է, ստամոքսը՝ կանոնավոր, ախորժակը՝ բաց, և ամեն ինչ կարգին է: Ապրելու խաբկանքը, արյան մեջ հոսող շամպայնը, թթխմորի փրփրումը՝ սրանք են, որ ումանց մղում են ծառայելու վեհ գաղափարների, ուրիշներին՝ տեսնելու աստծուն կամ, եթե չեն տեսնում, նրան ստեղծելու: Ահա և բոլորը՝ կյանքի արբեցությունը, թթխմորի պղպջումը և կենդանի լինելու հիվանդագին գիտակցությամբ վարակված կյանքի խլրտումը: Բայց ափսո՛ս, վաղը ես դրա համար պիտի հատուցեմ, ինչպես հատուցում է հարբեցողը: Ես պիտի գիտակցեմ, որ պետք է մեռնեմ, ամենայն հավանականությամբ ծովի վրա, որ պետք է դադարեմ ինձ համար սողալուց, որպեսզի սողամ ծովի փտության համար, որպեսզի դիակ դառնալով ուտվեմ, և մկաններիս ամբողջ ուժն ու շարժունակությունը փոխանցվեն ձկների լողակներին, թեփուկներին ու աղիքներին: Ափսո՛ս և նորից ափսո՛ս: Շամպայնը փչացավ, նրա պղպջակներն ու կայծկլտուքը հանգան և այն դարձավ մի անհամ խմիչք:

Նա հարթակից վագրի ծանրությամբ ու ճկունությամբ ցատկեց տախտակամածի վրա և հեռացավ անակնկալ կերպով, այնպես, ինչպես մոտեցել էր: «Ուրվականը» շարունակում էր

իր ճանապարհը, նավացուկի մոտ փրփուրների կլկլոցն այժմ կարծես հնչում էր խոխոռցի նման: Ես ունկնդրեցի այդ խոխոռցին, մինչև որ Գայլ Լարսենի հոգեզմայլությունից դեպի հուսահատություն կատարած արագ վայրէջքի տպավորությունը կամացկամաց ջնջվեց իմ մտքում: Ապա ինձ հասավ տախտակամածի վրա նստած մի նավաստու հնչեղ տենորը՝ «Պասսատի երգը» երգելիս.

Նավաստիների սիրած հողմն եմ ես՝
Համաչափ, ուժեղ ու հավատարիմ:
Թռչում եմ ամպի միջով շանթի պես
Ծովի վերևում ես հարավային,
Անվերջ հսկում եմ ես նավերի չուն,
Հավատարիմ եմ, ինչպես շուն զգաստ:
Ցերեկը ուժգին փչում եմ, փչում,
Լուսընկա գիշեր փքում առագաստ:

Գլուխ ութերորդ

Գայլ Լարսենը իր տարօրինակ տրամադրությունների և արտառոցությունների պատճառով երբեմն ինձ թվում է խելագար կամ առնվազն կիսախելագար: Իսկ ուրիշ առիթներով ես նրան համարում եմ մեծ մարդ, չորսուորված մի հանճար: Մակայն ի վերջո համոզվեցի, որ նա նախամարդու կատարյալ տիպարն է, բայց ծնվելով հազար տարի կամ հազար սերունդ ավելի ուշ, այս դարի բարձր քաղաքակրթության պայմաններում հանդիսանում է ժամանակագրական մի վրիպակ: Նա, անկասկած, ծայրահեղորեն անհատապաշտ է: Բացի դրանից, չափազանց միայնակ է: Նրա և նավակազմի մյուս մարդկանց միջև ընդհանուր ոչինչ չկա: Ֆիզիկական արտակարգ ուժն ու մտային մեծ կարողությունը նրան բաժանում են ուրիշներից: Մյուսները, նույնիսկ որսորդները, նրա համար սոսկ երեխաներ են, և նա նրանց հետ վարվում է ինչպես երեխաների: Միայն զիջողաբար է իջնում նրանց մակարդակին և հետները խաղում, ինչպես մարդ խաղում է շնիկների հետ: Եվ կամ կենդանահերձի դաժան ձեռքով շոշափում է նրանց մտքերը, զննում հոգիները, իմանալու համար, թե ինչպիսի հոգևոր նյութից են պատրաստված:

Ես շատ անգամ նկատել եմ, որ սեղանի շուրջը նա նախատում է այս կամ այն որսորդին և սառը, սևեռուն, բայց միաժամանակ ինչ-որ կարեկցող հայացքով նայում դիմացինին, սպասում նրա պատասխանին, վերաբերմունքին կամ անգոր կատաղությանը այնպիսի հետաքրքրությամբ, որ ինձ պես կողմնակի դիտող ու կռահող մարդը կարող է միայն ծիծաղել: Ինչ վերաբերում է սեփական կատաղության պոթյուկումներին, ապա ես համոզված եմ, որ դրանք իրական չեն, երբեմն դրսևորվում են սոսկ փորձի նպատակով, բայց ընդհանրապես բխում են շրջապատի մարդկանց հանդեպ նրա որդեգրած վարվելակերպից, որը կարծես դարձել է սովորություն: Բացի իր օգնականի մահվան միջադեպից, ես Գայլ Լարսենին իսկապես գայրացած չեմ տեսել, ոչ էլ ուզում եմ նրան տեսնել կատաղության այն վիճակում, երբ նրա բովանդակ ուժը սանձազերծվում ու սկսում է գործել:

Քանի որ խոսք եղավ արտառոցությունների մասին, ես պիտի պատմեմ, թե նավասենյակում ինչ պատահեց Թոմաս Մագրիջին, և միաժամանակ իմ ասելիքն ավարտեմ այն դեպքի մասին, որն արդեն մեկ-երկու անգամ ակնարկել եմ:

Մի օր, ճաշից հետո, ես նոր էի կարգի բերել նավասենյակը, երբ Գայլ Լարսենը և Թոմաս Մագրիջը սանդուղքով ցած իջան: Չնայած խոհարարի շնաբույնը բացվում է նավասենյակի վրա, նա երբեք չի համարձակվում նավասենյակում դեգերել, թեև օրական մեկ կամ երկու անգամ սահելով գնում-գալիս է երկշոտ ուրվականի պես:

— Ուրեմն դու գիտես «Նապոլեոն» խաղալ,— ասում էր Գայլ Լարսենը գոհ ձայնով:— Ես պետք է գուշակեի, որ դու, որպես անգլիացի, կիմանաս խաղալ: Ես ինքս այն սովորել եմ անգլիական նավերի վրա:

Թոմաս Մագրիջը իրեն կորցրել էր: Ողորմելի ապուշը անչափ ուրախ էր, որ նավապետը զրուցում էր իր հետ: Նրա ընդունած տեսքը և բարձր դասի մարդկանց վարվելաձևը պատճենահանելու համար թափած տանջալի ջանքերը նողկանք պիտի պատճառեին, եթե ծիծաղելի չլինեին: Նա բոլորովին անտեսեց իմ ներկայությունը, թեև ես այնպես ենթադրեցի, որ պարզապես ի վիճակի չէր ինձ տեսնելու: Նրա պոտոր ու ջրոտ աչքերը ծփում էին ամառային ծուլ ալիքների նման, բայց թե նրանցում երանության ինչպիսի տեսիլքներ էին պարփակված, այդ կռահելն իմ երևակայության ուժերից վեր էր:

— Խաղաթղթերը տուր, Հե՛մփ,— հրամայեց ինձ Գայլ Լարսենը, երբ նստեցին սեղանի մոտ:— Բեր նաև սիգարներս և վիսկին, որ անկողնիս տակի արկղումն են:

Երբ պահանջված իրերով վերադարձա, խոհարարը տարտամ կերպով ակնարկում էր այն մասին, որ իր ծննդյան հետ կապված ինչ-որ գաղտնիք կա, թե ինքը մի ջենթլմենի մոլորված կամ ճամփից շեղված զավակն է, թե իրեն հեռացրել են Անգլիայից և փող են վճարում, որպեսզի չվերադառնա: «Առատաձեռն վճարում են, սըր,— բացատրում էր նա,— շա՛տ առատաձեռն, միայն նրա համար, որ միշտ հեռու մնամ Անգլիայից»:

Ես բերեցի խմիչքի սովորական ըմպանակներ, բայց Գայլ Լարսենը հոնքերը կիտեց, գլուխը թափահարեց և ձեռքի նշանով հասկացրեց, որ բաժակներ բերեմ: Նա բաժակների մինչև երկու երրորդը վիսկի (Թոմաս Մագրիջի որակումով՝ «ջենթլմենների խմիչք») լցրեց: Նրանք բաժակները խփեցին ու խմեցին փառավոր «Նապոլեոն» խաղի կենացը, ապա սիգարները վառեցին և խաղաթղթերը խառնելուց հետո սկսեցին խաղալ:

Նրանք փողով էին խաղում և հետզհետե ավելացրին գումարները: Վիսկին խմում էին առանց ջուր խառնելու: Երբ շիշը դատարկվեց, ես նորը բերեցի: Չգիտեմ՝ Գայլ Լարսենը խարդախում էր, թե ոչ, մի բան, որ նա միանգամայն ընդունակ էր անելու, բայց շարունակ շահում էր: Խոհարարը մի քանի անգամ ուղևորվեց դեպի իր խցիկը փող բերելու: Յուրաքանչյուր ուղևորությունը կատարելիս նա ավելի մեծ հոխորտանքներ էր դուրս տալիս, բայց, այնուհանդերձ, մի քանի դոլլարից ավելի չէր բերում: Նա սկսեց հարբել և մտերմական դառնալ, այլևս չէր կարողանում ուղիղ նստել և հագիվ էր զանազանում խաղաթղթերի թվանշանները: Պատրաստվելով նորից ուղղվել դեպի խցիկը, նա իր յուղոտ ցուցամատով ճանկեց Գայլ Լարսենի զգեստի կոճակածակը և բթացած արտահայտությամբ հայտարարեց.

— Փող ունե՛մ, ես ձեզ ասում եմ, որ փող ունե՛մ: Ես ջենթլմենի զավակ եմ...

Գայլ Լարսենը խմիչքից չէր ազդվել, չնայած հավասար խմում էր և ամեն անգամ իր բաժակը լցնում մյուսի չափ, նույնիսկ՝ ավելի: Նրա դեմքին ոչ մի փոփոխություն չէի նկատում: Երևում է նրան նույնիսկ չէին զվարճացնում խոհարարի խեղկատակությունները:

Վերջ ի վերջո, բարձրագույն հայտարարելով, որ ինքը գիտե ջենթլմենի նման տարվել, խոհարարը դրեց իր վերջին դրամը և տարվեց: Այնուհետև նա գլուխը հակեց ձեռքերի վրա ու լաց եղավ: Գայլ Լարսենը հետաքրքրությամբ նայեց նրան, կարծես ցանկանալով հերձել ու հոգին ուսումնասիրել, բայց, ըստ երևույթին, միտքը փոխեց, եզրակացնելով, որ այնտեղ ոչինչ չկա ուսումնասիրելու:

— Հե՛մփ, բարեհաճեցեք միստր Մագրիջի թևը մտնել և օգնել, որ տախտակամած բարձրանա,— ասաց Գայլ Լարսենը ընդդժված քաղաքավարությամբ:— Նա իրեն լավ չի զգում:

— Եվ Ջոնսոնին ասեք,— ավելացրեց նա ցածր, միայն ինձ լսելի ձայնով,— որ նրան ուշքի բերի մի քանի դույլ աղի ջրով:

Տախտակամածի վրա ես միստր Մագրիջին հանձնեցի երկու նավաստիների, որոնք ժպտացին, իմանալով, թե բանն ինչու՞մն է: Միստր Մագրիջը քնաթաթախ վիճակում մոթմոթում էր, թե ջենթլմենի որդի է: Երբ սանդուղքով իջնում էի սեղանը հավաքելու, լսեցի նրա ճիչը, որ արձակում էր առաջին դույլ ջուրն ընդունելիս:

Գայլ Լարսենը հաշվում էր շահած փողերը:

— Ճիշտ հարյուր ութսունհինգ դոլլար,— ասաց նա բարձրաձայն:— Այդպես էլ կարծում էի: Ստահակը եկել էր նավ առանց մի սենթ ունենալու:

— Ձեր շահած գումարը իմն է, սըր,— ասացի ես քաջաբար:

Նա նայեց ինձ զավեշտական ժպիտով:

— Հեմփ, մի ժամանակ ես էլ քերականություն անցել եմ և կարծում եմ, որ դուք բայերի ժամանակները իրար հետ շփոթում եք: Դուք պետք է ասեք «իմն էր» և ոչ թե «իմն է»:

— Հարցր վերաբերում է ոչ թե քերականությանը, այլ էթիկային,— պատասխանեցի ես:

Նա մի պահ մտածեց պատասխանելուց առաջ.

— Գիտե՞ք, Հեմփ,— սկսեց նա մեղմ լրջությամբ, որի մեջ կար անըմբռնելի մի թախիժ,— սա առաջին անգամն է, որ ես որևէ մարդու բերանից լսում եմ էթիկա, բառը: Դուք և ես միակ մարդիկն ենք այս նավի վրա, որ գիտենք դրա նշանակությունը:

Մի նոր լռությունից հետո նա շարունակեց,

— Իմ կյանքում ես մի ժամանակ երագում էի լինել այն մարդկանց շրջապատում, որոնք խոսում են այդպիսի լեզվով, երագում էի, որ մի օր վեր կբարձրանամ իմ շրջապատի մակարդակից և կշփվեմ ու կգրուցեմ այն մարդկանց հետ, որոնք խոսում են այնպիսի նյութերի մասին, ինչպիսին է էթիկան: Եվ սա առաջին անգամն է, որ ես լսում եմ այդ բառի

արտասանվելը: Այս ամենը ի միջի այլոց: Իսկ դուք, ըստ էության, սխալվում եք: Հարցը վերաբերում է ո՛չ քերականությանը, ո՛չ էլ եթիկային, այլ փաստին:

— Հասկանալի է,— ասացի ես,— փաստն այն է, որ փողը ձեր ձեռքում է:

Նրա դեմքը պայծառացավ: Ըստ երևույթին, նրան դուր եկավ իմ խելամտությունը:

— Բայց դուք,— շարունակեցի,— խուսափում եք բուն հարցից, որը կապված է իրավունքի հետ:

— Ահ,— բացականչեց նա բերանի արհամարհական ծամածռությամբ,— ես տեսնում եմ, որ տակավին հավատում եք այնպիսի բաների, ինչպիսիք են իրավունքը և անիրավությունը:

— Իսկ դուք չե՞ք հավատում: Բնա՞վ:

— Մազաչափ անգամ: Ով ուժեղ է՝ իրավունք ունի, ով տկար է՝ անիրավ է, ուրիշ ոչինչ: Կամ ավելի ճիշտ կլինեք ասել լավ բան է ուժեղ լինելը, իսկ վատ՝ տկար լինելը: Այլ խոսքով, հաճելի է ուժեղ լինելը, որովհետև օգտավետ է, անհաճ է տկար լինելը, որովհետև վնասաբեր է: Հենց հիմա, օրինակ, այս փողն ունենալը հաճելի բան է, լավ է այն ունենալը: Քանի որ ես ի վիճակի եմ սրան տիրանալու, ապա անիրավ կլինեմ դեպի ինձ ու իմ մեջ եղող կյանքը, եթե այն զիջեմ ձեզ և այդպիսով ինձ զրկեմ սեփականության հաճույքից:

— Փողը պահելով՝ դուք ինձ անիրավում եք,— առարկեցի ես:

— Բնավ երբեք: Ոչ ոք չի կարող ուրիշին անիրավել: Մարդ կարող է միայն իրեն անիրավել: Ես փորձով տեսել եմ, որ միշտ սխալվել եմ, երբ ուրիշների շահերն եմ նկատի ունեցել: Ի՞նչ եք կարծում: Երբ թթխմորի երկու տարբեր մասնիկները ձգտեն իրար լափել, մի՞թե դրանով միմյանց կանիրավեն: Բնությունը նրանց ստեղծել է այնպես, որ իրար ուտեն և ջանան իրենք չուտվել: Այդ գծից շեղվելով, նրանք պարզապես կմեղանան:

— Ուրեմն դուք ալտրուիզմի չե՞ք հավատում,— հարցրեցի ես:

Այս բառը, ըստ երևույթին, նրան ծանոթ թվաց, բայց, այնուամենայնիվ, նա մի պահ մտածեց:

— Սպասեք տեսնեմ, դա պետք է մոտավորապես նշանակի՝ իրար օժանդակել, այնպես չէ՞:

— Որոշ տեսակետով ինչ-որ առնչություն ունի այդ հասկացողության հետ,— պատասխանեցի ես, առանց զարմանալու, որ նման բացեր կան նրա բառապաշարում, որը, նրա գիտելիքների պես, ձեռք էր բերված լոկ ընթերցասիրության և ինքնազարգացման շնորհիվ: Ոչ ոք չէր դեկավարել նրա պարապմունքները: Նա շատ էր մտածել, բայց քիչ էր զրուցել կամ բնավ չէր զրուցել:— Ալտրուիստական արարքն այն է, որ կատարվում է ուրիշների լավության համար: Այդպիսի արարքը անշահախնդիր է, ի հակադրություն այն արարքին, որը մարդ կատարում է իր անձի համար և որը եսասիրական է:

Նա գլխով արեց.

— Այո՛, այո՛, հիմա հիշեցի. այդ բառին ես հանդիպել եմ Սպենսերի մոտ:

— Սպենսերի՞,— գոչեցի ես,— դուք կարդացե՞լ եք:

— Ոչ շատ,— խոստովանեց նա:— Նրա «Գլխավոր հիմունքները» լավ հասկացել եմ, բայց «Կենսաբանությունը» կարդալիս իմ առագաստի ամբողջ քամին դատարկվեց, իսկ երբ ընթերցում էի «Հոգեբանությունը», ինձ թվում էր, թե գլխիվայր ընկել եմ հարավային մրրկոտ ծովի մեջ: Անկեղծ ասած, ես չէի հասկանում, թե, վերջ ի վերջո, նա ինչ էր ուզում ասել: Իմ չհասկանալը նախ վերագրեցի մտային անկարողությանս, բայց հետո հասա այն եզրակացության, որ բավականաչափ պատրաստված չեմ: Ես պետք եղած հիմքը չունեի: Միայն Սպենսերն ու ես գիտեինք, թե որքան աշխատեցրի ուղեղս: Բայց «Էթիկայի ծանոթություններից» որոշ բաներ քաղեցի: Այնտեղ էր, որ հանդիպեցի ավտրուիզմ բառին և հիմա հիշում եմ, թե ինչ իմաստով էր այն գործածված:

Ես զարմանում էի, թե այս մարդը ի՞նչ կարող էր քաղած լինել Սպենսերի աշխատությունից: Որքան հիշում եմ, Սպենսերը մարդկային իդեալական վարքագծի հիմքը համարում է ավտրուիզմը՝ այլասիրությունը: Գայլ Լարսենը, ակնհայտորեն, մեծ փիլիսոփայի ուսմունքից ջոկել էր այն, ինչ համապատասխան էր իր պահանջներին ու ցանկությանը, իսկ մնացածը դեն էր գցել:

— Ուրիշ ի՞նչ կարդացիք այնտեղ,— հարցրի ես:

Նա հոնքերը կիտեց: Դա նշան էր մտավոր ճիգի՝ բանաձևելու համար այնպիսի մտքեր, որ նա անցյալում երբեք չէր արտահայտել խոսքերով: Ես ինձ հպարտ էի զգում: Այժմ ես էի զննում նրա հոգին այնպես, ինչպես նա սովոր է զննել ուրիշների հոգիները: Ես պեղում էի մի կուսական երկրամաս: Տարօրինակ, սարսափելիորեն տարօրինակ մի տեսարան էր պարզվում իմ աչքերի առաջ:

— Կարճ ասած,— սկսեց նա,— Սպենսերը հարցը դնում է մոտավորապես այսպես: Նախ՝ մարդ պետք է գործի իր շահերի համաձայն. այդպես գործելը բարոյական է և լավ: Այնուհետև, նա պետք է գործի հոգուտ իր երեխաների: Եվ, վերջապես, պետք է գործի մարդկության օգտի համար:

— Իսկ ամենաբարձր, ամենավսեմ և ամենաճիշտ վարքագիծն այն է,— ընդհատեցի ես,— որ մարդ գործում է միաժամանակ իր, երեխաների և մարդկության համար:

— Ես կողմնակից չեմ դրան,— պատասխանեց նա:— Դրա ոչ անհրաժեշտությունն եմ տեսնում, ոչ էլ ողջամտությունը: Ես կբացառեի մարդկությունն ու երեխաները: Նրանց համար ես ոչինչ չէի գոհի: Այդ բոլորը ցեխոտ զգայնություն է, գոնե նրանց համար, ովքեր չեն հավատում հավիտենական կյանքին, և դուք պետք է ինքներդ այդ հասկանաք: Եթե ես անմահ լինեի, ապա ավտրուիզմը կհանդիսանար մի շահավետ առաջարկ: Բայց քանի որ իմ առջև կանգնած է մահը և իմ մեջ գտնվում է միայն կարճ ժամանակի համար գալարվող ու ճչացող թթխմորը, ապա անբարոյականություն կլինեն որևէ զոհողություն անելը: Որևէ զոհողություն, որը ինձնից պակասեցնելու է թեկուզ մեկ գալարման կամ մեկ ճիչի հնարավորություն, ինքնըստինքյան, ապուշ և չար արարք է: Եթե ես ուզում եմ կյանքից քաղել առավելագույն օգուտը, ապա ուրիշի համար չպետք է կորցնեմ ոչ մի ավելորդ գալարում կամ ճիչ: Ինձ սպասող հավիտենական անշարժությունը ոչինչ չի շահի կամ կորցնի նրա համար, որ ես անձնագոհություն կամ եսասիրություն եմ արել հողի վրա սողացող թթխմոր եղած ժամանակ:

— Նշանակում է՝ դուք անհատապաշտ ու մատերիալիստ եք և, բնականաբար՝ հեղոնիստ:

— Մեծ-մեծ բառեր,— ժպտաց նա:— Իսկ ի՞նչ է հեղոնիստը:

Երբ ես բացատրեցի, նա գլխով հավանության նշան արեց:

— Բացի դրանից,— շարունակեցի ես,— չի կարելի ձեզ վստահել նույնիսկ ամենափոքր հարցերում, որոնցում ձեր եսասիրությունը որևէ շահագրգռություն ունի:

— Դուք արդեն սկսում եք հասկանալ,— ասաց նա ուրախությամբ:

— Եվ ձեր մեջ բոլորովին բացակայում է այն, ինչը մարդիկ անվանում են բարոյականություն:

— Ճիշտ է:

— Դուք այնպիսի մարդ եք, որից միշտ պետք է վախենալ...

— Միանգամայն ճիշտ եք ասում:

— Եվ վախենալ այնպես, ինչպես մարդ, վախենում է օձից, վագրից կամ շնաձկից:

— Ա՛յ, հիմա ինձ ճանաչում եք,— ասաց նա,— և ճանաչում եք այնպես, ինչպես ճանաչում են բոլորը: Ուրիշները ինձ «Գայլ» են անվանում:

— Դուք մի տեսակ հրեշ եք,— ավելացրի ես հանդգնորեն,— մի Կալիբան, որը խորհրդածում էր Սետեբոսի մասին և որը ազատ ժամերին վարվում էր ձեզ պես, ըստ իր քմահաճույթի ու երևակայության:

Այդ համեմատությունից նրա ճակատը կնճռոտվեց: Նա չէր հասկանում: Իսկույն կռահեցի, որ այդ պոեմը չէր կարդացել:

— Ես նոր եմ սկսել Բրաունինգ կարդալ,— խոստովանեց նա,— և նրան հասկանալը չափազանց դժվար է: Դեռ շատ առաջ չեմ գնացել, բայց արդեն բավականին խճճվել եմ:

Չերկարացնելու համար ասեմ, որ նրա խցից դիրքը բերեցի և բարձրաձայն կարդացի «Կալիբան» պոեմը: Նա հիացավ: Երկում բացահայտված մտածողության եղանակը և երևույթներն ընկալելու ձևը բոլորովին պարզ էին և Գայլ Լարսենի համար միանգամայն հասկանալի: Նա մերթ ընդ մերթ ընդհատում էր իր մեկնաբանությամբ ու դիտողություններով: Երբ վերջացրի, նա ինձ ընթերցել տվեց երկրորդ և ապա երրորդ անգամ: Մենք սկսեցինք վիճել փիլիսոփայության, գիտության, էվոլյուցիայի և կրոնի մասին: Նա թույլ էր տալիս անճշտություններ, որոնք հատուկ են ինքնուս մարդկանց և խոսում էր նախնական մտքերին հատուկ համոզվածությամբ ու պարզությամբ: Նրա մտածողության զորությունը հենց իր պարզության մեջ էր, իսկ նրա մատերիալիզմը շատ ավելի համոզիչ էր, քան Չարլի Ֆարասեթի նուրբ ու բարդ մատերիալիզմը: Դրանով չեմ ուզում ասել, թե Լարսենը կարող էր համոզել ինձ նման անհողորդող և, ինչպես Ֆարասեթն ասում է՝ «ի ծնե» իդեալիստին: Բայց նա այնպիսի ուժգնությամբ գրոհեց իմ համոզմունքների վերջին ամրոցի վրա, որ ակամա նրա հանդեպ հարգանք զգացի, առանց, սակայն, նրա կարծիքները բաժանելու:

Ժամանակն անցնում էր: Ընթրիքի ժամը մոտեցավ, բայց սեղանը դեռ պատրաստված չէր: Ես սկսեցի անհանգստանալ: Իսկ երբ Թոմաս Մագրիջը սանդուղքի վերնից չարացած ու զայրացած նայեց ինձ, ես պատրաստվեցի անցնել իմ պարտականությանը: Բայց Գայլ Լարսենը զոչեց:

— Խոհարար, այսօր դու ինքդ պետք է դեսուդեն ընկնես: Ես Հեմփի հետ զբաղված եմ, այնպես որ դու պետք է մի կերպ սպասարկես առանց նրան:

Եվ դարձյալ պատահեց մի աննախընթաց բան: Այդ երեկո ես սեղան նստեցի նավապետի և որսորդների հետ, իսկ Թոմաս Մագրիջը մեզ սպասարկեց, հետո էլ ամանները լվաց: Ես գուշակեցի, որ Գայլ Լարսենի այդ քմահաճույքը՝ կալիբանական մի տրամադրություն, հետագայում ինձ անախորժություն է բերելու: Բայց մինչ այդ մենք երկար զրուցեցինք, ի մեծ տհաճություն որսորդների, որոնք ոչ մի բառ չէին հասկանում:

Գլուխ իններորդ

Ես երեք օր հանգստացա և այդ երանելի օրերն անցկացրի Գայլ Լարսենի հետ: Ուտում էի նավասենյակում և ուրիշ ոչինչ չէի անում, բացի կյանքի, գրականության և տիեզերքի մասին զրուցելուց, մինչդեռ Թոմաս Մագրիջը զայրանում ու կատաղում էր և կատարում թե՛ իմ և թե՛ իր աշխատանքը:

— Զգուշացի՛ր փոթորկից, ա՛յ, քեզ բան եմ ասում,— ինձ զգուշացրեց Լուիսը, երբ նրա հետ տախտակամածի վրա կես ժամ ազատ մնացի: Այդ միջոցին Գայլ Լարսենը հարթում էր որսորդների միջև ծագած ինչ-որ վեճ:

— Չես իմանում, թե ինչ կարող է պատահել,— պատասխանեց Լուիսը, երբ խնդրեցի, որ ավելի որոշ բացատրություն տա:— Այդ մարդը այնքան փոփոխական է, որքան քամու կամ ծովի հոսանքները: Երբեք չես կարող դուշակել նրա հետագա վերաբերմունքը: Հազիվ կարծում ես, որ նրան ճանաչում ես և հետը հաշտ ու համերաշխ ես, և ահա նա հանկարծ շուտ կգա, կնետվի վրադ և կպատռի ու քուրջ կդարձնի գեղեցիկ եղանակի համար քո պարզած առագաստը:

Հետևաբար, շատ չգարմացա, երբ ինձ վրա պայթեց այն փոթորիկը, որի մասին Լուիսը նախազգուշացրել էր: Ես ու Գայլ Լարսենը տաքացած վիճում էինք, իհարկե՛, կյանքի մասին, երբ ես, չափազանց հանդգնացած, սկսեցի քննադատել նրա վարմունքը և հենց նրան՝ Գայլ Լարսենին: Ես փաստորեն հերձում էի նրան և նրա հոգին զննում այնքան ուշադիր ու մանրակրկիտ կերպով, ինչքան ինքը սովորաբար անում էր ուրիշների վերաբերմամբ: Գուցե իմ թերությունն է, որ առհասարակ սուր եմ խոսում: Իսկ այս դեպքում, զսպվածությունը մեկ կողմ թողնելով, վիրավորեցի և խարազանեցի Լարսենին, մինչև որ նա մոնչաց: Արևից թխացած նրա դեմքը ցատումից մթնեց և աչքերը փայլատակեցին: Այդ աչքերի մեջ այլևս անմեղություն և ողջամտություն չկար, նրանցում բոցավառվում էր միայն խելագարի ահավոր կատաղությունը: Ես իմ առջև տեսա գայլը, այն էլ՝ մոլեգնած գայլը:

Նա մի խուլ մոնչյուն արձակեց և ցատկելով վրաս, բռնեց թևիցս: Հավաքելով ողջ քաջությունս, ուղիղ նայեցի նրա աչքերի մեջ, չնայած ներքնապես դողում էի: Բայց այդ մարդու վիթխարի

ուծը խորտակեց արիությունս: Նա մեկ ձեռքով բռնել էր իմ թևը և երբ այն սեղմեց, ես թուլացա ու բարձրաձայն ճչացի: Ինձ թվաց, թե ոտքերս կտրվում են գետնից: Պարզապես չէի կարողանում ուղիղ կանգնել և դիմանալ տանջանքին: Մկաններս ինձ չէին հնազանդվում: Ցավը չափազանց ուժեղ էր: Թևս ճմլվում էր, ասես մինչև ոսկրածուծը:

Լարսենը հանկարծ ուշքի եկավ և աչքերը նորից փայլեցին գիտակցությամբ: Նա բաց թողեց թևս, արձակելով մի կարճ ծիծաղ, որը նման էր մոնչոցի: Բոլորովին թուլացած ես ընկա հատակին: Նա նստեց, վառեց մի սիգար և սկսեց դիտել ինձ, ինչպես կատուն դիտում է մկանը: Ցավից գալարվելիս, ես նրա աչքերում տեսնում էի այն արտահայտությունը, որը հաճախ նկատել էի, զարմանք ու երկբայություն՝ իրեն մշտապես հետաքրքրող այն հարցի մասին, թե ինչի՞ համար է այս ամենը:

Ի վերջո, մի կերպ կանգնեցի ոտքերիս վրա և սանդուղքով վերև բարձրացա: «Գեղեցիկ եղանակը» վերջ էր գտել և ինձ ուրիշ բան չէր մնում՝ բացի խոհանոց վերադառնալուց: Ձախ թևս ընդարմացած էր, կարծես անդամալուծված: Երկար օրեր անցան, մինչև որ կարողացա թևս շարժել և շաբաթներ՝ մինչև որ թմրությունն ու ցավը բոլորովին անցան: Այնինչ, Լարսենը փաստորեն ոչինչ չէր արել, բացի ձեռքով թևս սեղմելուց, նույնիսկ առանց ոլորելու կամ ցնցելու: Նա պարզապես մատները փակել էր թևիս շուրջը և սեղմել:

Թե տակավին ինչ կարող էր ինձ հետ պատահել, այդ մասին լրիվ գաղափար կազմեցի միայն հաջորդ օրը, երբ Գայլ Լարսենը գլուխը խոհանոցից ներս խոթելով, որպես բարեկամության վերականգնման նշան, հարցրեց, թե ինչպես է թևիս ցավը:

— Կարող էր և ավելի վատ լինել,— ժպտացի ես:

Ես կարտոֆիլ էի մաքրում: Գայլ Լարսենը թավայից վերցրեց մի խոշոր, ամուր և չմաքրված կարտոֆիլ: Նա ձեռքը փակելով սեղմեց և կարտոֆիլը մատների արանքից դուրս ցայտեց խմորի նման: Հետո մնացած միջուկը զցեց թավայի մեջ, շուտ եկավ ու հեռացավ: Միայն այդ ժամանակ ես հստակ պատկերացում ունեցա, թե ինչ կարող էր ինձ վիճակվել, եթե այդ գազանն ինձ վրա կիրառած լիներ իր ամբողջ ուժը:

Համենայն դեպս, երեք օրվա հանգիստը ինձ համար օգտավետ եղավ, որովհետև այդպիսով ծունկս հնարավորություն ունեցավ մի քիչ լավանալու: Ցավը համեմատաբար նվազեց, ուռուցքը զգալիորեն իջավ և ծնկոսկրը նստեց իր տեղը: Բայց այդ նույն երեք օրվա հանգիստն առաջացրեց այն անախորժությունը, որը նախատեսել էի: Թոմաս Մագրիջը ակներևորեն մտադրվել էր ինձնից վրեժ լուծել իմ վայելած հանգստի համար: Նա սկսեց ինձ հետ կոպիտ վարվել, շարունակ հայհոյել և իր աշխատանքը բեռնել ինձ վրա: Նա նույնիսկ փորձեց բռնուցք բարձրացնել վրաս, բայց ես ինքս էլ արդեն սկսել էի գազանանալ, և այնպես սարսափելի մոռացի, որ նա վախեցավ ու ետ կանգնեց: Ընդունում եմ, որ հրապուրիչ տեսարան չէի ներկայացնում այդ բոլորին, երբ ես Հեմֆրի Վան-Վեյդենս, ինչ-որ աղմկալի նավի խոհանոցում իմ աշխատանքի վրա կոռացած՝ դեմքս դարձրել էի ինձ ծեծելու պատրաստվող մի անպիտանի դեմքին և շրթներս երկարելով մոռում էի շան պես, իսկ աչքերս փայլում էին անհուսությամբ, վախով և անհուսությունից ու վախից բխող քաջությամբ: Ինձ համար տհաճ է իմ այդ պատկերը, որը մոտիկից հիշեցնում է թակարդն ընկած առնետին: Չեմ ուզում դա վերհիշել: Բայց, այնուամենայնիվ, ազդեցիկ էր, քանի որ սպառնացող բռնուցքը չիջավ վրաս:

Թոմաս Մագրիջն ընկրկեց, ինձ նայելով այնպիսի չարությամբ ու ատելությամբ, ինչպես նայում էի նրան ես: Մենք նման էինք նույն վանդակի մեջ փակված երկու գազանների, որոնք իրար ցույց են տալիս սպառնազին ակռաներ: Մագրիջը վախկոտ էր, նա չհամարձակվեց ինձ հարվածել, որովհետև ես չընկճվեցի իր առջև: Ուստի ինձ ահաբեկելու համար մի ուրիշ միջոց ընտրեց: Խոհանոցում կար միայն մի դանակ, որը քիչ թե շատ կարգին էր և որի երկար սայրը երկարամյա գործածությունից բարակել էր: Այդ դանակը արտակարգորեն չարագուշակ տեսք ուներ: Սկզբում ես ամեն անգամ այն օգտագործելիս սարսռում էի: Մագրիջը Յոհանսենից փոխ առավ մի հեսանաքար և լծվեց դանակը սրելու գործին: Նա այդ անում էր մեծ ցուցասիրությամբ, իսկ սրելու ընթացքում նշանակալից կերպով նայում էր ինձ: Ամբողջ ժամանակ նա զբաղված էր սրելով: Հենց որ ազատ բույե էր գտնում, իսկույն մեջտեղ էր հանում դանակն ու հեսանաքարը և սկսում էր սրել: Ի վերջո, դանակի սայրն ստացավ ածելիի սրություն: Խոհարարը նրա սրությունը փորձում էր իր եղունգի կամ բթամատի վրա: Երբեմն էլ ձեռքի մազն էր ածիլում և աչքը կկոցելով նայում սայրի երկայնությամբ, մանրակրկիտ գնում և ամեն անգամ ինչ-որ չնչին թերություն գտնում կամ, գոնե, այդպես ձևացնում: Հետո նորից սկսում էր սայրը քսել հեսանաքարին և սրում էր, հա՛սրում: Իսկ դա այնքան ծիծաղելի էր, որ իմ մեջ արթնանում էր բարձրաձայն ծիծաղելու տրամադրություն:

Բայց դրությունը, այնուամենայնիվ, բավականին լուրջ էր, որովհետև Մագրիջն իրոք կարող էր այդ դանակը գործածել: Ես զգացի, որ ինչպես իմ, այնպես էլ նրա վախկոտության մեջ կար ինչ-որ քաջություն, որը կարող էր նրան մղել դեպի այդ արարքը, որից նա հատկապես վախենում էր:

«Խոհարարը իր դանակը սրում է Հեմփիի համար», իրար փսփսում էին նավաստիները, որոնցից ոմանք նույնիսկ հրահրում էին նրան: Նա հանգիստ ընդունում էր այդ փսփսուկները, հաճույք էր զգում և ահագոյն խորհրդավորությամբ գլուխը շարժում հաստատական իմաստով: Բայց ահա, նախկին սպասյակ Ջորջ Լիչը մի անգամ համարձակվեց ինչ-որ կոպիտ կատակ անել այս նյութի շուրջը:

Լիչը մեկն էր այն նավաստիներից, որոնք թղթախաղի օրը կարգադրություն էին ստացել Մագրիջի վրա դույլով ջուր լցնելու: Ըստ երևույթին, նա այդ պարտականությունը կատարել էր այնպիսի եռանդով, որ Մագրիջը նրա դեմ ողի էր պահել: Այնպես որ, երբ Լիչը խոհարարին վիրավորեց, սա պատասխանեց հիշոցներով, ինչ-որ ականարկություններ արեց նրա «կեղտոտ» նախահայրերի հասցեին, և նրան սպառնաց այն դանակով, որ սրում էր ինձ համար: Լիչը ծիծաղելով շարունակեց կատակել և, մինչև ուշքի կգայինք, թե ինչ է պատահում, դանակի արագ հարվածով նրա արմունկից մինչև դաստակը մի խորունկ ճեղք բացվեց: Խոհարարը ետ ցատկեց և դեմքի ճիվաղային արտահայտությամբ դանակն առաջ ցցեց պաշտպանողական դիրքով: Լիչն իրեն չկորցրեց, չնայած արյունը առատ հոսում էր, ինչպես ջուրը՝ աղբյուրից:

— Ես քեզ ցույց կտամ, խոհարա՛ր,— ասաց նա,— քեզ հետ հաշիվս լավ կմաքրեմ: Իսկ դրա համար չեմ շտապի: Կգամ մի այնպիսի ժամանակ, երբ այդ դանակը ձեռքիդ չի լինի:

Այդ ասելուց հետո նա շուտ եկավ ու հեռացավ: Մագրիջի դեմքը վախից գունատվել էր թե իր արածի համար և թե այն վրեժի համար, որ դանակահար Լիչը վաղ կամ ուշ պիտի լուծեր իրենից: Բայց դրանից հետո նա իմ նկատմամբ սկսեց ավելի վայրագ վերաբերմունք ցուցաբերել, քան երբևէ: Թեև նա վախեցած էր ստանալիք հատուցումի հեռանկարից, բայց

կարծում էր, որ Լիչին խփելով, ահագորու դաս էր տվել ինձ, և դրա համար դարձավ ավելի բռնակալ ու լկտի: Բացի այդ, ի տես իր թափած արյան, նրա մեջ արթնացել էր մի կիրք, որը նման էր խելագարության: Այժմ նա ամեն բոլոր գգում էր արյուն թափելու ցանկություն: Թեև այդ ցանկության հոգեբանությունը չափազանց խրթին էր, այնուամենայնիվ, խոհարարի մտքերը ես պարզ կարդում էի, ինչպես մի բաց գրքում:

Անցան օրեր: «Ուրվականը» միշտ սլանում էր քամու ուղղությամբ: Ես Մագրիջի աչքերի մեջ նկատում էի աճող խելագարություն: Եվ պետք է խոստովանեմ, որ սկսել էի վախենալ, սաստիկ վախենալ: Ամբողջ օրեր նա դանակը սրում, անվերջ սրում էր: Երբ դանակի սրությունը քննելիս նա նայում էր ինձ, աչքերը ստանում էին գիշատիչ գազանի արտահայտություն: Ես վախենում էի թիկունքս դարձնել դեպի նա, և երբ ուզում էի խոհանոցից դուրս գալ, քայլում էի ետ-ետ դեպի դուռը, ի մեծ զվարճություն նավաստիների ու որսորդների, որոնք հատկապես գալիս հավաքվում էին, որպեսզի դիտեն այդ ներկայացումը: Ես չափազանց լարված դրության մեջ էի: Երբեմն ինձ թվում էր, թե կխելագարվեմ: Եվ արտասովոր բան չէր լինի խելագարվելը այսպիսի մի նավի վրա, որը լի է խելագար ու վայրագ մարդկանցով: Իմ կյանքը ամեն ժամ, ամեն բոլոր վտանգի տակ էր: Հոգիս տազնապի մեջ էր, բայց ամբողջ նավում չկար մեկը, որ կարեկցեր ինձ և օգնության հասներ: Երբեմն մտածում էի դիմել Գայլ Լարսենի պաշտպանությանը, բայց կյանքի վրա հեզնանքով նայող և դիվային ծաղրանքով լի նրա աչքերը մտաբերելով, զսպում էի ինձ: Լինում էին պահեր, երբ լրջորեն խորհրդածում էի ինքնասպանության մասին: Այդպիսի պահերին իմ լավատես փիլիսոփայության ամբողջ ուժը գործի էի դնում, որպեսզի ինձ ետ պահեմ գիշերվա մթության մեջ ծովը նետվելու գաղափարից:

Գայլ Լարսենը մի քանի անգամ փորձեց ինձ ներգրավել վիճաբանության մեջ, բայց ես հակիրճ պատասխաններ տվի և խուսափեցի նրանից: Ի վերջո, նա ինձ կարգադրեց միառժամանակ նորից իր հետ սեղան նստել նավասենյակում, թողնելով, որ խոհարարը կատարի իմ պարտականությունները: Այդ առթիվ ես նրան բացեիբաց բացատրեցի, թե ինչ եմ քաշում Թոմաս Մագրիջի ձեռքից այն երեք օրերի պատճառով, որոնց ընթացքում ինքը՝ Լարսենը, իմ նկատմամբ սիրալիրություն էր ցույց տվել:

Գայլ Լարսենը ժպտուն աչքերով դիտեց ինձ:

— Ուրեմն վախենում եք, հա՞,— հարցրեց նա ծաղրանքով:

— Այո՛,— պատասխանեցի ես համարձակ և անկեղծ,— վախենում եմ:

— Դուք բոլորդ այդպես եք,— գոչեց նա, համարյա զայրացած,— դուք չափազանց զգայուն եք ձեր անմահ հոգիների նկատմամբ և վախենում եք մեռնելուց: Բավական է, որ մի վախկոտի ձեռքում սրած դանակ տեսնեք, և ահա կյանքից կառչելու ձգտումն իսկույն ձեզ մոռացնել կտա ձեր հիմար համոզմունքները: Բայց չէ՞ որ, սիրելիս, ձեր հոգին անմահ է: Դուք աստված եք, իսկ աստծուն հնարավոր չէ սպանել: Խոհարարը չի կարող ձեզ վնաս պատճառել: Դուք համոզված եք, որ հարություն պիտի առնեք, ուրեմն ինչի՞ց եք վախենում: Դուք հավիտենական կյանք ունեք ձեր առջև: Անմահության տեսակետից, դուք միլիոնատեր եք, մի միլիոնատեր, որի հարստությունը չի կարող կորչել, ավելի երկար կտևի, քան աստղերը և այնքան անսահման է, որքան տարածությունն ու ժամանակը: Հնարավոր չէ սպառել ձեր դրամազուլիսը: Անմահությունը մի բան է, որ ոչ սկիզբ ունի, ոչ վախճան:

Հավիտենականությունն ամենուրեք հավիտենականություն է. այնպես որ, եթե դուք այժմ այստեղ մեռնեք, այսուհետև կշարունակեք ապրել մի այլ տեղ: Եվ ի՞նչ հիանալի բան է՝ թոթափել այս մսակույտը, ազատել բանտարկված հոգին և նրան թոփչք տալ... Խոհարարը չի կարող ձեզ վնաս պատճառել: Նա միայն կարող է ձեզ մղել դեպի այն ճանապարհը, որով դուք պիտի հավիտյան ընթանաք: Իսկ եթե դուք առայժմ չեք ուզում մղվել դեպի այդ ճանապարհը, ապա ինչո՞ւ ինքներդ չեք մղում խոհարարին: Ըստ ձեր համոզմունքների, նա ևս անմահ միլիոնատեր է: Դուք չեք կարող նրան սնանկացնել: Նրա բաժնետոմսերը երբեք չեն արժեքազրկվելու: Նրան սպանելով, դուք չեք կարող կարճել նրա կյանքի տևողությունը, քանի որ նրա կյանքն էլ անսկիզբ է և անվախճան: Այդ մարդը պետք է ինչ-որ տեղ, ինչ-որ ձևով շարունակի ապրել: Եթե այդպես է, ապա մղեցեք նրան այնտեղ: Մի դանակ խրեցեք նրա մարմնի մեջ և ազատ արձակեցեք հոգին: Այդ հողին տանջվում է մի գարշելի բանտի մեջ, և դուք նրան միայն լավություն արած կլինեք դուռը խորտակելով: Եվ ո՞վ գիտե, գուցե այդ տգեղ մարմնից մի գեղեցիկ հոգի դուրս գա ու սլանա երկինք: Մղեցե՛ք նրան այնտեղ, և ես ձեզ կնշանակեմ նրա տեղը, նա ստանում է ամիսը քառասունհինգ դոլլար:

Պարզ էր, որ Գայլ Լարսենից կարեկցանք կամ օգնություն չէի կարող հուսալ: Ես պետք է ապավինեի միայն իմ ուժերին: Վախից բխող խիզախությունն ինձ թելադրեց Թոմաս Մագրիջի դեմ պայքարել հենց նրա գենքերով: Յոհանսենից մի հեսանաքար փոխ առա: Մակույկավար Լուիսը մի անգամ ինձանից շաքար և խտացրած կաթ էր խնդրել: Այդպիսի բարձրորակ սննդամթերքը պահվում էր նավասենյակի ներքևում գտնվող մառանում: Մի պատեհ առիթից օգտվելով, ես գողացա հինգ տուփ կաթ, և այդ գիշեր, երբ Լուիսը հերթապահում էր տախտակամածի վրա, դրանք փոխանակեցի մի դաշույնի հետ, որը Թոմաս Մագրիջի խոհանոցային դանակի պես երկար ու ահագոյն էր: Դաշույնը ժանգոտ և բութ էր, բայց ես ու Լուիսը այն կարգի բերինք, ես պտտեցրի հեսանը, իսկ նա սրեց սայրը: Այդ գիշեր սովորականից ավելի հանգիստ քնեցի:

Հաջորդ առավոտ նախաճաշից հետո Մագրիջը դարձյալ սկսեց իր դանակը սրել: Ես ծունկի եկած մաքրում էի վառարանի մոխիրը, միաժամանակ զգուշությամբ հետևում նրան: Մոխիրը ծովը թափելուց հետո, երբ վերադարձա խոհանոց, նա խոսում էր Հարրիսոնի հետ, որի պարզ ու անկեղծ դեմքն այդ պահին արտահայտում էր զարմանք ու հիացմունք:

— Այո,— ասում էր Մագրիջը,— և ի՞նչ արեց դատավորը. ինձ միայն երկու տարի նստեցրեց Ռեդինգի բանտում: Բայց ես բանի տեղ չդրի: Կարևորը այն էր, որ այդ սրիկայի հետ հաշիվը մաքրեցի: Պետք է տեսնեիր նրան: Դանակս ճիշտ սրա նման էր: Ես այն խոթեցի, ոնց որ կարագի մեջ: Միայն նրա ճշոցը ի՞նչ ասես արժեր...— Խոհարարը մի հայացք նետեց իմ ուղղությամբ, ստուգելու համար, թե լսո՞ւմ եմ և շարունակեց.— «Ես միտումնավոր չարեցի, Թոմմի,— սկսեց նվնվալ նա,— թող աստված ինձ պատժի, եթե սուտ եմ ասում»: «Ես քո դասը հիմա կտամ», ասացի և նետվեցի վրան: Նրա մաշկը շերտ-շերտ կտրատեցի, իսկ այդ ամբողջ ժամանակ նա միայն ճղճղում էր: Նա մի անգամ ձեռքով բռնեց դանակը և վարձեց հեռացնել, բայց ես ետ քաշեցի և մատները կտրեցի մինչև ոսկորը: Քեզ ասում եմ՝ տեսնելու բան էր նրա ռեխը...

Նավապետի օգնականի ձայնը ընդհատեց այս արյունաշունչ պատմությունը, և Հարրիսոնը ուղղվեց դեպի նավախել: Մագրիջը նստեց խոհանոցի բարձր շեմքին և նորից սկսեց դանակը սրել: Ես բաժիր մեկ կոդմ դրի և հանգիստ նստեցի ածուխի արկղի վրա, դեմքս դարձնելով

դեպի խոհարարը: Նա մի չար հայացք գցեց ինձ վրա: Ես շարունակեցի իմ հանգիստ տեսքը պահպանել և, թեև սիրտս ուժգին խփում էր, Լուիսի դաշույնը դուրս քաշելով, սկսեցի սրել հեծանաքարի վրա: Սպասում էի, որ խոհարարը մի որևէ պոռթկում կունենա, բայց, ի մեծ զարմանս իմ, նա կարծես չնկատեց, թե ինչ եմ անում: Նա շարունակեց իր դանակը սրել: Ես էլ նույնը արեցի: Եվ այդպես երկու ժամ անընդհատ մենք դեմ-դիմաց նստած՝ սրեցինք, սրեցինք, սրեցինք, մինչև որ նավում լուր տարածվեց այդ մասին, և նավի անձնակազմի գրեթե կեսը եկավ հավաքվեց խոհանոցի դռան առջև մեզ դիտելու:

Ամեն կողմից խրախուսանք և խորհուրդներ էին շռայլվում: Նույնիսկ Ջոք շոռները սակավախոս ու հանդարտ որսորդը, որ արտաքուստ թվում էր, թե մկանն իսկ չի վիրավորի, ինձ խորհուրդ տվեց, որ փոխանակ կողոսկրին հարվածելու, դաշույնը խրեմ փորի մեջ և միաժամանակ սայրը պտտեցնեմ «փսպանական դարձվածքով»: Լիչը, իր վիրակապված թևը ցուցադրելով, խնդրում էր, որ խոհարարի մարմնի կտորներից գոնե մի քանիսն իրեն թողնեմ: Իսկ Գայլ Լարսենը մի երկու անգամ նավահարթակի եզերքից հետաքրքրությամբ հետևեց մեր գործունեությանը, որն իր մեկնաբանությամբ՝ կենարար թթխմորի գալարումն էր:

Չեմ ծածկում, որ այդ պահին իմ աչքում էլ կյանքը ցածր արժեք ստացավ: Նրանում ոչ մի գեղեցիկ կամ աստվածային բան չկար, միայն երկու վախկոտ արարածներ, որոնք դեմդիմաց նստած պողպատ էին սրում քարի վրա, և առավել կամ նվազ վախկոտ ուրիշ էակներ, որոնք դիտում էին այդ արարքը: Համոզված եմ, որ այդ հանդիսատեսների կեսն անհամբեր սպասում էր, որ մենք միմյանց արյունը թափենք: Դա կլինեի մի զվարճալի տեսարան: Ես չեմ կարծում, որ նրանցից որևէ մեկը կմիջամտեր, եթե մենք մահու և կենաց կռիվի բռնվենք իրար հետ:

Մյուս կողմից, ամբողջ եղելությունը մանկական բնույթ ուներ և իսկապես ծիծաղելի էր: Սրել, սրել, սրել: Հեմֆրի Վան-Վեյդենը ինչ-որ նավի խոհանոցում սրում է դաշույնը և սայրի սրությունը ստուգում բթամատի վրա... Բոլոր դրությունների մեջ սա ամենից աներևակայելին էր: Իմ ծանոթներից ոչ մեկը չէր կարող դրան հավատալ: Իզուր չէ, որ իմ ամբողջ կյանքում ինձ անվանել են «փափկասուն Վան-Վեյդեն», և այն հանգամանքը, որ «փափկասուն Վան-Վեյդենը» ընդունակ է այդպիսի բան անելու, ուղղակի մի հայտնություն էր հենց իր՝ Վան-Վեյդենի համար, որը չգիտեր ուրախանա՞, թե ամաչի:

Բայց այդ օրը ոչինչ չպատահեց: Երկու ժամ սրելուց հետո Թոմաս Մագրիջը մեկ կողմ դրեց դանակն ու հեծանաքարը և ձեռքը մեկնեց ինձ:

— Ինչո՞ւ ենք այդ հիմարներին զվարճացնում,— ասաց նա:— Նրանց ուշքը չի գնում մեզ համար, և նրանք ուրախությամբ կդիտեն, եթե մենք իրար կոկորդ կտրենք: Դու այնքան էլ վատը չես, Հեմֆի: Դու, ինչպես յանկիներդ ասում էք, «դյուրավատ» ես, և ես ինչ-որ չափով հավանում եմ քեզ: Դե՛հ, եկ և տո՛ւր ձեռքդ...

Թեև ես վախկոտ էի, բայց տեսա, որ նա ինձ գերազանցեց վախկոտության մեջ: Սա որոշակի հաղթանակ էր ինձ համար և ես չուզեցի այն նսեմացնել, ախոյանիս գարշելի ձեռքը թոթվելով:

— Դե լավ,— ասաց նա առանց վիրավորվելու,— չես ուզում՝ մի տա, բայց միևնույն է, դու ինձ դուր ես գալիս: Եվ անախորժ դրությունից իրեն փրկելու համար նա կատաղությամբ դարձավ գեպի հանդիսատեսները:— Կորե՛ք այստեղից, անպետք տխմարներ:

Այս հրամանը ավելի ազդեցիկ դարձավ, երբ խոհարարի ձեռքում երևաց եռացող ջրի կաթսան: Նավաստիները արտորանքով խույս տվին: Այդպիսով, Թոմաս Մագրիջն էլ տարավ մի հաղթանակ, որը մեղմացրեց ինձնից կրած պարտության ծանրությունը: Սակայն նա բավականին զգույշ եղավ և չփորձեց որսորդներին էլ վռնդել:

— Ինչպես երևում է, խոհարարը ընկճվեց,— ասաց Սմոքը Հոռներին:

— Ինչ խոսք,— պատասխանեց մյուսը:— Սրանից հետո Հեմփը կլինի խոհանոցի տերն ու տիրականը, իսկ խոհարարը լեզուն իրեն կքաշի:

Մագրիջը լսեց և մի արագ նայվածք նետեց իմ կողմը: Բայց ես ձևացրի, թե այդ խոսակցությանը չեմ հետևել: Ես վստահ չէի, որ իմ հաղթանակը լրիվ ու վերջնական է, Բայց որոշել էի, որ իմ ձեռք բերած նվաճումից ոչինչ չզիջեմ: Սակայն Սմոքի գուշակությունը շուտով իրականացավ: Խոհարարը ինձ հետ ավելի քծնող և ստրկահաճ դարձավ, քան նայնիսկ Գայլ Լարսենի հետ: Ես այլևս նրան ոչ միստր, ոչ էլ սըր էի կոչում, ոչ ճարպոտ ամաններն էի լվանում, ոչ էլ կարտոֆիլ մաքրում: Ես կատարում էի լոկ իմ պարտականությունները, այն էլ՝ ուզածս ժամանակ և ուզածս ձևով: Դաշույնը պատյանի մեջ դրած՝ միշտ կրում էի ազդրիս վրա, նավաստիավայել ձևով, իսկ Թոմաս Մագրիջի նկատմամբ որդեգրել էի տիրական, կոպիտ և արհամարհական վերաբերմունք:

Գլուխ տասներորդ

Գայլ Լարսենի հետ իմ մտերմությունը ջերմանում է, եթե կարելի է մտերմություն կոչել այն փոխհարաբերությունը, որ կա տիրոջ և ծառայի կամ ավելի շուտ թագավորի ու նրա խեղկատակի միջև: Լարսենի համար ես պարզապես մի խաղալիք եմ, և նա ինձ գնահատում է միայն այնքան, որքան երեխան իր խաղալիքը: Իմ պարտականությունն է զվարճացնել, և քանի դեռ զվարճացնում եմ, ամեն ինչ կարգին է: Բայց բավական է, որ նա ձանձրանա ինձանից կամ մոայլ տրամադրությամբ համակվի, և ես իսկույն նավասենյակից կուղարկվեմ խոհանոց, այդպիսի դեպքում ինձ նույնիսկ բախտավոր համարելով, որ ողջ-առողջ եմ պրծել:

Ես կամաց-կամաց սկսում եմ հասկանալ, թե որքան միայնակ է այդ մարդը: Նավի վրա չկա որևէ մեկը, որ չատի նրան կամ չվախենա նրանից, իսկ մյուս կողմից, չկա որևէ մեկը, որին նա չարհամարհի: Թվում է, թե նրա մեջ գտնվող ահագին ուժը համապատասխան արտահայտություն չգտնելով աշխատանքի մեջ, լափում ու սպանում է նրան: Այս հպարտ հոգին Լուցիֆերի վիճակում կլինեք, եթե աքսորված լինեք թոմիսոնյան անհոգի ուրվականների աշխարհը:

Այս միայնակությունը, որն ինքնըստինքյան ծանր վիճակ է, Լարսենի մոտ ավելի է խորացել իր ցեղի վաղնջական մեղամաղձության հետևանքով: Նրան ճանաչելով, ես սկսեցի ավելի լավ հասկանալ սկանդինավյան հինավուրց դիցաբանությունը: Այդ սպիտակամաշկ ու խարտիշահեր վայրենիները, որոնք ստեղծել էին աստվածների մի սարսափելի աշխարհ, ունեին այս մարդու հոգեկան խառնվածքը: Գայլ Լարսենի մեջ չկար լատինական ցեղերի ծիծաղասեր ներկայացուցիչների թեթևամտությունը: Նրա ծիծաղը միայն վայրագ զվարթության արտահայտություն է: Բայց նա հաղվաղեպ է ծիծաղում: Առհասարակ նա տրտում է: Եվ այդ տրտմությունը գալիս է իր ցեղի խոր արմատներից: Դա նախահայրերի

Նրա ձայնի մեջ հաղթական հնչյուն կար, իսկ աչքերը, որոնք այս առավոտ ջինջ կապույտ էին ծովի նման, կայծկլտում էին:

— Դուք պետք է որ մաթեմատիկայի մեջ ուժեղ լինեք,— ասացի ես:— Դպրոցո՞ւմ եք սովորել:

— Դժբախտաբար դպրոցի երեսը չեմ տեսել,— պատասխանեց նա:— Սովորել եմ ինքնաշխատությամբ:

— Իսկ ի՞նչ եք կարծում,— հարցրեց նա հանկարծ,— ինչո՞ւ եմ ընտրել այս բանը: Արդյո՞ք ոտքերիս հետքերը թողնելու համար ժամանակի ավագի վրա:— Նա արձակեց իր ծաղրական ահավոր ծիծաղներից մեկը:— Ամենևին ոչ: Պարզապես գյուտարարության պատենտ ստանալու, փող շահելու, ամեն տեսակ խոգությանը զվարճանալու համար և թողնելու, որ ուրիշները կատարեն աշխատանքը: Ահա այդ է իմ նպատակը: Անկախ դրանից, ինձ համար մեծ բավարարություն էր այս գծագրության խնդիրը լուծելը:

— Ստեղծագործական հաճույք,— մրմնջացի ես:

— Հավանորեն, այդպես պետք է անվանել: Դա ապրելու հաճույքի մի այլ արտահայտությունն է, շարժման հաղթանակը նյութի վրա, կենդանությանը՝ մահվան վրա, թթխմորի հպարտանքը հենց նրա համար, որ փրփրում է:

Ես ձեռքերս հուսահատությամբ բարձրացրի, որպես բողոքի նշան նրա անուղղելի մատերիալիզմի դեմ և շարունակեցի անկողինը սարքել: Իսկ նա շարունակեց թվանշաններ ու գծեր արտագրել թափանցիկ թղթի վրա: Այդ աշխատանքը պահանջում էր վերին աստիճանի ճշգրտություն ու նրբություն, և ես հիանում էի, թե ինչպես է նա կարողանում իր վիթխարի ուժը մեղմացնելով, հասցնել պահանջված քնքշությանը:

Անկողինը սարքելուց որոշ ժամանակ հետո ես հանկարծ անդրադարձա, որ հափշտակված դիտում եմ Գայլ Լարսենին: Նա իսկապես գեղեցիկ տղամարդ է, գեղեցիկ՝ առնական իմաստով: Ես դարձյալ զարմանքով նկատեցի, որ նրա դեմքից բոլորովին բացակայում են չարությունը, մոլությունն ու նենգությունը: Դա միանգամայն անմեղ մարդու դեմք էր: Միտքս ավելի պարզ դարձնելու համար ավելացնեմ, որ դա այնպիսի մի մարդու դեմք է, որը կա՛մ անընդունակ է իր խղճին հակառակ գործելու, կա՛մ բացարձակապես զուրկ է խղճից: Եվ ես հակված եմ ընդունելու երկրորդ ենթադրությունը: Նա ատավիզմի հոյակապ մի նմուշ է, այնքան հարազատորեն նախնական, որ կարծես աշխարհ եկած լինեք նախքան բարոյականության զարգացումը մարդկանց մեջ: Նա ոչ թե անբարոյական է, այլ պարզապես բարոյագուրկ:

Ինչպես քիչ առաջ ասացի, նրա դեմքը առնական իմաստով՝ գեղեցիկ է, մաքուր սափրված, յուրաքանչյուր դիմագիծը այնքան հստակ ու պարզորոշ, ինչպես դիմաքանդակի վրա: Արևից ու ծովից թխացած մաշկը ստացել է մուգ բրոնզի գույն, որն ինքնին խոսում է տարերքի դեմ մղված պայքարների մասին և միաժամանակ նրան տալիս է վայրենի ու հոյակապ տեսք: Շրթները թեև լիքն են, բայց արտահայտում են այն հաստատամտությունն ու խստությունը, որոնք հատուկ են բարակ շրթներին: Բերանը, կզակը և ծնոտը նույնպես արտահայտում են հաստատամտություն, խստություն և, միաժամանակ, մոլեգնություն ու անզսպություն: Իսկ քիթը հիշեցնում է այն կարգի մարդկանց, որոնք ծնվում են հաղթելու և իշխելու համար: Կարելի է այն կոչել հունական կամ հռոմեական քիթ, թեև առաջինի համեմատությամբ մի քիչ

խոշոր է, իսկ երկրորդի համեմատությամբ մի քիչ փոքր: Չնայած նրա դեմքը, ամբողջությամբ վերցրած, ուժի ու կատաղության մարմնացումն է, այնուամենայնիվ, նրան տանջող ժառանգական հնամենի մելամաղձությունը կարծես խորացրել է աչքերի և բերանի շուրջն եղած ծալերն ու ճակատի խորշոմները և դեմքին խոշորություն ու ավարտվածություն տվել:

Եվ այսպես, ես անդրադարձա, որ անշարժ կանգնած ուսումնասիրում եմ Լարսենին: Չեմ կարող բացատրել, թե որքան էր ինձ հետաքրքրում այդ մարդը: Ո՞վ էր նա: Ի՞նչ էր նա: Ինչպիսի՞ն էր եղել նրա կյանքը: Թվում է, թե նա օժտված է մեծ կարողությամբ և ունի բազմաթիվ կարելիություններ: Ուրեմն ինչո՞ւ է նա մի հասարակ նավապետ ծովակատվի որսորդության գնացող ինչ-որ երկկայմանավի վրա և ահավոր վայրագության համբավ է միայն վայելում որսորդների շրջանակում:

Եվ ահա, հետաքրքրությունս հանկարծ դուրս պոռթկաց խոսքերի մի ամբողջ հեղեղով:

— Դուք ինչո՞ւ աչքի ընկնող գործեր չեք կատարել: Ձեր մեջ եղած ուժի շնորհիվ կարող էիք մեծ բարձունքների հասնել: Չուրկ լինելով բարոյականության հասկացողությունից, դուք կարող էիք աշխարհը նվաճել և ձեր առաջ ծունկի բերել բոլորին: Ահա արդեն հասել եք ձեր կյանքի և ուժի բարձրակետին, որտեղից սկսվելու են վայրէջքն ու նվազումը, բայց, այնուամենայնիվ, քարշ եք տալիս խեղճ ու անշուք մի գոյություն, որսում եք ծովային անասուններ, որպեսզի գոհացնեք կանանց պճնամոլությունն ու սնափառությունը, կանանց, որոնք, ձեր խոսքերով ասած, զվարճանում են խոգության մեջ: Ձեր վարած կյանքում ոչ մի վսեմ բան չկա: Ինչո՞ւ դուք ձեր զարմանալի ուժով աչքի ընկնող ոչ մի բան չեք կատարել: Ձեզ ոչինչ, բացարձակապես ոչինչ չէր կարող խանգարել: Ուրեմն բանն ինչո՞ւմն է: Արդյո՞ք փառասիրություն չունեիք կամ արդյո՞ք որևէ գայթակղության գոհ եղաք: Վերջապես ի՞նչ է պատահել, ինչո՞ւմն է բանը:

Նա աչքերը բարձրացրել էր իմ պոռթկումի սկզբում և հանգիստ հետևում էր ինձ: Վերջապես ավարտեցի ելույթս ու կանգնած մնացի, հևասպառ ու ահաբեկ: Նա մի պահ սպասեց, կարծես մտածում էր, թե որտեղից սկսի և ապա ասաց.

— Հեմփ, դուք գիտե՞ք այն սերմանողի առակը, որ գնացել էր արտ՝ ցանելու: Եթե հիշում եք «սերմի մի քանիսն ընկան քարքարոտ ու սակավահող տեղեր և շուտով ծլեցին, որովհետև հողը խորունկ չէր: Բայց երբ արևը ծագեց, նրանք խանձվեցին և քանի որ արմատ չունեին, իսկույն չորացան: Իսկ մի քանիսն ընկան փշաթփերի շուրջը և փշերն աճելով խեղդեցին նրանց»:

— Հետո՞,— հարցրի ես:

— Հետո,— ասաց նա կատակով,— լավ արդյունք չստացվեց: Ես այդ սերմերից մեկն եմ:

Նա գլուխը կախեց և շարունակեց արտագրությունը: Ես վերջացրի աշխատանքս և երբ դուռը բացեցի դուրս գնալու, նա ասաց.

— Հե՛մփ, եթե նայեք քարտեզին, Նորվեգիայի արևմտյան ծովեզերքի մոտ կտեսնեք Ռոմսդալ-Ֆյորդ անունով մի ծովախորշ: Ծնվել եմ այդտեղից մոտ հարյուր մղոն հեռու: Ես դանիացի եմ: Իմ ծնողները երկուսն էլ դանիացի են: Թե ինչո՞ւ և ինչպե՞ս են նրանք եկել արևմտյան ծովափի այդ ցուրտ, ամալի անկյունը, այդ մասին ոչինչ չեմ իմացել և ոչինչ չգիտեմ: Մնացած

մանրամասներն ինձ հայտնի են: Ծնողներս չքավոր էին և անգրագետ: Նրանց հայրերն ու պապերն էլ չքավոր ու անգրագետ էին, բոլորն էլ ծովի մշակներ, որոնք ալիքների վրա ցանում էին իրենց որդիներին, մի սովորություն, որը սկիզբ է առել անհիշատակ ժամանակներից: Ահա և բոլորը, ուրիշ ոչինչ չկա ավելացնելու:

— Շատ բան կա,— առարկեցի ես:— Ձեր կյանքը դեռևս մութ է ինձ համար:

— Ուրիշ ինչի՞ մասին պատմեմ,— ասաց նա մոայլ մոլեգնությամբ:— Զրկանքներով լի մանկության և չքավոր կյանքի՞ մասին, այն մասին, որ սնվում էի միայն ձկնով, թե՞ այն մասին, որ հազիվ լողալ սովորած՝ սկսեցի գնալ ձկնորսության: Եղբայրների՞ մասին, որոնք մեկը մյուսի հետևից գնացին հեռավոր ծովեր ու էլ չվերադարձան: Ի՞նչ մասին, որ գրել-կարդալ սովորելու հնարավորություն չունենալով, տասը տարեկան հասակում սպասյակ դարձա ծովի ափին երթևեկող հին նավերի վրա: Անհամ ուտելիքների և կոպիտ վերաբերմունքի՞ մասին, առավոտից մինչև գիշեր ստացած քացիների և հարվածների՞ մասին, որոնք փոխարինում էին խոսքին, թե՞ վախի, ատելության ու տառապանքի մասին, որոնցով միայն սնվում էր հոգիս: Ես չեմ ուզում այդ բան երբ հիշել: Նույնիսկ հիմա, երբ հիշում եմ, ուղեղս պաշարվում է մի տեսակ խելագարությամբ: Երբ մեծացա, ես կարող էի այդ նավապետներից ոմանց սպանել, բայց այդ ժամանակ կյանքն ինձ գցել էր այլ ճանապարհների վրա: Վերջերս վերադարձա հայրենիք, բայց, դժբախտաբար, նրանք մեռել էին, բացի մեկից, որը իմ պատանեկության շրջանում դեկավագ էր, իսկ հետո դարձել էր նավապետ: Ես նրան դարձրի հաշմանդամ: Նա այսուհետև երբեք չի կարող քայլել:

— Բայց դուք, որ բնավ դպրոց չեք գնացել և կարդում եք Սպենսեր ու Դարվին, ինչպե՞ս սովորեցիք գրել, կարդալ:

— Անգլիական առևտրական նավերի վրա: Տասներկու տարեկան հասակում սպասյակ էի, տասնչորս տարեկանում՝ կրտսեր նավաստի, տասնվեց տարեկանում՝ հասարակ նավաստի, տասնյոթ տարեկանում՝ ավագ նավաստի և, միաժամանակ, առաջնակարգ կովարար: Անհուն փառասիրություն, անսահման մենություն, անօգնական, բարեկամներից զուրկ... այս պայմաններում ես գործի լծվեցի և մեն-մենակ սովորեցի նավագնացություն, մաթեմատիկա, բնագիտություն, գրականություն և այլն, և այլն: Իսկ երբ հասա կյանքի բարձրակետին, ինչպես ասում եք դուք, որտեղից սկսվում են իմ վայրէջքն ու նվազումը, դարձա ինչ-որ երկկայմանավի տերն ու պետը: Չնչին նվաճում, այնպես չէ՞: Եվ երբ արևը ծագեց, ես խանձվեցի և քանի որ արմատ չունեի, իսկույն չորացա:

— Սակայն պատմությունը մեզ ասում է ստորուկների մասին, որոնք հետագայում կրեցին ծիրանագույն պատմուճան,— նկատեցի ես:

— Պատմությունը խոսում է նաև այն հնարավորությունների մասին, որ ունեցան ծիրանի պատմուճան կրելու աստիճանին հասնող այդ ստորուկները,— պատասխանեց նա մռայլությամբ:— Ոչ ոք չի կարող անձամբ ստեղծել այդ հնարավորությունները: Բոլոր երևելի մարդիկ միայն օգտվել են հնարավորությունից, երբ այն ներկայացել է: Այդպես է արել և Կորսիկացին: Ես էլ նրա պես երագել եմ մեծ բաներ: Եվ ես էլ կօգտվեի հնարավորությունից, բայց այն երբեք չի ներկայացել: Փշերն աճեցին ու խեղդեցին ինձ: Ես կարող եմ քեզ ասել, չե՛մփ, որ այժմ դուք իմ մասին ավելի բան գիտեք, բան որևէ մեկը, բացի իմ սեփական եղբորից:

— Իսկ որտե՞ղ է ձեր եղբայրը, ի՞նչ է անում նա:

— Նա «Մակեդոնիա» շոգենավի պետն է և զբաղվում է ծովակատվի որսորդությամբ: Մենք հավանորեն նրան կհանդիպենք Ճապոնիայի ծովեզերքում: Նրան անվանում են Մահ Լարսեն:

— Մա՛հ Լարսեն,— գոչեցի ես ականա:— Նա նմա՞ն է ձեզ:

— Հազիվ թե: Անխելք մի անասուն է: Նա ունի իմ... իմ...

— Վայրագությունը,— թելադրեցի ես:

— Այո, շնորհակալ եմ, որ հուշեցիք, իմ ամբողջ վայրագությունը: Բայց նա հազիվ կարող է գրել ու կարդալ:

— Իսկ նա երբեք չի՞ փիլիսոփայում կյանքի մասին,— հարցրի ես:

— Ոչ,— պատասխանեց Գայլ Լարսենը անասելի տխրությամբ:— Եվ նա երջանիկ է հենց նրա համար, որ հանգիստ է թողել կյանքի փիլիսոփայությունը: Նա այնքան է զբաղված կյանքով, որ ժամանակ չունի կյանքի մասին խորհրդածելու: Իմ սխալը այն էր, որ սկսեցի գիրք կարդալ:

Գլուխ տասնմեկերորդ

«Ուրվականը» հասել է Խաղաղ օվկիանոսում իր գծած աղեղի ամենահարավային մասը և արդեն սկսել է թեքվել հյուսիս–արևմուտք: Ըստ իմ լսածի, մենք այժմ նավարկում ենք դեպի ինչ–որ մեկուսացած կղզյակ, որտեղից պետք է խմելու ջուր վերցնենք և հետո մեր ուղևորությունը շարունակենք դեպի Ճապոնիայի ծովեզրը՝ ծովակատվի որսորդության: Որսորդները ստուգում են իրենց հրացանները և կրակելու վարժություններ անում, իսկ նավաստիները պատրաստում են մակույկների առագաստները, թիակները պատում են կաշվով և թիակալների շուրջը փսիաթ են փաթաթում, որպեսզի անաղմուկ ու գաղտագողի մոտենան ծովակատուներին, մի խոսքով, աշխատում են, որ Լիչի պատկերավոր արտահայտությամբ ասած, ամեն ինչ կարգին ու գեղեցիկ լինի, ինչպես «խնձորի կարկանդակ»:

Լիչի թևը, ի միջի այլոց, բոլորովին բուժվել է, թեև վերքի սպին կմնա մինչև կյանքի վերջը: Թոմաս Մագրիջը նրանից վախենում է ինչպես մահից և մութը կոխելուց հետո չի համարձակվում տախտակամած դուրս գալ: Նավի առաջամասում երբեմն կռիվներ են բռնկվում: Լուիսն ինձ ասում է, թե նավաստիների բամբասանքները նավապետի ականջն են հասել, և նավաստիները մի լավ ծեծել են մատնիչներից երկուսին: Նա գլուխը տարակուսանքով օրորում է, երբ խոսում է իր մակույկի թիավար Ջոնսոնի ապագայի մասին: Ջոնսոնը համարձակորեն հայտնել է կարծիքներ և երկու–երեք անգամ ընդհարվել է Գայլ Լարսենի հետ՝ իր անվան արտասանման կապակցությամբ: Իսկ Յոհանսենին նա անցյալ գիշեր մի լավ ծեծել է, որից հետո նավապետի օգնականն սկսել է ճիշտ արտասանել նրա անունը: Բայց կասկածից դուրս է, որ Ջոնսոնը չի կարող Գայլ Լարսենին ծեծել:

Լուիսը Մահ Լարսենի մասին տվեց լրացուցիչ տեղեկություններ, որոնք համապատասխանում են նավապետի արած հակիրճ նկարագրությանը: Մենք, հավանորեն, կհանդիպենք Մահ Լարսենին Ճապոնիայի մոտերքում: Այդ կապակցությամբ Լուիսն արեց հետևյալ մարգարեական գուշակությունը. «Եվ կտեսնես, որ նրանց միջև մի մեծ կռիվ կպայթի, որովհետև նրանք գայլի ձագերի պես իրար ատում են»:

Մահ Լարսենը նավապետն է «Մակեդոնիայի», որը ծովային արդյունաբերական նավատորմի միակ շոգենավն է և ունի տասնչորս մակույկ, մինչդեռ երկկայմանավերն ունեն միայն վեց հատ: Ասվում է, թե շոգենավի վրա թնդանոթ էլ կա, թե շոգենավը տարօրինակ արշավանքներ է կատարում, գաղտնի կերպով ափիոն է ներմուծում Միացյալ Նահանգներ, զենք ներմուծում Չինաստան, նեգրեր առևանգում գերեվաճառության համար և բացեիքաց զբաղվում է ծովահենությամբ: Ես չեմ կարող Լուիսին չհավատալ, որովհետև մինչև հիմա նրա ասածների մեջ սուտ չեմ գտել, ընդ որում, նա խորապես և բազմակողմանիորեն ճանաչում է ծովակատվի որսորդությունն ու դրանով զբաղվող մարդկանց:

Այս դժոխային նավի վրա դրությունը շարունակ լարված է: Ինչպես խոհանոցում և նավաստիների ընդհանուր խցում, այնպես էլ որսորդների խցում մարդիկ կատաղորեն վիճում, կռվում և միմյանց կյանքին սպառնում են: Որսորդներն ամեն բոլոր սպասում են, որ Սմոքը և Հենդերսոնը, որոնց հին վեճը դեռ չի հարթվել, նորից կընդհարվեն և իրար կխփեն: Իսկ Գայլ Լարսենն զգուշացրել է, որ եթե այդպիսի բան պատահի, ինքը կսպանի կենդանի մնացողին: Նա բացեիքաց հայտարարում է, որ այդ որոշումն ընդունել է ոչ թե բարոյական սկզբունքներից ելնելով, այլ այն նկատառումով, որ որսորդներից յուրաքանչյուրը իրեն պետք է որսորդության ժամանակ, իսկ դրանից հետո նրանք կարող են իրար սպանել կամ ուտել, դա իր համար միևնույն է: Լարսենն ասում է, որ եթե նրանք իրենց կրքերը զսպեն մինչև որսորդության ավարտը, ապա ինքը կխոստանա սարքել մի արքայական խրախճանք, որի ընթացքում նրանք ազատ կլինեն իրար հետ հաշիվներ մաքրելու: Թող այն ժամանակ սպանողները սպանվածների դիակները ծովը գցեն ու մի պատմություն հորինելով բացատրեն, թե վերջիններս ծովում կորել են: Ես կարծում եմ, որ Գայլ Լարսենի սառնարյուն անգթությունը զարհուրանք է պատճառում նույնիսկ որսորդներին, որոնք, դաժան լինելով հանդերձ, վախենում են նրանից:

Թոմաս Մագրիջը շան պես հպատակվում է ինձ, իսկ ես, իմ հերթին, գաղտնապես սարսափում եմ նրանից, որովհետև նրա հոգում հանկարծ կարող է վախից ծնվել խիզախություն (մի զարմանալի երևույթ, որին ծանոթ եմ սեփական փորձից) և նրան մղել կյանքս խլելու: Ծունկս շատ ավելի լավ է հիմա, թեև երբեմն ցավում է երկար ժամանակով, իսկ փայտացած թևս, որ Գայլ Լարսենը սեղմելով ճմլել էր, աստիճանաբար ապաքինվում է: Ընդհանուր առմամբ առողջությունս այժմ գերազանց է և ինձ շատ լավ եմ զգում: Մկաններս գնալով զարգանում ու կարծրանում են: Սակայն ձեռքերս ցավալի տեսք ունեն: Նրանք կարծես խաշված լինեն եռացած ջրի մեջ: Եղունգներս բորոքվել են, եղունգներս փշրվել ու սևացել, իսկ ձեռքերիս ափերում կոշտուկներ գոյացել: Բացի դրանից, մաշկիս վրա առաջացել են չիբաններ: Դա, ըստ երևույթին, նավի ճաշերից է, որովհետև անցյալում երբեք այդպիսի բան չէր պատահել ինձ:

Մրանից երկու օր առաջ մեծապես զվարճացա, տեսնելով, որ Գայլ Լարսենը Աստվածաշունչ է կարդում: Իմ ուղևորության առաջին օրը ապարդյուն կերպով Աստվածաշունչ որոնելուց

հետո, ի վերջո, դրանից մի օրինակ գտել էին մեռած օգնականի սնդուկում: Ես զարմացա, թե ի՞նչը կարող էր հետաքրքրել Գայլ Լարսենին: Եվ նա ինձ համար բարձր ձայնով կարդաց մի հատված «Ժողովողից»: Այդ հատվածը կարդալով, նա կարծես ինձ հաղորդում էր իր սեփական մտքերը: Նրա ձայնը, որը խոր ու թախծալի էր հնչում փակ խցիկի մեջ, ուղղակի հմայեց ինձ: Թեև նա զարգացած չէ, բայց, այնուամենայնիվ, հիանալի գիտե, թե ինչպես պետք է արտահայտել գրավոր խոսքի իմաստը: Ես ունկնդրում եմ նրա ձայնին, որի մեջ նախնիների մելամաղձությունն է կարծես թրթռում և որը երբեք չեմ կարող մոռանալ: Նա կարդում է.

«Ինձ համար դիզեցի նաև արծաթ, ոսկի և թագավորական ու գավառական գանձեր, ունեցա երգիչներ և երգչուհիներ, և մարդկանց որդիների զվարճությունները և ամեն տեսակ շքեղություն:

Եվ մեծացա ու բարգավաճեցի ինձանից առաջ Երուսաղեմում եղած բոլոր մարդկանցից ավելի, նաև իմաստությունս կար ինձ մոտ:

Եվ ես նայեցի իմ ձեռքերի արած բոլոր գործերին և այն աշխատանքին, որ աշխատելով արել էի, և տեսա, որ ամեն ինչ ունայնություն է և հոգու տանջանք, և արեգակի տակ ոչ մի օգուտ չկա:

«Ամեն ինչ հավասարապես պատահում է բոլորին. արդարին և ամբարիշտին, բարի մարդուն, մաքուրին և անմաքուրին, զոհ անողին և զոհ չանողին, անմեղին ու մեղավորին, երդում անողին և երդումից վախեցողին:

Արեգակի տակ եղած բոլոր գործերում վատն այն է, որ բոլորին պատահում է միևնույնը: Ու նաև մարդկանց որդիների սիրտը լցված է չարությամբ, և խենթություն կա նրանց սրտում, երբ դեռ ապրում են, իսկ վերջը իջնում են մեռելների մոտ:

Քանզի ով ընկեր է մյուս ապրողներին, հույս կա նրանից, վասնզի ողջ շունը լավ է մեռած առյուծից:

Քանզի կենդանի մնացողները գիտեն, որ մեռնելու են, բայց մեռածները ոչինչ չգիտեն և այլևս վարձատրություն էլ չունեն, որովհետև նրանց հիշատակը մոռացվել է:

Նրանց սերն էլ, նրանց ատելությունն էլ, նրանց նախանձն էլ կորել են վաղուց, և նրանց համար այլևս հավիտյան բաժին չկա արեգակի տակ եղած բոլոր բաների մեջ:»

— Տեսնո՞ւմ եք, Հեմփ,— ասաց նա, գիրքը իր մատի վրա փակելով ու ինձ նայելով.—

Իմաստությունը, որը Երուսաղեմում Իսրայել ժողովրդի թագավորն էր, մտածում էր ինձ պես:

Դուք ինձ հոռետես եք անվանում, մի՞թե սա ամենասև հոռետեսությունն չէ. «Ամեն ինչ ունայնություն է և հոգու տանջանք, և արեգակի տակ ոչ մի օգուտ չկա», «Ամենը իբրև թե ամենքի համար է», «միևնույնը պատահում է բոլորին»՝ հիմարին ու խելոքին, մաքուրին և անմաքուրին, մեղավորին ու սրբին, իսկ այն, որ պատահում է, բոլորին՝ մահն է, որը, նրա ասելով, չարիք է: Այդ իմաստունը սիրում էր կյանքը և չէր ուզում մեռնել, և ասում է.

«Որովհետև ողջ շունը լավ է մեռած առյուծից»: Նա գերադասում էր ունայնությունն ու տանջանքը, քան գերեզմանի լռությունն ու անշարժությունը: Նույնպես և ես: Սողալը խոզություն է: Բայց չսողալու, հողակույտի կամ ժայռի վրա անշարժանալու պատկերացումն անգամ նողկալի է: Այն հակասում է իմ մեջ գտնվող կյանքին, որի էությունը շարժման մեջ է,

շարժման ուժի մեջ, շարժման ուժի գիտակցության մեջ: Կյանքը, ինքնին, մի անբավարարություն է, բայց մոտալուտ մահվան գաղափարը առավել ևս անբավարարություն է:

— Ուրեմն դուք ավելի վատ եք, քան Օմար Խայամը,— ասացի ես:— Երիտասարդ տարիների երկար մտորումներից հետո նա գոնե բավարարություն գտավ և իր մատերիալիզմը դարձրեց ուրախության աղբյուր:

— Ո՞վ է Օմար Խայամը,— հարցրեց Գայլ Լարսենը, և այնուհետև ո՛չ այդ օրը, ո՛չ էլ հաջորդ երկու օրերին ես որևէ այլ աշխատանք չկատարեցի:

Իր պատահական ընթերցումների ընթացքում Լարսենը չէր հանդիպել «Ռուբայաթին», այնպես որ դա մի թանկագին հայտնագործություն եղավ նրա համար: Քառյակների մեծ մասը՝ մոտ յոթանասունհինգ տոկոսը, անգիր գիտեի, իսկ մնացածներն առանց դժվարության հիշեցի: Մենք ժամերով քննարկում էինք առանձին քառյակներ, և Լարսենը նրանցում գտնում էր վշտի և ըմբոստության արտահայտություններ, մի բան, որ ես ինքս երբեք չէի կարող հայտնաբերել: Իմ արտասանության մեջ ես գուցե մտցնում էի որոշ զվարթություն, որը հատուկ է իմ խառնվածքին, բայց Լարսենը, որը իր հիանալի հիշողության շնորհիվ երկրորդ ու շատ հաճախ առաջին ընթերցումից հետո նույն տները անգիր էր անում, նրանց մեջ դնում էր հուզմունք և կրքոտ ընդվզում, որոնք գրեթե համոզում էին ունկնդրին:

Ես հետաքրքրվեցի, թե ո՞ր քառյակն է ամենից ավելի դուր գալիս նրան և չգարմացա, երբ նա ընտրեց այն, որը գրված էր ինչ-որ պատահական գրգռվածության ժամանակ և անհարիր էր պարսիկ պոետի լավատես փիլիսոփայությանն ու կյանքի վերաբերյալ ունեցած կենսուրախ հայացքներին:

Որտեղից-որտեղ ծագեց այդ անկոչ «որտեղի՞ց» հարցը,
Որին անհապաղ հաջորդեց միշտ նույն «դեպի ո՞ւր» հարցը:
Օ՛, պետք է վերուստ արգելված գինուց շատ թասեր խմեմ,
Որ էլ չհիշեմ սին ունայնության լիրբ առեղծվածը:

— Հոյակա՛պ է,— բացականչեց Գայլ Լարսենը,— հոյակապ: Մա ամեն ինչ ասում է: Լրբություն: Նա չէր կարող սրանից լավ բառ գործածել:

Ես իզուր ժխտեցի ու բողոքեցի: Նա իր փաստարկներով ինձ հեղեղեց ու ջախջախեց:

— Կյանքը իր էությանմբ չի կարող այլ կերպ լինել: Երբ կյանքն իմանում է, որ պետք է դադարի ապրելուց, ըմբոստանում է: Նա այլ կերպ չի կարող վարվել: Աստվածաշնչի իմաստունը գտավ, որ կյանքը և կյանքի գործերը ունայնություն են, տանջանք ու չարիք, բայց միաժամանակ նա գտավ, որ մեռնելը, այսինքն՝ ունայն լինելուց ու տանջվելուց դադարելը, ավելի մեծ չարիք է: Նա շարունակ ցավում է, որ բոլորին էլ նույն բախտն է սպասում: Այդպես է մտածում նաև Խայամը, և ես, և դուք, նույնիսկ դուք, որովհետև դուք ըմբոստացաք մահվան դեմ, երբ խոհարարն սկսեց դանակ սրել ձեր կյանքին վերջ տալու համար: Դուք վախեցաք մեռնելուց: Ձեր մեջ գտնվող և ձեր էությունը կազմող կյանքը, որը ձեզանից ավելի ուժեղ է, չուզեց մեռնել: Դուք խոսում էիք անմահության բնագրի մասին: Իսկ ես խոսում եմ կյանքի բնագրի մասին, կյանքի, որը ձգտում է ապրել և որը, երբ մոտենում է մահը, հաղթահարում է

այսպէս կոչված անմահության բնագոյր: Նա հաղթահարեց ձեր մեջ գտնվող անմահության բնագոյր, այդ չէք կարող ուրանալ, որովհետև մի գիծ խոհարար սկսեց ձեր դէմ դանակ սրել:

— Դուք վախենում եք խոհարարից: Վախենում եք նաև ինձանից, մի՛ ուրանաք: Եթե ես ձեր կոկորդից բռնեմ, այ այսպէս,— նա բռնեց իմ կոկորդը, և շնչառությունս կտրվեց,— և սկսեմ սեղմել ահա այսպէս, ահա այսպէ՛ս, ապա ձեր անմահության բնագոյր կույ կգա, իսկ կյանքի բնագոյր, որը ձգտում է ապրել, կհուզվի, և դուք կմաքառեք ձեզ փրկելու համար: Հը՞: Ձեր աչքերի մեջ ես տեսնում եմ մահվան սարսափը: Դուք ձեռքներդ թափահարում եք օդում, ձեր խղճուկ ուժն ի գործ եք դնում, որպէսզի կյանքի համար պայքարեք: Այժմ ձեր ձեռքը կառչում է թևիցս, բայց թևս հազիվ է այն զգում, կարծես մի թիթեռնիկ նստած լինի վրան: Ձեր կուրծքը հևում է, լեզուն դուրս կախվում, դէմքը կապտում, աչքերն աստիճանաբար նվաղում. «Ապրե՛լ, ապրե՛լ, ապրե՛լ», հառաչում եք դուք և հառաչում, որպէսզի այստեղ ապրեք և այժմ ապրեք և ոչ թե՛ հետո: Դուք արդէն տարակուսում եք ձեր անմահության մասին, չէ՞: Հա՛, հա՛: Դրա մասին այլևս վստահ չեք, ուստի չեք ուզում այն վտանգել: Դուք այժմ հավատում եք, որ այս է իսկական կյանքը: Ահա ձեր աչքերի առաջ ամեն ինչ հետզհետե ավելի է խավարում: Դա մահվան խավարն է՝ լինելուց դադարելը, զգալուց դադարելը, շարժվելուց դադարելը: Այդ խավարը շրջապատում, խտանում ու բարձրանում է ձեր շուրջը: Ձեր աչքերը անշարժանում են, ապակու տեսք ստանում: Իմ ձայնը ձեր ականջին հնչում է աղոտ ու հեռավոր: Դուք այլևս չեք տեսնում ինձ: Այնուհանդերձ, մաքառում եք իմ ձեռքի մեջ: Ոտքերով քացի եք տալիս: Ձեր մարմինը գալարվում ու կծկվում է օձի պէս: Ձեր կուրծքը հևում է ու ձգվում: Ապրե՛լ, ապրե՛լ, ապրե՛լ...

Ես այլևս ոչինչ չսեցի: Գիտակցությունս աղոտվեց այն խավարում, որը նա այնքան կենդանի կերպով նկարագրել էր: Երբ ուշքի եկա, տեսա, որ պառկել եմ հատակին, իսկ նա սիգար է ծխում և նայում ինձ մտածկոտ հայացքով: Նրա աչքերի մեջ փայլում էր ինձ հայտնի հետաքրքրությունը:

— Կարողացա՞ ձեզ համոզել,— հարցրեց նա:— Դե՛, վերցրեք, խմեք սրանից: Ես ուզում եմ ձեզ մի քանի հարց տալ:

Ես գլուխս բացասաբար օրորեցի, առանց հատակից բարձրանալու:

— Ձեր փաստարկները շատ... բոի են,— կարողացա դժվարությամբ արտաբերել իմ ցավատանջ կոկորդից:

— Մի կես ժամից բոլորովին կլավանաք,— հավաստիացրեց նա:— Խոստանում եմ սրանից հետո ֆիզիկական ուժ չգործադրել: Վեր կացեք: Կարող եք աթոռին նստել:

Եվ քանի որ ես այդ հրեշի ձեռքում մի խաղալիք էի, Օմար Խայամի ու Ժողավողի վերաբերյալ զրույցը վերսկսվեց և շարունակվեց մինչև ուշ գիշեր:

Գլուխ տասներկուերորդ

Վերջին քսանչորս ժամվա ընթացքում ես ականատես եղա գազանության մի ահավոր տոնահանդեսի, որը նավասենյակից մինչև նավի առաջամասը մոլեգնեց, ինչպես

համաճարակ: Չգիտեմ որտեղից սկսեմ պատմել: Իրականում, Գայլ Լարսենն էր այդ ամենի պատճառը: Նավաստիների փոխհարաբերությունները, որոնք լարված ու սրված էին վեճերի, կռիվների ու ատելության հետևանքով, այժմ գտնվում էին խախուտ հավասարակշռության վիճակում, և չար կրքերը, տափաստանի խոտի պես, դուրսով բոցավառվում էին:

Թոմաս Մագրիջը խարդախ, լրտես ու մատնիչ է: Նավապետի սիրալիրությանը վերստին արժանանալու համար նրան հասցնում էր նավաստիների զրույցները: Նա էր, ես վստահ եմ, որ Գայլ Լարսենին իմաց տվեց Ջոնսոնի անզգուշաբար հայտնած գանգատները: Ջոնսոնը նավի կրպակից գնել էր մոմլաթե մի զգեստ և գտնելով, որ այն շատ ցածր որակի է, համարձակորեն հայտնել էր իր կարծիքը: Նավի կրպակը մի տեսակ փոքր պահեստ է, որտեղ վաճառվում են ծովագնացության ժամանակ անհրաժեշտ ապրանքներ: Այդպիսի կրպակներ գտնվում են որսորդական բոլոր երկկայմանավերի վրա: Նավաստիների գնած ապրանքների արժեքը գանձվում է հետո, որսորդությունից նրանց բաժին ընկած գումարից, որովհետև ինչպես որսորդները, այնպես էլ թիավարներն ու նավուղիղները ռոճիկի փոխարեն ստանում են իրենց մակույկով որսած յուրաքանչյուր ծովակատվի մորթու արժեքի մի որոշ տոկոսը:

Բայց ես ոչինչ չգիտեի կրպակում Ջոնսոնի հայտնած գանգատի մասին, ուստի այն տեսարանը, որին ականատես եղա, ինձ ցնցեց իր անակնկալությամբ: Ես նոր էի ավլել նավասենյակի հատակը, և Գայլ Լարսենը փորձում էր ինձ խոսեցնել Համլետի մասին, որը շեքսպիրյան հերոսներից նրա ամենասիրելին էր, երբ հանկարծ նավասանդուղքով Ջոնսոնի ընկերակցությամբ վար իջավ Յոհանսենը: Ջոնսոնը, ըստ ծովային սովորության, գդակը հանեց և հարգալից կանգնեց խցի մեջտեղը: Նավի օրորումից տատանվելով, նա նայում էր նավապետի դեմքին:

— Դուրը ծածկի՛ր և քաշի՛ր սողնակը,— ասաց ինձ Գայլ Լարսենը:

Նրա հրամանը կատարելիս նկատեցի, որ Ջոնսոնի աչքերում փայլեց անհանգստության ինչ-որ նշույլ, բայց չհասկացա պատճառը: Ես ոչինչ չկարողացա կռահել, մինչև որ դեպքը փաստորեն կատարվեց: Այնինչ Ջոնսոնը հենց սկզբից գիտեր պատահելիքը և արհուրյամբ սպասում էր դրան: Նրա այդ վերաբերմունքի մեջ ես տեսա Գայլ Լարսենի մատերիալիզմի լիակատար հերքումը: Նավաստի Ջոնսոնը համակված էր գաղափարով, սկզբունքով, հավատով ու անկեղծությամբ: Նա արդար էր և գիտեր, որ արդար է, հենց դրա համար էլ չէր վախենում: Եթե հարկ լիներ, նա ճշմարտության համար կմեռներ, բայց հավատարիմ կմնար իր սկզբունքներին և անկեղծ կլիներ իր հոգու հետ: Նրանում պատկերված էր հոգու հաղթանակը մարմնի վրա, հոգու բարոյական անընկճելի վեհությունը, որը ոչ մի արգելք չի ճանաչում և հավիտենականությունից ու անմահությունից բխող վստահությամբ ու քաջությամբ բարձրանում է ավելի վեր, քան ժամանակը, տարածությունն ու նյութը:

Բայց վերադառնանք մեր պատմությանը: Երբ Ջոնսոնի աչքերում նշմարեցի անհանգստության նշույլ, դա վերագրեցի նրա բնածին ամաչկոտությանն ու շփոթմունքին: Օգնական Յոհանսենը մեկ կողմ էր կանգնել, նրանից մի քանի ոտնաչափ հեռու, իսկ Գայլ Լարսենը նստած էր պտտվող աթոռներից մեկի վրա, նավաստու ճիշտ դիմացը, երեք յարդ հեռու: Երբ դուրը փակելով սողնակը քաշեցի, նավասենյակում լռություն տիրեց, որը տևեց մի ամբողջ րոպե: Այն խզեց Գայլ Լարսենը:

— Յոնսոն՛ն,— սկսեց նա:

— Իմ անունը Ջոնսոն է, սը՛ր,— քաջաբար ուղղեց նավաստին:

— Դե լավ, թող Ջոնսոն լինի, գրողը տանի... Դու կարո՞ղ ես դուշակել, թե ինչո՞ւ կանչել տվի քեզ:

— Ե՛վ այո, և՛ ոչ, սը՛ր,— եղավ անշտապ պատասխանը:— Ես իմ պարտականությունը լավ եմ կատարում, օգնականը այդ գիտե, դուք էլ գիտեք, սը՛ր: Այնպես որ իմ մասին ոչ ոք չի կարող զանգասովել:

— Ա՞յդ է ամենը,— հարցրեց Գայլ Լարսենը ցածր ու մեղմ ձայնով:

— Ես գիտեմ, որ իմ դեմ ինչ-որ հակառակություն ունեք,— շարունակեց Ջոնսոնը կշռադատված և միապաղաղ դանդաղությամբ: — Դուք ինձ չեք սիրում: Դուք... դուք...

— Շարունակիր,— խրախուսեց Գայլ Լարսենը:— Մի վախեցիր իմ զգացմունքները վիրավորելուց:

— Ես չեմ վախենում,— պատասխանեց նավաստին և արևից թխացած այտերը զայրույթից թեթևակի շառագունեցին:— Եթե դանդաղ եմ խոսում, պատճառն այն է, որ հայրենիքից հեռացել եմ ոչ այնքան վաղուց, որքան դուք: Ահա, թե ինչումն է բանը, սը՛ր:

— Երևի ուզում ես ասել, որ այնքան քաջ ես, որ չես ուզում հպատակվել նավի կարգապահության կանոններին: Հասկանո՞ւմ ես, թե ինչ եմ ասում:

— Ես անգլերեն գիտեմ և հասկանում եմ ձեր ասածը, սը՛ր,— պատասխանեց Ջոնսոնը, որի այտերը ավելի շառագունեցին անգլերեն լեզվի իր իմացության մասին եղած ակնարկությունից հետո:

— Ջոնսո՛ն,— ասաց Գայլ Լարսենը՝ ներածական խոսքերը բավական համարելով և դիմելով բուն հարցին,— ես լսել եմ, որ դու գոհ չես քո գնած մոմլաթե զգեստից:

— Այո, գոհ չեմ: Զգեստը վատորակ է:

— Եվ այդ մասին շաղ ես տալիս դեսուդեն, չե՞:

— Ես ասում եմ այն, ինչ մտածում եմ, սը՛ր,— պատասխանեց նավաստին համարձակորեն, միևնույն ժամանակ չմոռանալով ծովային ծառայության մեջ ընդունված հարգալիիրությունը, որը պահանջում է յուրաքանչյուր խոսքի վերջում ավելացնել «սը՛ր»:

Այդ բուպեին իմ հայացքը պատահաբար ընկավ Յոհանսենի վրա: Նա իր խոշոր բռունցքներն անընդհատ փակում ու բացում էր և Ջոնսոնին դիտում այնպիսի չարությամբ, որ դեմքն ստացել էր դիվային արտահայտություն: Նրա աչքի ներքևում թեթև սևություն կար, որը դեռ չէր անցել այն հարվածից հետո, որ ստացել էր Ջոնսոնից հենց մի քանի օր առաջ: Այդ ժամանակ միայն կռահեցի, որ կատարվելու է մի սարսափելի բան, բայց թե ի՞նչ, չէի կարող պատկերացնել:

— Դու գիտե՞ս, թե ինչ է սպասում այն մարդկանց, որոնք համարձակվում են այդպիսի խոսքեր ասել իմ կրպակի և իմ մասին,— հարցրեց Գայլ Լարսենը:

— Գիտեմ, սը՛ր,— եղավ պատասխանը:

— Իսկ ի՞նչ,— հարցրեց Գայլ Լարսենը խիստ և հրամայական:

— Հենց այն, որ դուք և ձեր օգնականը պատրաստվում եք անել, սը՛ր:

— Սրան նայեցեք, Հեմփ,— դիմեց ինձ Գայլ Լարսենը,— նայեցեք փոշու այս կենդանի հյուլեին, նյութի այս կույտին, որը շարժվում է, շնչում, համարձակվում է ինձ մարտահրավեր կարդալ և խորապես համոզված է, որ ինքը կազմված է ինչ—որ բարձրորակ տարրերից: Հավատալով իրավունքի և ազնվության վերաբերյալ մարդկանց հնարած առասպելներին, նա ձգտում է դրանց հավատարիմ մնալ հակառակ սպառնալիքներին և տանջանքներին: Ի՞նչ կարծիքի եք նրա մասին, Հեմփ, ի՞նչ կարծիքի եք:

— Ես այն կարծիքին եմ, որ նա ձեզանից ավելի լավ մարդ է,— պատասխանեցի ես, ցանկանալով ինձ վրա շեղել նրա զայրույթի մի մասը, որ, զգում էի, պիտի պայթեր Ջոնսոնի գլխին:— Այդ առասպելները, ինչպես դուք անվանում եք, ներկայացնում են ազնվությունն ու քաջությունը: Դուք չեք հավատում այդ առասպելներին, դուք չունեք երազներ և իդեալներ:

Նա գլուխը շարժեց վայրագ գոհունակությամբ:

— Միանգամայն ճիշտ է, Հեմփ, միանգամայն ճիշտ: Ես չեմ հավատում ազնվությունն ու քաջությունն ներկայացնող առասպելներին: «Կենդանի շունը ավելի լավ է մեռած առյուծից», ասում եմ ես Ժողովողի նման: Իմ միակ ուսմունքը նպատակահարմարության ուսմունքն է, որն օգնում է կենդանի մնալու: Երբ այս թթխմորի մասնիկը, որին կոչում ենք «Ջոնսոն», դադարի թթխմորի մասնիկ լինելուց, նա կդառնա փոշի ու աճյուն, և նրանում կմնա այնքան ազնվություն, որքան կա փոշու և աճյունի մեջ, մինչդեռ ես դեռ կշարունակեմ ապրել ու մոլեգնել:

Մի պահ լուռ մնալուց հետո, նա հարցրեց.

— Գիտե՞ք ինչ եմ անելու հիմա:

Ես գլուխս թափահարեցի:

— Հիմա ես կգործադրեմ մոլեգնելու իրավունքս և ձեզ ցույց կտամ, թե ինչ կկատարվի ազնվության հետ: Նայեցե՛ք:

Նա գտնվում էր Ջոնսոնից երեք յարդ հեռու, այսինքն՝ ինը ոտնաչափ... և նստած վիճակում: Հանկարծ նա աթոռից թոփչք կատարեց առանց ոտքի կանգնելու, այնպես, ինչպես նստած դիրքից միանգամից ուստնում է վագրը: Եվ վագրի նման էլ նա կտրեց այդ տարածությունը: Այնուհետև սանձազերծվեց նրա կատաղության ողջ հորձանքը, որի դեմ Ջոնսոնը իզուր ջանաց պաշտպանվել: Վերջինս մեկ թևով պատսպարում էր ստամոքսը, մյուսով՝ գլուխը: Բայց Լարսենը բռունցքի ջախջախիչ մի հարված հասցրեց ուղղակի նրա կրծքին: Ջոնսոնի շունչը մեկեն կտրվեց և ապա նա սկսեց հոնդունով հեռալ տապար թափահարող մարդու պես: Ընկրկելով ու մեկ կողմից մյուսը տատանվելով, նա ջանաց հավասարակշռությունը վերագտնել:

Ես չեմ կարող նկարագրել հաջորդող ահավոր տեսարանի՝ մանրամասները: Այն ուղղակի ընդվզեցուցիչ էր: Նույնիսկ այսօր, երբ վերհիշում եմ, գլուխս պտույտ է գալիս: Ջոնսոնը քաջաբար մաքառեց, սակայն նա չէր կարող հաղթել Գայլ Լարսենին, առավել ևս՝ Գայլ Լարսենին ու օգնականին: Սարսափելի էր այդ պայքարը: Ես չէի կարող երևակայել, որ որևէ մարդկային էակ ընդունակ է այդքան տանջանքի դիմանալու և, այնուհանդերձ, շարունակելու պայքարը: Իսկ Ջոնսոնը շարունակեց պայքարել: Բիարկե, Ջոնսոնը ամենաչնչին հավանականությունն իսկ չունեիր նրանց հաղթահարելու, և նա ինձ պես լավ գիտեր այդ, բայց բնածին քաջությունը նրան մղում էր դիմադրելու մինչև վերջ:

Ես այլևս կարողություն չունեի դիտելու: Ինձ թվաց, թե կլիելագարվեմ: Ուստի, աստիճաններով վեր վազեցի, որպեսզի դուռը բացելով փախչեմ տախտակամած: Բայց Գայլ Լարսենը, իր գոհին թողնելով և իր ահագին թռիչքներից մեկը կատարելով, ինձ բռնեց և նետեց սենյակի ամենահեռավոր անկյունը:

— Սա կյանքի արտահայտություններից մեկն է, Հեմփ,— ասաց նա հեզնանքով,— մնացեք և դիտեք: Այս առիթով փաստական տվյալներ կհավաքեք հոգու անմահության մասին: Ընդ որում, դուք գիտեք, որ մենք անկարող ենք Ջոնսոնի հոգուն վնաս հասցնել: Մենք կարող ենք խորտակել միայն նրա վաղանցուկ պատյանը:

Ծեծը շարունակվեց մոտ տասը րոպե ևս, բայց ինձ թվաց, թե ամբողջ դարեր անցան: Գայլ Լարսենը և Յոհանսենը իրենց, ամբողջ ուժով ծեծում էին խեղճին: Նրանք բռնեցնելով հարվածում, ծանր կոշիկներով խփում էին նրան, գետին փռում, ոտքի կանգնեցնում ու նորից հարվածում: Նավաստու աչքերը մթագնել էին, և նա այլևս չէր տեսնում, արյունը հոսում էր քթից, բերանից, ականջներից և խուցը սպանդանոցի տեսք էր ստացել: Երբ նա անկարող դարձավ ոտքի կանգնելու, նրանք շարունակեցին քացիներ տալ նրա գետնատարած մարմնին:

— Մեղմացրու, Յոհանսեն, թափը մեղմացրու,— ասաց վերջապես Լարսենը:

Բայց օգնականի հոգում մոլեգնել էր գազանը, այնպես որ Գայլ Լարսենը ստիպված եղավ ձեռքով նրան ետ հրել: Ձեռքի այդ հպումը արտաքուստ մեղմ թվաց, բայց Յոհանսենը խցանի պես ետ-ետ թավալվեց և նրա գլուխը շրխկոցով խփվեց խցի միջնորմին: Նա գետին գլորվեց և մի պահ գրեթե զգայագուրկ մնաց, դժվարությամբ շնչելով և աչքերը թարթելով ապուշի նման:

— Դուռը բաց, Հեմփ,— հրամայեց Լարսենը:

Ես հնազանդվեցի, և այդ երկու գազանները անկենդան մարմինը քաշելով աստիճաններից բարձրացրին, ինչպես աղբի տոպրակ, և նեղ դռնից դուրս հանեցին: Տախտակամածի վրա դեկանիվի մոտ կանգնած էր Լուիսը՝ Ջոնսոնի մակույկակից ընկերը: Արյունը Ջոնսոնի քթից ցայտեց նրա կոշիկների վրա: Բայց Լուիսը անվրդով շարունակեց դեկանիվը վարել, առանց հայացքը կողմնացույցից հեռացնելու:

Բոլորովին այլ կերպ վարվեց Լիչը՝ նախկին սպասալակը: Նրա վերաբերմունքը բոլորիս խոր զարմանք պատճառեց: Նա ուղղվեց դեպի նավախել և, առանց որևէ հրահանգ ստացած լինելու, Ջոնսոնին քաշելով, տարավ նավի առաջամասը, որտեղ նրան հանգիստ դիրքով պառկեցրեց և սկսեց վերքերը խնամել, որքան կարող էր: Ջոնսոնը այնպես էր այլանդակվել,

որ դարձել էր անճանաչելի: Նրա դեմքը մի քանի բույրերի ընթացքում այնքան ուռել ու գունաթափվել էր, որ ամբողջովին կորցրել էր մարդկային դիմագծերը:

Բայց գանք Լիչի վերաբերմունքին: Մինչև որ նավասենյակը մաքրեցի ու կարգի բերի, նա Ջոնսոնին պետք եղած խնամքը տվել էր արդեն: Ես տախտակամած բարձրացա, որպեսզի թարմ օդ շնչեմ ու լարված ջղերս մի քիչ հանսգտացնեմ: Գայլ Լարսենը սիգար ծխելով զննում էր նավի ընթացքի արագությունը չափող գործիքը, որը սովորաբար կախվում էր նավախելից, իսկ այժմ ինչ-որ պատճառով բարձրացրել էին վերև: Հանկարծ իմ ականջին հասավ Լիչի ձայնը, որն անգուսպ կատաղությունից խոխոտում ու դողդողում էր: Ես շուտ եկա ու տեսա, որ նա կանգնած է նավահարթակի ճիշտ ներքևը: Դեմքը գունատ ու ձգված էր, աչքերը՝ բոցավառ, բռունցքները՝ վեր բարձրացրած:

— Թող աստված քո հոգին դժոխք ուղարկի, Գայլ Լարսեն: Դժոխքը դեռ քիչ է քեզ համար... Ստո՛ր, մարդասպա՛ն, խո՛գ, ահա թե ինչ ես դու,— գոռում էր նա:

Ես կարծես շանթահար, վայրկյան առ վայրկյան սպասում էի նրա ոչնչացմանը: Բայց երևի Գայլ Լարսենն այդ բույրերին տրամադիր չէր նրան ոչնչացնելու: Նա դանդաղ մոտեցավ նավահարթակի եզրին և ձեղնախցի միջնորմին հենվելով մտածկոտ հետաքրքրությամբ սկսեց դիտել բորբոքված երիտասարդի դեմքը:

Իսկ սա Գայլ Լարսենի երեսին շարտում էր այնպիսի մեղադրանքներ, որ ոչ ոք երբևէ չէր համարձակվել անել: Նավաստիները երկչտությամբ հավաքվեցին նավի առաջամասում գտնվող ամբարածածկի մոտ և սկսեցին ունկնդրել ու դիտել: Որսորդներն իրենց խցից ուրախ-զվարթ բարձրացան տախտակամած, բայց երբ Լիչը շարունակեց լուտանքները, ես նկատեցի, որ նրանց դեմքերը լրջացան: Նրանք նույնիսկ սարսափեցին: Ոչ թե տղայի ահավոր խոսքերից, այլ նրա ահավոր հանդգնության պատճառով: Թվում էր, թե հնարավոր չէ, որ որևէ կենդանի էակ հանդգնի այդպիսի վիրավորական խոսքեր ասել Գայլ Լարսենի երեսին: Անձամբ ես ուղղակի հիացած էի այդ երիտասարդով, որի մեջ տեսնում էի հոգու անմահության փառապանծ անպարտելիությունը, հոգու, որը բարձրացել էր ավելի վեր, քան մարմինն ու մարմնի վախը մահից: Նա ինձ հիշեցնում էր մարդկանց մեղքերը դատապարտող հին մարգարեներին:

Եվ ինչպիսի դատապարտություն էր սա... Լիչը Գայլ Լարսենի հոգին մերկացրել էր և ենթարկել մարդկանց արհամարհանքին, նրա վրա թափում էր աստծո և երկնքի անեծքները, նրան կիզում կշտամբանքների հրաշեկ տաքությամբ, կշտամբանքներ, որոնք կաթոլիկ եկեղեցու միջնադարյան բանադրանքների բուրմունքն ունեին: Մեղադրանքների ամբողջ շարանն ավարտելով, նա, ի վերջո, հասավ զայրույթի բարձրակետը, որը վեհ էր և գրեթե աստվածային: Այնուհետև, ծայրահեղ ուժասպառությունից՝ սուզվեց տգեղ ու անվայել հայիոյանքների վիհը:

Լիչի կատաղությունը խելագարության հավասարվեց: Նրա բերանը փրփրել էր, կոկորդը երբեմն խոխոտում ու խեղդվում էր և անհասկանալի բառեր արտաբերում: Իսկ այս ամբողջ ժամանակամիջոցում Գայլ Լարսենը, հանգիստ ու անվրդով, արմունկին հենված՝ նայում էր ցած, կարծես համակված էր խոր հետաքրքրությամբ: Կենդանի թթխմորի այս կատաղի փրփրումը, շարժվող նյութի այս ահավոր ըմբոստացումն ու զայրույթը նրան զարմացնում ու հետաքրքրում էին:

Ես և մյուս բոլոր ներկաները թույլ առ թույլ սպասում էինք, որ նա կնետվի երիտասարդի վրա և կջախջախի նրան:

Բայց ինչ-որ քմահաճույքի բերմամբ, նա այդ չարեց: Նրա սիգարը մարել էր, իսկ նա դեռ շարունակում էր դիտել լուռ և հետաքրքրությամբ:

Լիչը, ի վերջո, մատնվեց անգոր կատաղության:

— Խո՛ղ, խո՛ղ, խո՛ղ,— գոռում էր նա իր ձայնի ամբողջ ուժով,— ինչո՞ւ չես իջնում և չես սպանում ինձ, մարդասպա՛ն: Դու կարող ես այդ անել... Բայց ես չեմ վախենում: Ոչ ոք չի կարող քեզ արգելել: Հազար անգամ ավելի լավ է մեռնել և քեզանից հեռու լինել, քան թե ապրել և մնալ ձիրաններիդ մեջ: Դեհ, եկ, ստո՛ր: Սպանիր ինձ, սպանիր, սպանի՛ր...

Հենց այդ թույլին Թոմաս Մագրիջի պիղծ հոգին նրան մղեց դեպի գործողության վայրը: Նա ամբողջ ժամանակ ունկնդրում էր խոհանոցի դռնից, բայց հիմա դուրս եկավ իբրև թե աղբը ծովը թափելու, մինչդեռ, իրականում, ուզում էր դիտել սպանության տեսարանը, որը, համոզված էր, անպայման տեղի կունենա: Նա շողոքորթ ժպիտով նայեց Գայլ Լարսենին, որը, ըստ երևույթին, չնկատեց նրան: Բայց խոհարարը ոչ միայն լիք էր, այլև անմիտ, բոլորովին անմիտ: Նա Լիչին դիմելով ասաց.

— Ի՞նչ կեղտոտ լեզու ես գործածում, ուղղակի զզվելի...

Լիչի անգոր կատաղությունը հանկարծ թափ ստացավ: Ահա՛ վերջապես մեկը, որի օձիքից կարելի էր բռնել: Լիչի հետ ունեցած ընդհարումից հետո առաջին անգամն էր, որ Մագրիջը խոհանոցից դուրս էր եկել առանց դանակի: Նա հագիվ էր խոսքը վերջացրել, երբ Լիչը բռունցքի մեկ հարվածով նրան գետին տապալեց: Երեք անգամ Մագրիջը ոտքի կանգնեց և փորձեց խոհանոց փախչել, բայց յուրաքանչյուր անգամ նավաստին մեկ հարվածով նրան փռում էր տախտակամածի վրա:

— Օգնեցե՛ք,— բղավեց խոհարարը,— օգնեցե՛ք, հեռացրեք նրան, ի՞նչ եք կանգնել, հեռացրե՛ք նրան...

Որսորդները ծիծաղեցին սոսկ թեթևացման զգացումից: Ողբերգությունը վերջացել էր և սկսվել էր գավեշտախաղը: Նավաստիները համարձակություն ստացան և ժպտալով ու իրար հրելով մոտեցան՝ ատելի խոհարարի ծեծ ուտելը դիտելու: Նույնիսկ իմ հոգու խորքից մի անսահման հրճվանք բարձրացավ: Պետք է խոստովանեմ, որ ես մեծ հաճությամբ էի դիտում, թե ինչպես Լիչը ծեծում էր Թոմաս Մագրիջին, թեև դա գրեթե նույնքան սարսափելի էր, որքան այն ծեծը, որին ենթարկվեց Ջոնսոնը խոհարարի մատնության պատճառով: Բայց Գայլ Լարսենի դեմքի արտահայտությունն ամեննին չփոխվեց: Նա իր դիրքն անգամ չփոխեց և շարունակեց նույն հետաքրքրությամբ դիտել ներքևի իրադարձությունը: Թեև Լարսենը համոզված պրագմատիստ էր, այնուամենայնիվ, ինձ թվաց, թե այդ թույլին նա ուսումնասիրում էր կյանքի խաղն ու շարժումները, որպեսզի նրա մասին ինչ-որ նորություն հայտնաբերի, նրա անմիտ գալարումների մեջ գտնի անցյալում իր ուշադրությունից վրիպած մի այնպիսի մանրամասնություն, որի շնորհիվ կարելի լինի թափանցել կյանքի գաղտնիքը և պարզել նրա մութ կողմերը:

Ինչ վերաբերում է ծեծին, ապա այն հար ու նման էր նրան, որին ականատես էի եղել նավասենյակում: Խոհարարը ապարդյուն ջանքեր էր թափում պաշտպանվելու կատաղած նավաստուց և գուր փորձեր կատարում՝ նավասենյակ հասնելով այնտեղ ապաստանել: Ամեն առիթով նա ձգտում էր նավասենյակի կողմը գլորվել, այդ ուղղությամբ էր սողում, այդ ուղղությամբ ընկնում: Բայց հարվածները իրար հաջորդում էին գլխապտույտ արագությամբ: Լիչը նրան դեսուդեն շարտեց փետրադնգակի նման, մինչև որ նա անշարժ փովեց հատակին: Այն ժամանակ նավաստին սկսեց ոտքով հարվածել նրան: Ոչ ոք չէր միջամտում: Լիչը կարող էր սպանել, բայց, ըստ երևույթին, իր վրեժը լիովին լուծած համարելով՝ թողեց տապալված հակառակորդին, որը շան պես կաղկանձում էր, և հեռացավ:

Բայց այս երկու դեպքերն օրվա ծրագրի նախերգանքն էին միայն: Երեկոյան դեմ Սմոքը և Հենդերսոնը ընդհարվեցին իրար հետ: Հանկարծ լսվեց կրակոցների աղմուկ և մնացյալ չորս որսորդները միջնահարկից խուճապահար վերև բարձրացան: Միաժամանակ նավասանդուղքի բացվածքից բարձրացավ թանձր ու այրող ծուխ, որպիսին միշտ գոյանում է սև վառողից, և այդ ծխի միջով Գայլ Լարսենը ներքև խոյացավ: Կռվի ու հարվածների աղմուկը հասնում էր մինչև մեր ականջը: Սմոքը և Հենդերսոնը երկուսն էլ վիրավորվել էին, բայց Գայլ Լարսենը նրանց ծեծում էր, որովհետև իր հրամանն անտեսելով, նրանք իրար խեղանդամ էին դարձրել նախքան որսն սկսելը: Երկուսն էլ բավականին ծանր վիրավորվել էին, այնպես որ Գայլ Լարսենը նրանց ծեծելուց հետո ձեռնարկեց վիրահատության, խնամեց վերքերը որքան կարող էր, և դրանք փաթաթեց վիրակապով: Ես նրան օգնում էի: Նա շոշափում էր վերքերը և փամփուշտների բացած անցքերը մաքրում: Վիրավորները քաջաբար դիմանում էին այդ բիրտ վիրահատությանը, որ կատարվում էր առանց թմրեցման: Ցավին տոկալու համար նրանք միայն մի-մի բաժակ թունդ վիսկի էին խմել:

Այնուհետև, երեկոյան, առաջին հերթապահության միջոցին, տուրուդմբոց բարձրացավ նավի առաջամասում: Դա առաջացել էր այն ասեկոսների և բամբասանքների կապակցությամբ, որոնք Ջոնսոնի ծեծի պատճառ էին հանդիսացել: Ահագին աղմուկից և նավաստիների դեմքերի վրա գոյացած ուռուցքներից ու կապտուցներից պարզվեց, որ առաջամասի նավագախմբի մի մասը փառավորապես մշակել էր մյուս մասին:

Երեկոյան երկրորդ հերթափոխությունն ավարտվեց մի նոր կովով: Այս անգամ կովեցին Յոհանսենը և յանկիի նմանող նիհարակազմ որսորդ Լետիմերը: Պատճառն այն էր, որ վերջինս շարունակ տրտնջում էր, թե Յոհանսենը քնած ժամանակ խռմփում ու բարձրաձայն խոսում է: Չնայած Յոհանսենը մի լավ ծեծ կերավ, նա որսորդներին դարձյալ չթողեց քնել, որովհետև ամբողջ գիշերը անդադար կովում էր երանավետ նիրհի մեջ:

Ինչ վերաբերում է ինձ, ապա ամբողջ գիշերը տանջվեցի մղձավանջների մեջ: Օրն անցել էր ահավոր երազի պես: Մի վայրագության հաջորդել էր մի ուրիշ վայրագություն, բոցավառ կրքերն ու սառնարյուն անգթությունը մարդկանց մղել էին իրենց նմանների կյանքին սպառնալու, ծեծելու, խեղդելու, կոտորելու: Ջդերս ցնցվել էին և բանականությունն ընդվզել էր: Անցյալում գրեթե գաղափար չունեի մարդու գազանության մասին: Ես կյանքը ճանաչել էի միայն իր մաքուր, մտավորական կողմերով: Ճիշտ է, ծանոթացել էի դաժանության հետ, բայց դա մտավոր դաժանությունն էր, ինչպես, օրինակ, Չարլի Ֆարասեթի խայթող հեզնանքը, ակումբի ընկերներիս անողորմ էպիգրամներն ու կոպիտ սրամտությունները, իսկ ուսանողական տարիներին՝ դասախոսների թունոտ նկատողությունները: Ահա և բոլորը:

Բայց գայրույթի ոխը հանել ուրիշների մարմինը կապտացնելով և արյուն թափելով, դա ինձ համար զարմանալի ու ահավոր նորություն էր: Ջուր չէր, որ ինձ անվանում էին «փափկասուն Վան-Վեյդեն», մտածում էի անհանգիստ շուռումուռ գալով անկողնում, երբ մղձավանջը դադարում էր մի պահ: Պարզ է, որ անցյալում կյանքին բոլորովին անգիտակ եմ եղել: Գտնելով, որ Գայլ Լարսենի գարշելի փիլիսոփայությունը ավելի ճիշտ է բացատրում կյանքը, քան իմը, ես դառնորեն ծիծաղեցի ինձ վրա:

Մտքերի այս նոր ուղղությունն ինձ սոսկում պատճառեց: Զգացի, որ շրջապատի շարունակական վայրագություններն սկսել էին բացասական ազդեցություն ունենալ վրաս: Այդ ազդեցությունն Ապառնում էր կործանել այն ամենը, ինչ լավ ու պայծառ էր կյանքում: Բանականությունս ինձ խրատում էր, որ Թոմաս Մագրիջի կերած ծեծն ինքնին վատ բան էր, բայց, այնուամենայնիվ, հոգիս հրճվում էր այն հիշելով: Եվ նույնիսկ, երբ ճնշվում էի իմ մեղքի ծանրության տակ, քանի որ մեղք է այդպիսի բանի համար հրճվելը, դարձյալ ծիծաղում էի անմիտ զվարճությամբ: Ես այլևս նախկին Հեմֆրի Վան-Վեյդենը չէի, այլ «Ուրվական» երկկայմանավի սպասյակ Հեմփր: Իմ նավապետը Գայլ Լարսենն էր, Թոմաս Մագրիջն ու մյուսները ընկերներս էին, և ինձ վրա շարունակ դրոշմվում էր այն կնիքը, որով դրոշմվել էին նրանք բոլորը:

Գլուխ տասներեքերորդ

Հաջորդ երեք օրը ես կատարեցի թե՛ իմ և թե՛ Թոմաս Մագրիջի պարտականությունները: Պետք է պարծանքով ասեմ, որ պատրաստում էի բավականին համեղ ճաշեր: Ես գիտեմ, որ Գայլ Լարսենի հավանությանն արժանացա և նավաստիները գոհ էին ինձանից այն կարճատև ժամանակամիջոցում, երբ ղեկավարում էի խոհանոցը:

— Առաջին անգամ է, որ մաքուր ճաշ կերա այս նավում,— ասաց ինձ Հարրիսոնը խոհանոցի դռան առջև, երբ առաջամասից վերադարձրեց դատարկ ամաններն ու կաթսան:— Թոմմիի կերակուրներից, չգիտես ինչու, միշտ ձենձի հոտ էր գալիս և ես կարծում եմ, որ Սան-Ֆրանցիսկոն թողնելուց հետո նա իր շապիկը դեռ չի փոխել:

— Իսկ ես ոչ թե կարծում եմ, այլ գիտեմ, որ այդպես է,— պատասխանեցի:

— Գրագ կգամ, որ դրանով էլ մտնում է անկողին,— շարունակեց Հարրիսոնը:

— Եվ չես տարվի, որովհետև նա միշտ նույն շապիկն է հագնում և այս ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի անգամ վրայից չի հանել:

Բայց Գայլ Լարսենը խոհարարին երեք օրից ավելի չթողեց բուժվել: Չորրորդ օրը ծոծրակից բռնելով նրան անկողնուց դուրս քաշեցին, և նա կաղալով ու տնքտնքալով սկսեց աշխատանքը: Աչքերն այնքան էին ուռել ու փակվել, որ հազիվ կարողանում էր տեսնել: Նա նվնվաց ու արտասվեց, բայց Գայլ Լարսենը անողորմ մնաց:

— Եվ նայիր, որ սրանից հետո մեզ աղբ ու կեղտաջուր չհրամցնես,— եղավ նրա վերջին պատվերը:— Այլևս ոչ մի կեղտ կամ ձենձ, լավ իմացիր, իսկ շապիկդ մեկ-մեկ կլվանաս, թե չէ ծովի լոգանք ընդունել կտամ, հասկանալի⁶ է:

Թոմաս Մագրիջը, ուժից ընկած, երեքալով թափառում էր խոհանոցում, երբ նավի արագ ցնցումից քիչ մնաց գետին տապալվել: Փորձելով հավասարակշռությունը պահպանել, նա ձեռքը երկարեց վառարանի երկաթե ձողին, որը կաթսաները պահում էր վար սահելուց, բայց վրիպեց, և ձեռքը ամբողջ թափով ու ծանրությամբ կպավ վառարանի հրաշեկ սալիկին: Լսվեց մի թշնոց, տարածվեց այրվող մսի հոտ և միաժամանակ ցավի մի սուր ճիչ բարձրացավ:

— Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ, ես ի՞նչ մեղք եմ գործել,— լալով ողբաց խոհարարը՝ ածուխի արկղի վրա նստելով և այրված ձեռքը թափահարելով:— Ինչո՞ւ այս բոլոր փորձանքները հենց իմ գլխին են դալիս: Օ՛հ, ի՞նչ զզվելի է իմ բախտը: Եվ այս ամենը պատահում է ինձ, որ միշտ ջանում եմ ոչ մեկին վնաս չպատճառել...

Արցունքները հոսում էին նրա ուռած ու գունատ այտերից, երբ հանկարծ ցավից կծկված դեմքը վայրի արտահայտություն ստացավ:

— Օ՛հ, ես ասում եմ նրան,— ասաց նա ատամները կրճտացնելով,— ատո՛ւմ եմ նրան:

— Ո՞ւմ,— հարցրեցի ես, բայց ողորմելի թշվառը նորից սկսեց իր չար բախտը ողբալ: Ավելի հեշտ էր գուշակել, թե նա ում է ասում, քան՝ ում է սիրում: Որովհետև նկատել էի, որ այդ մարդու մեջ կա մի չար ոգի, որը նրան մոլում է բոլորին ատել: Երբեմն ինձ թվում է, թե Մագրիջն ասում է նույնիսկ իրեն, որովհետև կյանքը նրա հետ վարվել է շատ անհեթեթ ու հրեշային ձևով: Այդպիսի պահերին իմ հոգում արթնանում է խոր հակակրանք նրա հանդեպ, և ես ամաչում եմ, որ երբևէ ուրախացել եմ նրա դժբախտությունների կամ տառապանքների համար: Կյանքը անարդար է եղել այդ մարդու նկատմամբ և խաղացել է կեղտոտ խաղ, ստեղծելով նրան այնպես, ինչպես կա: Դրանից հետո կյանքը շարունակել է նույն կեղտոտ խաղը խաղալ նրա հետ: Արդյո՞ք նա հնարավորություն ունեցել է այլ կերպ լինելու: Եվ կարծես իմ չարտահայտած մտքին պատասխանելու համար խոհարարը ողբագին ճչաց.

— Ես երբեք ոչ մի հնարավորություն չեմ ունեցել կյանքումս: Ոչ ոք ինձ դպրոց չի ուղարկել, ինձ չի կերակրել կամ քիթս չի մաքրել իմ մանկության ժամանակ: Ո՞վ է բան արել ինձ համար, հը՞, հարցնում եմ, ո՞վ...

— Ոչինչ, Թոմմի,— ասացի ես և հանգստացնելու համար ձեռքս դրի նրա ուսին,— մի տխրիր, վերջը լավ կլինի: Դու դեռ երկար կյանք ունես քո առաջ և կարող ես դառնալ այն, ինչ ուզում ես:

— Սուտ բան է, ստո՛ր սուտ,— գոչեց նա երեսիս, թոթափելով իմ ձեռքը,— և դու գիտես, որ սուտ է: Ես շինված եմ թափթփուկներից և այլևս չեմ կարող վերափոխվել: Քո պարագան տարբեր է, Հեմփ: Դու ջենթլմեն ես ծնվել: Դու երբեք չես իմացել, թե ինչ է նշանակում քաղցած ման գալ, սոված քնել, երբ ամբողջ գիշեր դատարկ փորդ ճմլվում է, հա ճմլվում, կարծես մի առնետ լինի այնտեղ: Ո՛չ, այլևս ոչինչ չի օգնի: Եթե ես վաղը Միացյալ Նահանգների նախագահը դառնամ, մի՞ թե կկարողանամ հատուցել իմ մանկության օրերի զրկանքները, երբ քաղցած փորով ման էի գալիս: Հարց եմ տալիս, մի՞ թե այդ հնարավոր է:

— Ես ծնվել եմ զրկվելու և տանջվելու համար,— շարունակեց նա:— Ես ավելի տանջանք եմ կրել, քան տասը մարդու տանջանքը իրար գումարած: Այո: Իմ անիծված կյանքի կեսը ես անց եմ կացրել հիվանդանոցներում: Ջերմով պառկել եմ Ասպինվուդում, Լավանայում, Նյու-Օռլեանում: Վեց ամիս լնդախտով տառապել եմ Բարբադոսում: Հոնոլուլուում վարակվել եմ

ծաղկախտով, Շանհայում երկու ոտքերս ջարդվել են, Ունալասկայում թոքերի բորբոքում եմ ստացել, Ֆրիսկոյում երեք կողոսկր կոտրվել են և ամբողջ մարմինս գալարվել է ցավից: Իսկ հիմա նայիր ինձ, նայի՛ր: Կողոսկրներս նորից խախտեցին ու ջարդեցին: Շուտով կսկսեմ արյուն թքել: Հարցնում եմ, ինչպե՞ս կարելի է այս բոլորի փոխարենը հատուցել: Եվ ո՞վ կհատուցի, Աստվա՞ծ: Երևի աստված ինձ ատեց այն օրը, երբ պայմանագիր ստորագրեցի այս անիծյալ նավով ճանապարհորդելու:

Ճակատագրի դեմ զայրույթը տևեց ավելի քան մեկ ժամ, որից հետո խոհարարը նորից սկսեց աշխատանքը, կաղալով, հառաչելով, աչքերը լի ատելությամբ ամբողջ աշխարհի դեմ: Նրա ախտորոշումը, սակայն, ճիշտ դուրս եկավ, որովհետև սկսեց հաճախ հիվանդանալ: Այդպիսի դեպքերում արյուն էր թքում և ունենում սուր ցավեր: Բայց, ինչպես ինքն ասել էր, կարծես աստված նրան այնքան էր ատում, որ չէր թողնում մեռնի: Որովհետև նա, ի վերջո, առողջացավ և առաջվանից ավելի չարացավ:

Անցավ մի քանի օր, և Ջոնսոնն էլ տախտակամած դուրս եկավ ու սկսեց աշխատել, բայց ոչ սրտանց: Նա դեռ հիվանդ էր, և ես մի քանի առիթով նկատեցի, որ դժվարությամբ է մազլցում կայմապարանով կամ ուժասպառ կռանում դեկանիվի վրա: Բայց ամենից վատն այն է, որ նա հոգեպես ընկճված էր: Հիմա նա սկսել էր ստորաքարշություն անել Գայլ Լարսենի առաջ, իսկ Յոհանսենի առաջ համարյա սողում էր: Մինչդեռ Լիչի վարմունքը տարբեր էր: Նա տախտակամածի վրա ման էր գալիս ինչպես վագրի կորյուն և բացեի՜բաց ցույց էր տալիս իր ատելությունը Գայլ Լարսենի և Յոհանսենի նկատմամբ:

— Ես դեռ քո հախից կգամ, ծոթաթ շվեդացի,— լսեցի, որ նա ասում էր Յոհանսենին մի գիշեր, տախտակամածի վրա:

Յոհանսենը հայիոյեց մթության մեջ և հենց նույն վայրկյանին ինչ-որ մի իր ուժգին բախվեց խոհանոցի միջնորմին: Դրան հաջորդեց մի նոր հիշոց, հետո ծաղրական մի քրքիջ: Երբ ամեն ինչ խաղաղվեց, ես դուրս եկա: Միջնորմի կարծր փայտի մեջ ավելի քան մեկ մատնաչափ խորությամբ խրված էր մի ծանր դանակ: Հագիվ մի քանի բուլե էր անցել, երբ օգնականը ետ եկավ և սկսեց դանակը փնտրել, բայց ես արդեն վեցրել էի, և հաջորդ օրը թաքուն վերադարձրի Լիչին: Երբ դանակը հանձնեցի, նա ժպտաց և այդ ժպիտի մեջ ավելի անկեղծ շնորհակալություն կար, քան բազմաթիվ երկարապատում ճառերի մեջ, որ սովոր են արտասանել իմ դասակարգի մարդիկ:

Ես, ի տարբերություն նավակազմի մնացյալ անդամների, ոչ ոքի հետ կովի մեջ չէի հիմա և վայելում էի բոլորի սիրալիրությունը: Որսորդները, ճիշտ է, պարզապես հանդուրժում էին ինձ, բայց նրանցից ոչ մեկն ինձ չէր ատում: Սմոքը և Հենդերսոնը, որոնք կամաց-կամաց ապաքինվում էին և տախտակամածի վրանալաթե ամպիովանու ներքո օր ու գիշեր ճոճվում իրենց կախմահիճների մեջ, ինձ հավաստիացրին, թե ես նրանց ավելի լավ եմ խնամում, քան հիվանդանոցի որևէ բուժբույր: Նրանք ավելացրին, թե ճանապարհորդության վերջում, երբ իրենց հասանելիք գումարներն ստանան, ինձ չեն մոռանա (կարծես թե ես փողի կարիք ունեի... Ես, որ կարող էի նրանց գնել իրենց ունեցած-չունեցածով, գնել ամբողջ երկկայմանավը, նույնիսկ քսան հատ այդպիսի երկկայմանավ...): Բայց ինձ վիճակված էր նրանց խնամելու և վերքերը կապելու պարտականությունը, և ես անում էի ձեռքիցս եկածը:

Գայլ Լարսենը նորից ունեցավ գլխացավի ուժեղ նոպա, որը տևեց երկու օր: Ըստ երևույթին, նա չափազանց տանջվում էր, որովհետև ոչ միայն ինձ կանչեց իր մոտ, այլև հրահանգներին հնազանդվեց երեխայի հլուությամբ: Բայց ինչ էլ որ արեցի, ցավերը չմեղմացան: Իմ խորհրդով նա թողեց ծխելն ու խմելը: Ինձ ուղղակի զարմանք էր պատճառում, թե ինչո՞ւ նրա պես հոյակապ կենդանին պիտի գլխացավ ունենա:

— Քեզ ասում եմ, որ աստծու մատը խառն է,— բացատրեց Լուիսը:— Նա պատժվում է իր սև գործերի համար և դեռ պիտի պատժվի, եթե...

— Եթե ի՞նչ,— հարցրի ես:

— Եթե աստված չվարանի իր պարտականությունը կատարելիս... Բայց իմ ի՞նչ գործն է այս տեսակ բաներ ասել...

Ես սխալվեցի, երբ քիչ առաջ ասացի, թե վայելում եմ բոլորի սիրալիրությունը: Թոմաս Մագրիջը ոչ միայն շարունակում է ինձ ատել, այլև ատելու համար գտել է նաև մի նոր պատճառ: Երկար մտածելուց հետո վերջապես գլխի ընկա, թե բանն ինչու՞մն է: Նա ինձ ատում է, որովհետև ես ծնվել եմ իրենից ավելի երջանիկ աստղի տակ, իր խոսքերով ասած, ջենթլմեն եմ ծնվել:

— Իմ շուրջը դեռ ոչ մի մեռել չեմ տեսնում...— կատակով ասացի Լուիսին, երբ Սմոքը և Հենդերսոնը բարեկամաբար զրուցելով, կատարում էին տախտակամածի վրա քայլելու առաջին վարժությունը:

Լուիսը իր մոխրագույն, խորամանկ աչքերով զննեց ինձ և գլուխն օրորեց չարագուշակ արտահայտությամբ:

— Ես քեզ ասում եմ, որ փոթորիկը մոտենում է, իսկ երբ նա սկսի փչել ու ոռնալ, այն ժամանակ պինդ կառչիր պարաններից... Ես վաղուց զգացել եմ, որ նա պիտի պայթի, հիմա էլ տեսնում եմ նրան այնպես, ինչպես խավարում մոտեցող նավի ուրվագիծը: Նա արդեն մոտ է, շա՛տ մոտ:

— Իսկ ո՞վ է լինելու առաջին զոհը,— հարցրեցի ես:

— Համենայն դեպս, ոչ զիրուկ Լուիսը, այդ մասին կարող եմ քեզ վստահեցնել,— ծիծաղեց նա:— Ես իմ ներսում զգում եմ, որ մյուս տարի այս ժամանակ պիտի լինեմ մայրիկիս մոտ և պիտի նայեմ նրա աչքերի մեջ, որոնք հոգնած են ծովը դիտելուց և հինգ որդիների վերադարձին սպասելուց:

— Լուիսը քեզ ի՞նչ էր ասում,— ինձ հետո հարցրեց Թոմաս Մագրիջը:

— Ասում էր, թե մի օր տուն պիտի վերադառնա իր մայրիկին տեսնելու,— պատասխանեցի դիվանագիտորեն:

— Իսկ ես երբեք մայրիկ չեմ ունեցել,— ասաց խոհարարը, անփայլ ու անհույս աչքերը սևեռելով իմ աչքերի մեջ:

Գլուխ տասնչորսերորդ

Ինձ թվում է, թե ես երբեք ըստ արժանվույն չեմ գնահատել կին էակին: Թեպետ կանանց ընկերության համար առանձնապես ուշքս չի գնացել, բայց, այնուամենայնիվ, ամբողջ կյանքս անց եմ կացրել նրանց շրջապատում: Մայրս և քույրերս միշտ եղել են շուրջս, սակայն ես միշտ ջանացել եմ փախչել նրանցից, որովհետև նրանք ինձ ծայրաստիճան նեղում էին առողջությանս նկատմամբ ցուցաբերած հոգատարությամբ և պարբերաբար սենյակս ներխուժելով ու այնտեղ տիրող կանոնավոր խառնաշփոթությունը (որն իմ հպարտության առարկան էր) ավելի խառնաշփոթ ու նվազ կանոնավոր վիճակի վերածելով, թեև այդպիսով սենյակն ստանում էր բավականին կոկիկ տեսք: Նրանց դուրս գալուց հետո ես բնավ չէի կարողանում ոչ մի բան գտնել: Բայց հիմա, ավա՛ղ, որքան հաճելի պիտի լինեք նրանց ներկայությունն զգալ իմ շուրջը և լսել նրանց շրջագգեստի շրշյունը, որը սրտանց ասում էի ժամանակին: Ես վստահ եմ, որ եթե ինձ վիճակվի տուն վերադառնալ, այլևս երբեք չպիտի ջղայնանամ նրանց վրա: Թող նրանք գիշեր-ցերեկ ինձ կուշտուկուտ կերակրեն, խնամեն, ամեն բոլոր սենյակս մաքրեն ու կարգի բերեն, ես իմ աթոռում ընկողմանած՝ հանգիստ պիտի դիտեմ և շնորհակալ լինեմ բախտիս, որ մայր և քույրեր ունեմ:

Այս հուշերը ծնունդ տվին այլ խորհրդածությունների: Որտեղ են այժմ «Ուրվականի» վրա աշխատող քսան մարդկանց մայրերը: Անբնական ու անառողջ երևույթ է, որ այդ մարդիկ բոլորովին հեռու ապրեն կանանցից և առանձին թափառեն աշխարհի չորս կողմը: Դրա անխուսափելի արդյունքներն են կոպտությունն ու վայրենությունը: Ինձ շրջապատող այս մարդիկ պետք է քույրեր, կին ու աղջիկներ ունենան: Միայն այդ դեպքում նրանք կարող են մեղմ, քաղցրաբար և գորովալիք լինել: Բայց բանն այն է, որ նրանցից ոչ մեկը ամուսնացած չէ: Նրանցից ոչ մեկը չի կապվել մի լավ կնոջ հետ և չի կրել այն բարերար ազդեցությունը, որ անդիմադրելի կերպով իր շուրջը կտարածի այդպիսի էակը: Նրանց կյանքը անհավասարակշիռ է: Նրանց առնականությունը, որ ի բնե անասնական է, արտակարգորեն զարգացել է, այնինչ նրանց բնավորության հոգեկան կողմը բթացել, համարյա անզգա է դարձել:

Այս մարդիկ կազմում են ամուրիների մի հավաքածու: Նրանք բրտորեն ընդհարվում են իրար հետ և այդ ընդհարումների հետևանքով օրեցօր դառնում ավելի կարծրասիրտ: Երբեմն նույնիսկ չեմ հավատում, որ նրանք երբևէ մայր են ունեցել: Թվում է, թե նրանք որևէ սեռի չպատկանող կիսազգաճ ու կիսամարդ էակների ինչ-որ յուրօրինակ ցեղ են և ծնվում են արևի տակ տաքացող ձվերից, կրիաների պես, և կենդանություն ստանում անբնական ձևով: Նրանք իրենց ժամանակը լցնում են կոպտությամբ ու չարությամբ, և ի վերջո մեռնում են այնքան անփառունակ, ինչքան եղել են իրենց կյանքում:

Նման մտքերի ազդեցության տակ երեկ գիշեր գրույց ունեցա Յոհանսենի հետ: Մեր ճանապարհորդության սկզբից դա առաջին անպաշտոն գրույցն էր, որ նա բարեհաճեց ինձ հետ ունենալ: Նա ինձ հայտնեց, որ Շվեդիան թողել է տասնութ տարեկան հասակում, այժմ երեսուներեք տարեկան է, իսկ այդ ամբողջ ժամանակամիջոցում երբեք տուն չի վերադարձել: Երկու տարի առաջ Չիլիի պանդոկներից մեկում հանդիպել է մի հայրենակից նավաստու, որից իմացել է, որ մայրը տակավին կենդանի է:

— Նա հիմա պետք է բավական պառաված լինի,— ավելացրեց Յոհանսենը, մտազբաղ նայելով կողմնացույցին, և ապա մի խիստ հայացք նետեց Հարրիսոնի վրա, որը մեկ կողմնամաս շեղել էր նավի ուղղությունը:

— Իսկ ե՞րբ եք նրան գրել վերջին անգամ:

Նա սկսեց բարձրաձայն հաշվել.

— Ութսունմեկ... չէ, ութսուներկու... թե՞ ութսուներեք... Այո՛, ութսուներեք թվականին: Մրանից տասը տարի առաջ, Մադագասկարի մի փոքրիկ նավահանգստից: Այն ժամանակ ծառայում էի առևտրական նավի վրա:

— Գիտե՞ս ինչ,— շարունակեց նա, կարծես օվկիանոսի վրայով դիմելով լքված մորը,— ամեն տարի պատրաստվում էի տուն գնալ: Այնպես որ, ի՞նչ միտք ուներ գրելը: Ընդամենը մեկ տարուց կվերադառնամ, ասում էի ես ինձ: Եվ ամեն տարի պատահում էր մի բան ու չէի կարողանում գնալ: Բայց ահա, հիմա դարձել եմ օգնական: Երբ Ֆրիսկոյում ստանամ ինձ հասանելիքը՝ մոտ հինգ հարյուր դոլլար, ծառայության կմտնեմ հորն հրվանդանից Լիվերպուլ գնացող մի առագաստանավի վրա և այդպիսով մի քիչ ավելի փող կաշխատեմ: Այնտեղից էլ տուն կվերադառնամ: Այն ժամանակ պառավը այլևս կարիք չի ունենա աշխատելու:

— Իսկ նա դեռ աշխատո՞ւմ է: Քանի՞ տարեկան կլինի հիմա:

— Մոտ յոթանասուն,— պատասխանեց նա և պարծանքով ավելացրեց,— մեր երկրում մենք աշխատում ենք ծնված օրից մինչև մեռնելը: Ահա թե ինչու ապրում ենք այդքան երկար: Ես մինչև հարյուր պիտի ապրեմ:

Երբեք չեմ մոռանա այդ գրույցը: Այդ խոսքերը վերջին խոսքերն էին, որ ես լսեցի Յոհանսենի բերանից: Եվ գուցե դրանք իրոք ամենավերջին խոսքերն էին, որ նա արտասանել էր:

Այդ գիշեր, խցիկս գնալու ժամանակ մտածեցի, որ այնտեղ շատ հեղձուցիչ էր քնելու համար: Գիշերը խաղաղ էր: Մենք արդեն դուրս էինք եկել պասսատների գոտուց, և «Ուրվականը» ժամում հազիվ առաջանում էր մեկ հանգույց: Խցիկից մի բարձ ու մի ծածկոց վերցնելով, բարձրացա տախտակամած:

Հարրիսոնի կողքով անցնելիս, նայեցի կողմնացույցին, որն ամրացված էր ձեղնախցիկի վրա, և նկատեցի, որ դեկանիվը երեք կողմնամաս շեղվել էր ընթացքից: Մտածելով, որ Հարրիսոնը քնած է, ես ցանկացա նրան փրկել հանդիմանությունից կամ ավելի վատ դրությունից և սկսեցի խոսել նրա հետ: Բայց նա քնած չէր: Աչքերը լայն բացված էին և սևեռուն: Նա այնքան այլալված էր, որ ի վիճակի չէր պատասխանելու:

— Ի՞նչ է պատահել,— հարցրի ես,— հիվա՞նդ ես: Նա գլուխը թափահարեց և խոր թառանչով շունչ քաշեց նոր արթնացողի նման:

— Դե, ուղղությունը շտկիր,— հանգիմանեցի ես: Նա դեկանիվը պտտեցրեց, կողմնացույցի սլաքը կամաց-կամաց ուղղվեց դեպի հյուսիս-արևմուտք և մի քանի թեթև ցնցումներից հետո անշարժացավ:

Բարձն ու ծածկոցը թնիս տակ սեղմած՝ պատրաստվում էի հեռանալ, երբ հանկարծ ուշադրությունս գրավեց ինչ-որ շարժվող բան նավեզրի բազրիքի վրա: Տեսա մի ձեռք, որը պինդ կառչել էր բազրիքի գերանից, իսկ այդ ձեռքից ջուր էր կաթկթում: Հետո մի երկրորդ ձեռք ևս երևաց մթության մեջ և միացավ մյուսին: Ես ապշահար դիտում էի: Ո՞վ կարող էր լինել ծովի խորքից եկող այդ այցելուն: Թեև նրա ինքնությունն ինձ անհայտ էր, բայց, համենայն դեպս, տեսնում էի, որ նա մագլցում էր ուղեչափի պարանով: Ապա մի գլուխ երևաց, թացությունից հարթված մազերով, և աչքերից ու դեմքից իսկույն ճանաչեցի Գայլ Լարսենին: Նրա աջ այտը կարմրել էր գլխի վերքից հոսող արյունից:

Ընդոստ շարժումով նա բարձրացավ նավ և, տախտակամածի վրա կանգնելով, մի արագ նայվածք նետեց դեկանիվի մոտ կանգնած նավաստու ուղղությամբ, կարծես ստուգելու համար նրա ինքնությունը և համոզվելու, թե նրանից որևէ վտանգ կարո՞ղ է գալ: Հագուստից հոսող ջրի քչքչոցը ակամայից գրավեց իմ ուշադրությունը: Երբ նա շարժվեց իմ կողմը, ես բնագդաբար ետ քաշվեցի, որովհետև նրա աչքերը մահ էին սպառնում:

— Մի՛ վախենա, Հեմփ,— ասաց նա ցածր ձայնով:— Որտե՞ղ է օգնականը:

Ես գլուխս թափահարեցի, հասկացնելու համար, որ չգիտեմ:

— Յոհանսեն՛ն,— կանչեց նա ցածր ձայնով,— Յոհանսեն՛ն,— ապա դիմելով Հարրիսոնին, հարցրեց.— Որտե՞ղ է նա:

Երիտասարդ նավաստին, ըստ երևույթին, ուշքի էր եկել, որովհետև բավականին հանդարտ պատասխանեց.

— Չգիտեմ, սը՛ր: Քիչ առաջ գնում էր դեպի առաջամաս:

— Ես էլ առաջամաս գնացի, բայց, ինչպես տեսնում ես, նույն կողմից չվերադարձա: Կարո՞ղ ես բացատրել, թե ինչու:

— Երևում է, որ ընկել եք ծովը, սը՛ր:

— Նրան փնտրե՞մ որսորդների խցում,— հարցրեցի:

Գայլ Լարսենը գլուխը թափահարեց:

— Նրան այնտեղ չես գտնի, Հեմփ: Ե՛կ ինձ հետ: Քո իրերը այստեղ թող:

Ես կրնկակոխ հետևեցի նրան: Տախտակամածի վրա ոչ մի շարժում չկար:

— Այդ անիծյալ որսորդները,— փնթփնթաց նա,— այնքան ծույլ են, որ չեն կարող չորս ժամ հերթապահություն դիմանալ:

Նավի առաջամասում գտանք քնած երեք նավաստիների: Գայլ Լարսենը նրանց մեկ-մեկ շուռ տվեց մեջքի վրա և զննեց յուրաքանչյուրի դեմքը: Նրանք կազմում էին տախտակամածի հերթապահ խումբը: Նավի կանոնների համաձայն, հանդարտ եղանակին բոլոր հերթապահները կարող էին քնել, բացի ավագից, դեկորդից և ազդանշորդից:

— Ո՞վ է ազդանշորդը,— հարցրեց նավապետը:

— Ես եմ, սը՛ր:— Թեթևակի դողացող ձայնով պատասխանեց Հովիտկը, որը հին նավաստիներից էր:— Հենց նոր աչքերս մի թեթև փակեցի, սըր: Ներեցեք, սըր: Այդ այլևս չի կրկնվի:

— Տախտակամածի վրա ոչինչ չե՞ս լսել կամ նկատել:

— Ոչ, սըր, ես...

Բայց Գայլ Լարսենը արդեն շուտ էր եկել, զզվանք արտահայտող մի քրթմնջոց արձակելով: Նա հեռացավ նավաստուց, որը զարմանքից աչքերը շփում էր այսքան էժան պրծնելու համար:

— Կամա՛ց, աղմուկ չհանե՛ս,— շնչալով զգուշացրեց ինձ Գայլ Լարսենը և կռանալով՝ սկսեց իջնել նավաստիների ընդհանուր խուցը տանող սանդուղքով:

Սրտատրոփ հետևեցի նրան: Ես չգիտեի, թե ինչ է պատահելու, ինչպես և չգիտեի, թե ինչ էր պատահել: Բայց, համենայն դեպս, գիտեի, որ արյուն էր թափվել, և Գայլ Լարսենը քմահաճույքի համար չէ, որ նետվել էր ծովը ու գանգը ջախջախել: Բացի դրանից, տարօրինակ էր նաև Յոհանսենի բացակայությունը:

Ես առաջին անգամ էի մտնում նավաստիների ընդհանուր խուցը և չեմ կարող շուտով մոռանալ այն տպավորությունը, որ կրեցի, երբ սանդուղքի ամենացածր աստիճանին կանգնած նայեցի շուրջս: Մենյակը եռանկյունաձև էր, կառուցված էր նավացուկի ճիշտ ներքևում, իսկ պատերի մոտ շարված էին երկհարկ անկողիններ, ընդամենը տասներկու հատ: Մենյակն իր ծավալով հավասար էր Գրաբ Սթրիթի խցերին: Այստեղ տասներկու նավաստիներ պառկում էին, ուտում և կենցաղային այլ պահանջներ գոհացնում: Տանը իմ ննջասենյակը թեև մեծ չէր, բայց կարող էր այսպիսի տասը խուց բովանդակել, իսկ եթե առաստաղի ցածրությունն էլ հաշվի առնենք, ապա՝ առնվազն քսանը:

Խցում օդը ծանր էր և այդտեղից գալիս էր ինչ-որ բորբոսի թթու հոտ: Ճոճվող լամպի աղոտ լույսի տակ նկատեցի, որ միջնորմները ամբողջովին դրադեցված են ծովային կոշիկներով, մոմլաթե զգեստներով և ամեն տեսակ մաքուր կամ կեղտոտ հագուստներով: Դրանք նավի յուրաքանչյուր տատանման հետ միջնորմին քսվելով, օրորվում էին և հանում մի աղմուկ, որը հիշեցնում էր տանիքին կամ պատերին քսվող ծառերի խշխշոցը: Ինչ-որ տեղ կախված կոշիկը անկանոն ընդմիջումներով խփվում էր միջնորմին: Թեև ծովը հանդարտ էր, բայց տախտակներն ու գերանները միահամուռ ճոնչում էին, իսկ ներքևից լսվում էր անդնդախոր ջրերի ձայնը:

Այս ամենը, սակայն, բնավ չէր խանգարում քնածներին: Այդտեղ կար ութ մարդ, ներառյալ և այն երկուսը, որ ազատվել էին հերթապահությունից: Օդը թանձրացել էր նրանց շնչառության հոտով և լցվել խոմփոցի, հառաչանքների ու խուլ հոնդյունների աղմուկով: Դա հիշեցնում էր վայրի մարդկանց քունը: Բայց արդյո՞ք նրանք իրոք քնած էին, արդյոք բոլո՞րն էին քնած կամ արդյոք վաղո՞ւց էին քնած: Ահա այն հարցերը, որոնք հավանորեն զբաղեցնում էին Գայլ Լարսենի ուղեղը: Ստուգելու համար, թե ովքե՞ր են քնած ձևանում և ովքեր են իրոք քնած, նա դիմեց մի հնարքի, որն ինձ հիշեցրեց Բոկկաչչոյի պատմվածքներից մեկը:

Ճոճվող շրջանակից վերցնելով լամպը, նա հանձնեց ինձ և իր քնությունն սկսեց նավեզրի կողմը շարված անկողիններից: Վերևի անկողնում պառկած էր հավայացի գեղեցիկ մի

նավագ, որին կոչում էին Ուֆտի-Ուֆտի: Նա պառկած էր մեջքի վրա և շնչում էր կանացի մեղմությամբ: Մի ձեռքը դրել էր գլխի տակ, իսկ մյուսը՝ ծածկոցի վրա: Գայլ Լարսենը բռնեց նրա դաստակը և սկսեց հաշվել երակազարկը: Այդ միջոցին նավաստին արթնացավ: Նա արթնացավ այնպես հանգիստ, ինչպես քնում էր և նույնիսկ տեղից չշարժվեց: Միայն աչքերը շարժվեցին: Այդ սև ու խոշոր աչքերը լայն բացվելով, անթարթ նայեցին մեզ: Գայլ Լարսենը մատը նրա շրթներին դրեց որպես լռության նշան, և աչքերը նորից փակվեցին:

Ներքևի անկողնում պառկած էր գեր Լուիսը՝ շոգից քրտնաթաթախ: Նա քնած էր ծանր, անկեղծ մրափով: Երբ Գայլ Լարսենը նրա դաստակը բռնեց, նա անհանգիստ շարժվեց ու կռացավ այնպիսի դիրքով, որ մի պահ մարմինը հենվեց միայն ուսերի և կրունկների վրա: Նույն պահին շրթները շարժվեցին և արտասանեցին հետևյալ առեղծվածային խոսքերը.

— Շիլլինգը մեկ քառորդ արժե, բայց դու ուշադրություն դարձրու երեք պեննի դրամների վրա, թե չէ պանդոկապետը դրանք գոռով վզիդ կփաթաթի քո վեց պենսի փոխարեն:

Ապա մի կողմի վրա շուռ եկավ և խոր հառաչանք արձակելուց հետո շարունակեց.

– Վեց պենսը կոչվում է «թաննրը», շիլլինգը կոչվում է «բոբ», իսկ թե քսանհինգ ստեռլինգանոց թղթադրամը ինչ է կոչվում՝ չգիտեմ:

Համոզված լինելով, որ Լուիսը և հավայացին իսկապես քնած են, Գայլ Լարսենը մոտեցավ նույն կողմի հաջորդ գույգ անկողիններին, որոնցում պառկած էին, ինչպես տեսանք լամպի լույսով, Լիչը և Ջոնսոնը:

Գայլ Լարսենը կռացավ դեպի ներքևի անկողինը, որպեսզի Ջոնսոնի զարկերակը քննի: Ես կանգնած էի լամպը ձեռքիս, երբ տեսա, որ Լիչը բարձրացրեց գլուխը և իր անկողնի եզերքից գաղտագողի ներքև նայեց՝ տեսնելու, թե ինչ է կատարվում: Նա, ըստ երևույթին, գուշակել էր Գայլ Լարսենի հնարքը և հասկացել, որ հայտնաբերումն անխուսափելի է, որովհետև իսկույն լամպը ձեռիցս խլեց, և սենյակը հանկարծ թաղվեց մթուր յան մեջ: Նույն վայրկյանին Լիչը ցած նետվեց՝ Ուղիղ Գայլ Լարսենի վրա:

Խավարում լսվեցին ձայներ, որոնք հիշեցնում էին ցուլի և գայլի ընդհարումը: Լարսենի կոկորդից բարձրացավ մի խուլ, կատաղի բառաչ, իսկ Լիչը մոնչաց, ինչպես հուսահատ, արյան ծարավի մի գազան: Ջոնսոնը իսկույն միացավ Լիչին, և ինձ համար պարզ դարձավ, որ վերջին մի քանի օրերի նրա ստրկահաճ վերաբերմունքը ծրագրված էր միայն խաբելու համար:

Մթության մեջ տեղի ունեցող պայքարն ինձ այնպիսի սարսափ ազդեց, որ սանդուղքին հենված անշարժացա, դողահար, վեր բարձրանալու անկարող: Ես նորից ունեցա սրտախառնության այն զգացողությունը, որ ունենում էի ամեն անգամ, երբ ակնառես էի լինում ֆիզիկական բռնության տեսարանների: Այս դեպքում, ճիշտ է, ոչինչ չէի տեսնում, բայց լսում էի ընդհարումի ձայնը, մարմնին խփվող ուժգին հարվածների խուլ աղմուկը: Ապա լսվեց գրկախառն մարմինների անկման թնոյուն, ծանր շնչառություններ, ցավի կարճ և արագ ճիչեր:

Ըստ երևույթին, ուրիշներն էլ էին մասնակցել նավապետին և օգնականին սպանելու համար կազմակերպված դավադրությանը, որովհետև ձայներից զատելով հասկացա, որ Լիչին ու Ջոնսոնին այժմ միացել են նոր ուժեր:

— Մեկնումեկը թող ինձ դանակ տա,— գոչեց Լիչը:

— Գլխին խփիր և ուղեղը շաղ տուր,— գոռաց Ջոնսոնը:

Բայց Գայլ Լարսենն իր արձակած առաջին բառաչից հետո այլևս ձայն չէր հանում և լուռ ու մռայլ մաքառում էր իր կյանքի համար: Նա նեղն էր ընկել: Ցած գլորվելուց հետո չէր կարողացել ոտքի կանգնել և, հակառակ ահավոր ուժին, զգացի, որ նրա դրությունն անհույս է:

Կովի թափի մասին վառ պատկերացում ունեցա միայն այն ժամանակ, երբ ավելոծվող մարմինների փոթորիկն ինձ տապալեց, և ես ճմլվածք ստացա: Բայց այդ խառնաշփոթության ընթացքում մի կերպ կարողացա սողոսկելով մտնել ներքևի ազատ անկողիններից մեկի մեջ, որը կովադաշտից հեռու էր:

— Բոլորդ այստե՛ղ, բռնել ենք նրան, բռնե՛լ ենք,— գոչեց Լիչը:

— Ո՞ւմ,— հարցրին ոմանք, որոնք, նոր զարթնած լինելով, չէին իմանում, թե ինչ է կատարվում:

— Անիծյալ օգնականին,— խորամանկությամբ պատասխանեց Լիչը շնչակտուր ձայնով:

Այս հայտարարությունն ընդունվեց ուրախության աղաղակներով, և այդ բռնեցից Գայլ Լարսենը գործ ունեցավ յոթ հուժկու նավաստիների հետ: Միայն Լուիսը, կարծում եմ, չմասնակցեց: Խուցը նման էր հափշտակիչի դեմ կատաղած մեղուների փոթորկահույզ փեթակին:

— Հե՛յ, ի՞նչ է կատարվում այդտեղ,— գոչեց Լետիմերը սանդուղքի բացվածքից: Բայց նա զգուշացավ իջնել զրգոված կրքերի մութ դժոխքը, որտեղից բարձրացող աղմուկն էր լսվում միայն:

— Մեկն ու մեկդ դանակ տվեք ինձ, դանա՛կ,— աղերսեց Լիչը, երբ մի պահ մեղմացավ աղմուկը:

Հարձակվողների բազմությունը խառնաշփոթություն էր առաջացրել: Նրանք խանգարում էին իրար, իսկ Գայլ Լարսենը սոսկ մի նպատակ էր հետապնդում՝ կամաց-կամաց սողալով մոտենալ սանդուղքին: Եվ այդ նրան հաջողվեց: Հակառակ խոր մթությանը, ես կարողացա ձայներից դատելով հետևել նրա առաջխաղացմանը: Միայն տիտանը կարող էր անել այն, ինչ նա արեց սանդուղքին հասնելուց հետո: Սանդուղքի աստիճաններից կառչելով, նա կարողացավ իր թևերի ուժի շնորհիվ բարձրանալ հատակից, կանգնել ամբողջ հասակով և, մաքառելով հանդերձ, դանդաղորեն մազլցել վերև, չնայած հարձակվողների խուճբն ամեն կերպ ջանում էր նրան ետ քաշել ու նորից փռել հատակին:

Այս տեսարանի վերջին մասն ինձ հաջողվեց պարզ տեսնել, որովհետև Լետիմերը, ի վերջո, բերել էր մի լապտեր և պահում էր այնպիսի դիրքով, որ լույսը նավասանդուղքի բացվածքից ուղիղ իջնում էր ցած: Գայլ Լարսենը հասել էր սանդուղքի գրեթե գագաթը, բայց ես նրան չէի

տեսնում: Իմ տեղից երևում էր միայն նրան կառչած մարմինների զանգվածը, որը հսկա, բազմոտանի սարդի պես մազլցում էր վերև և ետ ու առաջ ճոճվում նավի տատանումների հետ: Այդ միաձուլվ զանգվածը դանդաղ բարձրանում էր սանդուղքի աստիճաններով: Մի անգամ ցնցվեց և քիչ էր մնում ցած գլորվեր, բայց իր հավասարակշռությունը վերագտնելով, նորից շարունակեց վերելքը:

— Այդ ո՞վ է այնտեղ,— գոչեց Լետիմերը:

Լապտերի լույսի տակ նշմարեցի նրա դեմքը, որ շվարած արտահայտությամբ հակվել էր ներքև:

— Ես եմ, Լարսենը,— ասաց մի խեղդուկ ձայն խմբի միջից:

Լետիմերն իր ազատ ձեռքը մեկնեց: Ներքևից իսկույն մի ձեռք դուրս սլացավ: Լետիմերը բռնեց այն ու վեր քաշեց: Վերջին մի քանի աստիճանի վերելքը կատարվեց արագ թափով: Այնուհետև Գայլ Լարսենի մյուս ձեռքը կառչեց անցքի եզրից: Մարմինների զանգվածը սանդուղքից պոկվեց, բայց առանձին նավաստիներ դեռևս փաթաթվում էին փախչող ոտխին: Մակայն Գայլ Լարսենը նրանց գլուխները խփում էր անցքի սուր եզրին և ոտքերով ուժգին քացիներ տալիս: Նրանք մեկը մյուսի հետևից ցած գլորվեցին: Վերջին ընկնողը Լիչը եղավ: Ամենավերևի աստիճանից նա գլխիվայր գլորվեց հատակին փռված իր ընկերների վրա: Գայլ Լարսենն ու լապտերը անհետացան, և մենք մնացինք մթության մեջ:

Գլուխ տասնհինգերորդ

Նավասանդուղքի բոլորտիքը փռված նավաստիները հիշոցներ ու հառաչանքներ արձակելով կամաց-կամաց ոտքի ելան:

— Լամպը վառեցե՛ք, բթամատս հողից դուրս է ընկել,— ասաց նավաստիներից մեկը՝ Պարսոնսը, թուխ ու մռայլ մի մարդ, որը Ստենդիշի մակույկի նավուղիդն էր, այն մակույկի, որի թիավարը Հարրիսոնն էր:

— Ես լամպը գցել եմ հատակին, ինչ-որ մի անկյունում պետք է լինի,— ասաց Լիչը, նստելով այն անկողնու եզրին, որտեղ թաքնվել էի ես: Խարխալման խշշոցներից ու լուցկիների չխկոցներից հետո վերջապես վառվեց լամպը, որի ծխացող ու աղոտ լույսի տակ բոքիկ ոտքերով մարդիկ շարժվում էին դեսուդեն, և իրենց վերքերը խնամում ու կապում: Ուֆտի-Ուֆտին բռնել էր Պարսոնսի բթամատը, ուժով ձգում էր այն, ապա ետ հրելով՝ ջանում հողի մեջ տեղավորել: Նկատեցի, որ հավայացի նավաստու մատների հողերը ևս վիրավորվել էին և մաշկը ճեղքվել էր այնքան խոր, որ ոսկորները երևում էին: Նա մատները ցույց տվեց ժպտալով և իր գեղեցիկ, ճերմակ ատամները ցուցադրելով բացատրեց, որ դրանք վիրավորվել էին, երբ բռնեցրով խփել էր Գայլ Լարսենի բերանին:

— Ուրեմն այդ դո՛ւ էիր, հա՞, սևամորթ սրիկա,— զայրացած հարցրեց Քելլին՝ իռլանդական ծագումով ամերիկացի նախկին մի բարձող, որը ծովի վրա իր առաջին ուղևորությունն էր կատարում և Քերֆուտի մակույկի թիավարն էր:

Նա դուրս թքեց իր արյունաշաղախ ատամները և սպառնալից դեմքով մոտեցավ Ուֆտի-Ուֆտիին: Հավայացին մեկ ուստյունով խոյացավ դեպի իր անկողինը և երկրորդ ուստյունով առաջ նետվեց՝ մի երկար դանակ շողացնելով ձեռքում:

— Դե, վերջ տվեք, գլուխ եք տանում,— միջամտեց Լիչը: Ակնհայտորեն նա, հակառակ իր ջահելության ու անփորձության, այդ խմբի պարագլուխն էր:— Հեռացի՛ր, Քելլի, և Ուֆտիին հանգիստ թող: Խավարի մեջ նա որտեղի՞ց իմանար, որ այդ դու էիր:

Քելլին մոթմոթալով տեղի տվեց, իսկ հավայացին երախտապարտ ժպիտով պսպղացրեց սպիտակ ատամները: Նա գեղեցիկ էր. նրա մարմնի գծերը գրեթե կանացի քնքշություն ունեին, իսկ խոշոր աչքերի մեջ կար մեղմ ու երազկոտ արտահայտություն, որը հակասում էր կոիվներում նրա վաստակած համբավին:

— Ինչպե՞ս կարողացավ փախչել,— հարցրեց Ջոնսոնը: Նա նստած էր իր անկողնի եզրին, և դեմքն արտահայտում էր խոր հուսահատություն ու թախիծ: Նա դեռ հևում էր հոգնածությունից: Նրա շապիկն ամբողջովին պատառոտվել էր կովի ընթացքում: Վիրավոր այտից արյունը հոսում էր մերկ կրծքի վրա և կարմիր ներկելով սպիտակ զիստը, կաթկթում էր հատակին:

— Կարողացավ, որովհետև, ինչպես քեզ ասել եմ, նա իսկական դև է,— պատասխանեց Լիչը և կատաղած ոտքի կանգնեց: Հուսախաբությունից նրա աչքերը լցվեցին արցունքով:

— Եվ ձեզանից ոչ մեկն ինձ դանակ չտվեց...— ողբում էր նա անդադար:

Բայց մյուս նավաստիներն այժմ վախենում էին գալիք հետևանքներից, այնպես որ ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրան:

— Նա ինչպե՞ս կարող է իմանալ, թե ովքեր էին հարձակվողները, եթե որևէ մեկը չմատնի,— ասաց Քելլին, դաժան հայացքով նայելով շրջապատողներին:

— Հենց առաջին հայացքից կհասկանա,— պատասխանեց Պարսոնսը,— բավական է, օրինակ, որ միայն մի հայացք գցի դեմքիդ:

— Նրան կասես, որ տախտակամածը տեղից վեր նետվելով, ատամներդ դուրս թափեց,— ժպտաց Լուիսը, որը միակ մարդն էր, որ անկողնուց դուրս չէր եկել և հրճվում էր, որ իր մասնակցության մասին վկայող որևէ վերք չուներ:— Սպասեցեք, մինչև որ վաղը նա ձեր մոտքները տեսնի,— քրքջաց նա:

— Կասենք, որ նրան Յոհանսենի տեղը դրեցինք,— ասաց նավաստիներից մեկը:

Մի ուրիշն ավելացրեց.

— Ես գիտեմ, թե ինչ պիտի ասեմ: Կասեմ, թե կովի աղմուկ լսելով, անկողնուց դուրս թռա, բայց քաշածս նեղության համար բռնուցքի մի հարված ստացա կզակիս և դրանից հետո ես էլ մասնակցեցի, առանց իմանալու, թե մթի մեջ ո՞ւմ էի հարվածում կամ ի՞նչ էր կատարվում:

— Եվ կասես, որ ամբողջ ժամանակ կարծում էիր, թե ինձ ես հարվածում,— ասաց Քելլին, որի դեմքը մի պահ պայծառացավ:

Լիչը և Ջոնսոնը չէին մասնակցում այս խոսակցությանը, և պարզ երևում էր, որ ընկերները գիտակցում էին, որ ամենախիստ պատիժը նրանք են կրելու, որ նրանց դրությունն անհույս է, որ նրանց մահ է սպասում: Լիչը ընկերների վախկոտությունը միառժամանակ հանդուրժելուց հետո վերջապես պոռթկաց:

— Դուք ինձ զգվեցնում եք: Մի խումբ փսլնքոտներ եք: Եթե բերաններդ շաղ տալու փոխարեն ձեռքներդ գործի դնեիք, նրա հաշիվը հիմա մաքրված կլիներ: Ինչո՞ւ ոչ մեկդ ինձ դանակ չտվեց, երբ խնդրեցի... Դուք ինձ զգվեցնում եք: Այնպես եք իրար խառնվել, որ կարծես նա ձեզ պիտի սպանի, երբ ձեռքն ընկնեք: Բայց դուք լավ գիտեք, որ նա չի կարող այդ անել: Նրան ձեռնառնել չէ այդ: Այստեղ գործակալներ չկան, որ նրա համար ուրիշ նավաստիներ ճարեն, դուք նրան հարկավոր եք որսորդության համար, և շատ հարկավոր: Ովքե՞ր պիտի թիավարեն, առագաստները պարզեն կամ դեկանիվի առաջ կանգնենք եթե նա ձեզ կորցնի: Սմբողջ փոթորիկը միայն իմ և Ջոնսոնի գլխին է պայթելու: Դեհ, անկողին մտեք և ծածկեցեք ձեր մոտիվները: Ես ուզում եմ քնել:

— Ճիշտ է, ճիշտ է,— արձագանքեց Պարսոնսը,— գուցե մեզ չսպանի: Բայց լավ հիշեցեք իմ խոսքերը, սրանից հետո կյանքը մեզ համար դժոխք է լինելու այս նավի վրա:

Այդ ամբողջ ժամանակամիջոցում ես սարսափով մտածում էի իմ աննախանձելի դրության մասին: Ի՞նչ էր պատահելու ինձ, եթե այս մարդիկ հայտնաբերեին իմ ներկայությունը: Ես չէի կարող դիմադրելով նահանջել և դուրս գալ այստեղից Գայլ Լարսենի պես: Եվ ահա այդ վայրկյանին Լետիմերը սանդուղքի անցքից ինձ կանչեց:

— Հե՛մփ, նավապետը կանչում է քեզ:

— Նա այստեղ չէ,— պատասխանեց Պարսոնսը:

— Այստեղ է,— ասացի ես, դուրս սահելով անկողնուց և ջանալով ձայնս հաստատ ու համարձակ պահել:

Նավաստիներն ապշահար նայեցին ինձ: Նրանց դեմքերն արտահայտում էին վախ և, միառժամանակ, վախից բխող դիվային չարություն:

— Գալիս եմ,— գոչեցի Լետիմերին:

— Ո՛չ, չես գնում,— գոռաց Քելլին, կանգնելով իմ և սանդուղքի միջև, և ձեռքը մոտեցրեց կոկորդիս:— Ա՛խ դու անիծյալ սողուն: Ես քո բերանը մեկընդմիջտ կփակեմ:

— Թո՛ղ նրան,— հրամայեց Լիչը:

— Ո՛չ մի դեպքում,— եղավ զայրալից պատասխանը:

Լիչը, որ նստած էր անկողնի եզրին, տեղից չշարժվեց:

— Քեզ ասում եմ՝ թո՛ղ նրան,— կրկնեց նա, բայց այս անգամ նրա ձայնը հնչեց խիստ ու վճռական:

Իռլանդացին տատանվեց: Ես մի քայլ արի նրա ուղղությամբ, և նա մի կողմ քաշվեց: Երբ հասա սանդուղքին, մի պահ շուտ եկա և հայացքս պտտեցրի այդ վայրագ ու չարացած

դեմքերին, որոնք կիսախավարի միջից նայում էին ինձ: Եվ հոգիս հանկարծ համակվեց խոր կարեկցությամբ: Ես հիշեցի խոհարարի խոսքերը: Աստված որքա՛ն պետք է ատեր նրանց, որ ենթարկեր այսքան տանջանքի:

— Ես ոչինչ չեմ տեսել և ոչինչ չեմ լսել, հավատացեք խոսքիս,— ասացի հանդարտ ձայնով:

— Ես ձեզ ասում եմ, որ նա չի մատնի,— ասում էր Լիչը, երբ ես բարձրանում էի սանդուղքով:— Նա նավապետին սիրում է այնքան, որքան և ես կամ դուք:

Գայլ Լարսենին գտա իր խցում, մերկ ու արյունլվա: Նա սպասում էր և ինձ ողջունեց իր հեզնական ժպիտով:

— Եկեք և գործի անցեք, բժիշկ: Երևում է, այս ճանապարհորդության ընթացքում մեծ փորձ եք ձեռք բերելու: Ես չգիտեմ, թե առանց ձեզ ինչ կլինեք «Ուրվականը», բայց եթե իսկապես ընդունակ լինեի ազնիվ զգացմունքների, ապա կասեի, որ նրա նավապետը խորապես երախտապարտ է ձեզ:

Ես արդեն գիտեի դեղորայքի արկղի պարունակությունը և սկսեցի պատրաստել ինչ որ անհրաժեշտ է, և վառարանի վրա ջուր տաքացրի, որպեսզի վերքերը խնամեմ: Իսկ Գայլ Լարսենը խցում ման էր գալիս, խոսում, ծիծաղում և երբեմն էլ իր վերքերը քննում: Առաջին անգամն էր, որ նրան մերկ էի տեսնում: Նրա մարմինն ինձ խոր հիացմունք պատճառեց: Մարմնի պաշտամունքն իմ թուլություններից չի եղել բնավ, բայց, այնուամենայնիվ, բավականաչափ գեղարվեստական ճաշակ ունեմ գնահատելու համար մարմնի հրաշքը:

Պետք է խոստովանեմ, որ Լարսենի մարմինն ինձ հմայեց իր գծերի կատարելությամբ և, եթե կարելի է այսպես ասել, իր անհարկու գեղեցկությամբ: Քիչ առաջ նավաստիներին տեսել էի ընդհանուր խցում: Նրանցից ոմանք թեև ունեին խոշոր մկաններ, բայց յուրաքանչյուրը ինչ-որ մի թերություն ուներ. կա՛մ մարմնի մի մասը պետք եղածից ավելի էր զարգացած, մի այլ մասը՝ պետք եղածից պակաս, կա՛մ համաչափությունը խախտող մի որևէ ծոռություն, կա՛մ շատ կարճ և կա՛մ շատ երկար ոտքեր: Ոմանք չափազանց ջլուտ էին, ոմանք՝ չափազանց ոսկրոտ, ոմանք էլ փոքրակազմ: Միայն Ուֆտի-Ուֆտին ուներ գեղեցիկ մարմին, բայց այդ գեղեցկությունը ինչ-որ կանացի էր:

Իսկ Գայլ Լարսենը առնական տիպար էր, նրա մարմնի կատարելությունը գրեթե աստվածային էր: Երբ նա քայլում էր կամ ձեռքը բարձրացնում, հոյակապ մկանները ցնցվում ու շարժվում էին ատլասանման մաշկի տակ: Ես մոռացա ասելու, որ նրա թխությունը միայն դեմքին էր: Մինչդեռ մարմինը սկանդինավյան ցեղերին հատուկ սպիտակություն ուներ: Երբ նա ձեռքը բարձրացրեց գլխի վերքը շոշափելու համար, ես նկատեցի, որ թևի մկաններն սպիտակ մաշկի տակ խաղում են ինչպես կենդանիներ: Այդ նույն մկաններն էին, որ մի անգամ քիչ մնաց ինձ մյուս աշխարհն ուղարկելին և իմ աչքերի առաջ սպանիչ հարվածներ էին տվել ուրիշներին: Ես չէի կարողանում հայացքս հեռացնել նրանից. անշարժ կանգնել էի, իսկ ձեռքումս բռնած վիրակապի կծիկը քանդվելով, գլորվում էր հատակին:

Գայլ Լարսենը նայեց ինձ, և միայն այդ ժամանակ անդրադարձա, որ նրան եմ դիտում:

— Աստված ձեզ գեղեցիկ է կերտել,— ասացի ես:

— Իսկապէ՞ս: Ես էլ եմ այդպէս կարծում և հաճախ խորհրդածել եմ, թէ ինչի համար է,—
պատասխանեց նա:

— Նպատակի...— սկսեցի ես:

— Օգտակարությա՛ն,— ընդհատեց նա:— Այս մարմինը ստեղծված է գործելու համար: Այս
մկաններն ստեղծված են, որպէսզի սեղմեն, պատառոտեն ու ոչնչացնեն նրանց, ովքեր
կկանգնեն իմ ճանապարհին: Բայց մտածե՞լ եք արդո՞ք ուրիշ մարդկանց մասին: Նրանք էլ
ունեն այս կամ այն ձևի մկաններ, որոնք ստեղծված են սեղմելու, պատառոտելու և
ոչնչացնելու: Եվ երբ նրանք իմ կյանքին սպառնան, ապա ես նրանց ավելի ուժեղ կսեղմեմ,
ավելի խոր կպատառոտեմ և ավելի լրիվ կոչնչացնեմ: Այստեղ ի՞նչ գործ ունի նպատակը: Բուն
պատճառը օգտակարությունն է:

— Այդ արդեն գեղեցիկ չէ,— առարկեցի ես:

— Ուզում եք ասել, որ կյանքը գեղեցիկ չէ,— ժպտաց նա:— Եվ սակայն պնդում եք, որ
մարմինս գեղեցիկ է կերտված: Ա՛յ, տեսե՛ք:

Նա սրունքներն իրարից հեռացրեց և, ոտքերի մատները ճանկի պէս պրկելով, ճնշեց
հատակին: Եվ ահա նրա մաշկի տակ սկսեցին ցնցվել ու գալարվել մկանների կծիկներ,
հանգույցներ ու գնդեր:

— Շոշափեցե՛ք,— հրամայեց նա:

Մկանները երկաթի պէս կարծր էին: Ես նկատեցի, որ նրա ամբողջ մարմինը կծկվել ու լարվել
էր: Մկանները մեղմորեն շարժվելով ուռչում էին զիստերի շուրջը, կռակի վրա և ուսերի
երկարությամբ: Նա ձեռքերը մի քիչ բարձրացրեց և թևերի մկաններն ամփոփվեցին, ապա
սկսեց մատները հետզհետե ծալել, մինչև որ ձեռքերը ճիրանների տեսք ստացան: Նույնիսկ
աչքերի արտահայտությունը փոխվեց, նրանցում հայտնվեցին կշռադատություն,
զգաստություն և մարտական զգացում:

— Կայունություն, հավասարակշռություն,— ասաց նա, միանգամից թուլացնելով մկանները և
մարմնին հանգիստ դիրք տալով:— Ոտքեր, որոնք ամուր կառչում են գետնին, սրունքներ,
որոնք հաստատ կանգնում են, ձեռքեր, ատամներ ու եղունգներ, որոնցով կարող եմ
պայքարել սպանելու և թույլ չտալու, որ ինձ սպանեն: Նպատա՞կ: Ավելի ճիշտ բառն է
«օգտակարություն»:

Ես չվիճեցի: Իմ աչքերի առաջ տեսնում էի վայրի գազանի մեխանիզմը, որն ինձ վրա գործում
էր նույնքան խոր տպավորություն, որքան կգործեր մի հսկա զրահանավի կամ
անդրատլանտյան շոգենավի մեքենաների տեսքը:

Մտաբերելով նավաստիների խցում տեղի ունեցած կատաղի կռիվը, ես զարմացա, որ
Լարսենի վերքերը մեծ մասամբ թեթև էին: Եվ պետք է հպարտությամբ ասեմ, որ դրանք
խնամեցի մեծ ճարպկությամբ: Բացի մի քանի խոր վերքերից, մնացածները պարզապէս
քերծվածքներ ու ճնկվածքներ էին: Ծովն ընկնելուց առաջ ստացած հարվածից գանգի մաշկը
մի քանի մատնաչափ երկարությամբ ձեղքվել էր: Նրա ցուցմունքներով ես ածիլեցի վերքը
շրջապատող մազերը և, մաքրելուց հետո, կտրեցի: Բացի այդ, զգգգվել էր սրունքի վերնի

մասը, կարծես միսը կծոտել էր մի բուլդոզ: Լարսենը բացատրեց, որ կովի սկզբում նավաստիներից մեկն ատամներով կպել էր սրունքից, որից և կախված մնացել էր մինչև վերջ: Սանդուղքի գագաթը հասնելուց հետո միայն կարողացել էր նրանից պոկվել:

— Ի դեպ, Հենի, ես նկատել եմ, որ դուք խելքը գլխին մարդ եք,— ասաց Գայլ Լարսենը, երբ վերջացրի վիրաբուժական աշխատանքը:— Ինչպես գիտեք, հիմա ես օգնական չունեմ: Սրանից հետո դուք պահակահերթի կկանգնեք, կստանաք ամիսը յոթանասունհինգ դոլլար և նավի վրա բոլորը ձեզ կկոչեն միստր Վան-Վեյդեն:

— Բայց ես նավագնացությունից ոչինչ չեմ հասկանում,— պատասխանեցի ապշած:

— Այդ անհրաժեշտ չէ:

— Ես իսկապես չեմ ձգտում բարձր պաշտոնների: Իմ ներկա համեստ դիրքում անգամ կյանքս անհաստատ է: Ոչ, ես փորձ չունեմ: Միջակությունն էլ, ինչպես տեսնում եք, իր առավելությունն ունի:

Նա միայն ժպտաց, հարցն արդեն լուծված համարելով:

— Ես չեմ ուզում օգնական նշանակվել այս դժոխային նավի վրա,— գոչեցի վրդովված:

Նրա դեմքը իսկույն խստացավ և աչքերը փայլեցին անողորմ արտահայտությամբ: Նա մոտեցավ խցի դռանը և ասաց.

— Իսկ այժմ բարի գիշեր, միստր Վան-Վեյդեն:

— Բարի գիշեր, միստր Լարսեն,— պատասխանեցի թույլ ձայնով:

Գլուխ տասնվեցերորդ

Չեմ կարող ասել, թե օգնականի պաշտոնը ինձ ավելի մեծ բավականություն պատճառեց, քան ամաններ լվանալու տհաճությունից ազատվելը: Բոլորովին անտեղյակ էի օգնականի պարտականություններին և կարող էի շատ սխալներ թույլ տալ, եթե նավաստիները բարյացակամ վերաբերմունք ցույց չտային իմ նկատմամբ: Ես գաղափար չունեի նավասարքերի մասին և նույնիսկ չգիտեի, թե ինչպես պետք է պարզել առագաստները: Բայց նավաստիներն իրենց ցուցմունքներով օգնում էին, և մասնավորապես Լուիսը հիանալի ուսուցիչ եղավ ինձ համար: Իմ ստորադասների հետ որևէ բախում չունեցա:

Որսորդների հետ դրությունն այլ էր: Նրանք առավել կամ նվազ չափով ծանոթ էին ծովին և ինձ վրա նայում էին որպես ծիծաղի առարկա: Ճիշտն ասած, ինձ համար էլ ծիծաղելի էր, որ լինելով բոլոր ծովայինների մեջ միակ ցամաքայինը, դարձել էի նավապետի օգնական: Մակայն ուրիշների կողմից ծիծաղի առարկա դառնալը բոլորովին այլ բան էր: Ես Լարսենին չբողոքեցի, բայց նա ինքը պահանջեց, որ իմ նկատմամբ ամենախիստ կերպով կիրառվի ծովային վարվելակարգը, մի բան, որին խեղճ Յոհանսենը այս աստիճան բնավ չէր արժանացել: Մի շարք նկատողություններից, վեճերից ու սպառնալիքներից հետո նրան հաջողվեց որսորդներին կարգի բերել: Նավի վրա ես բոլորի համար դարձա «միստր Վան-

Վեյդեն», և միայն անպաշտոն հանգամանքներում ինքը՝ Գայլ Լարսենն ինձ անվանում էր «Հեմփ»:

Իսկապես զվարճալի էր: Երբեմն ընթրիքի ընթացքում քամին մի քանի կողմնամաս շեղում էր նավի ուղղությունը, և երբ ես վեր էի կենում, որպեսզի նավասենյակից դուրս գամ, նավապետն ասում էր. «Միստր Վան-Վեյդեն, բարի եղեք դեկանիվը ձախ ուղղելու»: Իսկ ես բարձրանում էի տախտակամած, կանչում Լուիսին և հարցնում, թե ինչ պետք է անել: Նրա ցուցմունքների շնորհիվ մի քանի բուրգերում գործողությունը լրիվ սովորելով, սկսում էի հրամաններ արձակել: Հիշում եմ, որ մի անգամ Գայլ Լարսենը հայտնվեց ճիշտ այն բուրգին, երբ սկսել էի հրամաններ տալ: Նա իր սիգարը ծխելով հանգիստ դիտեց մինչև գործողության ավարտը, ապա նավահարթակի վրա բարձրանալով, մոտեցավ ինձ:

— Հեմփ... ներեցեք... միստր Վան-Վեյդեն, շնորհավորում եմ ձեզ,— ասաց նա:— Ես կարծում եմ, որ այժմ դուք կարող եք ձեր հոր ոտքերը ետ ուղարկել գերեզման: Դուք արդեն գտել եք ձեր սեփական ոտքերը և կարող եք կանգնել նրանց վրա: Եթե մի քիչ ևս սովորեք պարանների գործածությունը, առագաստներ պարզելու ձևը և վարժվեք փոթորիկներին, ապա այս ուղևորության վերջում կկարողանաք որևէ առափնյա երկկայմանավ դեկավարել:

Այդ ժամանակաշրջանում, այսինքն՝ Յոհանսենի մահից մինչև որսի վայրը հասնելը, ես վայելեցի «Ուրվականի» վրա իմ ապրած կյանքի ամենահաճելի օրերը: Գայլ Լարսենը իմ հանդեպ ուշադիր էր, նավաստիներն ինձ օգնում էին, Թոմաս Մագրիջի հետ իմ փոխհարաբերությունն այլևս լարված չէր: Պետք է խոստովանեմ, որ ժամանակի ընթացքում ես իմ նկատմամբ համակվեցի թաքուն հպարտությամբ: Չնայած այն տարօրինակ իրադրությանը, որ ես, ցամաքայինս, հանկարծ դարձել էի նավի երկրորդ պետը, պետք է ասեմ, որ իմ նոր պաշտոնի պարտականությունները լավ էի կատարում: Այդ կարճ ժամանակամիջոցում ես գոհ էի ինձանից և նույնիսկ սկսել էի հաճույք զգալ «Ուրվականի» տատանումներից: Մենք արևադարձային գոտուց ընթանում էինք հյուսիս-արևմտյան ուղղությամբ, դեպի մի կղզյակ, որտեղից պետք է խմելու ջրի նոր պաշար վերցնեինք:

Բայց իմ երջանկությունը անխառն չէր: Դա համեմատաբար նվազ տանջանքների մի շրջան էր, որ սահում էր նախկին մեծ տանջանքների և ապագա մեծ տանջանքների արանքում: Ինչ վերաբերում է նավաստիներին, ապա նրանց համար «Ուրվականը» դարձել էր մի աննկարագրելի դժոխք: Գայլ Լարսենը նրանց հանդեպ լցված էր վրեժխնդրությամբ իր դեմ մահափորձ կատարելու և խցում իր վրա հարձակվելու համար: Նա օր ու գիշեր անդադար և ամեն կերպ ճգնում էր նրանց կյանքը անտանելի դարձնել:

Նա լավ գիտեր մանրուքների նշանակության հոգեբանությունը և մանրուքների միջոցով ստեղծում էր գրգռության առիթներ ու նավաստիներին հասցնում մինչև խելագարության եզրը: Մի անգամ տեսա, թե ինչպես նա Հարրիսոնին անկողնուց հանել տվեց, որպեսզի սխալ տեղ դրված ներկի վրձինը ճիշտ տեղում դնի, իսկ պահակահերթի նավաստիներին խոր քնից արթնացնելով հրամայեց, որ գնան Հարրիսոնի հետևից ու տեսնեն, թե նա ինչպես է կատարում իրեն տրված հրահանգը: Դա, իհարկե, մի չնչին դեպք է, բայց երբ այն բազմապատկվում է հազար ու մի տարբեր ձևերով (որոնք ճարտարորեն հնարվում են Գայլ Լարսենի նման մարդու կողմից), ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի վիճակ է ստեղծվում նավաստիների ներաշխարհում:

Նավաստիները, բնականաբար, տրտնջում էին և հաճախ պոռթկումներ ունենում: Այդպիսի առիթներով տեղում էին բռնեցքի հարվածներ և յուրաքանչյուր անգամ երկու կամ երեք նավաստի վերքեր էին ստանում այն գազանի ձեռքից, որը փաստորեն նրանց տերն ու տիրականն էր: Բայց հնարավոր չէր նրա դեմ որևէ միացյալ գործողություն ձեռնարկել, քանի որ զենքի պահեստները գտնվում էին նավապետի և որսորդների խցերում:

Մասնավորապես Լիչը և Ջոնսոնն էին Գայլ Լարսենի դիվային չարության զոհերը: Տեսնելով Ջոնսոնի դեմքին ու աչքերում դրոշմված խոր թախիծը, սիրտս արյունոտվում էր: Սակայն Լիչի պարագան տարբեր էր: Կովարար գազանի տրամադրությունը նրա մեջ շատ ուժեղ էր: Նա համակված էր այնպիսի անհագ կատաղությամբ, որը ժամանակ չէր թողնում վշտի համար: Նրա շրթները ծամածռվել էին ու ստացել մոնչալու պատրաստ մնայուն մի դիրք: Ամեն անգամ, երբ նա տեսնում էր Գայլ Լարսենին, շրթներից բարձրանում էր, ըստ երևույթին, անգիտակցաբար, ահավոր ու սպառնագին մի մոնչյուն: Ես հաճախ տեսել եմ, որ նա աչքերով հետևում է նավապետին, ինչպես գազանը իր պահապանին, և ատամների միջով խուլ մոնչոցներ արձակում:

Պատահեց, որ մի անգամ օրը ցերեկով ես նրա ուսին դիպա՝ ինչ-որ հրաման տալու համար: Նա մեջքը դարձրել էր դեպի ինձ: Ձեռքիս հպումը զգալով, նա հանկարծ վեր ցատկեց և ետ նայելով մոնչաց: Նա ինձ շփոթել էր ատած մարդու հետ:

Թե՛ Լիչը և թե՛ Ջոնսոնը առաջին իսկ հնարավորության դեպքում կսպանեին Գայլ Լարսենին, բայց այդ հնարավորությունը երբեք չէր ներկայանում: Գայլ Լարսենը բավականին խոհեմ էր: Բացի դրանից, նրանք որևէ հարմար զենք չունեին ձեռքի տակ: Իսկ միայն մերկ կռուվով ոչինչ չէին կարող անել: Ժամանակ առ ժամանակ Գայլ Լարսենը կռվի էր բռնվում Լիչի հետ, որը բռնեցքներով, ատամներով ու եղունգներով դիմադրում էր, ինչպես վայրի կատու, մինչև որ, ի վերջո, ուժասպառ և ուշագնաց, փոխվում էր հատակին: Բայց, այնուամենայնիվ, նա երբեք չէր խուսափում նոր ընդհարումներից: Իր մեջ եղած սատանան մարտահրավեր էր կարդում Գայլ Լարսենի մեջ նստած սատանային: Բավական է, որ տախտակամածի վրա նրանք իրար հանդիպեին, և ահա սկսում էին իրար հայիոյել, մոմռալ, կռվել: Ես տեսել եմ, թե ինչպես Լիչը մի անգամ Գայլ Լարսենի վրա նետվեց առանց պատճառի կամ նախազգուշացման: Մի ուրիշ անգամ, նշան բռնելով, նա նետեց իր ծանր դանակը, որը միայն մի մատնաչափով վրիպեց նավապետի կոկորդից: Մի այլ առիթով, կայմաձողի վերևի հարթակից նա պողպատյա մի կեռ գցեց Գայլ Լարսենի վրա, նավի տատանման ժամանակ այդպիսի նշանառությունը բավականին դժվար առաջադրանք էր, բայց, չնայած դրան, կեռը օդում սուլելով, յոթանասունհինգ ոտնաչափ բարձրությունից վայր ընկավ և նրա սուր ծայրը երկու մատնաչափ խրվեց տախտակամածի կարծր տախտակի մեջ, հազիվ վրիպելով Գայլ Լարսենի գլխից հենց այն պահին, երբ նա դուրս էր գալիս նավասանդուղքի անցքից: Մի անգամ էլ Լիչը ծածուկ մտավ որսորդների խուցը, այնտեղից վերցրեց լցված մի հրացան, բայց երբ պատրաստվում էր դուրս խոյանալ, Քերֆուտը բռնեց ու զինաթափ արեց նրան:

Ես հաճախ զարմանքով մտածել եմ, թե ինչու Գայլ Լարսենը նրան չէր սպանում, որպեսզի մեկընդմիջտ ազատվի նրանից: Նա, ընդհակառակը, միայն ծիծաղում էր և, ըստ երևույթին, հաճույք զգում այդ լարված դրությունից: Այդ վտանգավոր խաղը նրա համար ուներ այն հրապույրը, որը զգում են գազանագուսպները՝ վայրի կենդանիներին ընտելացնելիս:

— Երբ Կյանքը մազից է կախված, ապա դա յուրահատուկ գրգիռ է հաղորդում մարդու,— բացատրեց նա ինձ:— Մարդը բնականից խաղամուլ է, իսկ կյանքը՝ ամենախոշոր խաղագումարը: Եվ որքան մեծ լինի վտանգը, այնքան ավելի խոր կլինի գրգիռը: Ինչո՞ւ ինձ գրկեմ Լիչին մոլեգնության չափ գրգռելու հաճությից: Դրանով ես նրան էլ լավություն եմ անում: Այսպիսով, ծայրահեղ գրգիռը երկուստեք է լինում: Հիմա նրա կյանքը շատ ավելի հարուստ է ապրումներով, քան նավախելում գտնվող որևէ նավաստու կյանքը, թեև նա չի գիտակցում այդ: Նա ունի այն, ինչ մյուսները չունեն, նպատակ, ինչ-որ բան կատարելու և վերջացնելու առաջադրանք, ինձ սպանելու ցանկություն, այն հույսը, որ ինքը կկարողանա ինձ սպանել: Նա ամբողջ հոգով ձգտում է այդ նպատակին: Իսկապես, Հեմփ, նա ամենախոր ապրումներ է ըմբռնիչում: Ես կասկածում եմ, թե արդյո՞ք նա երբևէ ապրել է այսքան ուժգին և այսքան հրատապ կյանքով, և երբեմն անկեղծորեն նախանձում եմ նրան, երբ տեսնում եմ, թե ինչպես կատաղելով հասնում է կրքի ու մոլեգնության բարձունքները:

— Բայց գա ստորություն է, ստորությո՜ւն,— գոչեցի ես:— Որովհետև բոլոր առավելությունները ձեր կողմն են:

— Մեր երկուսից ո՞վ է ավելի ստորը, դո՞ւք, թե ես,— հարցրեց նա լրջությամբ:— Անախորժ դրության դեպքում դուք անմիջապես համաձայնության եք գալիս ձեր խղճի հետ: Եթե իրապես քաջ լինեիք, իրապես անկեղծ լինեիք դեպի ձեզ, ապա կմիանայիք Լիչին ու Ջոնսոնին: Բայց դուք վախենում եք, վախենո՞ւմ: Դուք միայն ուզում եք ապրել: Ձեր մեջ գտնվող կյանքը ճշում է, ամեն գնով ապրել է ուզում: Դուք վարում եք արհամարհելի մի կյանք, որն անհամատեղելի է ձեր լավագույն երազների հետ, դուք մեղանչում եք ձեր բարոյականության ողորմելի կանոնների դեմ և, եթե իրոք գոյություն ունի դժոխքը, ուղիղ դիմում եք այնտեղ: Ես համեմատաբար ավելի քաջ եմ: Ես չեմ մեղանչում, քանի որ հավատարիմ եմ իմ մեջ եղած կյանքի պատվիրաններին: Ես գոնե անկեղծ եմ իմ հոգու հանդեպ, մինչդեռ դուք այդպես չեք:

Նրա ասածների մեջ դառը ճշմարտություն կար: Գուցե, վերջ ի վերջո, ես իրոք ստոր դեր էի խաղում: Եվ որքան խորը մտածեցի այդ մասին, այնքան ավելի համոզվեցի, որ իմ պարտականությունն է հետևել Գայլ Լարսենի խորհրդին, միանալ Լիչին ու Ջոնսոնին և ջանալ նրան սպանել: Այստեղ վճռական դեր խաղաց, կարծեմ, իմ մաքրակրոն նախահայրերի խստաբարո խիղճը, որ երբեմն ջատագովում էր դաժանությունը և արդարացնում նույնիսկ սպանությունը, որպես ճիշտ արարք: Ես կենտրոնացա այդ գաղափարի վրա: Այո՛, բարոյական վեհ գործ կլիներ աշխարհը փրկել մի այսպիսի հրեշից: Այդպիսով մարդկությունը ավելի երջանիկ կլիներ, իսկ կյանքը՝ ավելի քաղցր ու հաճելի:

Ես այս մասին երկար խորհրդածում էի և, անկողնում անքուն պառկած, կշռադատում ողջ իրադրության հետ կապված փաստերի անվերջանալի շարքը: Գիշերային հերթապահությունների ժամանակ, երբ Գայլ Լարսենը լինում էր ներքևում, ես զրույցներ էի ունենում Լիչի և Ջոնսոնի հետ: Նրանք երկուսն էլ կորցրել էին ամեն հույս, Ջոնսոնը՝ իր հուսալքվող բնավորության պատճառով, իսկ Լիչը՝ նրա համար, որ ընդունայն մաքառելով, սպառել էր իր ուժը: Բայց մի գիշեր նա կրքոտությամբ ձեռքս սեղմելով ասաց.

— Ես կարծում եմ, որ դուք ազնիվ մարդ եք, միստր Վան-Վեյդեն: Բայց ձեռք քաշեցեք այս գործից և ձեր բերանը փակ պահեք: Մեր երգը երգված է, ես այդ գիտեմ: Բայց եթե մի օր շատ նեղն ընկնենք, գուցե դուք կարողանաք մեզ օգնել:

Հաջորդ օրը, երբ Ուենրայթ կղզին երևաց հողմընթաց կողմում, Գայլ Լարսենը մարգարեական մի գուշակություն արեց: Նա հարձակվել էր Ջոնսոնի վրա, Լիչը, իր հերթին, հարձակվել էր նրա վրա, և նա նոր էր զգեստնել երկուսին:

— Լի՛չ,— ասաց նա,— դու գիտե՞ս, որ մի օր քեզ պիտի սպանեն:

Նավաստին, որպես պատասխան, միայն մոռաց:

— Իսկ դո՛ւ, Ջոնսոն, այս կյանքից այնքան կզզվես, որ ինքդ քեզ ծովը կնետես, առանց սպասելու, որ ես քո հաշիվը մաքրեմ: Հիշի՛ր իմ այս խոսքերը:

— Սա թելադրանք է,— ավելացրեց նա, դիմելով ինձ:— Եվ ես ձեր մի ամսվա աշխատավարձի վրա գրազ կգամ, որ նա կհետևի այս թելադրանքին:

Հույս ունեի, որ նրա զոհերը փախչելու հնարավորություն կունենան, երբ բոլորը զբաղված լինեն տակառները ջուր լցնելով: Բայց Գայլ Լարսենը լավ տեղ էր ընտրել: «Ուրվականը» խարիսխ գցեց ալեբախության գծից կես մղոն հեռու, մի ամայի ծովափի դիմաց: Ծովակում բացվում էր մի խորունկ կիրճ, շրջապատված հրաբխային սեպ ժայռերով, որոնց վրա անհնար էր մագլցել: Եվ այստեղ, ափ իջած նավապետի անմիջական հսկողության տակ, Լիչը և Ջոնսոնը լցնում էին տակառները և գլորելով ծովեզր հասցնում: Նրանք ոչ մի հնարավորություն չունեին խույս տալու և նետվելու նավակներից մեկնումեկի մեջ:

Սակայն Հարրիսոնը և Քելլին այդ փորձն արեցին: Նրանք կազմում էին նավակներից մեկի անձնակազմը և նրանց պարտականությունն էր երթնեկել երկկայմանավի և կղզու միջև, յուրաքանչյուր անգամ փոխադրելով միայն մեկ տակառ: Ճաշից անմիջապես առաջ, դատարկ տակառով դեպի ծովափ գնալիս, նրանք փոխեցին նավակի ուղղությունը և թեքվեցին ձախ, փորձելով շրջանցել հրվանդանը, որ ծովի մեջ երկարելով, նրանց բաժանում էր փրկությունից: Այնտեղ, փրփրալի ծովափի հետևում, գտնվում էին ճապոնական գաղութաբնակների նկարչագեղ գյուղերն ու գեղածիծաղ հովիտները, որոնք տարածվում էին դեպի կղզու խորքերը: Եթե փախստականներին հաջողվեր ապահով հասնել այնտեղ, ապա Գայլ Լարսենը այլևս ոչինչ չէր կարող անել նրանց:

Ես նկատել էի, որ Հենդերսոնն ու Սմոքը առավոտից ի վեր թափառում էին տախտակամածի վրա, բայց միայն հիմա հասկացա դրա պատճառը: Նրանք հրացանները վերցրին և սկսեցին հանգիստ կրակել փախստականների վրա: Դա նշանառության սառնարյուն մի ցուցադրություն էր: Սկզբում գնդակներն անվնաս թռչկոտում էին մակույկի երկու կողմերում, բայց երբ նավաստիները շարունակեցին խիզախորեն թիավարել, գնդակները հետզհետե ավելի մոտեցան մակույկին:

— Հիմա նայիր, թե ինչպես պիտի ծակեմ Քելլի աջ թիակը,— ասաց Սմոքը, ավելի ուշադրությամբ նշան բռնելով:

Ես նայում էի հեռադիտակով, և երբ նա կրակեց, տեսա, որ թիակը ուժգին ցնցվեց: Հենդերսոնը ևս կրակեց նույն թիակի վրա, և մակույկը պտույտ գործեց իր տեղում: Մնացած երկու թիակներն էլ շուտով ջախջախվեցին: Նավաստիները փորձեցին կոտրած թիակներով թիավարել, բայց դրանք ևս, գնդակոծվելով, դուրս թռան նրանց ձեռքերից: Այն ժամանակ Քելլին պոկեց մակույկի հատակի տախտակներից մեկը և սկսեց դրանով թիավարել, բայց հանկարծ ցավից ճչալով թողեց այն: Գնդակը ծակել էր տախտակը, և փշերը վիրավորել էին նրա ձեռքը: Դրանից հետո նրանք այլևս հրաժարվեցին փախուստի գաղափարից: Եվ մակույկը ինքն իրեն ծփաց ալիքների վրա, մինչև որ Գայլ Լարսենը ցամաքից ուղարկեց մի մակույկ, որը պարանով քաշելով՝ նրան ցամաք բերեց:

Երեկոյան դեմ խարիսխ վերցնելով հեռացանք կղզուց: Դրանից հետո մենք պետք է երեք կամ չորս ամիս շարունակ ծովակատու որսայինք: Այդ հեռանկարն իսկապես շատ մոայլ էր, և ես իմ աշխատանքին լծվեցի ծանր սրտով: «Ուրվականի» վրա կարծես տիրում էր հուղարկավորների տխրություն: Գայլ Լարսենը իր տարօրինակ ու տանջալի գլխացավերից մեկի պատճառով ընկել էր անկողին: Հարրիսոնը վիատ տեսքով կանգնում էր դեկանիվի մոտ և ամբողջ մարմնով հենվում նրան, կարծես ոտքերն անկարող էին պահելու մարմնի ծանրությունը: Մնացած նավաստիները լուռ էին ու մոայլ:

Ես մի անդամ Քելլիին հանդիպեցի նավի առաջամասում: Նա կուչ էր եկել ամբարածածկի վրա, գլուխը ծնկներին հենած, ձեռքը գլխի շուրջը, բոլորովին հուսալքված վիճակում:

Մի ուրիշ անգամ նավացուկի մոտ տեսա Ջոնսոնին, որը հատակին պառկած անթարթ աչքերով դիտում էր ներքևում փրփրացող ալիքները: Այդ վայրկյանին հիշեցի Գայլ Լարսենի մարգարեական թելադրանքը: Այն կարծես սկսել էր ներգործել նավաստու վրա: Ես փորձեցի ցրել նրա մոայլ մտքերը և կանչեցի նրան, բայց նա թախճոտ ժպտաց և տեղից չշարժվեց:

Երբ վերադարձա նավախել, Լիչը մոտեցավ ինձ:

— Ձեզնից մի բան պիտի խնդրեմ, միստր Վան-Վեյդեն,— ասաց նա:— Եթե ձեզ հաջողվի վերադառնալ Ֆրիսկո, բարի եղեք փնտրելու Մաթ Մաք-Քարթիին: Նա իմ հայրն է: Նա կոշկակար է և ապրում է Մեյֆեր հացագործարանի հետևում գտնվող բլրի վրա: Բոլորը գիտեն նրա խանութը, այնպես որ դժվար չէ գտնելը: Ասեք նրան, որ ես զոջացել եմ իմ արածների և նրան պատճառած վշտերի համար... և ասեք իմ կողմից. «Աստված քեզ օրհնի»:

Ես նախ գլխով արեցի, բայց հետո ասացի.

— Մենք բոլորս էլ կվերադառնանք Սան-Ֆրանցիսկո, Լիչ, և դու ինձ հետ կլինես, երբ ես գնամ Մաթ Մաք-Քարթիի մոտ:

— Երանի ձեր ասածը ճիշտ դուրս գա,— ասաց նա, ձեռքս թոթվելով,— բայց չեմ կարող հավատալ: Գայլ Լարսենը ինձ կսպանի, ես գիտեմ: Ես միայն ցանկանում եմ, որ շուտ անի այդ:

Երբ նա հեռացավ, զգացի, որ ինքս էլ նույնն էի ցանկանում: Քանի որ այդ պիտի կատարվեր, գոնե շուտ կատարվեր: Նավում տիրող ընդհանուր թախիծը ազդել էր և ինձ վրա: Ճգնաժամն անխուսափելի էր: Եվ երբ տախտակամածի վրա ժամերով ման էի գալիս, հետզհետե ինձ ավելի ակնհայտ էր դառնում, որ ես սկսել եմ Գայլ Լարսենի նողկալի գաղափարներով

վարակվել: Ի՞նչ էր այս ամենի նպատակը: Ո՞ր կմնար կյանքի վեհությունը, եթե թույլ տրվեր, որ մարդկային հոգիները կործանվեն այսպիսի սանձարձակությամբ: Ուրեմն կյանքը, վերջին հաշվով, էժանագին ու զագրելի մի կատակ է, և որքան շուտ վերջանա, այնքան լավ: Այո՛, վերջ տալ կյանքին: Ես էլ, Ջոնսոնի նման, նավեզրից ցած կռացա ու տենչանքով ծովը դիտեցի, համոզված, որ վաղ թե ուշ պիտի սուզվեմ խորը, խորը, խորը մոռացության ցուրտ ու կանաչ անդունդի մեջ:

Գլուխ տասնյոթերորդ

Տարօրինակ է, որ հակառակ մեր բոլորի ակնկալության, «Ուրվականի» վրա որևէ նշանակալից դեպք չպատահեց: Մենք նավարկեցինք հյուսիս-արևմտյան ուղղությամբ, մինչև հասանք Ճապոնիայի ափերը և հանդիպեցինք ծովակատուների երամին: Ծովակատուները, անձայրածիր Խաղաղ օվկիանոսի չգիտես որ մասից գալով, այժմ կատարում էին իրենց տարեկան գաղթը դեպի հյուսիս, ուր գտնվում է Բերինգյան ծովի ծվարավայրը: Մենք սկսեցինք ծովակատուների հետ դեպի հյուսիս նավարկել, ճանապարհին սպանելով ու ոչնչացնելով նրանց, մորթագերծ դիակները շնաձկներին նետելով և աղելով մորթիները, որպեսզի դրանք հետո մեծ քաղաքների կանանց շնորհագեղ ուտերը զարդարեն:

Դա մի անողոր ջարդ էր, որ կատարվում էր միայն ի սեր կանանց: Ոչ ոք ծովակատվի միսը կամ ճարպը չի ուտում: Հաջող որսորդության օրերի վերջում նավի տախտակամածը ծածկվում էր ճարպից ու արյունից լպրծուն դարձած մորթերով ու մորթագերծ մարմիններով, իսկ նավեզրի ջրատար խողովակներից կարմիր վտակներ էին հոսում: Առագաստները, պարաններն ու նավաբազրիքը ծածկվում էին արյան ցայտուքներով, իսկ նավաստիները, գործի լծված մսագործների պես, արյունաթաթախ ձեռքերով եռանդագին աշխատում էին, դանակով պոկում իրենց սպանած ծովային այդ գեղեցիկ կենդանիների մորթերը:

Իմ պարտականությունն էր հաշվել մակույկներից նավ վախադրվող ծովակատուները, վերահսկել մաշկումի գործողությունը և նայել, որ այդ աշխատանքից հետո նավաստիները տախտակամածը լվանան ու ամեն ինչ նորից կարգի բերեն: Դա տհաճ պարտականություն էր: Թե՛ հոգիս և թե՛ ստամոքսս ընդվզում էին դրա դեմ: Բայց մյուս կողմից բազմաթիվ մարդկանց հրամայելն ու ղեկավարելը մի տեսակ բավարարություն էր պատճառում: Դա նպաստեց իմ կազմակերպչական ընդունակությունների զարգացմանը: Ջգում էի, որ գնալով ավելի պինդ ու տոկուն էի դառնում, մի հանգամանք, որ կարող էր միայն օգտակար լինել «փափկասուն» Վան-Վեյդենի համար:

Մկսում էի հասկանալ, որ այլևս չէի կարող դառնալ առաջվա մարդը: Թեև մարդկային կյանքի նկատմամբ հավատս ու հույսս դեռ դիմադրում էին Գայլ Լարսենի կործանիչ քննադատությանը, բայց, այնուամենայնիվ, նրա ազդեցության տակ մի շարք երկրորդական հարցերի վերաբերյալ իմ հայացքները որոշ փոփոխության ենթարկվեցին: Նա իմ առաջ բացել էր իրական աշխարհը, որի մասին փաստորեն ոչինչ չգիտեի և որից միշտ խուսափել էի: Այժմ ես սովորեցի ավելի մոտիկից դիտել շրջապատի կյանքը, ընդունել, որ աշխարհում կան այնպիսի բաներ, ինչպիսիք են ռեալ փաստերը, դուրս գալ վերացական գաղափարների ոլորտից և արժեքավորել կյանքի կոնկրետ ու օբյեկտիվ երևույթները:

Որսի վայրը հասնելուց հետո Գայլ Լարսենին տեսնելու ավելի շատ առիթներ ունեցաւ: Երբ եղանակը լավ էր և ծովակատուները վիստում էին մեր շուրջը, ամբողջ նավակազմը լինում էր մակույկներում, իսկ նավի վրա մնում էինք նա և ես, ինչպես և Թոմաս Մագրիջը, որին հաշվի չէինք առնում: Բայց մենք էլ պարապ չէինք նստում: Վեց մակույկները երկկայմանավից բաժանվում և հովհարի ձևով իրարից հեռանում էին, մինչև որ հողմընթաց կողմի առաջին և քամու հակընթաց կողմի վերջին մակույկի միջև բացվում էր տասից քսան մղոն տարածություն: Հետո բոլորը առաջանում էին իրար հետ գուգահեռ և միայն մութը կոխելուց հետո կամ եղանակը վատանալու դեպքում ետ էին գալիս: Մեր պարտականությունն էր «Ուրվականը» վարել քամու հակընթաց ուղղությամբ գնացող վերջին մակույկի հետևից, որպեսզի մրրիկի կամ փոթորիկի դեպքում բոլոր մակույկները քամու օգնությամբ կարողանան մեզ մոտենալ:

Երկու մարդու համար այնքան էլ հեշտ գործ չէ «Ուրվականի» նման նավը դեկավարել, մանավանդ ուժեղ քամիների ժամանակ, պարզել կամ հավաքել առագաստները և միաժամանակ հետևել մակույկներին: Այդ ամենը ես պետք է սովորեի, այն էլ շուտով: Ղեկանիվ վարելը հեշտությամբ սովորեցի, բայց կայմաձողի վրա բարձրանալը, ամբողջ մարմնով պարաններից կախված ճռճվելն ու մագլցելը շատ ավելի դժվար էր: Սակայն այդ էլ կարճ ժամանակում սովորեցի, որովհետև ինչ–որ կատաղի ցանկություն ինձ մղում էր բարձրանալ Գայլ Լարսենի աչքում և ցույց տալ, որ ոչ միայն դատողություններով, այլև գործով կարող եմ հաստատել ապրելու իրավունքս: Ես նույնիսկ հրճվանք էի զգում, երբ մագլցում էի կայմի գագաթը և միայն ոտքերով կառչելով նրան, այդ վտանգավոր բարձրությունից հեռադիտակով դիտում ծովը՝ մակույկները գտնելու համար:

Մի պայծառ օր մակույկները սովորականից վաղ մեկնեցին: Նրանք իրարից հեռանալով տարածվեցին անսահման ծովի երեսին, և որսորդների հրացանաձգության աղմուկը հետզհետե մեղմանալով դարձավ գրեթե անլսելի: Արևմտյան կողմից փչում էր շատ թույլ քամի: Մինչև որ մենք նավը շարժման մեջ դրինք, որպեսզի հետևենք հողմի հակընթաց ուղղությամբ գնացող վերջին մակույկին, քամին բոլորովին դադարեց: Կայմի գագաթից տեսա, թե ինչպես վեց մակույկները, որոնք ծովակատուներին հետապնդելով ընթանում էին դեպի արևմուտք, մեկը մյուսի հետևից անհետացան հորիզոնի հետևում: Մենք հիմա անկարող էինք նրանց հետևել: «Ուրվականը» հազիվ տատանվում էր հանդարտ ջրի երեսին: Գայլ Լարսենն սկսեց անհանգստանալ: Բարոմետրը ցած էր իջնում, իսկ արևելյան կողմում երևացող ամպերը նրան դուր չէին գալիս: Նա չնվազող աչալրջությամբ գնում էր երկինքը:

— Եթե այստեղից հանկարծ վրա տա,— ասաց նա,— և ուժեղ փչելով մեզ հեռացնի մակույկներից, ապա որսորդների և նավաստիների անկողիների մեծ մասը այսուհետև դատարկ կմնա...

Ժամը տասնմեկի մոտերքը ծովի մակերեսը հարթ ու ողորկ էր, ինչպես ապակի: Կեսօրին տոթն ուղղակի անտանելի դարձավ, չնայած բավական վեր էինք հյուսիսային լայնությունից: Օդում քամու նշույլ իսկ չկար: Մթնոլորտը ճնշող ու հեղձուցիչ էր, կալիֆորնիացիների արտահայտությամբ՝ «երկրաշարժին նախորդող մթնոլորտ էր»: Այս ամենի մեջ կար ինչ–որ չարագուշակ բան, որն անշոշափելի ձևերով զգալ էր տալիս գալիք աղետը: Արևելյան կողմում ամպերը հետզհետե պատեցին երկինքը և սկսեցին մեզ մոտենալ դժոխային սև լեռների պես: Սրանցում ուրվագծվող կիրճերը, քարայրները, անդունդներն ու ստվերները այնքան պարզ

զանազանվում էին, որ մարդկային աչքն անզգայաբար որոնում էր ալեբախության սպիտակ գիծն ու այն ծովափնյա անձավները, որոնց մեջ կոհակները խուժում են մոնչալով: Իսկ մեր նավը տակավին շարունակում էր մեղմ օրորվել, և քամին դեռ չէր բարձրանում:

— Սա ոչ թե փոթորիկ է,— ասաց Գայլ Լարսենը,— այլ մայր բնությունն է, որ շուտով կկանգնի հետևի ոտքերի վրա և իր ամբողջ ուժով այնպես կոռնա, որ մենք կսկսենք թաքտալ: Ես վախենում եմ, Հեմփ, որ մեր մակույկների կեսը կորցնենք: Լավ կանե՞ք՝ բարձրանաք վերև և թուլացնեք վերնակայմերի առագաստները:

— Բայց եթե այդպես ուժեղ պիտի ոռնա, մենք երկուսով ի՞նչ կարող ենք անել,— հարցրի ես մի տեսակ բողոքի արտահայտությամբ:

— Մենք պետք է օգտագործենք քամու առաջին թափը և մակույկների հետևից գնանք նախքան առագաստների պատռվելը: Դրանից հետո ինչ ուզում է թող լինի: Կայմերը կդիմանան, ես ու դու էլ պետք է տոկանք, թեև այնքան էլ հեշտ չէ:

Օդը դեռ հանդարտ էր: Մենք շտապ ճաշեցինք: Ես անհանգստանում էի տասնութ մարդկանց ճակատագրով, որոնք կորել էին հորիզոնի հետևում, իսկ երկնքում թավալվող ու հետզհետե մոտեցող լեռնանման ամպերը սարսափ էին պատճառում: Գայլ Լարսենը արտաքուստ հանդարտ էր, բայց երբ տախտակամած վերադարձանք, նկատեցի, որ նրա ռունգները ուռել էին, իսկ շարժումները՝ զգալիորեն ավելի արագացել: Նրա դիմագծերը ձգվել ու ստացել էին խիստ արտահայտություն, բայց կապույտ աչքերում, որոնք այդ օրը անսովոր կերպով պայծառ էին, կար ինչ-որ տարօրինակ փայլ, կայծկլտող ու շողացող մի լույս: Ինձ թվաց, թե նա համակված է մի տեսակ վայրի ուրախությամբ, հրճվում է մոտալուտ պայքարի համար և սարսռում այն գիտակցությունից, որ հասել են գերագույն ապրումի բույները, երբ կյանքի մակընթացությունը բարձրանում է ինչպես հեղեղ:

Առանց նկատելու իմ ներկայությունը, հավանորեն, անգիտակցաբար, նա բարձրաձայն ծիծաղեց: Այդ ծաղրական ծիծաղը կարծես մի մարտահրավեր էր, ուղղված մոտեցող փոթորկին: Այսօր էլ դեռ հիշում եմ նրա կերպարանքը, որը կանգնած էր ինչպես «Հազար ու մի գիշերների» թգուկը՝ հսկայատիպ չար ոգու դիմաց: Այո, նա մարտահրավեր էր նետում ճակատագրին ու չէր վախենում:

Հետո նա մոտեցավ խոհանոցի դռանը:

— Խոհարար՝ ը,— ասաց նա,— երբ ամանների ու կաթսաների գործը վերջացնես, հարկավոր կլինես տախտակամածի վրա: Պատրաստ սպասիր իմ կանչին:

Ապա, նկատելով իր վրա ուղղված իմ հիացական հայացքը, ասաց.

— Հե՛մփ, սա ավելի լավ է, քան վիսկին, թեև ձեր Օմար Խայամը այս մասին ոչինչ չի ասել: Ինձ թվում է, որ նա կյանքը լրիվ չի ապրել:

Երկնքի արևմտյան մասն այժմ մթնել էր: Արևը խավարել էր ու չէր երևում: Թեև ցերեկվա ժամը երկուսն էր, բայց մի ցնորական մթնշաղ, որը ծակծկված էր բեկբեկվող ծիրանագույն ճառագայթներով, շրջապատել էր մեզ: Այդ ծիրանագույն մթնշաղի մեջ Գայլ Լարսենի դեմքը հուրհրատել ու բոցավառվել էր, և իմ քրքրված երևակայությանը թվաց, թե նրա գլուխը

շրջանակվել էր լուսապսակով: Մեր շուրջը տիրում էր անսովոր հանդարտություն, մինչդեռ բոլոր նշաններն ու երևույթները ազդարարում էին մոտեցող ահավոր, որոտալից փոթորկի մասին: Հեղձուցիչ տոթը դարձել էր անտանելի: Ճակատս ողողված էր քրտինքով, որը կաթիլ-կաթիլ հոսում էր քթիցս: Հանկարծ ինձ թվաց, թե պիտի ուշաթափվեմ և ձեռքս երկարեցի բազրիքի գերանին՝ հենվելու համար:

Հենց այդ բույսին սզգացի քամու թեթև հեքը, որը արևելյան կողմից եկավ ու անցավ շնչի պես: Թեև պարզած առագաստները չշարժվեցին, բայց դեմքս զգաց այդ հեքը և զովացավ:

— Խոհարար՝ ր,— կանչեց Գայլ Լարսենը ցածր ձայնով:

Թոմաս Մագրիջը ցույց տվեց իր ահաբեկված ու ողորմելի դեմքը:

— Արձակի՛ր և տեղափոխիր կայմաթնի լիսեռապարանը: Երբ առագաստն սկսի ուռչել, թուլացրու թոկասարքը և լիսեռապարանը նորից տեղը դիր: Եթե որևէ սխալ անես, դա կլինի վերջինը քո կյանքում, հասկանալի՞ է:

— Միստր Վան-Վեյդեն, պատրաստ եղեք առաջակայմի առագաստները պարզելու: Դրանից անմիջապես հետո կարելի եղածին չափ շուտ պարզեք վերնակայմի առագաստները: Որքան արագ շարժվեք, գործն այնքան հեշտ կլինի: Իսկ եթե խոհարարը դանդաղի, խփեք նրա ռեխին:

Ես զգացի նրա խոսքերում թաքնված մեծարանքը, և ինձ դուր եկավ հատկապես այն, որ ինձ տրված հրահանգներին սպառնալիքներ չէին ընկերանում: Նավի ցռուկը դարձած էր դեպի հյուսիս-արևմուտք, իսկ Գայլ Լարսենի նպատակն էր «Ուրվականին» հողմընթաց ուղղություն տալ քամու հենց առաջին թափից:

— Քամին փչելու է նավի հետևից,— բացատրեց նա ինձ:— Իսկ հրացանների վերջին կրակոցներից դատելով՝ նավակներն ուղղվում էին դեպի հարավ:

Նա շուտ եկավ և մոտեցավ ղեկանիվին, իսկ ես գնացի առաջամասը և կանգնեցի եռանկյուն առագաստի մոտ: Նորից քամու մի թույլ շունչ անցավ, հետո՝ մի շունչ ևս: Առագաստը թեթևակի սկսեց թփթփալ:

— Փա՛նք աստծո, որ մրրիկը միանգամից ամբողջ թափով չի մոտենում, միստր Վան-Վեյդեն,— բացականչեց խոհարարը սրտաբուխ ջերմությամբ:

Նույնքան ուրախ էի և ես, որովհետև արդեն բավական փորձ ունենալով հասկանում էի, որ հանկարծակի մրրիկը խիստ աղետալի կլինի պարզած առագաստներով նավի համար: Քամին մի քիչ ուժեղացավ, առագաստները փքվեցին, և «Ուրվականն» սկսեց շարժվել: Գայլ Լարսենը ղեկանիվը պտտեցրեց դեպի ձախ, և մենք սկսեցինք ավելի արագ ընթանալ: Քամին այժմ փչում էր ուղիղ նավի հետևից և հետզհետե ուժեղանում էր: Առաջամասի առագաստներն սկսեցին աղմուկով թփթփալ: Ես չէի տեսնում, թե ինչ է կատարվում տախտակամածի մյուս մասում, բայց զգում էի, որ երբ առաջակայմի առագաստները քամուց ուռչում էին, նավն ամեն անգամ հանկարծակի բարձրանում ու թեքվում էր մեկ կողմի վրա: Ես զբաղվեցի եռանկյուն առագաստներով, ու երբ այդ պարտականությունը վերջացավ, «Ուրվականը» արդեն սլանում էր հարավ-արևմտյան ուղղությամբ, քամին փչում էր հետևից,

և բոլոր առաքաաստները հակված էին գեպի աջ: Չնայած ծանր աշխատանքից սիրտս խփում էր մուրճի պես, առանց մի բռպե հանգստանալու արագ մագլցեցի վերև և նախքան քամու ուժեղանալը հավաքեցի վերնակայմի առաքաաստները: Հետո գնացի նավախել նոր հրահանգներ ստանալու:

Գայլ Լարսենը գլխով հավանության նշան արեց և ինձ հանձնեց ղեկանիվը: Հոդմը գնալով ուժեղանում էր և ծովը ալեկոծվում: Մոտավորապես մի ժամ կանգնեցի ղեկանիվի վոտ, բայց վարելը հետզհետե ավելի դժվարանում էր: Ես այնքան փորձ չունեի, որ կարողանայի ղեկանիվը վարել այսպիսի եղանակին:

— Հիմա վեր բարձրացեք և հեռադիտակով փնտրեցեք մակույկները: Մենք անցել ենք առնվազն տասը հանգույց և հիմա գնամ ենք տասներկուսից տասներեք հանգույցի արագությամբ: Իմ պառավ «Ուրվականը» գիտե արագ քայլել...

Որպես դիտարան ընտրեցի առաջակայմի ամենավերևի հարթակը, որը յոթանասուն ոտնաչափ բարձր էր տախտակամածից: Հետագոտելով իմ առջև փոված ծովի դատարկ տարածությունը, լրիվ գիտակցեցի, որ պետք է շատ շտապենք, եթե ուզում ենք փրկել մեր մարդկանց: Ալեկոծ ծովը դիտելիս տարակուսում էի, որ որևէ մակույկ մնացած լինի: Ինձ անհնար էր թվում, որ մակույկի պես դյուրաբեկ կառույցը իրոք կկարողանա դիմանալ մոլեգնած ջրին ու քամուն:

Ես չէի կարող զգալ հողմի ամբողջ թափը, քանի որ նրա ուղղությամբ էինք ընթանում: Բայց երբ իմ բարձր դիտարանից ներքև նայեցի, մի պահ թվաց, թե գտնվում եմ «Ուրվականից» դուրս և հեռվից եմ նայում նրան: Սլացող նավի շրջագծերը հստակորեն սահմանազատվում էին փրփրացող ալիքներից: Երբեմն նա ճեղքում էր լեռնանման մի կոհակ, և այն ժամանակ նրա թեքված եզրը դառնում էր անտեսանելի, իսկ տախտակամածը մինչև նավամբարների դռնակները ողողվում էր ջրով: Ամեն անգամ, երբ նավը թեքվում էր մեկ կողմից մյուսը, ես օդում շմեցուցիչ արագությամբ աղեղնաձև թռիչք էի գործում և թվում էր, թե գտնվում եմ դեպի վեր շրջված հսկա մի ճոճանակի վրա, որի տատանումների լայնությունը երբեմն հասնում էր յոթանասուն ոտնաչափի: Այս գլխապտույտ տատանումներից մեկի ընթացքում հոգիս սարսափով լցվեց և ես ձեռքով–ոտքով փաթաթվեցի կայմին: Թուլացած և դողդոջուն՝ այլևս չէի կարող կորած մակույկները փնտրել կամ որևէ բան տեսնել ծովի երեսին: Միայն լսում էի, թե ինչպես ծովը մոնչում էր, սպառնալով կուլ տալ «Ուրվականը»:

Սակայն ինձ ուշքի բերեց այն միտքը, թե մեր մարդկանց կյանքը վտանգի տակ է: Եվ ինձ անտեսելով, սկսեցի նրանց որոնել: Մի ամբողջ ժամ ոչինչ չտեսա, բացի ամայի ծովից: Բայց լույսի մի շերտ հանկարծ լուսավորեց ծովը, նրա մոլեգնած մակերեսին հաղորդելով արծաթյա երանգ, և նույն պահին նկատեցի ինչ–որ փոքր սև բիծ, որը սլացավ լեռնացող մի կոհակի գագաթը, հետո իսկույն անհետացավ նրա գոգում: Ես համբերությամբ սպասեցի: Սև բիծը դարձյալ երևաց կատաղած ալիքների մեջ, նավի ցռուկից երկու կողմնամաս դեպի ձախ: Չփորձեցի ձայն տալ, բայց ձեռքի շարժումով այդ մասին հաղորդեցի Գայլ Լարսենին: Նա փոխեց նավի ուղղությունը, և երբ սև բիծը հայտնվեց ուղիղ մեր դիմաց, ես ձեռքով հաստատական նշան արեցի:

Փոքրիկ բիծը այնքան շուտով մեծացավ, որ առաջին անգամ լրիվ պատկերացում ունեցա մեր ընթացքի արագության մասին: Գայլ Լարսենը նշան արեց, որ ներքև իջնեմ: Երբ ես դեկանիվի մոտ նրա կողքին կանգնեցի, նա հրահանգ տվեց, որ նավը կանգնեցնենք:

— Հիմա ամբողջ դժոխքը կարող է փուլ գալ մեզ վրա,— զգուշացրեց նա,— բայց դրան ուշադրություն մի դարձրեք: Դուք միայն ձեր պարտականությունը կատարեցեք և նայեք, որ խոհարարը առաջակայմի թոկասարքից չհեռանա:

Տախտակամածի աջ և ձախ կողմերը հավասարապես ողողված էին ջրով, այնպես որ առաջամաս գնալու համար ճանապարհ ընտրելու հարց չծագեց: Մի կերպ տեղ հասնելուց հետո Թոմաս Մագրիջին բացատրեցի իր անելիքը և ապա կայմապարանով մի քանի ոտնաչափ վերև մագլցեցի: Մակույկը հիմա արդեն շատ մոտ էր, և պարզ տեսնում էի, որ ցռուկը քամու դեմ դարձրած՝ նա ծփում էր տեղում, որպես խարիսխ ունենալով կայմն ու առագաստը, որոնք ծով էին գցվել այդ նպատակով: Մակույկում գտնվող երեք հոգին ջուր էին դատարկում: Յուրաքանչյուր բարձրացող ալիք նրանց ծածկում էր տեսողությունից, և ես սրտատրոփ սպասում էի, վախենալով, որ գուցե նրանք երբեք չհայտնվեն: Բայց մակույկը հանկարծ նորից էր հայտնվում փրփրացող ալիքների գագաթին՝ ցռուկը դեպի վեր, այնքան ուղղահայաց դիրքով, որ կարծես կանգնում էր իր մութ ու թաց հետույքի վրա: Հետո գլխիվայր թավալվում էր ջրային անդունդի մեջ: Այդպիսի ակնթարթային պահերին մակույկի ներքնամասը երևում էր իր ամբողջ երկարությամբ, և հայացքս ընդգրկում էր երեք մարդկանց, որոնք խելահեղ աճապարանքով ջուր էին դատարկում: Ամեն անգամ մակույկի հայտնվելը ինձ հրաշք էր թվում:

«Ուրվականը» հանկարծ ընթացքը փոխեց ու սկսեց հեռանալ: Ես սարսափով մտածեցի, որ Գայլ Լարսենը, դրությունն անհույս համարելով, հրաժարվել է մակույկները փրկելու մտքից, բայց հետո կռահեցի, որ նա փորձում էր նավը կանգնեցնել: Շտապեցի իջնել տախտակամած, որպեսզի պատրաստ լինեմ օգնելու: Քամին այժմ դեմից էր, իսկ մակույկը՝ մեր առջև, բայց բավականին հեռու: Ես մեկեն զգացի, որ նավն իր հավասարակշռությունը վերագտել է, իսկ նրա արագությունը՝ ավելացել: Նա սկսեց տեղում ճփալ՝ քիթը քամուն դարձրած:

Երբ նավը բոլորովին ուղիղ դիրք ստացավ, քամին, որից մենք մինչ այդ խուսափում էինք, ուժեղ թափով հարձակվեց մեր վրա: Անփորձ լինելով, ես դժբախտաբար դեմքս դարձրել էի դեպի քամին: Նա վրա հասավ ինչպես մի թանձր պատնեշ և թոքերս լցրեց օդով, որը չէի կարող արտաշնչել: Շնչահեղձությունից խեղդվում էի, երբ հանկարծ «Ուրվականը» թեքվեց մի կողմի վրա, և ես տեսա, որ մի վիթխարի ալիք կանգնել է իմ գլխավերևում: Իսկույն շուտ եկա և, շունչս պահած, նորից նայեցի: Ալիքը հակվել էր «Ուրվականի» վրա: Ես շեշտակի նայեցի նրան: Արևի լույսը շողում էր գագաթին, իսկ լուսաթափանց, կանաչավուն գոգի խորքում երևում էին կաթնանման փրփուրի շերտեր:

Կռակը փուլ եկավ նավի վրա և ստեղծեց մի դժոխային խառնաշփոթություն: Ամեն ինչ կատարվեց միանգամից: Ես ստացա մի ջախջախիչ հարված, որն զգացի ամբողջ մարմնիս վրա, և հատակին փռվելով թաղվեցի ջրի տակ: Նույն պահին մտքովս անցավ, որ հենց սա է այն սոսկալի վախճանը, որի մասին երբեմն լսել էի, չքանալ ծովում... Հարվածի ուժգնությունից դետուղեն գլորվեցի, մինչև որ այլևս չկարողացա շունչս պահել և աղի ջուրը շնչեցի թոքերիս մեջ: Բայց այդ ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի բուրբեղ չմոռացա, որ պետք է

առաջակայմի եռանկյուն առագաստը դեպի հողմընթաց կողմն ուղղեմ: Ես մահից չէի սարսափում և համոզված էի, որ մի կերպ կփրկվեմ: Գայլ Լարսենի հրամանը իմ աղոտված գիտակցության մեջ հնչում էր անդադար, և մի պահ թվաց, թե նա ղեկանիվի մոտ կանգնած մաքառում է թավալվող վայրի ալիքների ու մոլեգին փոթորկի դեմ, ջանալով իր կամքը պարտադրել տարերքին:

Հորձանքը կատաղությամբ ինձ զարկեց ինչ-որ բանի, որը, ըստ երևույթին, նավաբազրիքն էր: Ես նորից շունչ քաշեցի և այս անգամ թոքերս լցվեցին մաքուր օդով: Երբ փորձեցի կանգնել, գլուխս ինչ-որ տեղ խփեցի և նորից ընկա չորեքթաթ: Ալիքը ինձ քշել էր առաջամասի հարթակի ներքև: Սողալով մագլցելիս ես անցա Թոմաս Մագրիջի վրայով, որը կծկված տնքում էր: Բայց նրանով զբաղվելու ժամանակ չունեի: Հարկավոր էր նախ առագաստն ուղղել:

Երբ տախտակամած դուրս եկա, ինձ թվաց, թե մեր վերջն արդեն հասել է: Ամեն կողմից լսվում էին տախտակների ճարճատյուն, երկաթների զնգոց, պատովող առագաստների շառաչ: «Ուրվականը» քայքայվում ու խորտակվում էր: Առաջակայմի վերևի ու ներքևի առագաստները, որ մենք թուլացրել էինք, որպեսզի քամուց ուռչեն և ժամանակ չէինք ունեցել պարանով կայմին փաթաթելու, այժմ թփթփում ու պատովում էին, իսկ ծանր կայմաթևը, շրխկալով, մեկ նավակողից մյուսին էր խփում: Օդում թռչկոտում էին քանդված բեկորներ, իսկ պոկված պարաններն ու թոկերը սուլելով գալարվում էին օձերի նման: Ի լրումն այս ամենի՝ ցոկակայմն էլ շրխկոցով ընկավ տախտակամածի վրա:

Այն ընկավ ինձնից հագիվ մի քանի մատնաչափ հեռու, և այդ հանգամանքն ինձ մղեց արագ գործելու: Գուցե դրությունը անհուսալի չէր: Ես հիշեցի Գայլ Լարսենի նախազգուշացումը: Նա ակնկալում էր, որ ամբողջ դժոխքը փուլ կգա մեր վրա, և այդ իրոք կատարվել էր: Բայց որտե՞ղ էր այժմ ինքը՝ Լարսենը: Հանկարծ նկատեցի, որ հզոր մկանները գործի լծած՝ նա հավաքում է միջնակայմի մեծ առագաստը: Հենց այդ պահին նավի խելամասը վերև բարձրացավ, և նրա կերպարանքն ուրվագծվեց մի հսկա ալիքի դեմ: Այս ամենը, և ավելին՝ քառսի և կործանման մի ամբողջ աշխարհ, ես տեսա, լսեցի ու գիտակցեցի ընդամենը տասնհինգ վայրկյանի ընթացքում:

Առանց նայելու, թե ինչ է պատահել մակույկին, ես նետվեցի դեպի եռանկյուն առագաստի թուլասարքը: Առագաստը թփթփում էր, մեկ՝ օդով լցվում, մեկ՝ դատարկվում ուժգին շաշուններով: Ամբողջ ուժս լարելով սկսեցի թոկն աստիճանաբար ձգել. ամեն անգամ, երբ առագաստը թուլանալով կախվում էր, նորից ձգում էի թոկը և պտտեցնելով ամրացնում: Ես անում էի, ինչ կարող էի: Թոկն այնքան ուժեղ էի քաշում, որ ի վերջո մատներիս ծայրերը պլոկվեցին. դեռ շարունակում էի իմ աշխատանքը, երբ վերևի երկու փոքր առագաստները հանկարծակի պայթեցին և աղմուկով ծովն ընկան:

Բայց ես շարունակում էի ձգել, և ամեն անգամ, երբ առագաստը մի քիչ դատարկվում էր, թոկի թուլացած մասը կրկնակի պտույտով փաթաթում էի կայմին: Այնուհետև թոկն սկսեց ավելի հեշտությամբ տեղի տալ: Գայլ Լարսենը օգնության հասավ: Նա թոկը ցած էր քաշում, իսկ ես փաթաթում էի թուլացած մասը:

— Պինդ ամրացրեք,— գոչեց նա,— հետո եկեք ինձ հետ:

Նրան հետևելիս նկատեցի, որ չնայած տիրող ավերածությանը, նավում ինչ-որ չափով կարգը պահպանվել էր: «Ուրվականը» ծփում էր տեղում: Նա դեռ ի վիճակի էր պայքարելու և պայքարում էր: Թեև մնացած առագաստները պոկվել ու քանդվել էին, բայց եռանկյուն առագաստը, որը դուրս էր բերված նավի հողմընթաց կողմը, և միջնակայմի մեծ առագաստը, որը լրիվ պարզված էր, անվնաս էին մնացել և կարողանում էին նավի ցռուկը պահել մոլեգնած ալիքների դեմ:

Մինչդեռ Գայլ Լարսենը կարգի կբերեր ամբարձիչ կռունկը, ես աչքերով փնտրեցի մակույկն ու տեսա, որ նա գտնվում է մի հսկա ալիքի գագաթին, մեզնից հազիվ քսան ոտնաչափ հեռու, հողմադերձ կողմում: Գայլ Լարսենը հաշվել ու գործել էր այնքան ճշգրիտ, որ նավը ծփալով շարժվում էր ուղիղ դեպի մակույկը: Մնում էր միայն ամբարձիչ սարքի թուղթերն իջեցնել, մակույկը երկու ծայրերից կեռերով բռնել ու նավ բարձրացնել: Սակայն այդ գործողությունը իմ նկարագրածի չափ հեշտ չկատարվեց:

Մակույկի ցռուկին նստած էր Քերֆուտը, մեջտեղում՝ Քելլին, իսկ խելամ ասում՝ Ուֆտի-Ուֆտին: Երբ ավելի մոտեցանք, նավը սահեց ջրի գոգավորության մեջ, իսկ մակույկը հետզհետե բարձրացավ ալիքի գագաթը, մինչև որ ճիշտ իմ վերևում ես տեսա երեք ծովայիններին, որոնք գլուխները վար հակած՝ նայում էին մեզ: Հետևյալ վայրկյանին նավն էր վերև խոյանում, մինչդեռ մակույկը սահում էր անդունդի մեջ: Ինձ թվաց, թե հաջորդ անգամ «Ուրվականը» անխուսափելիորեն կխփի ու կխորտակի այդ փոքրիկ ձկակեղևը:

Բայց ամենապատեհ վայրկյանին ես ձեռքիս թուղթ նետեցի Ուֆտի-Ուֆտին, իսկ Գայլ Լարսենն իր ձեռքինը նետեց Քերֆուտին: Թուղթերի կեռերը իսկույն ամրացվեցին և երեք մարդիկ, հարմար ընտանիք, միաժամանակ նետվեցին նավի վրա: Երբ «Ուրվականի» թեքված եզրը հեռացավ ջրի մակերեսից, մենք մակույկն զգուշությամբ վեր քաշեցինք և տախտակամածի վրա պառկեցրինք շրջված դիրքով: Ես նկատեցի, որ Քերֆուտի ձախ ձեռքից արյուն է հոսում: Նրա միջնամատը ճմլվել էր մինչև ոսկորը: Բայց նա ցավի ոչ մի նշան ցույց չտվեց և աջ ձեռքով մեզ օգնեց մակույկն իր տեղում կապելու:

— Ուֆտի՛, պատրաստվիր եռանկյուն առագաստը տեղափոխելու, — հրամայեց Գայլ Լարսենը հենց այն վայրկյանին, երբ դեռ նոր էինք մակույկը կապել: — Քելլի՛, շտապիր խելամաս և թուլացրու միջնակայմի առագաստի թուկասարքը: Իսկ դու, Քերֆուտ, ցռուկ գնա և տես, թե ինչ է պատահել խոհարարին: Միստր Վան-Վեյդեն, նորից բարձրացեք կայմահարթակ և ճանապարհին կտրեցեք բոլոր ավելորդ պարանները:

Այս հրամաններն արձակելուց հետո նա վագրի ոստումներով խոյացավ դեպի դեկանիվը: Մինչ ես կայմապարանով մագլցում էի վերև, «Ուրվականն» սկսեց դանդաղ շարժվել քամու հակընթաց ուղղությամբ: Բայց երբ նորից ալիքի գիրկը սուզվեցինք և նավը ողողվեց, այլևս ոչ մի առագաստ չէր մնացել, որ ջուրը տանի: Ես դեռ չէի հասել կայմահարթակ, և քամու ուժգնությունից մարմինս այնպես էր կպել թուկասարքին, որ գրեթե անհնար էր վայր ընկնել: Այդ պահին «Ուրվականը» հանկարծ այնպիսի խոր թեքում ունեցավ, որ կայմերը միանգամից հավասարվեցին ջրի մակերեսին: Ես հայացքս ուղղեցի դեպի նավի տախտակամածը, որը գտնվում էր ոչ թե իմ ներքև, այլ ինձ հավասար մակարդակի վրա: Բայց տախտակամածն անհետացել էր կատաղորեն թավալվող մի ալիքի տակ: Ջրից դուրս էին ցցվել միայն երկու կայմ, և ուրիշ ոչինչ: Ջրի տակ մի վայրկյան թաղված մնալուց հետո «Ուրվականը» սկսեց

աստիճանաբար դուրս գալ: Կողմնակի ճնշումից ազատվելով և կամաց-կամաց ուղղվելով, նա ջրից դուրս ցցվեց, ինչպես կետը ցցում է իր մեջքը, ջրի երես բարձրանալիս:

Այնուհետև նա սրընթաց սլացավ մոլեգնած ալիքների միջով, մինչ ես, ճանճի նման կայմահարթակին թառած, փնտրում էի մյուս մակույկները: Կես ժամ հետո նկատեցի մի շրջված մակույկ, որից հուսահատորեն կառչել էին Ջոք Հոռները, գիրուկ Լուիսը և Ջոնսոնը: Այս անգամ ես մնացի վերևում: Գայլ Լարսենին հաջողվեց նավը կանգնեցնել առանց վթարի ենթարկելու: Առաջվա նման «Ուրվականը» ծփալով մոտեցավ մակույկին: Նավաստիները թոկերն ամրացրին ու դրանց ծայրերը նետեցին աղետյալներին, որոնք կապիկների նման մագլցելով, ցատկեցին նավեզրը: Երբ մակույկը բարձրացնում էին վերև, նա ուժեղ խփվեց նավի կողին ու ջախջախվեց: Բայց նավաստիներն ապահով կապեցին այն, քանի որ կարելի էր հետագայում նորոգել:

«Ուրվականը» դարձյալ քշվեց մրրիկից, և այս անգամ այնպես թաղվեց ջրի մեջ, որ մի պահ թվաց, թե այլևս ջրի երեսը չի բարձրանա: Նույնիսկ ղեկանիվը, որը ղեկորդի գոտկատեղից շատ ավելի բարձր է, լրիվ ծածկվեց ջրով: Այդ պահին զարմանալիորեն մենակ զգացի ինձ աստծո հետ: Ինձ թվաց, թե մենակ եմ նրա հետ և դիտում եմ նրա ցասման քառսը: Բայց ղեկանիվը նորից երևաց և ես նշմարեցի Գայլ Լարսենի լայն ուսերը: Ղեկանիվի մատները պինդ սեղմած՝ նա նավին պարտադրում էր ընթանալ իր ուզած ուղղությամբ և, որպես երկրային մի աստված, ետ էր մղում հարձակվող ալիքները, տիրապետում փոթորկին, ծառայեցնում այն իր նպատակին: Օհ, ի՛նչ հրաշք, իսկապես, ի՛նչ հրաշք է այն փաստը, որ չնչին մարդ արարածը կարող է ապրել, շնչել, գործել և կատաղած վիթխարի տարերքի դեմ վարել փայտե ու կտավե մի դյուրաբեկ շինվածք:

«Ուրվականը» նորից դուրս եկավ ալիքի գոգից, մեջքը վերև, բարձրացրեց և խոյացավ ոռնացող քամու դեմ: Արդեն ժամը հինգն անց էր կես: Կես ժամ հետո, երբ օրն աստիճանաբար անհետանում էր աղոտ ու չարաշուք մթնշաղի մեջ, ես նշմարեցի երրորդ մակույկը: Այն ևս շրջված էր, Բայց շուրջը ոչ ոք չէր երևում: Գայլ Լարսենը կրկնեց իր մանևրը, նախ հեռացավ, ապա շուտ եկավ հողմընթաց ուղղությամբ և թողեց, որ նավը ծփալով մոտենա մակույկին: Բայց այս անգամ նա մոտ քառասուն ոտնաչափ սխալ կատարեց և մակույկն անցավ խելամառի կողքով:

— Համար չորս մակույկն է,— դռնեց Ուֆտի-Ուֆտին, որի սուր աչքերը իսկույն կարդացին համարն այն ակնթարթում, երբ մակույկը բարձրացավ փրփուրների տակից:

Դա Հենդերսոնի մակույկն էր, նրա հետ կորել էին Հովիտը և Վիլյամսը, որը հեռավոր ծովերում նավարկող նավաստիներից էր: Նրանք, անկասկած, կորել էին, Բայց մակույկը մնացել էր անվնաս: Գայլ Լարսենը մի վերջին հուսահատ ճիգ էլ գործ դրեց այն փրկելու համար: Ես կայմահարթակից իջել էի տախտակամած և տեսա, թե ինչպես Հոռները և Քերֆուտը ապարդյուն կերպով առարկում էին այդ փորձի դեմ:

— Տերը վկա՛, չեմ թողնի, որ մրրիկն ինձանից խլի մակույկս, անգամ եթե դժոխքից փչի,— գոռաց Գայլ Լարսենը և, չնայած մենք մոտ էինք կանգնած, նրա ձայնը հնչեց այնքան թույլ ու հեռավոր, կարծես գալիս էր անսահմանությունից:

— Միստր Վան-Վեյդեն,— գոչեց նա, և ինձ թվաց, թե փոթորկի մոնչոցի միջով ինչ-որ շնչոյուն եմ լսում։— Կանգնեցե՛ք եռանկյուն առագաստի մոտ, Ջոնսոնի և Ուֆտիի հետ։ Իսկ դուք՝ մնացածներդ, շտապեցեք միջնակայմի մեծ առագաստի մոտ և արագ... եթե չեք ուզում, որ ձեզ ուղարկեն հանդերձյալ աշխարհը։ Հասկանալի՞ է։

Երբ նա դեկանիվը պտտեցնելով նավի քիթը շրջեց, որսորդներին ուրիշ բան չմնաց անել բացի հնագանդելուց և ջանալուց, որ վտանգավոր ձեռնարկը հաջողությամբ գլուխ բերվի։ Վտանգի ահագնությունը միայն այն ժամանակ ըմբռնեցի, երբ նորից թաղվեցինք ալիքի տակ, և ես հագիվ կարողացա կառչել առաջակայմի ներքնի գերանից։ Բայց մատներս իսկույն թուլացան և ես, նավեզրից սահելով, ընկա ծովը։ Ես լողալ չգիտեի, բայց դեռ ջրի մեջ չսուզված՝ մի նոր ալիք ինձ նետեց ուղղակի տախտակամածի վրա։ Նույն վայրկյանին մի ուժեղ ձեռք ինձ բռնեց, և երբ «Ուրվականը» նորից ջրի երեսը բարձրացավ, տեսա, որ իմ կյանքով պարտական եմ Ջոնսոնին։ Նա անհանգստացած նայում էր շուրջը, և ես նկատեցի, որ Քելլին, որը վերջին րոպեին եկել էր առաջամաս, անհետացել է։

Քանի որ մակույկը խուսափել էր մեզնից և այլևս հնարավոր չէր երկկայմանավր բերել առաջվա դիրքին, Գայլ Լարսենը ստիպված եղավ դիմել ուրիշ միջոցառումի։ Նա նավը քշեց քամու ուղղությամբ և ապա, դարձնելով, նրա ձախ կողմը մոտեցրեց մակույկին։

— Հոյակա՛պ է...— գոչեց Ջոնսոնը իմ ականջին, երբ նավը նորից հաջողությամբ դուրս եկավ մեզ հեղեղող ջրի տակից։ Ես գիտեի, որ նա նկատի ուներ ոչ թե Գայլ Լարսենի ճարտարությունը, այլ հենց «Ուրվականի» հիանալի դարձումը։ Հիմա արդեն այնքան մթնել էր, որ մակույկն այլևս չէր երևում։ Բայց հակառակ բոլոր դժվարություններին, Գայլ Լարսենը շարունակում էր նավը քշել, կարծես առաջնորդվելով ինչ-որ անսխալական բնագրից։ Թեև մենք ամբողջ ժամանակ կիսով չափ թաղված էինք ջրի մեջ, սակայն նավն այլևս կողի վրա չէր պառկում։ «Ուրվականը» ուղիղ ծփաց դեպի շրջված մակույկը, բայց երբ այն բարձրացնում էին վերև, նրա տախտակները ջախջախվեցին։

Դրանից հետո լծվեցինք մի սարսափելի աշխատանքի, որը տևեց մոտ երկու ժամ։ Բոլորս՝ երկու որսորդները, երեք նավաստիները, Գայլ Լարսենը և ես, հավաքեցինք եռանկյուն առագաստն ու միջնակայմի առագաստը։ Առագաստների քչության պատճառով տախտակամածը համեմատաբար քիչ ենթարկվեց նոր ողողումների, և «Ուրվականը» խցանի պես սկսեց թռչկոտել ու ծփալ ջրի երեսին։

Ես արդեն վիրավորել էի մատներս, այնպես որ առագաստները հավաքելու ժամանակ աչքերիցս ցավի արցունքներ էին հոսում։ Եվ երբ այդ աշխատանքը վերջացավ, տղամարդու արիությունս կորցնելով, գլորվեցի հատակին՝ ուժասպառությունից գրեթե մահամերձ։

Թոմաս Մագրիջին սատկած մկան պես դուրս քաշեցին նավահարթակի տակից, որտեղ պատսպարվել էր վախից։ Ես հետևում էի, թե ինչպես նրան քարշ են տալիս դեպի ընդհանուր նավասենյակ, երբ հանկարծ խոր զարմանքով նկատեցի, որ խոհանոցը չքացել է։ Նրա տեղում տախտակամածի վրա մնացել էր դատարկ տարածություն։

Բոլորին գտա ընդհանուր նավասենյակում։ Այնտեղ էին նաև նավաստիները։ Փոքր վառարանի վրա սուրճ էր եփվում։ Մինչև սրճի եփվելը վիսկի խմեցինք և կրծեցինք չոր պաքսիմատ։ Կյանքումս երբեք այդքան ախորժակով չէի կերել և տաք սուրճը երբեք այնքան

համով չէր թվացել: «Ուրվականը» թռչկոտում էր, ցնցվում ու տատանվում այնպիսի մոլեգնությամբ, որ նույնիսկ նավաստիները չէին կարողանում քայլել առանց որևէ բանի հենվելու: Մի քանի առիթով «զգո՛ւյշ» կանչից հետո մենք խմբովին գլորվեցինք ձախակողմյան խցերի միջնորմների վրա, որոնք նավի յուրաքանչյուր թեքումից հորիզոնական գիրք էին ստանում:

— Գրողի ծոցը հերթապահությունը,— ասաց Գայլ Լարսենը, երբ վերջացրինք կերուխումը:— Տախտակամածի վրա այլևս ոչինչ չենք կարող անել: Եթե որևէ բան մոտենա մեզ, միննույն է, բախումից չենք կարող խուսափել: Դե՛հ, բոլորդ էլ գնացեք ու մի քիչ քնեք:

Նավաստիները գնացին նավի առաջամասը, ճանապարհին տեղավորելով ազդանշանի ջահերը, իսկ որսորդները մնացին ընդհանուր նավասենյակում քնելու, որովհետև իրենց խուցը տանող անցքի կափարիչը բանալը վտանգավոր էր: Գայլ Լարսենը և ես, երկուսով, կտրեցինք Քերֆուտի ճմլված մատը և վերքը կապեցինք: Մագրիջը, որ հարկադրված էր ճաշ եփել, սուրճ մատուցել, վառարանի կրակն անշեջ պահել, ու ամբողջ ժամանակ գանգատվում էր կողացավից, հիմա սկսեց պնդել, թե կողոսկրներից մեկը կամ երկուսը ջարդված են: Քննությունից պարզվեց, որ իրականում երեք կողոսկր է ջարդվել: Բայց նրա բուժումը հաջորդ օրվան հետաձգեցինք գլխավորապես այն պատճառով, որ ես ոչինչ չգիտեի ջարդված կողոսկրների մասին և նախ պետք է այդ մասին որոշ գրականություն կարդայի:

— Իմ կարծիքով, չարժեր, որ մի ջախջախված մակույկի համար Քելլիի կյանքը զոհեինք,— ասացի ես Գայլ Լարսենին:

— Քելլին ինքն էլ ոչ մի արժեք չէր ներկայացնում,— պատասխանեց նա:— Բարի գիշեր:

Ինձ թվում էր, թե այս ամբողջ պատահարներից հետո չափտի կարողանայի քնել, մանավանդ որ մատներիս վերքերն անտանելի ցավում էին, միտքս տանջվում էր մնացած երեք մակույկների հետ կորած մարդկանց համար, իսկ մյուս կողմից՝ «Ուրվականը» կատաղորեն ուստոստում էր ալիքների վրա: Բայց գլուխս հագիվ էի բարձին դրել, երբ անչափ հոգնածությունից աչքերս փակվեցին ու մինչև լույս քնեցի, մինչդեռ «Ուրվականը» առանց դեկորդի շարունակում էր ճանապարհը փոթորկի միջով:

Գլուխ տասնութերորդ

Հաջորդ օրը մինչ փոթորիկը գնալով մեղմանում էր, Գայլ Լարսենը և ես մարդակազմության ու վիրաբուժության վերաբերյալ գրքեր թերթեցինք և ապա Մագրիջի կողոսկրները տեղը զցեցինք: Հետո, երբ ալեկոծությունը մի քիչ հանդարտվեց, «Ուրվականը» սկսեց հեռանալ փոթորկի շրջանից և թեթևակի ուղղվեց դեպի արևելք: Նույն ժամանակամիջոցում նավաստիները նորոգում էին մակույկներն ու պատրաստում նոր առագաստներ: Մենք հաճախ հանդիպում էինք կորած մակույկներ փնտրող որսորդական երկկայմանավերի, որոնցից շատերն իրենց ճանապարհին փրկել էին ուրիշ երկկայմանավերի պատկանող մակույկներ ու անձնակազմեր: Այդ երկկայմանավերի մեծ մասը գտնվում էր մեզանից արևմուտք, իսկ ծովում ցրված մակույկները խելակորույս խուճապի ժամանակ ապաստան էին գտել հենց առաջին հանդիպած նավի վրա:

Մեր մակույկներից երկուսին, իրենց լրիվ անձնակազմով, վերցրինք «Միսկս» երկկայմանավից: Այնուհետև, ի մեծ ուրախություն Գայլ Լարսենի և ի մեծ տրտմություն ինձ, «Սան-Դիեգոյից» հավաքեցին Սմոքին, Նիլսոնին ու Լիչին: Հինգ օր հետո մեր անձնակազմը, բացի Հենդերսոնից, Հոլիոկից, Վիլյամսից ու Քելլիից, դարձյալ նավի վրա էր: Ուստի որոշվեց վերսկսել որսորդությունը:

Հյուսիսային ուղղությամբ ծովակատուների երամին հետևելիս մենք հանդիպեցինք ծովային վտանգավոր մշուշների: Երբ մակույկները իջեցնում էինք ծով, դեռ ջրի երեսին չհասած նրանք անհետանում էին մառախուղի մեջ, իսկ երկկայմանավից կանոնավոր ընդմիջումներով հնչեցնում էինք եղջերափողը և քառորդ ժամը մեկ հրանոթի կրակոցով ազդանշան տալիս: Հաճախ մակույկները կորչում էին, հետո գտնվում: Ծովային սովորության համաձայն, երբ որևէ երկկայմանավ փրկում էր որսորդության ընթացքում կորած մակույկները, դրանք հետո վերադարձնում էր տիրոջը: Բայց Գայլ Լարսենը, ինչպես կարելի է ակնկալել, մեկ մակույկ պակաս ունենալով, տիրացավ հանդիպած առաջին մակույկին, որի անձնակազմին ստիպեց «Ուրվականի» համար որսալ, իսկ երբ նրանց երկկայմանավը երևաց, Լարսենը թույլ չտվեց վերադառնալ: Հիշում եմ, թե ինչպես նա հրացանի փողը որսորդի ու երկու նավաստիների կրծքին ուղղելով պարտադրեց ներքև իջնել այն պահին, երբ նրանց երկկայմանավն անցնում էր մեր մոտով և նավապետը տեղեկություն էր հարցնում իր անձնակազմի մասին:

Թոմաս Մագրիջը, տարօրինակ համառությամբ կյանքին կառչելով, շուտով սկսեց կաղալով նորից կատարել իր կրկնակի պարտականությունը որպես խոհարար ու սպասյակ: Ջոնսոնը և Լիչը կոպտությունների ու ծեծի էին ենթարկվում ավելի քան երբեք, և կռահում էին, որ որսորդության սեզոնի ավարտին վերջ կգտնի նաև իրենց կյանքը: Իսկ մնացյալ նավաստիներն իրենց անողորմ տիրոջ շնորհիվ շան կյանք էին վարում և շան պես անընդհատ աշխատում: Ինչ վերաբերում է Գայլ Լարսենի և իմ փոխհարաբերությանը, ապա այն բավականին գոհացուցիչ էր, թեև ինձ շարունակ տանջում էր այն միտքը, թե իմ պարտքն է նրան սպանել: Ես անչափ հմայված էի նրանով ու միաժամանակ չափազանց վախենում էի նրանից: Համենայն դեպս, չէի կարողանում նրան մահամերձ կամ մեռած վիճակում պատկերացնել: Նրա մեջ կա ինչ-որ անթառամ երիտասարդության հատուկ տոկունություն, որը խանգարում է այդպիսի տեսարանի պատկերացումը: Ես նրան միայն կարող եմ պատկերացնել կենսունակ, տիրապետող, կործանող և հավերժ կենդանի:

Ծովակատուների ամենախիտ շրջանում, երբ ուժեղ ալեկոծության պատճառով մակույկները ծով չէին իջեցվում, Գայլ Լարսենը իր հետ վերցնում էր երկու թիավար ու մի նավուղիղ և գնում էր որսի: Դա նրա հաճույքներից մեկն էր: Լավ նշանառու լինելով, նա որսում ու բերում էր բազմաթիվ ծովակատուներ, հաճախ այնպիսի փոթորկոտ եղանակներին, երբ որսալը, որսորդների կարծիքով, միանգամայն անհնար է: Նրա համար կարծես օդի չափ անհրաժեշտ է՝ ոգի ի բռնի պայքարել ահավոր վտանգների դեմ:

Ես գնալով ավելի ու ավելի էի տիրապետում ծովագնացության գիտելիքներին: Մի օր, երբ եղանակը պարզ էր, մի բան, որ արդեն հազվադեպ էր մեր ճանապարհորդության այդ շրջանում, ես բավարարություն ունեցա անձամբ ղեկավարելու «Ուրվականը» և հավաքելու մակույկները: Գայլ Լարսենը տառապում էր ուժեղ գլխացավով, այնպես որ առավոտից մինչև երեկո ես կանգնեցի ղեկանիվի առջև, հետևեցի ամենավերջին մակույկին, նավը կանգնեցրի և

վեց մակույկները, մեկը մյուսի հետևից, բարձրացնել տվի վերև, առանց որևէ խորհուրդ կամ հրահանգ ստանալու նավապետից:

Երբեմն-երբեմն պատահում էինք մրրիկների, որովհետև գտնվում էինք փոթորկոտ գոտում, իսկ հունիսի կեսին վրա հասավ մի թայֆուն, որն ինձ համար եղավ կարևոր ու հիշարժան իրադարձություն, որովհետև զգալի փոփոխություն մտցրեց կյանքիս մեջ: Մենք, ըստ երևույթին, գտնվում էինք այդ բոլորակապտույտ փոթորկի կենտրոնում, բայց Գայլ Լարսենը կարողացավ դուրս բերել նավը և ուղղել դեպի հարավ, նախ փոքրացած եռանկյուն առազաստով, ապա՝ այն բոլորովին հավաքելով: Ես կյանքումս չէի տեսել այդպիսի ահագին կոհակներ: Նախկինում իմ տեսած ալիքները պարզապես վետվետումներ էին այդ կոհակների համեմատությամբ, որոնց կատարներն իրարից բաժանվում էին կես մղոնով և բարձրանում ավելի վեր, քան մեր ամենաերկար կայմի գագաթը: Հետևաբար Գայլ Լարսենը չհամարձակվեց նավը տեղում ծփացնել, չնայած որ քշվում էինք դեպի հարավ և այդպիսով հեռանում ծովակատուների երամից:

Երբ թայֆունը մեղմացավ, մենք արդեն գտնվում էինք անդրատլանտյան շոգենավերի ճանապարհի վրա, և այստեղ, ի մեծ զարմանք որսորդների, մեզ շրջապատեց ծովակատուների մի երկրորդ երամ, որը, ըստ որսորդների հայտարարության, «վերջապահ գունդն» էր: Դա շատ անսովոր մի երևույթ էր: Իսկույն հրաման արձակվեց մակույկներն իջեցնել: Սկսվեց հրացանների կրակոցը, և անողորմ սպանողը շարունակվեց մինչև երեկո:

Ահա այդ երեկոյան էր, որ Լիչը մոտեցավ ինձ: Ես նոր էի վերջացրել վերջին մակույկի բերած մորթիների հաշվարկումը, երբ նա կանգնեց իմ կողքին և մթության մեջ ցածրաձայն ասաց.

— Կարո՞ղ եք ինձ ասել, միստր Վան-Վեյդեն, թե որքան հեռու ենք ցամաքից և ո՞ր կողմն է Յոկոհաման:

Միրտս ուրախությունից խայտաց, որովհետև կռահեցի նրա միտքը: Ես նրան հայտնեցի, թե Յոկոհաման գտնվում է հինգ հարյուր մղոն դեպի հյուսիս-արևմուտք:

— Շնորհակալ եմ, սը՛ր,— ասաց նա և անհետացավ խավարում:

Հաջորդ առավոտյան № 3 մակույկը, Ջոնսոնը և Լիչը չքացել էին: Չքացել էին նաև մյուս մակույկների ջրի տակառներն ու սննդամթերքի արկղները, ինչպես և փախստականների անկողիններն ու իրեղենների տոպրակները: Գայլ Լարսենը գագազած էր: Նա առազաստները պարզեց և նավն ուղղեց դեպի հյուսիս-արևմուտք: Մինչ նա կատաղած առյուծի նման անցուդարձ էր անում տախտակամածի վրա, երկու որսորդ կայմահարթակներից հեռադիտակով խուզարկում էին ծովը: Գայլ Լարսենը քաջ գիտեր փախստականների հանդեպ իմ ունեցած համակրանքը և դրա համար էլ ինձ վերև չէր ուղարկել նրանց որոնելու: Քամին մեղմ էր, բայց անկանոն, այնպես որ ավելի հեշտ կլիներ հարդի տոպրակում ընկած որևէ ասեղ գտնել, քան անսահման կապույտ տարածության մեջ կորած փոքր մակույկը: Այնուամենայնիվ, Գայլ Լարսենը «Ուրվականի» ընթացքը հնարավորին չափ արագացրեց, որպեսզի փախստականների և ցամաքի միջև դիրք գրավի: Այդ գոտին հասնելուց հետո նա սկսեց ետ ու առաջ նավարկել այն մասում, որտեղից, իր կարծիքով, պետք է անցներ մակույկը:

Խուզարկության երրորդ օրվա առավոտյան, ժամը ութը հայտարարող զանգակի հարվածներից քիչ հետո, Սմոքը իր կայմահարթակից գոչեց, թե մակույկը երևում է։ Բոլոր նավաստիներն իսկույն մոտեցան նավեզրին։ Արևմուտքից փչող կծու քամին խոստանում էր հետզհետե ավելի սաստկանալ։ Քամու ներհակ կողմում, արշալույսի ճառագայթների տակ արծաթագույն ցուլեր արձակող ծովի վետվետուն մակերեսին հայտնվեց մի սև բիծ, որը մերթ երևում, մերթ անհետանում էր։

Նավի ընթացքը փոխելով, մենք սլացանք այդ բծի ուղղությամբ։ Մի րոտ ճնշված էր, ասես կապարի ծանրության տակ։ Պատահելիքը նախատեսելով, ես հիվանդի պես գլխապտույտ էի զգում, և երբ Գայլ Լարսենի աչքերում տեսա հաղթանակի փայլատակումը, տեսողությունս հանկարծ պղտորվեց ու նրա վրա նետվելու մի ներքին անդիմադրելի մղում զգացի։ Լիչին ու Ջոնսոնին սպառնացող մոտալուտ խոշտանգման գաղափարն ինձ այնքան կատաղեցրեց, որ, ըստ երևույթին, խելքս կորցրի։ Ես խոյացա դեպի որսորդների խուցը, վերցրի լցված մի հրացան և հազիվ սկսել էի տախտակամած բարձրանալ, երբ լսեցի մի ձայն, որն ապշահար գոչում էր.

— Հի՛նգ մարդ կա մակույկի մեջ...

Ես, թուլացած ու դողդոջուն, սանդուղքի բազրիքին հենվեցի։ Տախտակամածի վրա գտնվող մյուս նավաստիներն իրենց դիտողություններում հաստատում էին նույն իրողությունը։ Ծնկներս ծավեցին և ես նստեցի աստիճանների վրա։ Երբ մի քիչ զգաստացա, իմ ձեռնարկելիք արարքի գիտակցությունը խոր սարսափով համակեց ինձ։ Շնորհակալ լինելով բախտիս, հրացանը տեղը դրի և բարձրացա տախտակամած։

Ոչ ոք չէր նկատել իմ բացակայությունը։ Նավակն արդեն բավական մոտ էր, և մենք նկատեցինք, որ այն ավելի մեծ է որսորդական մակույկներից ու տարբեր կառուցվածք ունի։ Երբ բոլորովին մոտեցանք, նավակում գտնվողներն իրենց առագաստը հավաքեցին, կայմը իջեցրին և թիակները թիակալների վրա հաստատելով, սպասեցին, որ նավը կանգնեցնենք ու նրանց տախտակամած բարձրացնենք։

Սմոքը, որը կայմահարթակից իջել և այժմ կանգնած էր ինձ մոտ, նշանակալից կերպով քրքջաց։ Ես հարցական հայացքով նայեցի նրան։

— Խառնաշփոթություն է սկսվելու,— քրքջաց նա։

— Ինչո՞ւ,— հարցրի ես։

Սա նորից քրքջաց։

— Չե՞ք տեսնում, թե ով կա այնտեղ, խելամասի խորքում։ Եթե նա կին չէ, ապա ես սրանից հետո կհրաժարվեմ ծովակատու որսալուց...

Ես ուշի-ուշով նայեցի, բայց չհամոզվեցի, մինչև որ բացականչություններ բարձրացան ամեն կողմից։ Նավակում կային չորս տղամարդ, իսկ հինգերորդը, անկասկած, կին էր։ Բոլորս էլ չափազանց գրգռվել էինք, բացի Գայլ Լարսենից, որն ակներևորեն հուսախաբվել էր, որ դա իր մակույկը չէ և իր չարակամության զոհերը չկային։

Մենք եռանկյուն առագաստը պարզեցինք հողմընթաց ուղղությամբ, միջնակայմի առագաստի թռկասարքը թուլացրինք և նավն սկսեց ծփալ իր տեղում: Նավակում գտնվողները թիակի մի քանի հարվածով հասան «Ուրվականի» մոտ: Այժմ ես կարողացա ավելի պարզ տեսնել կնոջը: Նա փաթաթված էր խոշոր վերարկուի մեջ, որովհետև առավոտը ցուրտ էր: Ուստի ես տեսա միայն նրա դեմքը և բաց-շագանակագույն մազափնջերը, որոնք դուրս էին թափվել ծովային գդակի տակից: Աչքերը խոշոր էին, շագանակագույն ու լուսաշող, բերանը գեղեցիկ և զգայուն, իսկ նուրբ ու ձվաձև դեմքը, արևից ու քամուց այրվելով, կարմրել էր:

Այդ պահին ինձ թվաց, թե նա ինչ-որ այլ աշխարհից եկած էակ է: Եվ նրա նկատմամբ զգացի այն անգուսպ մղումը, որ սովահար մարդն ունենում է դեպի հացը: Չէ՞ որ երկար ժամանակից ի վեր որևէ կնոջ չէի տեսել: Ահա թե ինչ բան է կին արարածը, մտածեցի ես, այս միտքը խոր զարմանքով, գրեթե ապշությամբ, համակեց ինձ. ես մոռացա նավապետի օգնականի պարտականություններս և չմասնակցեցի նորեկներին նավ բարձրացնելու գործին: Նավաստիներից մեկը կնոջը գրկելով, բարձրացրեց ու հանձնեց Գայլ Լարսենին, որը ձեռքերը մեկնել էր դեպի ներքև: Նույն պահին անձանոթուհին նկատեց մեր հետաքրքիր դեմքերը և զվարճությունից ժպտաց այնպիսի քաղցրությամբ, ինչպես կանայք միայն կարող են ժպտալ: Ես վաղուց չէի տեսել նման ժպիտ և արդեն մոռացել էի, որ աշխարհում այդպիսի ժպիտներ գոյություն ունեն:

— Միստր Վան-Վեյզեն՝ն:

Գայլ Լարսենի ձայնը հանկարծ սթափեցրեց ինձ:

— Բարեհաճեցեք այս տիկնոջը առաջնորդել ներքև ու նրա համար հարմարություններ ստեղծել: Խոհարարին կարգադրեցեք, որ կարգի բերի ձախակողմյան նավեզրի ազատ խցիկը: Տեսեք նաև, թե ինչ կարող եք անել տիկնոջ դեմքի համար, որը խիստ այրվել է:

Նա կտրուկ շարժումով շուռ եկավ և, եկվոր տղամարդկանց մոտենալով, սկսեց հարցուփորձել: Հորձանքը նրանց նավակը քշել, հեռացրել էր ցամաքից, իսկ դա, ինչպես ասաց փրկվածներից մեկը, «պարզապես խայտառակություն էր», քանի որ նավակը այնքան մոտ էր Յոկոհամային:

Անձանոթուհուն ուղեկցելիս, ինձ չափազանց երկչոտ էի զգում և միաժամանակ՝ անճարտար: Կարծես կյանքումս առաջին անգամ էի հասկանում, թե ինչքան շնորհալի ու դյուրաբեկ էակ է կինը: Աստիճաններով իջնելիս ես նրա թևը բռնեցի օգնելու համար, և ապշությամբ նկատեցի, թե որքան փոքր ու փափուկ է այդ թևը: Որպես կին, նա իրոք նուրբ ու քնքուշ էր, իսկ ինձ համար՝ այնքան եթերային, որ վախենում էի, թե թևը կճգմվի իմ ձեռքի սեղմումից: Այս ամենը ես անկեղծությամբ պատմում եմ միայն բացատրելու համար, թե կանանց շրջապատից երկար զրկվելուց հետո ինչպիսին էր իմ տպավորությունն ընդհանրապես կանանց և մասնավորապես Մոդ Բրուստերի նկատմամբ:

— Կարիք չկա, որ ինձ համար այդքան նեղություն քաշեք,— առարկեց նա, երբ խնդրեցի նստել բազկաթոռին, որը շտապ բերել էի Գայլ Լարսենի խցից:— Այս առավոտ բոլոր առ բոլոր սպասում էինք, որ ցամաքը կտեսնենք: Երևի զիշերը նավահանգիստ կհասնենք, այո՞:

Մոտավոր ապագայի նկատմամբ նրա անմեղ հավատն ինձ շփոթության մատնեց: Ինչպե՞ս բացատրել իրերի ճշմարիտ դրությունը, խոսել այդ տարօրինակ մարդու մասին, որը հպարտ

շրջում է ծովի վրա, ինչպես չարաշուք ճակատագիր, և պատմել այն ամենը, որ տեսել էի վերջին ամիսների ընթացքում: Ես ազնվորեն պատասխանեցի:

— Եթե մեր նավապետի փոխարեն մի ուրիշը լիներ, ես ձեզ կասեի, որ վաղը առավոտ Յոկոհամա կհասնենք: Բայց մեր նավապետը տարօրինակ մարդ է, և ես ձեզ խնդրում եմ պատրաստ լինել ամեն ինչի, հասկանո՞ւմ եք, ամեն ինչի:

— Ես... ես խոստովանում եմ, որ ձեզ չեմ հասկանում...— նա մի պահ վարանեց և նրա աչքերում երևաց ոչ թե վախի, այլ վրդովմունքի արտահայտություն:— Կամ գուցե սխալվել եմ կարծելով, որ նավաբեկյալների նկատմամբ միշտ ուշադիր են լինում: Այնքան չնչին բան է դա. չէ՞ որ շատ մոտ ենք ցամաքին:

— Ճիշտն ասած, այդ չգիտեմ,— աշխատեցի հանգստացնել նրան:— Ես պարզապես ուզեցի ձեզ նախապատրաստել վատագույնին, եթե այն իրոք պետք է պատահի: Այդ մարդը՝ նավապետը, մի գազանաբարո հրեշ է, և ոչ ոք չի կարող կռահել, թե ինչպիսին կլինի նրա հաջորդ արտառոց արարքը:

Ես սկսել էի հուզվել, բայց նա ինձ ընդհատեց.

— Այո, այո, հասկանում եմ,— ասաց նա թույլ ձայնով: Ակնհայտորեն նա դժվարությամբ էր կարողանում մտքերը հավաքել: Պարզ երևում էր, որ հոգնածությունից հանկարծ կուշաթափվի:

Նա այլևս ոչ մի հարց չտվեց, ես էլ իմ կողմից ուրիշ ակնարկություններ չարեցի և, հետևելով Գայլ Լարսենի հրահանգին, ջանացի հանգստավետության բոլոր հնարավոր պայմաններն ստեղծել: Տանտիրուհուն վայել փութեռանդությամբ դեսուդեն ընկնելով, հանգստացուցիչ օծանելիքներ ճարեցի այրվածքի համար, Գայլ Լարսենի սեփական պահեստը խուժելով, այնտեղից վերցրի մի շիշ պորտվեյն և ապա, Թոմաս Մագրիջին կանչելով, իմ հսկողության տակ կարգի բերել տվի ազատ խցիկը:

Քամին արագորեն սաստկանում էր և նավաթեքումները գնալով ավելի էին ուժեղանում: Երբ խցիկը կարգի բերվեց, «Ուրվականը» ալիքները ճեղքելով սլանում էր սրնթաց: Ես բոլորովին մոռացել էի Լիչի և Ջոնսոնի գոյությունը, երբ հանկարծ «ահա մակույկը» աղաղակը որոտի նման ականջիս հասավ նավասանդուղքի բաց անցքի միջով: Դա Մմոքի ձայնն էր, որ գալիս էր կայմահարթակից: Ես մի հայացք նետեցի եկվորուհու վրա, բայց նա հոգնած, աչքերը փակ, հենվել էր բազկաթոռի թիկունքին: Ենթադրելով, որ նա կարող է լսած լինել Մմոքի աղաղակը, որոշեցի թույլ չտալ, որ ականատես լինի այն վայրագ տեսարանին, որն անպայման պիտի հաջորդեր փախստականների ձերբակալությանը: Բայց նա ուժասպառ էր: Ավելի լավ: Ուրեմն, թո՛ղ քնի:

Տախտակամածի վրա կտրուկ հրամաններ արձակվեցին, լսվեցին ոտնաձայներ ու առագաստների շաշոցներ, և «Ուրվականը» իր ընթացքը փոխեց: Բայց շուտ գալիս նավը թեքվեց մեկ կողմի վրա, և խցիկում բազկաթոռն սկսեց սահել: Ես ցատկեցի և ճիշտ ժամանակին կարողացա իմ ուղեկցուհուն պահել, որ չզլորվի հատակին:

Նրա նվաղուն ու քնաթաթախ աչքերը զարմանքով ինձ նայեցին: Իսկ երբ նրան առաջնորդում էի իր խցիկը, ոտքերը քայլելիս երերում ու սայթաքում էին: Թոմաս Մագրիջը նշանակալից

արտահայտությամբ ժպտաց երեսիս: Ես նրան դուրս քշեցի և հրամայեցի գնալ ու խոհանոցի գործերով զբաղվել: Նա իր վրեժը լուծեց՝ գունազարդված կերպով որսորդներին պատմելով, թե ես ինձ դրսևորել եմ որպես առաջնակարգ «լեյդիի աղախին»:

Անձանոթուհին ամբողջ մարմնով հենվեց վրաս և ինձ թվաց, թե բազկաթոռից մինչև խցիկ հասնելը նա ճանապարհին նորից է քնել: Իմ կարծիքը հաստատվեց, երբ նավի մի հանկարծական ցնցումից նա գլորվեց անկողնու վրա: Նա գլուխը բարձրացրեց, թմրած արտահայտությամբ ժպտաց ու նորից թաղվեց քնի մեջ: Ես նրա գլուխը տեղավորեցի մի բարձի վրա, որը վերցրել էի Գայլ Լարսենի անկողնուց, նրան ծածկեցի երկու ծանր վերմակով և դուրս եկա:

Գլուխ տասնիններորդ

Տախտակամած բարձրանալով, տեսա, որ «Ուրվականը» մոտենում է փախստականների մակույկին, որը ցոկակայմի առագաստը պարզած՝ մեզ պես ընթանում էր քամու հակառակ ուղղությամբ: Ամբողջ նավազախումբը տախտակամածի վրա էր, որովհետև բոլորն էլ զիտեին, թե ինչ է կատարվելու, երբ Լիչը և Ջոնսոնը նավ բարձրացվեն:

Զանգակի չորս դողանջ լսվեց, Լուիսը խելամաս ելավ, որպեսզի դեկորդին փոխարինի: Օդը խոնավ էր և ես նկատեցի, որ նա հագել էր մոմլաթե վերարկու:

— Քո կարծիքով ի՞նչ կարող է պատահել,— հարցրի ես:

— Հոդմից դատելով մի թեթև փոթորիկ, սրբ,— պատասխանեց նա:— Եվ թեթև անձրև, այնքան, որ միայն մեր ականջները մի քիչ կթրջվեն, ոչ ավելի:

Մի խոշոր կոհակ, ցուրկին խփելով, մեկ կողմնամաս շեղեց նավի ընթացքը և նույն պահին եռանկյուն առագաստների արանքից երևաց մակույկը:

— Ինչքա՛ն վատ եղավ, որ հայտնաբերեցինք նրանց,— ասացի ես:

Լուիսը մի կողմնամաս պտտեց դեկանիվը և կարճ լռությունից հետո ասաց.

— Ես կարծում եմ, որ նրանք երբեք չեն հասնի ցամաք:

— Մի՞թե:

— Այո, սրբ: Չե՞ք զգում այս քամին:— Նույն պահին քամու մի թեթև հոսանք թեքեց երկկայմանավի ընթացքը և Լուիսը իսկույն դեկանիվը պտտեց՝ դուրս գալու համար հոսանքից:— Այդ ձվի կեղևը չի կարող դիմանալ ծովին, որ ալեկոծվելու է մի ժամից,— շարունակեց նա:— Նրանց համար մեծ բախտավորություն է, որ օգնության ենք հասնում:

Գայլ Լարսենը, որը տախտակամածի վրա խոսում էր նորեկ նավաստիների հետ, մոտեցավ նավախելի հարթակին: Այդ թույլին նրա քայլվածքում սովորականից ավելի էր շեշտված կատունների հատուկ ճկունությունը, և աչքերը փայլում էին դաժանությամբ:

— Երեքը՝ յուր քսող են, իսկ չորրորդը՝ մեխանիկ,— ասաց նա, ինձ ողջունելով։— Բայց նրանց նավաստի կղարձներնք կամ թիավար։ Իսկ ինչպե՞ս է տիկինը։

Տիկնոջ մասին նրա հիշատակությունը, չգիտեմ ինչու, դանակի պես խոցեց ինձ։ Ես կարծեցի, թե այդ զգացողությունը պարզապես անմիտ դժկամության արդյունք է, սակայն ինձանից անկախ, չկարողացա դրանից ազատվել։ Պատասխանի փոխարեն ես ուսերս թոթվեցի։

Գայլ Լարսենը շրթները կլորացնելով մի երկար, ծաղրական սուլոց արձակեց։

— Ինչպե՞ս է նրա անունը։

— Չգիտեմ,— պատասխանեցի ես,— նա քնած է։ Շատ հոգնած է երևում։ Ճիշտն ասած՝ ես ինքս ձեզանից տեղեկություն եմ սպասում։ Ի՞նչ նավից են նրանք։

— Փոստային «Տոկիո քաղաք» շոգենավից, որը Ֆրիսկոյից գնում էր Յոկոհամա,— պատասխանեց նա։— Այդ հնացած տաշտը խորտակվել է թայֆունի ժամանակ։ Մադի նման բացվել է վերից-վար։ Իսկ սրանք չորս օր ալիքների խաղալիք են դարձել... Ուրեմն չգիտե՞ք, թե ո՞վ է նա, օրի՞րդ է, տիկի՞ն, թե՞ ալիքի։ Դե լա՛վ, լա՛վ...

Նա ծաղրական արտահայտությամբ գլուխը շարժեց և ինձ նայեց ծիծաղկոտ աչքերով։

— Դուք...— սկսեցի ես, և քիչ էր մնում հարցնելի, թե նավաբեկյալներին Յոկոհամա հասցնելո՞ւ է։

— Ես՝ ի՞նչ...— հարցրեց նա։

— Ի՞նչ եք մտադիր անել Լիչին ու Ջոնսոնին։

Նա գլուխն օրորեց։

— Ճիշտն ասած՝ չգիտեմ, Հեմփի։ Հիմա, որ նավաբեկյալներն ավելացան անձնակազմի վրա, արդեն պետք եղածին չափ մարդ ունեմ նավում։

— Լիչը և Ջոնսոնը արդեն բավական տանջվեցին այս փախուստի ժամանակ։ Գուցե ձեր վերաբերմունքը փոխելիք նրանց նկատմամբ։ Լավ կլիներ, որ նրանց ետ ընդունելիք և փորձելիք հետները մեղմ վարվել։ Այն, ինչ նրանք արեցին, պարզապես ստիպված էին անելու։

— Իսկ ո՞վ է ստիպել, ե՞ս։

— Այո, դուք,— պատասխանեցի հաստատականությամբ։— Եվ ես ձեզ նախազգուշացնում եմ, Գայլ Լարսեն, որ կարող եմ իմ կյանքից հրաժարվելով ձեզ սպանել, եթե շարունակեք այդ խեղճ մարդկանց հետ վատ վարվել։

— Կեցցե՛ս,— գոչեց նա,— հպարտ եմ ձեզանով, Հեմփի։ Վրեժխնդրության զգացմունքի շնորհիվ դուք ձեր սեփական ոտքերը գտաք և դարձաք ինքնուրույն անհատականություն։ Դուք դժբախտ էիք այն ժամանակ, երբ հեշտ կյանք էիք վարում, իսկ այժմ արդեն զարգանում եք։ Հենց դրա համար էլ ձեզ ավելի եմ հավանում։

Նրա ձայնի հնչյունը հանկարծ փոխվեց և դեմքը լուրջ արտահայտություն ստացավ։

— Դուք հավատո՞ւմ եք խոստումների,— հարցրեց նա:— Արդյո՞ք նվիրական բաներ են դրանք:

— Անշուշտ,— պատասխանեցի ես:

— Այդ դեպքում ես ձեզ առաջարկում եմ հետևյալ համաձայնությունը,— շարունակեց Գայլ Լարսենը, որ անգուցական դերասան էր:— Եթե խոստանամ ձեռք չտալ Լիչին ու Ջոնսոնին, դուք էլ կխոստանա՞ք ինձ սպանելու փորձ չանել... Բայց չկարծեք, թե ձեզանից վախենում եմ,— շտապեց ավելացնել նա,— բնավ չկարծեք, թե վախենում եմ:

Ես հազիվ էի հավատում ականջներիս: Ի՞նչ էր պատահել այս մարդուն:

— Համաձայն եմ, — հարցրեց նա անհամբերությամբ:

— Համաձայն եմ,— պատասխանեցի ես:

Նա ձեռքը մեկնեց, և երբ ջերմորեն սեղմում էի այն, նրա աչքերում որոշակիորեն տեսա դիվային ծաղրանքի ինչ-որ նշույլ, որը տևեց միայն մի ակնթարթ:

Նավախելի հարթակից ուղղվեցինք դեպի հողմագերծ կողմը: Հիմա մակույկն արդեն շատ մոտ էր, և փախստականների դրությունը՝ հուսահատական: Ջոնսոնը դեկն էր վարում, իսկ Լիչը՝ ջուրը դատարկում: Մենք նրանցից կրկնապատիկ արագ էինք առաջանում: Գայլ Լարսենը Լուիսին նշան արեց, որ մի քիչ շեղի նավի ուղղությունը, և մենք մոտ քսան ոտնաչափով անցանք մակույկը՝ հողմընթաց կողմից: Այդպիսով «Ուրվականը» խափանեց մակույկի քամին, որի առագաստը, դատարկվելով, կախ ընկավ: Երբ մակույկը հորիզոնական դիրք ստացավ, երկու նավաստիները շտապ փոխեցին իրենց դիրքը՝ նույն բուլեին մի հսկա ալիք մեզ բարձրացրեց վերև, իսկ մակույկը սահեց ալիքի գոգը:

Այդ պահին Լիչը և Ջոնսոնը վերև նայելով, դիտեցին իրենց ընկերներին, որոնք շարված էին նավաբազրիքի երկայնքով: Բայց նավից ոչ ոք չողջունեց նրանց: Նրանք արդեն մեռյալներ էին իրենց ընկերների աչքում, և երկու կողմերի միջև բացված էր այն վիհը, որը բաժանում է կյանքը մահից:

Հաջորդ բուլեին մակույկը գտնվում էր նավախելի հարթակի դիմաց, որտեղ կանգնել էինք ես և Գայլ Լարսենը: Այժմ մենք սահում էինք ալիքի գոգավորության մեջ, իսկ նրանք բարձրանում էին նրա կատարը: Ջոնսոնը նայեց ինձ, և ես տեսա նրա նիհարած, տանջալից դեմքը: Երբ ձեռքով ողջունեցի, նա պատասխանեց անհույս և վհատ շարժումով, ասես հրաժեշտ էր տալիս: Ես Լիչի աչքերին չհանդիպեցի, որովհետև նա նայում էր Գայլ Լարսենին խոր ու անհաշտ ատելությունից ծամածռված դեմքով:

Հետո նրանք հայտնվեցին նավի հետևում: Նրանց առագաստը հանկարծ օդով լցվեց, և դյուրաբեկ մակույկը այնքան ուժեղ թեքվեց, որ քիչ մնաց շրջվեր: Նույն բուլեին մի ահագին կոհակ խոյացավ վերև, ապա փուլ եկավ մակույկի վրա, ձյունասպիտակ փրփուրներ արձակելով: Մակույկը նորից հայտնվեց, կիսով չափ ողողված: Այժմ Լիչը ջուր էր դատարկում, իսկ Ջոնսոնը, հուսահատ ու դժգույն դեմքով, կառչած էր խելամասի թիակին:

Գայլ Լարսենը մի կարճ, դաժան քրքիջ արձակեց և ուղղվեց դեպի հարթակի հողմընթաց եզրը: Ես կարծում էի, թե «Ուրվականը» կանգնեցնելու հրաման կտա, բայց նա ոչ մի նշան չարեց, և

նավը շարունակեց իր ընթացքը: Լուիսը անվրդով կանգնած էր դեկանիվի մոտ, բայց առաջամասում խմբված նավաստիները հուզված դեմքերով մեր կողմն էին նայում: «Ուրվականը» շարունակեց հեռանալ և մակույկը հետզհետե փոքրանալով, վերածվեց մի պստիկ կետի: Այն ժամանակ հնչեց Գայլ Լարսենի ձայնը, և նավաստիները հրահանգ ստացան՝ նավը շրջել դեպի աջ:

Մենք ընթացել էինք քամու հակառակ ուղղությամբ և ավելի քան երկու մղոն հեռացել ալիքների դեմ մաքառող մակույկից, երբ նավաստիները եռանկյուն առագաստը հավաքեցին, և նավն սկսեց ծփալ իր տեղում: Որսորդական մակույկները քամու դեմ նավարկելու հարմարություններ չունեն: Դրա համար որսի ժամանակ նրանք ընդհանրապես հողմընթաց դիրք են գրավում, և երբ քամին ուժեղանում է, նրանց քշում է դեպի երկկայմանավը: Իսկ այժմ, այս անծայրածիր ամայության մեջ Լիչը և Ջոնսոնը ուրիշ ոչ մի ապաստան չունեին, բացի «Ուրվականից»: Ուստի նրանք սկսեցին հաստատականորեն նավարկել քամու դեմ: Սակայն այսպիսի ալեկոծ ծովի վրա առաջանալը բավական դժվար էր: Մեկ թռպեից մյուսը մակույկը կարող էր խորտակվել մոլեգնած ալիքների մեջ: Քանի-քանի անգամ մենք տեսանք, թե ինչպես նա բարձրանում է կռիակների գագաթը և խցանի նման ետ շարտվում:

Ջոնսոնը առաջնակարգ նավաստի էր: Նա փոքր նավակներին նույնքան քաջածանոթ էր, որքան և երկկայմանավերին: Մեկուկես ժամ հետո նա արդեն մոտեցել էր մեզ, անցել էր «Ուրվականի» նավախելը և ձգտում էր ավելի առաջ գնալ:

— Վերջապես մտքներդ փոխեցի՞ր, — մոթմոթաց Գայլ Լարսենը, որը խոսում էր ինքն իրեն և միաժամանակ դիմում փախստականներին, կարծես նրանք կարող էին իրեն լսել: — Ուրեմն ուզում եք նավ վերադառնալ, հա՞: Որ այդպես է, մեզ հետևեցեք, ինչքան ուզում եք:

— Քշի՛ր քամու ուղղությամբ, — գոչեց նա Ուֆտի-Ուֆտիին, որը, Լուիսին փոխարինելով, վարում էր դեկանիվը:

Հրամաններն իրար հաջորդեցին: Առաջակայմի և միջնակայմի առագաստների թոկերը թուլացվեցին, և նավը ճամփա ելավ: «Ուրվականը» սլանում էր քամուն համընթաց, թռչկոտելով ալիքների վրա, երբ Ջոնսոնը, որը գտնվում էր մոտ հարյուր ոտնաչափ հեռու, մահն աչքն առնելով, առագաստի պարանը թուլացրեց և խաչաձև կտրեց «Ուրվականի» ակոսած հետքը: Գայլ Լարսենը նորից քրքջաց և ձեռքով փախստականներին հրավիրեց, որ նավին հետևեն: Ակնհայտորեն նա ուզում էր նրանց հոգու հետ խաղալ և փոխանակ ծեծելու՝ մի լավ դաս տալ, թեև դա վտանգավոր դաս էր, քանի որ դյուրաբեկ նավակը կարող էր ամեն թույլ խորտակվել:

Ջոնսոնը շտապ փոխեց մակույկի ընթացքը և սկսեց մեզ հետևել: Նա ոչ մի այլ ելք չունեւ: Մահը ամեն կողմից դարանակալ հետապնդում էր նրանց, վաղ թե ուշ այդ հսկա կռիակներից մեկը պիտի փուլ գար մակույկի վրա և, շրջելով, պիտի անցներ վրայից:

— Մահվան ահը մտել է նրանց փորը... — ցածրաձայն ասաց Լուիսը, երբ անցնում էի նրա կողքով՝ եռանկյուն առագաստները հավաքել տալու համար:

— Գայլ Լարսենը շուտով նավը կկանգնեցնի և նրանց կվերցնի, — պատասխանեցի ես զվարթությամբ: — Նա, ըստ երևույթին, ուզում է նրանց մի լավ դաս տալ, ուրիշ ոչինչ:

Լուիսը նայեց ինձ խորաթափանց հայացքով:

— Այդպե՞ս եք կարծում,— հարցրեց նա:

— Անշուշտ,— պատասխանեցի ես:— Իսկ դո՞ւ:

— Ես հիմա մտածում եմ միայն իմ մաշկի մասին,— եղավ նրա պատասխանը:— Բայց ինձ մեծ զարմանք է պատճառում իրերի այս վիճակը: Ահա թե ինչպիսի փորձանքի մեջ գցեց ինձ Ֆրիսկոյում խմածս վիսկին... Բայց դուք ավելի մեծ փորձանքի մեջ ընկաք այդ կնոջ պատճառով: Է՛հ, միայն ես գիտեմ, թե դուք ինչքա՛ն միամիտ եք:

— Ի՞նչ ես ուզում ասել,— իսկույն հարցրի ես, որովհետև այդ սլաքն արձակելուց հետո նա պատրաստվում էր հեռանալ:

— Ինչ եմ ուզում ասե՞լ,— գոչեց նա:— Գոնե դուք չպետք է այդ հարցը տայիք... Կարևորն այն չէ, թե ես ինչ եմ ուզում ասել, այլ այն, թե Գայլը ի՞նչ է ասելու: Այո, Գայլը, հենց ինքը՝ Գայլը:

— Որևէ փորձանքի դեպքում իմ կողմը կլինե՞ս,— հարցրի ես բնագդաբար, որովհետև նա ճշգրտորեն արտահայտել էր իմ հոգում թաքնված վախը:

— Ձեր կո՞ղմը: Ես միայն գիրուկ Լուիսի կողմը կլինեմ, իսկ փորձանքը բավականին մեծ է լինելու: Սա դեռ սկիզբն է, ես ձեզ բան եմ ասում, սա դեռ միայն սկիզբն է:

— Ես չեի կարծում, որ այդքան վախկոտ ես,— ասացի հեզմանքով:

Նա մի արհամարհական հայացք նետեց ինձ վրա:

— Եթե ես մատս մատիս չխփեցի այդ խեղճ հիմարի համար,— ասաց նա, ձեռքը շարժելով նավախելի կողմը գտնվող մակույկի ուղղությամբ,— կարծում եք այնքան տխմա՞ր եմ, որ գլուխս ջարդել տամ մի կնոջ համար, որին երբեք չեի տեսել սրանից առաջ:

Ես քամահրանքով շուռ եկա և ուղղվեցի դեպի նավախել:

— Հայեկի առագաստը հավաքել տվեք, միստր Վան-Վեյդեն,— ասաց Գայլ Լարսենը, երբ նավահարթակ բարձրացա:

Ես հանգստացա փախստականների ճակատագրի համար: Ակնհայտ էր, որ Լարսենը չէր ուզում շատ հեռանալ նրանցից: Այս միտքն ինձ հուսադրեց, և ես իսկույն գործադրեցի հրամանը: Հազիվ էի հրահանգներ տվել, երբ մի քանի նավաստի փութեռանդությամբ նետվեցին թոկերի վրա, իսկ ուրիշները կայմապարանով մագլցեցին վերև: Գայլ Լարսենը նկատեց այս փութեռանդությունը և նրա դեմքին մի չարաշուք ժպիտ գծագրվեց:

Մենք շարունակեցինք հեռանալ, և երբ մակույկը մի քանի մղոն ետ մնաց, նավը կանգնեցրինք ու սպասեցինք: Բոլորս դիտում էինք մակույկի մոտենալը, անգամ Գայլ Լարսենը, որը միակ անվրդով մարդն էր նավի վրա: Լուիսը, որը դիտում էր սևեռուն հայացքով, չկարողացավ թաքցնել հուզմունքը, որ բացահայտ երևում էր դեմքին:

Մակույկը կանաչ ու փրփրուն ջրի վրա տատանվելով, ավելի ու ավելի էր մոտենում: Նա ինչ-որ կենդանի էակի նման մագլցում էր հսկա կռիակների գազաթը, վայր սահելով անհետանում

էր, ապա նորից երևում և ցռուկը տնկած՝ վեր նետվում: Երբեմն թվում էր, թե այդ փոքրիկ մակույկն այլևս անկարող է տոկալու, և սակայն յուրաքանչյուր գլխապտույտ թռիչքով նա մի նոր հրաշք էր գործում: Մեկ էլ ուժեղ մի անձրև սկսվեց և քիչ հետո ջրային շղարշի միջից մակույկը դուրս ցցվեց, համարյա նավի կողքին:

— Դեպի քամի՛ն,— գոչեց գայլ Լարսենը և, ինքն անձամբ նետվելով դեկանիվի վրա, սկսեց արագ-արագ պտտել այն:

«Ուրվականը» նորից հեռացավ քամու ուղղությամբ, և Ջոնսոնն ու Լիչը մոտ երկու ժամ մեզ հետևեցին: Մենք կանգնում էինք, ապա նորից հեռանում, նորից կանգնում, նորից առաջանում, իսկ այդ ամբողջ ժամանակ մեր հետևից եկող փոքրիկ առագաստը սլանում էր կռիակների գագաթը և թավալվում անդնդախոր գոգավորությունների մեջ: Մակույկը մեզնից մոտ քառորդ մղոն հեռու էր, երբ անձրևի մի նոր տարափ ծածկեց նրան մեր տեսողությունից: Այլևս մակույկը չտեսանք: Քամին ցրեց ամպերը, բայց ջրի մակերեսին առագաստի ոչ մի հետք չկար: Ինձ թվաց, թե մակույկի սև հատակը մի ակնթարթ տեսա փլվող մի կռիակի կատարին: Միայն այդքան: Ջոնսոնի և Լիչի համար գոյության պայքարը դադարել էր:

Նավաստիները շարունակեցին խմբված մնալ տախտակամածին: Ոչ ոք ներքև չէր իջել, ոչ ոք չէր խոսում: Նրանք նույնիսկ հայացքներ չէին փոխանակում: Բոլորը ապշահար, խոր մտքերի մեջ թաղված, կարծես ջանում էին լրիվ ըմբռնել այն, ինչ տեղի էր ունեցել: Բայց Գայլ Լարսենը նրանց ժամանակ չտվեց մտածելու: Նա իսկույն հրամայեց փոխել նավի ընթացքը, ոչ թե դեպի Յոհոկամա, այլ դեպի ծովակատուների երամը: Բայց այս անգամ նավաստիներն առանց փութեռանդության լծվեցին աշխատանքի, և ես լսեցի հայիոյանքներ, որ արտաբերվում էին շնչասպառ, մռայլ ու անկենդան շրթներից: Սակայն որսորդների հոգեվիճակը տարբեր էր: Անդինադրելի Սմոքն սկսեց ինչ-որ պատմություն անել, և նրանք՝ իրենց խուցն իջան ահագնաձայն քրքջալով:

Երբ խոհանոցի մոտով գնում էի նավախել, ինձ մոտեցավ նորեկ մեխանիկը: Նրա դեմքը գունատ էր և շրթները դողդողում էին:

— Ի սեր աստծո, սը՛ր, այս ինչ տեսակ նավ է,— գոչեց նա:

— Դուք աչքեր ունեք և կարող եք ինքներդ տեսնել,— պատասխանեցի գրեթե կոպտությամբ, որովհետև սիրտս լցված էր վշտով ու վախով:

— Այդպե՛ս եք հարգում ձեր խոստումը,— ասացի ես, մոտենալով Գայլ Լարսենին:

— Խոստում տալու ժամանակ ես հանձն չառա նրանց նավ բարձրացնել,— պատասխանեց նա:— Եվ վերջ ի վերջո պետք է ընդունեք, որ նրանց վրա ձեռք չբարձրացրի:

Նա ծիծաղեց և ապա շարունակեց.

— Ինձնից հեռու՝ նրանց վրա ձեռք բարձրացնելը...

Ես չպատասխանեցի: Ուղեղս այնքան խառնաշփոթ վիճակումն էր, որ անկարող էի խոսել: Ես գիտակցում էի, որ մտքերս հավաքելու համար ժամանակ է հարկավոր: Այդ կինը, որն այժմ քնած է ներքևի խցիկում, ինձ համար ստեղծել է մի պարտավորություն, որը պետք է նկատի

ունենամ: Միակ տրամաբանական միտքը, որը ծագեց գլխումս, թելադրեց ինձ, որ նրան որևէ չափով օգտակար լինելու համար պետք է խուսափեմ հախուռն քայլերից:

Գլուխ քսաներորդ

Օրվա մնացած մասն անցավ առանց որևէ միջադեպի: Մեղմ փոթորիկը մեր «ականջները մի քիչ թրջեց» ու հետո սկսեց հանդարտվել: Գայլ Լարսենը նոր մեխանիկի և յուղ քսող երեք բանվորների հետ տաք վեճ ունեցավ և ի վերջո կարգադրեց, որ նրանք տարբեր մակույկներում ծառայեն որսորդների հրամայության տակ և նավի վրա պահնորդություն անեն: Ապա նրանց ծովային նոր հանդերձանք տվին և ուղարկեցին նավի առաջամասը: Բողոքելով, բայց առանց ձայները շատ բարձրացնելու, նրանք հեռացան: Այն, ինչ արդեն տեսել էին, նրանց սարսափ էր ազդել, իսկ այն, ինչ նավաստիներն առաջամասում հապճեպ պատմեցին, բավական եղավ նրանց հոգում մարելու ըմբոստության ամենավերջին կայծը:

Միսս Բրուստերը, — նրա անունը իմացել էինք մեխանիկից, — դեռ քնած էր: Ընթրիքի ժամանակ ես որսորդներին խնդրեցի ավելի ցածր խոսել, որպեսզի նրա քունը չխանգարեն: Օրիորդն իր խցից դուրս եկավ միայն հաջորդ առավոտյան: Ես ուզում էի այնպես դասավորել, որ ճաշերի ժամանակ նա առանձին սեղան նստի, բայց Գայլ Լարսենը առարկեց, ասելով.

— Ինչացո՞ւ է նա, որ նավասենյակի սեղանն ու սեղանակիցները անարժան լինեն նրա ընկերությանը:

Այնուամենայնիվ, սեղանի շուրջ միսս Բրուստերի ներկայությունը բավականին զվարճալի դրություն ստեղծեց: Որսորդները համրի նման պապանձվեցին: Միայն Ջոք Հոոները և Սմոքը, որոնք ամոթխած չէին, մեկ-մեկ գաղտագողի հայացքներ էին գցում նրա վրա և երբեմն նույնիսկ մասնակցում զրույցին: Մնացած չորսը, աչքերը հառած իրենց ափսեներին, պատառները ծամում էին մտածված կանոնավորությամբ, իսկ նրանց ականջները համապատասխանորեն երերում էին ծնոտի յուրաքանչյուր շարժումից, ինչպես անասուններինը:

Գայլ Լարսենը սկզբում քիչ էր խոսում և բավականանում էր միայն պատասխանելով իրեն ուղղված հարցերին: Նա ամոթխած չէր: Ընդհակառակն, շատ հեռու էր այդպիսին լինելուց: Բայց միսս Բրուստերը մի նոր տիպ էր և նրա ճանաչած մյուս կանանցից բոլորովին տարբեր դասի էր պատկանում: Հետևաբար նա պարզապես հետաքրքրված էր: Նա ուսումնասիրում էր անձանորոշություն, որի դեմքից իր հայացքը հազվադեպորեն էր միայն հեռացնում, այն էլ նրա ձեռքերի կամ ուսերի շարժումներին հետևելու համար: Ես ինքս էլ ուսումնասիրում էի կնոջը, և թեպետ ընդհանրապես զրույցը ես էի վարում նրա հետ, այնուամենայնիվ, զգում էի, որ մի քիչ ամաչում եմ և լիովին չեմ տիրապետում ինձ: Այնինչ Գայլ Լարսենը կատարյալ հավասարակշռության և գերագույն ինքնավստահության մարմնավորումն էր, որին ոչինչ չէր կարող վրդովել: Նա կանանցից նույնքան քիչ էր երկյուղ կրում, որքան փոթորկից ու պայքարից:

— Իսկ ե՞րբ ենք Յոկոհամա հասնելու, — հարցրեց հյուրը, դիմելով նրան և նայելով ուղիղ նրա աչքերի մեջ:

Հարցը արվել էր առանց այլևայլության: Ծնոտները մեկեն դադարեցին շարժվելուց, ականջները դադարեցին երերալուց և, թեպետ հայացքները շարունակ գամված էին ափսեներին, յուրաքանչյուրն անհազ հետաքրքրությամբ սպասում էր պատասխանին:

— Չորս ամսից, գուցե և երեք ամսից, եթե որսորդության ժամանակաշրջանը շուտ վերջանա,— պատասխանեց Գայլ Լարսենը:

Միսս Բրուստերի շունչը մի պահ կտրվեց, ապա նա թոթովելով ասաց.

— Ես... ես կարծում էի... Ինձ թվում էր, թե Յոկոհաման մեկ օրվա հեռավորության վրա է միայն: Դուք...— այստեղ նա լռեց և հայացքը պտտեց սեղանի շուրջը բոլորված անկարեկից դեմքերին, որոնք հակված էին ափսեների վրա:— Դուք իրավունք չունեք այդպես վարվելու,— վերջացրեց նա:

— Այդ հարցը դուք պետք է քննարկեք միստր Վան-Վելդենի հետ,— պատասխանեց Գայլ Լարսենը և ծաղրական արտահայտությամբ գլխով ինձ ցույց տվեց:— Միստր Վան-Վելդենը մեծ հեղինակություն է իրավունքի վերաբերյալ հարցերում: Մինչդեռ ես, որպես պարզ նավաստի, այդ հարցին այլ կերպ եմ նայում: Ձեզ համար, հավանորեն, դժբախտություն է մեզ հետ մնալը, մինչդեռ մեզ համար դա, անկասկած, մեծ բարեբախտություն է:

Նա ժպտալով նայեց միսս Բրուստերին, որի աչքերը խոնարհվեցին այդ սևեռուն հայացքի առաջ, ապա նորից բարձրացան և մարտահրավերի արտահայտությամբ ուղղվեցին ինձ: Ես նրա աչքերում կարդացի անխուս հարցը. ճի՞շտ է այդ: Բայց ես որոշել էի արտաքուստ չեզոքի դեր խաղալ, ուստի չպատասխանեցի:

— Ի՞նչ է ձեր կարծիքը,— հարցրեց նա:

— Կարծում եմ, որ ձեր դրությունն աննախանձելի է, մանավանդ եթե առաջիկա մի քանի ամսում կատարելիք անհետաձգելի գործեր ունեք: Բայց քանի որ ասում եք, թե Ճապոնիա եք գնում առողջական պատճառներով, ապա կարող եմ ձեզ հավաստիացնել, որ «Ուրվականի» վրա ավելի կկազդուրվեք, քան որևէ ուրիշ տեղ:

Նրա աչքերը կայծկլտածին զայրույթից և այս անգամ ես ինքս խոնարհեցի աչքերս, միաժամանակ զգալով, որ այտերս կարմրում են նրա հայացքի տակ: Ես վարվել էի վախկոտի նման, բայց ուրիշ ի՞նչ կարող էի անել:

— Միստր Վան-Վելդենը խոսում է որպես հեղինակություն,— ծիծաղեց Գայլ Լարսենը:

Ես գլխով արեցի, իսկ միսս Բրուստերը, որն արդեն տիրապետում էր իրեն, ակնկալությամբ սպասեց:

— Չի կարելի ասել, որ միստր Վան-Վելդենը արժանի է մեծ գովասանքի.— շարունակեց Գայլ Լարսենը,— բայց, այնուամենայնիվ, նա զարմանալի աճ է ապրել: Դուք պետք է նրան տեսնեիք այն օրը, երբ նավ եկավ: Նրանից ավելի թույլ ու ողորմելի մարդկային նմուշ դժվար էր պատկերացնել: Այնպես չէ՞, Քերֆուտ:

Քերֆուտը այնքան անակնկալի եկավ իրեն ուղղված այս հանկարծակի հարցից, որ դանակը ձեռքից ընկավ հատակին և նա հաստատական իմաստով ինչ-որ բառաչյուն արձակեց:

— Կարտոֆիլ մաքրելն ու ամաններ լվալը նպաստեցին նրա աճին, ճի՞շտ է, Քերֆուտ:

Հարգարժան սեղանակիցը նորից բռնաչեց:

— Իսկ այժմ նայեցե՛ք նրան: Ճիշտ է, նա այն չէ, որին կարելի է անվանել ջլապինդ, բայց, այնուհանդերձ, հիմա ունի ավելի մկաններ, քան այն ժամանակ, երբ առաջին անգամ հայտնվեց նավի վրա: Բացի դրանից, նա հիմա կանգնում է իր սեփական ոտքերի վրա: Նրան նայելիս դուք չեք կարող հավատալ, որ առաջ իրոք անկարող էր կանգնել իր ոտքերի վրա:

Որսորդները քթների տակ ծիծաղեցին, բայց միսս Բրուստերն ինձ նայեց համակրանքով, իսկ դա՛ ավելի քան հատուցեց Գայլ Լարսենի լկտիությունը: Ճիշտն ասած, այնքան երկար ժամանակից ի վեր որևէ մեկն իմ նկատմամբ համակրություն չէր ցուցաբերել, որ ես զգացվեցի և հաճույքով դարձա օրիորդի կամավոր ստրուկը: Բայց ես զայրացել էի Գայլ Լարսենի դեմ: Նա վիրավորական ակնարկություններով մարտահրավեր էր նետել տղամարդու արժանապատվությանս և ինձ գրգռել, հայտարարելով, թե իբր իր շնորհիվ եմ գտել սեփական ոտքերս:

— Գուցե ճիշտ է, որ սովորել եմ սեփական ոտքերի վրա կանգնել,— պատասխանեցի ես,— բայց ուրիշների ոտքերը տրորել տակավին չեմ սովորել:

Նա անպատկառ հայացքով ինձ նայեց:

— Ուրեմն ձեր վերադաստիարակությունը դեռ չի ավարտվել,— ասաց նա չորությամբ և դիմեց միսս Բրուստերին,— մենք չափազանց հյուրամեծար ենք «Ուրվականի» վրա, միստր Վան-Վեյդենը լավ գիտե այդ: Եվ ամեն ինչ անում ենք, որպեսզի հյուրերն իրենց զգան, ինչպես տանը: Ճի՞շտ է, միստր Վան-Վեյդեն:

— Այո, այն աստիճան, որ նրանց ստիպում եք կարտոֆիլ մաքրել և աման լվանալ,— պատասխանեցի ես,— դեռ չհաշված այն, որ գործազին բարեկամությունից մղված՝ նրանց վզերն եք ոլորում:

— Ես խնդրում եմ, որ միստր Վան-Վեյդենի խոսքերից դատելով, մեր մասին վատ պատկերացում չունենաք,— միջամտեց Գայլ Լարսենը կեղծ անհանգստությամբ:— Նկատի ունեցեք, միսս Բրուստեր, որ նա իր գոտու մեջ դաշույն է կրում, իսկ դա, հը՛մ, չափազանց անսովոր բան է նավապետի օգնականի համար: Շատ հարգարժան լինելով հանդերձ, միստր Վան-Վեյդենը երբեմն, ինչպե՞ս բացատրեմ... կռվարար է: Այնպես որ անհրաժեշտ է լինում խիստ միջոցառումների դիմել: Իր հանդարտ բույներին նա բավականաչափ արդարամիտ ու կշռադատող է, և քանի որ այս բույեիս նա հանդարտ է, ես կարծում եմ չի ժխտի, որ դեռ երեկ սպառնաց իմ կյանքին վերջ տալ:

Քիչ էր մնում, որ զայրության շնչահեղձ լինեի, այդ պահին աչքերս, անկասկած, կատաղի արտահայտություն էին ստացել: Գայլ Լարսենը սեղանակցուհու ուշադրությունը հրավիրեց ինձ վրա:

— Ահա՛, նայեցեք նրան: Նա չի կարողանում իրեն զսպել անգամ ձեր ներկայությամբ: Իհարկե, նա սովոր չէ կանանց շրջապատին: Ես պետք է զինվեմ, որպեսզի համարձակվեմ նրա հետ տախտակամած բարձրանալ:

— Շատ ցավալի է, շա՛տ ցավալի,— շարունակեց նա շշնջալով և գլուխը կեղծ տրտմությամբ օրորելով: Որսորդները որոտաձայն հռհռացին:

Փոքր սենյակում բառաչող ու մոնչացող այդ մարդկանց խոպոտ հռհռոցի մեջ ինչ-որ վայրի բան կար: Փաստորեն ամբողջ շրջապատը վայրի էր: Դիտելով անծանոթ կնոջը և ըմբռնելով, թե նա որքան անհամատեղելի է այս շրջապատի հետ, ես առաջին անգամ գիտակցեցի, որ ինքս էլ կազմում եմ նույն շրջապատի անբաժանելի մի մասը: Այժմ ես ճանաչում եմ այս մարդկանց, գիտեմ նրանց հոգեբանությունը, ինքս էլ նրանցից մեկն եմ, ապրում եմ նրանց պես և նրանց պես զբաղվում ծովակատվի որսորդությամբ, ուտում եմ ծովակատու որսացողների ճաշերը և մտածում նրանց մտածելակերպով: Ինձ համար այլևս տարօրինակ չէին նրանց կոշտ զգեստները, կոպիտ դեմքերը, վայրի հռհռոցը, ինչպես և խցերի տատանվող միջնորմներն ու օրորվող լամպերը:

Երբ կարագ էի քսում հացի շերտին, հայացքս պատահմամբ ընկավ ձեռքիս վրա: Ոսկրահողերիս մաշկը պլոկվել ու բորբոքվել էր, մատներս ուռել էին, եղունգներս սև կեղտով երիզվել: Ես անդրադարձա, որ մորուքս երկարել ու թանձր վերմակի պես փոփվել էր վիզս ի վար, բաճկոնիս թևերը ճմրթվել էին և կապտագույն շապիկիս օձիքի կոճակը պոկվել էր:

Դաշույնը, որի մասին ակնարկել էր Գայլ Լարսենը, պատյանով հանդերձ կախված էր իմ գոտուց: Մինչև հիմա ինձ շատ բնական էր թվում դաշույնի ներկայությունը, բայց երբ նայեցի միսս Բրուստերի աչքերով, այն ժամանակ միայն գիտակցեցի, թե նրան որքան տարօրինակ պետք է թվան և՛ դաշույնը, և՛ մնացյալ բոլոր մանրամասները:

Սակայն միսս Բրուստերը գուշակեց Գայլ Լարսենի խոսքերում թաքնված ծաղրանքը և ինձ շնորհեց համակրալից մի նոր հայացք: Բայց նրա աչքերում կար նաև զարմանքի արտահայտություն, որովհետև Գայլ Լարսենի ծաղրանքը ամբողջ իրադրությունը ավելի անըմբռնելի էր դարձնում նրա մտքում:

— Գուցե մեզ հանդիպող մի որևէ նավ ինձ վերցնի,— առաջարկեց նա:

— Այս կողմերում ոչ մի նավի չենք հանդիպելու, բացի որսորդական երկկայմանավերից,— պատասխանեց Գայլ Լարսենը:

— Բայց ես հագուստ չունեմ,— առարկեց միսս Բրուստերը:— Դուք երևի մոռանում եք, սը՛ր, որ ես տղամարդ չեմ և վարժ չեմ այն թափառական ու անհոգ կյանքին, որ, ըստ երևույթին, վարում եք դուք և ձեր մարդիկ:

— Որքան շուտ վարժվեք, այնքան լավ,— պատասխանեց Գայլ Լարսենը:— Ես ձեզ կտամ կտորեղեն, ասեղ ու դերձան: Կարծում եմ, որ մեկ-երկու ձեռք հագուստ կարելը ձեզ համար այնքան էլ դժվար չէ:

Միսս Բրուստերը շրթները ծամածռեց, կարծես հայտնելու համար իր անգիտությունը կարուձևի հարցերում: Ինձ համար շատ պարզ էր, որ նա շփոթված ու վախեցած է, բայց քաջաբար ջանում է թաքցնել իր հոգեվիճակը:

— Ենթադրում եմ, որ դուք էլ միսս Կան-Վեյդենի պես սովոր եք, որ ուրիշները կատարեն ձեր գործերը: Այնուհանդերձ, կարծում եմ, որ եթե ձեզ համար մի քիչ աշխատանք կատարեք,

դրանից ձեր հոգերը չեն խախտվի: Ի միջի այլոց, դուք ի՞նչ եք անում ձեր ապրուստը հոգալու համար:

Միսս Բրուստերը նայեց նրան անսքող զարմանքով:

— Հավատացնում եմ, որ վիրավորելու մտքով չեմ հարցնամ այդ: Բայց մարդիկ ուտում են և հետևաբար պետք է մի կերպ հայթայթեն իրենց ապրուստը: Սրանք, օրինակ, ապրելու համար ծովակատու են դրսում: Նույն նպատակով էլ ես դեկավարում եմ այս երկկայմանավը: Միստր Վան-Վեյդենը, զոնե ժամանակավորապես, իր աղի ճաշը վաստակում է ինձ օգնելով: Իսկ դո՞ւք ինչով եք զբաղվում:

Միսս Բրուստերը ուները թոթվեց:

— Դո՞ւք եք ձեզ կերակրում, թե ուրիշն է աշխատում ու ձեզ կերակրում:

— Պետք է խոստովանեմ, որ ուրիշն է ինձ կերակրել իմ կյանքի մեծ մասի ընթացքում,— ծիծաղեց օրիորդը, արիաբար ջանալով նույն ծաղրական տոնը պահպանել, թեև ես նկատում էի, որ նրա աչքերում սարսափը փոխնիփոխ ավելանում ու նվազում էր Գայլ Լարսենի հետ խոսելիս:

— Եվ ես ենթադրում եմ, որ ուրիշն է ձեզ համար ձեր անկողինը փռում, այո՞:

— Ես ինքս էլ եմ անկողին փռել:

— Հաճա՞խ:

Օրիորդը կեղծ տխրությամբ գլուխը բացասական օրորեց:

— Դուք գիտե՞ք, թե Միացյալ Նահանգներում ինչ են անում չքավորներին, որոնք, ձեզ նման, չեն աշխատում իրենց ապրուստի համար:

— Ես չափազանց անգիտակ եմ,— խոստովանեց միսս Բրուստերը,— ի՞նչ են անում այն չքավորներին, որոնք, ինձ նման, չեն աշխատում:

— Բանտ են ուղարկում: Այդ դեպքում ապրուստի համար չաշխատելու հանցանքը կոչվում է դատարկապորտություն: Եթե ես միստր Վան-Վեյդեն լինեի, որը հավերժորեն հանգերգում է իրավունքի և անարդարության հարցերի մասին, ապա կհարցնեի, թե ի՞նչ իրավունքով եք դուք ապրում, եթե ոչինչ չեք անում ձեր գոյությունը արդարացնելու համար:

— Բայց քանի որ դուք միստր Վան-Վեյդեն չեք, ապա ես պարտավոր չեմ պատասխանելու, այո՞:

Նրա սարսափահար աչքերի միջից փայլեց մի ժպիտ, որն այնքան հուզիչ էր, որ սիրտս մղկտաց: Ես զգացի, որ պետք է մի կերպ միջամտեմ ու խոսակցության նյութը փոխեմ:

— Դուք երբևէ մի դոլլար վաստակե՞լ եք ձեր սեփական աշխատանքով,— հաղթական քինախնդրությամբ հարցրեց Գայլ Լարսենը, նախապես վստահ ստանալիք պատասխանին:

— Այո, վաստակել եմ,— դանդաղ պատասխանեց օրիորդը, իսկ ես, տեսնելով Գայլ Լարսենի ձգված դեմքը, քիչ մնաց բարձրաձայն ծիծաղեի:— Հիշում եմ, որ երբ փոքր աղջիկ էի, մի

անգամ հայրս ինձ մեկ դուլար տվեց, որպեսզի հինգ րոպե բացարձակապես լուռ ու խելոք մնամ:

Գայլ Լարսենը ներողամտաբար ժպտաց:

— Բայց դա շատ վաղուց էր,— շարունակեց միսս Բրուստերը:— Եվ դուք, անշուշտ, ինքնատրեկան աղջկանից չէիք պահանջի, որ նա վաստակի իր ապրուստը:

— Բայց այժմ,— հարեց նա մի կարճ դադարից հետո,— ես վաստակում եմ տարեկան հազար ութ հարյուր դուլար:

Բոլոր հալացքները միաժամանակ պոկվեցին ափսեներից և ուղղվեցին միսս Բրուստերի դեմքին: Տարեկան հազար ութ հարյուր դուլար վաստակող կինն իրոք արժանի է ուշադրության՝ Գայլ Լարսենը չթաքցրեց իր հիացմունքը:

— Դա ռոճի՞կ է, թե գործավարձ,— հարցրեց նա:

— Գործավարձ,— փութկոտությամբ պատասխանեց օրիորդը:

— Հազար ութ հարյուր...— հաշվեց Գայլ Լարսենը,— այդ նշանակում է ամիսը հարյուր հիսուն դուլար: Դե լավ, միսս Բրուստեր, «Ուրվականի» վրա էլ առատաձեռնություն կգտնեք: Դուք աշխատավարձ կստանաք այնքան ժամանակ, քանի դեռ մեզ մոտ եք:

Օրիորդը ոչինչ չպատասխանեց: Նա այս մարդու քմահաճույքներին դեռ ծանոթ չէր և չգիտեր, թե ինչպես պետք է վերաբերվել դրանց:

— Ես մոռացա հարցնելու ձեր զբաղմունքի բնույթը,— շարունակեց Լարսենը քաղցրությամբ:— Ինչպիսի՞ առարկաներ եք արտադրում և ի՞նչ նյութեղեններ ու գործիքներ են հարկավոր ձեզ:

— Թուղթ և մատիտ,— ծիծաղեց օրիորդը,— և չմոռանամ, նաև մի գրամեքենա:

— Ուրեմն, դուք... Մոդ Բրուստերն եք,— ասացի ես այնպես դանդաղ և համոզված, որ կարծես նրան ամբաստանում էի ինչ-որ հանցագործության համար:

Նա հետաքրքրությամբ նայեց ինձ:

— Որտեղի՞ց գիտեք:

— Ասացեք, ճի՞շտ է:

Նա գլխի շարժումով հաստատեց իր ինքնությունը: Շփոթվելու հերթը հիմա Գայլ Լարսենինն էր: Այդ կախարդական անունը նրան ոչինչ չէր ասում: Ես հպարտ էի, որ այն ինձ համար նշանակություն ուներ, և այդ ձանձրալի գրույցի ընթացքում առաջին անգամ զգացի իմ անժխտելի գերազանցությունը Գայլ Լարսենի հանդեպ:

— Հիշում եմ, որ ինչ-որ գրախոսական եմ գրել մի փոքրիկ հատորի մասին...— անհոգ արտահայտությամբ սկսեցի ես, բայց նա ինձ ընդհատեց:

— Դո՞ւք...— գոչեց նա:— Ուրեմն դուք...

Այժմ նա ինձ դիտում էր լայնաբաց, ապշահար աչքերով:

Ես էլ իմ հերթին, գլխի շարժումով հաստատեցի իմ ինքնությունը:

— Դուք Հեմֆրի Վան-Վեյդեն եք... — ավարտեց նա իր խոսքը: Ապա թեթևացման մի հառաչանք արձակելով, անգիտակցաբար նայեց Գայլ Լարսենին և բացականչեց. — Օ՛հ, որքա՛ն ուրախ եմ...

— Ես հիշում եմ այդ գրախոսականը, — շտապ ավելացրեց նա, զգալով իր բացականչության անպատշաճությունը, — դա չափից ավելի փաղաքշական գրախոսական էր:

— Բնավ երբեք, — առարկեցի ես ասպետորեն: — Երևի դուք թերագնահատում եք իմ զգաստ դատողությունը և արժեքագրելով իմ քննադատությունը: Համենայն դեպս, մեր բոլոր գրաքննադատներն իմ կարծիքին էին: Մի՞թե Լանգը ձեր «հանդուրժված համբույրը» չդասեց անգլերեն գրող բանաստեղծուհիների լավագույն չորս սոնետների շարքը:

— Բայց դուք ինձ անվանել էիք Ամերիկայի միսիս Մեյնելը:

— Մի՞թե ճիշտ չէր այդ, — հարցրի ես:

— Բանը դրանում չէ, — պատասխանեց նա: — Ես պարզապես վիրավորվել էի:

— Մենք անհայտը չափում ենք հայտնի երևույթների միջոցով, — պատասխանեցի ես ակադեմիական նրբագույն ոճով: — Որպես գրաքննադատ, ես պարտավոր էի ձեր տեղը որոշել գրականության մեջ: Իսկ այժմ դուք ինքներդ եք չափանիշ դարձել: Ձեր հինգ բարակ հատորները իմ դարակումն են, դրանց կողքին շարված են երկու ավելի հաստ հատորները՝ ձեր ակնարկն երբ, որոնք, թույլ տվեք ասել, լիովին համարժեք են ձեր բանաստեղծություններին, թեև դժվարանում եմ որոշել, թե դրանցից ո՞րն է ամենաբարձր գովասանքին արժանի: Հեռու չէ այն օրը, երբ Անգլիայում կհայտնվի մի անհայտ բանաստեղծուհի, որին գրաքննադատները կանվանեն Անգլիայի Մոդ Բրուստերը:

— Դուք չափազանց բարյացակամ եք, — շնչաց նա, և նրա խոսքերի ու խոսելաձևի պայմանականությունն իմ մեջ արթնացրեց հեռավոր աշխարհում ապրած նախկին կյանքիս հետ առնչվող բազմաթիվ հուշեր, և ես հուզմունքից սարսռացի: Այդ հուզմունքը թաթախված էր քաղցր հիշողություններով և միաժամանակ՝ թախծալի հայրենաբաղձությամբ:

— Այդպես, ուրեմն, դուք Մոդ Բրուստերն եք, — ասացի ես հանդիսավորությամբ և նայեցի նրան:

— Իսկ դուք՝ Հեմֆրի Վան-Վեյդենը, — արձագանքեց նա, ինձ նայելով նույնպիսի հանդիսավորությամբ ու հարգանքով: — Որքան տարօրինակ է... Իսկապես ոչինչ չեմ հասկանում: Ի դեպ, կարելի՞ է արդյոք ակնկալել, որ ձեր զուսպ գրչի տակից դուրս գա անզուսպորեն ռոմանտիկ մի ծովային պատմություն:

— Ոչ, հավատացնում եմ ձեզ, որ ես այստեղ նյութեր չեմ հավաքում, — եղավ իմ պատասխանը: — Վեպ գրելու ոչ հակում, ոչ էլ կարողություն ունեմ:

— Ասացեք խնդրեմ, դուք ինչո՞ւ միշտ թաղված եք մնում Կալիֆորնիայում, — հարցրեց նա մի պահ լռությունից հետո: — Ձեր կողմից դա անսիրալիրություն է: Մենք արևելյան

նահանգներում համարյա չենք տեսել ձեզ՝ ամերիկյան գրականության Երկրորդ ուսուցչապետին

Ես գլխի խոնարհումով հրաժարվեցի ինձ շոայլված մեծարանքից:

— Մի անգամ Ֆիլադելֆիայում քիչ էր մնացել, որ իրար հանդիպեինք,— ասացի ես:— Բրոունինգի առնչությամբ ինչ—որ հավաքույթ էր կայանալու և դուք պետք է զեկուցում կարդայիք: Բայց իմ գնացքը չորս ժամով ուշացավ:

Այնուհետև մենք մոռացանք մեր շրջապատը և տարվեցինք զրույցով, բոլորովին անտեսելով Գայլ Լարսենին, որը լուռ և ուշադիր հետևում էր մեզ: Որսորդները, վեր կենալով, բարձրացան տախտակամած: Միայն Գայլ Լարսենը մնաց մեզ հետ: Հանկարծ նկատեցի, թե ինչպես իր այթոռի թիկունքին հենված՝ նա հետաքրքրությամբ ունկնդրում էր իրեն անծանոթ մի աշխարհի պատկանող մեր խոսակցությանը: Եվ ես խոսքս կտրեցի նախադասության կեսին: Ներկան իր բոլոր վտանգներով ու արհավիրքներով ահեղորեն լցվեց իմ առաջ: Միսս Բրուստերը կարծես նույն զգացմունքն ունեցավ, և երբ նայեց Գայլ Լարսենին, հանկարծ աչքերը լցվեցին անորոշ ու անանուն մի սարսափով:

Լարսենը վեր կացավ և արհեստական մի ծիծաղ արձակեց: Այդ ծիծաղը հնչեց մետաղի սառնությամբ:

— Ինձ վրա ուշադրություն մի դարձնեք,— ասաց նա, ձեռքը թափահարելով ինքնաստորացման արտահայտությամբ:— Ես հաշվի մեջ չեմ: Շարունակեցե՛ք, խնդրեմ, շարունակեցե՛ք:

Բայց մեր զրույցի դարպասներն արդեն փակվել էին, այնպես որ մենք էլ վեր կացանք՝ արհեստականորեն ծիծաղելով:

Գլուխ քսանմեկերորդ

Գայլ Լարսենը դառնացել էր, որ միսս Բրուստերն ու ես սեղանի շուրջը զրուցելիս իրեն անտեսել էինք: Այդ դառնությունը պիտի մի կերպ արտահայտվեր, և Թոմաս Մագրիջին վիճակվեց զոհ դառնալ: Խոհարարը չէր բարելավել իր սովորությունները, չէր փոխել նաև շապիկը, թեև պնդում էր, թե փոխել է: Սակայն ոչ շապիկի տեսքն էր հաստատում նրա այդ պնդումը, ոչ էլ յուզոտ վառարանը, կաթսան ու թավան էին վկայում խոհանոցի մաքրության մասին:

— Քեզ ժամանակին նախազգուշացրել էի, խոհարա՛ր,— ասաց Գայլ Լարսենը,— ուստի պետք է հիմա պատիժդ կրես:

Մագրիջի դեմքը գունատվեց իր մրե շպարի տակ, և երբ Գայլ Լարսենը երկու նավաստի կանչեց ու հրամայեց պարանը բերել, թշվառականը լեղապատառ դուրս փախավ խոհանոցից և սկսեց աջ ու ձախ վազվզել տախտակամածի վրա, մինչ նավաստիները նրան ծիծաղելով հետապնդում էին: Նրանց համար գերագույն հաճույք կլիներ՝ խոհարարին մի լավ թաթախել ծովում, որովհետև նա ամենանողկալի կերակուրներն էր ուղարկում նավաստիների խուցը: Պայմանները նպաստեցին այդ ձեռնարկությանը: «Ուրվականը» ընթանում էր ժամը հազիվ

երեք մղոն արագությամբ, և ծովը բավականին հանդարտ էր: Բայց խոհարարը վախենում էր ջրի մեջ սուզվելուց: Հավանորեն, նա անցյալում տեսել էր ուրիշների սուզվելը: Բացի դրանից, ջուրը չափազանց սառն էր, իսկ խոհարարի առողջությունը՝ ոչ այնքան նախանձելի:

Պահակահերթի նավաստիներն ու որսորդները, ինչպես լինում է այսպիսի դեպքերում, տախտակամած բարձրացան դիտելու զվարճախաղը: Մագրիջը, ըստ երևույթին, չափից ավելի էր սարսափում ջրից, և նա ցուցաբերեց այնպիսի ճկունություն ու արագաշարժություն, որպիսին բնավ չէինք ակնկալում: Հասնելով խոհանոցի և հարթակի անկյունին, նա կատվի պես ցատկեց ձեղնախցիկի կտուրի վրա և վազեց դեպի նավախել: Բայց նավաստիները նրա ճանապարհը կտրեցին, և նա ետ վազեց, անցավ ձեղնախցիկի ու խոհանոցի կտուրները, ցատկեց տախտակամածի վրա և խոյացավ դեպի առաջամաս: Թիավար Հարրիսոնը կրնկակոխ հետապնդելով մոտենում էր նրան: Բայց Մագրիջը հանկարծական թռիչք կատարելով հասավ եռանկյուն առագաստի պարանին: Այդ տեղի ունեցավ մի ակնթարթում: Պարանից կախված՝ նա նետվեց դեպի առաջ և երկու ոտքով խփեց Հարրիսոնի փորին: Նավաստին ակամա ճիչ արձակելով, երկտակվեց ու փովեց հատակին:

Որսորդներն այդ սխրագործությունը ոգջունեցին ծափահարություններով ու որոտալից քրքիջներով: Մագրիջը առաջակայմի մոտ ճողոպրեց իրեն հալածողների ձեռքերից և դարձյալ խոյացավ առաջ, սողանցելով նավաստիների միջով, ինչպես ֆուտբոլի դաշտում հարձակվողն անցնում է մյուս խաղացողների արանքով: Ապա բարձրացավ հարթակի վրա և վազեց դեպի նավախել: Նա այնքան արագ էր վազում, որ ձեղնախցիկի անկյունը շրջանցելիս սայթաքեց ու գլորվելով բախվեց ղեկանիվի առաջ կանգնած Նիլսոնի ոտքերին: Երկուսը միասին փովեցին տախտակումածի վրա, բայց միայն Մագրիջը վեր կացավ: Բախտի տարօրինակ քմահաճույքով նրա դուրբաբեկ մարմինը կոտրել էր ուժեղ նավաստու ոտքը, ինչպես մի ծղոտ:

Ղեկանիվի մոտ Նիլսոնին փոխարինեց Պարսոնսը, և հետապնդումը շարունակվեց: Խոհարարն ու նավաստիները տախտակամածի ամբողջ շրջանը նորից ու նորից բոլորեցին: Մագրիջը վազում էր սարսափից խելացնոր, նավաստիները նրան հետապնդում ու գոռգոռալով իրար հրահանգներ էին տալիս, իսկ որսորդները ահագնաձայն ծիծաղում ու խրախուսում էին: Ամբարածածկի մոտ խոհարարը վայր ընկավ, ու նրա վրա թափվեցին երեք նավաստի, բայց նա օձաձկան պես դուրս սահեց մարմինների կույտի տակից ու սլացավ դեպի գլխավոր կայմապարանը: Նրա բերանը արյունոտովել էր, իսկ չարաղետ շապիկը՝ բոլորովին զգզվել ու ծվենների վերածվել: Նա մազլեց թոկով, հետո բարձրացավ պարանե ելարանով ու հասավ կայմի գագաթը:

Վեց նավաստիներ, հետևելով նրան, խոնվեցին կայմահարթակի վրա, որտեղ նրանց մի մասը մնաց ու սպասեց, իսկ երկուսը՝ Ուֆտի-Ուֆտին և Բլեկը (Լետիմերի թիավարը), շարունակեցին մազլեց կայմը կանգուն պահող պողպատե բարակ թելերով:

Դա վտանգավոր ձեռնարկ էր, որովհետև գտնվելով տախտակամածից ավելի քան հարյուր ոտնաչափ բարձր և մարմինը միայն ձեռքերով բարձրացնելով, նրանք ի վիճակի չէին պաշտպանվելու Մագրիջի քացիներից: Մագրիջը կատաղորեն քացիներ տվեց, մինչև որ ի վերջո Ուֆտի-Ուֆտին պարանից կախվեց միայն մեկ ձեռքով և մյուսով բռնեց նրա ոտքը: Բլեկը, նույն հնարին դիմելով, կառչեց խոհարարի մյուս ոտքից: Այնուհետև, գրկախառնվելով,

ճոճվելով ու մաքառելով, նրանք երեքով վայր սահեցին և ընկան կայմահարթակի վրա կանգնած նավաստիների ձեռքերի մեջ:

Օդային պայքարն ավարտվեց և Թումաս Մագրիջին իջեցրին տախտակամած: Նա կաղկանձում էր և արյունով փրփրակալած բերանից ինչ-որ անորոշ ու անհասկանալի խոսքեր արտաբերում: Գայլ Լարսենը պարանի ծայրում հանգուցավոր օղակ սարքեց և անցկացրեց խոհարարի թևի տակ: Հետո նրան տարան նավախել և գցեցին ծովը: Պարանը բաց թողեցին քառասուն, հիսուն, վաթսուն ոտնաչափ, մինչև որ Գայլ Լարսենը գոչեց.

— Բավական է:

Ուֆտի-Ուֆտին պարանն ամրացրեց ճոպանակոճին: Երբ նավը հաջորդ ալիքի վրայից ցած սահեց, նրա խելը վեր բարձրացավ և պարանը ինքնաբերաբար ձգելով խոհարարին հանեց ջրի երես:

Դա մի գթաշարժ տեսարան էր: Թեև Մագրիջը չէր կարող խեղդվել և կատունների պես յոթ հոգի ուներ, այնուամենայնիվ, կրում էր խեղդվողի բոլոր տանջանքները: «Ուրվականը» առաջանում էր շատ դանդաղ: Ամեն անգամ, երբ նավախելը բարձրանում էր ալիքի վրա, պարանը ձգվում էր ու խեղճ թշվառականին հանում ջրի մակերեսը, և սա հազիվ ժամանակ էր ունենում շունչ քաշելու: Բայց մինչև նավախելի հաջորդ բարձրանալը, որը տեղի էր ունենում երկար ընդմիջումով, պարանը թուլացած էր լինում, և խոհարարը մնում էր ջրի մեջ սուզված:

Ես բոլորովին մոռացել էի Մոդ Բրուստերի գոյությունը և նրան հանկարծ հիշեցի հենց այն վայրկյանին, երբ նա հուշիկ մոտենալով կանգնեց իմ կողքին: Նավ գալուց հետո նա առաջին անգամ էր հայտնվում տախտակամածի վրա: Նրա հայտնությունը գիմավորվեց մեռելային լռությամբ:

— Ի՞նչ է այս գվարճության պատճառը,— հարցրեց նա:

— Նավապետ Լարսենին հարցրեք,— պատասխանեցի ես հանդարտ ու սառնարյուն, թեև ներքուստ արյունս եռում էր այն մտքից, թե այժմ օրիորդը ականատես է լինելու այս վայրագ տեսարանին:

Իմ խորհրդին հետևելով, նա պատրաստվում էր Գայլ Լարսենին դիմել, երբ հայացքն ընկավ Ուֆտի-Ուֆտիի վրա, որն իր գեղեցիկ ու ճկուն մարմնի բովանդակ շքեղությամբ կանգնած էր ճիշտ մեր դիմաց, պարանի ծայրը ձեռքին:

— Ձո՞ւկ եք որսում,— հարցրեց օրիորդը նրան:

Նա չպատասխանեց, բայց աչքերը, որ սևեռած էին ծովի վրա, հանկարծ փայլատակեցին:

— Շնաձո՞ւկ, սը՛ր,— գոչեց նա:

— Քաշեցե՛ք պարանը, արա՛գ, բոլո՛րդ միասին,— գոռաց Գայլ Լարսենը և ամենից առաջ ինքը նետվեց պարանի վրա:

Մագրիջը լսեց Ուֆտի-Ուֆտիի նախազգուշացնող աղաղակը և սկսեց խելացնոր ճչալ: Ես տեսա մի սև լողակ, որը ջուրը ճեղքելով խոհարարին էր մոտենում ավելի սրընթաց, քան մենք

նրան քաշում էինք դեպի նավը: Մենք և շնաձուկը հաջողության հավասար հավանականություններ ունեինք, և հաջորդ մի քանի վայրկյանները պետք է որոշեին խոհարարի բախտը: Երբ Մագրիջն արդեն հասել էր ճիշտ մեր ներքևը, նավախելը հանկարծ իջավ անցնող ալիքի գոգավորության մեջ և այդպիսով շնաձուկը առավելություն չափեց: Լողակը անհետացավ, և շնաձկան ճերմակ փորը ջրի մեջ փայլեց՝ արագորեն վեր խոյանալիս: Գայլ Լարսենը գրեթե նույն արագությամբ գործեց: Նա իր ամբողջ ուժը ներդրեց մի հզոր ցնցումի մեջ և խոհարարի մարմինը ջրից դուրս սլացավ: Նրա հետևից դուրս սլացավ և շնաձուկը: Մագրիջը ոտքերը վեր քաշեց և թվաց, թե մարդակեր գազանը հազիվ դիպավ նրա մեկ ոտքին: Մագրիջը մի սուր ճիչ արձակեց և նույն վայրկյանին շնաձուկը ճողփյունով նորից սուզվեց ջրի մեջ: Խոհարարին վերև բարձրացրին ինչպես կարթով որսած մի ձուկ: Նավաբազրիքի վրայով նա չորեքթաթ ընկավ տախտակամածի վրա և սկսեց գլորվել ու թալտալ:

Բայց տախտակամածի վրա արյան շատրվան էր ցայտում: Մագրիջի աջ ոտքը չկար, շնաձուկը այն թոցրել էր ուղիղ կռճից: Ես նայեցի Մոդ Բրուստերին: Նրա դեմքը գունատվել էր և աչքերը լայնացել էին սոսկումից: Նա նայում էր ոչ թե Մագրիջին, այլ Գայլ Լարսենին: Վերջինս զգաց նրա հայացքը և, իր կտրուկ ծիծաղներից մեկն արձակելով, ասաց.

— Տղամարդու խաղեր են սրանք, միսս Բրուստեր: Գուցե ավելի կուպիտ են, քան նրանք, որոնց դուք սովոր եք, բայց, այնուամենայնիվ, տղամարդու խաղեր են: Շնաձուկը հաշվի մեջ չէր: Նա...

Հենց նույն վայրկյանին Մագրիջը, որը գլուխը բարձրացնելով ստուգել էր իր ոտքի կորուստը, տախտակամածի վրա թավալվելով մոտեցավ և ատամները խոր թաղեց նավապետի ոտքի մեջ: Գայլ Լարսենը հանդարտ կոացավ և բթամատով ու ցուցամատով սեղմեց խոհարարի ծնոտը, ճիշտ ականջների ներքևում: Մագրիջի բերանը ինքնաբերաբար բացվեց, և Գայլ Լարսենը ազատ առաջ քայլեց:

— Ինչպես ասում էի,— շարունակեց նա, կարծես անսովոր ոչինչ պատահած չլիներ,— շնաձուկը հաշվի մեջ չէր: Նա հանդես եկավ, եթե կարելի է այսպես ասել, որպես նախախնամության ձեռքը:

Մոդ Բրուստերը կարծես ոչինչ չլսեց, բայց աչքերը լցվեցին աննկարագրելի նողկանքով, և նա պատրաստվեց հեռանալ: Սակայն հազիվ էր շարժվել, երբ ամբողջ մարմնով տատանվեց և ձեռքը թուլորեն մեկնեց դեպի ինձ: Ես ճիշտ ժամանակին կարողացա նրան պահել ընկնելուց և օգնեցի, որ նստի ձեղնախցիկի վրա: Կարծում էի՝ ուշքը կգնա, բայց նա իրեն իշխեց:

— Բարեհաճեցեք մի երակակալ բերել, միստր Վան—Վեյդեն,— կանչեց ինձ Գայլ Լարսենը:

Ես վարանում էի: Միսս Բրուստերի շրթները շարժվեցին, բայց չկարողացան ոչ մի խոսք արտաբերել: Եվ նա աչքերով ինձ հրամայեց, այնքան պարզ, ինչպես խոսքը, գնալ ու օգնել դժբախտ աղետյալին:

— Խնդրում եմ,— շնջաց նա ի վերջո, և ես ակամա հնազանդվեցի:

Արդեն այնքան ճարպկություն էի ձեռք բերել վիրաբուժության մեջ, որ Գայլ Լարսենը միայն մի քանի խորհուրդ տվեց ու հեռացավ, ինձ մոտ թողնելով երկու նավաստի որպես օգնական:

Նա այժմ իր պարտքն էր համարում վրեժ լուծել շնածկից: Նավեզրից պարանով իջեցրին մի խոշոր կարթ, որին ամրացված էր խոզի աղած ճարպ: Ես հագիվ էի փակել Մագրիջի վնասված մի քանի երակներն ու անոթները, երբ նավաստիներն սկսեցին երգելով վեր քաշել մեղավոր շնածկանը: Ես նրան չտեսա, բայց իմ օգնականները մեկը մյուսի հետևից ինձ թողեցին մի քանի թուփերով և վազեցին տախտակամածի կենտրոնը տեսնելու, թե ինչ է կատարվում: Շնածուկը իր տասնվեց ոտնաչափ հասակով կախված էր միջնակայմից, նրա երախը լծակներով բացեցին մինչև վերջին սահմանը և մեջը գետեղեցին փայտե ամուր, երկու ծայրը սրած մի ցից: Երբ լծակները հեռացրին, ծնոտներն ամրացան ցցի ծայրերին: Դրանից հետո կարթի պարանը կտրեցին և շնածուկն ընկավ ծովը: Այժմ, հակառակ իր ամբողջ հզորությանը, նա դարձել էր անկարող և դատապարտված էր դանդաղ սովամահության: Այդ կենդանի դիակը նվազ արժանի էր նման պատժի, քան պատիժը հնարող մարդը:

Գլուխ քսաներկուերորդ

Երբ միսս Բրուստերը մոտեցավ ինձ, ես արդեն գլխի էի ընկել, թե Բանն ինչու՞մն է, մոտ տաս թուփե դիտել էի, թե ինչպես նա եռանդագին խոսում է մեխանիկի հետ: Ձեռքով լռություն հանձնարարելով, ես նրան հեռացրի դեկորդի լսողությունից: Մանկամարդ կնոջ դեմքը գունատ ու ձգված էր, իսկ խոշոր աչքերը, որոնք վճռականությամբ լցվելով, ավելի էին մեծացել, թափանցող հայացքով նայում էին ինձ: Ես մի տեսակ երկչոտություն, նույնիսկ երկյուղ զգացի, տեսնելով, որ նա ուզում է զննել հեմֆրի Վան-Վեյդենի հոգին, մինչդեռ Հեմֆրի Վան-Վեյդենը հպարտանալու առանձնապես ոչինչ չունեի այն օրից, երբ ոտք էր դրել «Ուրվականի» վրա:

Մենք քայլեցինք մինչև հարթակի եզրը և այնտեղ նա շրջվեց ու կանգնեց իմ դիմաց: Ես շուրջս նայեցի՝ ստուգելու համար, թե որևէ մեկը կա՞ մոտերքում:

— Ի՞նչ է պատահել, — հարցրի քաղցրությամբ, բայց նրա դեմքի ձգվածությունը չթուլացավ:

— Ես ընդունում եմ, որ այսօրվա դեպքը պատահական արկածի հետևանք է, — սկսեց նա: — Բայց քիչ առաջ խոսում էի միստր Հեսկինսի հետ և նա ինձ հայտնեց, թե մեր փրկության օրը, երբ ես խցիկում էի, երկու մարդկանց խեղդեցին, կանխամտածված կերպով խեղդեցին... սպանեցին:

Նրա ձայնի մեջ հարցական հնչյուն կար և նա ինձ նայում էր մեղադրական հայացքով, կարծես ես ինքս հանցավոր կամ առնվազն մեղսակից էի այդ գործում:

— Ձեզ հասած տեղեկությունը շատ ճիշտ է, — պատասխանեցի ես: — Այդ երկու մարդկանց իրոք սպանեցին:

— Եվ դուք թո՞ւյլ տվեցիք, — գոչեց նա:

— Ավելի ճիշտ կլիներ, եթե հարցնեիք, թե ես կարո՞ղ էի արգելել, — պատասխանեցի մեղմությամբ:

— Բայց դուք փորձեցի՞ք արգելել,— նա շեշտեց «փորձեցիք»-ը և նրա ձայնի մեջ ինչ-որ աղերսանք կար։— Օ՛, ո՛չ, չփորձեցիք,— շտապեց նա, գուշակելով իմ պատասխանը։— Իսկ ինչո՞ւ չփորձեցիք։

Ես ուներս թոթվեցի.

— Դուք մոռանում եք, միսս Բրուստեր, որ նոր բնակիչ եք այս փոքրիկ աշխարհում և դեռ չգիտեք, թե ինչպիսի օրենքներով է այն ղեկավարվում։ Դուք ձեզ հետ բերել եք մի շարք գեղեցիկ հասկացողություններ ազնվության, մարդկայնության, վերաբերմունքի և նման այլ բաների մասին։ Բայց շուտով կհամոզվեք, որ դրանք գոյություն չունեն այս շրջապատում,— ասացի ես և ակամա հառաչելով ավելացրի։— Ես դրանում վաղուց եմ համոզվել։

Նա գլուխն օրորեց թերահավատությամբ։

— Իսկ դուք ի՞նչ խորհուրդ կտայիք,— հարցրի ես,— կուզենայի՞ք, որ մի դաշույն, հրացան կամ կացին վերցնելով, սպանեի այդ մարդուն։

Նա վախեցած ետ քաշվեց։

— Ոչ, իհարկե, ոչ։

— Հապա ի՞նչ անեի, ի՞նձ սպանեի։

— Դուք միայն ֆիզիկական միջոցառումների մասին եք խոսում,— առարկեց նա։— Գոյություն ունի նաև հոգեկան արիություն, իսկ հոգեկան արիությունը բնավ անագղեցիկ չէ։

— Ա՛հ,— ժպտացի ես,— դուք խորհուրդ եք տալիս, որ ոչ նրան սպանեմ, ոչ էլ ինձ, այլ թողնեմ, որ նա ինձ սպանի։

Նա պատրաստվում էր խոսել, բայց ես ձեռքի նշանով արգելեցի նրան և շարունակեցի։

— Բարոյական արիությունը անարժեք գույք է այս փոքրիկ, ծփացող աշխարհում։ Օրինակ, Լիչը սպանված նավաստիներից մեկը, հոգեկան անսահման արիություն ուներ։ Նույնպիսին էր և մյուս նավաստին՝ Ջոնսոնը։ Բայց այդ առաքինությունը ոչ միայն նրանց չօգնեց, այլև նրանց կործանման պատճառ եղավ։ Նույնը կպատահի նաև ինձ հետ, եթե փորձեմ կիրառել հոգեկան այն չնչին արիությունը, որ դեռ մնացել է իմ մեջ։ Դուք պետք է հասկանաք, միսս Բրուստեր, և մեկընդմիջտ հասկանաք, որ այդ մարդը ճիվաղ է։ Նա զուրկ է խղճից։ Նրա համար ոչ մի սրբություն չկա, նրա համար ոչ մի արարք սարսափելի չէ։ Նրա քմահաճույքով է, որ ես բռնի պահվում եմ այս նավի վրա և դարձյալ նրա քմահաճույքով է, որ դեռ կենդանի եմ։ Ես ոչինչ չեմ անում և ոչինչ չեմ կարող անել, որովհետև այդ հրեշի գերին եմ, ինչպես դուք էլ նրա գերին եք հիմա, որովհետև ես ապրել եմ ուզում, ինչպես դուք ևս ապրել պիտի ուզենաք, որովհետև անկարող եմ պայքարել ու նրան հաղթել, ինչպես դուք ևս անկարող պիտի լինեք պայքարել ու նրան հաղթել։

Նա լռում էր, սպասելով, որ շարունակեմ։

— Ի՞նչ է մնում անել։ Ես թույլի դրության մեջ եմ։ Ուստի լռում եմ, հանդուրժում եմ անարգանքը, ինչպես դուք ևս պիտի լռեք ու հանդուրժեք։ Եվ դա խելոք բան է։ Դա լավագույն բանն է, որ կարող ենք անել, եթե ուզում ենք ապրել։ Հաղթանակը միշտ զորավորինը չէ։ Քանի

որ մենք այնքան ուժեղ չենք, որ կարողանանք պայքարել այդ մարդու դեմ, ապա պետք է մեր նպատակը թաքցնենք և հաղթենք, եթե հնարավոր է հաղթել, միայն խորամանկությամբ: Եթե ուզում եք իմ խորհուրդն իմանալ, ահա թե ինչ կասեի ես: Գիտեմ, որ իմ դրությունը վտանգավոր է, և կարող եմ անկեղծորեն ասել, որ ձերը՝ նույնիսկ ավելի վտանգավոր է: Մենք պետք է իրար թիկունք կանգնենք առանց արտաքուստ ցույց տալու և համատեղ գործենք զազանի համաձայնությամբ: Ես չեմ կարող բացեիքաց պաշտպանել ձեզ, դուք էլ, ձեր հերթին, պետք է լուռ մնաք հակառակ բոլոր նվաստացումներին, որոնց Գայլ Լարսենը կարող է ենթարկել ինձ: Այդ մարդուն չպետք է հակաճառել, ոչ էլ նրա կամքին հակառակել: Մենք պետք է ջանանք ժպտերես ու բարեկամական լինել նրա հետ, որքան էլ դա վանողական թվա մեզ:

Նա ձեռքով ճակատը շփեց շվարած արտահայտությամբ և ասաց.

— Դեռևս չեմ հասկանում:

— Դուք պետք է անեք այն, ինչ ձեզ ասում եմ,— ընդհատեցի հեղինակավոր շեշտով, որովետև հանկարծ նշմարեցի, որ Գայլ Լարսենը տախտակամածի վրա Լետիմերի հետ ճեմելով, նայում է մեր կողմը:— Արեք ինչպես ասում եմ և շուտով կհամոզվեք, որ ես իրավացի եմ:

— Իսկ ի՞նչ պետք է անեմ,— ասաց նա, նկատելով Գայլ Լարսենի ուղղությամբ նետած անհանգիստ հայացքս և տպավորվելով իմ լուրջ վերաբերմունքից, մի բան, որ շուրջ ինքնասիրությունս:

— Ամենից առաջ՝ մեկ կողմ թողեցեք հոգեկան արիության վերաբերյալ ձեր մտքերը,— կտրուկ պատասխանեցի ես:— Այդ մարդուն մի թշնամացրեք ձեր դեմ: Բարեկամական եղեք, խոսակցեցեք նրա հետ, զրույցներ ունեցեք գրականության ու արվեստի մասին, նա սիրում է այդ թեմաները: Պիտի տեսնեք, որ նա հետաքրքիր ունկնդիր է և հիմար մարդ չէ: Եվ հենց ձեր օգտի համար խուսափեցեք նավի վրա տեղի ունեցող զազանաբարո տեսարաններին ականատես լինելուց: Այդպիսով դուք կհեշտացնեք ձեր կատարելիք դերը:

— Նշանակում է՝ ես պետք է ստեմ,— ասաց նա ընդվզումով,— պետք է ստեմ թե՛ խոսքով, թե՛ գործով:

Գայլ Լարսենը, Լետիմերից բաժանվելով, քայլում էր դեպի մեր կողմը: Ես հուսահատության մատնվեցի:

— Խնդրում եմ, հասկացեք ինձ,— ասացի արտոբանջով:— Մարդկանց և կյանքի մասին ձեր ամբողջ փորձը ոչ մի արժեք չունի այստեղ: Դուք ձեր փորձը պետք է սկզբից սկսեք: Ես գիտեմ և տեսնում եմ, որ, բացի այլ ձևերից, դուք սովոր եք ձեր աչքերով էլ մարդկանց ենթարկել ձեզ, և որ ձեր հոգեկան արիությունը խոսում է ձեր աչքերի միջով: Ձեր աչքերով արդեն հրամայել եք ինձ և հպատակեցրել: Բայց այդ միջոցը մի գործագրեք Գայլ Լարսենի վրա: Դուք ավելի հեշտությամբ կարող եք առյուծին հպատակեցնել, քան նրան, նա ձեզ ծաղրուծանակի կենթարկի: Նա կարող է... Ես միշտ հպարտացել եմ, որ հայտնաբերել եմ այդ տաղանդը,— ասացի ես խոսակցության նյութը փոխելով ճիշտ այն պահին, երբ Գայլ Լարսենը հարթակի վրա բարձրանալով միացավ մեզ:— Խմբագիրները նրանից վախենում էին, իսկ հրատարակիչները նույնիսկ չէին ուզում լսել նրա մասին: Իմ կարծիքն ու նրա տաղանդը գնահատվեցին միայն այն ժամանակ, երբ նրա «Դարբնոցը» հսկա հաջողություն ունեցավ:

— Եվ դա պարզապես լրագրային բանաստեղծություն էր,— հանդարտորեն ինձ աջակցեց օրիորդը:

— Այսինքն՝ առաջին անգամ այն լույս է տեսել լրագրի էջերում,— պատասխանեցի ես,— բայց այդ չի նշանակում, թե թերթի խմբագիրները նախօրոք չէին կարդացել պոեմը:

— Հարրիսի մասին ենք խոսում,— ասացի ես, դիմելով Գայլ Լարսենին:

— Ա՛հ,— ասաց նա,— ես հիշում եմ «Դարբնոցը»: Այն տոգորված է գեղեցիկ զգացմունքներով և անսահման հավատով դեպի մարդկային պատրանքները: Ի միջի այլոց, միստր Վան-Վեյդեն, լավ կանեք, եթե մեր խոհարարին տեսնեք: Նա զանգատվում է ցավերից և գալարվում է անկողնում:

Այսպես կտրուկ ձևով հարթակից հեռացվելուց հետո ես գնացի Մագրիչի մոտ ու տեսա, որ նա խոր քնած է իմ սրսկած մորֆինի ազդեցությամբ: Չշտապեցի տախտակամած վերադառնալ, բայց երբ այնտեղ հասա, գոհունակությամբ նկատեցի, որ միսս Բրուստերը ոգևորությամբ զրուցում է Գայլ Լարսենի հետ: Ինչպես ասացի, դա ինձ գոհունակություն պատճառեց: Նշանակում է՝ նա հետևում էր իմ խորհուրդին: Բայց, այնուամենայնիվ, մի քիչ ցավ ու վիրավորանք զգացի, տեսնելով, որ նա ընդունակ է կատարելու մի առաջարկություն, որը սկզբում նրան ակնհայտորեն դուր չէր եկել:

Գլուխ քսաներեքերորդ

Ուժեղ քամիները, համաչափ փչելով, «Ուրվականը» քշեցին հյուսիսային ուղղությամբ, դեպի ծովակատունների երամը: Մենք նրանց հանդիպեցինք քառասունչորսերորդ զուգահեռականից վերև, փոթորկի ու ալեկոծության ընթացքում, երբ հողմն անդադար վանում էր ծովի վրա տարածված մշուշի շերտը: Երբեմն, օրեր շարունակ, արևի երես չէինք տեսնում, ոչ էլ կարողանում էինք հետազոտություն կատարել: Երբեմն էլ հողմը ջրի մակերեսը մաքրում էր մշուշից, և ալիքները վետվետում ու փայլփլում էին: Այն ժամանակ մենք որոշում էինք մեր տեղանքը: Նման դեպքերում եղանակը մեկից մինչև երեք օր պարզ էր լինում, ապա մառախուղը դարձյալ իջնում էր առաջվանից ավելի թանձր:

Որսորդությունը դառնում էր վտանգավոր: Բայց չնայած դրան, ամեն առավոտ մակույկներն իջեցվում էին ծով, իսկույն կլանվում գորշ մթության մեջ և մինչև գիշեր չէին երևում: Երբեմն նրանք վերադառնում էին շատ ուշ և մշուշի միջով, ծովային ուրվականների պես, մեկը մյուսի հետևից մոտենում էին մեզ: Ուենրայթը՝ այն որսորդը, որին Գայլ Լարսենը առևանգել էր մակույկի և անձնակազմի հետ, թանձր շղարշով քողարկված ծովից օգտվելով, փախուստ տվեց: Մի առավոտ նա իր երկու նավաստիների հետ անհետացավ մառախուղի մեջ և այլևս չվերադարձավ: Օրեր հետո միայն իմացանք, որ նրանք մեկ երկկայմանավից մյուսն անցնելով, վերջապես գտել են իրենցը:

Ես էլ մտադրվել էի հետևել նրանց օրինակին, բայց առիթը երբեք չէր ներկայանում: Մակույկով ծով իջնելը չէր մտնում նավապետի օգնականի պարտականությունների մեջ և, չնայած խորամանկությամբ ջանում էի այդ իրավունքը ձեռք բերել, Գայլ Լարսենը երբեք չէր շնորհում այն: Եթե շնորհեք, ապա ես մի կերպ կկարողանայի միսս Բրուստերին հետս

տանել: Նրա դրությունը գնալով այնպես էր բարդանում, որ վախենում էի նույնիսկ անդրադառնալ դրան: Ես ակամա խուսափում էի այդ մտքից, որը չար ոգու նման հալածում էր ինձ:

Ժամանակին կարդացել էի ծովային կյանքին վերաբերող վեպեր, որոնց մեջ միշտ էլ հանդես է գալիս մի կին՝ տղամարդկանցով լի նավի վրա: Հիմա նոր գլխի ընկա, որ ես երբեք չեի հասկացել նման դրության խոր նշանակությունը, թեև վիպասաններն այն մշակում ու զարգացնում էին ամենայն բազմակողմանիությամբ: Այդ դրությունը ստեղծվել էր նաև այստեղ, և ես գտնվում էի նրա հետ դեմ հանդիման: Ինձ առավելապես մտատանջում էր այն հանգամանքը, որ հերոսուհին Մոդ Բրուստերն էր, նա, որ անցյալում ինձ հմայել էր իր բանաստեղծություններով, իսկ այժմ հմայում է իր անձով:

Անհնար է պատկերացնել մի հերոսուհի, որն ավելի անհամատեղելի լինի այս շրջապատի հետ, քան Մոդը: Նա չքնաղ և օդային մի էակ է, ուռենու նման օրորվող մարմնով, թեթև ու շնորհալի շարժումներով: Ինձ միշտ թվացել է, որ նա երբեք չի քայլում գետնի վրա կամ, համենայն դեպս, չի քայլում ուրիշ մահկանացուների ձևով: Նա ունի զմայլելի ճկունություն, շարժվում է անբացատրելի եթերայնությամբ և որևէ մեկին մոտենում այնպես հուշիկ, որ կարծես օդում ծփացող փետուր կամ անձայն թևերով մի թռչուն լինի:

Նա նման է դրեզդենյան ճենապակուց կերտված արձանի: Հիշողությանս մեջ մշտապես տպավորվել է նրա այն հատկությունը, որը կարելի է անվանել դյուրաբեկություն: Ինչպես առաջին անգամ, երբ նրա թևը բռնելով օգնեցի սանդուղքի աստիճաններով իջնելու, այնպես էլ ուրիշ անգամներ, ինձ միշտ թվացել է, թե որևէ կոպիտ հպումից նա կարող է իսկույն փշրվել: Ես երբեք չեմ տեսել մարմնի ու հոգու այդպիսի կատարյալ ներդաշնակություն: Գրաքննադատները նրա բանաստեղծությունները բնութագրել են որպես վսեմ ու ոգեշունչ, հենց նույն բառերով էլ կարելի է բնութագրել նրա արտաքինը: Նրա մարմինը կարծես հաղորդակից է հոգուն, օժտված է նույնանման հատկություններով և ամենանուրբ թելերով կապվում է կյանքին: Արդարև, նա այնքան թեթև էր քայլում, որ կարծես հողեղեն կոշտ տարրը բացակայում էր նրա կազմվածքի մեջ:

Միսս Բրաստերը Գայլ Լարսենի ամենացայտուն հակադրությունն է: Նրանցից յուրաքանչյուրը մյուսի լիակատար բացասումն է: Մի առավոտ ես նրանց տեսա տախտակամածի վրա միասին քայլելիս, և մտքումս նրանց նմանեցրի մարդկային հասարակության զարգացման սանդուղքի երկու ծայրագույն աստիճաններին: Մեկը ամեն տեսակ վայրենության գագաթնակետն է, մյուսը նրբագույն քաղաքակրթության ամենահղկված արտադրանքը: Ճիշտ է, Գայլ Լարսենը օժտված է արտասովոր բանականությամբ, բայց այն ծառայում է միայն զարգացնելու նրա վայրի բնագոյները և հենց դրանով էլ նրան դարձնում ավելի ահարկու: Նա ուժեղ է, ունի հոյակապ մկաններ, և թեպետ քայլում է պնդակազմ մարդու հաստատ ու վստահ քայլվածքով, այնուամենայնիվ, այդ քայլվածքի մեջ ծանրության տպավորություն թողնող ոչինչ չկա: Նրա յուրաքանչյուր քայլափոխը ջունգլիների ու անապատների գազաններին հիշեցնող ինչ-որ բան ունի: Կատվի ճկունության հետ մեկտեղ նա օժտված է ամեհի ուժով: Ես նրան նմանեցնում եմ որսացող ու հոշոտող մի հսկա վագրի: Եվ, իրոք, նա նման է վագրի: Թափանցող փայլը, որ մեկ-մեկ բռնկվում է նրա աչքերում, հար ու նման է այն թափանցող փայլին, որ նկատել եմ վանդակի մեջ բանտարկված ընձառյուծի կամ այլ գիշատիչ գազանների աչքերում:

Բայց այդ առավոտ, երբ նրանք ճեմում էին միասին, նշմարեցի, որ ինքը՝ միսս Բրուստերը վերջ տվեց շրջագայությանը: Նավասանդուղքի մոտ կանգնած էի, երբ նրանք մոտեցան ինձ: Թեև մանկամարդ կինը արտաքուստ ոչինչ ցույց չէր տալիս, բայց զգացի, որ նա սաստիկ հուզված է: Ինձ նայելով, նա մի հասարակ դիտողություն արեց և բավականին անբռնազբոսիկ ծիծաղեց, սակայն նրա աչքերը, կարծես դուրս գալիս, ակամա ուղղվեցին Գայլ Լարսենի աչքերին, ապա խոնարհվեցին: Նրանք խոնարհվեցին այնքան դանդաղ, որ ես կարողացա տեսնել նրանց մեջ լցվող սարսափը:

Բայց սարսափի պատճառը ես կարողացի Գայլ Լարսենի աչքերում: Նրա աչքերում, որոնք սովորաբար մոխրագույն, սառը և խիստ էին, այդ վայրկյանին դարձել էին ջերմ, մեղմ ու ոսկեշող: Նրանցում պարում էին փոքրիկ կայծեր, որոնք մեկ աղոտանում ու մարում էին, մեկ՝ բոցավառվում ու բազմանում, մինչև որ ամբողջ բիբը հեղեղվում էր լուսավառ պայծառությամբ: Գուցե դրանից էր այդ ոսկեշող երանգը: Այդ ոսկեշող, հրապուրիչ, տիրական, միաժամանակ կախարդող ու հրամայող աչքերը բարձրագույն հայտարարում էին եռացող արյան ցանկությունը, մի բան, որ ոչ մի կին չէր կարող չհասկանալ, ո՛ր մնաց Մոդ Բրուստերը:

Օրիորդի սարսափը հաղորդվեց ինձ և այդ գերագույն սարսափի պահին ես ըմբռնեցի, թե որքան թանկագին էակ է նա ինձ համար: Այն գիտակցությունը, թե ես սիրում եմ նրան, ինձ երկյուղի մատնեց: Մերն ու երկյուղը սիրտս այնպես սեղմեցին, որ արյունս միաժամանակ թե՛ սառեց, թե՛ մրրկածուփ եռաց: Նույն պահին զգացի, որ ինձանից դուրս և ինձանից վեր գտնվող մի ուժ, հակառակ իմ կամքին, հայացքս նորից է բևեռում Գայլ Լարսենի աչքերին: Բայց նա արդեն տիրապետել էր իրեն: Ոսկեշող գույնն ու պարող կայծերը անհետացել էին և աչքերը դարձել էին առաջվա պես մոխրագույն, սառը և խիստ: Նա կտրուկ շարժումով գլուխ տվեց ու հեռացավ:

— Ես վախենում եմ,— շնչաց Մոդը սարսաղվով,— անչափ վախենում եմ:

Ես էլ էի վախենում: Բացի այդ, իմ մեջ գտնվող սիրո հայտնագործությունից միտքս տակնուվրա էր եղել: Այնուամենայնիվ, կարողացա հանդարտությամբ պատասխանել:

— Ամեն ինչ լավ կլինի, միսս Բրուստեր, հավատացե՛ք ինձ, ամեն ինչ լավ կլինի:

Նա պատասխանեց երախտագիտական մեղմ ժպիտով, որից սիրտս ուժգին բաբախեց, ապա նավասանդուղքի աստիճաններով ներքև իջավ:

Ես երկար մնացի կանգնած իմ տեղում: Ինձ հարկավոր էր ինքնամփոփվել և ըմբռնել ստեղծված նոր իրադրության նշանակությունը: Մերը վրա էր հասել մի այնպիսի ժամանակ, երբ բնավ չէի սպասում նրան, և վրա էր հասել խանգարիչ պայմաններում: Կանքի մասին փիլիսոփայելիս ես միշտ ընդունել եմ, որ վաղ կամ ուշ սերը անխուսափելիորեն կգա: Բայց երկարամյա գրքամոլությունը ինձ դարձրել էր անուշադիր, սերը դիմավորելու անպատրաստ:

Եվ ահա սերը եկավ... Մոդ Բրուստերը... Ես հանկարծ վերհիշեցի նրա բանաստեղծությունների առաջին բարակ հատորյակը, որը դրված էր գրասեղանիս վրա, և իմ աչքերի առաջ երևացին նաև գրքերի դարակում շարված մյուս հատորյակները: Ինչպիսի հրճվանքով էի ողջունել նրանցից յուրաքանչյուրը: Ամեն տարի լույս էր տեսնում մեկ հատոր, և այդ հատորն ինձ համար հանդիսանում էր տարվա խոշորագույն իրադարձությունը: Ես

նրանց մեջ գտնում էի հարազատ զգացմունքներ ու գաղափարներ և մտքով եղբայրանում էի նրանց հետ: Այժմ նրանց տեղը իմ սրտումն է:

Իմ սրտո՞ւմ... Հանկարծ մտքերս տարբեր ընթացք ստացան: Ես կարծես ինձանից դուրս կանգնեցի և սկսեցի երկբայությամբ ինձ դիտել: Մոդ Բրուստեր... Ես՝ Հեմֆրի Վան-Վեյդենս, որին Չարլի Ֆարասերը մկրտել էր «սառնարյուն ձուկ», «անզգա հրեշ», «վերլուծության դև» մակդիրներով. ահա սիրահարված եմ... Միտքս, առանց որևէ ակնհայտ պատճառի, այժմ փոխադրվեց ուրիշ տեղ, ես մեկեն հիշեցի անձնանունների տեղեկագրքում գետեղված կենսագրական փոքրիկ մի ծանոթագրություն և ինձուինձ ասացի. «Նա ծնվել է Քեմբրիջում և քսանյոթ տարեկան է»: Ապա ավելացրի. «Քսանյոթ տարեկան է, բայց դեռ ազատ է և սիրահարված չէ»... Մակայն ինչի՞ց իմանայի, որ սիրահարված չէ: Նորածին խանդի սուր ցավը մեկ անգամից փարատեց իմ նախկին տարակույսները: Այլևս կասկած չի կարող լինել: Քանի որ խանդում եմ, նշանակում է սիրում եմ: Եվ այն կինը, որին սիրում եմ, Մոդ Բրուստերն է:

Ես՝ Հեմֆրի Վան-Վեյդենս, սիրահարված եմ... Տարակույսները նորից պաշարեցին ինձ: Ոչ թե որովհետև սիրուց վախենում էի կամ դժկամում՝ նրան հանդիպել: Ընդհակառակը, լինելով ծայրաստիճանի իդեալիստ, ես միշտ սերը գնահատել եմ որպես աշխարհի ամենավեհ զգացմունքը, գոյության վսեմագույն նպատակը, ուրախության ու երջանկության այն ամենաքաղցր բարձրակետը, որտեղ կյանքը սարսռում է խայտանքից, այն գերագույն բանը, որ մարդ միայն կարող է ողջունել, ընդունել և իր սրտում գետեղել: Եվ սակայն հիմա, երբ սերն արդեն եկել էր, ես չէի կարողանում հավատալ դրան: Մի՞թե կարող եմ այդքան բախտավոր լինել: Սերը չափազանց մեծ բախտավորություն է, որպեսզի իրական լինի: Ես մեկեն հիշեցի Սայմոնսի հետևյալ տողերը.

Երկար տարիներ աշխարհում կանանց
Քեզ որոնելով, թափառել եմ ես...

Բայց ես վաղուց դադարել էի որոնելուց: Ինձ համար չէ այդ գերագույն երջանկությունը, մտածել էի ես: Ֆարասերը իրավացի էր: Ես սովորական մարդկանց պես չէի, ես «անզգա հրեշ» էի, մի տարօրինակ գրքամուլ, որն ընդունակ է նվիրվելու միայն իմացական հաճույքների: Թեև ամբողջ կյանքումս շրջապատված եմ եղել կանանցով, բայց նրանց գնահատել եմ սոսկ գեղագիտական տեսանկյունից: Ես հաճախ ինձ համարել եմ մարդկային հասարակությունից հեռու ապրող մի վանական, որին բնությունը զլացել է տալ մշտատև կամ անցավոր այն կրքերը, որ ուրիշների մեջ տեսնում ու լիովին հասկանում էի: Բայց ահա սերը վերջապես եկավ: Եվ եկավ անակնկալ, առանց նախազգուշացման:

Խոր հոգեզմայությամբ համակված հեռացա նավասանդուղքից և սկսեցի շրջել տախտակամածի վրա, մրմնջալով Էլիզաբեթ Բրոունինգի այս տողերը.

Տարիներ առաջ, լքելով մարդկանց,
Տեսիլքների հետ ապրեցի մենակ:
Տեսա, որ նրանք ընկեր են ազնիվ,
Նրանց մեղեդին թովիչ է ու թանկ:

Բայց հիմա ավելի թովիչ մի երաժշտություն էր հնչում իմ ականջներում և ես բոլորովին խուլ ու կույր էի դեպի շրջապատս: Հանկարծ Գայլ Լարսենի խիստ ձայնը սթափեցրեց ինձ:

— Գրողը տանի, ի՞նչ գործ ունեք այստեղ,— գոչում էր նա:

Ես ճեմում էի տախտակամածի այն մասում, որ նավաստիները ներկում էին, և հենց այդ վայրկյանին քիչ էր մնում ոտքով շրջելի ներկի գայլը:

— Դուք, ինչ է, քնաշրջի՞ կ եք, թե արևահար,— գոռաց նա:

— Ոչ, անմարտողությունից եմ տառապում,— պատասխանեցի ես և, կարծես ոչինչ պատահած չլինել, շարունակեցի շրջագայությունը:

Գլուխ քսանչորսերորդ

Իմ կյանքի ամենավառ հիշատակներն այն դեպքերն են, որոնք տեղի ունեցան «Ուրվականի» վրա Մոդ Բրուստերի նկատմամբ իմ սիրո հայտնաբերումին հաջորդող քառասուն ժամերի ընթացքում: Ամբողջ կյանքս խաղաղ միջավայրում անցկացնելուց հետո, երեսունհինգ տարեկան հասակում ապրեցի ամենաանհավատալի արկածներով լի մի շրջան: Իմ կյանքում որևէ քառասուն ժամվա մեջ երբեք այսքան բազմաթիվ ու ցնցող դեպքեր չէին պատահել: Ամեն անգամ, երբ դրանք վերհիշում եմ, հպարտության մի փոքրիկ ձայն ինձ փսփսում է (և ես չեմ կարող նրան ականջ չդնել), թե տվյալ հանգամանքներում այնքան էլ վատ դեր չեմ խաղացել:

Նախ սկսենք այնտեղից, որ Գայլ Լարսենը ճաշի ժամանակ որսորդներին հայտարարեց, թե այսուհետև նրանք պետք է ճաշեն իրենց ընդհանուր խցում: Դա աննախընթաց մի խախտում էր, որովհետև, ընդունված կարգի համաձայն, որսորդական երկկայմանավերի վրա որսորդներն անպաշտոն կերպով համարվում էին սպաներ: Նա որևէ բացատրություն չտվեց, բայց պատճառը բավականին ակնհայտ էր: Հոռները և Սմոքը սկսել էին Մոդ Բրուստերին սիրտ թովել, մի բան, որ ինքնըստինքյան ծիծաղելի էր և օրիորդին ոչ մի կերպ չէր վիրավորում, բայց Գայլ Լարսենին բացահայտորեն դուր չէր գալիս:

Հայտարարությունն ընդունվեց մռայլ լռությամբ: Չորս որսորդները նշանակալից նայեցին իրենց վտարման պատճառը հանդիսացող մյուս երկուսին: Ջոք Հոռները, զուսպ լինելով, վրդովմունքի ոչ մի նշան ցույց չտվեց, մինչդեռ Սմոքի ճակատը շառագունեց և նա բերանը բացեց խոսելու համար: Գայլ Լարսենը, պողպատյա սառը փայլը աչքերում, դիտում էր նրան և սպասում: Բայց Սմոքը բերանը նորից փակեց առանց մի բառ արտաբերելու:

— Բա՞ն էիր ասելու,— հարցրեց նրան Գայլ Լարսենը հարձակողական տոնով:

Դա մի մարտահրավեր էր, բայց Սմոքը հրաժարվեց այն ընդունելուց:

— Ինչի՞ մասին,— հարցրեց նա այնպիսի անմեղ արտահայտությամբ, որ Գայլ Լարսենը հուսախաբվեց, և մյուսները ժպտացին:

— Չգիտեմ,— պատասխանեց Գայլ Լարսենը դժգոհ:— Ինձ թվաց, թե ցանկություն ունեիր մի ուժեղ արագի ստանալու:

— Ինչի՞ համար,— հարցրեց անվրդով Սմոքը:

Սմոքի ընկերակիցներն այժմ լայնաբերան ժպտում էին: Նավապետը կարող էր նրան սպանել, և ես չեմ կասկածում, որ արյուն կհոսեր, եթե Սող Բրուստերը ներկա չլիներ: Ընդ որում, նրա ներկայության պատճառով էր, որ Սմոքն այդպես վարվեց: Չափազանց խոհեմ և զգույշ լինելով, որսորդը խուսափեց Գայլ Լարսենին գրգռելուց այնպիսի ժամանակ, երբ նրա զայրույթը կարող էր դրսևորվել բառերից ավելի բուռն արտահայտություններով: Ես, այնուամենայնիվ, վախենում էի, որ բանը կհասներ ծեծկռտության, բայց ղեկորդի աղաղակը թուլացրեց լարվածությունը և դրությունը փրկվեց:

— Ծո՛ւխ հորիզոնում,— լսվեց նավասանդուղքի բաց անցքի միջով:

— Ո՞ր կողմից,— գոռաց Գայլ Լարսենը նստած տեղից:

— Ուղիղ նա վախելի հետևից, սրբ:

— Գուցե ռուսական շոգենավ է,— կարծիք հայտնեց Լետիմերը:

Այդ խոսքի վրա մյուս որսորդների դեմքերը մռայլվեցին: Ռուս ականշոգենավ նշանակում է միայն մի բան՝ հաճանավ: Որսորդները թեն ճշգրիտ չգիտեին «Ուրվականի» տեղանքը, բայց, այնուամենայնիվ, գիտեին, որ մոտեցել ենք արգելված ջրերի սահմանին, իսկ Գայլ Լարսենը հայտնի էր որպես հռչակավոր որսագող: Բոլորի հայացքներն ուղղվեցին նրան:

— Մենք բոլորովին ապահով ենք,— հավաստիացրեց նա ծիծաղելով:— Մի անհանգստացիր, Սմոք, այս անգամ քեզ աղի հանքերը չեն տանի: Բայց ահա թե ինչ եմ ասելու ձեզ: Ես գրազ կգամ, մեկի դեմ հինգ, որ դա «Մակեդոնիան» է:

Ոչ ոք չընդունեց գրազի առաջարկությունը, և նա ավելացրեց.

— Եթե դա իրոք «Մակեդոնիան» է, ապա մեկի դեմ տասը գրազ կգամ, որ նա մեզ հետ ընդհարում կունենա:

— Ոչ, շնորհակալ եմ,— ասաց Լետիմերը:— Ես դեմ չեմ փողս կորստի ենթարկելու, պայմանով, որ շահելու ինչ-որ հավանականություն ունենամ: Երբեք չի պատահել, որ դուք և ձեր այդ եղբայրը իրար հանդիպեք առանց ընդհարվելու: Հետևաբար, ես ինքս մեկի դեմ քսան գրազ կգամ, որ ընդհարում լինելու է:

Բոլորը ժպտացին, Գայլ Լարսենն էլ նրանց հետ, և ճաշը խաղաղ անցավ շնորհիվ իմ համբերության, որովհետև դրանից հետո նավապետն ինձ հետ վարվեց ամենագարշելի ձևով, մեկ հեգնելով, մեկ հովանավորողի ձևեր ընդունելով, մինչև որ սկսեցի զսպված կատաղությունից ամբողջ մարմնով դողալ: Բայց ես գիտակցում էի, որ Սող Բրուստերի սիրույն պետք է ինձ զսպեմ, և վարձատրված զգացի, երբ նրա հայացքը, մի ակնթարթ աչքերիս հանդիպելով, լեզվի պես պարզ ասացին. «Քաջ եղեք, դիմացեք»:

Ճաշից հետո տախտակամած բարձրացանք: Ուրիշ նավի հետ հանդիպումը հաճելի իրադարձություն էր մեր այս միօրինակ ճանապարհորդության ժամանակ, իսկ այն ենթադրությունը, թե դա Մահ Լարսենի «Մակեդոնիան» է, առավել էս գրգռիչ էր:

Նախորդ օրվա ուժեղ քամին ու ալեկոծ ծովը հետզհետե հանդարտվում էին, այնպես որ հիմա հնարավոր էր մակույկներ իջեցնել որսալու համար։ Որսը խոստանում էր շահավետ լինել։ Արևածագից սկսած մենք նավարկել էինք դատարկ ծովում, ուր ծովակատուներ չկային, իսկ այժմ մոտենում էինք մի խոշոր երամի։

Շոգենավի ծովիւր թեև մղոններով հեռու էր նավախելից, բայց արագորեն մոտենում էր, երբ մակույկները ծով իջեցրինք։ Մակույկները, ցրվելով, սկսեցին առաջանալ դեպի հյուսիս։ Ժամանակ առ ժամանակ տեսնում էինք, թե ինչպես նրանցից մեկնումեկի առագաստը ցածրանում էր, ապա արձակվում էին հրացանի կրակոցներ, հետո առագաստը նորից էր բարձրանում։ Ծովակատուները բազմաթիվ էին, քամին բոլորովին մեղմացել էր և ամեն ինչ նպաստում էր, որ որսը առատ լինի։ Երբ «Ուրվականը» սկսեց ընթանալ ամենավերջին մակույկի հողմազերծ կողմից, նկատեցինք, որ ջրի երեսը ծածկված է քնած ծովակատուներով։ Ես բնավ չէի տեսել այդքան խիտ երամ։ Նրանք վիստում էին մեր չորս բոչորը և երկուսով, երեքով կամ փոքր խմբերով խաղաղ մրափում ջրի երեսին, ծույլ շնիկների նման։

Մոտեցող ծխի հետ աստիճանաբար մեծանում էին շոգենավի մարմինն ու նրա տախտակամածի վերնակառուցքը։ Դա «Մակեդոնիան» էր։ Ես երկդիտակով կարդացի նրա անունը, երբ նա անցնում էր մեր աջ կողմով, հազիվ մեկ մղոն հեռավորության վրա։ Գայլ Լարսենը վայրագ հայացքով դիտում էր շոգենավը, իսկ Մոդ Բրուստերը համակված էր հետաքրքրությամբ։

— Իսկ ո՞ւր է այդ ընդհարումը, որի մասին այդքան վստահ էիք,— հարցրեց նա զվարթությամբ։

Նավապետը քմիծաղով նայեց օրիորդին, և նրա դիմագծերը վայրկենապես մեղմացան։

— Դուք, ի՞նչ է, ակնկալում էիք, որ նրանք իսկույն նավ կբարձրանան ու մեր կոկորդները կկտրե՞ն։

— Դրա նման մի բան,— խոստովանեց օրիորդը։— Գիտե՞ք, ծովակատվի որսորդները այնքան նոր ու տարօրինակ են ինձ համար, որ կարող եմ ամեն ինչ ակնկալել։

Նավապետը հաստատական իմաստով գլուխը շարժեց։

— Շատ ճիշտ է, շատ ճիշտ։ Ձեր սխալը լոկ այն է, որ չկարողացաք ակնկալել ամենավատը։

— Իսկ ի՞նչ կարող է լինել ավելի վատ, քան մեր կոկորդները կտրելը,— հարցրեց օրիորդը չքնաղ ու անմեղ զարմանքով։

— Մեր քսակները կտրելը,— պատասխանեց նավապետը։— Այսօրվա օրս մարդն այնպես է ստեղծված, որ նրա ապրելու կարողությունը որոշվում է միայն իր ունեցած փողով։

— «Ով իմ քսակն է գողանում, նա աղբ է գողանում»,— մեջբերեց օրիորդը։

— Ով իմ քսակն է գողանում, նա գողանում է ապրելու իրավունքս, ասում է, ընդհակառակը, հին առածը,— պատասխանեց Գայլ Լարսենը։— Որովհետև նա գողանում է իմ հացը, միսը, անկողինը և այդպիսով վտանգում է իմ կյանքը։ Դուք գիտե՞ք, որ բավական չեն այն հաստատությունները, որոնք ձրի հաց և ապուր են բաժանում աղքատներին, և նրանք, ովքեր

իրենց քսակի մեջ ոչինչ չունեն, սովորաբար մեռնում են և մեռնում ամենախղճալի ձևով... եթե, անշուշտ, անկարող են շուտով նորից լցնելու իրենց քսակները:

— Բայց չի երևում, որ այդ շոգենավը հետամուտ է ձեր քսակը գողանալու:

— Սպասեցեք և կտեսնեք,— եղավ մռայլ պատասխանը:

Եվ իրոք, երկար սպասելու, կարիք չունեցանք: «Մակեդոնիան» մեր մակույկների գծից մի քանի մղոն առաջ անցնելով, սկսեց իր մակույկներն իջեցնել: Մենք գիտեինք, որ մեր հինգ մակույկի դիմաց (վեցերորդ մակույկով փախել էր Ուենրայթը) «Մակեդոնիան» ուներ տասնչորս հատ: Նա սկզբում մի քանի նավակ իջեցրեց քամու հակընթաց կողմում, մեր վերջին նավակից բավական հեռու, հետո շարունակեց դարձյալ իջեցնել մեր գծի ամբողջ երկարությամբ և մեր ամենամոտ նավակի հողմընթաց կողմում, դարձյալ բավական հեռու: Այդպիսով, մերոնց որսորդությունը խանգարվեց: Մեր հետևում ծովակատուներ չկային, իսկ առջևում տասնչորս նավակների շարանը հսկա ավելի նման ավլում-տանում էր իր դիմաց գտնվող երամը:

Մեր մակույկները որսացին միայն երկու-երեք մղոն տարածության վրա, որը նրանց բաժանում էր «Մակեդոնիայի» մակույկներից, և ապա վերադարձան: Քամին գրեթե դադարել էր, օվկիանոսը գնալով ավելի էր խաղաղվում և մեր առջև գտնվում էր ծովակատուների մի ահագին երամ: Դա որսորդության համար հիանալի օր էր: Այդպիսի օրեր հազիվ երկու-երեք անգամ են լինում որևէ բարեհաջող որսաշրջանի ամբողջ ընթացքում: Նավ բարձրացող նավաստիներն ու որսորդները սաստիկ զայրացել էին: Նրանցից յուրաքանչյուրն իրեն կողոպտված էր համարում: Նավակները բարձրացնելիս, նրանք այնպես էին հայհոյում, որ եթե հայհոյանքները որևէ ներգործիչ ուժ ունենային, Մահ Լարսենի հաշիվն ընդմիջտ մաքրված կլինեք:

— Տասը հավիտենականություն տևող մահ ու անեծք նրան,— գոչեց Լուիսը, նշանակալից մի հայացք ուղղելով ինձ, երբ իր մակույկը կապելուց հետո նստեց հանգստանալու:

— Ասացեք, խնդրեմ, կարո՞ղ եք կռահել, թե ինչն է նրանց հոգիների համար ամենակենսական բանը,— գոչեց Գայլ Լարսենը:— Ի՞նչն է դա, հավա՞տը, սե՞րը, վե՞հ գաղափարնե՞րը, բարի՞ն, գեղեցի՞կը, ճշմարի՞տը:

— Դա՛ արդարության վիրավորված զգացմունքն է,— ասաց Մոդ Բրուստերը, միանալով մեր խոսակցությանը:

Նա կանգնած էր մեզանից մոտ տասը ոտնաչափ հեռու, մեկ ձեռքով բռնել էր միջնակայմի պարանը, և մարմինը օրորվում էր նավի մեղմ տատանումներից: Նա բարձր չիտսեց, բայց նրա ձայնը հնչեց մաքուր ու հստակ, ինչպես զանգակի դողանքը: Ես հազիվ համարձակվեցի նայել նրան, վախենալով, որ ինձ կմատնեմ: Նավաստու գդակի տակից հորդող բաց-շաղգանակագույն մազերը, արևից փայլփլելով, լուսապսակ էին կազմել ձվաձև դեմքի շուրջը: Նա իսկապես հմայիչ էր և դրա հետ մեկտեղ ինչ-որ ոգեղեն տեսք ուներ, եթե ոչ հրեշտակային: Կյանքի նկատմամբ իմ հին հիացմունքը ամբողջովին վերակենդանացավ ի տես կյանքի այս զմայլելի մարմնավորման, և այդ պահին իմ աչքում միանգամայն ծիծաղելի ու ծաղրելի թվաց Գայլ Լարսենի սառը մեկնաբանությունը կյանքի ու նրա նշանակության մասին:

— Դուք էլ սենտիմենտալ եք միստր Վան-Վեյդենի պես,— քմիծաղեց Լարսենը։— Այս մարդիկ հայիոյում են, որովհետև իրենց ցանկությունների իրականացումը խանգարվեց։ Այդ է բոլորը։ Իսկ որո՞նք են նրանց ցանկությունները։ Ափ էլնել, առատ որսից ձեռք բերած փողով համեղ ճաշեր, փափուկ անկողին, կին ու գինի, ցովություն ու անասնականություն վայելել։ Այս ցանկությունները արտահայտում են նրանց բուն էությունը, նրանց բարձրագույն ձգտումները, եթե կուզեք՝ նրանց իդեալները։ Այո, նրանց զգացմունքների այս ցուցադրությունը սրտագրավ տեսարան չէ, բայց, այնուամենայնիվ, վկայում է, թե այդ մարդիկ որքան խորն են ազդվել, թե որքան խորն են ազդվել նրանց քսակները։ Որովհետև, ձեռք դնել նրանց քսակների վրա՝ նշանակում է ձեռք դնել նրանց հոգիների վրա։

— Բայց ձեր վերաբերմունքից բնավ չի երևում, որ ձեր քսակի վրա ձեռք է դրվել,— ասաց օրիորդը ժպտալով։

— Նշանակում է՝ ես տարբեր ձևով եմ վարվում, երբ ձեռք են դնում իմ քսակի ու հոգու վրա։ Լոնդոնյան շուկայի ընթացիկ գներով՝ մեր այսօրվա որսալիք ծովակատուների մորթիներն առնվազն հազար հինգ հարյուր դոլլարի շահ կբերեին, եթե «Մակեդոնիան» մեզ չկողոպտեր։

— Դուք շատ հանգիստ եք խոսում,— սկսեց Մոդ Բրուստերը։

— Բայց ներքուստ հանգիստ չեմ,— ընդհատեց նա,— ես կսպանեի ինձ կողոպտող մարդուն։ Այո, այո, գիտեմ, այդ մարդը իմ եղբայրն է... Զգացմունքներ... Է՛հ...

Նրա դեմքի արտահայտությունը հանկարծ փոխվեց, և երբ նա շարունակեց խոսել, ձայնը հնչեց մեղմ ու անկեղծ։

— Դուք, սենտիմենտալ էակներդ, պետք է որ երջանիկ լինեք, իսկապես երջանիկ, որովհետև երազելով գտնում եք, որ կյանքը լավ է։ Եվ քանի որ ձեզ այդպես է թվում, դուք էլ ձեզ լավ եք զգում։ Դե ասացեք, դուք գտնո՞ւմ եք, որ ես լավ մարդ եմ։

— Ձեր արտաքինը բավականին լավն է,— ես տվեցի իմ գնահատականը։

— Ձեր մեջ կան լավության բոլոր կարողությունները,— եղավ Մոդ Բրուստերի պատասխանը։

— Այդպես էլ գիտեի,— գրեթե զայրացած գոչեց նա, նայելով օրիորդին։— Ձեր ասածները դատարկ խոսքեր են ինձ համար։ Ձեր հայտնած մտքի մեջ որոշ ու հստակ ոչինչ չկա։ Դուք չեք կարող այդ միտքը ձեր ափի մեջ դնել ու վրան նայել։ Դա, ըստ էության, նույնիսկ միտք չէ, այլ ինչ-որ զգացմունք, որը պատրանքի ծնունդ է և ոչ թե մտածողության արդյունք։

Երբ նա վերսկսեց, նրա ձայնը դարձյալ մեղմացել էր ու հնչում էր անկեղծ։

— Գիտե՞ք, ես երբեմն ցանկություն եմ ունենում, որ ինքս էլ կյանքի փաստերի նկատմամբ կույր լինեմ և երազներով ու պատրանքներով ապրեմ։ Իհարկե, դրանք բոլորը սուտ ու սխալ են և հակասում են առողջ դատողությանը։ Բայց չնայած դրան, իմ տրամաբանությունն ասում է, թե սուտ ու սխալ լինելով հանդերձ, երազներն ու պատրանքները ավելի մեծ հաճույք են պարգևում։ Առանց հաճույքի կյանքը անարժեք բան է։ Ապրելու համար աշխատել և չվարձատրվել՝ դա ավելի վատ է, քան մահը։ Ով ավելի հաճույք է ստանում, նա ավելի լրիվ է ապրում, համենայն դեպս, ձեր երազներն ու պատրանքները ձեզ նվազ են վրդովում ու ավելի բավարարություն են ընծայում, քան իմ փաստերը՝ ինձ։

Նա գլուխը մեղմ օրորեց և սկսեց խորհել.

— Ես հաճախ, շատ հաճախ տարակուսում եմ տրամաբանության լիարժեքության վրա, և ինձ թվում է, որ երազներն ավելի կենսահաստատ են ու գոհացուցիչ: Հուզական վայելքը ավելի լիակատար ու երկարատև է, քան իմացական վայելքը: Բացի դրանից, իմացական վայելքներին հաջորդում է թախիծը, մինչդեռ հուզական վայելքները պարզապես մի քիչ բթացնում են զգայարանները, որոնք, սակայն, շուտով վերակազդուրվում են: Ես ձեզ նախանձում եմ, ուղղակի նախանձում:

Նա հանկարծ լռեց, և նրա շրթներին գծագրվեց յուրահատուկ ու տարօրինակ քմծիծաղը: Նա ավելացրեց.

— Բայց ես ձեզ նախանձում եմ ուղեղով, նկատի ունեցեք այդ, և ոչ թե սրտով: Տրամաբանությունն է թելադրում այդ նախանձը, որովհետև նախանձը մտքի արտադրանք է: Ես նման եմ այն զգաստ մարդուն, որը նայում է հարբածի վրա և զգաստությունից ձանձրացած՝ ցանկանում ինքն էլ հարբել:

— Կամ այն խելոք մարդու նման, որը խելագարներին նայելով, ցանկանում է խելագար լինել,— ծիծաղեցի ես:

— Ճիշտ այդպես,— ասաց նա:— Դուք մի գույգ երանելի, սնանկացած խելագարներ եք: Ձեր թղթապանակում ոչ մի փաստ չկա:

— Բայց և այնպես մենք ծախսում ենք նույնքան առատաձեռնությամբ, որքան դուք,— պատասխանեց օրիորդը:

— Նույնիսկ ավելի առատաձեռնությամբ, քանի որ դա ոչ մի արժեք չունի ձեզ համար:

— Հենց նրա համար, որ մենք պարտք ենք անում հավերժությունից,— ասաց միսս Բրուստերը:

— Որտեղից էլ առնեք կամ կարծեք, որ առնում եք, միևնույն է, դուք ծախսում եք ձեր չունեցածը: Այնուամենայնիվ, դուք դրա փոխարեն ավելի մեծ վարձատրություն եք ստանում, քան ես ստանում եմ իմ ծախսածի համար, որը ձեռք եմ բերել քրտինքով:

— Ուրեմն ինչո՞ւ չեք փոխում ձեր փողի տեսակը,— հարցրեց Մոդ Բրուստերը կատակելով:

Գայլ Լարսենը մի արագ հայացք գցեց օրիորդի վրա, որի մեջ փայլեց ինչ-որ հույսի նշույլ, ապա ասաց տրտմությամբ.

— Շատ ուշ է: Գուցե կուզենայի, բայց այլևս չեմ կարող: Իմ դրամապանակը լցված է հին փողով, ընդ որում դրանից ազատվել հնարավոր չէ: Ես երբեք ի վիճակի չեմ լինի գնահատելու այլ տեսակի փող, քան իմը:

Նա լռեց և նրա մտածկոտ հայացքը Մոդ Բրուստերի վրայից սահելով, ուղղվեց դեպի հանդարտ ծովի մակերեսը: Հինավուրց նախնիներից ժառանգած վաղնջական թախիծն այնքան ուժեղ էր համակել նրա հոգին, որ նա ամբողջ մարմնով սարսռաց: Նրա խորհրդածությունները հետզհետե բորբոքեցին նրան և կարելի էր ակնկալել, որ նա մի որևէ դիվային արարք կգործի: Ես հիշեցի Չարլի Ֆարասթին և հասկացա, որ այս մարդու թախիծը

այն պատիժն է, որ մատերիալիզմը տնօրինում է մատերիալիստորեն մտածող յուրաքանչյուր մարդու:

Գլուխ քսանհինգերորդ

— Դուք տախտակամածի վրա եղել եք, միստր Վան-Վեյդեն,— ասաց Գայլ Լարսենը հաջորդ առավոտ նախաճաշի ժամանակ,— ինչպե՞ս է եղանակը:

— Բավականին պարզ,— պատասխանեցի ես, դիտելով նավասանդուղքի բացվածքից հոսող արևի լույսը:— Արևմտյան մեղմ քամի, որը խոստանում է ուժեղանալ, եթե ճիշտ է Լուիսի կանխատեսությունը:

Նա գոհունակությամբ գլուխը շարժեց:

— Մառախուղի նշաններ չկա՞ն:

— Խիտ շերտեր կան հյուսիսում և հյուսիս-արևմուտքում:

Նա նորից գլուխը շարժեց, այս անգամ ավելի մեծ գոհունակությամբ:

— Իսկ ի՞նչ լուր «Մակեդոնիայից»:

— Անհետացել է,— պատասխանեցի ես:

Ես կարող էի երդվել, որ այդ տեղեկությունից նրա տրամադրությունն ընկավ, բայց չէի հասկանում, թե ինչո՞ւ պետք է նա դրանից հուսախաբվեր:

Պատճառը շուտով պարզվեց:

— Ծո՛ւխ,— լսվեց տախտակամածից, և Լարսենի դեմքը մեկեն պայծառացավ:

— Հիանալի՛,— բացականչեց նա և սեղանը թողնելով, իսկույն տախտակամած բարձրացավ ու գնաց որսորդների ընդհանուր խուցը, որտեղ վերջիններս իրենց տարագրության առաջին նախաճաշն էին անում:

Մոդ Բրուստերը և ես գրեթե ձեռք չտվինք մեր առջև դրված ուտելիքներին: Լուռ ու մտահոգ իրար նայելով, ականջ էինք դնում Գայլ Լարսենի ձայնին, որը մեզ հասնում էր միջնորմի հետևից: Նա երկար խոսեց և նրա ճառի վերջավորությունն ընդունվեց վայրի գոռգոռոցով: Միջնորմը հաստ էր, և մենք չէինք լսում նավապետի խոսքերը, բայց, ըստ երևույթին, նրա ճառը խոր տպավորություն գործեց, քանի որ գոռգոռոցին հաջորդեցին ուրախության որոտալի բացականչություններ:

Տախտակամածի վրա եռուզեռ սկսվեց, և ես գուշակեցի, որ նավաստիները կանչվել են վերև և պատրաստվում են ծով իջեցնել մակույկները: Մոդ Բրուստերը ինձ հետ տախտակամած բարձրացավ, բայց ես նրան թողեցի նավահարթակի ծայրում, որտեղից նա կարող էր տեսարանը դիտել առանց մասնակցելու: Նավաստիները, երևի, արդեն գիտեին ձեռնարկության շարժառիթը, իսկ աշխատանքում ներդրած նրանց եռանդը վկայում էր ընդհանուր խանդավառության մասին: Որսորդները տախտակամած փոխադրեցին

մանրագնդակի հրացաններ, փամփուշտի արկեր և բոլորովին արտասովոր մի բան. ակոսավոր փողանցքով հրացաններ: Նրանք միայն հաղվադեպ առիթներով էին իրենց հետ տանում ակոսավոր վաղանցքով հրացան, որովհետև դրա գնդակով խփված ծովակատուներն առանց բացառության սուզվում են ջրի տակ, նախքան մակույկին հասնելը: Բայց այսօր յուրաքանչյուր որսորդ վերցրել էր այդպիսի մի հրացան և գնդակների մեծ պաշար: Ես նկատեցի, որ նրանք գոհունակությամբ ժպտում էին, դիտելով «Մակեդոնիայի» ծովիսը, որը արևմտյան կողմից մոտենալով, հետզհետե բարձրանում էր ավելի վերև:

Հինգ մակույկներն իսկույն իջեցվեցին ծով: Նախորդ օրվա նման, հովհարի ձևով տարածվելով, նրանք ուղղվեցին դեպի հյուսիս, իսկ մենք «Ուրվականը» քնեցինք նրանց հետևից: Ես միառժամանակ հետաքրքրությամբ դիտեցի մեր մակույկները, բայց նրանց շարժումների մեջ արտակարգ ոչինչ չնկատեցի: Որսորդներն իջեցնում էին առագաստները, խփում էին ծովակատուներ, նորից պարզում էին առագաստները և սովորականի պես շարունակում իրենց ճանապարհը: «Մակեդոնիան» կրկնեց նախորդ օրվա մաները և մեր դիմաց իջեցրեց իր մակույկները՝ ծովը «ավելելու» նպատակով: Որպեսզի տասնչորս մակույկներ կարողանան ազատորեն որսալ, անհրաժեշտ է, որ նրանք ցրվեն ծովի լայն տարածության վրա, իսկ շոգենավը, մեր ճանապարհը ամբողջովին կտրելուց հետո, ուղղվեց դեպի հյուսիս, շարունակելով մակույկներ իջեցնել:

— Ի՞նչ եք մտադիր անել,— հարցրի Գայլ Լարսենին, չկարողանալով ավելի երկար զսպել հետաքրքրությունս:

— Այդ ձեզ չի վերաբերում,— պատասխանեց նա խստությամբ:— Համենայն դեպս, հազար տարի սպասելու պետք չի լինի, որպեսզի իմանաք: Մինչ այդ միայն աղոթեցեք, որ քամին ուժեղանա:

— Դե լավ, կարող եմ ասել,— ավելացրեց նա, մի պահ լռելուց հետո:— Ես ուզում եմ իմ այդ եղբորը խմեցնել ինձ համար պատրաստած իր դեղը: Կարճ ասած՝ ուզում եմ ինքս ավել ծովը և այդ անել ոչ միայն մեկ օր, այլ որսորդության ամբողջ շրջանի ընթացքում, եթե, հիարկե, բախտը ինձ ժպտա:

— Իսկ եթե չժպտա՞,— հարցրի ես:

— Այդ հանգամանքը ես նկատի չեմ առել,— ծիծաղեց նա:— Պետք է անպայման ժպտա, թե չէ՝ կորած ենք:

Նա կանգնեց դեկանիվի առաջ, իսկ ես գնացի նավաստիների ընդհանուր խուցը, որտեղ պառկած էին երկու վիրավորները՝ Նիլսոնը և Մագրիջը: Նիլսոնը, ինչպես և պետք էր ակնկալել, զվարթ էր, որովհետև շարժված ոտքը արագ բուժվում էր, իսկ խոհարարը համակված էր այնպիսի հուսահատ տխրությամբ, որ ես խոր կարեկցանք զգացի այդ դժբախտ արարածի նկատմամբ: Զարմանալին այն է, որ նա դեռ ապրում էր և կառչում կյանքին: Տարիների թշվառությունը քայքայել էր նրա վտիտ մարմինը, բայց, այնուամենայնիվ, կյանքի կայծը նրա հոգում այժմ ավելի վառ էր, քան երբևէ:

— Արհեստական ոտքով, որպիսին հիմա հիանալի են պատրաստում, դու կկարողանաս անվերջ քարշ գալ նավերի խոհանոցներում,— վստահեցրի նրան զվարթությամբ:

Բայց նրա պատասխանը լուրջ էր, ավելի շուտ՝ հանդիսավոր.

— Ես այդ մասին չգիտեմ, միստր Վան-Վեյդեն, բայց գիտեմ մի բան, որ ես երբեք չպիտի ուրախանամ, մինչև չտեսնեմ այդ դժոխքի շան սատկելը: Նա ինձնից երկար չի կարող ապրել: Նա իրավունք չունի ապրելու և, ինչպես գրված է սուրբ գրքում, «Նա պետք է մեռնի տանջվելով»: Իսկ ես կավելացնեմ՝ «Ամեն, որքան շուտ, այնքան լավ»:

Երբ տախտակամած վերադարձա, Գայլ Լարսենը մեկ ձեռքով դեկանիվն էր վարում, իսկ մյուսով ծովային հեռադիտակը բռնած՝ գնում էր մակույկների դիրքը, հատուկ ուշադրությամբ հետևելով «Մակեդոնիայի» շարժումներին: Մեր մակույկների դիրքում միակ նկատելի փոփոխությունն այն էր, որ նրանք մոտեցել էին քամու հոսանքին և ուղղվում էին դեպի հյուսիս-արևմուտք: Բայց ես դեռ չէի կարողանում հասկանալ այդ մանևրի միտքը, որովհետև նրանց առջև գտնվում էին «Մակեդոնիայի» հինգ մակույկները, որոնք նույնպես ընթանում էին քամու ուղղությամբ: Այնուհետև նրանք թեթևակի թեքվեցին դեպի արևմուտք, հետզհետե հեռանալով իրենց գծի մնացյալ մակույկներից: Մեր մակույկներն առաջանում էին թե՛ առագաստների և թե՛ թիակների օգնությամբ: Թիավարում էին նույնիսկ որսորդները և այդպիսով օգտագործվում էին յուրաքանչյուր մակույկի երեք զույգ թիակները: Մեր մակույկները շուտով մոտեցան նրանց, որոնց կարելի է դիպուկ կերպով անվանել «թշնամի»:

«Մակեդոնիայի» ծովյւր փոքրացել ու աղոտացել էր հյուսիս-արևելյան հորիզոնում, իսկ ինքը շոգենավը, արդեն դարձել էր անտեսանելի: Մինչև հիմա մենք դանդաղ թափառում էինք, և մեր առագաստները գրեթե ամբողջ ժամանակ ծածանվում էին քամուց: Նույնիսկ երկու անգամ երկկայմանավը կարճ ժամանակով կանգնեց և սկսեց տեղում ծփալ: Բայց այժմ այդ թափառումին վերջ դրվեց: Թոկասարքերը կարգի բերվեցին, և Գայլ Լարսենը արագացրեց «Ուրվականի» ընթացքը: Մենք անցանք մեր մակույկների գիծը և մոտեցանք թշնամու գծի առաջին նավակին:

— Եռանկյուն առագաստը իջեցրե՛ք, միստր Վան-Վեյդեն,— հրամայեց Գայլ Լարսենը,— և պատրաստ եղեք հավաքելու:

Ես վազեցի դեպի առաջամաս և երբ իջեցրի առագաստը, «Ուրվականը» արդեն սահում էր թշնամու մակույկի հողմընթաց կողմով, մոտ հարյուր ոտնաչափ հեռվից: Մակույկում գտնվող երեք ծովայինները կասկածով դիտում էին մեզ: Նրանք կողոպտել էին մեր ծովակատուները և ճանաչում էին Գայլ Լարսենին կամ գոնե լսել էին նրա հռչակի մասին: Ես նկատեցի, որ որսորդը, մի հսկա սկանդինավցի, նստած էր ցուլկին, հրացանը ծնկների վրա պատրաստ պահած, և կարող էր մեկ ակնթարթում բարձրացնել և կրակել: Երբ մենք նրանց հավասարվեցինք, Գայլ Լարսենը, ձեռքով ողջունելով, գոչեց.

— Մեզ մոտ բարձրացեք, մի քիչ ծնոտ շարժենք:

Որսորդական երկկայմանավերում «ծնոտ շարժել» միաժամանակ նշանակում է «այցելել» և «շաղակրատել»: Դա հանդիսանում է նավագների այն յուրահատուկ բարբաջանքը, որը հաճելի մի ընդմիջում է ծովային միօրինակ կյանքում:

«Ուրվականը» մտավ քամու հոսանքի մեջ, իսկ ես առաջամասում իմ գործը վերջացնելով, շտապեցի նավախել, որպեսզի օգնեմ միջնակայմի թոկասարքը կարգի բերող նավաստիներին:

— Խնդրում եմ, միաս Բրուստեր, տախտակամածի վրա մնացեք,— ասաց Գայլ Լարսենը և ուղղվեց դեպի առաջամաս՝ իր հյուրին ընդունելու։— Դուք նույնպես, միատր Վան-Վեյդեն։

Մակույկի նավաստիներն առագաստն իջեցրին և թիավարելով, մոտեցան մեզ։ Որսորդը՝ ոսկեմարուս, ինչպես ծովի առասպելական արքա, նավաբազրիքի վրայով ցատկեց տախտակամած։ Բայց հակառակ իր վիթխարի մարմնին, նա կարծես վախենում էր։ Նրա դեմքը բացահայտորեն կասկած ու անվստահություն էր արտահայտում։ Սակայն երբ նկատեց, որ բացի Գայլ Լարսենից ու ինձնից ուրիշ ոչ ոք չկա տախտակամածի վրա և տեսավ, որ իր երկու նավաստիները միացել են իրեն, նրա մագոտ ու անկեղծ դեմքը պայծառացավ։ Նա համոզվեց, որ վախենալու պատճառ չկա։ Այդ ածդահան կարծես մի Գողիաթ լինե՞ր Գայլ Լարսենի կողքին։ Նրա հասակի բարձրությունը կլիներ վեց ոտնաչափ և ութ կամ ինը մատնաչափ, իսկ քաշը, ինչպես հետո իմացա, երկու հարյուր քառասուն ֆունտ էր։ Նրա մարմնում ճարպ չկար. լոկ մկան ու ոսկոր։

Երբ Գայլ Լարսենը նավասանդուղքին մոտենալով առաջարկեց իջնել ներքև, որսորդի աչքերը նորից անհանգստացան։ Բայց իր բարձունքից նայելով նավապետին, նա իսկույն ներշնչվեց ինքնավստահությամբ։ Որովհետև Գայլ Լարսենը, թեև հաղթանդամ, այդ հսկայի մոտ գաճաճ էր երևում։ Այսպիսով վարանումը վերջնականապես փարատվեց, և նրանք իջան նավասենյակ։ Մինչ այդ, նորեկ թիավարները, ըստ ընդունված սովորության, գնացին առաջամաս՝ նավաստիներին այցելելու։

Հանկարծ ընդհանուր խցից լսվեց մի ահարկու, ցնցող մոնչոց, որին անմիջապես հետևեց մոլեգին պայքարի աղմուկը։ Դա՝ ընձառյուծի և առյուծի կռիվն էր, և առյուծն էր ամբողջ ժամանակ մոնչացողը։ Լարսենը՝ ընձառյուծն էր։

— Ահա մեր հյուրընկալության նվիրականությունը,— դառնությամբ ասացի Մոդ Բրուստերին։

Նա գլուխը հաստատական օրորեց և ես նրա դեմքին նկատեցի սրտխառնոքի նշաններ, նման այն սրտխառնոքներին, որ «Ուրվականի» վրա սկզբի շաբաթներին պատճառում էին ինձ կատաղի կռիվների աղմուկը կամ տեսարանը։

— Ավելի լավ չէ՞ առաջամաս գնանք, մինչև այս ամենը վերջանա,— խորհուրդ տվի ես։

Բայց նա գլուխը թափահարեց և նայեց ինձ սրտաշարժ հայացքով։ Նա չէր վախեցել, նրան պարզապես զարհուրանք էր պատճառում մարդկային գազանությունը։

— Դուք պետք է հասկանաք,— ասացի առիթից օգտվելով,— որ ես ստիպված եմ այսպես ձեռնպահ մնալու և հիմա, և հետագայում, որպեսզի... որպեսզի կարողանամ, եթե հնարավոր է, մեր երկուսի կյանքը փրկել այս դժոխքից։— Ապա ավելացրի։— Ինձ համար էլ հաճելի չէ իմ այս դերը։

— Հասկանում եմ,— ասաց օրիորդը թույլ ու հեռավոր ձայնով, և նրա աչքերն ասացին, որ նա իրոք ինձ հասկանում է։

Ներքևից եկող աղմուկը շուտով դադարեց: Գայլ Լարսենը մենակ բարձրացավ տախտակամած: Նրա բրոնզագույն դեմքը թեթևակի կարմրել էր, բացի դրանից, պայքարի ոչ մի նշան չէր երևում:

— Այդ երկու նավաստիներին այստեղ կանչեցեք, միսոր Վան-Վեյդեն,— ասաց նա:

Ես հնազանդվեցի, և մի քանի րոպե հետո նրանք արդեն կանգնել էին նավապետի առջև:

— Վերև բարձրացրե՛ք ձեր մակույկը,— հրամայեց նրանց Գայլ Լարսենը:— Ձեր որսորդը որոշեց միառժամանակ մնալ այստեղ և չի ուզում, որ մակույկը նավի կողքին խփվելով վնասվի:

Տեսնելով, որ նավաստիները վարանում են, նա ավելի խիստ շեշտով գոչեց.

— Ձեզ ասում եմ մակույկը վերև բարձրացրե՛ք:

— Ո՞վ է իմանում, գուցե հարկավոր լինի որոշ ժամանակ մեզ հետ նավարկել,— շարունակեց նա, այս անգամ մեղմ ու հանդարտ ձայնով, որի մեջ, սակայն, ինչ-որ սպառնալից հնչյուն կար:— Հետևաբար, ավելի լավ է, որ հենց սկզբից բարեկամներ լինենք:

Տեսնելով, որ նավաստիները դեռ վարանում են, Գայլ Լարսենը ձայնը բարձրացրեց.

— Դե՛հ, արա՛գ... Մահ Լարսենը ձեզ ցատկոտել էր տալիս, դուք այդ լավ գիտեք:

Նրա բղավոցը նկատելիորեն արագացրեց նավաստիների շարժումները, և նրանք շուտով մակույկը նավ բարձրացրին: Այնուհետև Գայլ Լարսենը ինձ հրամայեց եռանկյուն առազաստները տեղափոխել, իսկ ինքը կանգնեց դեկանիվի առաջ և «Ուրվականը» ուղղեց գեպի «Մակեդոնիայի» երկրորդ մակույկը:

Ճանապարհին, միառժամանակ ազատ լինելով, ես ուշադրությունս դարձրի նավակների դիրքերին: Մեր մակույկներից երկուսը հարձակվել էին «Մակեդոնիայի» երրորդ հողմընթաց մակույկի վրա, իսկ մնացած երեքը չորրորդի վրա: Թշնամու հինգերորդ մակույկը, ետ դառնալով, օգնության էր գալիս ամենամոտ ընկերոջը: Կռիվը տեղի էր ունենում երկար հեռավորությունների վրա, և ակոսավոր հրացանները անդադար կրակում էին: Ծովը սկսել էր քամուց ալեկոծվել, և դա խանգարում էր ճշգրիտ նշանառությանը: Երբ ավելի մոտեցանք, նկատեցինք, թե ինչպես գնդակները հաճախ ուստոստում են ալիքների վրա:

Այն մակույկը, որին հետապնդում էինք, մեզնից խույս տալու համար շեղվեց իր ուղուց և, նավարկելով հողմընթաց ուղղությամբ, մոտեցավ իր ընկերներին՝ նրանց հետ մեր մակույկների հարձակումը ետ մղելու նպատակով:

Ես չկարողացա տեսնել, թե հետո ինչ տեղի ունեցավ, որովհետև ստիպված եղա հեռանալ առազաստներով զբաղվելու համար: Երբ անցնում էի հարթակի վրայով, Գայլ Լարսենը «Մակեդոնիայի» երկու նավաստիներին հրամայեց գնալ առաջամասի խուցը: Նրանք թեև դժկամություն ցույց տվին բայց հնազանդվեցին: Այնուհետև նա միսս Բրուստերին առաջարկեց ներքև իջնել և, նկատելով օրիորդի աչքերում լցվող սարսափը, ժպտաց:

— Ներքևում սարսափելի ոչինչ չկա,— ասաց նա,— կա միայն մի մարդ, որք կապկպված է և անվնաս: Այստեղ կարող են փամփուշտներ ընկնել, իսկ ես չեմ ուզում, որ դուք սպանվեք:

Հազիվ էր նա խոսքը վերջացրել, երբ մի պատահական գնդակ կպավ դեկանիվի պղնձյա մատներից մեկին, նրա ձեռքերի ճիշտ մեջտեղում, և ահագին ճայթյունով օդ նետվեց:

— Տեսնո՞ւմ եք,— ասաց նա օրիորդին, և ապա դիմեց ինձ,— միստր Վան-Վեյդեն, կանգնեցե՛ք դեկանիվի առաջ:

Մոդ Բրուստերը նավասանդուղքի աստիճաններով իջավ այնքան, որ միայն գլուխը մնաց բացվածքից դուրս: Գայլ Լարսենը մի ակոսավոր հրացան վերցնելով, մեջը փամփուշտ էր տեղավորում: Ես աչքերով միսս Բրուստերին թախանձեցի ներքև իջնել, բայց նա ժպտալով ասաց.

— Գուցե մենք թույլ արարածներ ենք և սեփական ոտքեր չունենք, բայց, այնուամենայնիվ, կարող ենք նավապետ Լարսենին ցույց տալ, որ գոնե նրա պես քաջ ենք:

Նավապետը օրիորդին ուղղեց մի արագ, հիացական հայացք:

— Այդ խոսքի համար ձեզ հարյուր տոկոսով ավելի եմ հավանում,— ասաց նա:— Տաղա՛նդ, խե՛ղք, քաջությո՛ւն... Ինչպիսի՛ գուգաղիպություն... Ձեզ պես զրական սալոնների անդամուհուն որքա՛ն պիտի սազեր ծովահենների պարագլուխի կինը լինել... Այդ մասին մենք հետո կխոսենք,— ժպտաց նա, երբ մի գնդակ խրվեց խցի միջնորմի մեջ:

Ես նկատեցի, որ խոսելիս նրա աչքերում դարձյալ շողաց ոսկեգույն փայլը, և օրիորդի աչքերը նորից լցվեցին սարսափով:

— Մենք ավելի քաջ ենք,— շտապեցի ասել ես:— Գոնե իմ մասին խոսելով, կարող եմ ասել, որ ավելի քաջ եմ, քան նավապետ Լարսենը:

Ես էլ, իմ հերթին, արժանացա մի արագ հայացքի: Գայլ Լարսենը, հավանորեն, մտածում էր, թե ծաղրում եմ: Ես դեկանիվը մի քանի կողմնամաս պտտեցի, որպեսզի «Ուրվականը» տանեմ քամու ուղղությամբ, հետո նորից անշարժ պահեցի իմ ձեռքում: Գայլ Լարսենը դեռ սպասում էր բացատրության: Ես նրան ցույց տվի իմ ծնկները:

— Տեսեք,— ասացի,— նրանք թեթևակի դողում են: Պատճառն այն է, որ վախենում եմ, մարմինս վախենում է: Ես մտքով վախենում եմ, որովհետև չեմ ուզում մեռնել: Բայց հոգիս իշխում է իմ դողացող մարմնի և ահաբեկված մտքի վրա: Հետևաբար, ես ավելի քան անվեհեր եմ: Ես քաջ եմ: Ձեր մարմինը չի դողում: Դուք չեք վախենում: Վտանգին դիմագրավելը ոչ միայն դժվար չէ ձեզ համար, այլ նույնիսկ հաճույք է: Դուք ըմբռնվում եք այդ: Դուք կարող եք անվեհեր լինել, միստր Լարսեն, բայց պետք է ընդունեք, որ քաջը ես եմ:

— Իրավացի եք,— իսկույն ընդունեց նա:— Ես այդ մասին այդ ձևով երբեք չէի մտածել: Բայց արդյո՞ք դրա հակառակն էլ է ճիշտ: Եթե դուք ինձնից ավելի քաջ եք, դա նշանակո՞ւմ է, որ ես ձեզնից ավելի վախկոտ եմ:

Մենք երկուսով ծիծաղեցինք այդ անհեթեթ եզրակացության վրա և նա, մեկ ոտքով չոքելով, հրացանի փողը հենեց նավեզրի բազրիքին: «Ուրվականի» վրա ընկած փամփուշտները արձակվել էին մոտ մեկ մղոն հեռվից, բայց հիմա մենք այդ հեռավորության կեսն արդեն կտրել էինք: Գայլ Լարսենը ուշադրությամբ նշան բռնելով, երեք անգամ կրակեց: Առաջին գնդակն ընկավ մակույկից հիսուն ոտնաչափ հեռու, հողմընթաց կողմում, երկրորդը՝

մակույկի կողքին, իսկ երրորդ կրակոցին նավուղիդը բաց թողեց խելամասի թիակը և գլորվեց մակույկի հատակը:

— Այսքանը նրանց բավական է,— ասաց Գայլ Լարսենը, ոտքի կանգնելով:— Ինձ ձեռնտու չէ սպանել որսորդին և հավանական է, որ թիավարը չիմանա դեկ վարել: Այդ դեպքում որսորդը չի կարող թե՛ դեկ վարել և թե՛ միաժամանակ կրակել:

Նրա կանխատեսությունը ճիշտ դուրս եկավ: Նավակն իսկույն պտտվեց քամուց, և որսորդը, խելամաս ցատկելով, նավուղիդի տեղը գրավեց: Այսպիսով, այդ մակույկից կրակոցը դադարեց, թեև մյուսները դեռ աշխուժով շարունակում էին հրաձգությունը:

Որսորդը նորից հողմընթաց ուղղություն տվեց մակույկին, բայց մենք կրկնակի արագությամբ ընթանալով՝ հետզհետե մոտենում էինք նրան: Մեր միջև մոտ հարյուր յարդ հեռավորություն էր մնացել, երբ նկատեցի, որ թիավարը որսորդին հրացան է մեկնում: Գայլ Լարսենը տախտակամածի միջնամասը գնաց և կախարանից իջեցրեց հաստ պարանի մի բոլորակ: Հետո, նավաբարձիքից ցած նայելով՝ հրացանի կոթը հենեց ուսին: Որսորդը երկու անգամ փորձեց խելամասի թիակը բաց թողնել ու հրացանը վերցնել, բայց երկու անգամն էլ վարանեց: Այժմ «Ուրվականը» փրփուր ցայտելով անցնում էր մակույկի կողքով:

— Հե՛յ, դո՛ւ,— գոչեց հանկարծ Գայլ Լարսենը թիավարին,— վերցրո՛ւ պարանը:

Եվ միևնույն ժամանակ նա գցեց պարանի բոլորակը, որը թիավարին դիպչելով, քիչ մնաց գլորեր հատակի վրա: Բայց թիավարը չհնազանդվեց և որսորդին նայելով սպասեց հրացանի: Որսորդը տատանվում էր: Հրացանը դրված էր նրա ծնկների մեջ, բայց եթե կրակելու համար նա թիակը թողներ, ապա մակույկը կարող էր շուտ գալ և ընդհարվել երկկայմանավին: Բացի դրանից, նա տեսնում էր, որ Գայլ Լարսենը հրացանն ուղղել է իր վրա և իրեն կսպանի նախքան ինքը կկարողանա հրացանը գործի գնել:

— Վերցրու,— հանգիստ ասաց նա թիավարին:

Նավաստին հնազանդվեց և պարանի ծայրը կապեց առջևի նստարանից, իսկ երբ պարանը բավականաչափ ձգվեց, նա սկսեց պարանի ավելորդ մասը աստիճանաբար բաց թողնել: Մակույկն իսկույն հեռացավ երկկայմանավից և, որսորդը, դեկը վարելով, մեզ հետ ընթացավ մոտ քսան ոտնաչափ հեռվից:

— Առագաստը հավաքեցեք և մոտեցեք,— հրամայեց Գայլ Լարսենը:

Մեկ ձեռքում հրացանը պահած, մյուս ձեռքով նա իջեցրեց թոկասարքը: Երբ թոկերը մակույկի ցուկին ու խելին ամրացվեցին, և երկու ծովայինները պատրաստվեցին նավ բարձրանալ, որսորդն իր հրացանը վերցրեց, որպես թե ապահով տեղ դնելու համար:

— Ցա՛ծ գցիր,— գոչեց Գայլ Լարսենը, և որսորդը հրացանը գցեց այնպես արագ, կարծես թե այրում էր ձեռքը:

Նավեզր բարձրանալով, երկու կալանավորներն իրենց մակույկը քաշեցին վեր և Գայլ Լարսենի հսկողության տակ վիրավոր նավուղիդին փոխադրեցին նավաստիների խուցը:

— Եթե մեր հինգ մակույկներն էլ ձեզ ու ինձ պես լավ կատարեն իրենց պարտականությունը, ապա նավի անձնակազմը շուտով կբազմանա,— ասաց ինձ Գայլ Լարսենը:

— Այն մարդը, որի վրա կրակեցիք... հուսով եմ, որ նա... — թոթովեց Մոդ Բրուստերը:

— Միայն ուսից է վիրավորվել,— պատասխանեց Գայլ Լարսենը,— լուրջ բան չէ, միստր Վան-Վեյդենը երեք-չորս շաբաթում նրա վերքը հիանալի կբուժի: Սակայն, ինչպես երևում է, նրան չի հաջողվի բուժել այդ տղաներին,— ավելացրեց նա, մատնացույց անելով «Մակեդոնիայի» երրորդ մակույկը, որի ուղղությամբ ես վարում էի նավը և որին արդեն բավական մոտեցել էինք:— Դա Սմոքի և Հոռների կատարած գործն է: Ես նրանց ասել էի, որ ինձ հարկավոր են կենդանի մարդիկ և ոչ թե դիակներ: Բայց նպատակին խփելը այնքան մեծ հաճույք է, մանավանդ երբ գիտես լավ կրակել... Դուք երբեք զգացե՞լ եք այդ հաճույքը, միստր Վան-Վեյդեն:

Ես գլխով բացասական նշան արեցի և սկսեցի դիտել նրանց «գործը»: Նրանք իրոք արյունահեղ գործ էին կատարել և իրենց զոհերին լքելով՝ միացել էին մեր մյուս երեք մակույկներին ու նրանց հետ այժմ հարձակվում էին թշնամու մնացյալ երկու մակույկի վրա: Լքված մակույկը հարբածի պես տատանվում էր ալիքների վրա, իսկ թուլացած առագաստը թալրտում ու չփչվում էր քամուց: Որսորդն ու թիավարը անբնական դիրքով փովել էին հատակին, իսկ նավուղիդի մարմինը կիսով չափ դուրս էր կախված մակույկի եզրից. նրա ձեռքերը ակոսում էին ջուրը և գլուխն օրորվում էր մեկ կողմից մյուսը:

— Մի՛ նայեք, միսս Բրուստեր, խնդրում եմ, մի՛ նայեք,— թախանձեցի ես և գոհ մնացի, երբ նա ինձ լսեց և այդպիսով իրեն խնայեց սրտաճմլիկ տեսարանի պատճառելիք զարհուրանքից:

— Վարեցեք ուղիղ դեպի մակույկները, միստր Վան-Վեյդեն,— հրամայեց Գայլ Լարսենը:

Երբ մակույկներին մոտեցանք, հրաձգությունը արդեն դադարել էր և կռիվը վերջացել: «Մակեդոնիայի» երկու մակույկները գերի էին ընկել մերոնց ձեռքը և այժմ յոթն էլ իրար մոտ խմբված՝ սպասում էին, որ նավ բարձրացվեն:

— Նայեցե՛ք,— գոչեցի ես ականա և ձեռքով ցույց տվի հյուսիս-արևելյան կողմը:

Հորիզոնի վրա նորից էր հայտնվել «Մակեդոնիայի» փոքր ծուխը:

— Այո, ես նրան հետևում եմ,— եղավ Գայլ Լարսենի հանդարտ պատասխանը:— Նա հայացքով չափեց մեր և մշուշի միջև ընկած հեռավորությունը, ապա երեսը մի կողմ դարձրեց՝ քամու ուժգնությունն զգալու համար:— Ես կարծում եմ ճիշտ ժամանակին կհասնենք... Բայց դուք կարող եք չկասկածել, որ իմ օրհնյալ եղբայրը կռահել է մեր փոքրիկ խաղը և հիմա ամբողջ թափով գալիս է մեզ վրա: Այ, տեսե՛ք:

Ծխի ծվենը արագորեն մեծացել ու բարձրացել էր:

— Միննույն է, քեզ պիտի հաղթեմ, եղբայր իմ,— քրքջաց նա,— պիտի հաղթեմ, թեկուզ հնամաշ մեքենադ ջարդուփշուր անես իմ հետևից հասնելու համար:

Երբ նավը կանգնեցրինք, տախտակամածի վրա տիրեց շտապ, բայց կանոնավոր իրարանցում: Մակույկները բոլոր կողմերից նավ բարձրացվեցին: Հենց որ կալանավորները

ոտք դրին նավի վրա, մեր որսորդները նրանց իսկույն առաջնորդեցին նավաստիների ընդհանուր խուցը, մինչդեռ մեր նավաստիները մակույկները Բարձրացնում էին և խառնիխուռն գցում տախտակամածի վրա, առանց կապելու: Վերջին նավակը ջրից անջատվելով, դեռ թոկերից կախված, օրորվում էր, երբ մենք ճամփա ընկանք բոլոր առագաստները պարզած և պարանները թուլացրած:

Հարկավոր էր շտապել: «Մակեդոնիան» իր ծխնելույզից սև ու թանձր ծուխ արձակելով մոտենում էր հյուսիս–արևելքից: Իր մնացած մակույկներն աչքաթող անելով, նա ընթացքը փոխել էր, որպեսզի մեզ կանխի: Նա ոչ թե դեպի մեզ էր գալիս, այլ ջանում էր մեզնից անցնել: Մեր ճանապարհները, անկյան երկու կողմերի պես, պետք է իրար հանդիպեին մշուշի եզրում: Միայն այնտեղ կարող էր «Մակեդոնիան» մեզ բռնել: «Ուրվականի» միակ հույսն էր՝ այդ կետն անցնել, նախքան «Մակեդոնիայի» հասնելը:

Գայլ Լարսենը դեկն էր վարում և կայծկլտացող աչքերով հետևում այս մրցության հաջողությունը ապահովող յուրաքանչյուր մանրամասնի: Նա մերթ զննում էր ծովը և ստուգում քամու փոփոխությունները, մերթ դիտում էր «Մակեդոնիան», մերթ հայացքը շրջում մեկ առագաստից մյուսը և հրամայում փոքր-ինչ թուլացնել մի որևէ թոկասարք կամ փոքր-ինչ պրկել մի ուրիշը, որպեսզի կարողանա առավելագույն չափով օգտագործել «Ուրվականի» սրընթացության անգամ ամենահետին հնարավորությունները: Բոլոր վեճերն ու կռիվները մոռացվել էին, և զարմանքով դիտում էի, թե ինչպես նավաստիները, որոնք այնքան երկար հանդուրժել էին Գայլ Լարսենի կոպտությունները, այժմ ամենայն փութեռանդությամբ կատարում էին նրա հրամանները: Երբ նավը ալիքների վրա թռչկոտելով սլանում էր, հանկարծ հիշեցի տարաբախտ Ջոնսոնին և ցավեցի, որ հիմա նա մեզ հետ չէ. նա այնքան սիրում էր «Ուրվականը» և հիանում նրա սրընթացությամբ:

— Ակոսավոր հրացանները ձեռքի տակ ունեցեք, տղե՛րք,— գոչեց Գայլ Լարսենը որսորդներին, և սրանք հինգն էլ հրացանները բռնած, նավի հողմագերծ եզրին շարվելով սպասեցին:

«Մակեդոնիան» հիմա հազիվ մեկ մղոն հեռու էր մեզանից և առաջանում էր այնպիսի խելահեղ արագությամբ, որ դուրս ժայթքող սև ծխի հոսանքը ծխնելույզի հետ ուղիղ անկյուն էր կազմել: Նա սլանում էր ժամը տասնյոթ հանգույց արագությամբ: «Ծովի միջով սլանում, երկինքն է կանչում», մեջբերեց Գայլ Լարսենը շոգենավը դիտելով: Մենք առաջանում էինք հազիվ ինը հանգույց արագությամբ, Բայց մատախուղի շերտը արդեն շատ մոտ էր:

Հանկարծ «Մակեդոնիայի» տախտակամածից ծխի ամպ բարձրացավ: Մենք լսեցինք մի ուժեղ որոտ և նույն վայրկյանին միջնակայմի մեծ առագաստի վրա մի կլոր ծակ բացվեց: Նրանք կրակում էին այն փոքր թնդանոթից, որի գոյության մասին արդեն լսել էինք: Մեր նավաստիները հավաքվեցին տախտակամածի մեջտեղը և գդակները օդում ծածանելով՝ ծաղրական գոռգոռոց բարձրացրին: Շոգենավի վրա նորից ծխի ամպ բարձրացավ, նորից մի որոտ թնդաց և այս անգամ ռումբն ընկավ նավախելից մոտ քսան ոտնաչափ հեռու և ալիքների վրա երկու անգամ ուստոստելուց հետո սուզվեց ջրի խորքը:

Բայց «Մակեդոնիայից» ոչ մի հրացանաձգություն չկար, որովհետև նրա որսորդների մի մասը կալանավորված էր, իսկ մյուս մասը գտնվում էր մակույկներում: Երբ երկու նավի միջև մնաց միայն կես մղոն տարածություն, մի երրորդ ռումբ նոր ծակ բացեց մեր միջնակայմի

առագաստի վրա: Այնուհետև մենք մտանք մառախուղի մեջ, որը թանձր ու խոնավ շղարշի նման իսկույն սքողեց մեզ:

Միջավայրի հանկարծական փոփոխությունը ուղղակի ապշեցուցիչ էր: Մի վայրկյան առաջ մենք սահում էինք արևի լույսի միջով, երկինքը պայծառ էր մեր վերևում, կոհակները թավալվում էին մինչև հորիզոն և շոգենավը ծուխ, կրակ ու ռումբ ժայթքելով, խելահեղորեն խոյանում էր մեզ վրա: Եվ ահա հանկարծ մի ակնթարթում արևը խավարեց, երկինքն անհետացավ, նույնիսկ մեր կայմերի գագաթները դարձան անտեսանելի, և մեր տեսողությունը այնպես աղոտվեց, որ կարծես շուրջը դիտում էինք արցունքակալած աչքերով: Մոխրագույն մշուշը սահում էր մեր կողքով բարակ անձրևի պես: Մեր զգեստների բրդյա թելերը, մեր գլուխների ու դեմքերի մազերը ամբողջովին ծածկվել էին բյուրեղյա փայլուն գնդիկներով: Թոկասարքերը խոնավությունից թրջվել էին, ջուրը կաթկթում էր մեր հագուստներից, իսկ գերանների ներքևի կողմում ջրի կաթիլները կախվել էին երկար, դողդոջուն շարքերով և նավի յուրաքանչյուր ցնցումից անձրևի պես թափվում էին մեզ վրա: Կոկորդոս սեղմվում էր և դժվարությամբ էի շնչում: Ինչպես որ ալիքների վրա սուրացող նավի ձայները մառախուղին հանդիպելով անդրադառնում են, նույնը կատարվում է նաև գաղափարների հետ: Միտքը դադարում է խորհրդածելուց այն աշխարհի մասին, որ գտնվում է շրջապատի թանձր ծածկույթից անդին: Ասես բովանդակ տիեզերքը խտացած լինել այս փոքր տարածության մեջ, որի սահմաններն այնքան նեղ են, որ անզգայաբար ուզում ես ձեռքերդ երկարելով դրանք հետ հրել: Եվ թվում է, թե այս մոխրագույն պարիսպներից դուրս այլ աշխարհ չկա, թե մնացած աշխարհը սոսկ երազ է կամ երազի վերհուշ:

Դա մոգական, զարմանահրաշ մի երևույթ էր: Ես նայեցի Մոդ Բրուստերին և հասկացա, որ նա էլ նույնալիսի տպավորության տակ է: Ապա նայեցի Գայլ Լարսենին, բայց նրա դեմքը որևէ հուզմունք չէր արտահայտում: Նրան զբաղեցնում էր լոկ անմիջական, փաստացի ներկան: Նա դեռ կանգնած էր դեկանիվի առաջ, և ես զգացի, որ չափում է ժամանակի ընթացքը, հաշվում «Ուրվականի» յուրաքանչյուր թեքման կամ ուստումի տևողությունը:

— Գնացեք առաջամաս և շրջադարձի պատրաստության տեսեք,— ասաց նա ինձ ցածր ձայնով:— Ամենից առաջ զբաղվել հայեկի առագաստով, յուրաքանչյուր թոկասարքի մոտ մարդ կանգնեցնեք, թող ոչ ոք ծպտուն չհանի, ճախարակները պտտել առանց ճոճոցի: Ոչ մի ձայն, հասկացե՛ք, ոչ մի աղմուկ:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, շրջադարձի հրամանը հաղորդվեց բերնեբերան, և «Ուրվականը» գրեթե առանց աղմուկի շրջվեց: Իսկ այն չնչին աղմուկը, որ լսվեց (մի քանի առագաստի չփչփոց ու մեկ-երկու ճախարակի ճոռոց) զարմանալիորեն չարաշուք հնչեց մեզ պարուրող թանձր մառախուղի մեջ:

Հազիվ էինք մի քիչ առաջացել, երբ մառախուղն սկսեց արագորեն նոսրանալ: Կարճ ժամանակ անց մենք նորից արևի լույսով ողողվեցինք և լայնատարած ծովը մինչև հորիզոն փովեց մեր աչքերի առաջ: Բայց ծովը կարծես դատարկ էր հիմա: Ջրի մակերեսին այլևս չկար ցատումնալի «Մակեդոնիան», և երկինքը այլևս չէր սևանում նրա ծխով:

Գայլ Լարսենը շուտով գտավ քամու հոսանքը և սկսեց նավարկել մառախուղի եզերքով: Նրա հնարքը ակնհայտ էր: Նա մառախուղի մեջ մտել էր շոգենավի հողմընթաց կողմից: Եվ մինչ շոգենավը կուրորեն խոյացել էր մառախուղի մեջ՝ նրան բռնելու հույսով, նա, շուտ գալով,

դուրս էր եկել իր պատսպարանից և այժմ ընթանում էր քամու հակառակ ուղղությամբ: Այս հաջող փախուստից հետո Մահ Լարսենի համար հիմա ավելի դժվար է եղբորը գտնել, քան ասելը՝ հարդի տոպրակում:

Գայլ Լարսենը երկար չնավարկեց: Առաջակայմի և միջնակայմի առագաստները տեղափոխելով և հայեկի առագաստը նորից պարզելով, մենք դարձյալ ուղղվեցինք դեպի մառախուղը: Երբ մառախուղի մեջ մտանք, հանկարծ նշմարեցի ինչ-որ շոգենավի աղոտ ուրվագիծ, որը սահում էր հակառակ ուղղությամբ: Ես մի արագ հայացք գցեցի Գայլ Լարսենի վրա: Թեև մենք խորացել էինք մշուշի մեջ, բայց տեսա, որ նա գլխով արեց: Նա էլ էր նշմարել: Դա «Մակեդոնիան» էր: Մահ Լարսենը գուշակել էր մեր մանկը, բայց մի քիչ ուշացել էր մեզ կանխելու: Կասկած չկա, որ մենք խույս էինք տվել առանց նկատվելու:

— Նա չի կարող այս հետապնդումը շարունակել,— ասաց Գայլ Լարսենը:— Որովհետև պետք է վերադառնա իր մակույկները հավաքելու: Մեկնումեկին ուղարկեցեք այստեղ ղեկանիվի մոտ, միստր Վան-Վեյդեն: Մենք պետք է առաջիկայում այս ուղղությամբ նավարկենք: Լավ կանեք, եթե պահնորդներ նշանակեք, որովհետև այս գիշերը դեսուդեն չենք թափառելու:

— Ես ուրախությամբ հինգ հարյուր դոլլար կտայի,— ավելացրեց նա,— որպեսզի միայն հինգ բոլս «Մակեդոնիայի» վրա գտնվեի և եղբորս հայհոյանքները լսեի:

— Իսկ հիմա, միստր Վան-Վեյդեն,— ասաց նա, երբ իրեն փոխարինեցին ղեկանիվի առաջ,— մենք պետք է հյուրասիրենք այդ նորեկներին: Առատ վիսկի տվեք որսորդներին, մի քանի շիշ էլ ուղարկեցեք նավաստիների համար: Գրագ կգամ, որ մինչև վաղը նրանք բոլորն էլ մեր կողմը կանցնեն և Գայլ Լարսենի համար կորսան նույնքան մեծ քանակությամբ, որքան որսում էին Մահ Լարսենի համար:

— Բայց սրանք էլ չե՞ն փախչի Ուենրայթի նման,— հարցրի ես:

Նա խորամանկորեն ծիծաղեց:

— Չեն կարող փախչել, որովհետև մեր որսորդները չեն թողնի: Ես մերոնց խոստացել եմ մեկ դոլլար՝ նոր որսորդների որսալիք յուրաքանչյուր ծովակատվի մորթու դիմաց: Նրանց այսօրվա ոգևորությունը մեծ մասամբ դրա համար էր: Ոչ, ոչ, մերոնք չեն թողնի, որ փախչեն: Իսկ այժմ առաջամաս գնացեք և զբաղվեցեք բուժման պարտականություններով: Հավանորեն, բազմաթիվ վիրավորներ են սպասում ձեզ այնտեղ:

Գլուխ քսանվեցերորդ

Գայլ Լարսենը իր վրա վերցրեց վիսկի բաժանելու գործը: Ես նավաստիների խցում նոր վիրավորներին էի բուժում, երբ շշերը բերվեցին: Ակումբներում մարդիկ վիսկի խմում են, այն էլ՝ սողայով, բայց ես երբեք չեի տեսել այս մարդկանց խմածի նմանը, սրանք խմում էին ուղղակի շշերից, խմում էին մինչ եզրը լցրած գավաթներով ու զանազան անոթներով, որոնցից յուրաքանչյուրի պարունակությունը բավական է հարբեցնելու: Բայց սրանք խմում

էին ոչ թե մեկ կամ երկու գավաթ, այլ իրար հետևից, մինչ շշերն անվերջ գալիս էին ու դատարկվում:

Բոլորն էլ անխտիր խմում էին, նույնիսկ վիրավորները, նույնիսկ Ուֆտի-Ուֆտին, որն օգնում էր ինձ: Միայն Լուիսն էր զսպում իրեն և շրթները հագիվ թրջում խմիչքով, թեև զվարճությանը մասնակցում էր մյուսներին հավասար աղմկարարությամբ: Դա մի սատուռնական խախճանք էր: Բոլորը բարձրաձայն խոսում էին օրվա կովի մասին, վիճում մանրամասների շուրջ կամ ջերմ գործվանքով եղբայրանում նրանց հետ, որոնց դեմ կովել էին նույն օրը: Հաղթողներն ու հաղթվածները միմյանց ուսի վրայից զկռտում և հանդիսավորապես երգվում էին բարեկամության ու հարգանքի խոստումներով: Նրանք լաց եղան անցած տառապանքների և ապագայում Գայլ Լարսենի երկաթյա բռունցքի տակ կրելիք տառապանքների համար: Բոլորը միահամուռ անիծում էին նրան և սարսափելի առասպելներ պատմում նրա գազանությունների մասին:

Տարօրինակ ու ահավոր մի տեսարան էին պարզում անկողիններով խճոված փոքր խուցը, օրորվող միջնորմները, տատանվող հատակը, աղոտ լույսը, ճոճվող, հրեշային ձևերով երկարող ու կարճացող ստվերները, ծխի, քրտինքի ու յոդոֆորմի հոտերով ծանրացած օդը և բորբոքված, անասնական տեսք ստացած դեմքերը: Ես նկատեցի, որ Ուֆտի-Ուֆտին վիրակապի ծայրը բռնած դիտում է այդ տեսարանը: Նրա թավշային ու փայլուն աչքերը լույսի տակ պսպղում էին եղնիկի աչքերի նման, բայց ես զգում էի, որ հակառակ մեղմ, քնքուշ ու գրեթե կանացի դեմքին, այդ բուրբուն նրա կրծքի տակ դարանակալ սպասում է վայրագ դևը: Ես նույնպես նկատեցի, որ Հարրիսոնի սովորաբար բարի ու պատանեկան դեմքը այժմ ճիվաղային տեսք է ստացել: Կրքից ձգված դեմքով նա նորեկներին բացատրում էր, թե ինչպիսի դժոխք-նավի վրա են գտնվում և ճչալով հիշոցներ էր թափում Գայլ Լարսենի գլխին:

Խոսակցության ամբողջ նյութը Գայլ Լարսենն էր, միայն ու միայն Գայլ Լարսենը՝ մարդկանց ստրկացնող ու տանջող այդ արու Կիրկեն, որի խոզերն էին դարձել սրանք: Այս բազմաչար անասունները սողում էին նրա առաջ և ըմբոստանում միայն հարբած վիճակում կամ՝ գողտուկ: «Արդյոք ե՞ս էլ նրա խոզերից եմ», մտածեցի: «Իսկ Մոդ Բրուստե՞րը: Ո՛չ»: Զայրույթից ու վճռականությունից ատամներս կրճտացրի և անգիտակցաբար այնպես սեղմեցի իմ հիվանդի վերքը, որ նա ուժգին ցնցվեց, և Ուֆտի-Ուֆտին նայեց ինձ հետաքրքրությամբ: Այդ պահին իմ մեջ զգում էի մի անակնկալ ուժ: Նորահայտ սերը ինձ դարձրել էր հսկա: Ես այլևս ոչնչից չէի վախենում: Իմ կամքը պետք է հաղթահարի բոլոր արգելքները հակառակ Գայլ Լարսենին և հակառակ գրքերի մեջ անցկացրած իմ երեսունհինգ տարիներին: Ամեն ինչ լավ կլինի: Ես այնպես կանեմ, որ ամեն ինչ լավ լինի: Եվ իմ մեջ ծնված ուժի գիտակցությունից ոգեշնչված՝ մեջքս դարձրի այդ ոռնացող դժոխքին ու բարձրացա տախտակամած, որտեղ օդը մաքուր, հանդարտ ու հաճելի էր, իսկ մառախուղը մոխրագույն ուրվականի պես ծփում էր խավարում:

Որսորդների խցում, որտեղ կային երկու վիրավոր, ես գտա գինարբուքի նույնպիսի մի տեսարան, լոկ այն բացառությամբ, որ այստեղ Գայլ Լարսենի հասցեին չէին հայիոյում: Հոգեկան խոր թեթևացում զգացի, երբ նորից բարձրացա տախտակամած և ուղղվեցի դեպի նավասենյակ: Ընթրիքը պատրաստ էր, և Գայլ Լարսենն ու Մոդը սպասում էին ինձ:

Մինչդեռ նավի ամբողջ անձնակազմը փութեռանդ հարբում էր, նավապետը մնում էր զգաստ: Նա ոչ մի կաթիլ ոգելից ըմպելիք չիմեց: Տվյալ պայմաններում նա չէր համարձակվում խմել, որովհետև բացի ինձանից ու Լուիսից (Լուիսը այժմ կանգնած էր դեկանիվի մոտ), ուրիշ ոչ ոքի վրա հույս գնել չէր կարող: Մենք նավարկում էինք մշուշի միջով, առանց ազդանշանորդի և առանց լույսերի: Ինձ գարմանք պատճառեց, թե ինչու Գայլ Լարսենը այդքան առատ խմիչք բաժանեց: Բայց նա ակնհայտորեն ճանաչում էր որսորդների ու նավաստիների հոգեբանությունը և գիտեր արյունահեղությամբ սկսված փոխհարաբերությունը սրտագին բարեկամության վերածելու լավագույն միջոցը:

Մահ Լարսենի վրա տարած հաղթանակը, ըստ երևույթին, խորապես ոգևորել էր նրան: Երեկ երեկոյան նա համակված էր թախծոտ մտքերով, և ես մեկ թռպեից մյուսը սպասում էի նրա յուրահատուկ պոռթկումներից մեկնումեկին: Սակայն ոչինչ չպատահեց. նրա տրամադրությունը հիանալի էր: Հավանորեն, բազմաթիվ որսորդներ ու մակույկներ գրավելու հաջողությունը հակազդել էր նրա սովորական մոայլության վրա: Համենայն դեպս, թախիժն անհետացել էր և նրա մեջ գտնվող դեր չէր հայտնվում: Ես այդպես էի մտածում այդ թռպեին, բայց վա՛յ ինձ, ես դեռ շատ քիչ էի ճանաչում նրան և չգիտեի, որ նույն թռպեին նա որոճում էր մի այնպիսի ահավոր պոռթկում, որի նմանը դեռ չէի տեսել:

Ինչպես ասացի, նա հիանալի տրամադրության մեջ էր երևում այն պահին, երբ ես նավասենյակ մտա: Մի քանի շաբաթից ի վեր նա գլխացավի նոպաներ չէր ունեցել, աչքերը վճիտ էին ինչպես կապույտ երկինքը, թուխ դեմքը ճառագայթում էր կատարյալ առողջությամբ և կյանքը առատ ու սքանչելի հոսանքով շրջում և ուռճանում էր նրա երակների մեջ: Ինձ սպասելիս՝ նա աշխույժ գրույց էր սկսել Մոդի հետ: Նրանք խոսում էին գայթակղության մասին, և լսածս մի քանի բառերից կռահեցի, որ նա պնդում էր, թե գայթակղությունը դառնում է գայթակղություն միայն այն ժամանակ, երբ մարդ չի կարողանում նրան դիմադրել և սայթաքում է:

— Որովհետև, ինչպես ես եմ հասկանում,— ասում էր նա,— մարդը գործում է դրդվելով ցանկություններից: Եվ նա ունի բազմաթիվ ցանկություններ: Նա կարող է, օրինակ, ցավից խույս տալու և հաճույքներ վայելելու ցանկությունն ունենալ: Եվ ինչ որ նա անում է, անում է միայն ցանկության մղումով:

— Բայց ենթադրենք, թե նա ցանկանում է երկու իրարամերժ բան, որոնցից յուրաքանչյուրը արգելում է մյուսին,— ընդհատեց Մոդը:

— Ես հենց դրան էի գալիս,— ասաց նա:

— Հենց այդ երկու ցանկությունների միջև է, որ բացահայտվում է մարդու հոգին,— շարունակեց Մոդը:— Եթե նրա հոգին բարի է, ապա նա կնախընտրի և կգործադրի բարի ցանկությունը, իսկ եթե չար է՝ ընդհակառակը: Երկու դեպքում էլ որոշողը հոգին է:

— Դատարկ խոսքե՛ր,— բացականչեց Լարսենը անհամբերությամբ:— Ցանկությունը ինքն է որոշում: Վերցնենք, օրինակ, մի մարդ, որը, ասենք, ցանկանում է հարբել, բայց միաժամանակ չի ցանկանում հարբել: Այսպիսի դեպքում նա ի՞նչ կանի: Նա խամաճիկ է, նա իր ցանկությունների գերին է և հետևաբար հնազանդվում է երկու ցանկություններից ուժեղագույնին, և վե՛րջ: Նրա հոգին ոչ մի գործ չունի այստեղ: Երբ նրան գայթակղեցնում է

հարբելու ցանկությունը, նա անկարող է դրան դիմադրել: Իսկ եթե հաղթահարում է զգաստ մնալու ցանկությունը, նշանակում է՝ այդ ցանկությունն է ավելի ուժեղ: Գայթակղությունը ոչ մի դեր չի կարող խաղալ, եթե...— նա մի պահ մտածեց իր մեջ ծագած միտքը ձևավորելու համար,— եթե զգաստ մնալու գայթակղություն չես ունենում:

— Հա՛հա՛,— ծիծաղեց նա,— ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին, միստր Վան-Վեյդեն:

— Իմ կարծիքն այն է, որ դուք երկուսդ էլ վիճում եք նույնիմաստ բառերի շուրջը,— ասացի ես:— Մարդու հոգին բաղկացած է հենց նրա ցանկություններից կամ, եթե ուզում եք, հոգին բոլոր ցանկությունների հանրագումարն է: Հենց այստեղ է, որ երկուսդ էլ սխալվում եք: Դուք, միստր Լարսեն, շեշտը դնում եք ցանկության վրա, այն անջատելով հոգուց, իսկ միսս Բրուստերը շեշտը դնում է հոգու վրա, այն հակադրելով ցանկություններին, մինչդեռ իրականում հոգին և ցանկությունը նույն բանն են:

— Սակայն,— շարունակեցի ես,— միսս Բրուստերը իրավացի է, երբ պնդում է, թե գայթակղությունը միշտ գայթակղություն է մնում անկախ այն հանգամանքից մարդը ենթարկվում է նրան, թե ոչ: Քամին հրահրում է կրակը, մինչև որ այն սկսում է մոլեգնորեն բոցավառվել: Այդպես է նաև ցանկության կրակը: Նրան հրահրում է ըղձալի առարկան կամ ըղձալի առարկայի նոր ու հրապուրիչ մի նկարագրությունը կամ հասկացությունը: Հենց դրանում է գայթակղությունը: Նա քամու պես հրահրում է ցանկությունը, մինչև որ վերջինս գերիշխող է դառնում: Դա գայթակղություն է: Դա կարող է բավականաչափ չհրահրել և, հետևաբար, գերիշխող չդարձնել ցանկությունը, բայց, այնուամենայնիվ, նա գայթակղություն է, թեկուզ այն չափով, ինչ չափով հրահրում է: Եվ գայթակղությունը, ինչպես դուք ասում եք, կարող է մարդուս հրապուրել և՛ դեպի բարին, և՛ դեպի չարը:

Ես հպարտ էի ինձանով: Իմ խոսքերը վճռական դեր կատարեցին: Նրանք, համենայն դեպս, վերջ դրին վիճաբանությանը: Եվ մենք սեղան նստեցինք:

Բայց այդ օրը Գայլ Լարսենը սովորականից ավելի էր տրամադրված խոսելու: Ես նրան երբեք այդպես զրուցասեր չէի տեսել: Կարծես նրա մեջ կուտակված եռանդը ձգտում էր որևէ կերպ մի ելք գտնել: Նա անմիջապես խոսք բացեց սիրո մասին: Ինչպես միշտ, նա հարցը քննում էր զուտ մատերիալիստական տեսանկյունից, իսկ Մոդը՝ իդեալիստական: Ես գրեթե չմասնակցեցի վիճաբանությանը և բավականացա միայն երբեմն-երբեմն մի հակիրճ կշռադատություն կամ մի փոքր ճշտում անելով:

Գայլ Լարսենը փայլում էր պերճախոսությամբ, բայց նույնքան փայլում էր և Մոդը: Ես միառժամանակ կորցրեցի նրանց խոսակցության թելը, որովհետև երբ Մոդը խոսում էր, ես նրա դեմքն էի զննում: Այդ դեմքը, որն առհասարակ շատ քիչ էր գունավորվում, այժմ կարմրել ու ոգևորվել էր: Նրա մտածողությունը ազատ ասպարեզ էր գտել, և նա հաճույք էր ստանում վիճելուց, իսկ Գայլ Լարսենը խորապես ըմբռնված էր զրույցը: Վիճաբանության ընթացքում, որին չէի հետևում (ես հափշտակությամբ դիտում էի Մոդի շագանակագույն գանգուրներից մեկը), Գայլ Լարսենը, չգիտեմ ինչ առիթով, հետևյալ քաղվածքը բերեց Տինտագելի մեջ Իգուլիի արտասանած խոսքերից.

Ես փառաբանված եմ անգամ այստեղի կանանց մեջ,
Որովհետև ավելի եմ մեղանշել, քան որևէ մահկանացու կին,
Եվ գեղեցիկ ու կատարյալ է իմ մեղքը...

Ինչպես ժամանակին նա հռոմեացություն էր գտնում Օմար Խայամի քառյակների մեջ,
այնպես էլ այժմ խանդավառություն և հաղթանակ էր տեսնում Սուիսբերնի տողերում: Եվ նա
ճիշտ էր կարդում ու լավ արտասանում: Հազիվ էր նա արտասանել հիշյալ տողերը, երբ
Լուիսը նավասանդուղքի բացվածքից գլուխն իջեցնելով՝ փսփսաց.

— Խնդրում եմ ցածր խոսել: Մառախուղը բարձրացել է և հենց այս րոպեիս շոգենավը
դիմացից կտրում է մեր ճանապարհը: Ես տեսա նրա ձախ կողմի լույսը:

Գայլ Լարսենը շտապ բարձրացավ տախտակամած: Երբ մենք հասանք տախտակամած, նա
արդեն ծածկել էր որսորդների խուցը տանող անցքի կափարիչը, որտեղից բարձրանում էր
հարբածների գոռգոռոցը, և ուղղվում էր դեպի խելամաս նավաստիների խցի անցքն էլ
փակելու համար: Մառախուղը չէր փարատվել, այլ վեր բարձրանալով ծածկել էր աստղերը, և
այդպիսով գիշերը ավելի էր խավարել: Ճիշտ մեր դիմաց ես տեսա երկու լույս՝ մեկը կարմիր,
մյուսը սպիտակ, և միևնույն ժամանակ լսեցի շոգենավի մեքենաների համաչափ զարկերը:
Դա, անկասկած, «Մակեդոնիան» էր:

Գայլ Լարսենը բարձրացավ հարթակի վրա, և մենք երեքս լուռ դիտեցինք դիմացից արագ
անցնող լույսերը:

— Բարեբախտություն է, որ նա լուսարձակներ չունի,— ասաց Գայլ Լարսենը:

— Ի՞նչ կպատահեր, եթե հանկարծ ուժով բղավելի,— հարցրի ես փսփսալով:

— Դա կլիներ ամեն ինչի վերջը,— պատասխանեց նա:— Բայց դուք մտածե՞լ եք, թե այդ
դեպքում ինչ կարող է պատահել ձեզ:

Նախքան հարցնելս, թե ինչ կարող է պատահել ինձ, նա գործիլայի թաթի պես ուժեղ ձեռքով
կոկորդս բռնեց և մկանների աննկատելի թրթռացումով ինձ լրիվ պատկերացում տվեց, թե
ինչպիսի հեշտությամբ կարող է վիզս ոլորելով կոտրել: Դրանից հետո ինձ թողեց և մենք
միասին շարունակեցինք «Մակեդոնիայի» լույսերը դիտել:

— Իսկ ինչ կպատահեր, եթե ես բղավելի,— հարցրեց Մոդը:

— Ես ձեզ այնքան եմ հավանում, որ ձեզ վնաս չէի հասցնի,— ասաց նա մեղմ ձայնով, որը
հնչեց այնքան ջերմ ու գորովագին, որ ես խանդի ցավից ցնցվեցի:— Բայց, այնուամենայնիվ,
այդպիսի բան չանեք, այլապես միստր Վան-Վեյդենի վիզը իսկույն կկոտրեն:

— Այդ դեպքում ես նրան թույլ եմ տալիս բղավել,— ասացի հանդգնությամբ:

— Ես չեմ կարծում, որ միսս Բրուստերը կուզենար զոհաբերել ամերիկյան գրականության
Երկրորդ Ուսուցչապետին,— հեզմեց նա:

Մենք այլևս չխոսեցինք: Ընդ որում, արդեն այնքան էինք վարժվել միմյանց, որ այդ լռությունը
մեզ չճնշեց: Իսկ երբ կարմիր ու սպիտակ լույսերն անհետացան, նորից խուց վերադարձանք՝
ընդհատված ընթրիքը շարունակելու:

Նրանք երկուսով նորից քաղվածքներ բերեցին և այդ առթիվ Մողը արտասանեց Դաուսոնի «Impenitentia ultima»-ն: Ես դիտում էի ոչ թե նրան, այլ Գայլ Լարսենին: Ինձ կախարդել էր Մողի վրա նրա հառած հայացքը: Նա բոլորովին վերացել էր և ես նկատեցի, որ նրա շրթներն անգիտակցաբար շարժվելով՝ կրկնում էին Մողի արտասանած յուրաքանչյուր բառը: Նա Մողին ընդհատեց, երբ վերջինս արտասանում էր հետևյալ տողերը.

...Թող նրա աչքերն ինձ լուսավորեն
Արևը մայր մտնելուց հետո,
Եվ նրա ձայնում երգող ջութակների հնչյունները
Իմ լսելիք վերջին հնչյունները լինեն...

— Ձեր ձայնի մեջ էլ ջութակներ են երգում,— ասաց նա անսպասելիորեն և նրա աչքերը շողացին ոսկեճաճանչ լույսով:

Մողը այնքան լավ զսպեց իրեն, որ քիչ մնաց ճչալի ուրախությունից: Առանց շփոթվելու նա արտասանեց վերջին տունը և այնուհետև խոսակցությունը մեղմորեն փոխադրեց նվազ վտանգավոր ուղու վրա: Եվ այդ ամբողջ ժամանակ ես մնացի կիսաշշմած վիճակում: Խցի միջնորմից լավում էր հարբած որսորդների գոգոռոցը, իսկ իմ դիմաց անվերջ գրուցում էին այն մարդը, որն ինձ ահ էր ազդում, և այն կինը, որին սիրում էի: Ոչ ոք սեղանը չհավաքեց: Մագրիջին փոխարինող նավաստին ակնհայտորեն միացել էր իր ընկերներին:

Եթե Գայլ Լարսենը երբևէ կարող էր հասնել հափշտակության բարձրակետին, ապա նա դրան հասել էր հենց այդ գրույցի ընթացքում: Սեփական խոհերից կտրվելով ես ժամանակ առ ժամանակ հետևում էի նրան և հետևում ապշությամբ: Այդ պահերին նա մտքիս վրա իշխում էր իր արտասովոր բանականությամբ ու կրքի թափով: Նա ջատագովում էր ըմբոստացումը: Խոսակցության ընթացքում անխուսափելիորեն հիշատակվեց նաև Միլտոնի «Լուցիֆերը»: Գայլ Լարսենը այնպիսի խորամտությամբ վերլուծեց ու բնութագրեց Լուցիֆերի կերպարը, որ իմ աչքում լիովին բացահայտվեց նրա խափանված տաղանդի բովանդակ ուժը: Նրա դատողություններն ինձ հիշեցնում էին Թենին, թեև ես վստահ էի, որ նա երբեք չի կարդացել այդ փայլուն, բայց վտանգավոր մտածողի ստեղծագործությունը:

— Լուցիֆերը պայքարում էր մի կորած դատի համար և չէր վախենում աստծու շանթերից,— ասում էր Գայլ Լարսենը:— Դժոխք նետվելուց հետո նա գարձյալ չպարտվեց: Նա իր հետ տարավ հրեշտակների մոտ մեկ երրորդը, անմիջապես սկսեց նախամարդուն գրգել աստծու դեմ և իր դժոխքի համար շահեց հետագա մարդկության յուրաքանչյուր սերնդի խոշորագույն մի մասը: Իսկ ինչո՞ւ էր նա վտարվել երկնքից: Մի՞թե նրա համար, որ աստծուց նվազ քաջ էր կամ նվազ հպարտ, նվազ փառասեր: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Աստված ավելի ուժեղ էր, որովհետև, ինչպես ասված է՝ «նրա շանթերը նրան դարձրել էին ավելի հզոր»: Բայց Լուցիֆերը ազատասեր հոգի էր: Նրա համար ծառայել նշանակում էր շնչահեղձ լինել: Եվ նա նախամեծար համարեց ազատ լինել ու տանջվել, քան հանգստավետ գերության մեջ երջանիկ ապրել: Նա չուզեց ծառայել աստծուն: Նա ոչ ոքի չուզեց ծառայել: Նա անուղք կիսանդրի չէր: Նա կանգնած էր իր սեփական ոտքերի վրա: Նա ինքնուրույն անհատականություն էր:

— Նա ամենաառաջին անարխիստն էր,— ծիծաղեց Մողը և վեր կենալով պատրաստվեց քաշվել իր խուցը:

— Եթե անարխիստ էր, ուրեմն լա՛վ է անարխիստ լինելը,— գոչեց Գայլ Լարսենը և նույնպես վեր կացավ: Երբ մոտեցանք Մոդի խցին, նա կանգնեց մանկամարդ կնոջ դիմաց և արտասանեց հետևյալ տողերը,

... Գոնե այստեղ

Մենք ազատ կլինենք: Այստեղ Ամենակարողը

Մեզ չի նախանձի և չի վտարի մեզ:

Այստեղ մենք կարող ենք անկաշկանդ իշխել: Ինձ համար՝

Իշխելը, անգա՛մ դժոխքում, արժանավայել փառասիրություն է.

Ավելի լավ է դժոխքում իշխել, քան ծառայել երկնքում:

Դա հզոր հոգու մարտահրավերն էր: Երբ նա լռեց, նրա ձայնը դեռ արձագանքում էր խցում: Նա կանգնած էր այնտեղ, նավի հետ տատանվելով, բրոնզագույն դեմքը՝ փայլուն, գլուխը բարձր ու տիրական: Իսկ ոսկեշող աչքերը անհունորեն առնական ու անհունորեն մեղմ հայացքով նայում էին դռան մոտ կանգնած Մոդի աչքերին:

Մանկամարդ կնոջ աչքերը դարձյալ լցվեցին մի անանուն սարսափով և նա գրեթե շնջալով ասաց.

— Դուք Լուցիֆերն եք...

Դուռը փակվեց, և նա անհետացավ: Գայլ Լարսենը մի պահ զարմացած նայեց նրա հետևից, ապա, իրեն իշխելով, դարձավ դեպի ինձ:

— Ես գնում եմ Լուիսին փոխարինելու դեկանիվի առաջ,— ասաց նա կտրուկ,— կեսգիշերին ձեզ կկանչեմ, որ ինձ փոխարինեք: Մինչ այդ գնացեք և մի քիչ քնեցեք:

Նա հետը վերցրեց մի գույգ թաթման, դրեց գդակը և բարձրացավ տախտակամած: Իսկ ես, նրա խորհրդին հետևելով, գնացի պառկելու: Բայց չգիտեմ ինչու, ինչ-որ գաղտնի թելադրանքից դրդվելով՝ պառկեցի բոլորովին հագնված: Միառժամանակ ունկնդրեցի որսորդների խցից եկող գոռոռոռոցին, ապա հոգեզմայլությամբ խորհրդածեցի իմ անակնկալ սիրո մասին: Բայց «Ուրվականի» վրա ես արդեն սկսել էի խոր ու կանոնավոր քնել: Շուտով երգերն ու ճիչերը աստիճանաբար անլսելի դարձան, աչքերս փակվեցին և գիտակցությունս թաղվեց մեռելային թմրության մեջ:

Չգիտեմ, թե ի՞նչն արթնացրեց ինձ, բայց հանկարծ անդրադարձա, որ կանգնած եմ սենյակի մեջտեղը, արթուն վիճակում: Հոգիս կարծես սարսռում էր վտանգի անձայն նախազգուշացումից, այնպես, ինչպես պիտի սարսռար, եթե այդ նախազգուշացումը հաղորդվեր գալարափողի ուժգին կանչով: Իսկույն բացեցի դուռը: Նավասենյակում ճրագի լույսը թուլացել էր: Ես տեսա Մոդին, իմ Մոդին, որը գալարվում ու մաքառում էր Գայլ Լարսենի գրկում: Ես տեսա, թե ինչպես երերում ու ալեկոծվում էր նրա անգոր մարմինը, երբ նա երեսը Գայլ Լարսենի կրծքին սեղմած, ջանում էր խուսափել նրանից: Այս ամենը տեսա մի ակնթարթում և նույն ակնթարթում նետվեցի իմ ոսոխի վրա:

Ես նրա դեմքին բռունցքի մի հարված հասցրի այն պահին, երբ գլուխը բարձրացնում էր վեր, բայց դա մի թույլ հարված էր: Նա արձակեց մի վայրի, անասնական մոնչուն և ձեռքով ինձ ետ մղեց: Դաստակի այդ պարզ հպումն այնքան ուժեղ էր, որ բաբանի նման ինձ նետեց հեռու: Ես

խփվեցի Մագրիջի նախկին խցի դռանը, որի տախտակները ընդհարման ուժգնությունից ճեղքվելով ջախջախվեցին, և մարմինս խրվեց մեջը: Ջանացի ոտքի կանգնել և դժվարությամբ դուրս եկա ջարդված դռան ճեղքից: Այդ պահին ոչ մի ցավ չգգացի, որովհետև համակվել էի ամենաբուռն կատաղությամբ: Որքան հիշում եմ, ես էլ մի բարձր աղաղակ արձակեցի և դաշույնս պատյանից հանած՝ առաջ խոյացա:

Բայց պատահել էր ինչ-որ անհասկանալի բան: Այժմ նրանք միմյանցից հեռու կանգնած երերում էին: Լարսենին մոտենալով դաշույնը բարձրացրի, բայց ձեռքս օդում անշարժացավ և հարված չիջեցրի: Տեսարանի տարօրինակությունը շփոթեցրել էր ինձ: Մողը մեկ ձեռքով հենվել էր միջնորմին և ջանում էր մարմնի հավասարակշռությունը պահել, մինչդեռ Գայլ Լարսենը ամբողջ մարմնով տատանվում էր: Չախ ձեռքով ճակատը սեղմած՝ նա աչքերը ծածկել էր, իսկ աջով շշմածի պես ավիփում էր օդը: Երբ վերջապես ձեռքը հասավ միջնորմին, այդ հպումից կարծես նա ֆիզիկական թեթևացում զգաց, ասես իր մարմնի համար հենարան էր գտել և գիտակցել էր իր դիրքն ու շրջապատը:

Այդ Ժամանակ ես նորից արյան ծարավ զգացի: Մտքովս շլացուցիչ պայծառությամբ անցան իմ կրած նվաստացումներն ու անիրավությունները, նրա ձեռքից իմ և ուրիշների քաշածը և լիովին ըմբռնեցի, թե որքան հրեշային է այս մարդու գոյությունը: Ես կուրորեն, խելագարի պես նետվեցի նրա վրա և դաշույնը խրեցի ուսի մեջ: Բայց նույն վայրկյանին հասկացա, որ բացված վերքը թեթև էր, թանի որ պողպատի ծայրը թիակին հասնելով՝ սահեց: Դաշույնը նորից բարձրացրի՝ այս անգամ մարմնի ավելի կենսական մի մասին հարվածելու համար:

Բայց Մողը, որ տեսել էր իմ առաջին հարվածը, գոչեց.

— Մի՛ արեք, խնդրում եմ:

Ես մի վայրկյան ձեռքս իջեցրի, բայց միայն մի վայրկյան: Նորից դաշույնը բարձրացավ, և Գայլ Լարսենը, անկասկած, կմեռներ, եթե Մողը չնետվեր մեր միջև: Նա ինձ փաթաթվեց և մազի գանգուրները այտու շոյեցին: Արյունս սկսեց արտասովոր կերպով եռալ, սակայն դրա հետ մեկտեղ կատաղությունս էլ սաստկացավ: Մողը արհաբար նայեց աչքերիս մեջ:

— Ի՛մ սիրույն,— թախանձեց նա:

— Ձեր սիրո համար է, որ ուզում եմ սպանել սրան,— գոչեցի ես, ջանալով ձեռքս ազատել առանց նրան ցավ պատճառելու:

— Հանդարտվեցեք,— մրմնջաց նա, մատները հուշիկ հպելով շրթներիս:

Այդ մատների հպումն այնքան քաղցր էր, որ հակառակ կատաղությանս կհամբուրեի դրանք, եթե համարձակվեի:

— Խնդրում եմ, խնդրո՛ւմ եմ,— թախանձեց նա, և այդ խոսքերն ինձ զինաթափեցին: Նույն պահին ես գիտակցեցի, որ այդ խոսքերը միշտ պիտի զինաթափեն ինձ:

Ես ետ քաշվեցի և, դաշույնը պատյանի մեջ զետեղելով, նայեցի Գայլ Լարսենին: Նա ձախ ձեռքով դեռ սեղմում էր ճակատը և աչքերը ծածկել էր ափի տակ: Գլուխը վար էր հակվել, մարմինը կարծես լիկել էր, ահագին ուսերը կծկվել ու թեքվել էին առաջ:

— Վան-Վեյդե՛ն,— կանչեց նա խոպոտ ձայնով, որի մեջ վախի ինչ-որ հնչյուն թրթռաց,— Վան-Վեյդե՛ն, որտե՞ղ եք դուք:

Ես նայեցի Մոդին: Նա լռությամբ գլխով արեց:

— Այստեղ եմ,— պատասխանեցի մոտենալով:— Ի՞նչ է պատահել:

— Ինձ օգնեցե՞ք նստելու,— ասաց նա նույն խոպոտ վախեցած ձայնով:

— Հիվանդ եմ, շա՛տ հիվանդ, Հեմփ,— ասաց նա, երբ ընկավ աթոռի վրա և թողեց ձախ ձեռքս, որով պահում էի նրան:

Ապա գլուխը սեղանին հենելով՝ թաղեց ձեռքերի մեջ: Երբեմն-երբեմն նա գլուխը ետ ու առաջ էր շարժում ցավից: Մի անգամ, երբ գլուխը բարձրացրեց, ես տեսա, որ ճակատը, մինչև մազերի արմատները, ողողված է քրտինքի խոշոր կաթիլներով:

— Հիվանդ եմ, շա՛տ հիվանդ,— կրկնում էր նա նորից ու նորից:

— Բայց ի՞նչ է պատահել,— հարցրի, ձեռքս դնելով նրա ուսին:— Ինչո՞վ կարող եմ օգնել:

Նա ջղային շարժումով ձեռքս հեռացրեց ուսից, և ես երկար ժամանակ լուռ կանգնեցի նրա կողքին: Մոդը ահաբեկված՝ նայում էր մեզ: Մենք չէինք կարողանում ըմբռնել, թե ինչ է պատահել նրան:

— Հեմփ,— ասաց նա վերջապես,— պետք է գնամ անկողին մտնեմ: Օգնեցե՞ք ինձ: Շուտով կանցնի: Երևի գլխացավի այդ անիծյալ նոպաներից մեկն է: Ես դրանցից վախենում էի: Ես ինչ-որ նախագագուում ունեմ, որ... Էհ, ես էլ չգիտեմ, թե ինչ եմ խոսում: Ինձ օգնեցե՞ք, որ անկողնուս հասնեմ:

Երբ նրան պառկեցրի իր անկողնում, նա նորից դեմքը թաղեց ձեռքերի մեջ և աչքերը ծածկեց, իսկ երբ պատրաստվում էի խցից դուրս գալ, լսեցի, որ մրմնջում է.

— Հիվանդ եմ, շա՛տ հիվանդ:

Երբ դուրս եկա, Մոդը հարցական նայեց ինձ: Ես գլուխս օրորելով ասացի.

— Նրան ինչ-որ բան է պատահել, բայց չեմ կարողանում հասկանալ թե ինչ: Նա անօգնական տեսք ունի, և ես կարծում եմ, որ առաջին անգամ իր կյանքում նա վախենում է: Այդ պատահել է նախքան դաշույնի հարվածը, որը միայն թեթևակի է վիրավորել: Դուք ինքներդ պետք է տեսած լինեք, թե ինչ պատահեց:

Նա գլուխը թափահարեց:

— Ես ոչինչ չտեսա: Ինձ համար էլ դա նույնքան հանելուկ է: Նա ինձ հանկարծակի բաց թողեց և սկսեց երեքավով ընկրկել: Բայց ի՞նչ պետք է անենք: Ի՞նչ պետք է անեմ ես:

— Այստեղ սպասեցե՞ք, խնդրեմ, մինչև որ վերադառնամ,— պատասխանեցի ես:

Ես բարձրացա տախտակամած: Լուխը դեկանիվի առջևն էր:

— Դու կարող ես գնալ ու քնել,— ասացի նրան, անցնելով դեկանիվի առաջ:

Նա շտապ հնազանդվեց, և ես մեն-մենակ մնացի «Ուրվականի» տախտակամածի վրա: Այնուհետև կարելի եղածին չափ քիչ աղմուկ հանելով՝ հավաքեցի միջնակայմի մեծ առագաստն ու առաջամասի առագաստները, ապա վերադարձա Մոդի մոտ: Մասու շրթներիս դնելով՝ նրան հանձնարարեցի լուռ մնալ և մտա Գայլ Լարսենի խուցը: Նա դեռ պառկած էր նույն դիրքով, և գլուխը բարձի վրա շարունակ օրորվում էր մեկ կողմից մյուսը:

— Կարո՞ղ եմ որևէ բանով օգնել ձեզ,— հարցրեցի ես:

Սկզբում նա չպատասխանեց, բայց երբ հարցումը կրկնեցի, ասաց.

— Ոչ, ոչ, հիմա ավելի լավ եմ: Ինձ մենակ թողեք մինչև առավոտ:

Բայց դուրս գնալու ժամանակ ես նկատեցի, որ նրա գլուխը սկսել էր նորից օրորվել: Մոդը համբերությամբ սպասում էր ինձ, և ես ուրախության սարսուռով նկատեցի, որ նա գեղեցիկ գլուխը խրոխտ էր պահում թագուհու պես, իսկ աչքերը հանդարտ ու ինքնավստահ էին, ինչպես նրա հոգին:

— Կարո՞ղ եք ձեր կյանքն ինձ վստահել և հետո կատարել մոտ վեց հարյուր մղոն հեռավորությամբ մի ճանապարհորդություն,— հարցրի ես:

— Ուզում եք ասել...— սկսեց նա, և ես հասկացա, որ նա ճիշտ էր գուշակել իմ մտադրությունը:

— Այո, հենց այդ եմ ուզում ասել: Մեզ ուրիշ ոչինչ չի մնում անել, բացի մակույկով փախչելուց:

— Ավելի շուտ՝ ինձ ոչինչ չի մնում անել,— պատասխանեց նա:— Դուք այստեղ նույնքան ապահով եք, որքան և առաջ:

— Ո՛չ, մեզ միայն մնում է մակույկով փախչել,— ասացի ես հաստատական:— Խնդրում եմ՝ կարելի եղածին չափ տաք հագնվեք, առանց ժամանակ կորցնելու, և ծրարի մեջ փաթաթեք այն ամենը, ինչ ուզում եք հետներդ վերցնել:

— Միայն թե շտապեցեք,— ավելացրի ես, երբ նա ուղղվում էր դեպի խուցը:

Պահեստարանը գտնվում էր նավասենյակի ճիշտ ներքևում: Անցքի կափարիչը բացելով և հետո մի մոմ վերցնելով ցած իջա ու սկսեցի աչքի անցկացնել այնտեղ եղած սննդամթերքը: Ընտրեցի անհրաժեշտ քանակությամբ պահածոները, և երբ ամեն ինչ պատրաստ էր, Մոդը վերևից երկարեց ձեռքերը և ես սկսեցի սննդամթերքը նրան փոխանցել:

Մենք լուռ աշխատեցինք: Պահեստարանից վերցրի նաև վերմակներ, թաթմաններ, մոմլաթե զգեստներ, գդակներ և այլ անհրաժեշտ իրեր: Հեշտ արկածախնդրություն չէր մեր ձեռնարկելիքը. փոքր մակույկով պետք է նավարկեինք ալեկոծ ու փոթորկոտ ծովի վրա և միևնույն ժամանակ մեզ պաշտպանեինք ցրտից ու անձրևից:

Մենք փութեռանդությամբ մեր ավարը փոխադրեցինք տախտակամած և զետեղեցինք մակույկներից մեկի մոտ: Աշխատում էինք այնպիսի եռանդով, որ Մոդը, ֆիզիկապես ուժեղ ու չարքաշ չլինելով, հոգնեց և բոլորովին ուժասպառ նստեց հարթակի աստիճանների վրա: Բայց դա նրան չօգնեց կազուրվելու, և նա մեջքի վրա պառկեց հարթակի կարծր հատակին ու ձեռքերը տարածեց, որպեսզի մարմինը հանգիստ դիրք ստանա: Ես հիշեցի, որ քույրս էլ հաճախ այդպես էր հանգստանում և ենթադրեցի, որ Մոդը շուտով իր ուժերը կհավաքի: Հետո

մտածեցի, որ անհրաժեշտ է ձեռքի տակ գնք ունենալ և, նորից մտնելով Գայլ Լարսենի խուցը, վերցրի նրա մանրագնդակի հրացանն ու ակոսավոր փողով հրացանը: Ես նրան ինչ-որ բան ասացի, բայց նա չպատասխանեց, թեև քնած չէր և շարունակում էր գլուխը մեկ կողմից մյուսն օրորել:

— Մնաս բարո՛ւ, Լուցիֆեր,— ասացի ես լիովին և անաղմուկ փակեցի դուռը:

Իմ հաջորդ գործը եղավ՝ փամփուշտներ ճարել: Դա հեշտ էր, բայց դրա համար հարկավոր էր իջնել որսորդների խուցը տանող սանդուղքով: Խցից մի քանի ոտնաչափ հեռու գետեղված էին փամփուշտի արկղերը, որ որսորդներն իրենց հետ փոխադրում էին մակույկները, երբ գնում էին որս անելու: Դրանցից երկուսը վերցրի:

Այժմ հարկավոր էր մակույկը ծով իջեցնել: Իսկ դա այնքան էլ հեշտ չէր մեկ մարդու համար: Պարանները քանդելուց հետո հաջորդաբար քաշեցի ցուկին ու խելին ամրացված թոկերը, մինչև որ մակույկը անջատվեց իր հենարանից և բարձրացավ օդ: Այնուհետև այդ թոկերը հաջորդաբար թուլացրի, և մակույկը մի երկու ոտնաչափ իջնելով՝ հանգիստ կախվեց երկկայմանավի կողքին: Մակույկի մեջ դրել էի առազաստներ, թիակներ և թիակալներ: Խմելու ջուրը չափազանց անհրաժեշտ էր, հետևաբար, ես վերցրի նաև մյուս մակույկների ջրի տակառները: Նավի վրա ինը մակույկ կար, այնպես որ մեր ջրի պաշարը ավելի քան բավական էր և կարող էր նաև ծառայել որպես բալլաստ: Այս ամեն ինչից այնքան շատ էի վերցրել, որ նույնիսկ վախենում էի, թե մակույկը ծանրաբեռնված է պետք եղածից ավելի:

Մոդը փոխանցում էր սննդամթերքը, իսկ ես դրանք տեղավորում էի մակույկի մեջ: Հանկարծ նավաստիների խցից մի նավաստի բարձրացավ տախտակամած: Նա մի քիչ կանգնեց նավի հողմընթաց եզրում (մենք գտնվում էինք հակառակ կողմում), հետո դանդաղ քայլերով հասավ տախտակամածի մեջտեղը և այնտեղ էլ մի պահ կանգնեց, մեջքը դարձրած դեպի մեզ: Սիրտս սկսեց ուժգին բաբախել և ես իսկույն կծկվեցի մակույկի խորքում: Նույն վայրկյանին Մոդը փովեց տախտակամածի վրա և անշարժ մնաց վերնածածկի ստվերում: Բայց նավաստին շուտ չեկավ: Նա ձեռքերը բարձրացրեց օդում, աղմուկով հորանջեց, ապա առաջամաս վերադառնալով՝ իջավ նավաստիների խուցը:

Մի քանի րոպեում ամեն ինչ բարձեցի, և մակույկն իջեցրինք ծով: Երբ Մոդին օգնում էի նավեզրի բազրիքից անցնել, նրա մարմնի հպումն զգալով՝ քիչ մնաց կամքիցս անկախ գոչելի. «Սիրում եմ ձեզ, սիրո՞ւմ եմ ձեզ»: «Իրոք որ Հեմֆրի Վան-Վելդենը վերջապես սիրահարվել է», մտածեցի ես, երբ նրան գրկելով, իջեցնում էի մակույկի մեջ: Մեկ ձեռքով կառչել էի բազրիքից, իսկ մյուսով պահում էի նրան: Այդ պահին որքան հպարտ էի իմ սխրագործությամբ: Ես իմ մեջ զգում էի մի նոր ուժ, որից զուրկ էի մի քանի ամիս առաջ, երբ հրաժեշտ էի տալիս Չարլի Ֆարասեթին՝ չարաբախտ «Մարտինեզ» նավով Սան-Ֆրանցիսկո գնալու համար: Հենց որ մակույկը բարձրացավ ուռչող ալիքի գագաթը և Մոդի ոտքերը դիպան մակույկի նստարանին, ես թողեցի նրա ձեռքը և, թոկերն արձակելով, նետվեցի մակույկի մեջ: Թեև կյանքումս երբեք չէի թիավարել, բայց, այնուամենայնիվ մեծ ճիգ թափելով ի վերջո կարողացա մակույկը հեռացնել «Ուրվականից»: Հետո փորձեցի առազաստը պարզել: Շատ անգամ տեսել էի, թե նավուղիղներն ու որսորդները ինչպես են առազաստ պարզում, բայց սա իմ առաջին փորձն էր: Այն, ինչ նրանք անում էին երկու րոպեում, ես քսան րոպեում արեցի: Հետո առազաստի պարանները ձգեցի և դեկի թիակը վրելով մակույկն ուղղեցի դեպի քամին:

— Ահա այնտեղ է Ճապոնիան, ուղիղ մեր դիմացը,— ասացի ես:

— Հեմֆրի Վան-Վեյդեն,— ասաց Մոդը,— դուք խիզախ մարդ եք:

— Ոչ,— պատասխանեցի ես,— դուք եք խիզախը:

Մենք բնագոյաբար ետ նայեցինք՝ վերջին անգամ «Ուրվականը» դիտելու: Նրա ցածր կառույցը կոհակների վրա օրորվելով ընթանում էր քամու ուղղությամբ, առագաստները աղոտ կերպով երևում էին մթության մեջ, իսկ կապկաված ղեկանիվը ճոնչում էր ամեն անգամ, երբ ղեկը խփվում էր ալիքի: Վերջապես երկկայմանավն ու իր աղմուկը բոլորովին չքացան և մենք մեն-մենակ մնացինք խավար ծովի վրա:

Գլուխ քսանյոթերորդ

Առավոտը ծագեց՝ ցուրտ ու խոնավ: Թարմ զեփյուռը քշում էր մակույկը, և կողմնացույցը ցույց էր տալիս, որ նավարկում ենք ուղիղ դեպի Ճապոնիա: Թեև թանձր թաթմաններ էի հագել, բայց ղեկը շարունակ պահելուց՝ սառած մատներս ընդարմացել էին: Ոտքերս նույնպես ցավում էին ցրտից և անհամբեր սպասում էի, որ արեգակը փայլի:

Ճիշտ իմ դիմաց, նավակի հատուկին քնած էր Մոդը: Ես ուրախ էի, որ գոնե նա չէր մրսում, քանի որ փաթաթված էր հաստ վերմակներով: Վերևի վերմակը ծածկում ու ցրտից պաշտպանում էր նրա դեմքը, և ես ոչինչ չէի տեսնում, բացի նրա մարմնի աղոտ ուրվագծերից: Երևում էին միայն բաց-շագանակագույն մազերը, որոնք վերմակի տակից սահելով՝ պճնվել էին առավոտյան ցողի աղամանոյյա կաթիլներով:

Ես երկար դիտում էի այդ մագափունջը, որը Մոդի բովանդակ էությունից միակ տեսանելի մասն էր այդ պահին, և դիտում էի այնպես, ինչպես մարդ միայն կարող է դիտել աշխարհի ամենաթանկագին գանձը: Իմ սևեռուն հայացքի տակ նա վերջապես շարժվեց և վերմակի ծայրը դեմքից հեռացնելով՝ ժպտաց ինձ: Նրա կոպերը ծանրացել էին քնից:

— Բարի լույս, միստր Վան-Վեյդեն,— ասաց նա:— Ցամաքը դեռ չի՞ երևում:

— Ոչ,— պատասխանեցի ես,— բայց մենք նրան մոտենում ենք ժամը վեց մղոն արագությամբ:

Նա, հուսալիս, դեմքը ծամածռեց:

— Բայց դա նշանակում է հարյուր քառասունչորս մղոն մեկ օրվա ընթացքում,— ավելացրի ես քաջալերական տոնով:

Նրա դեմքը պայծառացավ:

— Իսկ դեռ որքա՞ն պետք է նավարկենք:

— Ահա այնտեղ Սիբիրն է,— ասացի ես, արևմուտքը ցույց տալով:— Իսկ Ճապոնիան գտնվում է հարավ-արևմտյան կողմը, այստեղից մոտ վեց հարյուր մղոն հեռու: Եթե քամին այսպես շարունակվի, հինգ օրում կհասնենք:

— Փոթորկի հանդիպելու դեպքում նավակը չի կարող դիմանալ, չէ՞:

Մոդի հայացքին հատուկ է՝ մարդու աչքերի մեջ ուղիղ նայելով պահանջել ճշմարտությունը, և հենց այդպիսի հայացքով նա ինձ նայեց հարցը տալու ժամանակ:

— Միայն շատ ուժեղ փոթորկի դեպքում,— ասացի ես, մի պահ վարանելուց հետո:

— Իսկ եթե շատ ուժեղ փոթորիկ պայթի՞:

Ես գլուխս օրորեցի:

— Շատ հնարավոր է, որ որսորդական մի որևէ երկկայմանավ մեզ փրկության հասնի: Նրանք բազմաթիվ են օվկիանոսի այս մասում:

— Բայց տեսնում եմ, որ բոլորովին սառել էք,— գոչեց նա հանկարծ:— Դուք դողում էք, այո, մի ուրանաք, դողում էք, այնինչ ես շոգում եմ վերմակների տակ:

— Իսկ ի՞նչ օգուտ կլինի, եթե դուք էլ նստեք ու ինձ պես դողաք,— ծիծաղեցի ես:

— Օգուտ կլինի այն դեպքում, երբ կսովորեմ թիավարել: Եվ անպայման պետք է սովորեմ:

Մակույկի հատակին նստելով՝ Մոդն սկսեց իր պարզ արդուզարդը: Նա գլուխը թափահարեց ու մազերը վայր թափվեցին, մութ ամպի նման ծածկելով դեմքը և ուսերը: Ես տենչում էի համբուրել ու շոյել այդ շագանակագույն, խոնավ ու սիրելի ծամերը և նրանց մեջ դեմքս թաղել... Հափշտակությամբ դիտեցի նրան, մինչև որ ի վերջո մակույկն իր ընթացքից դուրս եկավ և առագաստի շառաչն ինձ նախազգուշացրեց, որ մոռանում եմ պարտականությունս: Միշտ իդեալիստ ու ռոմանտիկ լինելով, հակառակ իմ մտքի վերլուծական կերտվածքին, մինչև հիմա դեռ չէի ըմբռնել սիրո ֆիզիկական առանձնահատկությունները: Ես միշտ պատկերացրել էի, որ տղամարդու և կնոջ միջև, ստեղծված սերը հոգեկան վսեմագույն մի երևույթ է, հոգևոր մի կապ, որը սերտորեն միացնում է նրանց: Մարմնական կապը համարյա տեղ չունեի իմ պատկերացրած սիրաշխարհում: Հիմա նոր սկսեցի հասկանալ, որ հոգին այլափոխվում ու իրեն արտահայտում է մարմնի միջոցով, և սիրած էակի վարսերի տեսքը, բույրը կամ հպումը հանդիսանում են նրա հոգու շնչառությունը, ձայնն ու բույրը, ճիշտ այնպես, ինչպես նրա աչքերի մեջ փայլող լույսն ու շրթներից հոսող մտքերը: Վերջ ի վերջո, գուտ հոգին անճանաչելի է, և մենք նրա էությունը կարող ենք միայն գուշակել: Հոգին չի կարող իրեն արտահայտել հենց իրենով: Եծովան մարդակերպ դարձավ, որպեսզի կարողանա իր մտքերը հրեաներին հայտնել նրանց հասկանալի խոսքերով: Հրեաները նրան մտահղացան իրենց սեփական պատկերով և կամ որպես ամպ, որպես հրեղեն սյուն, մի խոսքով որպես մարմնեղեն շոշափելի ու իրենց համար ըմբռնելի մի երևույթ:

Եվ այսպես, դիտելով Մոդի բաց-շագանակագույն ծամերը, ես սիրո մասին շատ ավելի բան սովորեցի, քան ինձ սովորեցրել էին բոլոր բանաստեղծներն ու երգիչները իրենց ամբողջ սոնետներով ու երգերով: Հանկարծ գլխի շնորհալի ցնցումով նա ետ նետեց մազերը, և դեմքը նորից երևաց, ժպիտով ողողուն:

— Ինչո՞ւ կանայք իրենց մազերը արձակ չեն պահում,— հարցրի ես,— այդպես շատ ավելի գեղեցիկ է:

— Որովհետև խառնվում ու սարսափելի խճճվում են,— ծիծաղեց նա:— Օ՛հ, իմ թանկագին հերակալներից մեկը կորել է...

Դարձյալ մոռացա մակույկը և շուտով առագաստի օդը դատարկվեց: Ես գերագույն հաճույքով հետևում էի Մոդի յուրաքանչյուր շարժումին, երբ նա վերմակների մեջ փնտրում էր հերակալը: Եվ անակնկալ զարմանքով նկատեցի, որ նա գերագանցորեն կանացի է: Նրա շարժումների թովիչ կանացիությունը ուղղակի հրճվանք պատճառեց տեսողությանս: Մինչև հիմա նրան այնքան վեր էի դասել մարդկային մակարդակից, որ անտեսել էի նրա մեջ եղող մարդկայինն ու մարմնեղենը և այդպիսով նրան հեռացրել էի ինձանից: Ես նրան պատկերացրել էի որպես մի անմատչելի դիցուհի: Իսկ այժմ բերկրությամբ ողջունում էի այն բոլոր հատկանիշները՝ գլխի շնորհագեղ ցնցումը, որով նա ետ գցեց մազերը, հերակալի փնտռուտը և այլն, որոնք նրան բնորոշում են որպես սովորական կին: Այո, նա կին է, ինձ պես և ինձ հավասար մահկանացու, հետևաբար, մեր միջև հնարավոր է տղամարդու և կնոջ հաճելի մտերմությունը, անշուշտ, միշտ պահպանելով, ես համոզված եմ դրանում, նրա նկատմամբ իմ տաճած երկյուղածությունն ու ակնածանքը:

Հերակալը գտնելով՝ նա փոքրիկ ու պաշտելի մի ճիչ արձակեց, և դրանից հետո ես ավելի ուշադրությամբ զբաղվեցի մակույկի դեկով: Բազմաթիվ փորձերից հետո ինձ վերջապես հաջողվեց դեկակալ թիակը կապել ու այնպես ամրացնել, որ մակույկը քամուց քշվելով ինքն իրեն ընթանա առանց իմ միջամտության: Երբեմն մակույկը մոտենում էր քամուն, երբեմն հեռանում, բայց բոլոր դեպքերում վերագտնում էր ճիշտ ընթացքը և գոհացուցիչ կերպով առաջ շարժվում:

— Իսկ այժմ պետք է նախաճաշել,— ասացի ես,— բայց նախ պետք է ավելի տաք հագնվեք:

Ես դուրս հանեցի մի հաստ նոր շապիկ, որը վերցրել էի պահեստի պահարանից: Դրա գործվածքը այնքան խիտ էր, որ անձրևի տակ մնալու դեպքում, նույնիսկ ժամեր հետո ջուրը չէր կարող թափանցել: Երբ շապիկը հագավ, փոքրիկ գդակի փոխարեն նրան տվի ձկնորսի խոշոր մի գլխարկ, որպեսզի դրա տակ մազերն ամփոփի, իսկ երիզը վար իջեցնելու դեպքում կարողանա ծածկել նաև ականջներն ու վիզը: Գդակը փոխելուց հետո նա ավելի հմայիչ դարձավ: Նրա դեմքը այնպիսին էր, որ ամեն ինչ սագում ու գեղեցկացնում էր նրան: Ոչինչ չէր կարող նսեմացնել այդ հիանալի, ձվաձև դեմքի կանոնավոր գծերը, նուրբ հոնքերը և մանավանդ՝ շագանակագույն, խոշոր, վճիտ ու հոյակապորեն հանդարտ աչքերը:

Երբ անցնում էինք ուռչող ալիքի վրայով, քամու հանկարծական և ուժեղ մի հորձանքից մակույկը թեքվեց կողի վրա, նրա եզրը հավասարվեց ալիքի մակերեսին և մեկ դուլի չափ ջուր լցվեց ներս: Այդ պահին ես բացում էի լեզվի պահածոն, բայց իսկույն նետվելով պարանի վրա՝ ճիշտ ժամանակին թուլացրի այն: Առագաստը թաքտաց, չփչփաց ու մակույկն առաջ շարժվեց: Մի քանի րոպե հետո ինձ հաջողվեց մակույկը նորից դնել ընթացքի մեջ: Այնուհետև վերսկսեցի նախաճաշի պատրաստությունը:

— Թեև նավագնացության մասին շատ բան չգիտեմ, բայց ինձ թվում է, թե նա վատ չի գործում,— ասաց Մոդը գլխի գնահատող շարժումով ցույց տալով դեկը, որը ես կապել ու ամրացրել էի:

— Այս հնարանքը լավ է գործում միայն այն ժամանակ, երբ նավարկում ենք քամու ուղղությամբ,— բացատրեցի ես:— Բայց երբ քամին ուժեղանա խելի, կողի կամ առաջակողի կողմից, այդ դեպքում ստիպված կլինեմ ձեռքով վարել դեկի թիակը:

— Ճիշտն ասած, ձեր գործածած տեխնիկական բառերն ինձ համար մի քիչ անհասկանալի են, բայց ձեր վերջին խոսքերից դատելով՝ հեռանկարն այնքան էլ վարդագույն չի երևում։ Անշուշտ, դուք չեք կարող գիշեր-ցերեկ անդադար վարել դեկը։ Դրա համար էլ ես կուզենայի նախաճաշից հետո սկսել իմ առաջին դասը։ Դրանից հետո դուք կպառկեք ու կքնեք։ Մենք պետք է հերթափոխություն անենք, ինչպես անում են նավերի վրա։

— Դժվարանում եմ պատկերացնել, թե ինչպես կկարողանամ ձեզ դաս տալ, երբ ինքս նոր եմ սովորում,— ասացի ես։— Երբ դուք ձեր կյանքն ինձ վստահեցիք, բնավ չմտածեցիք, որ մակույկ վարելու գործում ոչ մի փորձ չունեմ։ Սա առաջին անգամն է, որ ես գտնվում եմ մակույկի մեջ։

— Այդ դեպքում միասին կսովորենք, սրբ։ Եվ քանի որ դուք մեկ գիշեր առաջ եք սկսել, ապա կարող եք ինձ բացատրել ձեր սովորածը։ Իսկ այժմ սկսենք նախաճաշը։ Օ՛հ, այս օդն ինչքա՛ն ախորժակ է բացում։

— Սուրճ չի լինելու,— ասացի ես վշտահար դեմքով և նրան մեկնեցի կարագ քսած պաքսիմատներ ու մի շերտ պահածո լեզու։— Չենք ունենալու նաև ո՛չ թեյ, ո՛չ ապուր, ո՛չ էլ տաք կերակուր, մինչև մի կերպ հասնենք որևէ ցամաք։

Մեր պարզ նախաճաշից հետո, որն ավարտվեց մի-մի բաժակ սառը ջրով, ես սկսեցի Մոդին բացատրել դեկը վարելու ձևը։ Սովորեցնելիս ես էլ բավական բան սովորեցի, թեև ինչ-որ գիտելիքներ ձեռք բերել էի, երբ վարում էի «Ուրվականի» դեկանիվը և կամ դիտում էի նավուղիղներին, երբ նրանք վարում էին մակույկները։ Մոդն ընդունակ աշակերտ էր և շուտով սովորեց նավարկության ընթացքը պահպանել, մակույկը հողմընթաց կողմը տանել և, անհրաժեշտության դեպքում, առազաստի թուրը թուլացնել։

Բավական հոգնելուց հետո նա դեկը հանձնեց ինձ և, քանդելով վերմակները, որ ես ծալել էի, սկսեց դրանք նորից փռել հատակին։ Ամեն ինչ հանգստավետ կերպով սարքելուց հետո ասաց.

— Այժմ, սրբ, դեպի՝ անկողին։ Դուք պետք է քնեք մինչև երկրորդ նախաճաշի ժամը... մինչև ճաշի ժամը,— ուղղեց նա, հիշելով «Ուրվականի» վրա ընդունված կարգ ու կանոնը։

Ի՞նչ կարող էի անել։ Նա պնդեց և ասաց. «Խնդրում եմ, խնդրո՛ւմ եմ»։ Ղեկը նրան հանձնեցի ու հնազանդվեցի։ Մոդի ձեռքով սարքված վերմակի տակ սահելիս ես զգացի մի անսահման հաճույք։ Նրա էության մասը կազմող ինքնամփոփ հանդարտությունը կարծես հաղորդվել էր վերմակներին, և ես զգացի մեղմ, անդորրավետ մի թմրություն։ Ձկնորսի գլխարկով շրջանակված ձվաձև դեմքն ու շագանակագույն աչքերը օրորվեցին մեկ մոխրագույն ամպի ֆոնի վրա, մեկ մոխրագույն ծովի ֆոնի վրա, մինչև որ ի վերջո նիքեցի։

Երբ արթնացա, նայեցի ժամացույցիս։ Ժամը մեկն էր։ Յոթ ժամ քնել էի... Եվ Մոդը յոթ ժամ անդադար վարել էր դեկը... Նրա ձեռքից դեկն առնելու համար հարկ եղավ նախ փայտացած մատները բացել։ Նրա փոքր ուժը լիովին սպառվել էր, և նա չէր կարողանում նույնիսկ տեղից շարժվել։ Ստիպված եղա առազաստը թողնել, որպեսզի նրան օգնեմ։ Երբ նա մտավ վերմակի տակ, ես շփելով տաքացրի նրա ձեռքերն ու թևերը։

— Օ՛հ, այնքա՛ն հոգնած եմ,— ասաց նա և մի արագ շունչ քաշելով՝ թեթև հառաչեց ու խոնջած գլուխը խոնարհեց:

Բայց մի վայրկյան չանցած, նորից գլուխը բարձրացրեց:

— Ինձ չհանդիմանե՛ք,— մարտահրավեր նետեց նա կատակով,— չհամարձակվե՛ք հանդիմանել . . .

— Կարծեմ դեմքս բարկացածի արտահայտություն չունի,— պատասխանեցի լրջությամբ:— Ես ձեզ հավատացնում եմ, որ բնավ բարկացած չեմ:

— Ոչ,— ասաց նա ու մի պահ մտածելուց հետո ավելացրեց,— բայց ձեր դեմքի վրա կշտամբանքի արտահայտություն կա:

— Նշանակում է՝ ազնիվ դեմք է, որովհետև արտահայտում է այն, ինչ զգում է: Դուք արդար չեղաք ոչ դեպի ձեզ, ոչ էլ դեպի ինձ: Սրանից հետո ինչպե՞ս վստահեմ ձեզ:

Նա, զղջացողի տեսք ընդունելով, ինձ նայեց:

— Սրանից հետո խելոք կմնամ,— ասաց նա չարաճճի երեխայի նման:— Խոստանում եմ...

— Խոստանո՞ւմ եք հնազանդվել այնպես, ինչպես նավաստին հնազանդվում է իր նավապետին:

— Այո: Ես ընդունում եմ, որ հիմարություն էր արածս:

— Այս առթիվ մի ուրիշ բան էլ խոստացեք:

— Հոժարությամբ:

— Խոստացեք այդքան հաճախ չասել «խնդրում եմ, խնդրո՞ւմ եմ», որովհետև այդպիսով դուք կարող եք իսկույն փչացնել նավապետի իմ հեղինակությունը:

Նա զվարճացած ծիծաղեց: Ըստ երևույթին, ինքն էլ էր նկատել այդ կրկնակի «խնդրում եմ»-ի ուժեղ ներգործությունը:

— Ճիշտ է, որ շատ հաճելի խոսք է... — սկսեցի ես:

— Բայց չպետք է չափից ավելի օգտագործել,— վերջացրեց նա:

Նա մեղմ ժպտաց և նորից գլուխը խոնարհեց: Ես դեկը թողեցի, որպեսզի վերմակով փաթաթեմ ոտքերն ու դեմքը ծածկեմ: Ավա՛ղ, նա բնավ ուժեղ չէր: Ես տարակուսանքով ու անվստահությամբ նայեցի դեպի հարավ-արևմուտք և մտածեցի վեց հարյուր մղոն նավարկության դժվարությունների մասին . . . Բայց երանի թե միայն դժվարություններ լինեին... Օվկիանոսի այս մասում որևէ ժամանակ կարող է փոթորիկ պայթել ու մեզ կործանել: Այնուամենայնիվ, ես չէի վախենում: Ճիշտ է, վստահություն չունեի մեր ապագայի վրա, բայց հակառակ իմ տարակուսանքին վախ չէի զգում: «Ամեն ինչ լավ կլինի», կրկնում էի ինձուինձս:

Կեսօրից հետո քամին սաստկացավ և ծովն ալեկոծվեց: Երբ մակույկի տատանումներն ուժեղացան, իմ գործը բավական դժվարացավ: Բայց սննդամթերքի և ինը տակառ ջրի ծանրության շնորհիվ մակույկը կարողացավ դիմանալ ալիքների և քամու դեմ, և ես պարպած առագաստով նավարկեցի այնքան ժամանակ, որքան հնարավոր էր: Այնուհետև վար իջեցրի ցոկակայմը, նրա շուրջը պինդ փաթաթեցի առագաստի վերնի մասը և այդպիսով առագաստը եռանկյուն ձև ստացավ: Մենք շարունակեցինք ճանապարհը:

Երեկոյան դեմ, հորիզոնի կողմում նշմարեցի ինչ-որ շոգենավի ծուխ: Դա կարող էր ռուսական հաճանավ լինել կամ ավելի շուտ՝ «Մակեդոնիան», որը, հավանորեն, շարունակում էր փնտրել «Ուրվականը»:

Արևն ամբողջ օրը չերևաց, և օդը չափազանց ցուրտ էր: Գիշերվա դեմ ամպերը մթնեցին ու քամին ուժեղացավ: Մենք ընթրեցինք թաթմաններ հագած: Ես դեկն էի վարում և միայն քամու վայրկենական ընդհատումների ժամանակ կարողանում մի պատառ դնել բերանս:

Երբ մուրը կոխեց, քամին ու ալիքները այնքան ուժեղացան, որ ստիպված եղա առագաստը ամբողջովին հավաքել ու «ծփացող խարիսխ» պատրաստել: Այդ հնարանքի մասին հաճախ լսել էի որսորդների խոսակցություններից և գիտեի, որ այնքան էլ դժվար չէ դրա պատրաստությունը: Առագաստը փաթաթելով ու պինդ կապելով կայմաթևի, ցոկակայմի և երկու ավելորդ թիակի շուրջը, ես այն գցեցի ծովը: Յռուկին կապված այդ խարիսխը լողում էր ջրի տակ, և քանի որ այդպիսով պատսպարված էր քամուց, ավելի պակաս էր քշվում հոսանքից, քան ինքը՝ մակույկը: Հետևապես, նա մակույկի քիթը միշտ պահում էր քամու և ալիքների դեմ: Այդպիսի դիրքում մակույկը գերծ էր մնում ալիքների հեղեղումից:

— Իսկ հիմա՞... — հարցրեց Մոդը զվարթությամբ, երբ գործս ավարտելով, նորից թաթմանները հագա:

— Հիմա մենք այլևս դեպի Ճապոնիա չենք գնում,— պատասխանեցի ես:— Ծովի հոսանքը մեզ քշում է դեպի հարավ-արևելք, ժամը առնվազն երկու մղոն արագությամբ:

— Այդ նշանակում է՝ մինչև առավոտ քսանչորս մղոն,— հաշվեց նա,— եթե, իհարկե, քամին շարունակի ամբողջ գիշերը ուժեղ փչել:

— Այո, իսկ եթե այդպես շարունակի երեք ցերեկ և երեք գիշեր, ապա մենք հարյուր քառասուն մղոն կնահանջենք:

— Բայց այդպես չի շարունակի,— ասաց նա հանդարտ վստահությամբ:— Նա շուտ կգա և Ճապոնիայի ուղղությամբ կքշի մեզ:

— Ծովը ամենամեծ դավաճանն է:

— Իսկ քամի՞ն,— հարցրեց նա:— Ես մի անգամ լսել եմ, երբ դուք պերճախոս կերպով ճառում էիք «քաջ պասսատների» մասին:

— Ափսոս, երանի հետս բերած լինեի Գայլ Լարսենի ժամանակաչափ և անկյունաչափ գործիքները,— ասացի ես մոայլությամբ:— Երբ նավարկում ես մեկ ուղղությամբ, քամին քեզ քշում է մի այլ ուղղությամբ, իսկ ծովի հոսանքը՝ հավանորեն, մի երրորդ ուղղությամբ, ապա դժվար է մտքով հաշվել ու գտնել տարբեր ուղղություններով ներգործող այդ ուժերի ճշգրիտ

արդյունքը: Շատ չանցած, մենք չենք իմանա, թե որտեղ ենք գտնվում և եթե փորձենք հաշվել, կարող ենք սխալվել հինգ հարյուր մղոնի տարբերությամբ:

Հետո ես ներողություն խնդրեցի Մոդից և խոստացա այլևս չհուսալքվել: Ընդառաջելով նրա թախանձանքին, համաձայնեցի, որ նա հերթապահություն անի մինչև կեսգիշեր: Դեռ ժամը ինն էր, բայց նախքան պառկելս նրան փաթաթեցի վերմակով և ուսերին գցեցի մոմլաթե վերարկուն: Ես քնեցի ընդհատ մրափներով, կատուների նման: Մակույկը ուստոստում ու ցնցվում էր, ալիքները խփում էին նրա կողերին և ջուրը անվերջ ցայտում էր մեզ վրա: Այնուամենայնիվ, մտածում էի, թե այնքան էլ սոսկալի գիշեր չէ, նույնիսկ չնչին բան է այն գիշերների համեմատությամբ, որ անց եմ կացրել «Ուրվականի» վրա, հավանորեն, չնչին է նաև այն գիշերների համեմատությամբ, որ պիտի անցկացնենք այս ընկույզի կեղևի մեջ: Մակույկի տախտակների հաստությունը մոտ երեք քառորդ մատնաչափ էր, և այդ բարակ տախտակի շերտն էր մեզ բաժանում ծովի հատակից...

Սակայն, նորից կրկնում եմ, ես վախ չէի զգում: Մահվան այն վախը, որ ինձ պատճառել էր Գայլ Լարսենը (նույնիսկ Թոմաս Մագրիջը), ես այլևս չէի զգում: Մոդ Բրուստերը իմ կյանքի մեջ հայտնվելով՝ կարծես վերափոխել էր ինձ: Վերջ ի վերջո, մտածեցի ես, սիրելի լավ ու ավելի գեղեցիկ է, քան սիրվելը: Մերը այնքան հարստացնում է կյանքը, որ մարդ հոժարությամբ կմեռներ այդպիսի կյանքի համար: Ես այժմ մոռանում եմ իմ կյանքը ի սեր մի ուրիշ կյանքի: Բայց դրա հետ մեկտեղ, ինչքան էլ հակասական թվա այդ, ես բնավ այնքան չեմ ցանկացել ապրել, որքան այս պահին, երբ նվազագույն չափով եմ գնահատում կյանքս: Երբեք այսքան ուժեղ հիմք չեմ ունեցել ապրել ցանկանալու, եզրակացրի ես, և դրանից հետո, մինչև թմրելս՝ աչքերով ջանացի թափանցել խավարի մեջ այն ուղղությամբ, որտեղ կծկվել-նստել էր Մոդը և հետևում էր փրփրադեզ ալիքներին, միշտ պատրաստ ինձ օգնության կանչելու:

Գլուխ քսանութերորդ

Կարիք կա՞ երկար ու մանրամասն նկարագրելու, թե ինչպես օրերով տանջվեցինք փոքր մակույկի մեջ և ակամա դեսուդեն քշվելով՝ ծփացինք օվկիանոսի անծայրածիր մակերեսին: Ուժեղ քամին քսանչորս ժամ փչեց հյուսիս-արևմուտքից, հետո մեղմացավ, բայց գիշերվա դեմ սկսեց փչել հարավ-արևմուտքից, ուղղակի մեր ճակատին: Ես խարիսխը բարձրացրի և առագաստը պարզելով, մակույկն ուղղեցի դեպի քամու հոսանքը, որը մեզ քշեց հարավ-արևելյան ուղղությամբ: Հնարավոր էր նաև նավարկել դեպի հյուսիս-արևմուտք, սակայն հարավային տաք հոդմերն ինձ հրապուրեցին դեպի ավելի տաք ջրերը, և ես որոշեցի այդ ուղղությունն ընտրել:

Բայց երեք ժամ հետո (կեսգիշեր էր, լավ եմ հիշում, և այնքան ստվար, որի նմանը երբեք չէի տեսել ծովի վրա) քամին, որը դեռ փչում էր հարավ-արևմուտքից, հանկարծ սաստկացավ, և ես ստիպված եղա նորից խարիսխ գցել:

Երբ առավոտը ծագեց, աչքերս չափազանց հոգնած էին: Ծովի երեսը փրփուրից սպիտակել էր: Նավացողույքը գրեթե ուղղաձիգ հակված էր դեպի ջրածածկ խարիսխը և վտանգ կար, որ ալիքները ողողեին մակույկը: Առանց այն էլ այնքան փրփուր էր ներս թափվում, որ ստիպված էի անդադար ջուր դատարկել: Վերմակները թրջվել էին: Ամեն ինչ թաց էր, բացի Մոդից, որն

իր մոմլաթե վերարկուի, լայնեզր գլխարկի ու ռետինե երկարաճիտք կոշիկների շնորհիվ չոր էր մնացել, թեև թրջվել էին ձեռքերը, դեմքը և գլխարկի տակից դուրս սահած մաղափունջը: Ժամանակ առ ժամանակ նա ինձ փոխարինում էր և խիզախորեն փոթորկին դիմագրավելով՝ թիթեղյա տուփով ջուր էր դատարկում: Ամեն ինչ հարաբերական է: Իրականում քամին այնքան էլ ուժեղ չէր, բայց մեզ համար, որ դյուրաբեկ նավակի մեջ մահու և կենաց պայքար էինք մղում, դա նշանակում էր մի իսկական մրրիկ:

Մենք, դողահար ու սրտաբեկ, ամբողջ օրը պայքարեցինք մոնչացող ծովի և ոռնացող քամու դեմ: Այդ գիշեր մեզնից ոչ մեկը չկարողացավ քնել: Հաջորդ օրը քամին մինչև երեկո մտրակեց մեր երեսները և փրփրալի ալիքները շառաչելով անցան մակույկի կողքով: Գիշերվա դեմ Մոդն այլևս չդիմացավ և ուժասպառությունից քնեց: Ես նրան ծածկեցի մոմլաթե վերարկուով ու բրեզենտով: Նրա մարմինը համեմատաբար չոր էր, բայց ընդարմացել էր ցրտից: Ես վախենում էի, որ նա գիշերը կմահանա: Առավոտը ծագեց սառը ու մռայլ, ամպամած երկնքով, շաչող հողմով ու մոնչացող ալիքներով:

Այդ երկու օրվա ընթացքում աչքերս չէի փակել: Սառել ու թրջվել էի մինչև ոսկորներիս ծուծը և ինձ ավելի մեռած էի զգում, քան կենդանի: Մարմինս փայտացել էր ցրտից ու լարվածությունից, մկաններս ամենափոքր շարժումից անտանելի ցավում էին, թեև ստիպված էի շարունակ շարժվել: Մակույկն անվերջ քշվում էր հյուսիս-արևելք, Ճապոնիայի հակառակ ուղղությամբ, դեպի Բերինգյան սառը ծովը:

Այնուամենայնիվ, մենք ողջ էինք, մակույկը դեռ դիմանում էր, իսկ քամին փչում չթուլացող սաստկությամբ: Երրորդ օրը, գիշերվա դեմ հողմն ավելի ուժեղացավ: Մի անգամ նավացուկը մխրճվեց բարձրացող ալիքի մեջ և մակույկի մեկ քառորդը ողողվեց ջրով: Ես խելագարի նման սկսեցի ջուրը դատարկել: Ներս թափված ջրի ծանրությունը մակույկին զրկել էր դյուրաշարժությունից և դա մեծապես ավելացնում էր հաջորդ ալիքի տակ թաղվելու հավանականությունը: Եվս մի խոշոր ալիք, և դա կլինեք մեր վերջը: Ջուրը դատարկելուց հետո ես ստիպված եղա Մոդի վրայից վերցնել բրեզենտը, որպեսզի դրանով մակույկի ցուկը ծածկեմ ու պարանով կապեմ: Լավ էր, որ այդպես արեցի, որովհետև բրեզենտը ցուկից սկսած լրիվ ծածկեց մակույկի մեկ երրորդ մասը և հաջորդ մի քանի ժամվա ընթացքում երեք անգամ ետ շալտեց մեզ վրա փլվող կոհակները:

Մոդի դրությունը իսկապես խղճալի էր: Նա կծկվել էր մակույկի հատակին: Շրթները կապտել էին, իսկ դալկահար դեմքը բացահայտորեն պատկերում էր ներքին տվայտանքը: Բայց հակառակ դրան, նա քաջությամբ նայում էր ինձ և շրթները արտասանում էին խրախուսական խոսքեր:

Երևի այդ գիշեր փոթորիկը հասել էր իր գագաթնակետին, թեև ես ոչինչ չէի նկատել, քանի որ նավակի ցուկին քնել էի, բոլորովին ուժասպառ և զգայագուրկ: Չորրորդ առավոտյան քամին մեղմացավ, ծովը հանդարտվեց և արևը շողաց մեր վերև: Օ՛հ, օրհնյալ արև... ինչպիսի՜ հաճույքով մենք նրա ճառագայթների տակ ջերմացրինք մեր ջարդված մարմինները և աստիճանաբար վերակենդանացանք, ինչպես ջերմանում ու վերակենդանանում են միջատներն ու սողունները փոթորկից հետո: Նորից սկսեցինք ժպտալ, զվարթ խոսքեր ասել և մեր դրության վրա լավատեսությամբ նայել: Բայց մեր դրությունը, իրականում, ավելի վատ էր, քան երբևէ: Այժմ մենք Ճապոնիայից ավելի հեռու էինք, քան այն գիշերը, երբ թողեցինք

«Ուրվականը»: Բացի դրանից, ես հնարավորություն չունեի որոշելու, թե երկարության ու լայնության ո՛ր աստիճանների վրա ենք գտնվում: Ժամը երկու մղոնի հաշվով՝ մոտ յոթանասունհինգ ժամ տևող փոթորկի ընթացքում մենք քշվել ենք առնվազն հարյուր հիսուն մղոն դեպի հյուսիս-արևելք: Բայց արդյո՞ք այսպիսի հաշվումը ճիշտ է: Գուցե ժամը երկու մղոնի փոխարեն՝ չորս մղոնի արագությամբ ենք նահանջել: Իսկ այդ դեպքում նշանակում է՝ ևս հարյուր հիսուն մղոն հեռացել ենք նպատակակետից:

Թեև մեր տեղանքը չէի իմանում, բայց շատ հավանական էր, որ լինեինք «Ուրվականից» ոչ շատ հեռու: Մեր շուրջը ծովակատուներ կային և ես մեկ բոպեից մյուսը սպասում էի, որ հանկարծ մի որևէ երկկայմանավ կհայտնվի: Կեսօրից հետո, երբ հյուսիս-արևմտյան քամին նորից սկսեց փչել, իրոք մի երկկայմանավ տեսանք: Բայց նա շուտով անհետացավ հորիզոնից, և մենք դարձյալ մենակ մնացինք ծովի վրա:

Եղան մշուշապատ օրեր, երբ նույնիսկ Մոդը հուսալքվեց և նրա շրթներն այլևս չարտասանեցին զվարթ խոսքեր. եղան նաև խաղաղ օրեր, երբ ծփացինք օվկիանոսի դատարկ տարածության մեջ, ընկճվելով նրա անսահմանությունից և միաժամանակ հիանալով մարդկային չնչին կյանքի հրաշագործությամբ, քանի որ դեռ ապրում էինք և մաքառում ապրելու համար. եղան կարկուտի ու ձյան հոդմակոծ օրեր, երբ ոչ մի կերպ չէինք կարողանում տաքանալ. եղան և անձրևոտ օրեր, երբ դատարկված տակառները լցրինք թաց առագաստից կաթկթող ջրով:

Եվ այդ ամբողջ ժամանակամիջոցում ես գնալով ավելի ու ավելի սիրեցի Մոդին: Նա այնքա՛ն բազմակողմանի էր և այնքան հարուստ բազմատեսակ տրամադրություններով, որ ես նրան կոչում էի «հարափոփոխ»: Ճիշտ է, ավելի փաղաքշական անուններ էլ էի տալիս, բայց միայն մտքումս: Թեև սիրո հայտարարությունը հազար անգամ թրթռաց իմ լեզվի ծայրին, բայց յուրաքանչյուր անգամ ես մտածեցի, որ դեռ դրա ժամանակը չէ: Որովհետև անվայել է որևէ կնոջից սեր խնդրել այն ժամանակ, երբ պաշտպանում ես նրան և ջանում կյանքը փրկել: Կարող եմ պարծանքով ասել, որ այս նուրբ իրադրության պայմաններում ես վարվեցի ամենայն նրբությամբ, կարող եմ նույնպես պարծանքով ասել, որ ո՛չ հայացքով, ո՛չ էլ որևէ շարժումով չհայտնեցի նրա նկատմամբ տաժած զգացմունքս: Մենք լավ բարեկամներ եղանք և մեր բարեկամությունը օրեցօր ավելի ամրացավ:

Մոդի բնավորության մեջ մի բան ինձ զարմացրեց. նրա երկչոտ ու վախկոտ չլինելը: Ահարկու ծովը, դյուրաբեկ նավակը, փոթորիկները, տվայտանքները, մեր տարօրինակ առանձնությունը՝ այս ամենը, որոնք կարող էին վախեցնել նույնիսկ չարքաշ և ուժեղ մի կնոջ, կարծես ոչ մի ներգործություն չէին ունեցել նրա վրա, չնայած նա ճանաչել էր կյանքի միայն ապահով, արհեստականորեն հեշտացված կողմը: Ես նրան պատկերացնում էի որպես լույս, ցող, մշուշի ծվեն, որպես նյութականացած հոգի, որն օժտված է կանացի բոլոր փափկություններով ու քնքշություններով: Այնուամենայնիվ, ես սխալվում եմ: Իրականում Մոդը երկչոտ ու վախկոտ է, բայց զինված է քաջությամբ: Նրան վիճակվել է ունենալ մարմին ու մարմնի բոլոր թուլությունները, և այդ պատճառով էլ նա ենթակա է ֆիզիկական տանջանքների: Բայց ամենից առաջ նա գերազանցապես հոգի է, կյանքի եթե բացած էություն, և որպես այդպիսին միշտ հանդարտ է իր հանդարտ աչքերի նման, միշտ համոզված, որ տիեզերքի մշտափոփոխ կարգ ու կանոնի մեջ գոյություն ունեն հավերժական օրենքներ:

Դարձյալ սկսվեցին փոթորկալի օրերը, և օվկիանոսը գիշեր-ցերեկ մեզ սպառնաց իր մոնչացող, փրփրակուտակ ալիքներով ու հողմը շաչելով մտրակեց մեր մակույկի կողերը: Մենք, քշվելով, ավելի ու ավելի էինք հեռանում գեպի հյուսիս-արևելք: Եվ ահա մի անգամ, երբ փոթորիկը հասել էր իր կատաղության բարձրակետին, ես խոնջալի հայացքով նայեցի քամու հակընթաց կողմը: Այնտեղ ոչինչ չէի փնտրում, այլ պարզապես ալիքների դեմ մաքառելուց հոգնած՝ կարծես լռելյայն աղաչում էի բնության զայրացած տարերքին, որ հանդարտվեն, խնայեն մեզ: Բայց այն, ինչ հանկարծ տեսա հեռվում, պարզապես անհավատալի էր: Բազմաթիվ օրերի շարունակական անքնությունն ու տազնապները, անկասկած, մթագնել էին ուղեղս: Ինձ ստուգելու համար նայեցի Մոդին: Նրա պաշտելի թաց այտերը, հողմից ծփացող մազերն ու շագանակագույն անվախ աչքերն ինձ համոզեցին, որ տեսողությունս խանգարված չէ: Ես նորից նայեցի քամու հակընթաց ուղղությամբ և դարձյալ տեսա վեր ցցված հրվանդանը՝ սև, լերկ ու բարձրաբերձ: Մոլեգնած ալիքները, նրա ստորոտին խփվելով, փշրվում ու շատրվանի պես ցայտում էին մինչև նրա ճակատը, իսկ մոայլ ու անմատչելի ափը, որը երկարում էր դեպի հարավ-արևելք, եզերապատված էր ալեբախության ահարկու, փրփրալի գոտիով:

— Մո՛դ,— գոչեցի ես,— Մո՛դ:

Նա գլուխը շուռ տվեց և նույնպես տեսավ ցամաքը:

— Արդյոք Ալյասկա՞ն է դա,— հարցրեց Մոդը:

— Ավա՛դ, ոչ,— ասացի ես և իսկույն հարցրի:— Լողալ գիտե՞ք:

Նա գլուխը թափահարեց:

— Ես էլ չգիտեմ,— ասացի:— Ուրեմն պետք է ցամաք էլնենք առանց լողալու: Նավակով կմտնենք որևէ երկու ժայռի արանքը և մագլցելով վեր կբարձրանանք: Բայց պետք է արագ և անվախ գործենք:

Ես խոսում էի վստահությամբ, որը, սակայն, ներքուստ չէի զգում: Եվ Մոդը գիտեր այդ, որովհետև նա ինձ նայեց իր յուրահատուկ անշփոթ հայացքով և ասաց.

— Ես դեռ շնորհակալություն չեմ հայտնել այն ամենի համար, որ դուք արեցիք, բայց...

Նա մի պահ վարանեց, կարծես փնտրելով իր երախտագիտությունը հայտնող ամենահարմար բառը:

— Հետո՞,— հարցրի ես կոպտորեն, որովհետև զոհ չէի, որ նա ինձ շնորհակալություն է հայտնում:

— Դե՛, օգնեց եք ինձ,— ժպտաց նա:

— Օգնե՞լ, որ ձեր երախտիքը հայտնեք մեռնելուց առաջ: Ոչ մի դեպքում: Մենք չենք մեռնելու: Մենք կհասնենք այդ կղզին և հանգիստ կպատսպարվենք նախքան մուրթը կոխելը:

Թեև խոսում էի անվեհեր տոնով, բայց իմ խոսքերից ոչ մեկին չէի հավատում: Վախի դրդումով չէր, որ ստում էի: Ես չէի վախենում, թեև համոզված էի, որ մահը սպասում է այդ եռացող ալեբախության մեջ, ժայռերի ստորոտում, որին մոտենում էինք մեծ արագությամբ:

Հնարավոր չէր առագաստը պարզել ու ցամաքից հեռանալ, որովհետև քամին կարող էր իսկույն նավակը շրջել, և ալիքները նույն վայրկյանին կհեղեղեին մեզ: Բացի այդ, առագաստը երկու ավելորդ թիակների հետ ծփում էր ջրի մեջ և մեզ քշում դեպի առաջ:

Ինչպես ասացի, ես չէի վախենում իմ մահից, որը թաքնված էր մի քանի հարյուր յարդ հեռու, բայց ինձ ահաբեկում էր այն միտքը, թե Մոդը պետք է մեռնի: Իմ անիծյալ երևակայությունը նրան պատկերում էր ժայռերին խփված ու բզկտված մարմնով, իսկ այդ պատկերը ուղղակի ահավոր էր: Ես ինձ պարտադրեցի մտածելու, որ ապահով ցամաք կեղնենք: Եվ դրա համար էլ ասացի ոչ թե այն, ինչին հավատում էի, այլ այն, ինչին ուզում էի հավատալ:

Այդպիսի ահավոր մահով մեռնելու հեռանկարն ինձ ներշնչեց մի վայրագ միտք. ես մի պահ մտածեցի Մոդին գրկելով ծովը նետովել: Հետո որոշեցի սպասել և միայն վերջին րոպեին, ալեբախության գոտին մտնելիս, նրան բարձրացնել բազուկներիս մեջ, հայտարարել իմ սերը և նրան գրկած՝ ամենավերջին հուսահատ պայքարը մղելով մեռնել:

Մենք բնագդաբար իրար մոտեցանք նավակի խորքում: Մոդը իր ձեռնոցապատ ձեռքը դրեց իմ ձեռքի վրա: Եվ այդպես, առանց խոսելու սպասեցինք մեր վախճանին: Մակույկը մոտենում էր հրվանդանի արևմտյան ափին, և ես նայում էի դիմացս այն հույսով, որ մի որևէ հոսանք կամ հետադարձ ուժեղ ալիք մեզ ետ կքշի, և մենք կանցնենք ալեբախության գոտու կողքով:

— Մենք այն կշրջանցենք,— ասացի ես այնպիսի վստահությամբ, որից ոչ ես խաբվեցի, ոչ էլ Մոդը:

— Գրո՛ղը տանի, պետք է որ շրջանցենք,— գոչեցի մի քանի րոպե հետո:

Հիշոցը բերանիցս դուրս թռավ հուզմունքի մղումով: Դա առաջին հիշոցն էր, որ երբևէ արտաբերում էի, բացի պատանեկան հասակից բերանի ծամոն արած «անզգամ» բառից, եթե կարելի է այն հիշոց համարել:

— Ներեցեք,— թոթովեցի ես:

— Դուք դրանով ինձ հավատացրիք ձեր համոզվածության մասին,— պատասխանեց Մոդը թեթև ժպիտով:— Հիմա արդեն վստահ եմ, որ պիտի շրջանցենք:

Հրվանդանի հետևում նկատեցի մի հեռավոր հրվանդանի ծայրը, որը հետզհետե երկարեց, և մեր դիմաց սկսեց բացվել ինչ-որ խորունկ ծովախորշի առաջամասը: Միևնույն ժամանակ մեր ականջին հասավ մի հզոր, շարունակական մոնչոց: Դա նման էր հեռավոր որոտի, որ գալիս էր քամու հակընթաց կողմից, և ալեբախության աղմուկը խլացնելով՝ գնում դեպի փոթորիկը: Երբ հրվանդանի ծայրն անցանք, մեր աչքերի առաջ ամբողջովին պարզվեց կիսալուսնի ձևով մի ծովախորշ, որի ավագոտ ափի վրա փշրվում էին ամեհի կոհակները: Ափը ծածկված էր բյուրավոր ծովակատուներով: Այդ նրանք էին, որ բարձրացնում էին հզոր մոնչոցը:

— Ծվարատե՛ղ,— գոչեցի ես:— Հիմա իսկապես փրկված ենք: Այս կողմերում պետք է մարդիկ ու հաճանավեր լինեն՝ որսորդներից ծովակատուներին պաշտպանելու համար: Նույնիսկ հնարավոր է, որ կղզու վրա պահականոց լինի:

Բայց ծովափին խորտակվող ալիքները դիտելուց հետո ես ավելացրի.

— Դրությունը վատ է, բայց ոչ այնքան վատ: Եթե աստվածները իրոք բարյացակամ են, ապա նավակը կքշեն դեպի ավելի ապահով մի ծովախորշ, որտեղ ցամաք կեղևներ առանց նույնիսկ ոտքներս թռչելու:

Եվ աստվածները բարյացակամ գտնվեցին: Երկրորդ հրվանդանը շատ մոտիկից եզերելով, մենք պտույտ գործեցինք, և մեր առջև հայտնվեց մի երրորդ հրվանդան, որը մյուսների հետ նույն գծի վրա լինելով՝ նրանց նման ցուցադրված էր հարավ-արևմտյան քամիներին: Բայց ինչպիսի՜ ծովախորշ բացվեց մեր դիմաց: Մի ծովախորշ, որ խորը թափանցում էր ցամաքի մեջ: Մակընթացությունը մեզ քշելով տարավ մինչև հրվանդանի պատսպարանը, որտեղ ծովը հանգիստ էր, թեև ջրի մակերեսն ուռչում էր խոշոր, բայց հավասար ալիքներով: Ես խարիսխը նավակի վրա բարձրացրի և սկսեցի թիավարել: Ծովափը գնալով ավելի ու ավելի էր կորանում հարավ-արևմտյան ուղղությամբ: Ես այդ ուղղությամբ թիավարեցի, մինչև որ ծովախորշի խորքում հանկարծ բացվեց մի ավելի փոքր ծովախորշ չորս կողմից ցամաքով շրջապատված մի մանրանկար-նավահանգիստ, որտեղ անշարժ ջրի մակերեսը կնճռոտվում էր միայն թեթև վետվետումներով, այն էլ երբ փոթորկի թափառաշրջիկ շունչը փչում էր ափից մոտ հարյուր ոտնաչափ ներսում բարձրացող ապառաժյա պատվարի վրայից:

Այստեղ ոչ մի ծովակատու չկար: Երբ մակույկի ցուկը կպավ ափի ցածր խճաքարերին, ես դուրս նետվեցի և ձեռքս մեկնեցի Մողին: Մի ակնթաթ հետո նա իմ կողքին էր: Բայց հագիվ էի թողել նրա ձեռքը, երբ նա իսկույն կառչեց թևիցս: Նույն վայրկյանին ամբողջ մարմնով տատանվեցի, և ինձ թվաց, որ պիտի գլորվեմ ավազի վրա: Դա մշտատև ճոճումների հանկարծական դադարեցման ապշեցուցիչ հետևանքն էր: Մենք այնքան երկար էինք մնացել օրորվող ծովի վրա, որ այժմ անշարժ գետնի վրա կանգնելն առաջացնում էր տարօրինակ զգացողություն: Մեզ թվում էր, թե ծովափը պետք է տատանվի մեր ոտքերի տակ և ապառաժյա պարիսպները ետ ու առաջ ճոճվեն նավակողերի նման: Եվ երբ սովորության բերմամբ պատրաստվեցինք հակադրվել մեր ակնկալած տատանումներին, նրանց բացակայությունից հանկարծ խախտվեց մեր հավասարակշռությունը:

— Պետք է մի քիչ նստեմ,— ասաց Մողը ջղային ծիծաղով: Նա ձեռքը շարժեց գլխապտույտ ունեցող մարդու նման և նստեց ավազի վրա: Ես մակույկը ցամաք քաշեցի և նորից միացա նրան:

Ահա թե ինչպիսի հանգամանքներում ափ ելանք Ջանքի Կղզում, և երկար ժամանակ ծովին սովորելուց հետո՝ «ցամաքախտ»-ով բռնվեցինք:

Գլուխ քսանիններորդ

— Հիմա՛ր,— գոչեցի ես նեղսրտությամբ:

Ես դատարկել էի մակույկի մեջ եղած իրերը և դրանք փոխադրել ափից բավական բարձր մի վայր, որտեղ մտադիր էի բնակություն հաստատել: Ծովափին ընկած էին ալիքներից քշված փայտի կտորներ, թեև ոչ մեծ քանակությամբ: Երբ աչքիս ընկավ «Ուրվականի» մառանից վերցրած սուրճի ամաններից մեկը, հանկարծ մտքումս ծագեց խարույկ վառելու գաղափարը:

— Ողորմելի հիմար,— շարունակեցի ես:

— Չի կարելի...— ասաց Մոդը մեղմ կշտամբանքով և ապա հարցրեց, թե ինչու եմ ինձ ողորմելի հիմար կոչում:

— Լուցկի չունենք,— հառաչեցի ես:— Նույնիսկ մեկ հատ լուցկի չեմ բերել: Եվ հիմա չենք կարող ո՛չ սուրճ, ո՛չ թեյ, ո՛չ ապուր, ո՛չ էլ որևէ տաք կերակուր ճաշակել:

— Եթե չեմ սխալվում, Ռոբինզոն Կրուզոն փոքրիկ ձողերն իրար շփելով կրակ էր վառում,— ասաց նա դանդաղորեն:

— Ճիշտ է, բայց մյուս կողմից ես կարդացել եմ առնվազն քսան տարբեր նավաբեկյալների հուշեր, որոնք պատմում են, որ իրենց երբեք չի հաջողվել այդ միջոցով կրակ ստանալ,— պատասխանեցի ես:— Օրինակ, ես հիշում եմ ինչ-որ թերթի թղթակից Ուինդերսին, որը եղել էր Այսասկայում և Սիբիրում: Ես նրան մի անգամ հանդիպեցի «Բիբելոտում», և նա պատմեց, թե ինչպես փորձել է կրակ վառել երկու փայտիկներ իրար շփելով: Դա չափազանց զվարճալի պատմություն էր, և նա շատ պատկերավոր նկարագրում էր իր ձախողված փորձը: Հիշում եմ, թե ինչպես աչքերը պսպղացնելով՝ որպես եզրակացություն ասաց, «Պարոննե՛ր, գուցե Խաղաղ օվկիանոսի կղզիների բնակիչները կարող են այդ անել, գուցե մալայացիները կարող են այդ անել, բայց հավատացե՛ք ինձ, այդ բանը սպիտակամորթ մարդու կարողությունից բոլորովին վեր է»:

— Դե լավ,— ասաց Մոդը զվարթությամբ,— մինչև հիմա առանց կրակի յուրա գնացինք, սրանից հետո էլ կարող ենք:

— Բայց դուք պատկերացնո՞ւմ եք, որ սուրճ ունենք,— գոչեցի ես,— այն էլ՝ բարձր որակի սուրճ, ես այդ գիտեմ, որովհետև Լարսենի սեփական պահեստից եմ վերցրել: Եվ տեսե՛ք ինչպիսի հոյակապ ցախ կա ձեռքի տակ...

Պետք է խոստովանեմ, որ շատ էի ուզում սուրճ խմել և կարճ ժամանակ հետո իմացա, որ Մոդն էլ նույն թուլությունն ունի այդ ըմպելիքի նկատմամբ: Բացի դրանից, մենք այնքան երկար ժամանակ տաք ուտելիք կամ խմիչք չէինք ընդունել, որ ներքուստ և արտաքուստ ընդարմացել էինք: Այժմ որևէ տաք բան մեզ ամենամեծ հաճույքը պիտի պատճառեր: Բայց ես այլևս չգանգատվեցի և սկսեցի առագաստից վրան պատրաստել Մոդի համար:

Կարծում էի, թե դա հեշտ գործ է, քանի որ ձեռքի տակ ունեի թիակներ, կայմ, կայմաթև, ցոկակայմ և պարան: Բայց որովհետև փորձ չունեի, յուրաքանչյուր մանրուքի համար ստիպված եղա ահագին ջանք թափել և հաջողված յուրտքանչյուր մանրուքը համարում էի մի նոր հայտնագործություն: Երբ վրանը վերջապես կանգնեց, մութն արդեն կոխել էր: Բայց գիշերը անձրև եկավ, վրանի տակ ջուր լցվեց և Մոդն ստիպված եղավ նավակ վերադառնալ:

Հաջորդ առավոտյան ես վրանի շուրջը փոս փորեցի, բայց մեկ ժամ չանցած ապառաժյա պատվարի վրայից քամու հանկարծական մի հոսանք տապալեց վրանը և շարտեց երեսուն յարդ հեռու, ավազի վրա:

Մոդը ծիծաղեց իմ դեմքի հիասթափված արտահայտությունը տեսնելով, իսկ ես ասացի.

— Հենց որ քամին հանդարտվի, մակույկով ծովափը կհետազոտեմ: Հավանորեն, կղզու վրա կայան ու մարդիկ կան, և երբեմն-երբեմն նավեր են այցելում կայանը: Իմ կարծիքով, որևէ

երկրի կառավարություն պաշտպանում է այստեղի ծովակատուներին: Բայց գնալուց առաջ պետք է ձեզ համար հանգստավետ պայմաններ ստեղծեմ:

— Ես ուզում եմ ձեզ հետ գալ,— եղավ Մոդի միակ պատասխանը:

— Ավելի լավ կլինի, որ այստեղ մնաք: Դուք ծանր չարչարանքներ եք կրել և ուղղակի հրաշք է, որ դեռ կենդանի եք: Բացի դրանից, ձեզ համար շատ հոգնեցուցիչ կլինի նավակ նստել, թիավարել և առագաստ պարզել այս եղանակին: Ձեզ հարկավոր է կազդուրվել, և ես կուզենայի, որ մնայիք ու հանգստանայիք:

Այդ պահին ինձ թվաց, թե Մոդի գեղեցիկ աչքերը խոնավացան: Նա հայացքը խոնարհեց և գլուխը շուտ տվեց:

— Ես կնախընտրեի ձեզ հետ գալ,— ասաց նա ցածր ձայնով, որի մեջ կար աղերսանքի գրեթե աննկատելի մի նրբերանգ:— Ես կարող եմ ձեզ օգտակար լինել ինչ-որ... (այստեղ նրա ձայնը դողդողաց) ինչ-որ չափով: Եթե որևէ բան պատահի ձեզ, մտածեցեք, որ ես բոլորովին մենակ կմնամ:

— Ես շատ զգույշ կլինեմ և կգնամ միայն այնքան հեռու, որ կարողանամ գիշերը չհասած վերադառնալ,— ասացի:— Այո, ես կարծում եմ, որ վերջին հաշվով շատ ավելի լավ է, որ մնաք, մի քիչ քնեք, հանգստանաք և ոչինչ չանեք:

Մոդը նայեց աչքերիս մեջ: Նրա հայացքը վճռական էր, բայց մեղմ:

— Խնդրում եմ, խնդրո՞ւմ եմ,— ասաց նա հուշիկ, օ՛հ, այնքան հուշիկ ձայնով:

Ջանալով անդրդվելի մնալ, ես գլուխս բացասաբար շարժեցի: Նա դեռ նայում էր աչքերիս մեջ և սպասում: Ես փորձեցի իմ մերժումը խոսքերով բանաձևել, բայց մի պահ վարանեցի: Նրա աչքերն իսկույն փայլեցին ուրախությամբ, և ես զգացի, որ արդեն պարտված եմ: Դրանից հետո այլևս հնարավոր չէր «ոչ» ասել:

Քամին հանդարտվեց միայն օրվա երկրորդ կեսին, և մենք որոշեցինք ճամփա ընկնել հաջորդ առավոտյան: Մեր ծովախորշից հնարավոր չէր կղզին թափանցել, որովհետև ապառաժյա ուղղաձիգ պարիսպները ծայրեծայր շրջապատում էին ծովախորշը և երկու ծայրերում վերջանում խոր ջրի մեջ:

Առավոտը ծագեց տխուր, մշուշոտ, բայց հանդարտ: Ես կանուխ վեր կացա և մակույկը կազմ ու պատրաստ վիճակի մեջ դրի:

— Հիմար, ապո՛ւշ, այլանդակ,— գոչեցի ես, երբ մտածեցի, որ ժամանակն է արթնացնելու Մոդին: Բայց այս անգամ ես բղավում էի կեղծ հուսահատությամբ և ուրախությունից գլխաբաց պարում ավազի վրա:

Մոդը գլուխը դուրս հանեց վրանի ծայրից:

— Նորից ի՞նչ է պատահել,— հարցրեց նա քնատ, բայց միաժամանակ հետաքրքրությամբ:

— Սո՛ւրճ,— գոչեցի ես,— ի՞նչ կասեիք, եթե ձեզ մի բաժակ սուրճ հյուրասիրեի, տաք, եռացող սուրճ:

— Տեր աստված,— մրմնջաց նա,— այնպես վախեցրիք ինձ. . . Բայց շատ անգութն եք. . . Ես հազիվ էի հաշտվել սուրճ չխմելու մտքի հետ, և ահա դուք հոգուս հետ եք խաղում՝ զուր տեղն ինձ հրապուրելով:

— Դե լավ, դուք միայն դիտեցեք:

Ժայռերի ճեղքվածքներից հավաքեցի չոր շյուղեր ու ձողիկներ և դրանք տաշելով կաշան տաշեղներ պատրաստեցի: Հետո իմ ծոցատետրից մի թերթ պոկեցի և զինամթերքի արկղից վերցրի մի փամփուշտ: Փամփուշտի խիցը դանակի ծայրով բացելով, միջի վառողը դատարկեցի մի տափակ քարի վրա: Այնուհետև զգուշությամբ դուրս քաշեցի հրապատիճը և զետեղեցի քարի վրա տարածված վառողի կենտրոնում: Ամեն ինչ պատրաստ էր: Մողը շարունակում էր դիտել վրանի ներքևի բացվածքից: Ձախ ձեռքով թուղթը բռնած՝ աջով մի քար վերցրի և ուժեղ հարվածով իջեցրի հրապատիճի վրա: Ծխի սպիտակ մի ծվեն բարձրացավ, բոցը բռնկվեց ու թղթի ծայրն այրվեց:

Մողը ուրախությունից սկսեց ծափ տալ:

— Պրոմեթևս,— գոչեց նա:

Բայց ես այնքան զբաղված էի, որ նրա ցնծությանը մասնակցելու ժամանակ չունեի: Հարկավոր էր գուրգուրանքով սնել նորածին թույլ բոցը, որպեսզի հետո նրանից ուժ և կյանք քաղեիս: Ես նրան տաշեղներով սնեցի, մինչև որ շյուղերն ու փայտի փոքր շերտերը բռնկվեցին, և բոցն սկսեց մեծանալ ու ճարճատել: Սկզբից չէի նախատեսել, որ մեզ պիտի վիճակվեր ընկնել մի ամայի կղզի և այդ իսկ պատճառով հետո ոչ թեյաման էի վերցրել, ոչ խոհանոցային այլ իրեր: Բայց ես օգտագործեցի թիթեղյա այն ամանը, որը մակույկում գործ էինք անում ջուր դատարկելու համար: Հետագայում սննդամթերքի դատարկ տուփերն այնքան բազմացան, որ ձեռքի տակ ունեցանք պատկառելի քանակությամբ ամանեղեն:

Ջուրը եռացրի, բայց սուրճը Մողը եփեց: Ինչքա՛ն համով սուրճ էր դա: Դրանից հետո հորթի պահածո միս տապակեցի, հետը խառնելով փշրած պաքսիմատ և մի քիչ ջուր: Նախաճաշը հոյակապ էր: Մենք խարույկի շուրջը նստեցինք շատ ավելի երկար, քան կարող էին նստել ձեռներեց երկրախույզները, և տաք սև սուրճը դանդաղ խմելով՝ զրուցեցինք մեր կացության մասին:

Ես համոզված էի, որ պահականոց կամ կայան պետք է լինի կղզու ծովախորշերից որևէ մեկում, որովհետև զիտեի, որ Բերինգյան ծովի ծվարավայրերն ընդհանրապես գտնվում էին խիստ հսկողության տակ: Իսկ Մողը, հավանորեն, ինձ հուսախաբության նախապատրաստելու նպատակով, առաջ էր քաշում այն ենթադրությունը, թե մենք գտել ենք մի անհայտ ծվարատեղ: Նրա տրամադրությունը բարձր էր և զվարթությամբ ընդունում էր, որ մեր դրությունը իրոք ծանր է:

— Եթե դուք ճիշտ եք,— ասացի ես,— ապա պետք է պատրաստվենք այստեղ ձմեռելու: Մեր սննդամթերքը շուտով կվերջանա, բայց այստեղ ծովակատուներ կան: Նրանք աշնանը կհեռանան, հետևաբար, պետք է անհապաղ սկսեմ նրանց մսից բավականաչափ պաշար պատրաստել: Բացի դրանից, հարկավոր է հյուղակներ կառուցել և ցախ հավաքել: Պետք է նաև ջանանք ծովակատուների ճարպը հալեցնել՝ լույս ունենալու համար: Մի խոսքով,

ահագին գործ կա կատարելու, եթե իրոք կղզին անմարդաբնակ է, թեև ես համոզված եմ, որ այդպես չէ:

Բայց Մոդի ենթադրությունը ճիշտ դուրս եկավ: Դեպի ցամաք փչող քամու տակ նավարկեցինք ծովափի երկայնքով և հեռադիտակներով գննեցինք ծովախորշերը: Մարդկային բնակության ոչ մի հետք չկար: Բայց պարզվեց, որ մեզնից առաջ ուրիշներ էլ եղել են Ջանքի կղզում: Երկրորդ ծովախորշի ափին հայտնաբերեցինք մի ջախջախված մակույկ: Դա որսորդական մակույկ էր, որովհետև թիանցքները ցանցված էին, ցռուկի աջ եզրին հրացանի հենարան կար և ցռուկի ներքևում սպիտակ, մասամբ ջնջված տառերով գրված էր «Գազել №2»: Մակույկը վաղուց ի վեր այնտեղ էր, որովհետև կիսով չափ լցված էր ավազով, իսկ նրա ճաքճքած տախտակները քամու և արևի տակ երկար մնալուց գունաթափվել էին: Մակույկի խելամասում գտա տասը տրամաչափի մի ժանգոտած հրացան և կեսից կոտրած մի դաշույն, որը ժանգի թանձրությունից անճանաչելի էր դարձել:

— Նրանց հաջողվել է այստեղից գնալ,— ասացի ես ուրախությամբ, բայց հաջորդ ընթացքին սիրտս կարծես սառեց, որովհետև ինձ թվաց, թե ծովափի մի որևէ մասում մենք, անկասկած, կհանդիպենք նրանց սպիտակ ոսկորներին:

Ես չուզեցի ոսկորներ հայտնաբերելով Մոդի տրամադրությունը փչացնել և շտապեցի հեռանալ ծովափից: Շատ չանցած մակույկով եզերեցինք կղզու հյուսիս-արևելյան ծայրը: Հարավային եզերքում ծովափը դյուրամատչելի չէր, այնպես որ ճանապարհը շարունակելով՝ շրջանցեցինք սև հրվանդանը և կեսօրից քիչ հետո ավարտեցինք կղզու շուրջը կատարած մեր պտույտը: Կղզու շրջագիծը, իմ հաշվումով, մոտավորապես քսանհինգ մղոն էր, իսկ տրամագիծը՝ երկուսից մինչև հինգ մղոն: Կարող եմ առանց չափազանցության ասել, որ ծովափերում առնվազն երկու հարյուր հազար ծովակատու կար: Կղզու ամենաբարձր մասը գտնվում էր հարավ-արևմտյան ծայրում. այդտեղի հրվանդանները հետզհետե ցածրանում էին դեպի հյուսիս-արևելյան ափը, որտեղ ցամաքը հազիվ մի քանի ոտնաչափ բարձր էր ծովի մակերեսից: Բացի մեր փոքրիկ ծովախորշից, մնացածների ափերը թեթև գառիթափերով նահանջում էին ծովեզրից և մոտ կես մղոն հեռու հանգում քարքարոտ դաշտերի, որոնք տեղ-տեղ ծածկված էին մամուռով և ճահճային տափաստանների երկար խոտերով: Ահա այդ դաշտերում էին հավաքվում ծովակատուները, և ծեր արուներն իրենց հարեմներն էին պահում, իսկ ջահել արուները իրենք իրենց քարշ էին գալիս:

Ջանքի կղզին արժանի չէ մանրամասն նկարագրության: Ստորին մասերում՝ թաց ու խոնավ, չորս կողմից ենթարկված փոթորկոտ քամիների հարձակման, ծովափերում՝ շառաչող ալիքներ, օդում՝ երկու հարյուր հազար երկկենցաղների միահամուռ ու անդադրում մոնչոց, կարճ ասած՝ բնակվելու համար տխուր ու ողորմելի մի վայր: Մոդը, որն ինձ նախապատրաստել էր հուսախաբության և ամբողջ օրը զվարթ ու կայտառ էր, մեր բնակավայրը հասնելուց հետո բոլորովին ընկճվեց: Նա արիաբար փորձեց իր հոգեվիճակը թաքցնել ինձանից, բայց երբ ես նորից խարույկ էի վառում, վրանից լսեցի հեկեկանքի ձայներ, որ նա ջանում էր խլացնել վերմակի տակ:

Հիմա արդեն իմ հերթն էր զվարթ երևալ, և ես դերս կատարեցի իմ կարողության առավելագույն չափով ու այնքան հաջողությամբ, որ կարողացա ծիծաղը վերադարձնել նրա պաշտելի աչքերին և նույնիսկ երգ բերել նրա շրթներին: Թեև նա շուտ գնաց պառկելու, բայց

նախքան գնալն ինձ համար երգեց: Ես առաջին անգամ էի լսում նրա երգը: Եվ խարույկի մոտ պառկած հափշտակությամբ ունկնդրեցի: Նա արվեստագետ էր ամեն բանի մեջ: Նրա ձայնը, թեև ոչ ուժեղ, զարմանալիորեն քնքուշ էր ու արտահայտիչ:

Ես դեռ նավակում էի քնում և այդ գիշեր երկար ժամանակ արթուն մնացի: Դիտելով աստղերը, որոնք այնքան վաղուց չէին փայլել երկնքում, ես խորհրդածեցի մեր դրության մասին: Վրաս ծանրացող նոր պատասխանատվությունը բոլորովին անսովոր բան էր ինձ համար: Գայլ Լարսենը շատ ճիշտ էր: Ես միշտ կանգնած եմ եղել հորս ոտքերի վրա: Իմ փաստաբաններն ու գործակատարներն են ղեկավարել գործերս, և ես ոչ մի պատասխանատվություն չեմ ունեցել: «Ուրվականի» վրա սովորեցի պատասխանատու լինել իմ նկատմամբ: Իսկ այժմ, առաջին անգամ իմ կյանքում, ես պատասխանատվություն եմ զգում նաև ուրիշի համար: Սա ամենադժվար պատասխանատվությունն էր, որովհետև Մոդը միակ կինն է, միակ «պստիկ» կինը, ինչպես սիրում եմ նրան անվանել մտքումս, որն ինձ համար ամենաթանկագին էակն է բովանդակ աշխարհում:

Գլուխ երեսներորդ

Զարմանալի չէ, որ այդ կղզին Զանքի կղզի անվանեցինք: Մենք երկու շաբաթ տանջվեցինք հյուղակ կառուցելու համար: Մոդը համառեց ինձ օգնել, և ամեն անգամ լացս գալիս էր, երբ տեսնում էի նրա վիրավոր ու արյունոտած ձեռքերը: Սակայն հենց դրա համար էլ հպարտ էի նրանով: Ինչ-որ հերոսական բան կար այդ քնքուշ կնոջ մեջ, որը քաջությամբ տանում էր ահավոր նեղություններ և, չնայած իր թույլ կազմվածքին, կատարում գեղջկուհու ծանր աշխատանք: Նա կրեց քարերի մեծ մասը, որոնցով ես շարում էի հյուղակի պատերը, և չէր ուզում անգամ լսել, երբ թախանձում էի՝ հրաժարվել այդ աշխատանքից: Բայց ի վերջո նա համաձայնեց իր վրա վերցնել միայն ճաշ պատրաստելու և ձմեռվա համար ցախ ու մամուռ հավաքելու պարտականությունները:

Հյուղակի պատերը բարձրացան առանց մեծ դժվարության, և ամեն ինչ հեշտությամբ ընթացավ մինչև այն րոպեն, երբ ծագեց տանիքը ծածկելու հարցը: Արդարև, ինչի՞նչ են պետք չորս պատերը, երբ տանիք չկա: Իսկ ինչի՞նչ կարելի էր տանիք սարքել: Ճիշտ է, մենք ունեինք ավելորդ թիակներ, որ կարող էինք օգտագործել որպես գերան, բայց ինչո՞վ ծածկել դրանք: Մամուռն ու խոտը անպետք ու անգործնական են, առագաստը մեզ հարկավոր էր նավարկելու համար, իսկ բրեզենտը արդեն ծակծկվել էր:

— Ուինդերսը ծովացույների մորթիներով էր ծածկել իր հյուղակի տանիքը,— ասացի ես:

— Մենք էլ ծովակատուներ ունենք,— թելադրեց Մոդը:

Եվ հաջորդ օրը որսորդությունն սկսվեց: Ես նշան բռնել չգիտեի, բայց ջանացի սովորել: Սակայն երբ երեսուն փամփուշտ վատնելով միայն երեք ծովակատու որսացի, մտածեցի, որ մեր ամբողջ զինամթերքը կվերջանա, նախքան կսովորեմ կարգին կրակել: Ես արդեն ուր փամփուշտ օգտագործել էի խարույկ վառելու համար, որից հետո միայն հղացել էի կրակը խոնավ մամուռների միջոցով խնայելու հնարքը: Այժմ արկղում մնացել էր ոչ ավելի քան մի հարյուր փամփուշտ:

— Պետք է մահակով սպանել նրանց,— հայտարարեցի ես, երբ լիովին համոզվեցի, որ նշանառության մեջ ձախողակ եմ:— «Ուրվականի» որսորդներից լսել եմ, որ ծովակատուներին սպանում են նաև մահակով:

— Բայց սրանք այնքան սիրուն են, որ չեմ ուզում անգամ պատկերացնել այդ գործողությունը,— ասաց Մոդը:— Դա ուղղակի գազանային կլիներ, գիտե՞ք: Մինչդեռ փամփուշտով սպանելը բոլորովին այլ բան է:

— Բայց հարկավոր է տանիքը ծածկել,— պատասխանեցի մոռյլ:— Ձմեռը շատ մոտ է: Կա՛մ մեր կյանքը պետք է զոհենք, կամ նրանցը: Դժբախտաբար, բավականաչափ փամփուշտ չունենք: Համենայն դեպս, կարծում եմ, որ մահակի հարվածները նրանց պակաս ցավ կպատճառեն, քան փամփուշտի մանրագնդիկները: Եվ, վերջ ի վերջո, ես մենակ եմ կատարելու այդ գործողությունը:

— Հարցը հենց դրանումն է,— սկսեց նա անձկությամբ, բայց, հանկարծ շփոթվելով, լռեց:

— Իհարկե,— ասացի ես,— եթե դուք նախընտրում եք. . .

— Իսկ ես ի՞նչ պետք է անեմ,— ընդհատեց նա իր յուրահատուկ մեղմությամբ, որ ես շատ լավ ճանաչում էի որպես քողարկված համառություն:

— Ցախ կհավաքեք և ճաշ կպատրաստեք,— պատասխանեցի զվարթությամբ:

Նա գլուխը թափահարեց:

— Ոչ, ձեզ համար շատ վտանգավոր կլինի մենակ գնալ: Գիտեմ, գիտեմ,— ասաց նա ձեռքի շարժումով կասեցնելով իմ հարուցելիք առարկությունը,— ես ուժեղ չեմ, բայց իմ աննշան օգնությունը գուցե կարող է ձեզ փրկել որևէ աղետից:

— Իսկ մահակը ո՞վ է գործածելու,— հարցրի ես:

— Անշուշտ դուք: Ես, հավանորեն, կճչամ և ուրիշ կողմ կնայեմ, երբ...

— Երբ վտանգը չափազանց լուրջ դառնա,— հարցրի ծիծաղելով:

— Ես իմ դատողությամբ կորոշեմ, թե ե՛րբ պետք է նայել, երբ չնայել,— պատասխանեց նա հանդիսավորությամբ:

Այս վեճի արդյունքն այն եղավ, որ հաջորդ առավոտյան Մոդը ինձ հետ որսի եկավ: Ես թիավարեցի դեպի ամենամոտ ծովախորշը և մակույկը կանգնեցրի ծովափի ծայրին: Ծովակատուները վխտում էին ջրի մեջ, իսկ ցամաքում հանգստացող հազարավորների մոնչոցն այնքան խլացուցիչ էր, որ ստիպված եղանք գոռալով խոսել՝ իրար լսելու համար:

— Լավ գիտեմ, որ նրանց խփում են մահակով,— ասացի ես, փորձելով քաջալերել ինձ և տարակուսանքով նայելով մի հսկա արուի, որը հազիվ երեսուն ոտնաչափ հեռու հետևի թաթերի վրա կանգնած՝ ուշադրությամբ ինձ էր գնում:— Բայց հարցն այն է, թե ինչպե՞ս են խփում:

— Ավելի լավ չե՞ խոտ հավաքենք ու դրանով ծածկենք կտուրը,— ասաց Մոդը:

Նա էլ ինձ պէս վախեցել էր: Եվ, արդարև, վախենալու հիմք ունեինք, որովհետև ծովակատուների փայլուն ժանիքներն ու շան բերան հիշեցնող բերանները մոտիկից բավականին ահազդու էին:

— Ես միշտ կարծել եմ, որ նրանք վախենում են մարդկանցից,— ասացի ես և, ծովափի երկայնքով մի քիչ թիավարելուց հետո, ավելացրի,— բայց ինչի՞ց իմանամ, որ չեն վախենում: Եթե քաջաբար ցամաք ելնեմ, գուցե նրանք այնպես փախչեն, որ նույնիսկ չկարողանամ հետևներից հասնել:

Բայց, այնուամենայնիվ, վարանում էի:

— Լսել եմ, որ մի մարդ մի անգամ ասպատակել է վայրի սագերի ծվարավայրը,— ասաց Մոդը,— և սագերը սպանել են նրան:

— Սագե՞րը:

— Այո, սագերը: Եղբայրս է ինձ պատմել այդ, երբ փոքր աղջիկ էի:

— Բայց ես լավ գիտեմ, որ մարդիկ մահակով սպանում են ծովակատուներին,— պնդեցի ես:

— Ինձ թվում է, թե խոտով էլ կարելի է նույնքան լավ ծածկել տանիքը,— ասաց նա:

Չնայած Մոդի բարի մտադրությանը, նրա խոսքերն ինձ գրգռում ու կատաղեցում էին, ես չէի կարող ինձ թույլ տալ, որ նրա աչքում վախկոտ երևամ:

— Դե՛ գնացինք,— գոչեցի ես և մեկ թիակով թիավարելով՝ մակույկի ցռուկը մոտեցրի ափին:

Ցամաք ցատկելուց հետո խիզախաբար ուղղվեցի դեպի երկայնաբաշ արուն, որը շրջապատված էր իր էգերով:

Ես զինված էի սովորական մի մահակով, ինչպիսին գործածում են թիավարները, երբ սպանում են որսորդների կողմից մակույկ բարձրացրած վիրավոր ծովակատուներին: Իմ մահակի երկարությունը միայն մեկուկես ոտնաչափ էր, բայց հոյակապորեն տգետ լինելով այս հարցում, ես չէի իմանում, որ ցամաքում ծվարավայրերի վրա հարձակվելիս, օգտագործում են չորսից հինգ ոտնաչափ երկարությամբ մահակներ: Էգերը քարշ գալով ցրվեցին, իսկ իմ ու արուի միջև հեռավորությունը հետզհետե պակասեց: Հանկարծ նա մի ցատումնալի շարժումով կանգնեց թաթերի վրա: Մենք իրարից բաժանված էինք միայն տասներկու ոտնաչափ տարածությամբ: Ես շարունակեցի հաստատաքայլ առաջանալ, հուսալով, որ մեկ վայրկյանից մյուսը նա պոչը կդարձնի ու փախուստ կտա:

Երբ մեր միջև մնաց վեց ոտնաչափ հեռավորություն, մտքումս ծագեց մի երկյուղալի հարց. իսկ եթե փախուստ չտա՞: Դե՛, այդ դեպքում կխփեմ նրան, պատասխանեցի մտովի: Իմ վախն ինձ մոռացնել էր տվել, որ եկել էի ծովակատու սպանելու և ոչ թե փախուստի մատնելու: Հենց այդ պահին արուն փնչաց և, մի մոնչոց արձակելով, խոյացավ վրաս: Նրա աչքերը փայլում էին, իսկ լայնաբաց բերանի մեջ դաժանորեն պսպղում էին սպիտակ ժանիքները: Պետք է առանց ամաչելու խոստովանեմ, որ մեջք դարձնողն ու փախուստ տվողը ես եղա: Ես վազում էր անճոռնի ձևով, բայց բավականին արագ: Հազիվ երկու քայլ էր մնացել, որ նա ինձ հասներ, երբ ես նետվեցի մակույկի մեջ: Երբ թիավարելով հեռանում էի ափից, նա ակռաներով կառչեց

թիակի ծայրից, և ամուր փայտն իսկույն փշրվեց ձվի կճեպի պես: Մողը և ես շշմել էինք: Հաջորդ վայրկյանին ծովակատուն սուզվեց ջրի տակ և, մակույկի ողնուցը բերանի մեջ առնելով, սկսեց ուժգին ցնցել մակույկը:

— Ի սեր աստծո,— գոչեց Մողը,— հեռանանք այստեղից:

Ես գլուխս թափահարեցի:

— Ես էլ կարող եմ անել այն, ինչ արել են ուրիշները, և վստահ եմ, որ ուրիշները ծովակատուներ սպանել են: Սակայն հաջորդ անգամ արուներին հանգիստ կթողնեմ:

— Ես կուզենայի, որ բոլորին էլ հանգիստ թողնեք:

— Նորից չսկսեք «Խնդրում եմ, խնդրո՞ւմ եմ» ասել,— գոչեցի բարկությամբ:

Նա չպատասխանեց, և ես զգացի, որ իմ խիստ տոնը նրան վիրավորել է:

— Ներեցեք,— ասացի ես, ավելի շուտ գոռացի, որպեսզի ձայնս լսելի դառնա ծովակատուների մոնչոցի մեջ:— Եթե դուք այդ խոսքն ասեք, ես նավակը շուտ կտամ, և մենք կվերադառնանք: Բայց անկեղծ ասած՝ կնախընտրեի մնալ:

— Հիմա դուք գուցե մտածեք, թե ահա ինչ է նշանակում կնոջ ընկերակցությամբ գործի ձեռնարկել,— ասաց նա քմահաճ ու հմաչիչ ժպիտով, և ես հասկացա, որ նա ինձ ներել է:

Ծովափի երկայնքին մոտ երկու հարյուր ոտնաչափ թիավարեցի, որպեսզի ժամանակ ունենամ ջրերիս վրա իշխելու, ապա նորից ցամաք ելա:

— Միայն թե զգույշ եղեք,— գոչեց Մողը իմ հետևից:

Ես գլխով արեցի և պատրաստվեցի թևագրոհ գործել ամենամոտ հարեմի վրա: Ամեն ինչ բարեհաջող գնաց մինչև այն պահը, երբ մահակը մի առանձնացած եզի գլխին իջեցնելիս՝ հարվածս վրիպեց: Ծովակատուն փնչաց և սկսեց փախչել: Ես նրա հետևից վազեցի և իջեցրի մի երկրորդ հարված, բայց մահակը կպավ ոչ թե գլխին, այլ ուսին:

— Զգո՛ւյշ,— լսեցի Մողի ճիչը:

Ոգևորությունից շուրջս չէի նայել, իսկ հիմա շուտ գալով նշմարեցի, որ հարեմի տերը խոյանում է վրաս: Ես դարձյալ փախա դեպի մակույկը, կրնկակոխ հալածվելով: Բայց այս անգամ Մողը չխոսեց վերադառնալու մասին:

— Իմ կարծիքով, ավելի լավ կլիներ, եթե հարեմները հանգիստ թողնեիք և ձեր ուշադրությունը կենտրոնացնեիք բոլորովին մեկուսացած ու անվտանգ տեսքով ծովակատուների վրա,— ասաց նա:— Կարծեմ ինչ-որ տեղ կարդացել եմ այդ մասին: Եթե չեմ սխալվում՝ դոկտոր Ջորդանի գրքում: Մեկուսացած ծովակատուները ջահել արուներ են, որոնք տակավին իրենց սեփական հարեմը չունեն: Ջորդանը դրանց կոչում է «առանձնակյացներ» կամ դրա նման ինչ-որ բան: Ինձ թվում է՝ եթե գտնենք նրանց ծվարատեղը, ապա...

— Ինձ էլ թվում է, թե ձեր մարտական տրամադրությունն արդեն արթնացել է,— ծիծաղեցի ես:

Մոդի այտերը չքնադորեն շիկնեցին:

— Պետք է խոստովանեմ, որ ես էլ, ձեզ նման, պարտվել չեմ սիրում, թեև ինձ դուր չի գալիս այս սիրուն ու անվնաս արարածներին սպանելու միտքը:

— Սիրո՛ւն...— մրմնջացի ես:— Ես որևէ սիրունություն չեմ գտնում ինձ հալածող այդ փրփրերախ գազանների մեջ:

— Դա ձեր տեսակետն է,— ծիծաղեց Մոդը:— Որովհետև դուք հեռավորության չափը կորցրեցիք: Եթե այնքան չմոտենայիք առարկային...

— Հենց դա է...— գոչեցի ես:— Հեռու մնալու համար ինձ հարկավոր է ավելի երկար մահակ: Այդ կոտրած թիակը պետք կգա:

— Հիմա հիշեցի . . . — ասաց Մոդը,— նավապետ Լարսենը մի անգամ ինձ պատմեց, թե ինչպես են որսում ծվարավայրերում: Որսորդները նրանց փոքր խմբերով քշում են ցամաքի խորքերը և դրանից հետո սկսում են սպանել:

— Ճիշտն ասած, ինձ այնքան էլ չի հրապուրում մի ամբողջ հարեմ դեպի խորքերը քշելու գաղափարը,— առարկեցի ես:

— Բայց կարող եք առանձնակյացներին քշել,— ասաց նա:— Առանձնակյացները մեկուսացած են ապրում: Դոկտոր Ջորդանն ասում է, որ հարեմներն իրարից բաժանված են ճանապարհներով, և քանի դեռ առանձնակյացները չեն անցնում այդ ճանապարհների սահմանը: Հարեմների տերերը նրանց ձեռք չեն տալիս:

— Ահա՛ նրանցից մեկը,— ասացի ես, ցույց տալով ջրի մեջ լողացող մի ջահել արուի:— Նրան աչքի տակ պահենք և, եթե ցամաք բարձրանա, հետևենք:

Առանձնակյացը լողաց դեպի ափ և մարմինը քարշ տալով ուղղվեց դեպի մոտակա երկու հարեմների միջև գտնվող ազատ տարածությունը: Հարեմների տերերը նախազգուշական մոմոռոցներ արձակեցին, բայց չհարձակվեցին նրա վրա: Նա դանդաղ շարունակեց իր ճամփան, առանց դուրս գալու հարեմների միջև ընկնող «ճանապարհից»:

— Գործի անցնենք,— ասացի ես ափ ելնելով: Բայց պետք է խոստովանեմ, որ վախը սիրտս մտավ, երբ մտածեցի, թե ինչպես պիտի անցնեմ այդ հսկա երամի միջով:

— Լավ կլիներ մակույկը մի տեղ ամրացնեինք,— ասաց Մոդը:

Նա ափ էր եկել և կանգնել էր կողքիս: Ես զարմանքով նայեցի նրան:

Մոդը վճռականությամբ գլուխը շարժեց:

— Ոչ՛, ձեզ հետ եմ գալու: Ուստի լավ կանեք, որ մակույկը կապեք և ինձ էլ զինեք մահակով:

— Եկեք ետ դառնանք,— ասացի հիասթափությամբ:— Ես կարծում եմ, թե վերջ ի վերջո խոտն էլ կարող է տանիքը ծածկել:

— Դուք լավ գիտեք, որ ճիշտ չեք ասում,— պատասխանեց նա:— Գուցե ե՞ս ձեզ առաջնորդեմ:

Ես ուսերս թոթվեցի, բայց նույն վայրկյանին սիրտս ամենախոր հիացմունքով ու հպարտությամբ համակվեց այդ կնոջ նկատմամբ: Ես նրան զինեցի կոտրած թիակով, ինձ համար վերցրի մի ուրիշ թիակ, և ահ ու դողով ճամփա ընկանք: Մի անգամ Մողը սարսափից ճչաց, երբ եզերից մեկը հետաքրքրությունից դուռն ձուլեցրեց նրա ոտքին: Ես ինքս էլ նույն պատճառով մի քանի անգամ քայլերս արագացրի: Սակայն, բացի նախազգուշացնող փնջոցներից, թշնամական վերաբերմունքներ չդրսևորվեցին ոչ մեկ, ոչ էլ մյուս կողմի հարեմից: Այդ ծվարատեղում որսորդներ երբեք չէին հայտնվել, այդ պատճառով ծովակատուները հանդարտ ու անվախ էին:

Երամի կենտրոնում աղմուկը գլխապտույտ պատճառելու աստիճան սոսկալի էր: Ես կանգ առա և խրախուսական ժպիտով նայեցի Մողին, որովհետև նրանից առաջ էի վերագտել սառնարյունությունս: Նրա դեմքն արտահայտում էր անսահման երկյուղ: Նա ինձ մոտենալով գոչեց.

— Շատ, շա՛տ եմ վախենում:

Ես ինքս դադարել էի վախենալուց: Թեև դեռ բոլորովին չէի ընտելացել մեզ շրջապատող ահագո՞ւ տեսարանին, բայց ծովակատուների խաղաղասիրական տրամադրությունն ինձ որոշ չափով հանգստացրել էր: Սակայն Մողը ամբողջ մարմնով դողում էր:

— Ե՛վ վախենում եմ, և՛ չեմ վախենում,— ասաց նա ատամները կափկափելով:— Թշվառական մարմինս է վախենում, ոչ թե ես:

— Ոչինչ, ոչինչ,— պատասխանեցի ես և, պաշտպանելու նպատակով, բնագոյաբար գրկեցի նրա իրանը:

Բնավ չեմ կարող մոռանալ, թե ինչպես այդ վայրկյանին հանկարծ գիտակցեցի իմ առնականությունը: Նախնադարյան բնագոյներն սկսեցին ալեկոծվել հոգուս խորքերում: Զգացի, որ տղամարդ եմ՝ թույլ էգին պաշտպանող ու նրա համար կռվող արու: Բայց ամենագեղեցիկն այն գիտակցությունն էր, որ ես պաշտպանում էի իմ սիրած էակին: Մողը ինձ հենվել էր այնքան թեթև, ինչպես դյուրաբեկ շուշանը, և երբ նրա դողը մեղմացավ, ես իմ մեջ զգացի հսկայական մի ուժ: Այդ բոլորին թվաց, թե կարող եմ հաղթել երամի ամենակատաղի արուին, և վստահ էի, որ եթե իրոք այդպիսի մի արու հարձակվեր ինձ վրա, ես նրան կդիմավորեի հանդարտ ու անսասան և տեղնուտեղը կսատկացնեի:

— Հիմա ինձ լավ եմ զգում,— ասաց նա, երախտագիտությամբ նայելով աչքերիս մեջ:— Շարունակե՛նք մեր ճանապարհը:

Երբ մտածեցի, թե իմ ուժն էր Մողին հաղորդել այդ հանգստությունն ու վստահությունը, հոգիս ողողվեց հափշտակության աստիճանի հասնող բերկրությամբ: Հինավուրց նախնիների երիտասարդությունը մեկեն վերակենդանացավ իմ մեջ և ես, գերքաղաքակիրթ մարդս, այդ պահին երևակայությամբ վերապրեցի հեռավոր ու անհիշատակ ժամանակների որսորդական օրերն ու անտառային գիշերները: Որքա՛ն բան եմ պարտական Գայլ Լարսենին, մտածում էի ես խիտ հարեմների միջով քայլելիս:

Ծովափից մոտ քառորդ մղոն հեռու մենք վերջապես հանդիպեցինք առանձնակյացներին՝ ողորկ մարմնով ջահել արուներին, որոնք մենության մեջ անց են կացնում իրենց

ամուրիության շրջանը, ուժ հավաքելով այն օրվա համար, երբ կովելով իրենց համար տեղ պիտի բացեն բախտավորների շարքերում:

Այս անգամ ամեն ինչ սահուն ընթացավ: Ես կարծես ըմբռնել էի, թե ինչ պետք է անել և ինչպես պետք է անել: Գոռալով, մահակը սպառնազին շարժելով և նույնիսկ հրելով դանդաղ կոտների, ես շուտով մի քսան ջահել ամուրիների հեռացրի մյուսներից: Երբ նրանցից որևէ մեկը փորձում էր փախչել դեպի ծով, ես փակում էի նրա ճանապարհը: Մողը աշխույժ մասնակցություն ունեցավ այդ գործում և ճշալով ու կոտրած թիակը օդում ճոճելով՝ մեծապես օգտակար եղավ ինձ: Ես նկատեցի, որ նա երբեմն բաց էր թողնում շատ հոգնած ու դանդաղ կոտ ծովակատուներին: Բայց նույնպես նկատեցի, որ երբ նրանցից մեկնումեկը փախչել փորձելիս մարտական տրամադրություն էր ցուցաբերում, Մողի աչքերը փայլում էին և նա թիակով ճարտարորեն հարվածում էր ըմբոստ փախստականին:

— Իսկապես ոգևորիչ է,— գոչեց նա և ուժասպառությունից թուլացած՝ կանգ առավ:— Երևի պետք է մի քիչ նստեմ:

Ես շարունակեցի քշել փոքր երամը, որի թիվը հիմա հասել էր տասներկուսի (մնացածները փախել էին Մողի թույլտվությամբ) և առաջացա ևս մի հարյուր յարդ: Երբ Մողը միացավ ինձ, ես արդեն սպանել էի ծովակատուներին և քերթում էի նրանց կաշիները: Մի ժամ անց մենք հպարտորեն վերադառնում էինք հարեմների միջով: Դրանից հետո երկու անգամ ևս վերադարձանք նույն ճանապարհով՝ մորթիներով բեռնավորված: Ես հաշվեցի, որ այդքան մորթին բավական էր հյուղակի կտուրը ծածկելու: Առազաստը պարզելով, մենք դուրս եկանք առաջին ծովախորշից և, երկրորդն անցնելուց հետո, հասանք մեր ծովախորշիկը:

— Կարծես վերադարձանք հայրենի տուն...— ասաց Մողը, երբ մակույկը մոտեցրի ափին:

Նրա խոսքերն այնքան մտերմական ու բնական հնչեցին, որ ես էլ համակվեցի նույն հուզմունքով:

— Ինձ արդեն թվում է, թե միշտ այստեղ եմ ապրել,— ասացի ես:— Գրքերի աշխարհն ու գրական շրջանակները աղոտացել են հիշողությանս մեջ և դարձել ավելի շուտ երագների հուշ, քան բուն իրականություն: Ինձ թվում է, թե ամբողջ կյանքումս որսացել եմ, ասպատակել ու կռվել, և դուք էլ միշտ մասնակից եք եղել այդ կյանքին: Դուք...— քիչ էր մնում ասելի «իմ կինն եք, իմ ընկերուհին», բայց դրա՝ փոխարեն իսկույն ասացի,— հիանալի տանում եք դժվարությունները:

Բայց նրա ականջը որսաց իմ շեղումը: Նա կռահեց, որ ես խուսափեցի ինչ-որ բան ասելուց, և արագ ինձ նայեց.

— Ոչ, այդ չէ: Դուք ուզում էիք ասել, թե...

— Թե Ամերիկայի միսիս Մեյնելլը վայրենու կյանք է ապրում և ցուցաբերում է մեծ արիություն,— պատասխանեցի առանց տատամսելու:

— Օ՛հ,— հառաչեց նա: Եվ ես կարող էի երդվել, որ նրա ձայնում հուսախաբության ինչ-որ երանգ կար:

«Իմ կինը, իմ ընկերուհին . . .» . այս բառերը ամբողջ օրը՝ և դեռ օրեր շարունակ հնչեցին մտքումս: Սակայն երբեք այնքան ուժեղ չհնչեցին, որքան այդ գիշեր, երբ դիտում էի, թե ինչպես Մոդր ածուխի վրայից հեռացնում է խոնավ մամուռի ծածկոցը, վառում կրակը և ընթրիք պատրաստում: Երևի այդ պահին իմ մեջ խլրտում էր ինչ-որ թաքնված վայրենություն, որովհետև նախահայրերիս հետ անքակտելիորեն կապված այդ հնաբույր բառերն անդիմադրելիորեն հափշտակում ու հուզում էին ինձ: Այդ բառերը շարունակեցին ինձ հափշտակել ու հուզել մինչև ուշ գիշեր, և ես մրափեցի, նորից ու նորից մրմնջալով այդ բառերը:

Գլուխ երեսումեկերորդ

— Տանիքը հոտ կունենա,— ասացի ես,— բայց, այն ուամենայնիվ, ձեզ կպաշտպանի ցրտից և կպատսպարի անձրևից ու ձյունից:

Մենք դիտում էինք մորթիներով ծածկված տանիքը:

— Ճիշտ է, անճոռնի տեսք ունի, սակայն, համենայն դեպս, իր նպատակին կձառայի,— շարունակեցի ես, անհամբեր սպասելով Մոդի գովաբանական խոսքերին:

Նա ծափ տվեց և հայտարարեց, որ չափազանց գոհ է:

— Բայց ներսը մութն է,— ասաց նա մի վայրկյան անց, և նրա ուսերն ակամա սարսռացին:

— Դուք կարող էիք առաջարկել, որ պատուհան սարքեի այն ժամանակ, երբ պատերն էի շարում,— ասացի ես:— Հյուղակը ձեզ համար էր և դուք ինքներդ պետք է մտածեիք պատուհանի անհրաժեշտության մասին:

— Բանն այն է, որ ես երբեք չեմ նկատում ակնհայտը,— ծիծաղեց նա:— Բացի դրանից, դուք որևէ ժամանակ կարող եք մի ծակ բացել պատի վրա:

— Իրավացի եք: Այդ մասին չէի անդրադարձել,— ասացի ես խորիմաստորեն գլուխս օրորելով:— Բայց դուք մտածե՞լ եք ապակիներ պատվիրելու մասին: Պետք է զանգահարել խանութ՝ Բեդ-44-51, եթե չեմ սխալվում, և հայտնել, թե ինչ չափի և տեսակի ապակիներ են հարկավոր ձեզ:

— Նշանակում է...— սկսեց Մոդը:

— Որ պատուհան չի լինելու:

Հյուղակը մութ ու մռայլ էր և քաղաքակիրթ աշխարհում արժանի կլիներ միայն խոզի բնակության: Բայց մեզ համար, որ ճաշակել էինք բաց մակույկի մեջ ապրելու թշվառությունը, դա մի փոքրիկ ու հարմարավետ բնակավայր էր: Ծովակատվի ճարպից ու կանեփե պատրույզից պատրաստած ճրագի լույսով հյուղակի բացումը տոնելուց հետո մենք սկսեցինք մտածել ձմեռվա համար մսի պաշար կուտակելու և մի երկրորդ հյուղակ կառուցելու մասին: Հիմա արդեն որսորդությունը հեշտացել էր: Առավոտյան մեկնում էինք և կեսօրին

վերադառնում՝ նավակը ծովակատուների մտով լցրած: Իսկ հետո, մինչ ես գրադվում էի հյուղակի կառուցմամբ, Մոդը ճարպ էր հալեցնում, վառ պահում խարույկի կրակը և դրա վրա միս ապխտում: Ես լսել էի, թե դաշտավայրերում ապրող մարդիկ ինչպես են տավարի միս ապխտում, և մենք էլ նույն ձևով արեցինք. ծխի վրա բարակ շերտերով կախված ծովակատվի միսը հիանալի ապխտվում էր:

Երկրորդ հյուղակի շինարարությունը ավելի հեշտ եղավ, որովհետև ես այն կառուցեցի առաջինին կից, այնպես որ միայն երեք պատ շարեցի: Բայց, այնուամենայնիվ, աշխատանքը ծանր էր: Մոդը և ես արևածագից մինչև մութն ընկնելը աշխատում էինք մեր կարողության առավելագույն չափով, իսկ գիշերը անկողին մտնում բոլորովին ուժասպառ և քնում պարտասուն կենդանիների խոր քնով: Չնայած դրան, Մոդը հավաստիացնում էր, թե ամբողջ կյանքում իրեն երբեք այսքան առողջ և ուժեղ չէր զգացել: Ես իմ փորձով գիտեի, որ այդ այդպես է, բայց Մոդը շուշանի պես դյուրաբեկ էր և վախենում էի, որ նրա առողջությունը միանգամից կքայքայվի: Շատ հաճախ նրա ուժը մինչև վերջին հյուղեն սպառվում էր: Ես տեսել եմ, թե այդպիսի դեպքերում ինչպես նա հանգստանալու համար իրեն հատուկ դիրքով պառկում է ավազի վրա և մի քիչ կազդուրվելուց հետո վեր կենում ու առաջվա թափով շարունակում աշխատանքը: Ուղղակի զարմանում էի, թե որտեղի՞ց է նա այդքան ուժ քաղում:

— Մտածեցեք, որ ամբողջ ձմեռը պիտի հանգստանանք,— պատասխանում էր նա իմ հորդորներին:— Այն ժամանակ ճչալով աշխատանք պիտի խնդրենք:

Իմ հյուղակի բացումը տոնեցինք այն օրը, երբ տանիքը ծածկվեց: Դա՝ փոթորկի երրորդ օրվա գիշերն էր, մի կատաղի փոթորիկ, որն իմ կողմնացույցի համաձայն հարավ-արևելքից հետգհետե հյուսիս-արևմուտք փոխադրվելով՝ այժմ փչում էր ուղիղ մեզ վրա: Ամեհի կոհակները որոտալով բախվում էին արտաքին ծովախորշի ափերին և նույնիսկ հասնում մինչև մեր խորունկ ներքնախորշը: Կղզու բարձրաբերձ ողնաշարը մեզ չէր պաշտպանում քամուց: Ոռնացող քամին այնքան ուժգին էր փչում հյուղակի շուրջը, որ վախենում էի պատերը չդիմանան: Կաշեպատ տանիքը, որն, իմ կարծիքով, պինդ ձգված էր ինչպես թմբուկի երեսը, կորանում և ուռչում էր քամու յուրաքանչյուր նոր պոռթկումից: Պատերի արանքները, որ Մոդի ենթադրությամբ լավ խծուծված էին մամուռով, մեկը մյուսի հետևից բացվեցին: Բայց հակառակ այդ բոլորին, ծովակատվի ճարպով ճրագը միշտ պայծառ լույս էր սփռում, և հյուղակը տաք էր ու հանգստավետ:

Մենք շատ հաճելի ժամանակ անցկացրինք ու վերջում այն եզրակացության եկանք, որ Ջանքի կղզում մեր կազմակերպած բարձրաշխարհիկ երեկույթների մեջ դա ամենահաջողն էր: Մտահոգվելու պատճառ չունեինք, քանի որ ոչ միայն հաշտվել էինք գալիք խստաշունչ ձմեռն այստեղ անցկացնելու մտքի հետ, այլև անհրաժեշտ նախապատրաստություններ էինք տեսել: Ծովակատուները հիմա կարող էին ուզած ժամանակ սկսել իրենց խորհրդավոր ճանապարհորդությունը դեպի հարավ, դա մեզ համար այլևս միևնույն էր, իսկ փոթորիկներն այսուհետև չէին կարող մեզ սարսափ ազդել: Մենք ոչ միայն վստահ էինք, որ չոր, տաք ու պատսպարված կլինենք, այլև կպառկենք մամուռից պատրաստված ամենափափուկ ու ամենաշքեղ անկողինների մեջ: Անկողինները Մոդի մտահոգումն էին և ինքը անձամբ խնամքով հավաքել էր ամբողջ մամուռը: Այդ գիշեր առաջին անգամ պիտի պառկեի անկողնի մեջ և քանի որ այն պատրաստել էր Մոդը, ես նախագգում էի, որ ավելի անուշ քնով պիտի նիրհեի:

Մեկնելու պահին Մողը շուտ եկավ և տարօրինակ ու առեղծվածային արտահայտությամբ ասաց.

— Ինչ-որ բան է պատահելու, ավելի շուտ՝ արդեն պատահում է: Ես այդ զգում եմ: Ինչ-որ բան է գալիս այստեղ, մեզ մոտ: Նա գնալով մոտենում է: Չգիտեմ, թե ինչ է դա, բայց մոտենում է:

— Լա՞վ, թե վատ,— հարցրի ես:

Նա գլուխը թափահարեց:

— Չգիտեմ: Նա գտնվում է այն կողմը, ինչ-որ մի տեղ:

Եվ Մողը ձեռքը մեկնեց ծովի ուղղությամբ, որտեղից քամին փչում էր դեպի ցամաք:

— Դա հողմակոծ ծովափն է,— ծիծաղեցի ես:— Այսպիսի գիշերով ես ավելի կնախընտրեի հյուղակի բնակիչ լինել, քան ժամանող ճամփորդ:

— Հո չե՞ք վախենում,— հարցրի ես, երբ վեր կացա, որպեսզի դուռը բացեմ նրա համար:

Պատասխանի փոխարեն նա արիաբար նայեց աչքերիս մեջ:

— Իսկ ձեզ լա՞վ եք զգում, կատարելապես լավ:

— Սրանից ավելի լավ երբեք չեմ զգացել:

Մի քիչ ևս զրուցելուց հետո նա պատրաստվեց դուրս գնալ:

— Բարի գիշեր, Մող,— ասացի ես:

— Բարի գիշեր, Հեմֆրի:

Մենք միմյանց անունները տվեցինք անզգայաբար, առանց կանխորոշման, պարզ ու բնական ձևով: Այդ վայրկյանին ես կարող էի նրան գրկել ու սեղմել կրծքիս: Եվ, անկասկած, այդպես կանեի, եթե լինեի այնտեղ, այն աշխարհում, որին պատկանում էի: Բայց այստեղ հանգամանքները թելադրում էին այլ վարվելակերպ: Եվ ես մնացի իմ հյուղակում ու երկար ըմբռնիչների հոգեկան բավարարության հաճելի ջերմությունը, լիովին գիտակցելով, որ մեր միջև հաստատվել է մի նոր կապ, մի լուռ փոխըմբռնում, որն առաջ գոյություն չուներ:

Գլուխ երեսուներկուերորդ

Ես արթնացա մի խորհրդավոր զգացողության ճնշումով: Ինձ թվում էր, թե ինչ-որ բան է պակասում իմ շրջապատում: Բայց խորհրդավորությունն ու ճնշումն իսկույն անհետացան, երբ պարզվեց, որ պակասող բանը քամին է: Ես քնել էի ջղային լարվածության վիճակում, որին երբեմն մարդ ենթարկվում է շարունակական աղմուկի կամ շարժման ազդեցությամբ: Երբ արթնացա, դեռևս լարված էի և նախապատրաստված՝ հակադրվելու այն ճնշումին, որն արդեն չբացել էր:

Երկար ամիսներից ի վեր առաջին անգամն էր, որ գիշերել էի ծածկված կտուրի տակ: Մի քանի ընկերացիներ ևս վայելեցի չոր վերմակների տակ պառկելու հաճույքը և սկսեցի վերլուծել նախ քան դադարումով իմ մեջ առաջացած զգացողությունը և ապա՝ Մոդի պատրաստած անկողնի պատճառած ուրախությունը: Երբ հագնվեցի և դուռը բացեցի, ավելի պարզ լսվեց ծովափին բախվող ալիքների աղմուկը, որը բազմաձայն վկայում էր գիշերվա վաթորկի մասին: Օրը արևաշող ու պայծառ էր: Ես սովորականից շատ էի քնել, հետևաբար, Ջանքի կղզում բնակվող մարդու վայել եռանդով դուրս նետվեցի կորած ժամանակը ետ շահելու մտադրությամբ:

Սակայն հազիվ էի դուրս եկել, երբ տեղնուտեղը քարացած մնացի: Ես, իհարկե, հավատացի աչքերիս, բայց, այնուամենայնիվ, մի պահ շշմեցի, անսնելով իմ առաջ պարզված տեսարանը: Այնտեղ, ծովափին, ինձնից հազիվ հիսուն ոտնաչափ հեռու կանգնած էր ջախջախված կայմերով մի նավ՝ ցռուկը խրած ավազի մեջ: Կայմերն ու կայմաթները խճճվել էին թոկերի ու պատառոտված առագաստների մեջ և նավեզրից կախված օրորվում էին մեղմորեն: Թերահավատությունից ուզեցի աչքերս շփել . . . Ահա այն խոհանոցը, որը մենք էինք սարքել, ահա հարթակի փոքր սանդուղքն ու ցածր ձեղնախցիկը, որի կտուրը հազիվ մի փոքր բարձր էր նավեզրի բազրիքից: Դա «Ուրվականն» էր:

Բախտի ո՞ր քմահաճույքն էր նրան բերել այստեղ, հատկապես հենց այստեղ: Ինչպիսի՜ տարօրինակ պատահականություն: Ես անզգայաբար նայեցի իմ հետևում բարձրացող ապառաժյա սև, անանցանելի պատվարին և համակվեցի ամենախոր հուսահատությամբ: Փախուստն անհնարին էր, դրա մասին մտածելն անգամ ավելորդ է: Ես մտածեցի Մոդի մասին, որն այժմ քնած է մեր կառուցած հյուղակում և հիշեցի, թե ինչպիսի քաղցրությամբ նա ասաց. «Բարի գիշե՛ր, Հեմֆրի»: Ուղեղումս սկսեցին հնչել «իմ կինը, իմ ընկերուհին» խոսքերը, բայց դրանք այժմ հնչում էին ինչպես մահազանգ: Եվ հանկարծ ամեն ինչ աղոտվեց աչքերիս առաջ:

Ուշագնացությունս գուցե միայն մի ակնթարթ տևեց, չգիտեմ: Բայց երբ ուշքի եկա, «Ուրվականը» դարձյալ նույն տեղում էր քիթը խրած ծովափին: Ճաքած ցոլակայմը երկարած ավազի վրա: Թոկերի մեջ խճճված կայմերը, ալիքներից մղվելով, օրորվում ու քսվում էին նավակողին: Ես մտածեցի, որ անհրաժեշտ է գործել, անհապաղ գործել:

Հանկարծ ինձ տարօրինակ թվաց, որ նավի վրա ոչ մի շարժում չկա: Փոթորկի դեմ ամբողջ գիշերը մաքառելուց հետո երևի անձնակազմը հոգնել է և բոլորը քնած են այս ընկերիս, ասացի մտովի: Եվ դա ինձ թելադրեց մի միտք, քանի որ քնած են, ապա Մոդն ու ես կարող ենք փախչել: Արդյոք մեզ չի՞ հաջողվի մակույկով արտաքին ծովախորշի անկյունը շրջանցել, նախքան որևէ մեկի զարթոնելը: Պետք է Մոդին արթնացնեմ, և իսկույն ճամփա ընկնենք:

Ձեռքս բարձրացրել էի նրա գուռը ծեծելու, երբ անդրադարձա, թե որքան փոքր է մեր կղզյակը: Մենք երբեք չենք կարող թաքնվել նրանցից: Մեզ ուրիշ ոչ մի պատսպարան չէր մնում, բացի կատաղի ու անձայրածիր օվկիանոսից: Մտաբերեցի մեր փոքրիկ, հարմարավետ հյուղակները, մսի պաշարը: Ճրագը, մամուռն ու ցախը և միաժամանակ համոզվեցի, որ ձմեռային փոթորկոտ ծովի վրա նավարկելու դեպքում մենք կդիմենք ուղիղ դեպի մեր մահը:

Եվ այդպես, ես վարանոտ կանգնեցի դռան մոտ, ձեռքս օդում բարձրացրած: Փրկության ոչ մի հույս չկար, ոչ մի հույս: Իմ մեջ ծագեց ներս խոյանալու և քնած Մոդին սպանելու վայրագ

միտքը: Բայց նույն վայրկյանին մտքովս փայլակի նման անցավ մի ավելի նախընտրելի լուծում: Քանի որ «Ուրվականի» վրա բոլորը քնած են, ապա ինչո՞ւ չստղծակել մինչև Գայլ Լարսենի անկողինը և նրան չսպանել քնած տեղը: Իսկ դրանից հետո՞ . . . դեհ, դրանից հետո՞ կտեսնենք... Նրա մահից հետո ժամանակ կունենամ մտածելու, թե ինչ պետք է անել: Համենայն դեպս, ինչպիսի նոր դրություն էլ ստեղծվի, այն չի կարող ավելի վատթար լինել, քան այժմյանը:

Դաշույնը կախված էր կողքիցս: Ես վերադարձա հյուղակ, վերցրի մանրագնդակի հրացանը, լիցքը ստուգեցի, ապա ուղղվեցի դեպի «Ուրվականը»: Մինչև գոտկատեղս խրվելով ջրի մեջ՝ մոտեցա նավին և ոչ առանց դժվարության բարձրացա տախտակամած: Նավաստիների խցի անցքը բաց էր: Ես մի պահ ականջ դրի՝ նրանց շնչառությունը լսելու համար: Բայց շնչառության ձայն չկար: Այն ժամանակ մտքովս անցավ մի հարց, որն ինձ սարսուռ պատճառեց: Արդյո՞ք նրանք լքել են «Ուրվականը»: Եվ սկսեցի ավելի ուշադրությամբ ականջ դնել: Դարձյալ ոչ մի ձայն: Իջա աստիճաններով: Խուցը դատարկ էր: Ներսում ծավալվել էր այն զարշառուկությունը, որ հաստուկ է չբնակված սենյակներին: Այնտեղ խառնիխուռն թափվել էին հին հագուստներ, ռետինե մաշված կոշիկներ, մոմլաթե ծակծկված վերարկուներ, մի խոսքով՝ այն բոլոր անպետք իրեղենները, որ նավաստիներն իրենց խցում թողնում են երկար ճանապարհորդությունից հետո:

Նրանք շատ շտապ են հեռացել, եզրակացրի ես տախտակամած բարձրանալով: Հույսը կրծքիս տակ վերակենդանացավ, և սկսեցի ավելի սառնասրտությամբ գննել իմ շուրջը: Իսկույն նկատեցի, որ մակույկները չկան: Որսորդների խցում տիրում էր նույն խառնաշփոթ վիճակը, ինչ նավաստիների խցում: Որսորդներն էլ իրենց իրերը հավաքել էին նույնպիսի շտապողականությամբ: «Ուրվականը» լքված էր: Այն հիմա պատկանում էր Մոդին և ինձ: Ես հանկարծ հիշեցի նավասենյակի ներքևում գտնվող պահեստարանը և որոշեցի Մոդին զարմացնել նախաճաշի համար համեղ ուտելիքներ տանելով:

Երբ վախս փարատվեց և գիտակցեցի, որ այլևս կարիք չկա կատարելու այն ահավոր արարքը, որի համար եկել էի, փոքր տղայի նման ուրախացա: Որսորդների խցից դուրս եկա և աստիճանները զույգ-զույգ բարձրանալով ուրախությամբ մտածեցի, որ մինչև Մոդի արթնանալը նախաճաշն արդեն պատրաստ կլինի: Խոհանոցի մոտով անցնելիս ցնծությամբ հիշեցի, որ ներսում կան խոհանոցային հիանալի իրեղեններ: Վազելով ցատկեցի հարթակի վրա և տեսա... Գայլ Լարսենին: Վազքի թափն ու ցնցող ապշությունը մի քանի քայլ ևս առաջ մղեցին ինձ, մինչև որ կարողացա կանգ առնել: Լարսենը կանգնած էր նավասենյակ տանող սանդուղքի վրա, և անցքից երևում էին միայն նրա գլուխն ու ուսերը: Նա ինձ էր նայում: Ձեռքերը հենած կիսաբաց անցքի եզերքին՝ նա անշարժ նայում էր ինձ:

Սկսեցի դողդողալ, աղիքներս ցավից գալարվեցին, ինչպես լինում էր անցյալում: Վայր չընկնելու համար բռնեցի ձեղնախցիկի եզրը: Շրթներս մեկեն չորացել էին և լեզվով անզգայաբար թացացնում էի դրանք, չնայած խոսելու ուժ չունեի: Աչքերս ոչ մի ակնթարթ չէին հեռանում Գայլ Լարսենից: Մենք երկուսս էլ ոչ մի բառ չէինք արտաբերում: Նրա լռության ու անշարժության մեջ ինչ-որ չարագուշակ բան կար: Նրանից իմ զգացած հին վախը վերադարձել ու հարյուրապատիկ աճել էր մեջս: Դեմդիմաց կանգնած դեռ դիտում էինք իրար:

Ես ըմբռնում էի գործելու անհրաժեշտությունը, բայց իմ հին անճարակությունը նորից համակել էր ինձ և սպասում էի, որ նախ Գայլ Լարսենն սկսի: Վայրկյանները դանդաղ անցնում էին, երբ հանկարծ հիշեցի, թե ինչպես երկայնաբաշ արուին մահակով մոտենալիս՝ վախը մթագնել էր իմ մտադրությունը և բոլորովին մոռացել էի, որ եկել եմ ծովակատվին սպանելու և ոչ թե նրան փախցնելու: Դրությունը հար ու նման էր հիմա: Փոխանակ ինքս գործելու, սպասում էի, որ Գայլ Լարսենը գործի անցնի:

Բարձրացրի երկփողանի հրացանը և նշան բռնեցի Գայլ Լարսենի վրա: Եթե նա որևէ շարժում աներ կամ փորձեր ներքև խոյանալ, անկասկած, կկրակեի: Բայց նա անշարժ կանգնած՝ շարունակում էր նայել ինձ: Ձեռքերիս մեջ դողդողացող հրացանը նրան ուղղած՝ մի պահ դիտեցի նրա դեմքը և նկատեցի, որ նիհարել ու գունատվել է: Կարծես ինչ-որ խոր ապրումներ հյուծել էին այդ դեմքը: Այտերը փոսացել էին, ճակատի կնճիռները՝ խորացել: Ինձ թվաց, թե աչքերի տեսքը տարօրինակ է: Փոխվել էր ոչ միայն նրանց արտահայտությունը, այլև կազմվածքը: Ըստ երևույթին, տեսողական ջղերն ու մկանները ուժեղ լարվածության հետևանքով թեթևակի ծռել էին աչքերի գնդերը:

Ես այս ամենը նկատեցի և ուղեղումս, որն այժմ սկսել էր արագ աշխատել, հազար ու մի մտքեր անցան, բայց, այնուամենայնիվ, չկարողացա հրացանի բլթակները քաշել: Հրացանը ցածրացնելով ես նետվեցի ձեղնախցիկի հետևը, որպեսզի հանդարտեցնեմ լարված ջղերս և ապա նորից գործի անցնեմ, այս անգամ ջանալով ավելի մոտ կանգնել: Երբ երկրորդ անգամ հրացանի կոթը ուսիս հենեցի, մեր միջև հեռավորությունը հազիվ երկու քայլ էր: Գայլ Լարսենի համար այլևս փրկություն չկար: Ես վճռական էի այս անգամ: Ինչքան էլ վատ նշանառու լինեի, դարձյալ հարվածս չէր կարող վրիպել: Եվ սակայն, դեռ տատանվում էի ու չէի սեղմում բլթակները:

— Հետո՞,— ասաց նա անհամբերությամբ:

Իզուր փորձեցի մատներս սեղմել բլթակների վրա և իզուր ջանացի որևէ բան ասել:

— Ինչո՞ւ չեք կրակում,— հարցրեց նա:

Ես հազացի՝ կոկորդոս մաքրելու համար, որը խանգարում էր խոսել:

— Հեմփ,— ասաց նա դանդաղ,— դուք անընդունակ եք դրան: Ոչ թե որովհետև վախենում եք, այլ որովհետև անկարող եք: Ձեր պայմանական բարոյականությունը ավելի ուժեղ է ձեզնից: Դուք գերին եք այն նախապաշարմունքների, որոնց հավատում են ձեր շրջապատի մարդիկ և որոնցով հագեցված են ձեր կարդացած գրքերը: Դրանք ձեր գլխում թխվել են դեռ այն ժամանակից, երբ նոր էիք սկսել բառեր թոթովել և, հակառակ ձեր ամբողջ փիլիսոփայությանն ու իմ ավանդած դասերին, ձեզ չեն թողնի սպանել անգն ու չդիմադրող մի մարդու:

— Գիտեմ,— ասացի ես խոպոտ ձայնով:

— Եվ դուք նույնպես գիտեք, որ ես անգնն մարդու կսպանեի նույնպիսի հոժարությամբ, որպիսի հոժարությամբ կծխեի իմ սիգարը,— շարունակեց նա:— Դուք ինձ ճանաչում եք և իմ արժեքը գնահատել եք ձեր սեփական կշեռքով: Դուք ինձ կոչել եք օձ, վագր, շնաձուկ, հրեշ և կալիբան: Բայց ինքներդ լաթե մի խամաճիկ եք, ուրիշների կարծիքներին արձագանքող

ողորմելի մի մեքենա, և անընդունակ էք ինձ սպանելու այնպես, ինչպես կսպանեիք մի օձ կամ շնաձուկ, և դա միայն նրա համար, որ իմ ձեռքերը, ոտքերը և մարմինը ինչ-որ նմանություն ունեն ձերինների հետ: Է՛հ, ես ավելին էի սպասում ձեզնից, Հեմփ:

Նա բարձրացավ աստիճաններով և ուղղվեց դեպի ինձ:

— Ցած դրեք այդ հրացանը: Ուզում եմ ձեզ մի քանի հարց տալ: Ես դեռ ժամանակ չունեցա շրջապատը քննելու: Ի՞նչ տեղ է սա: Ի՞նչ դիրքով է կանգնել «Ուրվականը»: Ինչո՞ւ էք այդպես թրջվել: Որտե՞ղ է Մոդը . . . ներեցեք, միսս Բրուստերը . . . կամ գուցե պիտի ասել՝ միսիս Վան-Վեյդենը. . .

Ես շտապ նահանջել էի և զայրույթից լացս գալիս էր, որ անկարող եմ սպանել նրան: Բայց գոնե այնքան հիմար չէի, որ ցած դնեի հրացանը: Ես անհամբեր սպասում էի, որ նա հարձակվի վրաս, փորձի ինձ հարվածել կամ խեղդել, որովհետև գիտակցում էի, որ միայն այդ դեպքում կհարկադրվեմ կրակել:

— Սա Ջանքի կղզին է,— պատասխանեցի ես:

— Կյանքումս այդպիսի անուն չեմ լսել,— ասաց նա:

— Գոնե մենք այդպես ենք անվանում,— ճշտեցի ես:

— Մե՞նք . . . ովքե՞ր են «մենք»—ը:

— Միսս Բրուստերը և ես: Իսկ «Ուրվականը», ինչպես ինքներդ եք տեսնում, ցռուկը դարձրել է դեպի ծովափ:

— Այստեղ ծովակատուներ կան,— ասաց նա:— Նրանք ինձ արթնացրին իրենց ոռնոցներով, թե չէ մինչև հիմա քնած կլինեի: Նրանց աղմուկը լսեցի գիշերը, երբ նավը քշում էի դեպի ցամաք, և իսկույն կռահեցի, որ մոտենում եմ ինչ-որ հողմագերծ ափի: Այստեղ ծվարավայր է: Ես տարիներ շարունակ փնտրել եմ այսպիսի մի ծվարավայր: Եվ ահա իմ եղբոր՝ Մահի շնորհիվ գտնում եմ մի հսկա հարստություն: Սա ուղղակի գանձերի հանք է: Որո՞նք են կղզու կոորդինատները:

— Այդ մասին ոչ մի գաղափար չունեմ,— ասացի ես:— Բայց դուք ինքներդ պետք է լավ իմանաք այդ: Ինչպիսի՞ կոորդինատներ եք արձանագրել վերջին անգամ:

Նա խորհրդավոր կերպով ժպտաց և ոչինչ չպատասխանեց:

— Իսկ որտե՞ղ է անձնակազմը,— հարցրեցի ես:— Այդ ինչպե՞ս է, որ մենակ եք:

Ես սպասում էի, որ նա դարձյալ կանտեսի իմ հարցումը և զարմացա, երբ իսկույն պատասխանեց,

— Եղբայրս ինձ որսաց քառասունուր ժամ չանցած, դրա մեջ ես մեղք չունեի: Նա ինձ խաղի բերեց գիշեր ժամանակ, երբ տախտակամածի վրա ոչ ոք չկար, բացի հերթապահներից: Որսորդներն ինձ դավաճանեցին: Նա նրանց խոստացավ ավելի խոշոր շահաբաժին: Ես անձամբ լսեցի նրա առաջարկությունը, որովհետև նա խոսում էր իմ ներկայությամբ: Բիարկե, որսորդները լքեցին ինձ: Եվ դա անսպասելի չէր: Մի խոսքով՝ ամբողջ անձնակազմը անցավ

նրա կողմը, և ես մեն-մենակ մնացի իմ նավի վրա: Այս անգամ էլ հաղթելու հերթը Մահինն էր: Դեհ, սրանք ընտանեկան հարցեր են:

— Բայց ինչպե՞ս եղավ, որ կայմերը ջախջախվեցին:

— Գնացեք այնտեղ,— ասաց նա ցույց տալով այն կողմը, որտեղ պետք է լինեին խելակայմի թոկերը,— և այդ կայմապարանները քննեցեք:

— Դանակով են կտրել...— Բացականչեցի ես:

— Ոչ ամբողջովին,— ծիծաղեց նա,— այդտեղ նուրբ աշխատանք է կատարվել: Նորից նայեցեք:

Ես նորից նայեցի: Կայմապարանները դանակով կտրել էին միայն այնքան, որ նրանք կայմերը պահեն մինչև քամու առաջին ուժեղ թափը:

— Խոհարարի գործն է,— կրկին ծիծաղեց Գայլ Լարսենը:— Ես գիտեմ, որ նա է արել, թեև նրան չեմ տեսել գործելու պահին: Այդպիսով նա մասամբ լուծեց իր վրեժը:

— Կեցցե՛ս, Մագրիջ,— գոչեցի ես:

— Այո, ես էլ նույնը ասացի, երբ կայմերն ու առագաստները տապալվեցին, բայց, իհարկե, նույնքան ուրախությամբ չասացի, որքան դուք:

— Իսկ դուք ի՞նչ էիք անում, երբ այս ամենը տեղի էր ունենում,— հարցրի ես:

— Անում էի ինչ հնարավոր էր, կարող եք չկասկածել, բայց դա բավական չէր այդպիսի պայմաններում:

Ես շուտ եկա, որպեսզի նորից գնեմ Մագրիջի կատարած գործը:

— Մի քիչ նստեմ ու արևի տակ տաքանամ,— լսեցի Լարսենի ձայնը:

Նրա ձայնի մեջ ֆիզիկական թուլության ինչ-որ երանգ, համարյա աննկատելի մի երանգ կար և դա այնքան տարօրինակ էր, որ ես արագ նայեցի նրան: Նա ձեռքի ջղային շարժումով շփում էր երեսը, կարծես ուզում էր այնտեղ կպած ինչ-որ սարդոստայն սրբել: Դա ինձ շփոթեցրեց: Այս ամենը այնքան անհամապատասխան էր իմ ճանաչած Լարսենի կերպարին:

— Ինչպե՞ս են ձեր գլխացավերը,— հարցրեցի ես:

— Դեռ շարունակում են տանջել,— եղավ նրա պատասխանը:— Ինձ թվում է՝ հիմա մի նոր նոպա է սկսվելու:

Նստած դիրքից վար սահելով, նա պառկեց տախտակամածին: Հետո մի կողմի վրա շուտ եկավ, գլուխը հենեց թևին և դաստակով աչքերը ծածկեց արևից: Ես զարմանքով դիտում էի նրան:

— Ահա ձեր առիթը ներկայացել է, Հեմփ,— ասաց նա:

— Չեմ հասկանում,— ստեցի ես, որովհետև լիովին հասկացել էի:

— Դե ոչինչ,— ասաց նա թույլ ձայնով, ըստ երևույթին, թմրությունը համակում էր նրան:— Ահա ընկել եմ ձեր ձեռքը, այն էլ ամենահարմար վայրում:

— Ես կուզենայի, որ այս վայրից հազարավոր մոդոններով հեռու լինեիք:

Գայլ Լարսենը քրքջաց ու այլևս չխոսեց: Նա անշարժ պառկած էր, երբ անցա նրա կողքով և իջա նավասենյակ: Այնտեղ բարձրացրի պահեստարան տանող անցքի կափարիչը և մի պահ տարակուսանքով նայեցի ներքևի մթության մեջ: Չէի համարձակվում վար իջնել: Եթե Լարսենի թմրությունը կեղծ է, ապա մկան պես ծուղակը կընկնեմ: Անաղմուկ սողոսկեցի նավասանդուղքի աստիճաններով և գաղտագողի նայեցի նրան: Նա պառկած էր այն դիրքով, որով թողել էի նրան: Նորից ետ գնացի, բայց պահեստարան իջնելուց առաջ նախագոյություն համար անցքի կափարիչը ներքև գցեցի: Ծայրահեղ դեպքում ծուղակը գոնե կափարիչ չէր ունենա: Բայց դա բոլորովին ավելորդ էր: Ես վերադարձա նավասենյակ, հետո բերելով ջեմ, պաքսիմատ, պահածո միս, մի խոսքով, այն ամենը, ինչ կարող էի փոխադրել, և անցքը կափարիչով փակեցի:

Նորից գաղտագողի նայելով ստուգեցի, որ Գայլ Լարսենը տեղից չի շարժվել: Նույն վայրկյանին գլխումս մի փայլուն գաղափար ծագեց: Մտա նավապետի խուցը և վերցրի նրա ատրճանակները: Դրանից հետո մնացած երեք խցիկներն էլ խուզարկեցի և համոզվելու համար դարձյալ մտա որսորդների ու նավաստիների խցերը, բայց ուրիշ զենք չգտա: Ապա խոհանոցից վերցրի միս ու բանջարեղեն կտրելու բոլոր սուր դանակները: Հիշելով Գայլ Լարսենի խոշոր, ծալովի դանակը, որ նա միշտ կրում էր իր վրա, մոտեցա նրան և սկսեցի հետը խոսել նախ մեղմ, ապա բարձր ձայնով: Նա ոչ մի շարժում չարեց: Կռացա և դանակը հանեցի գրպանից: Այժմ ավելի ազատ էի շնչում: Գայլ Լարսենը այլևս զենք չունեւր և չէր կարող ինձ հեռվեց խփել, այնինչ ես զինված լինելով, միշտ կարող էի նրան կանխել, եթե նա փորձեր փաթաթվել ինձ գործիլայի ահարկու բազուկներով:

Իմ ավարին ավելացնելով մի սրճաման ու մի թավա, նավասենյակի բուֆետից էլ վերցնելով ճենապակյա զանազան ամաններ, Գայլ Լարսենին թողեցի արևի տակ պառկած ու ցամաք իջա:

Մոդը տակավին քնած էր: Խարույկի կրակն արծարծեցի (մենք ձմեռվա համար դեռ խոհանոց չէինք սարքել) և մեծ եռանդով եփեցի նախաճաշը: Երբ նախաճաշի պաարաստությունը վերջանալու վրա էր, լսեցի, որ նա իր հյուղակում քայլում է և առավոտվա արդուզարդն անում: Ամեն ինչ արդեն պատրաստ էր ու սուրճը բաժակների մեջ լցված, երբ դուռը բացվեց, և Մոդը դուրս ելավ:

— Այդ արդեն չեղավ,— ողջունեց նա ինձ:— Դուք ինձ զրկում եք իմ իրավասություններից: Դուք համաձայնել էիք, որ ճաշ եփելը իմ իրավունքն է, իսկ հիմա . . .

— Միայն այս անգամ,— խնդրեցի ես:

— Լավ, պայմանով, որ այլևս չկրկնեք,— ժպտաց նա:— Իհարկե, եթե չեք ձանձրացել իմ եփած խղճուկ ճաշերից:

Ի մեծ ուրախություն ինձ, նա ոչ մի անգամ չնայեց ծովափի կողմը, և ես զվարթ գրույցով այնքան հաջողությամբ գրավեցի նրա ուշադրությունը, որ նա առանց նկատելու մեքենաբար

խմեց ճենապակյա բաժակում լցված սուրճը, կերավ տապակած կարտոֆիլը և սկսեց ջեմ քսել պաքսիմատի վրա: Բայց դա չէր կարող երկար տևել: Ես տեսա, թե ինչպես զարմանքը վրա հասավ: Առաջին հերթին Մոդը հայտաբերեց ճենապակյա ափսեն, որի միջից ուտում էր, ապա հայացքը զցեց ուտելիքների վրա և մեկը մյուսի հետևից նկատեց բոլոր մանրամասները: Հետո նայեց ինձ և դեմքը դանդաղ շրջեց դեպի ծովափ:

— Հե՛մֆրի,— գոչեց նա:

Եվ անանուն սարսափը նորից լցվեց նրա աչքերի մեջ:

— Մի՞թե նա է... — դողդողացին նրա շրթները:

Ես գլխով արեցի:

Գլուխ երեսուներեքերորդ

Ամբողջ օրն սպասում էինք, որ Գայլ Լարսենը ցամաք կիջնի: Ժամանակն անցնում էր հուզմունքի դժնդակ ապրումներով: Յուրաքանչյուր վայրկյան մեկս կամ մյուսս ակնկալությամբ նայում էր «Ուրվականի» կողմը: Բայց Գայլ Լարսենը չէր երևում: Նա չէր հայտնվում նույնիսկ տախտակամածի վրա:

— Թերևս, գլխացավի նույն շարունակվում է,— ասացի ես:— Երբ նրան թողեցի, նա պառկած էր հարթակի վրա: Գուցե այնտեղ էլ մնա ամբողջ գիշերը: Ուզում եմ գնալ և ստուգել:

Մոդը թախանձագին ինձ նայեց:

— Վախենալու ոչինչ չկա,— հավաստիացրի ես:— Ատրճանակները հետս եմ վերցնելու: Դուք արդեն գիտեք, որ նավի վրա եղած բոլոր զենքերը հավաքել եմ:

— Բայց նրա զենքերը հենց ձեռքերն են, նրա սարսափելի ձեռքերը,— առարկեց Մոդը:— Մի՛ գնացեք, խնդրում եմ, մի՛ գնացեք:

Նա աղերսանքով ձեռքս բռնեց, և նույն վայրկյանին զարկերակս սկսեց արագ տրոփել: Վստահ եմ, որ այդ պահին սերը լիովին արտացոլվեց իմ աչքերի մեջ: Միթե՛լի, պաշտելի էակ... Նա բառիս բուն իմաստով կլին էր, կառչող, աղերսող և արևի ու ցողի նման կենսունակություն հաղորդող իմ տղամարդկությանը, որին սնում էր նորատեսակ ուժի ավիշով: Ես նորից ցանկացա գրկել նրան, ինչպես ցանկացել էի և այն օրը, երբ գտնվում էինք ծովակատուների երամի մեջտեղը, բայց բանականությունս զսպեց ինձ:

— Ինձ վտանգի չեմ ենթարկի,— ասացի ես:— Կբավականանամ միայն գաղտագողի նայելով նավացուկի անկյունից:

Նա հուզմունքով սեղմեց ձեռքս և թողեց, որ գնամ: Բայց Գայլ Լարսենը նույն տեղում պառկած չէր: Նա, հավանորեն, իջել էր ներքև:

Այդ գիշերն էս ու Մողը հերթով պահակ կանգնեցինք և յուրաքանչյուրս քնեց միայն իր ազատ ժամերին, որովհետև հնարավոր չէր նախատեսել Գայլ Լարսենի անելիքը: Նրանից ամեն ինչ կարելի էր սպասել:

Հաջորդ երեք օրերին մենք մեկ բռնակից մյուսը սպասում էինք նրան, բայց նա չհայտնվեց:

— Նրա այդ գլխացավն՝ ըր, նոպանն՝ ըր,— ասաց Մողը չորրորդ օրվա հետմիջօրեին:— Գուցե նա ծանր հիվանդ է: Գուցե և մեռել է:

— Կամ մեռնում է,— ավելացրեց նա մի պահ լռությունից հետո, երբ տեսավ, որ չեմ պատասխանում:

— Ավելի լավ,— ասացի ես:

— Բայց մտածեցեք, Հեմֆրի, որ նա էլ վերջ ի վերջո մարդ է և մենակ է իր օրհասական ժամին:

— Թերևս,— ասացի ես:

— Այո, թերևս,— շարունակեց նա:— Որովհետև ստույգ ոչինչ չգիտենք: Բայց եթե նա իրոք մեռնում է, ապա սարսափելի կլինեք նրան այդ վիճակում թողնել: Ես ինձ երբեք չէի ների: Պետք է մի բան անել:

— Թերևս,— կրկնեցի ես:

Ներքուստ ժպտում էի տեսնելով, որ նրա կանացի հոգատարությունն այնքան անսահման է, որ տարածվում է անգամ Գայլ Լարսենի նման մի արարածի վրա: Ուրեմն նա որքա՛ն հոգատար պիտի լինեք դեպի ինձ, որին վախենում էր թողնել նույնիսկ գաղտագողի դիտելու նավացուկից:

Մողն այնքան նրբամիտ էր, որ կռահեց իմ լուռ մտքերը: Բայց նա ոչ միայն նրբամիտ էր, այլև սրտաբաց:

— Դուք պետք է նավ բարձրանաք, Հեմֆրի, և պարզեք դրությունը,— ասաց նա:— Իսկ եթե ուզում եք ինձ վրա ծիծաղել, ես դեմ չեմ և նախօրոք ներում եմ ձեզ:

Ես հլուությամբ վեր կացա և ուղղվեցի դեպի ծովափ:

— Միայն թե զգույշ եղեք,— գոչեց նա իմ հետևից:

Նավացուկ բարձրանալով՝ ես ձեռքով արեցի Մողին և ապա ցատկեցի տախտակամած: Երբ հասա նավասենյակ տանող սանդուղքի բացվածքին, ցած կռանալով կանչեցի Գայլ Լարսենին: Նա պատասխանեց և երբ բարձրանում էր սանդուղքով, ատրճանակիս հրահանը քաշեցի: Մեր ունեցած ամբողջ զրույցի ընթացքում ես ցուցադրական կերպով ձեռքումս պահեցի ատրճանակը, թեև Գայլ Լարսենը նույնիսկ ուշադրություն չդարձրեց դրան: Նա արտաքուստ տկար էր երևում, ինչպես նախորդ անգամ, բայց այժմ ավելի մռայլ էր ու լռակյաց: Ճիշտն ասած, չի կարելի զրույց անվանել այն մի քանի խոսքը, որ մենք փոխանակեցինք: Ես նրան չհարցրի, թե ինչու ցամաք չի իջել, ոչ էլ նա հարցրեց, թե ինչու նորից նավ չեմ եկել: Նա հայտնեց, թե գլխացավն արդեն անցել է և, այդպիսով, առանց խոսակցությունը երկարացնելու, թողի հեռացա:

Իմ զեկուցումը լսելով, Մոդը հանգստացավ, իսկ հետո, երբ խոհանոցի վերևում ծուխ երևաց, նա առավել ևս զվարթացավ: Հաջորդ երկու օրերի ընթացքում խոհանոցի ծխնելույզից հաճախ էր ծուխ բարձրանում և մի քանի անգամ էլ Գայլ Լարսենին նշմարեցինք նավահարթակի վրա: Բայց միայն այդքան: Գայլ Լարսենը ծովափ իջնելու ոչ մի փորձ չարեց: Մենք այդ ստույգ գիտեինք, քանի որ միշտ շարունակում էինք գիշերները փոխնիփոխ պահակություն անել: Սպասում էինք, որ նա մի որևէ բան անի, այսպես ասած՝ իր ձեռքը ցույց տա: Նրա անգործությունը մեզ շփոթեցնում ու մտահոգում էր:

Այսպես անցավ մի շաբաթ: Մեր ամբողջ ուշադրությունը գրավված էր Գայլ Լարսենով: Նրա ներկայությունը մեզ այնքան էր ճնշում, որ չէինք կարողանում զբաղվել մեր ծրագրած մանր գործերով:

Բայց մի շաբաթ հետո խոհանոցի ծուխը դադարեց և Գայլ Լարսենը այլևս չերևաց նավահարթակի վրա: Ես նկատեցի, որ Մոդը նորից սկսեց նրա մասին անհանգստանալ, թեև ամաչելուց կամ գուցե ինքնասիրությունից չէր կրկնում իր առաջարկությունը: Վերջ ի վերջո ինչո՞վ կարելի էր մեղադրել նրան: Այլասիրությունը խորապես արմատացած էր նրա հոգում, և նա կին էր: Անկախ դրանից, ես ինքս էլ մի տեսակ վատ էի զգում, մտածելով, որ այդ մարդը, որին փորձել էի սպանել, այժմ մեռնում է մեզանից մի քանի քայլ հեռու, բոլորովին մենակ: Լարսենը իրավացի էր: Իմ շրջապատի մարդկանց նախապաշարմունքները ինձնից ավելի ուժեղ էին: Այն փաստը, որ նրա ձեռքերը, ոտքերն ու մարմինը կերտված էին իմի նման, նրան օժտում էր այնպիսի իրավունքներով, որ չէի կարող անտեսել:

Ուստի չսպասեցի, որ Մոդն ինձ երկրորդ անգամ ուղարկի: Պատրվակելով, որ մեր ջեմի և խտացրած կաթի պաշարը նվազել է, հայտնեցի նրան, թե գնում եմ նավ: Նա տատանվեց և նույնիսկ փորձեց ինձ ետ պահել, մրմնջալով, թե դրանք այնքան էլ անհրաժեշտ չեն ու իմ գնալը պարտադիր չէ: Բայց, ինչպես որ սրանից առաջ կռահել էր լուռ մտքերս, այժմ ևս՝ կռահեց խոսքերիս իմաստը և հասկացավ, որ գնում եմ ոչ թե ջեմ ու խտացրած կաթ բերելու մտադրությամբ, այլ որպեսզի փարատեմ իր մտահոգությունը, որը չէր կարողացել թաքցնել:

Նավ բարձրանալուց հետո կոշիկներս հանեցի և գուլպայով անաղմուկ առաջացա դեպի խելամաս: Բայց այս անգամ սանդուղքի բացվածքից ձայն չտվի Գայլ Լարսենին, այլ զգուշությամբ ցած իջա աստիճաններով: Նավասենյակը դատարկ էր, իսկ նավապետի խցիկը տանող դուռը փակ: Սկզբում մտածեցի դուռը ծեծել, բայց հետո հիշեցի, թե ինչ պատրվակով եմ եկել և որոշեցի նախ այդ գործով զբաղվել: Պահեստարանի կափարիչը զգուշությամբ բարձրացնելով՝ առանց աղմուկի մի կողմ հրեցի: Բացի սննդամթերքից, հագուստեղենի պահարանը ևս գտնվում էր պահեստարանում: Հանգամանքից օգտվելով, վերցրի և փոխնորդ ձերմակեղեն:

Պահեստարանից նոր էի նավասենյակ բարձրացել, երբ՝ Գայլ Լարսենի խցիկից ձայներ լսվեցին: Ես կծկվելով՝ ականջ դրի: Նույն պահին դռան բռնակը շարժվեց: Ես բնագդաբար թաքնվեցի սեղանի հետև և ատրճանակս հանելով՝ հրահանր բարձրացրի: Դուռը բացվեց և խցիկից դուրս եկավ Գայլ Լարսենը: Ես երբեք չէի տեսել այնպիսի խոր հուսահատություն, ինչպիսին դրոշմված էր մարտունակ, հզոր ու անհաղթահարելի Գայլ Լարսենի դեմքին: Վշտից ձեռքերը գալարելով և բռնոնքները օդում բարձրացնելով՝ նա խոր հառաչեց: Հետո

բռունցքներից մեկը բանալով՝ ավիով աչքերը շփեց, կարծես ջանալով նրանց վրայից ինչ-որ անտեսանելի սարդոստայն սրբել:

— Աստվա՛ծ, աստվա՛ծ,— հառաչեց նա անհուն հուսահատությունից թրթռացող ձայնով, և սեղմած բռունցքները նորից վեր բարձրացրեց:

Դա սարսափելի էր: Ես ամբողջ մարմնով դողում էի, ողնաշարիս միջով սարսուռներ էին անցնում և ճակատս ողողված էր քրտինքով: Աշխարհում, թերևս, չկա ավելի ահավոր բան, քան ուժեղ մարդու տեսքը ծայրահեղ տկարության և ընկճվածության պահին:

Սակայն Գայլ Լարսենը իր արտասովոր կամքն ի գործ դնելով, նորից իշխեց իր ջղերի վրա: Դա կատարվեց հսկայական ճիգով: Նրա ամբողջ մարմինը ցնցվում էր լարվածությունից և թվում էր, թե նա կաթվածահար կտապալվի: Իրեն տիրապետելու համար թափած ջանքից՝ դեմքը ձգվեց ու ծամածռվեց, մինչև որ ուժասպառությունը դարձյալ ընկճեց նրան: Նա կրկին բռունցքները օդում բարձրացնելով հառաչեց և մի քանի անգամ ջղաձգորեն շնչելուց հետո, հանկարծ սկսեց հեծկլտալ: Վերջ ի վերջո նրան հաջողվեց իշխել իր վրա: Այդ ժամանակ ինձ թվաց, թե իմ առջև նորից կանգնած է հին Գայլ Լարսենը, թեև նրա շարժումները մատնում էին ինչ-որ տկարություն և անվճռականություն: Նա ուղղվեց դեպի նավասանդուղք և քայլեց այնպես կայտառ, ինչպես սովոր էի նրան տեսնել նախկինում, բայց նույնիսկ այդ քայլվածքի մեջ ինչ-որ տկարություն և անվճռականություն կար:

Հիմա արդեն սկսեցի վախենալ ինձ համար: Պահեստարանի բաց անցքը, որը գտնվում էր նրա ճանապարհի վրա, անկասկած, պիտի մատներ իմ ներկայությունը: Ես ինձ վրա զայրանում էի նրա համար, որ պիտի բռնվեմ վախկոտի նվաստացուցիչ դիրքում՝ սեղանի հետև կծկված: Քայց դեռ ժամանակ կար: Իսկույն վեր կացա և անզգուշաբար հանդուգն տեսք ընդունեցի: Նա ինձ վրա ուշադրություն չդարձրեց: Նա նույնիսկ չնկատեց բաց անցքը: Նախքան դրությունն ըմբռնելս կամ գործելու որևէ հնարավորություն ունենալս, ես տեսա, որ նրա մեկ ոտքն արդեն իջնում էր բաց անցքի մեջ, իսկ մյուսը կտրվում էր գետնից: Երբ իջնող ոտքն արդեն խորանում էր, հին Գայլ Լարսենը մեկ ակնթարթում վերակենդանացավ: Նա վագրի մկաններով անցքից դուրս քաշեց ընկնող մարմինը և ձեռքերը տարածելով՝ կրծքի ու փորի վրա փռվեց հատակին, անցքի մյուս կողմը: Հետո վեր քաշեց ոտքերը և շրջվեց մի կողմի վրա: Բայց շրջվելիս, մարմինը կպավ իմ բերած ջեմի ամաններին, շորերին ու անցքի կափարիչին:

Նրա դեմքի արտահայտությունից ըմբռնեցի, որ նա կռահել է: Բայց նախքան գուշակելս, թե ինչ է կռահել, նա կափարիչը տեղում ամրացնելով փակել էր պահեստարանի անցքը: Հիմա ամեն ինչ հասկացա: Նա կարծում էր, թե ես ներքևում եմ: Ես միաժամանակ հասկացա, որ նա կույր է, կույր է ինչպես չղջիկ: Սկսեցի հետևել նրան զգույշ շնչելով, որպեսզի չլսի: Նա շտապ ուղղվեց դեպի իր խցիկը: Նկատեցի, որ նրա ձեռքը մեկ մատնաչափով վրիպեց դռան բռնակից և ապա շոշափելով գտավ այն: Հիմա հարկավոր էր հանգամանքից օգտվել: Ոտքերիս մատների վրա քայլելով դուրս եկա նավասենյակից ու բարձրացա մինչև սանդուղքի ամենավերին աստիճանը: Լարսենը վերադարձավ մի ծանր արկղ քաշելով, և այն գետեղեց անցքի կափարիչին: Դրանով չբավականանալով նա մի ուրիշ արկղ էլ բերեց ու տեղավորեց առաջինի վրա: Հետո հավաքեց ջեմի ամաններն ու շորերը և դրեց սեղանին: Երբ նա սկսեց բարձրանալ սանդուղքով, ես ետ քաշվեցի ու անձայն մագլցեցի ձեղնախցիկի տանիքը:

Գայլ Լարսենը կանգ առավ սանդուղքի վրա և ձեռքերը հենեց անցքի եզրին: Նրա մարմինը միայն կիսով չափ էր անցքից դուրս: Նա անշարժ դիրքով նայում էր ինչ-որ մի կետի, աչքերը սևեռումն ու անթարթ: Ես գտնվում էի նրանից միայն հինգ ոտնաչափ հեռու, ուղիղ նրա հայացքի դեմ: Դա շատ խորհրդավոր էր: Այդ պահին ինձ զգում էի որպես մի անտեսանելի ուրվական: Սկսեցի ձեռքս ետ ու առաջ շարժել, բայց, իհարկե, նա չտեսավ: Սակայն երբ շարժվող ձեռքիս ստվերն ընկավ նրա դեմքին, իսկույն նկատեցի, որ նա զգաց այդ: Նրա դեմքը ձգվեց, կարծես փորձում էր վերլուծել ու ըմբռնել այդ նորօրինակ զգացողությունը: Նա հասկանում էր, որ ինքը հակազդում է ինչ-որ արտաքին երևույթի, որ իր զգացողությունն ընկալում է շրջապատում տեղի ունեցող ինչոր փոփոխություն, բայց չէր կարողանում ըմբռնել, թե ինչ էր դա: Երբ ստվերը նորից ընկավ նրա դեմքին, ես ձեռքս անշարժացրի: Լարսենն սկսեց գլուխը ետ ու առաջ թեքել և դեմքը մեկ արևին դարձնել, մեկ՝ ստվերին: Նա զգում էր ստվերը և ջանում այն հասկանալ փոփոխական տպավորությունների միջոցով:

Ես էլ, իմ հերթին, ջանում էի վերլուծել ու գտնել, թե նա ինչպես է գիտակցում ստվերի նման անշոշափելի մի երևույթի ներկայությունը: Եթե վնասվել էին միայն նրա ակնախնձորները կամ եթե տեսողության ջիղը բոլորովին չէր փչացել, ապա բացատրությունը պարզ կլիներ: Իսկ եթե նա բոլորովին կուրացել էր, այդ դեպքում միակ եզրակացությունը կլիներ այն, որ նրա զգայուն մաշկը կարողանում է որոշել արևի և ստվերի ջերմության տարբերությունը: Եվ կամ, ո՞վ գիտե, գուցե առասպելական վեցերորդ զգայարանն էր նրան հաղորդում մոտակա իրերի ներկայությունը:

Ստվերը որոշելու փորձից վերջապես հրաժարվելով, նա բարձրացավ տախտակամած և ուղղվեց դեպի առաջամաս, քայլելով այնքան արագ ու ինքնավստահ, որ ես պարզապես զարմացա: Այնուամենայնիվ, նրա քայլվածքում նորից զգացվում էր կույրերին հատուկ անվճռականությունը: Հիմա ինձ արդեն հայտնի էր դրա պատճառը: Վշտախառն զվարճությամբ նկատեցի, որ նա գտել է նավագրուկի մոտ հանածու կոշիկները և այժմ դրանք հետը տանում է խոհանոց: Ես դիտեցի, թե ինչպես նա կրակ վառեց և սկսեց կերակուր եփել իր համար: Հետո գնացի նավասենյակ, ջեմով ամաններն ու ձերմակեղենը վերցրի, նորից անցա խոհանոցի կողքով, ծովափ իջա և ոտաբոբիկ գնացի Մոդի մոտ, որպեսզի նրան հայտնեմ անցած-դարձածի մասին:

Գլուխ երեսունչորսերորդ

— Ափսոս, որ «Ուրվականի» կայմերը ջախջախված են, այլապես մենք կկարողանայինք նրան ճամփա հանել ու հեռանալ այստեղից: Ի՞նչ եք կարծում, Հեմֆրի:

Ես խանդավառությունից ոտքի ցատկեցի:

— Ո՞վ է իմանում, գուցե և հնարավոր է,— ասացի ես, անցուդարձ անելով:

Մոդի աչքերը, իմ շարժումներին հետևելով, փայլում էին հույսով: Նա այնքա՛ն հավատ ուներ դեպի ինձ... Այս միտքը մեծապես ավելացրեց իմ ուժը: Եվ ես հիշեցի Միշլեի խոսքերը. «Կինը տղամարդու համար այն է, ինչ երկիրն էր իր առասպելական որդու համար: Բավական է, որ գետնին ընկնելով նա կնոջ կուրծքը համբուրի, որպեսզի նորից գորանա»: Հիմա նոր հասկանում էի այս խոսքերի զարմանալի ճշմարտությունը: Ոչ միայն հասկանում, այլև զգում

ու ապրում էի այն: Մողը ինձ համար այդ ամենն էր՝ ուժի ու քաջության անսպառ աղբյուրը: Բավական է, որ նրան նայեմ կամ մտածեմ նրա մասին, որպեսզի նորից ինձ զորավոր զգամ:

— Հնարավոր է գլուխ բերել,— բարձրաձայն մտածում էի:— Այն, ինչ ուրիշներն արել են, ես էլ կարող եմ անել: Իսկ եթե մինչև հիմա այսպիսի բան չեն արել, միևնույն է, ես ինքս կանեմ:

— Ի՞նչը: Ի սեր աստծո, ինձ մի տանջեք: Ի՞նչը կարող եք անել,— հարցրեց Մողը:

— Մենք,— ուղղեցի ես,— մենք կարող ենք անել. . . Այսինքն՝ «Ուրվականի» կայմերը վերականգնել և առագաստ պարզելով հեռանալ այստեղից:

— Հեմֆրի,— բացականչեց նա:

Ես ինձ այնքան հպարտ զգացի իմ մտահղացմամբ, որ կարծես ասածս արդեն կատարված փաստ կլիներ:

— Բայց ինչպե՞ս կարելի է այդ իրագործել,— հարցրեց նա:

— Չգիտեմ,— պատասխանեցի ես:— Միայն այն գիտեմ, որ հիմա ամեն ինչ կարող եմ անել:

Ես հպարտությամբ ժպտացի, գուցե չափազանց հպարտությամբ, որովհետև նա հայացքը խոնարհեց և միառժամանակ լուռ մնաց:

— Բայց նավապետ Լարսենը այստեղ է,— առարկեց նա ի վերջո:

— Կո՛ւյր և անօգնակա՛ն,— շտապ պատասխանեցի ես, նրա գոյության գաղափարն ավլելով որպես հարդի շյուղ:

— Հապա նրա ահարկու ձեռքե՞րը: Դուք ինքներդ պատմեցիք, թե նա ինչպես դուրս նետվեց պահեստարանի անցքից:

— Պատմեցի նաև, թե ինչպես սողոսկելով խուսափեցի նրանից,— եղավ իմ զվարթ պատասխանը:

— Եվ այդ առթիվ ձեր կոշիկները կորցրիք. . .

— Մի՞թե կարծում եք, թե կոշիկներս էլ կարող էին Գայլ Լարսենից խուսափել, երբ նրանց մեջ չկային իմ ոտքերը. . .

Մենք ծիծաղեցինք և ապա սկսեցինք լրջորեն խորհրդակցել, թե ինչ ձևով կարելի է «Ուրվականի» կայմերը վերականգնել ու վերադառնալ մեր աշխարհը: Ես վերհիշեցի, թեև որոշ դժվարությամբ, ֆիզիկայի դպրոցական դասերս: Բացի այդ գիտելիքներից, վերջին մի քանի ամիսների ընթացքում բավական փորձ էի կուտակել և արդեն գիտեի մեքենաների միջոցով ծանրություններ բարձրացնելու ձևերը: Բայց պետք է խոստովանեմ, որ երբ «Ուրվականի» մոտ գնացինք, որպեսզի մեր կատարելիք գործն ավելի մոտից քննենք, ես համարյա հուսահատվեցի, տեսնելով ջրի մեջ կախված հսկա կայմերը: Ինչի՞ց սկսել: Եթե գոնե մեկ կայմ կանգուն լիներ, ապա կկարողանայինք նրա վրա ամրացնել ամբարձիչ ծիծեռնիկներն ու թռկերը: Բայց այդ մեկն էլ չկար: Եվ ես մտածեցի, մի՞թե մարդ կարող է իրեն

օդ քարձրացնել իր հագած կոշիկի կապերը վեր քաշելով: Ես հասկանում էի լծակի օրենքը, բայց որտեղի՞ց հենակետ գտնել:

Միջնակայմը մոտ վաթսուհինգ ոտնաչափ երկարություն ուներ, և նրա հիմքը (կոտրված մասում) ուներ տասնհինգ մատնաչափ տրամագիծ: Իմ հաշվով նա պետք է կշռեր առնվազն երեք հազար ֆունտ: Իսկ առաջակայմը ավելի մեծ տրամագիծ ուներ և, հավանորեն, կկշռեր ոչ պակաս, քան երեք հազար հինգ հարյուր ֆունտ: Որտեղի՞ց սկսել: Մոդը լուռ կանգնած էր կողքիս, և ես որոճում էի մի հնարանքի մասին, որին նավաստիները կոչում են «երկոտանի»: Թեև «երկոտանին» վաղուց հայտնի էր նավաստիներին, բայց Ջանքի կղզում ես այն հնարեցի ինքնուրույն կերպով: Երկու գերանի ծայրերն իրար կապելով, ապա դրանք շրջված «V»-ի դիրքով կանգնեցնելով ու տախտակամածին ամրացնելով՝ ես կունենայի բավականին բարձր մի հենակետ, որին կկարողանայի ամրացնել ամբարձիչ ծիծեռնիկն ու թռկերը:

Անհրաժեշտության դեպքում հնարավոր էր այդ ծիծեռնիկին միացնել մի երկրորդը: Բացի դրանից, մենք ձեռքի տակ ունեինք խարիսխ բարձրացնող ճախարակ, որն ամրացված էր նավի քթին:

Մոդը կռահեց, որ ես ինչ-որ լուծում եմ գտել, և աչքերը շողացին ջերմ համակրությամբ:

— Ի՞նչ եք մտադիր անել,— հարցրեց նա:

— Ազատվել այդ խառնակույտից,— պատասխանեցի ես, ցույց տալով նավեզրից կախ ընկած և իրար մեջ խճճված թռկերը, կայմերն ու առագաստները:

Օ՛հ, ինչքա՛ն վճռական ու մեծադորոդ հնչեցին այդ բառերն իմ ականջին: «Ազատվել այդ խառնակույտից...»: Ո՞վ կարող էր երևակայել, որ մի քանի ամիս առաջվա Հեմֆրի Վան-Վելդենը այսօր պիտի արտաբերեր այդպիսի հյութեղ մի նախադասություն:

Ըստ երևույթին, իմ կեցվածքի ու ձայնի մեջ ինչ-որ մեկնորամատիկ բան կար, որովհետև տեսա, որ Մոդը ժպտաց: Նա շատ արագ էր նկատում ծիծաղելին ու արտառողք և անսխալականորեն զգում կամ տեսնում էր կեղծիքի, չափազանցության կամ պարծենկոտության նույնիսկ ամենաչնչին նրբերանգները: Այդ խորաթափանցության և հավասարակշռության շնորհիվ էր, որ նրա ստեղծագործությունը դարձել էր արժեքավոր, իսկ ինքը՝ հանրաճանաչ: Հումորի զգացում և արտահայտչական ուժ ունեցող լուրջ քննադատը անպայման իրեն լսել կտա: Եվ Մոդը պարտադրել էր, որ իրեն լսեն: Հումորի զգացումը նրա համար այն նշանակությունն ուներ, ինչ չափի զգացումը՝ արվեստագետի համար:

— Ինձ թվում է, թե այդ արտահայտությունը կարդացել եմ ինչ-որ տեղ, գրքերում,— ասաց նա զվարթությամբ:

Ինքս էլ չափի զգացում ունեի: Այդ ակնարկությունը հանկարծ ինձ գլորեց առաջնորդի տիրական բարձունքից նվաստացուցիչ շփոթության մեջ, մի վիճակ, որն առնվազն արգահատելի էր:

Մոդը արագ շարժումով ձեռքը մեկնեց ինձ:

— Ներողություն,— ասաց նա:

— Կարիք չկա,— պատասխանեցի ես, գրեթե շնչակտուր:— Դա օգտակար դաս է: Իմ մեջ տղայական շատ գծեր կան դեռ: Բայց այս ամենը դատարկ բաներ են: Մեր ամենաառաջին գործն է, կրկնում եմ, տառացիորեն ազատվել այդ խառնակույտից: Եթե ուզում եք՝ միասին մակույկով գնանք նավի մոտ և ջանանք կծիկները քանդել:

— «Եվ դանակն ատամներով սեղմած՝ կազատվենք այդ խառնակույտից»,— մեջբերեց նա, և մենք մինչև երեկո ուրախ-զվարթ աշխատեցինք:

Մոդի պարտականությունն էր մակույկն անշարժ պահել, իսկ իմը՝ հանգույցներն արձակել: Եվ ինչպիսի՜ հանգույցներ... ամեն տեսակի թուկեր ու պարաններ իրար խառնված՝ ծփում էին ջրի երեսին, իսկ ալիքներն ավելի ու ավելի էին խճճում դրանք: Ես ջանացի որքան հնարավոր է քիչ կտրատել, դրա համար էլ հաճախ ստիպված էի երկար պարանները քաշել կամ անցկացնել կայմերի ու կայմաթների արանքից, տակից կամ վրայից, քանդել խճճված թուկերն ու կայմապարանները, դրանք բոլորակաձև դարսել մակույկի հատակին, որպեսզի այդ ամբողջ բոլորակը անցկացնեմ թուլացրած մի նոր օղակի միջով: Այս աշխատանքից մինչև ոսկորներս թրջվեցի:

Հարկավոր եղավ առագաստները մի քիչ կտրատել, բայց ջրի մեջ ծանրացած առագաստալաթը ուժեղ դիմադրում էր և ինձ ծայրաստիճան հոգնեցնում: Այնուամենայնիվ, ինձ հաջողվեց մուրը չկոխած դրանք բոլորը փռել ծովափին: Վերադարձանք ընթրելու, երբ բոլորովին ուժասպառ էինք եղել: Իրականում բավական մեծ գործ էր արված, թեև արդյունքը արտաքուստ աննշան էր երևում:

Հաջորդ առավոտյան, Մոդին որպես օգնական վերցնելով, ես մտա «Ուրվականի» ամբարը, որպեսզի ջարդված կայմերի ծայրերը դուրս մղելով, կայմախոռոչներն ազատեմ: Հազիվ էինք սկսել աշխատանքը, երբ իմ տապարի հանած աղմուկը Գայլ Լարսենին տախտակամած բերեց:

— Հե՛յ, ներքևում գտնվողնե՛ր,— գոչեց նա ամբարի բաց անցքից:

Նրա ձայնը լսելով, Մոդն իսկույն ինձ մոտեցավ, կարծես պաշտպանվելու համար, և մի ձեռքն իմ բազուկի վրա պահեց հետագա զրույցի ամբողջ տևողության ընթացքում:

— Հե՛յ, վերևում գտնվո՛ղ,— պատասխանեցի ես,— բարի լո՛ւյս:

— Ի՞նչ եք անում այդտեղ,— հարցրեց նա:— Փորձում եք նա՞վս ընկղմել:

— Ընդհակառակը, նորոգում եմ ձեր նավը,— պատասխանեցի ես:

— Իսկ ի՞նչն եք նորոգում,— հարցրեց նա զարմացած:

— Ես պատրաստություն եմ տեսնում, որպեսզի կայմերը նորից կանգնեցնեմ,— պատասխանեցի անհոգությամբ, կարծես դա աշխարհի ամենահեշտ գործողությունը լիներ:

— Ինչպես երևում է, վերջապես կանգնում եք ձեր սեփական ոտքերի վրա, Հեմփ,— ասաց նա և հետո միառժամանակ լռություն պահեց:

— Բայց լսե՛ք, Հեմփ,— կանչեց նա,— դուք չեք կարող այդ անել:

— Ոչ միայն կարող եմ,— պատասխանեցի ես,— այլև արդեն իսկ անում եմ:

— Բայց սա իմ նավն է, իմ մասնավոր սեփականությունը: Ես կարող եմ ձեզ արգելել:

— Դուք մոռանում եք, որ այլևս թթխմորի ամենախոշոր կտորը չեք: Այդ այդպես էր անցյալում, երբ դուք կարող էիք, ձեր սիրած խոսքերով ասած՝ ինձ ուտել: Բայց դուք արդեն փոքրացել եք և հիմա ե՛ս կարող եմ ձեզ ուտել: Ձեր թթխմորը հնացել է:

Նա արձակեց մի կարճ, տհաճ քրքիջ.

— Տեսնում եմ, որ իմ փիլիսոփայությունը իմ դեմ էք ուղղում: Բայց չսխալվեք ինձ թերագնահատելով: Ես ձեզ զգուշացնում եմ հենց ձեր լավության համար:

— Այդ երբվանի՞ց է, որ մարդասեր եք դարձել,— հարցրեցի ես:— Խոստովանեցեք, որ իմ լավության համար ինձ զգուշացնելով՝ շատ անհետևողական եք վարվում:

Նա անտեսեց իմ հեզմանքը և ասաց.

— Իսկ եթե հիմա կափարիչը փակե՞մ . . . Այս անգամ չեք կարող ինձ խաղի բերել, ինչպես այդ արեցիք անցյալ անգամ, պահեստարանում:

— Գայլ Լարսե՛ն,— ասացի ես խստությամբ և առաջին անգամ նրան կոչելով այդ քաջածանոթ մակդիրով,— ես անընդունակ եմ սպանելու անպաշտպան ու չդիմադրող մի մարդու: Դուք ինքներդ այդ ապացուցել եք ի մեծ գոհունակություն ինձ ու ձեզ: Բայց ես հիմա նախազգուշացնում եմ (և դա ոչ այնքան ձեր լավության համար, որքան՝ իմ), որ ձեզ վայրկենապես կսպանեմ, եթե որևէ թշնամական արարք փորձեք: Ես կարող եմ այդ անել հենց իմ կանգնած տեղից: Ուստի, եթե իրոք մտադրվել եք, ապա փորձեցեք փակել անցքը:

— Այնուամենայնիվ, ես ձեզ վճռականապես արգելում եմ ձեռք տալ իմ նավին:

— Զարմանալի մարդ եք,— առարկեցի ես,— դուք հայտարարում եք, որ այս նավը ձերն է և կարծում եք, թե այդ փաստը ձեզ օժտում է բարոյական իրավունքներով: Սակայն դուք երբեք նկատի չեք ունեցել ուրիշների բարոյական իրավունքները: Ուրեմն ինչո՞ւ եք կարծում, որ ես հաշվի պետք է առնեմ ձեր բարոյական իրավունքները:

Ես եկա կանգնեցի անցքի ճիշտ ներքևը, որպեսզի նրան ավելի մոտից տեսնեմ: Նրա դեմքը այժմ բոլորովին տարբեր էր նրանից, որը վերջին անգամ դիտել էի գաղտագողի: Այն հիմա զուրկ էր արտահայտությունից, իսկ անթարթ ու սևեռուն աչքերն ավելի էին շեշտում այդ հանգամանքը: Ուղղակի տհաճ էր դիտել այդ դեմքը:

— Նույնիսկ ամենախղճուկ էակը, անգա՛մ Հեմփի պես մեկը հիմա նայում է ինձ առանց երկյուղի,— ասաց նա դառն հեզմանքով: Բայց այդ հեզմանքը միայն ձայնի մեջ էր, դեմքը զուրկ էր արտահայտությունից:

— Ինչպե՛ս եք, միսս Բրուստեր,— հանկարծ հարցրեց նա մի կարճ լռությունից հետո:

Ես ցնցվեցի: Մողը ոչ մի ձայն չէր հանել, նույնիսկ չէր շարժվել: Արդյո՞ք տեսողության որևէ նշույլ դեռ մնացել էր նրա աչքերում: Եվ կամ արդյո՞ք նրա տեսողությունը սկսել էր վերականգնվել:

— Բարև ձեզ, նավապետ Լարսեն,— պատասխանեց Մոդը։— Ասացեք խնդրեմ, ինչպե՞ս իմացաք, որ ես այստեղ եմ։

— Ձեր շնչառությունը լսեցի։ Ի դեպ, Հեմփը առաջադիմում է։ Դուք այդպես չե՞ք կարծում։

— Չգիտեմ,— ասաց Մոդը և ժպտալով նայեց ինձ։ Ես նրան երբեք այլ կերպ չեմ տեսել։

— Դուք պետք է նրան առաջ տեսնեիք։

— Առաջադիմությունը կատարվել է շնորհիվ Գայլ Լարսենի տված դեղերի, այն էլ խոշոր դոզաներով,— մրմնջացի ես։— Դրանք ընդունել եմ ճաշերից առաջ և հետո։

— Նորից կրկնում եմ, Հեմփ,— ասաց նա սպառնազին,— հանգիստ թողեք իմ նավը։

— Բայց մի՞թե դուք չեք ուզում այստեղից մեզ հետ հեռանալ,— հարցրեցի թերահավատությամբ։

— Ո՛չ,— եղավ պատասխանը։— Ես ուզում եմ այստեղ մեռնել։

— Իսկ մենք չենք ուզում,— վճռականորեն եզրափակեցի ես և տապարը վերցնելով վերսկսեցի աշխատանքը։

Գլուխ երեսունհինգերորդ

Հաջորդ օրը, երբ կայմախոռոչները մաքրված էին և ամեն ինչ պատրաստ էր, մենք ցած իջանք, որպեսզի երկու վերնակայմերը նավ փոխադրենք։ Նրանցից մեկը ավելի քան երեսուն ոտնաչափ երկարություն ուներ, իսկ մյուսը՝ մոտավորապես երեսուն։ Ես մտադրվել էի այս երկու կայմերից պատրաստել երկոտանին։ Բայց դա բավականին դժվար աշխատանք էր։ Թոկի մի ծայրն ամրացնելով խարիսխ բարձրացնող ճախարակին, մյուս ծայրն էլ կայմի կոթին, սկսեցի պտտեցնել ճախարակի բռնակը։ Մոդը հետևում էր, որ թոկը դուրս չսահի թմբկազևանից և միաժամանակ թոկի հավաքված մասը փաթաթելով՝ դարսում էր։

Մենք զարմացանք, որ կայմը բարձրանում էր այդպիսի հեշտությամբ։ Ճախարակը կատարելագործված կովաններ ուներ և դա մեծապես ավելացնում էր նրա ամբարձիչ կարողությունը։ Բայց, իհարկե, այն, ինչ շահում էինք ուժի կողմից, կորցնում էինք տարածության տեսակետից։ Որքան անգամ որ ճախարակն ավելացնում էր իմ ուժը, նույնքան անգամ նա ավելացնում էր բարձրացած պարանի երկարությունը։ Պարանը, հետզհետե ձգվելով, ավելի դանդաղ էր վեր քաշվում, և որքան ավելի էր կայմը ջրից բարձրանում, այնքան ավելի դժվար էր պտտվում ճախարակի բռնակը։

Բայց երբ կայմի կոթը հավասարվեց նավաբազրիքին, աշխատանքը կանգ առավ։

— Ինչպե՞ս գլխի չընկա սկզբից...— գոչեցի նեղսրտությամբ։— Հիմա ամեն ինչ պետք է նորից սկսել։

— Գուցե հարկավոր է պարանը կայմի մեջտեղում կապել,— խորհուրդ տվեց Մոդը։

— Հենց այդպես էլ հարկավոր էր անել,— պատասխանեցի ծայրաստիճան դժգոհ ինձանից:

Պարանը թուլացնելով՝ կայմը նորից իջեցրի ջուրը և այս անգամ պարանի ծայրն ամրացրի կայմաթուկից բավական հեռու: Մեկ ժամ աշխատելով և երբեմն-երբեմն հանգստանալով՝ կայմը բարձրացրի մինչև մի որոշ կետ, որից ավելին այլևս չկարողացա: Կայմի կոթը հիմա նավաբազրիքից ութ ոտնաչափ բարձր էր, բայց կայմը նավ փոխադրելը՝ նախորդ անգամվա պես անհնար: Նստեցի ու սկսեցի մտածել որևէ լուծում գտնելու համար: Դա երկար չքաշեց: Ուրախությամբ ոտքի թռա:

— Գտա՛, գտա՛,— գոչեցի ես:— Պարանը պետք է ամրացնել ծանրության կենտրոնում: Այն, ինչ կսովորենք այս փորձից, կկիրառենք նաև մնացած կայմերը նավ բարձրացնելու ժամանակ:

Դարձյալ կայմը ջուրը իջեցրի և ամբողջ աշխատանքը նորից սկսեցի: Բայց ծանրության կենտրոնը ճիշտ չէի հաշվել և երբ կայմը քաշեցի վեր, գագաթն ավելի վերև բարձրացավ, քան կոթը: Մողը հուսահատության մատնվեց, բայց ես ծիծաղեցի և ասացի, որ այդպես էլ կարելի է գործը գլուխ բերել:

Այնուհետև Մողին բացատրեցի, թե ինչպես պետք է պտտել ճախարակի բռնակը և պատվիրեցի հրամանս լսելուն պես իսկույն թուլացնել պարանը: Ապա երկու ձեռքով կայմը բռնեցի ու ջանացի օդում հավասարակշռել ու ներս քաշել նավաբազրիքի վրայով: Երբ ինձ թվաց, թե ամեն ինչ կարգին է, Մողին հրամայեցի պարանը թուլացնել: Բայց կայմը, հակառակ իմ ճիգերին, դուրս թեքվելով, նորից ջուրն ընկավ: Ես դարձյալ այն բարձրացրի առաջվա դիրքին: Այս անգամ մի նոր գաղափար հղացա: Ես հիշեցի մեկ և զույգ ծիծեռնիկով ամբարձիչ փոքր հարմարանքը և այն բերեցի առաջամաս:

Ամբարձիչը նոր էի զետեղել կայմագլխի և նավաբազրիքի միջև, երբ Գայլ Լարսենը հայտնվեց: Մենք իրար բարևեցինք, միայն այդքան: Նա նստեց բազրիքի վրա, մեզնից մի քիչ հեռու, և քանի որ ոչինչ չէր տեսնում, ջանաց ականջով հետևել աշխատանքին:

Երբ Մողն իմ ազդանշանի համաձայն նորից թուլացրեց պարանը, ես ամբարձիչի թուկը կապեցի կայմագլխին ու սկսեցի քաշել: Կայմը դանդաղ պտտվեց, մինչև որ ուղիղ անկյուն կազմեց բազրիքի հետ: Այդ ժամանակ զարմանքով նկատեցի, որ բնավ կարիք չկար պարանը թուլացնելու: Ընդհակառակն, հարկավոր էր այն ձգել: Ճախարակի բռնակը պտտեցնելով կայմը մի քիչ էլ բարձրացրի և սկսեցի կամաց-կամաց ներս քաշել: Կայմագլուխը հետզհետե վար հակվելով, ի վերջո, կպավ տախտակամածին և շարունակեց այդպես սահել, մինչև որ կայմն իր ամբողջ երկայնքով պառկեց հատակին:

Ես նայեցի ժամացույցիս: Ժամը տասներկունսն էր: Մեջքս ուժեղ ցավում էր, և չափազանց հոգնած ու քաղցած էի: Մինչև կեսօր կատարած մեր ամբողջ աշխատանքի արդյունքը տախտակամածի վրա փոված այդ միակ կայմն էր: Այդ ժամանակ միայն լրիվ պատկերացում ունեցա մեր առջև ծառացող աշխատանքի մասին: Բայց ես սովորում էի, ձեռք էի բերում նոր գիտելիքներ: Կեսօրից հետո գործը ավելի լավ կընթանա, մտածեցի ես: Եվ այդպես էլ եղավ:

Ախորժակով ճաշելուց և կազդուրվելուց հետո, ժամը մեկին վերադարձանք աշխատանքի: Կես ժամ չանցած, արդեն նավ էինք բարձրացրել երկրորդ վերնակայմը, և ես սկսել էի երկոտանին կառուցել: Երկու կայմերի գլուխներն իրար կապելիս՝ հաշվի առա նրանց

երկայնության տարբերությունը, և մեկի գլուխը մի քիչ ավելի բարձր պահեցի: Հետո միացման կետում ամրացրի զույգ ծիծեռնիկով թոկասարքը, որին միացրի մեկ ծիծեռնկովը: Այսպիսով ունեցա մի ամբարձիչ երկոտանի: Որպեսզի նրա ոտքերը չսահեն, տախտակամածի վրա մեխեցի հաստ շերտաձողեր: Երբ ամեն ինչ պատրաստ էր, երկոտանու գագաթը պարանով կապեցի նավացուկի ճախարակին: Ես սկսել էի մեծ հավատ ունենալ դեպի այդ ճախարակը, որովհետև նրա ամբարձիչ կարողությունը բավականին նշանակալից էր: Մոդը, ինչպես միշտ, հետևեց, որ պարանը թմբկազանից դուրս չնետվի, իսկ ես պտտեցրի ճախարակի բռնակը: Երկոտանին կանգնեց ոտքերի վրա:

Բայց մեկեն հիշեցի, որ մոռացել եմ կայմակալ պարանը օգտագործել: Դրա պատճառով ստիպված եղա երկու անգամ մագլցել երկոտանու գագաթը: Վերջապես ինձ հաջողվեց կայմակալ պարանով երկոտանին կապել նավի աջ ու ձախ եզրի բազրիքներին, ցուկին ու խելին: Երբ այս աշխատանքն ավարտվեց, մութն արդեն կոխել էր: Գայլ Լարսենը, որն ամբողջ ժամանակամիջոցում լսողությամբ հետևում էր առանց բերանը բացելու, վեր կենալով, գնաց խոհանոց և սկսեց իր ընթրիքը պատրաստել: Մեջքս այնքան էր փայտացել, որ ճիգով ու ցավով հազիվ ուղղվեցի: Ես հպարտությամբ սկսեցի դիտել իմ կատարած գործը: Այն խոստանում էր լավ արդյունքներ: Ինչպես որ երեխան ուզում է իր նոր խաղալիքը փորձել, այնպես էլ ես բռնկվել էի երկոտանիով մի որևէ բան բարձրացնելու ցանկությամբ:

— Ափսո՛ւ, շատ ուշ է,— ասացի ես:— Շատ կուզենայի տեսնել, թե ինչպես է աշխատում:

— Այդքան անկուշտ մի՛ եղեք, Հեմֆրի,— հանդիմանեց Մոդը:— Մի՛ մոռացեք, որ վաղն էլ աշխատանք կա, իսկ դուք հիմա այնքան հոգնած եք, որ հազիվ կարողանում եք ոտքի վրա կանգնել:

— Հապա դո՞ւք,— ասացի ես սրտաբուխ հպարտությամբ:— Պետք է որ շատ հոգնած լինեք: Դուք արիաբար ծանր աշխատանք կատարեցիք: Ես հպարտ եմ ձեզնով, Մոդ:

— Իսկ ես կրկնակի հպարտ եմ ձեզնով և շատ ավելի հիմք ունեմ դրա համար,— ասաց նա և ինչ-որ անբացատրելի արտահայտությամբ ուղիղ նայեց աչքերիս մեջ: Այդ պահին նրա աչքերում շողշողաց նորօրինակ մի փայլ, որպիսին ես առաջ երբեք չէի տեսել և որը, չգիտեմ ինչու, ինձ համակեց անհուն բերկրանքով: Նա աչքերը խոնարհեց և, երբ հետո նորից բարձրացրեց, նրանք արդեն ծիծաղում էին:

— Եթե մեր ծանոթներն այս բուպեիս մեզ տեսնեին և դիտեին...— ասաց նա:— Դուք երբևէ մտածե՞լ եք, թե ինչ արտառոց տեսք ենք ստացել:

— Այո, հաճախ մտածել եմ ձեր տեսքի մասին,— ասացի ես, մտաբերելով նրա աչքերում իմ տեսած տարօրինակ փայլը և միաժամանակ զարմանալով, թե ինչու նա հանկարծ փոխեց խոսակցության նյութը:

— Իսկ ինչի՞նչ եմ նման, ասացեք խնդրեմ:

— Գուցե խրտվիլակի,— պատասխանեցի ես:— Նայեցեք, օրինակ, ձեր փեշի ճմրթած քղանցքին, նայեցեք այդ եռանկյունաձև պատովածքներին, կեղտոտված վերնաշապկին... Կարիք չկա Շերլոկ Հոլմս լինելու՝ գուշակելու համար, որ բացօթյա խարույկի վրա դուք ճաշ

եք եփում և ծովակատվի ճարպ հալեցնում: Եվ ի լրումն ամենի՝ այդ գդակը . . . կարելի՞ է պատկերացնել, որ դուք այն կինն եք, որը գրել է «Հանդուրժված համբույրը»:

Նա կեղծ հանդիսավորությամբ գլուխ տալով ասաց.

— Իսկ ինչ վերաբերում է ձեզ, սրբ . . .

Մենք մոտ հինգ բռպե կատակաբանեցինք, բայց այդ կատակների մեջ կար ինչ-որ լրջություն, որը չէի կարող չկապակցել այն տարօրինակ ու ակնթարթային արտահայտության հետ, որ տեսել էի նրա աչքերում: Ի՞նչ էր դա: Արդյո՞ք մեր աչքերը խոսում էին անկախ մեր կամքից: Գիտեմ, որ իմ աչքերը մեկից ավելի անգամներ խոսել են, սակայն ես զգացել և իսկույն սանձել եմ մեղանչող աչքերս: Բայց մի՞թե Մոդը նկատել ու հասկացել է նրանց աղաղակող կանչը: Արդյո՞ք նրա աչքերը քիչ առաջ արձագանքում էին այդ կանչին: Այլապես ինչո՞վ բացատրել աչքերի այդ արտահայտությունը, այդ կայծկլտող լույսը և դրա հետ մեկտեղ ինչ-որ այլ բան, որը դժվար է բառերով նկարագրել: Այնուամենայնիվ, կարող եմ սխալված լինել: Դա անհնարին է, բացի այդ, ես շատ քիչ հմ հասկանում աչքերի լեզուն: Ես պարզապես զրքասեր Հեմֆրի Վան-Վեյդենն եմ և հիմա ընկել եմ սիրո ցանցի մեջ: Միթե, սպասել, սիրվելու արժանանալ ահա ինձ համար ամենամեծ երանությունը: Մեր արտաքին տեսքի մասին կատակելով հանդերձ, ես շարունակեցի այս հարցերի մասին մտածել, մինչև որ ի վերջո ծովափ հասանք, և այնտեղ ուրիշ մտքեր զբաղեցրին ինձ:

Ինչ վատ է, որ ամբողջ օրը աշխատելուց և հոգնելուց հետո գիշերը իրավունք չունենք առանց ընդմիջման քնելու,— գանգատվեցի ես, երբ ընթրիքը վերջացրինք:

— Բայց հիմա այլևս վտանգ չկա,— ասաց Մոդը:— Ումի՞ց պիտի վախենանք, մի կույր մարդո՞ւց:

— Երբեք չեմ կարող վստահել այդ մարդուն, առավել ևս հիմա, երբ կույր է,— պատասխանեցի ես:— Անօգնական վիճակը նրան ավելի կչարացնի, քան երբևէ: Բայց ես գիտեմ, թե ինչ պիտի անեմ: Վաղն իմ առաջին գործը կլինի նավը հեռացնել ափից և փոքր խարիսխը գցել: Դրանից հետո, երբ երեկոները մակույկով ափ վերադառնանք, միստր Գայլ Լարսենը բանտարկված կմնա իր նավի վրա: Իսկ այսօր մեր հերթապահության վերջին գիշերն է, և դրա համար ժամերը համեմատաբար ավելի հեշտ կանցնեն:

Առավոտյան արթնացանք բավականին վաղ և նոր էինք վերջացնում նախաճաշը, երբ արշալույսը ծագեց:

— Օ՛հ, Հեմֆրի՛,— գոչեց հանկարծ Մոդը հուսահատ արտահայտությամբ և մեկեն լռեց:

Ես նայեցի նրան: Նա սևեռուն աչքերով դիտում էր «Ուրվականը»: Ես բռնեցի նրա հայացքի ուղղությունը, բայց ոչինչ չտեսա: Երբ Մոդը դարձավ դեպի ինձ, ես նրան ուղղեցի հարցական մի հայացք:

— Երկոտանին,— բացականչեց նա դողդոջուն ձայնով:

Ես մոռացել էի երկոտանու գոյությունը: Ուստի նորից նայեցի: Երկոտանին անհետացել էր:

— Եթե նա է արել . . . — մրմնջացի ես կատաղությամբ:

Մոդը կարեկցաբար ձեռքը դրեց ձեռքիս և ասաց.

— Ամբողջ աշխատանքը նորից եք սկսելու:

— Օ՛հ, հավատացած եղեք, իմ գայրույթը ոչ մի նշանակություն չունի: Ես չեմ կարող նույնիսկ մի ճանճի վնաս հասցնել,— ժպտացի դառնությամբ:— Եվ բանն այն է, որ նա այդ գիտե: Դուք իրավացի եք: Եթե նա կործանել է երկոտանին, ապա ինձ այլ բան չի մնում, բացի նորից սկսելուց:

— Բայց սրանից հետո գիշերները նավի վրա պահակ կկանգնեմ,— պոռթկացի ես մի պահ լռելուց հետո:— Եվ եթե նա նորից փորձի . . .

— Ես կվախենամ ամբողջ գիշերը ծովափում մենակ մնալ,— ասաց Մոդը, երբ մի քիչ հանդարտվեցի:— Որքա՛ն լավ կլինեք, եթե նա մեզ հետ բարեկամանար ու ջանար մեզ օգնել: Այդ դեպքում բոլորս էլ հանգիստ կապրեինք նավի վրա:

— Այդպես էլ կանենք,— հավաստիացրի ես կատաղությամբ, որովհետև իմ թանկագին երկոտանու կործանումը դառնացրել էր ինձ:— Դուք և ես այսուհետև նավի վրա կապրենք, անկախ այն բանից՝ Գայլ Լարսենը մեր նկատմամբ բարեկամական է, թե ոչ:

Մի քիչ հետո ծիծաղեցի.

— Գայլ Լարսենի կողմից պարզապես երեխայություն էր այդպիսի բան անելը, իմ կողմից էլ՝ դրա համար գայրանալը:

Բայց երբ նավ բարձրանալով տեսա կատարված ավերածությունը, սիրտս ցավից մոկտաց: Երկոտանին բոլորովին չքացել էր, կայմակալ պարանները շարտվել էին դետուդեն, ամբարձիչ թոկերը կտոր-կտոր էին արված: Գայլ Լարսենը գիտեր, որ ես չեմ կարող միահյուսել կտրված պարանների ծայրերը: Ինչ-որ նախազգացումից դրդված իսկույն վազեցի նավացռուկ: Նա կտրել էր ամբարձիչ ճախարակը: Ես ու Մոդը հուսահատությամբ իրար նայեցինք: Այնուհետև ես շտապեցի դեպի նավեզր: Կայմերը, կայմաթներն ու ցոկակայմերը, որ հանգույցներից ազատել էի, չկային: Գայլ Լարսենը կտրել էր դրանց պահող թոկերը և ամբողջ սարքը թափել էր ծովը:

Մոդի աչքերը արցունքով լցվեցին, և ես հասկացա, որ նա արտասովում է ինձ համար: Ես էլ կարող էի արտասովել այդ բույրին: «Ուրվականի» կայմերը վերականգնելու ծրագիրս ջուրն էր ընկել: Գայլ Լարսենը անթերի էր կատարել իր գործը: Ես նստեցի ամբարածածկի վրա և, ծնոտս հենելով ձեռքերիս, անձնատուր եղա սև հուսահատության:

— Նա արժանի է մեռնելու,— գոչեցի ես:— Բայց թող աստված ինձ ների, որ նրա դահիճը լինելու աստիճան արիություն չունեմ:

Մոդը մոտեցավ ինձ և գլուխս շոյելով, կարծես երեխա լինեի, ասաց.

— Հանգստացեք, հանգստացեք, ամեն ինչ կարգի կընկնի, մենք արդար գործի համար ենք աշխատում և դրա համար էլ ամեն ինչ լավ կլինի:

Ես նորից հիշեցի Միշլեի խոսքերը ու գլուխս հենեցի Մոդին: Եվ ուժերս իրոք վերակենդանացան: Այս օրհնյալ կինը ուժի անսպառ աղբյուր էր ինձ համար: Վերջ ի վերջո,

ի՞նչ կարևորություն ունի այսօրվա պատահարը: Դա մի հասարակ անհաջողություն է, մի սովորական հապաղում: Տեղատվությունը չէր կարող կայմերը հեռու քշած լինել: Բացի դրանից, գիշերվա ընթացքում քամի չէր եղել: Հիմա միայն հարկավոր էր կայմերը գտնել ու մակույկին կապելով ետ բերել: Սակայն այս պատահարը դաս եղավ մեզ համար: Հիմա ես արդեն գիտեի, թե ինչեր կարելի է ակնկալել Գայլ Լարսենից: Բայց նա կարող էր նաև սպասել մինչև լրիվ վերջացնեինք ամբողջ վերակառուցումը և այն ժամանակ ամեն ինչ մեկ անգամից կործանել:

— Ահա գալիս է,— փսփսաց Մոդը:

Ես գլուխս բարձրացրի: Գայլ Լարսենը դանդաղ քայլում էր հարթակի վրա, նավի ձախ եզրում:

— Ուշադրություն մի դարձրեք նրան,— մրմնջացի ես:— Նա գալիս է իմանալու, թե իր արարքը ինչ տպավորություն է թողել մեզ վրա: Թող նա չիմանա մեր հոգեկան դրությունը: Պետք է նրան զրկենք այդ բավականությունից: Հանեցեք ձեր կոշիկները, ա՛յ այդպես, և դրանք ձեր ձեռքում պահեցեք:

Դրանից հետո մենք աչքակապուկ խաղացինք կույրի հետ: Երբ նա մոտեցավ նավի ձախ եզրին, մենք անցանք աջ եզրը և հարթակի վրայից սկսեցինք նրան դիտել: Նա շուտ եկավ և մեր հետքերով ուղղվեց դեպի նավախել:

Նա կարծես կռահել էր մեր ներկայությունը, որովհետև վստահությամբ «Բարի լույս» ասաց և սպասեց մեր պատասխանին: Հետո առաջացավ դեպի նավախել, իսկ մենք անաղմուկ քայլերով գնացինք առաջամաս:

— Դե՛, ես գիտեմ, որ այստեղ եք,— գոչեց նա և այդ ասելուց հետո լարված ուշադրությամբ ականջ գրեց:

Այդ բույեին նա նման էր մի հսկա բուի, որն իր չարագուշակ ճիչն արձակելուց հետո սպասում է սարսափած գոհի շարժումին: Բայց մենք անշարժ մնացինք և շարժվեցինք միայն այն ժամանակ, երբ ինքը շարժվեց: Եվ այսպես, չար ճիվաղի կողմից հալածվող երկու երեխայի նման, մենք ձեռք-ձեռքի տված փախանք մեկ կողմից մյուսը, մինչև որ Գայլ Լարսենը, բացահայտորեն ձանձրացած ու զայրացած, թողնելով տախտակամածը, ուղղվեց դեպի նավասենյակ: Մեր աչքերը լցված էին հրճվանքով և մենք հազիվ էինք կարողանում զսպել ծիծաղի պոռթկումները: Կոշիկները հագնելով նավեզրից իջանք մակույկ: Մոդի վճիտ, շագանակագույն աչքերի մեջ նայելով, ես մոռացա կատարված չարիքը և գիտակցեցի միայն այն, որ սիրում եմ նրան, որ նրա շնորհիվ պիտի կարողանամ ուժերս հավաքել ու հաջողացնել մեր վերադարձը:

Գլուխ երեսունվեցերորդ

Երկու օր մակույկով թափառեցինք կղզու շուրջը, կորած կայմերը փնտրելով: Միայն երրորդ օրը դրանք գտանք. բոլորը միատեղ էին, ներառյալ երկոտանին: Բայց դրանք քշվել էին ամենավտանգավոր վայրը՝ հարավ-արևմտյան ահարկու հրվանդանի մոտ, որտեղ ամենի կոհակները կատաղորեն ծեծում են ափը: Մեծ եռանդով աշխատեցինք և երեկոյան դեմ

ուծասպառ վերադարձանք մեր փոքրիկ ծովախորշը՝ մակույկի հետևից միջնակայմը քաշելով: Օդը բոլորովին անշարժ էր, հետևապես ստիպված եղանք թիավարելով կտրել ամբողջ ճանապարհը:

Հաջորդ օրը, դժնդակ ու վտանգավոր աշխատանքից հետո, հաջողվեց երկու վերնակայմերն էլ ետ բերել: Երրորդ օրը համբերությունս կորցրի և իրար կապեցի առաջակայմը, զույգ ցոկակայմերն ու կայմաթևերը: Քամին նպաստավոր էր, և ես մտադրվել էի առագաստ պարզելով մեկ անգամից դրանք բոլորը տեղ հասցնել: Սակայն ճանապարհին քամին անսպասելիորեն դադարեց, ի դերև հանելով հույսերս: Մենք սկսեցինք թիավարել, բայց արդեն առաջանում էինք խիտունջի արագությամբ: Ես ամբողջ մարմնով ու ամբողջ ուժով կռանում էի թիակների վրա և միաժամանակ զգում, թե ինչպես հետևի հսկա ծանրությունը արգելակում է մակույկի առաջընթաց: Իսկ դա, իհարկե, հաճելի զգացողություն չէր:

Օրն սկսել էր մթնել, երբ ի լրումն մեր դժվարությունների, դիմացից ուժեղ հողմ բարձրացավ: Դրանից հետո մակույկը ոչ միայն դադարեց առաջ շարժվելուց, այլև սկսեց ետ քշվել դեպի բաց ծովը: Ես մաքառեցի իմ թիակներով, բայց, ի վերջո, պարտության մատնվեցի: Խեղճ Մոդը, որն իմ խորհուրդներին չանսալով, իր ամբողջ ուժով աշխատում էր, թուլացած պառկեց մակույկի խելամասում: Ես այլևս անկարող էի թիավարել: Ուռած ու ճաքճաք մատներս չէին կարողանում սեղմել թիակների բռնակները, իսկ դաստակներս ու բազուկներս անտանելի ցավում էին: Թեև ժամը տասներկուսին կուշտ ու կուռ նախաճաշել էի, բայց ծանր աշխատանքից այնպես քաղցածացա, որ քիչ էր մնում նվաղելի:

Թիակները ներս քաշեցի և, առաջ շարժվելով, կռացա կայմերը քաշող պարանի վրա: Բայց Մոդը ձեռքի շարժումով ուզեց ինձ արգելել:

— Ի՞նչ եք ուզում անել,— հարցրեց նա ձգված, տագնապահար ձայնով:

— Ուզում եմ պարանն արձակել,— պատասխանեցի ես և սկսեցի քանդել պարանը:

— Մի՛ արեք, խնդրում եմ,— աղերսեց նա:

— Անօգուտ է,— պատասխանեցի:— Գիշերն արդեն վրա է հասել, իսկ քամին մեզ հեռացնում է ցամաքից:

— Բայց լավ մտածեցեք, Հեմֆրի: Եթե մենք չկարողանանք «Ուրվականով» մեկնել, ապա կղզում կմնանք երկար տարիներ, գուցե և մեր ամբողջ կյանքը: Քանի որ կղզին մինչև հիմա չի հայտնաբերվել, հավանական է, որ այսուհետև էլ չհայտնաբերվի:

— Դուք մոռանում եք այն նավակը, որ գտանք ծովափին,— հիշեցրի նրան:

— Դա որսորդական մակույկ էր,— պատասխանեց նա:— Եվ դուք շատ լավ գիտեք, որ եթե այդ մակույկի նավաստիներն իրոք կղզուց հեռացած լինեին, ապա նորից կվերադառնային ծվարավայր՝ ծովակատուների շնորհիվ հարստություն դիվելու:

Ես մնացի լուռ, անվճռական:

— Բացի դրանից,— ավելացրեց նա վարանոտ արտահայտությամբ,— մտահղացումը ձերն էր և ես ուզում եմ, որ դուք այն իրականացնեք:

Այժմ ես արդեն կարող եմ վճռական լինել: Թեև Մոդի խոսքերը փաղաքշական էին ինձ համար, բայց մեծահոգությունն ինձ դրդեց հակաճառելու:

— Ավելի լավ է կղզու վրա երկար տարիներ ապրել, քան ծովի վրա մեռնել այս գիշեր, վաղը կամ մյուս օրը: Մենք նախապատրաստված չենք բաց ծովի վրա նավարկելու: Ոչ ուտելիք ունենք, ոչ ջուր, ոչ վերմակ, ոչ մի բան: Դուք առանց վերմակի մինչև առավոտ չեք կարող դիմանալ: Արդեն հիմիկվանից դողում եք:

— Դա պարզապես ջղերի լարվածությունից է,— պատասխանեց նա:— Ես վախենում եմ, որ հակառակ իմ խորհուրդին կայմերն արձակեք:

— Օ՛հ, խնդրում եմ, խնդրո՞ւմ եմ, Հեմֆրի, մի՛ արձակեք,— թախանձեց նա հաջորդ վայրկյանին:

Նա քաջ գիտեր, թե այդ խոսքերն ինչ ուժեղ ազդեցություն ունեն ինձ վրա: Եվ այսպիսով հարցը վճռվեց: Մենք ողորմելիորեն դողդողացինք ամբողջ գիշերը: Ես քնեցի անկանոն ընդմիջումներով, որովհետև ամեն անգամ տանջալի ցուրտը արթնացնում էր ինձ: Ես զարմանում էի, թե Մոդն ինչպես է ցրտին դիմանում: Այնքան հոգնած էի, որ նույնիսկ չէի կարող ձեռքերս թափահարել, որպեսզի մի քիչ տաքանամ: Այնուամենայնիվ, երբեմն-երբեմն ուժերս հավաքելով, շփում էի Մոդի ձեռքերն ու ոտքերը՝ արյան շրջանառությունը վերականգնելու համար: Այդպիսի պահերին անգամ նա շարունակում էր թախանձել, որ կայմերը չարձակեմ: Առավոտյան ժամը երեքի մոտերքը նա ցրտից ջղաձգություն ունեցավ, և ես՝ ստիպված եղա նրա ձեռքերը շփել, որից հետո նա բոլորովին թմրեց: Դա ինձ վախեցրեց: Թիակները ջուրն իջեցնելով, ստիպեցի նրան թիավարել, բայց նա այնքան տկար էր, որ կարծում էի, թե թիավարելիս հանկարծ ուշքը կկորցնի:

Առավոտը ծագեց և ցայգալույսի միջով մեր հայացքները երկար փնտրեցին կղզին: Վերջապես նա երևաց հորիզոնում, փոքր ու սևորակ, առնվազն տասնհինգ մղոն մեզնից հեռու: Այնուհետև հեռադիտակով ծովը գննեցի: Հեռվում՝ հարավ-արևմուտքում նկատեցի ալիքների մի մութ գիծ, որը մեզ էր մոտենում:

— Բարենպաստ քամի,— գոչեցի այնպիսի խոպոտ ձայնով, որ ինքս չճանաչեցի իմ ձայնը:

Մոդը փորձեց պատասխանել, բայց չկարողացավ ոչ մի բառ արտաբերել: Նրա շուրթերը կապտել էին ցրտից և աչքերը փոս էին ընկել: Այդ շագանակագույն աչքերն ինչպիսի՜ արիությամբ նայեցին ինձ: Բայց ինչքա՛ն գթաշարժ էր այդ արիությունը... .

Դարձյալ սկսեցի նրա ձեռքերը շփել ու շարժել, մինչև որ նա ուժերը հավաքեց և կարողացավ ինքը դրանք շարժել, հետո նրան ոտքի կանգնեցրի և օգնեցի քայլելու, չնայած մակույկի ամբողջ երկարությունը հազիվ մի քանի քայլ էր: Դրանից հետո նրան ստիպեցի մի քիչ ցատկոտել:

— Օ՛հ, դուք արիասիրտ կին եք,— ասացի ես, երբ տեսա, որ նրա դեմքը նորից կենդանություն ստացավ:— Դուք գիտեի՞ք, որ արիասիրտ եք:

— Մինչև ձեզ ճանաչելս ես երբեք արիասիրտ չեմ եղել,— պատասխանեց նա:— Դուք ինքներդ ինձ արիասիրտ դարձրիք:

— Ես էլ ձեզ ճանաչելուց հետո միայն արհասիրտ դարձա:

Նա մի արագ հայացք գցեց ինձ վրա, և ես նրա աչքերում նորից նկատեցի կայծկլտացող փայլը և ինչ-որ ուրիշ բան.... Բայց դա տևեց միայն մի ակնթարթ: Ապա նա ժպտաց:

— Պայմաններն են ձեզ վերափոխել,— ասաց նա:

Բայց ես գիտեի, որ այդպես չէր և մտածեցի, թե արդյո՞ք նա էլ այդ գիտեր:

Հետո բարենպաստ քամին սկսեց փչել, և շատ չանցած մակույկը ավելոծ ծովի միջով շարժվեց դեպի կղզին: Ցերեկվա ժամը երեքին անցանք հարավ-արևմտյան հրվանդանը: Մենք ոչ միայն քաղցած էինք, այլև տանջվում էինք ծարավից: Մեր շրթները այնպես էին չորացել ու ճաքճքել, որ նույնիսկ չէինք կարողանում լեզվով թացացնել: Հետո քամին սկսեց կամաց-կամաց մեղմանալ: Երբ գիշերը վրա հասավ, արդեն մեռելային հանդարտություն էր տիրում, և ես նորից տքնաջան թիավարում էի, բայց թույլ, չափազանց թույլ շարժումներով: Գիշերվա երկուսի մոտ մակույկի քիթը կպավ ներքին ծովախորշի փիին, և ես երերալով դուրս եկա մակույկը կապելու: Մողը չէր կարողանում ոտքերի վրա կանգնել: Ես այլևս ուժ չունեի նրան գրկելով փոխադրելու, և նրա հետ միասին ավազի վրա գլորվեցի: Երբ մի քիչ հանգստացա, անուրթներից բռնելով նրան քարշ տվի ծովափի երկայնքով մինչև հյուղակ:

Հաջորդ օրը չաշխատեցինք: Մինչև ցերեկվա ժամը երեքը քնեցինք, ավելի շուտ՝ ես քնեցի, որովհետև երբ արթնացա, Մողը ճաշ էր եփում: Նրա վերակազդուրվելու կարողությունն ուղղակի ապշեցուցիչ էր: Շուշանի պես քնքուշ այդ մարմնի մեջ կար կյանքին կառչելու մի համառություն, որն անհամատեղելի էր առերևույթ դյուրաբեկության հետ:

— Դուք գիտեք, որ գնում էի ճապոնիա կազդուրվելու համար,— ասաց նա, երբ ճաշից հետո խարույկի շուրջը նստած՝ ըմբռնում էինք անշարժության հաճույքը:— Ես շատ առողջ չեի և երբեք էլ չեմ եղել: Բժիշկներն ինձ հանձնարարել էին ծովային ճամփորդություն, և ես ընտրել էի ամենաերկարը:

— Առանց իմանալու, թե ինչպիսին եք ընտրում,— ծիծաղեցի ես:

— Ճիշտ է, բայց այս նոր պայմանների շնորհիվ ես կվերափոխվեմ ու ավելի ուժեղ կին կդառնամ,— պատասխանեց նա:— Հուսով եմ նաև, որ ավելի լավ կին կդառնամ: Գոնե ավելի լավ կճանաչեմ կյանքը:

Աշնանային կարճ օրն արդեն նվազում էր, երբ սկսեցինք խոսել Գայլ Լարսենի կուրացման մասին: Դա մեզ համար անբացատրելի երևույթ էր: Բայց ակնհայտորեն նրա դրությունը լուրջ է, ասացի ես, քանի որ մտադրվել է մնալ և Ջանքի կղզում մեռնել: Երբ այդքան ուժեղ և այդքան կենսասեր մարդը հաշտվում է իր մահվան գաղափարի հետ, նշանակում է նրան անհանգստացնում է կուրությունից ավելի լուրջ մի պատճառ: Օրինակ, նրա ահավոր գլխացավերը... Մենք այն եզրակացության եկանք, որ դրանք առաջացրել են ուղեղի ինչ-որ քայքայում, և որ այդ նոպաների ընթացքում նա ունենում է աներևակայելի ցավեր:

Ես նկատեցի, որ Գայլ Լարսենի ծանր դրության մասին զրուցելիս՝ Մողը գնալով ավելի ու ավելի է կարեկցում նրան: Նրա կարեկցանքն այնքան քնքուշ ու կանացի էր, որ հենց դրա համար ես նրան առավել ևս սիրեցի: Բայց նրա այդ զգացմունքի մեջ որևէ ավելորդ զեղում

չկար: Նա ինձ հետ իսկույն համաձայնեց, որ եթե ուզում ենք հեռանալ այս կղզուց, ապա անհրաժեշտ է Լարսենի նկատմամբ ամենախիստ միջոցներ ձեռք առնել: Բայց խրտնեց այն մտքից, թե երբևէ կհարկադրվեմ Լարսենին զրկել կյանքից՝ իմը (նա ասում է «մերը») փրկելու համար:

Հաջորդ առավոտյան վաղ նախաճաշեց ինք և լուսաբացին լծվեցինք աշխատանքի: Նավացռուկի ներքևում գտնվող ամբարում, որտեղ պահվում է նավի գույքը, ես գտա մի փոքրիկ խարիսխ և բավական դժվարությամբ փոխադրեցի տախտակամած, որտեղից իջեցրի մակույկի մեջ: Մակույկի խելամասում գետեղելով շրջանաձև դարսած մի երկար պարան, որի մի ծայրը ամրացրել էի նավացռուկին, իսկ մյուսը՝ խարիսխին, ես թիավարեցի մինչև մեր փոքրիկ ծովախորշի մեջտեղը և խարիսխը գցեցի ջրի մեջ: Քամի չկար, մակընթացությունը բարձր էր, և երկկայմանավը ծփում էր ջրի երեսին: Պարանը ձեռքով քաշելով (որովհետև ամբարձիչ ճախարակը փչացել էր), սկսեցի երկկայմանավը շարժել, մինչև որ նա կամաց-կամաց մոտեցավ խարիսխին: Բայց խարիսխը փոքր էր և չէր կարող երկկայմանավը պահել նույնիսկ ամենաթեթև քամու ժամանակ: Ուստի ես ցածրացրի նաև նավի աջ եզերքից կախված խոշոր խարիսխը, բավականին թույլ պահելով նրա թուկը: Կեսօրից հետո սկսեցի ամբարձիչ ճախարակը նորոգել:

Երեք օր շարունակ աշխատեցի այդ ճախարակի վրա: Մեքենագիտության մեջ ես չափազանց համբալ էի և այն գործը, որ կատարեցի երեք օրում, մի որևէ մեքենագետ կկատարեր երեք ժամում: Ինձ հարկավոր էր ամենից առաջ ճանաչել իմ գործիքները և տիրապետել մեքենագիտական գոնե ամենատարրական օրենքներին: Երրորդ օրվա վերջում ճախարակն սկսեց գործել, սակայն ոչ այնքան գոհացուցիչ կերպով: Նա առաջվա պես լավ չէր գործում, բայց, համենայն դեպս, հեշտացնում էր աշխատանքս:

Մի կես օրում ինձ հաջողվեց երկու վերնակայմերը նավ բարձրացնել, երկոտանին կառուցել և առաջվա նման ամրացնել պարաններով: Այդ գիշեր քնեցի տախտակամածի վրա, իմ ձեռակերտի կողքին: Մողը մերժեց ծովափում մենակ մնալ և քնեց նավաստիների խցում: Ցերեկվա ընթացքում Գայլ Լարսենը լուռ նստած ունկնդրում էր, երբ ճախարակը նորոգվելով Մոդի հետ զրուցում էի կողմնակի նյութերի մասին: Մենք ոչ մի ակնարկություն չարեցինք երկոտանու կործանման մասին, նա էլ նորից չպնդեց, որ իր նավը հանգիստ թողնենք: Բայց ես դեռ վախենում էի այդ կույր ու անօգնական մարդուց, որն ունկնդրում, շարունակ ունկնդրում էր, և աշխատելիս միշտ ջանում էի հեռու մնալ նրա հզոր ձեռքերից:

Այդ գիշեր քնած էի իմ թանկագին երկոտանու տակ, երբ Գայլ Լարսենի ոտնաձայնն արթնացրեց ինձ: Երկինքը աստղազարդ էր, և ես աղոտ կերպով տեսա նրա կերպարանքը, երբ նա քայլում էր տախտակամածով: Վերմակի տակից դուրս սահելով՝ գաղտագողի մոտեցա նրան: Նա զինված էր մի սղոցով, որը վերցրել էր գործիքների արկղից և այժմ պատրաստվում էր դրանով կտրել ամբարձիչ թուկերը, որ կախել էի երկոտանուց: Շոշափելով գտավ թուկերը և իսկույն նկատեց, որ դրանք չեմ ամրացրել ու ձգել: Այսպիսի դեպքում սղոցը չէր կարող գործ տեսնել, ուստի նա թուկերը կապելով պինդ ձգեց ու պատրաստվեց սղոցելու:

— Խորհուրդ չէի տա, որ այդ բանն անեք,— ասացի ես հանդարտ ձայնով:

Նա լսեց ատրճանակիս շնիկի չիսկոցը և ծիծաղեց:

— Հելլո՛, Հեմփ,— ասաց նա,— ես ամբողջ ժամանակ գիտեի, որ նավի վրա եք: Ձեզ չի հաջողվի ականջներս խաբել:

— Սուտ եք ասում, Գայլ Լարսեն,— պատասխանեցի առաջվա պես հանդարտ:— Բայց լավ իմացեք, որ ես անհամբեր սպասում եմ մի որևէ առիթի, որպեսզի սպանեմ ձեզ: Դեհ, հիմա փորձեցեք կտրել:

— Դուք միշտ էլ առիթ ունեք,— ասաց նա քմծիծաղով:

— Փորձեցեք կտրել,— չարագուծորեն սպառնացի ես:

— Ես նախընտրում եմ ձեզ հուսախաբ անել,— քրքջաց նա և կրունկների վրա շրջվելով՝ ուղղվեց դեպի նավախել:

Հաջորդ առավոտյան, երբ Մոդին պատմեցի գիշերվա միջադեպը, նա ասաց.

— Պետք է մի բան անել, Հեմֆրի: Եթե նրան ազատ թողնենք, նա կարող է ամեն ինչ անել: Նա կարող է նավն ընկղմել կամ հրդեհել: Հնարավոր չէ նախատեսել նրա հաջորդ քայլը: Պետք է նրան բանտարկել:

— Բայց ինչպե՞ս,— հարցրեցի ուներս հուսահատությամբ թափահարելով:— Ես չեմ հանդգնի մոտենալ նրան, իսկ մյուս կողմից նա գիտե, որ քանի դեռ ինքր սոսկ պասսիվ դիմադրություն է ցույց տալիս, ես չեմ կարող իր վրա կրակել:

— Համենայն դեպս, պետք է մի միջոց գտնել,— առաջարկեց նա:— Ժամանակ տվեք, որ մտածեմ:

— Միայն մեկ միջոց կա,— մռայլորեն ասացի ես:

Մոդը ականկալությամբ նայեց ինձ:

Ես որսորդական մի մահակ վերցրի:

— Նրան չեմ սպանի,— ասացի:— Բայց մինչև որ նա ուշքի կգա, ես նրան պինդ կապկպած կլինեմ:

Մոդը, սարսռալով, գլուխը թափահարեց:

— Ոչ, մահակով չի կարելի: Պետք է մի այլ, նվազ վայրագ միջոց գտնել: Եկեք քիչ էլ սպասենք:

Բայց երկար սպասելու կարիք չեղավ և հարցը ինքնըստինքյան լուծվեց: Նույն առավոտյան, մի քանի անհաջող փորձերից հետո, ես վերջապես գտա միջնակայմի ծանրության կենտրոնը և ամբարձիչ թուղ կապեցի այդ կետից երկու-երեք ոտնաչափ վերև: Մոդը հսկում էր, որ թուղը թմբկազանից դուրս չնետվի և, մինչ ես կայմը վեր էի քաշում, նա հավաքում ու շրջանաձև դարսում էր տախտակամած բարձրացող ու կուտակվող թույլ պարանը: Եթե ճախարակը կանոնավոր աշխատեր, ապա գործն այնքան չէր դժվարանա: Իսկ այժմ ես հարկադրված էի ամբողջ ուժս գործ դնել, որպեսզի ճախարակի բռնակը պտտեցնեմ: Ճիշտն ասած, շատ ավելի ժամանակ էի տրամադրում հանգստանալու, քան աշխատելու: Երբեմն, երբ ուժս այլևս չէր

բավում, Մոդը հասնում էր օգնության և մեկ ձեռքում պարանը բռնելով մյուսով բռնակի վրա ավելացնում էր իր նուրբ մարմնի ծանրությունը:

Մեկ ժամ հետո երկու ծիծեռնիկներն էլ ամրացվել էին երկոտանու գագաթին: Ես այլևս ոչինչ չէի կարող բարձրացնել, իսկ միջնակայքը դեռ ամբողջովին նավի վրա չէր բերված: Նրա կոթը հենված էր նավի ձախակողմյան բազրիքին, իսկ գլուխը թեքված էր ջրի վրա, աջակողմյան բազրիքից բավական հեռու: Իմ երկոտանին բավականաչափ բարձր չէր: Ուրեմն իզուր անցավ իմ ամբողջ աշխատանքը: Բայց ես առաջվա պես շուտ հուսահատվողը չէի, որովհետև թե ավելի ինքնավստահություն էի ձեռք բերել և թե ավելի վստահություն ունեի ծիծեռնիկների, երկոտանու և ամբարձիչ թոկասարքերի հնարավորությունների վրա: Նրանցից յուրաքանչյուրը գործելու իր ձևն ուներ, ինձ միայն մնում էր այն հայտնաբերել:

Ես դեռ մտածում էի իմ անելիքի մասին, երբ Գայլ Լարսենը հայտնվեց տախտակամածի վրա: Իսկույն նկատեցինք, որ նրա տեսքը բավականին տարօրինակ է: Շարժումների անվճռականությունն ու թուլությունը հիմա ավելի շեշտված էին: Նա երերուն քայլվածքով անցավ ձեղնախցիկի կողքով և, երբ փորձում էր հարթակ բարձրանալ, հանկարծ ամբողջ մարմնով տատանվեց և նույն վայրկյանին ձեռքով սկսեց աչքերը շփել, կարծես ինչ-որ սարդոստայն էր մաքրում:

Չկարողանալով իրեն պահել, նա հարթակի սանդուղքից կանգնած դիրքով ընկավ տախտակամածի վրա, հետո նորից տատանվեց և, հենարան փնտրելու համար ձեռքերն օդում տարածած, երերալով առաջ շարժվեց, մինչև որ հավասարակշռությունը վերագտավ որսորդների խուցը տանող սանդուղքի մոտ: Այնտեղ մի պահ կանգնեց ցնորվածի պես, ապա ծնկներն սկսեցին ծալվել, և նա գլորվեց հատակին:

— Գլխացավի նոպաներից մեկն է,— փսփսացի ես Մոդին:

Նա գլխով արեց, և աչքերը նորից լցվեցին ջերմ կարեկցանքով:

Մենք մոտեցանք Գայլ Լարսենին. նա կարծես ուշագնաց էր և շնչում էր ջղաձգությամբ: Մոդը նրա գլուխը բարձրացրեց՝ արյան զեղումի առաջն առնելու համար և ինձ ուղարկեց նավասենյակ, որպեսզի բարձ բերեմ: Ես վերմակներ էլ բերեցի, և նրան պառկեցրիք հարմարավետ դիրքով: Այնուհետև նրա զարկերակը քննեցի: Երակազարկն ուժեղ էր և շատ կանոնավոր: Դա ինձ շփոթեցրեց: Սկսեցի կասկածել:

— Իսկ եթե կեղծո՞ւմ է,— հարցրեցի ես, նրա դաստակը դեռ ձեռքումս պահած:

Մոդը գլուխը թափահարեց, նրա աչքերում հանդիմանություն կար: Բայց հենց նույն վայրկյանին դաստակը հանկարծ դուրս նետվեց իմ ձեռքից, և Գայլ Լարսենի մատները պողպատյա մամլակի պես սեղմեցին դաստակս: Անպատում սարսափից մի խուլ, վայրենի ճիչ արձակեցի և նույն պահին տեսա, թե ինչպես նրա դեմքը ծամածուլեց չարախինդ ու հաղթական արտահայտությամբ: Նա մյուս ձեռքն իսկույն փաթաթեց մարմնիս շուրջը և ահավոր թափով ինձ քաշեց դեպի իրեն:

Հետո նա թողեց դաստակս և, ձեռքը տանելով կոնակիս, երկու բազուկներս ափի մեջ առավ, որպեսզի չկարողանամ շարժվել: Մյուս ձեռքով կոկորդս բռնեց, և այդ վայրկյանին ես կարծես զգացի մահվան դառնահամր, մահ, որին արժանանում էի իմ ապուշության շնորհիվ: Ինչո՞ւ

վատահեցի ու մոտեցա այս սարսափելի ձեռքերին: Այդ վայրկյանին կոկորդիս վրա զգացի ուրիշ ձեռքերի հպումը: Դրանք Մոդի ձեռքերն էին, որոնք ապարդյուն կերպով ջանում էին արձակել կոկորդիս շուրջը փաթաթված մատները: Բայց ի վերջո նա հրաժարվեց այդ անօգուտ փորձից և այնպիսի աղեկտուր մի ճիչ արձակեց, որ մինչև հոգուս խորքը ցնցվեցի: Դա սոսկումի ու սրտաբեկ հուսահատության մատնված կնոջ ճիչն էր: Այդպիսի ճիչեր ես լսել էի միայն «Մարտինեզի» ընկղման ժամանակ:

Դեմքս կպած էր Գայլ Լարսենի կրծքին և ոչինչ չէի տեսնում, բայց ես լսեցի Մոդի ոտնաձայնը, երբ նա շտապ հեռանում էր մեզնից: Գիտակցությունս դեռ չէր մթագնել: Թեև ամեն ինչ կատարվում էր արագ, այնուամենայնիվ, ինձ թվաց, թե անհատնում ժամանակ անցավ մինչև այն պահը, երբ նորից լսեցի շտապ մոտեցող Մոդի ոտնաձայնը: Սակայն նույն պահին Գայլ Լարսենի մարմինը հանկարծ լիկեց, և կուրծքն սկսեց ուժգին հևալ իմ ծանրության տակ: Նա մի խուլ հառաչանք արձակեց, և ես չհասկացա՝ դա ուժասպառության՝ թացականչություն էր, թե՞ խորունկ արտաշնչում: Կոկորդիս սեղմող մատները թուլացան, և ես սկսեցի շնչել: Մի պահ չանցած մատները շարժվեցին ու նորից սեղմվեցին կոկորդիս շուրջը: Բայց Գայլ Լարսենի արտասովոր կամքն անկարող եղավ կանգնեցնելու առաջացող քայքայումը: Նրա կամքն սկսեց տեղի տալ: Նա կորցնում էր գիտակցությունը:

Մոդի ոտնաձայնն արդեն մոտեցել էր, երբ Գայլ Լարսենի մատները վերջին անգամ սեղմեցին կոկորդիս և ապա բոլորովին թուլացան: Ես նրա մարմնի վրայից գլորվեցի հատակին: Մեջքի վրա պառկած հեռում էի և արևի լույսից աչքերս թարթում: Մոդը կանգնած էր իմ դիմաց: Աչքերս իսկույն ուղղվեցին նրա դեմքին, որը գունատ էր, բայց հանդարտ: Նա նայում էր ինձ տազնապի և հանգստացման խառն արտահայտությամբ: Ես նրա ձեռքում տեսա որսորդական ծանր մի մահակ: Հայացքիս հետևելով՝ նա ևս նայեց իր ձեռքին և շտապ մահակը ցած գցեց, ասես այն կծել էր ձեռքի ափը: Այդ վայրկյանին սիրտս լցվեց անսահման բերկրությամբ: Նա իսկապես իմ կինն էր, իմ ընկերուհին, որը կռվում էր ինձ հետ և ինձ համար, ինչպես քարայրաբնակ կինը կկռվեր: Այդ պահին նրա մեջ զարթոնել էր նախնադարյան բնագոյը, մեկ ակնթարթում նա թոթափել էր քաղաքակրթության քնքշացնող ազդեցությունը, որը կրել էր ամբողջ կյանքի ընթացքում:

— Միրելի՛ս... — դռնեցի ես, դժվարությամբ կանգնելով ոտքերիս վրա:

Հաջորդ վայրկյանին նա իմ գրկումն էր և ջղաձգությամբ հեծկլտում էր՝ գլուխն ուսիս հենած: Ես նայեցի նրա շագանակագույն մազերի հրաշքին: Արևի տակ գոհարների նման կայծկլտացող այդ մազերն ինձ համար շատ ավելի թանկագին էին, քան արքաների գանձարանների իսկական գոհարները: Գլուխս հակելով, հուշիկ համբուրեցի այդ մազերը, այնքան հուշիկ, որ նա չզգաց:

Բայց հաջորդ րոպեին սկսեցի ավելի զգաստ մտածել: Վերջ ի վերջո, Մոդը կին էր բոլոր կանանց նման, և վտանգն անցնելուց հետո նա թեթևացումից լաց է լինում իր պաշտպանի կամ ասենք՝ վտանգից փրկված մարդու գրկում: Եթե ես նրա հայրը կամ եղբայրը լինեի, նա, անկասկած, նույն կերպ պիտի վարվեր: Բացի դրանից, տեղը և ժամանակը հարմար չէին սեր բացատրելու համար և ես ուզում էի նախ արժանի լինել սեր հայտնելու լիակատար իրավունքին: Հետևաբար, բավականացա նորից հուշիկ համբուրելով նրա մազերը և իմ գրկից բաց թողի նրան:

— Այս անգամ նա իսկական նոպա ունեցավ,— ասացի ես:— Հավանորեն, այսպիսի նոպայի ընթացքում է նա կուրացել: Այսօր նա սկզբում կեղծեց, բայց այդպես անելով՝ իսկական նոպա առաջացրեց:

Մոդն սկսեց ուղղել նրա բարձր:

— Կարիք չկա,— ասացի ես:— Քանի որ նա հիմա անօգնական է, այդպես անօգնական էլ պետք է մնա: Այսօրվանից սկսած մենք կգբաղեցնենք նավասենյակը, իսկ Գայլ Լարսենին կտեղափոխենք որսորդների խուցը:

Ես անութներից բռնեցի նրան և քարշ տվի մինչև նավասանդուղքի անցքը: Իմ խնդրանքով Մոդը մի պարան բերեց, որն անցկացրի Լարսենի ուսերի տակով և նրան աստիճաններով սահեցրի մինչև հատակը: Իմ ուժը չբավեց նրան պառկեցնելու անկողնու վրա, սակայն Մոդի օգնությամբ բարձրացրի նախ գլուխը և ուսերը, ապա իրանը, որից հետո անկողնու վրա գլորեցի ոտքերը:

Բայց այսքանը բավական չէր, ես հիշեցի, որ Գայլ Լարսենի խցիկում կան ձեռնաշղթաներ, որոնցով նա կապում էր օրինազանց նավաստիներին, փոխանակ օգտագործելու նավային հինավուրց ու ծանր շղթաները: Այդ ձեռնաշղթաները բերելով կապեցինք Գայլ Լարսենի ձեռքերն ու ոտքերը: Անձկության երկար օրերից հետո ես հիմա առաջին անգամ սկսեցի ազատ շնչել: Երբ տախտակամած բարձրացա, զարմանալիորեն թեթևացած էի զգում ինձ, ասես մի ծանր բեռ էր վերցվել իմ ուսերից: Միաժամանակ զգացի, որ իմ ու Մոդի միջև ավելի մոտիկություն էր ստեղծվել: Եվ երբ մենք կողքեկողքի մոտենում էինք երկոտանուն, որից դեռ կախված էր առաջակայմը, ես մտովի հարցնում էի, թե արդյո՞ք նա էլ է զգում այդ մոտիկությունը:

Գլուխ երեսուկյոթերորդ

Մենք շուտով տեղավորվեցինք «Ուրվականի» վրա և զբաղեցրինք մեր նախկին խցիկները: Խոհանոցն էլ այժմ մեր տրամադրության տակ էր: Գայլ Լարսենի բանտարգելությունը տեղի ունեցավ բարեպատեհ ժամանակ: Աշնանային գաղջ օրերը, որոնք հատուկ են լայնության բարձր գոտիներին, արդեն անցել էին, ու նրանց հաջորդել էր անձրևոտ ու փոթորկոտ եղանակը: Բայց մենք ապրում էինք հանգստավետ պայմաններում, իսկ մեր անկատար երկոտանին ու նրանից կախված առաջակայմը «Ուրվականին» տալիս էին աշխատունակ տեսք և մեր առջև բացում մեկնումի հեռանկարը:

Հիմա, երբ Գայլ Լարսենը կապված էր ձեռնաշղթաներով, դրա անհրաժեշտությունը չէր զգացվում: Երկրորդ նոպան առաջինի նման զգալիորեն քայքայեց նրա զգայարանների գործնեությունը: Մոդն այդ բանը հայտնաբերեց երեկոյան դեմ, երբ նրա խցիկը գնաց ուտելիք տալու համար: Թեև Լարսենը գիտակցությունը վերագտել էր, բայց Մոդի հարցերին չէր պատասխանել: Նա պառկած էր ձախ կողմի վրա և բացահայտորեն տանջվում էր ցավերից: Հետո անհանգիստ շարժումով շրջել էր գլուխը և այդպիսով ձախ ականջը հեռացրել բարձից, որին կպած էր եղել մինչև այդ: Դրանից հետո միայն Մոդի ձայնը լսել էր ու սկսել էր պատասխանել: Մոդն շտապել էր ինձ մոտ:

Բարձր սեղմելով նրա ձախ ականջին, ես հարցրի, թե լսո՞ւմ է ինձ: Նա չպատասխանեց: Երբ բարձր հեռացնելով նույն հարցը կրկնեցի, նա իսկույն պատասխանեց, թե լսում է:

— Դուք գիտե՞ք, որ ձեր աջ ականջը խլացել է,— հարցրեցի ես:

— Այո,— ասաց նա ցածր, բայց հաստատ ձայնով:— Սակայն ավելի վատն այն է, որ մարմնիս աջ մասը թմրել, քարացել է: Ես չեմ կարողանում աջ ձեռքս ու ոտքս շարժել:

— Նորի՞ց եք կեղծում,— հարցրի բարկությամբ:

Նա գլուխը թափահարեց և, երբ փորձեց ժպտալ, դաժան բերանը տարօրինակ կերպով ծամածռվեց: Եվ իրոք, դա ծամածռու ժպիտ էր, որովհետև բերանի միայն ձախ կողմը շարժվեց, մինչդեռ աջ այտի մկանները բոլորովին քարացած էին:

— Դա Գայլի ամենավերջին կեղծիքն էր,— ասաց նա:— Հիմա ես իսկապես անդամալույծ եմ: Այսուհետև երբեք չպիտի քայլեմ. . . օ՛հ, միայն նրանով...— ավելացրեց նա, կարծես կռահելով, որ կասկածանքով եմ նայում ձախ ոտքի ծնկին, որը ճիշտ այդ վայրկյանին բարձրացնում էր վերմակը:

— Եվ դա շատ ցավալի է,— շարունակեց նա,— որովհետև կուզենայի նախ ձեր հաշիվը մաքրել, Հեմփ: Ես կարծում էի, թե դեռ այդքան ուժ մնացել է մեջս:

— Բայց ինչո՞ւ,— հարցրեցի ես զարհուրանքով և միաժամանակ հետաքրքրությամբ:

Նրա դաժան բերանը դարձյալ ծամածռվեց ժպիտի ձևով, և նա ասաց.

— Պարզապես որպեսզի զգամ, որ ապրում ու գործում եմ, որպեսզի զգամ, որ մինչև վերջը թթխմորի ամենամեծ պատառն եմ և ձեզ ուտում եմ... Բայց մեռնել ա՛յս ձևով...

Նա ուները թոթվեց, ավելի շուտ՝ փորձեց թոթվել, որովհետև իրականում միայն ձախ ուսը շարժվեց: Այդ շարժումն էլ, ժպիտի նման, այլանդակ էր:

— Բայց ինչո՞վ կարող եք բացատրել ձեզ պատահածը,— հարցրեցի ես:— Որտե՞ղ է ձեր հիվանդության բուն արմատը:

— Ուղեղումս,— ասաց նա իսկույն:— Այդ անիծյալ գլխացավերն առաջացրին հիվանդությունը:

— Դրանք պարզապես ախտանշաններ էին,— ասացի ես: Նա գլխով արեց:

— Չգիտեմ ինչով բացատրեմ: Ես կյանքումս երբեք չեմ հիվանդացել: Ինչ-որ բան է կատարվել իմ ուղեղում: Ցավից դատելով, դա պետք է լինի քաղցկեղ, ուռուցք կամ ինչ-որ նման մի բան, որը գիշատում ու ավերում է, հարձակվում է ջղային կենտրոնների վրա և աստիճանաբար փչացնում բջիջները:

— Հարձակվում է և շարժման կենտրոնների վրա,— նկատեցի ես:

— Այդպես է երևում: Եվ ցավն այն է, որ ես պետք է այսպես պառկած մնամ, գիտակից վիճակում, առողջ մտքով և տեսնեմ, թե ինչպես աշխարհի հետ իմ կապերը կտրվում են մեկը մյուսի հետևից: Ես կուրացել եմ, լսողությունս ու զգացողությունս ինձ դավաճանում են և,

իրերի այս ընթացքից դատելով, շուտով կդադարեմ նաև խոսելուց: Իսկ այդ ամբողջ ժամանակ պետք է մնամ այստեղ, ողջ, կենսունակ, բայց անգոր:

— Երբ ասում եք՝ պետք է մնամ այստեղ, երևի նկատի ունեք ձեր հոգին,— ասացի ես:

— Դատարկ խոսք,— պատասխանեց նա:— Ես պարզապես ուզում եմ ասել, որ մարմնի վերին կենտրոնները մնացել են անվնաս, քանի որ կարող եմ հիշել, մտածել ու տրամաբանել: Երբ այդ կարողությունը չքանա, ես ինքս էլ կչքանամ, կդադարեմ գոյություն ունենալուց: Ի՞նչ հոգի:

Նա ծաղրական քրքջաց, հետո ձախ ականջը կպցրեց բարձին, դրանով հասկացնելով, թե այլևս չի ուզում շարունակել խոսակցությունը:

Մոդը և ես գնացինք աշխատելու: Գայլ Լարսենին հարվածող ահավոր ճակատագիրը մեզ ճնշում էր: Բայց մենք դեռ չէինք գիտակցում դրա բովանդակ ահավորությունը: Այդ հարվածը կարծես մի տեսակ փոխհատուցում էր: Մենք խոր ու լուրջ մտքերով էինք համակված և իրար հետ խոսում էինք համարյա փսփսալով:

— Կարող եք արդեն ձեռնաշղթաները քանդել,— ասաց այդ գիշեր Գայլ Լարսենը, երբ մենք նրա մոտ կանգնած՝ խորհրդակցում էինք:— Դրանք միանգամայն ավելորդ են: Ես այժմ անդամալույծ եմ: Սրանից հետո կարելի է սպասել միայն, որ անշարժ պառկելուց մեջքիս վրա վերքեր գոյանան:

Նա իր ծամածուռ ժպիտով ժպտաց: Մոդը սարսափից լայնացած աչքերով շուտ տվեց գլուխը:

— Իսկ դուք գիտե՞ք, որ ձեր ժպիտը ծոմոված է,— հարցրեցի ես: Գիտենալով, որ այսուհետև Մոդը խնամելու է նրան, ես ուզում էի այդ զգայուն կնոջը որքան կարելի է խնայել:

— Որ այդպես է, այլևս չեմ ժպտա,— ասաց նա հանդարտ:— Ինքս էլ զգում էի, որ ինչ-որ բան կարգին չէ: Այսօր ամբողջ օրը աջ այտու թմրած էր: Վերջին երեք օրերին նախագգում էի, որ այդպիսի մի բան պիտի պատահի: Մարմնիս աջ կողմն աստիճանաբար թմրում էր, երբեմն կարճ ժամանակով անշարժանում էր ձեռքս, երբեմն էլ ոտքս:

— Այդպե՛ս, ուրեմն, իմ ժպիտը ծոմոված է հա՞,— հարցրեց նա մի պահ հետո:— Դե լավ, սրանից հետո ներքուստ կժպտամ, այսպես ասած՝ իմ հոգու խորքում, այո՛, հոգո՛ւ: Այնպես համարեցեք, թե հիմա ժպտում եմ:

Եվ մի քանի րոպե լուռ ու անշարժ մնաց՝ իր անհեթեթ քմահաճույքին անձնատուր:

Նրա բնավորությունը մի մազաչափ իսկ չէր փոխվել: Նա դեռևս հին, անգուսպ ու սոսկալի Գայլ Լարսենն էր, բանտարկված իր սեփական մարմնի մեջ, որը մի ժամանակ այնքան փառահեղ ու անհաղթահարելի էր: Այդ մարմինը հիմա անտեսանելի շղթաներով կաշկանդել, խավարի ու լուռության մեջ արգելափակել էր նրա հոգին, անջատելով նրան այն աշխարհից, որը եղել էր բուռն գործունեության թատերաբեմ: Այսուհետև նա չէր կարող «անել» բայի որևէ ժամանակը կամ եղանակը խոնարհել: Նրան մնում էր միայն՝ «լինել», լինել անշարժ, այնպես, ինչպես հենց ինքն ըմբռնում է մահ հասկացողությունը, կամենալ, բայց չկարողանալ կամեցածն իրագործել, մտքով կենդանի լինել, մտածել ու տրամաբանել, բայց մարմնապես մեռած, բոլորովին մեռած լինել...

Թեև ես ձեռնաշղթաները քանդեցի, Բայց, այնուամենայնիվ, մենք չէինք կարողանում որոշել, թե ներկա պայմաններում ինչպես պետք է վարվել նրա հետ: Մեր գիտակցությունը պարզապես ընդվզում էր: Մեզ համար Գայլ Լարսենն օժտված էր անսպառ կարողությամբ: Թվում էր, թե նա կարող է որևէ ժամանակ ազատվել մարմնի կապանքներից և մի սարսափելի բան անել: Մեր նախկին փորձը հիմքեր էր տալիս այսպիսի կասկածների, և մենք անհանգիստ մտքով գնացինք աշխատելու:

Ես գտել էի երկոտանու կարճության պատճառով ստեղծված խնդրի լուծումը: Ամբարձիչ թոկասարքի միջոցով, որը նոր էի սարքել, ես բարձրացրի առաջակայմի կոթը և, անցկացնելով նավաբազրիքի վրայով, իջեցրի տախտակամածի վրա: Դրանից հետո երկոտանու միջոցով նավ բարձրացրի նաև խոշոր կայմաթևը, որը քառասուն ոտնաչափ երկար լինելով կարող էր առաջակայմը բարձրացնել և տեղադրել: Մի օժանդակ թոկի օգնությամբ, որն ամրացրել էի երկոտանուն, կայմաթևը բարձրացրի մոտավորապես ուղղահայաց դիրքի և ապա նոր կոթն իջեցրի տախտակամածի վրա: Որպեսզի կոթը չսահի, շուրջը մեխեցի փայտի հաստ կտորներ: Մեկականնի ծիծեռնիկը, որը նախօրոք հաստատված էր երկոտանուն, այժմ ամրացրի կայմաթևի ծայրին: Նավացուկի ճախարակին ամրացած թոկը թուլացնելով կամ ձգելով, ես կարող էի ուզածս ժամանակ կայմաթևի գլուխը բարձրացնել կամ ցածրացնել, անշարժ պահելով նրա կոթը, իսկ կայմակալ պարանների օգնությամբ հնարավոր էր կայմաթևը մեկ կողմից մյուսը պտտել: Կայմաթևի ծայրին հաստատել էի նաև մի ամբարձիչ թոկ, և երբ ամբողջ հարմարանքն ավարտվեց, մեծ զարմանքով նկատեցի, որ նա հսկայական ուժ և հնարավորություն ունի:

Ամբողջ գործը գլուխ բերելու համար հարկավոր եղավ երկու օր աշխատել: Երրորդ օրվա առավոտյան ինձ հաջողվեց առաջակայմը տախտակամածից բարձրացնել, որից հետո ջանացի նրա կոթը տեղավորել համապատասխան կայմախոռոչի մեջ: Բայց ատաղձագործության արհեստում բավականին համբավ էի: Ես սղոցեցի, կտրատեցի ու տաշեցի ամուր կոթը, մինչև որ այնպիսի տեսք ստացավ, որ կարծես մի վիթխարի մուկ կրճել էր այն: Բայց, համենայն դեպս, նա սեղմ տեղավորվեց իր խոռոչի մեջ:

— Գլուխ կգա, անպայման գլուխ կգա,— գոչեցի ես:

— Դուք գիտե՞ք, թե դոկտոր Ջորդանը ինչպես էր ստուգում որևէ փաստ,— հարցրեց Մոդը:

Ես գլուխս թափահարեցի և մի պահ դադարեցի վզիս վրա թափած տաշեղները մաքրելուց:

— Նա ստուգում էր հետևյալ հարցով, արդյոք կարո՞ղ ենք այդ փաստն օգտագործել, կարո՞ղ ենք մեր կյանքը նրան վստահել:

— Ըստ երևույթին, դոկտոր Ջորդանին շատ եք սիրում,— ասացի ես:

— Երբ ես կործանեցի իմ հին պանթեոնը և դուրս գցեցի Նապոլեոնին, Կեսարին ու մյուսներին, անմիջապես կառուցեցի մի նոր պանթեոն,— ասաց Մոդը լրջությամբ,— և այնտեղ առաջին հերթին զետեղեցի Ջորդանին:

— Ժամանակակից հերոսին . . .

— Հենց այդ պատճառով էլ ավելի մեծ հերոս: Մի՞թե հին աշխարհի հերոսները կարող են համեմատվել մերոնց հետ:

Ես գլուխս թափահարեցի: Մեր համոզմունքներն այնքան նույնանման էին, որ վիճաբանելու շատ քիչ նյութ ունեինք: Գոնե կյանքի վերաբերյալ մեր կարծիքներն ու տեսակետներն իրարից չէին տարբերվում:

— Երկուսս էլ գրաքննադատ լինելով հանդերձ՝ զարմանալի հեշտությամբ ընդհանուր լեզու ենք գտնում, — ծիծաղեցի ես:

— Նաև որպես նավաշինարար և օգնական, — պատասխանեց նա, նույնպես ծիծաղելով:

Բայց այդ օրերին մեր ծանր աշխատանքի և Գայլ Լարսենի ահավոր դրության պատճառով մենք շատ քիչ առիթ ունեինք ծիծաղելու:

Գայլ Լարսենը մի նոր հարված ստացավ: Նա կորցրեց կամ սկսեց կորցնել իր ձայնը, որը վերագտնում էր որոշ ընդհատումներով: Նրա արտահայտությամբ՝ ձայնալարերը գործում էին սակարանի հեռագրալարերի նման. աշխատում էին այն ժամանակ, երբ «միացում» կար: Երբ նրա ձայնալարերը «միացվում» էին, նա խոսում էր բնական կերպով, թեև սովորականից ավելի դանդաղ ու ծանր: Հետո ձայնը հանկարծ դավաճանում էր, երբեմն նախադասության ճիշտ կեսին, և մենք հաճախ ժամերով սպասում էինք, որ ընդհատված կապը նորից հաստատվի: Նա գանգատվում էր ուժեղ գլխացավերից և, հենց այդ ժամանակաշրջանում հղացավ հաղորդակցության մի միջոց, որն օգտագործելու էր ձայնը բոլորովին կորցնելու դեպքում: Իր ձեռքի մեկ ճնշումը պետք է նշանակեր «այո», իսկ երկու ճնշումը՝ «ոչ»: Եվ լավ եղավ, որ նա այդ մասին մեզ հայտնեց, որովհետև նույն երեկոյան մեկընդմիջտ կորցրեց խոսելու ունակությունը: Դրանից հետո նա ձեռքի ճնշումներով էր միայն պատասխանում մեր հարցերին, իսկ երբ ցանկանում էր խոսել, ձախ ձեռքով ընթեռնելիորեն գրում էր իր մտքերը թղթի վրա:

Խստաշունչ ձմեռը վրա հասավ: Փոթորիկներն իրար հաջորդեցին՝ ձյուն, կարկուտ կամ անձրև տեղալով: Ծովակատուներն սկսեցին իրենց մեծ գաղթը դեպի հարավ և ծվարավայրը շուտով ամայացավ: Ես տենդոտ կերպով անդադար աշխատում էի: Հակառակ վատ եղանակին և մանավանդ հողմին, որն առանձնապես խանգարում էր ինձ, ես առավոտից մինչև գիշեր տախտակամածի վրա էի, և գործը նկատելիորեն առաջ էր գնում:

Ես օգտվեցի այն դասից, որ սովորել էի ժամանակին, երբ սխալմամբ երկոտանին կանգնեցրել էի կայմակալ պարաններն ամրացնելուց առաջ և հետո հարկադրվել էի երկու անգամ նրա գագաթը բարձրանալ: Այժմ առաջակայմի գլուխը տախտակամածից մի քիչ վեր բարձրացնելով՝ նախօրոք դրան ամրացրի բոլոր անհրաժեշտ թոկերը: Բայց, ինչպես միշտ, այս գործն էլ գլուխ բերելու համար շատ ավելի ժամանակ վատնեցի, քան ենթադրել էի. ինձ հարկավոր եղավ երկու ամբողջ օր աշխատել, մինչև որ բոլոր թոկերը կարգին ամրացրի: Բայց տակավին շատ անելիք կար: Հարկավոր էր, օրինակ, առագաստները ծայրեծայր նորոգել:

Մինչ թոկերն առաջակայմին էի կապում, Մոդը կարկատում էր առագաստները: Բայց նա միշտ պատրաստ էր գործը կիսատ թողնելով ինձ օգնության հասնել ամեն անգամ, երբ երկուսից ավելի ձեռքի կարիք էր զգացվում: Առագաստալաթը հաստ ու ամուր էր, իսկ Մոդը

կարում էր եռակող ասեղով, որը հրում էր կաշուց պատրաստած հասարակ հարմարանքի օգնությամբ: Նրա մատներին շուտով ուռուցքներ առաջացան, բայց նա քաջաբար շարունակեց մաքառել: Բացի այս աշխատանքից, նա եփում էր ճաշը և միաժամանակ խնամում հիվանդին:

— Կորչի՛ սնոտիապաշտությունը,— ասացի ես ուրբաթ առավոտ:— Պետք է հենց այսօր կանգնեցնել կայմը:

Ամեն ինչ պատրաստ էր գործն սկսելու համար: Կայմաթևի թոկը նավացուկի ճախարակին կապելով, ես առաջակայմը բարձրացրի այնպես, որ այն անջատվի տախտակամածից: Հետո ճախարակին կապեցի երկոտանու ամբարձիչ թոկը, որը միացված էր կայմաթևի գագաթին, և բռնակը մի քանի անգամ պտտելով՝ առաջակայմը ուղղահայաց դիրքով կանգնեցրի:

Մոդը, որ պահում էր թմբկազլանի շուրջը պտտվող թոկի ծայրը, ձեռքերն ազատվելուն պես ծափ տալով գոչեց.

— Գործը զլո՛ւխ է գալիս: Մենք կարող ենք կյանքներս նավին վստահել:

Բայց նրա դեմքն իսկույն տխրեց:

— Կայմը ճիշտ անցքի վրա կախված չէ,— ասաց նա:— Արդյոք ամեն ինչ նորից-նոր ր պիտի սկսեք:

Ես ներողամտաբար ժպտացի և կայմաթևի պարաններից մեկը թուլացնելով ու մյուսը ձգելով՝ կայմը տեղափոխեցի տախտակամածի կենտրոնը: Բայց նա դեռ անցքի վերևում չէր: Մոդի դեմքը նորից տխրեց, և ես նորից ներողամտաբար ժպտացի: Կայմաթևի պարանը թուլացնելով և երկոտանու պարանը համապատասխանոր են ձգելով՝ կայմի կոթը տեղափոխեցի անցքի ճիշտ վերևը: Հետո Մոդին բացատրեցի, թե ինչպես պետք է կայմը ցածրացնել և ինքս իջա նավամբար, որպեսզի կայմի կոթը նստեցնեմ իր խոռոչի մեջ, երբ ներքև սահի:

Այնտեղից ես Մոդին ձայն տվի, և կայմն սկսեց ցածրանալ հեշտ ու կանոնավոր: Քառակուսի խարիսխով կոթը ուղիղ իջնում էր դեպի քառակուսի խոռոչը: Սակայն վերջին պահին կոթը մի թեթև շրջվեց, և նրա անկյունները չհամընկան խոռոչի անկյուններին: Բայց ես նույնիսկ մի ակնթարթ չշփոթվեցի: Մոդին ձայն տալով, որ դադարեցնի ցածրացնելը, իսկույն տախտակամած բարձրացա և ամբարձիչ հարմարանքի թոկն ամրացրի կայմին: Ամբար վերադառնալիս՝ Մոդին հրահանգեցի ձգել այդ թոկը: Ճրագի լույսով ես տեսա, թե ինչպես կայմակոթը աստիճանաբար պտտվեց, մինչև որ նրա և կայմախոռոչի անկյունները համապատասխան դիրքերի հասան: Մոդն ամրացրեց թոկը, վերադարձավ ճախարակի մոտ և սկսեց բռնակը պտտել: Կայմը դանդաղորեն մի քանի մատնաչափ վար իջավ, բայց միաժամանակ նորից թեթևակի շրջվեց: Մոդը դարձյալ ճշտեց թոկը և պտտեց ճախարակի բռնակը: Անկյուններն այս անգամ համընկան, և կայմակոթը նստեց իր խոռոչի մեջ:

Ես Մոդին կանչեցի, և նա վազելով ամբար իջավ: Ճրագի դեղին լույսի տակ մենք դիտեցինք մեր աշխատանքի արդյունքը: Ապա իրար նայեցինք և միմյանց ձեռք սեղմեցինք: Մեր երկուսի աչքերն էլ շրջվել էին հաջողության հրճվանքից:

— Վերջ ի վերջո, այնքան էլ դժվար չիրագործվեց,— նկատեցի ես:— Ամբողջ դժվարությունը նախապատրաստական աշխատանքի մեջ էր:

— Իսկ որքա՞ն հիանալի եղավ այդ իրագործումը,— ասաց Մոդը:— Ես հագիվ եմ կարողանում հավատալ, որ այս հսկա կայմը իրոք կանգնել է, որ դուք այն հանել եք ջրից, վեր եք բարձրացրել, կանգնեցրել եք օդում և նստեցրել այստեղ իր սեփական խոռոչի մեջ: Դա տիտանական մի աշխատանք է:

— «Եվ նրանք բազում գյուտարարություններ արեցին»,— մեջբերեցի զվարթությամբ, բայց հանկարծ կանգ առա և սկսեցի հոտ քաշել:

Իսկույն ճրագին նայեցի, սակայն նա չէր մխում: Նորից սկսեցի հոտ քաշել:

— Ինչ-որ բան է այրվում,— հանկարծ գոչեց Մոդը համոզված շեշտով:

Նետվեցինք դեպի սանդուղքը, բայց ես Մոդից անցնելով՝ ավելի առաջ տախտակամած հասա: Որսորդների խուցը տանող անցքից թանձր ծուխ էր բարձրանում:

— Գայլը դեռ կենդանի է,— մրմնջացի ինձուհին և ծխի միջով խոյացա աստիճաններից ցած: Ծուխն այնքան թանձր էր, որ ստիպված էի խարխափելով առաջանալ: Գայլ Լարսենի կախարդանքը դեռ շատ ուժեղ էր իմ երևակայության վրա և վայրկյան առ վայրկյան սպասում էի, որ այդ անդամալույծ հսկայի ձեռքը մահացու սեղմումով կփաթաթվի կոկորդիս: Սկսեցի վարանել: Ետ դառնալու և աստիճաններով վեր սլանալու ցանկությունը հետզհետե տիրապետում էր ինձ: Բայց հանկարծ մտաբերեցի Մոդին: Իմ աչքի առաջ նա պատկերացավ այնպես, ինչպես վերջին անգամ նավամբարում տեսել էի ճրագի լույսի տակ՝ հրճվանքից խոնավացած շագանակագույն աչքերով: Եվ հասկացա, որ չեմ կարող ետ գնալ:

Գայլ Լարսենի անկողնին մոտեցա, ծխից գրեթե շնչահեղձ, և խարխափելով գտա ու բռնեցի նրա ձեռքը: Նա անշարժ պառկած էր, բայց ձեռքիս հպումն զգալով՝ թեթևակի ցնցվեց: Ես շոշափեցի նրա վերմակները: Նրանք տաք չէին և կրակի ոչ մի հետք չկար: Բայց որտեղի՞ց էր այդ կուրացնող, խեղդող ու հազացնող ծուխը: Մի պահ գլուխս կորցրեցի և խելացնոր խոյացա դեպի աստիճանները: Ճանապարհին ընդհարվեցի սեղանին, և դրա պատճառած ցնցումն ինձ որոշ չափով զգաստացրեց: Մտածեցի, որ անդամալույծ մարդը միայն իր պառկած տեղում կարող էր կրակ վառել:

Երբ վերադարձա Գայլ Լարսենի անկողնու մոտ, զարմանքով տեսա, որ Մոդը այնտեղ է: Թե որքա՞ն ժամանակ էր նա մնացել այդ հեղձուցիչ մթնոլորտում, չկարողացա իմանալ:

— Իսկո՛ւյն բարձրացեք տախտակամած,— հրամայեցի կտրուկ շեշտով:

— Բայց, Հեմֆրի...— սկսեց նա թախանձել ինչ-որ տարօրինակ, խեղդուկ ձայնով:

— Ո՛չ, ես խնդրում եմ,— գոչեցի խստությամբ:

Նա հնազանդվեց ու հեռացավ: Քիչ հետո անդրադարձա, որ ծխի միջով նա կարող էր սանդուղքը չզանել: Վազեցի նրա հետևից և կանգ առա սանդուղքի մոտ: Գուցե նա արդեն բարձրացել է: Դեռ վարանում էի, երբ լսեցի նրա մեղմ ձայնը:

— Օ՛, Հեմֆրի, ճանապարհս կորցրել եմ,— ասաց նա:

Մոդին գտա միջնորմի հետևում խարխափելիս, և մասամբ գրկած, մասամբ քարշ տալով՝ նրան բարձրացրի տախտակամած: Մաքուր օդը նեկտարի պես կազդուրիչ էր: Մոդը պարզապես թուլացել էր գլխապտույտից: Նրան պառկեցնելով հատակին, երկրորդ անգամ սլացա ներքև:

Համոզված էի, որ ծխի օջախը պետք է լինի Գայլ Լարսենի մոտակայքում, ուստի քայլեցի ուղիղ դեպի նրա անկողինը: Երբ նորից շոշափում էի վերմակը, վերնից ինչ-որ տաքություն ձեռքս այրեց, և ես իսկույն ետ քաշվեցի: Այն ժամանակ ամեն ինչ պարզ եղավ ինձ համար: Նա վառել էր իր վերնի անկողնի ներքնակը: Նրա ձախ ձեռքը բավականին կենսունակ լինելով՝ կարող էր այդ բանն անել: Ներքնակի խոնավ հարդը, որը վառվել էր ներքնից, միջանցիկ քամու բացակայության պատճառով պարզապես մխացել էր ամբողջ ժամանակ:

Երբ ներքնակը մահճակալից դուրս քաշեցի, օդում քայքայվելով բաժան-բաժան եղավ, և հարդը բոցավառվեց: Մահճակալի վրա մնացած հարդը մարելուց հետո ես տախտակամած խոյացա, որպեսզի մի քիչ մաքուր օդ շնչեմ:

Մի քանի դույլ ջուրը բավական եղավ հանգցնելու այրվող ներքնակը, որը տարածված էր խցի հատակին: Տասը բուպե հետո ծուխը բոլորովին մաքրվեց, և այն ժամանակ միայն Մոդին թույլ տվի ներքև իջնել: Գայլ Լարսենը կորցրել էր գիտակցությունը, բայց թարմ օդը նրան շուտով ուշքի բերեց: Մենք դեռ շարունակում էինք նրան խնամել, երբ նա նշանացի հասկացրեց, որ թուղթ ու մատիտ է ուզում:

— «Խնդրում եմ ինձ չընդհատել,— գրեց նա:— Ես ժպտում եմ»:

«Ինչպես տեսնում եք, ես տակավին թթխմորի կտոր եմ»,— գրեց նա մի քիչ հետո:

— Ինձ համար ուրախալին այն է, որ միայն փոքր կտոր եք,— ասացի ես բարձրաձայն:

«Շնորհակալություն,— գրեց նա:— Բայց դուք պատկերացնո՞ւմ եք, թե դեռ որքան պիտի փոքրանամ մինչև մեռնելս»:

«Բայց ես դեռ այստեղ եմ, Հեմփ,— գրեց նա մի վերջին փայլատակումով:— Հիմա մտքերս շատ ավելի պայծառ են գործում, քան երբևէ իմ ողջ կյանքում: Ոչ մի բան նրանց չի խանգարում: Ուղեղիս կենտրոնացվածությունը կատարյալ է: Ես ամբողջովին այստեղ եմ, ավելի՝ քան երբևէ»:

Դա կարծես գերեզմանի խավարից եկող մի պատգամ էր, որովհետև այս մարդու մարմինը դարձել էր իր շիրիմը: Եվ այդ տարօրինակ դամբարանի մեջ հոգին ապրում ու թրթռում էր: Նա դեռ պիտի ապրեր ու թրթռար, մինչև որ հաղորդակցության բոլոր թելերը կտրվեին, իսկ դրանից հետո, ո՞վ գիտե, դեռ որքան ժամանակ ևս պիտի ապրեր ու թրթռար. . .

Գլուխ երեսուներորդ

«Կարծեմ ձախ կողմս էլ անգճա է դառնում,— գրեց Գայլ Լարսենը՝ նավը հրկիզելու փորձի հաջորդ առավոտը:— Թմրությունը գնալով ավելանում է: Ձեռքս դժվարությամբ եմ շարժում: Սրանից հետո պետք է ավելի բարձր խոսեք: Վերջին թելերը կտրվում են»:

— Ցավեր զգո՞ւմ եք,— հարցրեցի ես:

Հարկ եղավ ավելի բարձր կրկնել նույն հարցը, և այն ժամանակ նա պատասխանեց:

«Ոչ միշտ»:

Նա ձախ ձեռքը դանդաղ ու ծանր շարժելով՝ թղթի վրա խզբզեց ինչ-որ խոսքեր, որ մենք ամենամեծ դժվարությամբ կարողացանք վերծանել: Դա նման էր «հոգու պատասխանին», որպիսին տալիս են ոգեհարցման այն սեանսներին, որոնց մուտքի տոմսը մեկ դոլլար արժե:

«Բայց ես դեռ այստեղ եմ, ամբողջովին այստեղ»,— խզմզեց նա, ձեռքն ավելի դանդաղ ու ծանր շարժելով:

«Այն ժամերին, երբ ցավերով չեմ տանջվում, ես վայելում եմ լիակատար անդորր ու խաղաղություն: Իմ միտքը երբեք այսքան պայծառատեսությամբ չէր գործել: Կյանքի ու մահվան մասին այժմ խորհրդածում եմ իմաստուն հնդիկների նման»:

— Իսկ անմահությա՞ն մասին,— բարձրաձայն հարցրեց Մոդը նրա ականջին:

Գայլ Լարսենի ձեռքը երեք անգամ ապարդյուն կերպով փորձեց ինչ-որ բան գրել, ապա մատիտը ցած ընկավ: Մենք իզուր փորձեցինք այն տեղավորել նրա ձեռքում: Մատներն այլևս չէին կարող բռնել: Ի վերջո Մոդը իր ձեռքով նրա մատները սեղմեց մատիտի շուրջը և նա սկսեց գրել խոշոր տառերով, բայց այնքան դանդաղ, որ յուրաքանչյուր տառը բռնեցինք եր տևում:

«Ց-Ն-Դ-Ա-Բ-Ա-Ն-Ո-Ի-Թ-Ց-Ո-Ի-Ն»:

Դա Գայլ Լարսենի ամեն ավերջին խոսքն էր՝ «Ցնդաբանություն»... սկեպտիկ և անուղղելի մինչև վերջին բռնեց: Նրա ձեռքը թուլացավ, և մարմինը թեթևակի ցնցվեց: Դրանից հետո ոչ մի շարժում: Մոդը թողեց նրա ձեռքը: Մատները հենց իրենց ծանրությունից հետզհետե բացվեցին, ու մատիտը վար սահեց:

— Ինձ լսո՞ւմ եք,— գոչեցի ես, բռնելով նրա մատները և սպասելով «այո» նշանակող միակ ճնշումին: Պատասխան չկար: Ձեռքը մեռած էր:

— Շրթները թեթև շարժվում են,— նկատեց Մոդը:

Ես հարցումս կրկնեցի: Շրթները նորից շարժվեցին: Մոդն իր մատների ծայրը հպեց նրա շրթներին: Ես դարձյալ կրկնեցի հարցումը:

— «Այո»,— հայտնեց Մոդը:

Մենք, սպասելով, իրար նայեցինք:

— Դրանից ի՞նչ օգուտ,— մրմնջացի ես:— Հիմա ի՞նչ կարող ենք ասել նրան:

— Հարցրեք...

Մոդը վարանեց ու կանգ առավ:

— Հարցրեք մի բան, որի պատասխանը «ոչ» լինի,— խորհուրդ տվի ես։— Այն ժամանակ մենք ստույգ կլիմանանք։

— Քաղցած եք,— հարցրեց Մողը։

Գայլ Լարսենի շրթները շարժվեցին նրա մատների տակ և նա հայտնեց «այո»։

— Միս ուզո՞ւմ եք,— եղավ Մողի հաջորդ հարցը։

— «Ոչ»,— պատասխանեցին Գայլ Լարսենի շրթները։

— Իսկ մսաջու՞ր։

— Այո, մսաջուր է ուզում,— մեղմ ձայնով հայտնեց Մողը, ինձ նայելով։— Քանի դեռ լսողությունը տեղն է, մենք կարող ենք նրա հետ հաղորդակցվել։ Բայց հետո . . .

Եվ տարօրինակ հայացքով Մողը նայեց ինձ։ Ես տեսա, որ նրա շրթները դողդողում են և աչքերի մեջ լողում են արցունքներ։ Նա դեպի ինձ թեքվեց, և ես նրան սեղմեցի թևերիս մեջ։

— Օ՛հ, Հեմֆրի,— հեծկլտաց նա,— ե՞րբ պիտի վերջանա այս ամենը։ Այնքան եմ տանջվում, այնքա՛ն տանջվում...

Նրա գլուխը հակվեց ուսիս և դուրաբեկ մարմինն սկսեց ցնցվել բուռն հեկեկանքից։ Նա փետուրի պես թեթև էր բազուկներիս մեջ, այնքա՛ն նուրբ, այնքա՛ն եթերային։ «Վերջ ի վերջո ջղերը քայքայվեցին,— մտածեցի ես։— Ի՞նչ պիտի անեմ առանց նրա օգնության»։

Ես սփոփեցի ու հանդարտեցրի նրան, մինչև որ արիաբար իրեն տիրապետեց ու հոգեպես կազդուրվեց այնքան արագ, որքան ֆիզիկապես ընդունակ էր կազդուրվելու։

— Ես պետք է ինձնից ամաչեմ,— ասաց նա, ապա ժպտաց իր չարաճճի ժպիտով, որն այնքան պաշտում եմ, և ավելացրեց։— Բայց ես միայն մի պստիկ կլին եմ...

«Մի պստիկ կլին» խոսքը ինձ մեկեն ցնցեց էլեկտրական հոսանքի պես։ Դա իմ սեփական խոսքն էր, իմ փաղաքշական խոսքը, որով գաղտնորեն արտահայտում էի նրա նկատմամբ տածած սերս։

— Այդ դարձվածքը որտեղի՞ց գտաք,— հարցրի այնպիսի հանկարծակիությամբ, որ նա էլ իր հերթին ցնցվեց։

— Ի՞նչ դարձվածք։

— «Մի պստիկ կլին»։

— Այդ ձե՞րն է,— հարցրեց նա։

— Այո,— պատասխանեցի,— իմն է։ Ես եմ այն հորինել։

— Երևի բարձրաձայն կրկնել եք քնած ժամանակ,— ժպտաց նա։

Կայծկլտացող լույսերը նորից շողացին նրա աչքերում։ Եվ ես վստահ եմ, որ այդ պահին աչքերս ասում էին շատ ավելի բան, քան թույլ կտայի իմ լեզվին։ Ես հակվեցի դեպի նա, այո,

ակամայից թեքվեցի դեպի նա, քամուց թեքվող ծառի նման: Օ՛հ, մենք միմյանց այնքան մոտ էինք այդ վայրկյանին. . . Բայց նա գլուխը թափահարեց, կարծես քուն կամ ինչ-որ երազ թափ տալու ձևով ու ասաց.

— Ես իմ ամբողջ կյանքում լսել եմ այդ դարձվածքը: Հայրս միշտ այդպես էր կոչում մորս:

— Միևնույն է, դա իմ դարձվածքն է,— ասացի ես համառությամբ:

— Որը հորիմե էք ձեր մո՞ր համար...

— Ոչ,— պատասխանեցի ես, և նա այլևս չհարցուփորձեց, թեև կարող էի երդվել, որ որոշ ժամանակ նրա աչքերում խաղաց ծաղրական ու գրգռիչ մի արտահայտություն:

Առաջակայմը կանգնեցնելուց հետո աշխատանքը շուտափույթ առաջ գնաց: Առանց լուրջ խոչընդոտների հանդիպելու, ես կարճ ժամանակում իր խոռոչի մեջ տեղավորեցի նաև միջնակայմի կոթը: Այդ կատարվեց մի ամբարձիչ կայմաթևի օգնությամբ, որն ամրացրել էի առաջակայմին: Մի քանի օր հետո կայմակալ պարաններն ու թոկասարքերը պինդ կապված էին իրենց համապատասխան տեղերում: Հայեկի առագաստները դեկավարելը դժվար և նույնիսկ վտանգավոր գործ էր երկու հոգուց բաղկացած անձնակազմի համար, ուստի ես նրանց կայմերը տախտակամած բարձրացնելուց հետո իրար կապեցի:

Մի քանի օր էլ տրամադրեցինք առագաստների նորոգումն ավարտելու և դրանք կայմերին ամրացնելու համար: Դրանք երեքն էին՝ ցոկակայմի, առաջակայմի ու միջնակայմի առագաստները: Կարկատված, փոքրացած ու այլանդակված այդ առագաստները ծիծաղելի տեսք ունեին և բնավ չէին սազում «Ուրվականի» նման նրբակերտ երկկայմանավին:

— Բայց նրանք գործ կտեսնեն,— գոչեց Մողը զվարթությամբ:— Մենք նրանց գործի կդնենք ու կյանքներս կվստահենք նրանց...

Այն արհեստների թվում, որոնց վերջերս լավ կամ վատ տիրապետել էի, առագաստաշինությունը ամենահետիմներից էր և պետք է խոստովանեմ, որ այդ արհեստի մեջ այնքան էլ չէի փայլում: Ինձ համար ավելի հեշտ էր ձեռքի տակ եղած առագաստներն օգտագործել, քան նորերը սարքել: Ես չէի կասկածում, որ հներով կարող եմ «Ուրվականը» մի կերպ տանել մինչև Ճապոնիայի նավահանգիստներից մեկնումեկը: Ի դեպ, ժամանակին նավագնացության վերաբերյալ դասագրքերից ինչ-որ գիտելիքներ թխել էի ուղեղումս: Բացի դրանից, ձեռքի տակ ունեի Գայլ Լարսենի աստղային քարտեզը՝ դյուրըմբռնելի մի հնարանք, որը, ինչպես ինքն էր ասում, նույնիսկ որևէ երեխա կարող էր օգտագործել:

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում Գայլ Լարսենի դրությունը շատ չէր փոխվել, թեև խլությունը գնալով ավելանում էր, իսկ շրթների շարժումներն աստիճանաբար ավելի էին թուլանում: Բայց այն օրը, երբ առագաստները կայմերին հաստատեցինք, նա վերջնականապես կորցրեց լսողությունը և նրա շրթները ամենավերջին անգամ շարժվեցին: Ես նրան հարցրեցի. «Տակավին այստե՞ղ եք», և նրա շրթները պատասխանեցին «այո»:

Վերջին թելը կտրվել էր: Բայց մարմնեղեն շիրմի մեջ դեռ բնակվում էր հոգին: Այն կատաղի իմացականությունը, որը մենք ճանաչել էինք, այժմ արգելափակված վիճակում դեռ շարունակում էր միսալ լռության ու խավարի մեջ: Այդ իմացականությունն այլևս չէր զգում իր

մարմինը: Նրա համար այլևս գոյություն չունեին արտաքին աշխարհ: Նա գիտակցում էր միայն իրեն, ինչպես և անդորրի ու մթության անսահման խորությունը:

Գլուխ երեսունիններորդ

Հասավ մեր մեկնումի օրը: Այլևս ոչինչ չէր պահում մեզ Զանքի կղզում: «Ուրվականի» ծայրատ կայմերն իրենց տեղերում էին, իսկ ծիծաղելի առագաստները՝ դրանցից կախ: Իմ այդ ամբողջ ձեռակերտը բավականաչափ ամուր էր, թեև ոչ գեղեցիկ: Վստահ էի, որ այն լավ պիտի ծառայեր, և նրան նայելիս ինձ զգում էի ամենակարող:

«Ես ինքս այն կերտեցի, իմ սեփական ձեռքերով կառուցեցի» — ուզում էի գոռալ ամբողջ ձայնով:

Մոդը և ես հաճախ էինք արձագանքում միմյանց մտքերին: Երբ պատրաստվում էինք միջնակայմի մեծ առագաստը պարզել, նա ասաց.

— Պատկերացնո՞ւմ եք, Հեմֆրի, այս ամենը ձեր սեփական ձեռքերով եք կառուցել . . .

— Բայց ուրիշ երկու ձեռքեր էլ ինձ օգնեցին, — պատասխանեցի ես: — Երկու փոքրիկ ձեռքեր . . . միայն թե չասեք, որ սա էլ ձեր հոր օգտագործած արտահայտությունն է:

Նա ծիծաղելով գլուխը թափահարեց, ապա սկսեց ձեռքերը զննել:

— Երբեք չպիտի կարողանամ սրանք առաջվա պես մաքրել, — ասաց նա ողբաձայն, — ոչ էլ փափկացնել օդից ու արևից կոշտացած մաշկը:

— Այդպիսի դեպքում մաշկի կեղտն ու կոշտությունը ձեզ պատիվ կբերեն, — պատասխանեցի նրա ձեռքերը բռնելով: Եվ չնայած իմ որոշմանը, քիչ էր մնում համբուրելի այդ թանկագին ձեռքերը, եթե նա իսկույն ետ չքաշեր:

Մեր ընկերական փոխհարաբերությունը սպառնալիքի տակ էր: Ես իմ սիրտ զգացմունքին երկար տիրապետել էի, բայց այժմ նա էր ինձ տիրապետում: Նա արդեն բեկել էր կամքս և արտացոլվել աչքերիս մեջ, իսկ հիմա ուզում էր հրապուրել նաև լեզուս, նույնիսկ շրթներս, որովհետև այս վայրկյանին խելագարի պես տենչում էի համբուրել այդ փոքրիկ ձեռքերը, որոնք հավատարմորեն ծառայել ու աշխատել էին իմիներթի հետ: Գլուխս կորցրել էի: Իմ էության խորքից բարձրանում էր մի կոչ, որը եղջերափողի կանչի նման ինձ ձգում էր դեպի նա: Հողմը առաջ մղեց մարմինս, մինչև որ դիմադրելու անկարող՝ ես անգիտակցաբար հակվեցի Մոդի վրա: Նա հասկացավ: Եվ չէր կարող չհասկանալ: Իսկույն ձեռքերը ետ քաշեց և, հայացքը հեռացնելուց առաջ, խուզարկու աչքերով նայեց ինձ:

Ամբարձիչ մեքենայի օգնությամբ ես թոկասարքերը փոխադրել էի նավացուկի ճախարակի մոտ, իսկ հիմա դրա միջոցով պարզեցի միջնակայմի մեծ առագաստը: Դա բավականին անճարտար միջոց էր, բայց, այնուամենայնիվ, գործը շուտով գլուխ բերվեց: Դրա օգնությամբ պարզեցի նաև առաջակայմի առագաստը, որն սկսեց թաքտալ քամուց:

— Այս փոքր ծովախորշում մեզ չի հաջողվի խարիսխը նավի վրա բարձրացնել, — ասացի ես: — Մինչև այդ անենք, նավը կարող է ժայռերին խփվել:

— Ուրեմն ի՞նչ պետք է անել,— հարցրեց Մոդը:

— Նրանից հրաժարվել: Երբ ես շղթան արձակեմ, դուք եղեք ճախարակի մոտ: Դրանից հետո ես կվազեմ ղեկանիվի մոտ, իսկ նույն ժամանակում դուք եռանկյուն առագաստը կպարզեք:

Ես երկար ուսումնասիրել էի նավը ճամփա հանելու միջոցառումները և, քանի որ եռանկյուն առագաստի թռկն ամրացված էր ճախարակին, բոլորովին համոզված էի, որ Մոդը կարող էր պարզել այդ ամենակարևոր առագաստը: Ուժեղ քամի էր փչում դեպի ցամաք: Թեպետ ջուրը խաղաղ էր, բայց հարկավոր էր արագ աշխատել՝ ծովախորշից ապահով դուրս գալու համար:

Երբ երկաթյա կեռն արձակեցի, խարսխի շղթան դրդալով սահեց իր անցքի միջով ու ծովն ընկավ: Ես իսկույն վազեցի ղեկանիվի մոտ և սկսեցի պտտել: «Ուրվականը» կարծես վերակենդանացավ և, հենց որ առագաստները լցվեցին օդով, սկսեց շարժվել: Երբ եռանկյուն առագաստը բարձրանալով ուռեց, «Ուրվականի» ցուկը հանկարծակի շուռ եկավ, և ես ստիպված եղա ղեկանիվը մի քանի կողմնամաս պտտել, որպեսզի պահպանեմ նավի հավասարակշռությունը:

Եռանկյուն առագաստին նախօրոք ամրացրել էի մի պարան, որն ինքնաբերաբար մեկ կողմից մյուսն էր շրջում այն, ուստի այդ գործը կատարելու համար Մոդի մասնակցության կարիքը չկար: Բայց նա դեռ շարունակում էր այն բարձրացնել, երբ ղեկանիվը թեքեցի: Դրությունը վտանգավոր դարձավ, որովհետև «Ուրվականը» սլանում էր ուղիղ դեպի ափը, որն այժմ գտնվում էր մեզնից մոտավորապես մեկ քարընկեց հեռավորության վրա: Բայց իմ կամքին հպատակվելով՝ նա վերջին բոպեին շրջվեց քամու կողմը: Լսվեց թրթռացող առագաստների թփթփոցը, որը շատ հաճելի էր իմ ականջին, և նավն սկսեց առաջ ընթանալ:

Մոդն իր պարտականությունը վերջացնելով եկավ ինձ մոտ: Քամուց ցիրուցան մազերը ծածկված էին փոքր գդակի տակ, այտերը կարմրել էին աշխատանքի ճիգից, աչքերը խանդավառությունից մեծացել ու պայծառացել էին և ռունգները դողդողում էին ծովի թարմ օդը շնչելիս: Նրա շագանակագույն աչքերը հիշեցնում էին վախեցած եղնիկի աչքեր: Բայց նույն աչքերը հանկարծ փայլեցին վայրի ու խիզախ արտահայտությամբ, որպիսին ես առաջ չէի տեսել, և շրթներն իրարից հեռացան ու շունչը կտրվեց այն պահին, երբ «Ուրվականը» սլանում էր դեպի ներքին ծովախորշի մուտքին բարձրացող ապառաժյա պատվարը: Սակայն նավը քամու հոսանքից քշվելով՝ առանց խփվելու մտավ ապահով ջրերի գոտին:

Ծովակատվի որսորդության ժամանակաշրջանում որպես նավապետի օգնական աշխատելու այժմ ինձ օգտակար եղավ: Ես նավը դուրս բերեցի ներքին ծովախորշից, ապա, արտաքին ծովախորշը եզերելով, ուղղվեցի դեպի բաց ծով: «Ուրվականը» օվկիանոսի հզոր շնչից կենդանություն ստանալով՝ առաջ էր շարժվում: Նա հուշիկ բարձրանում էր խոշոր ալիքների գագաթը, ապա մեղմորեն վար սահում, իր տատանումները ներդաշնակելով ծովի ծփանքին: Առավոտվանից եղանակը մառախլապատ ու մոայլ էր, բայց հիմա ամպերի արանքից արևը հանկարծ դուրս նետվեց (դա բարեգուշակ նշան էր) և փայլեց աղեղնաձև ծովափի վրա, որտեղ մենք խիզախել էինք հարեմի վեհապետների դեմ և սպանել «առանձնակյացներին»: Ջանքի կղզին պայծառացավ արևի ճառագայթների տակ: Նույնիսկ հարավ-արևմտյան մոայլ հրվանդանը նվազ մոայլ երևաց, երբ նրա մակերեսի թրջված մասերը շլացուցիչ փայլով արտացոլեցին արևի լույսը:

— Միշտ հպարտությամբ պիտի հիշեմ այս կղզին,— ասաց Մոդը և, թագուհու վայել շարժումով գլուխը ետ գցելով, ավելացրեց.— Թանկագին Ջանքի կղզի... Ես միշտ պիտի սիրեմ քեզ:

— Ե՛ս էլ,— արագ արձագանքեցի նրան:

Թվում էր, թե մեր հայացքները պետք է խոր փոխհասկացողությամբ իրար հանդիպեին, սակայն մեր կամքից անկախ՝ նրանք ջանացին միմյանցից խուսափել:

Տիրեց մի տեսակ լարված լռություն, որն ի վերջո ես խզեցի.

— Տեսե՞ք, ամպերն ընթանում են քամու ուղղությամբ: Հիշո՞ւմ եք, երեկ գիշեր ասում էի, որ բարոմետրն իջնում է:

— Արևն էլ անհետացավ,— ավելացրեց նա, շարունակելով դիտել կղզին, որտեղ մեր իշխանությունն էինք հաստատել բնության տարերքի վրա և հասել այն ամենաճշմարիտ բարեկամության, որը երբևէ կարող է գոյություն ունենալ տղամարդու և կնոջ միջև:

— Ոչի՛նչ, թոկերը կթուլացնենք և կնավարկենք դեպի Ճապոնիա,— գոչեցի զվարթությամբ:— Հիշո՞ւմ եք՝ «բարենպաստ քամի, թուլացրած թոկեր...» և այլն, և այլն:

Ղեկանիվը կապելուց հետո վազեցի նավահարթակ և թուլացրի առաջակայմի ու միջնակայմի առագաստների թոկերը, ձգեցի կայմաթևի պարանները և առագաստներին այնպիսի դիրք տվեցի, որ ամբողջովին ուռչեն քամուց: Քամին ուժեղ էր, նույնիսկ բավականին ուժեղ, բայց ես որոշեցի բոլոր առագաստները պարզած նավարկել այնքան ժամանակ, որքան այդ հնարավոր է: Դժբախտաբար բարենպաստ քամու դեպքում հնարավոր չէ կապել ու անշարժացնել ղեկանիվը, հետևաբար, հարկավոր էր ամբողջ գիշեր նրա մոտ կանգնել: Մոդը պնդում էր, որ ինձ հերթափոխի, բայց բանից պարզվեց, որ նրա ուժը բավական չէր ղեկանիվը վարելու բարձր ալիքների դեմ, անգամ եթե նա կարողանար կարճ ժամանակում բավականաչափ փորձ ձեռք բերել: Դրանում համոզվելով, նա չափազանց տխրեց, բայց ի վերջո մխիթարություն գտավ ցիրուցան թոկերը հավաքելու և փաթաթելու աշխատանքի մեջ: Բացի դրանից, հարկավոր էր նաև խոհանոցում ճաշ եփել, անկողինները սարքել, Գայլ Լարսենին խնամել: Այս ամենը կատարելուց հետո օրվա վերջում նա մաքրեց ու կարգի բերեց նավասենյակն ու որսորդների խուցը:

Ամբողջ գիշեր ես դեկը վարեցի առանց հերթափոխվելու: Քամին գնալով ուժեղանում էր, և ալիքները խոշորանում էին: Առավոտյան ժամը հինգի մոտերքը Մոդը բերեց տաք սուրճ և բլիթներ, որ ինքն էր պատրաստել, իսկ ժամը յոթին սննդաբար նախաճաշը, որից շոգի էր բարձրանում, ուժերս վերականգնեց:

Օրվա ընթացքում քամին դանդաղորեն, բայց աստիճանաբար սաստկացավ: Նա կարծես համառորեն որոշել էր անպայման փչել, անդադար փչել և գնալով ավելի ուժեղ փչել: «Ուրվականը» ալիքները ճեղքելով մղոններ էր անցնում, ժամը առնվազն տասնմեկ հանգույց արագությամբ: Այդպիսի հոյակապ ընթացքը կորցնելն իսկապես ցավալի կլիներ, բայց երբ գիշերը մոտեցավ, ես արդեն բոլորովին ուժասպառ էի: Թեև ֆիզիկապես ինձ առողջ էի զգում, սակայն երեսունվեց ժամ ղեկանիվի մոտ կանգնելուց հետո այլևս տոկունությունս սպառվել էր: Մոդը թախանձում էր, որ նավը կանգնեցնեմ և ես ինքս էլ գիտեի, որ եթե քամին ու

ալիքները շարունակեին այս թափով ուժեղանալ, ապա գիշերն անհնար կլիներ նավը կանգնեցնել: Ուստի, երբ աղջամուղջը թանձրացավ, գոհունակությամբ, բայց միաժամանակ դժկամությամբ, «Ուրվականը» ուղղեցի դեպի քամին:

Սակայն բնավ չէի նախատեսել, որ երեք առագաստ հավաքելն այդքան հսկա աշխատանք է մեկ մարդու համար: Քանի դեռ արագ էինք նավարկում, ես լրիվ պատկերացում չունեի քամու ուժի մասին, բայց երբ նավը դանդաղեց, միայն այդ ժամանակ ցավով (եթե չասենք՝ հուսահատությամբ) ստուգեցի նրա թափի ողջ ահագնությունը: Նա ի դերն էր հանում բոլոր ջանքերս, առագաստը թփթփացնելով կորզում էր ձեռքիցս և մեկ վայրկյանում փչացնում այն ամենը, ինչ գլուխ էի բերում տասը բռնաչան պայքարով: Ժամը ութի մոտերքն ինձ հաջողվեց առանձնացնել ու հավաքել առաջակայմի առագաստի երկրորդ շերտը: Ժամը տասնմեկին աշխատանքը դեռ առաջ չէր գնացել: Իմ ձեռքերից արյուն էր կաթկթում, և եղունգներս բաժանվել էին մսից: Ցավից և ուժասպառությունից լաց եղա մթության մեջ, բայց ծածուկ, որպեսզի Մոդը չիմանա:

Հետո, հուսահատվելով, հրաժարվեցի միջնակայմի առագաստի առանձին շերտերը հավաքելուց և որոշեցի փորձել, թե կարելի՞ է նավը կանգնեցնել միայն առաջակայմի կարճացված առագաստով: Երեք ժամ ևս անցավ, մինչև որ հավաքելով ամրացրի միջնակայմի առագաստն ու եռանկյուն առագաստը: Առավոտյան ժամը երկուսին գրեթե կիսամեռ վիճակում էի և հազիվ կարողացա գիտակցել, որ փորձը հաջողված է: Առաջակայմի կարճացված առագաստն իր դերը կատարում էր: «Ուրվականը» ցռուկը դարձրել էր դեպի քամին և կողի վրա թեքվելու ոչ մի նշան ցույց չէր տալիս:

Ես սոված էի, բայց Մոդն իզուր ջանաց որևէ բան կերցնել ինձ: Ծամելիս սկսում էի քնել: Պատահաբար քերանս տանելու ընթացքում մրափում էի և ապա ընդոստ զարթնելով տեսնում, որ ձեռքս գործողության կեսին դեռ օդում կախված է: Այնքան հոգնած ու թուլացած էի, որ Մոդն ստիպված էր ինձ աթոռիս վրա պահել, որպեսզի նավի ուժեղ ցնցումներից ցած չզուրկեմ:

Չեմ հիշում, թե ինչպես խոհանոցից տեղափոխվեցի նավասենյակ: Ըստ երևույթին, քայլել եմ քնաշրջիկի նման, իսկ Մոդն ինձ առաջնորդել ու օգնել է ճանապարհին: Երբ զարթոնեցի, չգիտեմ որքան ժամանակ հետո, նկատեցի, որ պառկած եմ իմ անկողնում, իսկ կոշիկներս հանված են: Խցիկում մթություն էր տիրում: Ամբողջ մարմինս ջարդված էր, և երբ ձեռքս կալավ վերմակի եզրին, վիրավոր մատներիս ցավից ակամա ճչացի:

Մտածելով, որ լույսը դեռ չի բացվել, աչքերս փակեցի ու դարձյալ քնեցի: Չգիտեի, որ մի ամբողջ օր քնել եմ և հիմա նորից գիշեր է:

Կրկին զարթոնեցի ու զարմացա, թե ինչու անհանգիստ եմ քնում: Հետո մի լուցկի վառելով ժամացույցիս նայեցի:

Կեսգիշեր էր: Այնինչ ես տախտակամածը թողել էի ժամը երեքին. . . Այս հանգամանքը կարող էր ինձ շփոթության մեջ գցել, բայց շուտով գլխի ընկա, թե բանն ինչումն է: Էլ ինչո՞ւ զարմանալ, որ անհանգիստ էի քնում: Ես քնել էի լրիվ քսանմեկ ժամ... Մի պահ ուշադրություն դարձրի «Ուրվականի» շարժումներին, ալիքների բախումներին, քամու խուլ ոռնոցին, ապա մի կողմի վրա շուտ գալով, անխռով քնեցի մինչև առավոտ:

Երբ ժամը յոթին վեր կացա, Մոդը նավասենյակում չէր: Ես եզրակացրի, որ նա խոհանոցում նախաճաշ է պատրաստում: Տախտակամած բարձրանալով նկատեցի, որ «Ուրվականը» իրեն հիանալի պահում է փոքրիկ առագաստի ներքո: Խոհանոցում ջուրը կրակի վրա եռում էր, բայց Մոդը չկար:

Նրան գտա որսորդների խցում, Գայլ Լարսենին խնամելիս: Ես նայեցի այդ մարդուն, որ իր կյանքի ծաղկման բարձրակետից վայր գլորվելով՝ ողջ-ողջ թաղվել էր սեփական մարմնի մեջ: Նրա դեմքը այժմ խաղաղ արտահայտություն էր ստացել և դա անսովոր հանգամանք էր: Մոդը նայեց ինձ, և ես իսկույն հասկացա:

— Նրա կյանքը հանգել է փոթորկի ժամանակ,— ասացի ես:

— Բայց կյանքը դեռ շարունակվում է նրա համար,— պատասխանեց Մոդը ամենախոր հավատով:

— Նա անսպառ ուժ ուներ:

— Այո, սակայն այդ ուժը նրան այլևս չի կաշկանդում: Նրա հոգին հիմա ազատ է:

— Իսկապես, նրա հոգին հիմա ազատ է,— կրկնեցի ես և, Մոդի ձեռքից բռնելով, առաջնորդեցի տախտակամած:

Այդ գիշեր փոթորիկը հանդարտվեց: Բայց այն մեղմացավ աստիճանաբար, ինչպես աստիճանաբար սաստկացել էր: Հաջորդ առավոտյան, նախաճաշից հետո, մենք Գայլ Լարսենի մարմինը փոխադրեցինք տախտակամած, որպեսզի թաղենք: Դեռ ուժեղ քամի էր փչում, և ծովն ալեկոծ էր: Թռչկոտող ալիքները ողողում էին տախտակամածը և դատարկվում ջրատար անցքերի միջով: Հանկարծ քամու ուժեղ մի հորձանք բարձրացավ, և նավն իր հողմագերծ կողի վրա մի պահ պառկեց ջրի երեսին: Քամին աղեկտուր ոռնում էր թոկասարքերի միջով: Մենք կանգնել էինք ջրի մեջ, որը բարձրացել էր մինչև մեր ծնկները:

Ես հանեցի գլխարկս:

— Թաղման ծիսակատարության միայն մի պարբերությունն եմ հիշում,— ասացի ես,— այն է՝ «Եվ մարմինը պետք է գցել ծովը»:

Մոդը զարմանքով ու վրդովմունքով նայեց ինձ: Բայց անցյալում տեսածս տեսարանի վերհուշն ինձ այժմ դրդում էր Գայլ Լարսենի թաղման արարողությունը կատարել այնպես, ինչպես ժամանակին նա կատարել էր իր օգնականին: Ես վեր բարձրացրի ամբարածածկի ծայրը, և առագաստալաթով պատանված մարմինը ոտնիվայր սահեց ջրի մեջ: Կապած երկաթի ծանրությունը նրան քաշեց դեպի անդնդախոր հատակը: Նա չքացավ առհավետ:

— Գնաս բարո՛վ, Լուցիֆեր, հպա՛րտ հոգի,— մրմնջաց Մոդը այնքան մեղմ, որ մոնչացող քամին կլանեց նրա խոսքերը, և ես դրանք կռահեցի միայն շրթների շարժումներից:

Երբ նավաբազրիքին կառչելով առաջանում էինք դեպի հարթակը, ես պատահաբար նայեցի քամու հակառակ ուղղությամբ: Այդ վայրկյանին «Ուրվականը» բարձրացել էր մի հսկա կոհակի գագաթը, և ես որոշակի նշմարեցի մի փոքր շոգենավ, մեզնից մոտ երեք մղոն հեռավորության վրա: Օրորվելով, ջրային գոգավորությունների մեջ սահելով ու դարձյալ

բարձրանալով ալիքների կատարը, նա գալիս էր ուղիղ դեպի մեզ: Նրա կողերը սև էին ներկված: Հիշելով որսորդների պատմածներն իրենց որսագողային արշավանքների մասին, ես իսկույն կռահեցի, որ դա Միացյալ Նահանգների մաքսային նավերից է: Մոդին ցույց տալով շոգենավը, նրան շտապ առաջնորդեցի հարթակ, որտեղ համեմատաբար ավելի ապահով էր:

Ես ուզում էի ներքև գնալ, որպեսզի պահեստարանից ազդանշանի դրոշակ բերեմ, բայց մեկեն հիշեցի, որ «Ուրվականը» կարգի բերելու ժամանակ հոգ չէի տարել դրոշապարանի մասին:

— Տագնապի ազդանշան տալու կարիք չկա,— ասաց Մոդը:— Բավական է միայն, որ նրանք մեզ տեսնեն:

— Փրկվա՛ծ ենք,— ասացի ես հանդարտ ու հանդիսավոր: Ապա ուրախության գեղումով հանկարծ գոչեցի.— Չգիտեմ՝ ուրախանա՞մ, թե՞ տխրեմ...

Նայեցի Մոդին: Այս անգամ մեր հայացքները չփորձեցին միմյանցից խուսափել: Մենք իրար մոտեցանք, և ես բնագղաբար գրկեցի նրան:

— Կարիք կա՞ խոսքերի,— հարցրեցի ես:

— Կարիք չկա,— ասաց նա,— թեև դրանք լսելը այնքա՛ն քաղցր կլինեն...

Մեր շրթունքներն իրար հանդիպեցին, և նույն պահին երևակայության տաքօրինակ քմահաճությամբ աչքիս առաջ պատկերացավ «Ուրվականի» խցում տեղի ունեցած կռվի տեսարանը, երբ Մոդը մատները հուշիկ հպելով շրթներին՝ ասաց. «հանդարտվեցեք, հանդարտվեցեք»:

— Կի՛նս, միա՛կս, պստիկ կի՛նս,— ասացի ես ազատ ձեռքով շոյելով նրա ուսն այնպես, ինչպես անում են բոլոր սիրահարները, չնայած ոչ ոք նրանց այդ բանը չի սովորեցրել:

— Ամուսի՛նս...— ասաց նա և նայեց ինձ դողդոջուն թարթիչներով, որոնք ի վերջո խոնարհվելով քողարկեցին աչքերը: Նա գլուխը հենեց կրծքիս երջանկության մեղմ հառաչով:

Ես նայեցի շոգենավին: Նա արդեն շատ մոտ էր: Նավեզրից մակույկ էին իջեցնում:

— Մի համբույր ևս, սիրելիս,— շնջացի ես,— մի համբույր ևս, նախքան նրանք կգան...

— ... Ու մեզ կազատեն միմյանցից,— լրացրեց նա մի պաշտելի ժպիտով, որի մեջ կար ինչ-որ քմայքոտ արտահայտություն, որն առաջ բնավ չէի տեսել. դա սիրո քմայքն էր: